


ԼԻԱԿԱՏԱՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Ա.Լ. - ԳԱՐԻԼ, ՖԻԼ. - ՏԱՐԻԽ)



ՆՈՅԻ (ՆՈՒՀ) ԺԱՄԱՆԱԿ ԿԱՏԱՐՎԱՄ ԳԵՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Եւ ծիսաց [նոյան] տապանը երկրի վրա ոչ մի տեղ կանգ չառնելով մինչև որ հասավ սրբավայրը (հարամ)¹, ուր կանգ չառավ և մի շաբաթ պտույտ գործեց նրա շուրջը. ապա շարունակեց իր ընթացքը երկրի վրա մինչև որ հասավ ալ-Ջուդի², որը լեռ է Կարդիում³, Մոսուլի երկրում, և այնտեղ կանգ առավ: Այստեղ է, որ ասվել է թող կորչե՛ն անարդար մարդիկ»: Եւ երբ կանգ առավ, ասվել է. «Ո՛վ երկիր, կույ տուր քո ջուրը և երկինք հեռացրու ջրերը»: Հողը ներծծեց [ջուրը] և նոյը մնաց վերևում մինչև որ ջրերը իջան: Երբ դուրս եկավ Ջադիրայի հողում, Կարդիի կողմերում տեղ ընտրեց ու կառուցեց մի դյուղ, որը կոչվեց Սամանին (Թա-մանին)⁴ և այժմ կոչվում է Սամանինի (ութսունի) շուկա, որովհետև նրա հետ եղածներից ամեն մեկը մի տուն կառուցեց, իսկ նրանք ութսուն հոգի էին:

ՆՈՅԻ (ՆՈՒՀ) ՍԵՐՆԴԻ ՄԱՍԻՆ:

Իսկ Հաբեթի (Յաֆիս) որդիներն էին Գոմեր (Ջամիր), Մավա, Մաու-րիբ, Բուան, Ֆուբա, Մոսոբ (Մաշիշ) և Թիրաս (Տիրաշ): Գոմերի որդիներն էին պարսից թագավորները: Թիրասի (Տիրաշ) որդիներից էին թուրքերը, խազարները, իսկ Մոսոբի որդիները՝ աշքանները: Մավայի որդիներից էին Գոգն (Յաշոշ) ու Մագոգը (Մաշոշ), Բուանի որդիներն էին Սակալի-բա (սլավոններ) և Բուրջան: Աշքանները հնում Լիումի երկրում էին նախ-քան կպատահեր այն, ինչ պատահեց Իսահակի որդի Ծսավի (Այս) որդու

և ուրիշների հետ: Եվ այդ երեքից ամեն մեկը՝ Սեմը (Սամ), Քամը (Համ) և Հաբեթը, դիմեց մի երկիր, ուր ապրեց և ուրիշներին քշեց այնտեղից: Հաբեթի որդիներն են հոռոմները (ռում), որոնք Նոյի որդի Հաբեթի որդի Յունանի որդի Լանթայի՞ որդիներն են:

էջ 192

ԹՈՒՄԻ ԻԱԿԱՎՈՐՆԵՐԻ ԵՐՐՈՐԿ ԴԱՍԸ ՀԻՋՐԱՅԻՑ ՀԵՏՈ

Նրանցից առաջինը Հերակլն է, որի թագավոր դառնալու մասին խոսել ենք: Նրա իշխանության շրջանը քսանհինգ տարի է, ասվում է նաև երեսունմեկ տարի: Նրա օրոք է ծնվել [Մուհամմադ] մարգարեն: Մահմեդականները նրա ձեռքից նվաճեցին Ասորիքը:

էջ 193

Նրանից (Հուստինիանոսից) հետո իշխեց Անաստասիոսը, որդի Փիլիպպոսի (Նասթաս իբն Ֆիլիֆոս): Նրա օրոք հոռոմների մեջ դժգոհություն կար և նրան հանեցին ու աքսորեցին: Ապա իշխեց Թեոդոսիոսը (Սիդոս), որը կոչվում էր հայազգի (արմանի): Իշխել է Սուլայման իբն Աբդ ալ-Մալիք [խալիֆայի] օրոք և սրան էր որ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը պաշարեց:

Նրանից հետո իշխանությունը վերցրեց Լևոնը, որդի Կոստանդինի (Ալյուն իբն Կուսթանթին), քանզի նա (Թեոդոսիոսը) թույլ էր, իսկ Լևոնի (Ալյուն) շնորհիվ հոռոմներն ի վիճակի եղան մահմեդականներին ետ մղել Կոստանդնուպոլսից: Դրա համար նրան դարձրին թագավոր և նա իշխեց քսանվեց տարի:

էջ 194

Նրա (Միքայելի) դեմ դուրս եկավ Վասիլ սլավոնը (Բասիլ ալ-սակլաբի), որը գրավեց իշխանությունը և երկու հարյուր հիսուներեք հիջրի (867) թվականին սպանեց Միքայելին: Ապա Վասիլ սլավոնը իշխեց քսան տարի Մուտաղզ և Մուհտադի խալիֆաների օրոք և Մուտամիդի առաջին տարիներին: Նրա մայրն սլավոնուհի էր, որի պատճառով ինքն էլ [սլավոն] կոչվեց:

էջ 195

Այս Կոստանդինի դեմ դուրս եկավ Կոստանդինը, որդի Անդրոնիկոսի (Անդրունիկուս), որի հայրը գնացել էր Մուքտաֆի [խալիֆայի] մոտ, երկու հարյուր իննսունչորս հիշրի՝ (906—907) թվականին և ընդունել մահ-մեղականություն ու մահացել։ Իսկ որդին փախավ Հայաստանի ու Աթըրպատականի ճանապարհով դեպի Ռումի երկիրը։ Նրա մոտ մեծ բազմու-թյուն հավաքվեց, հետևորդները շատացան և գնաց Կոստանդնուպոլիս Կոստանդինի հետ կռվեց իշխանության համար երեք հարյուր մեկ հիշրի (913—914) թվականին, հաղթեց ու սպանեց նրան։

էջ 222

ԱՐԳԱՇԻՐ ՈՐԳԻ ԲԱԲԱՔԻ ԵՎ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ կռվեց Արդաշիր՝ Շահանշահ, ապա շարժվեց դեպի Համադան ու գրավեց այն և հետո ալ-Ջաբալ՝, Ատրպատական⁶, Հայաստան (Արմի-նիա)¹⁰, Մոսուլ և ուժով նվաճեց։ Ապա Մոսուլից շարժվեց դեպի Սաուդ (Ստորին Միջագետք) ու գրավեց. մի արևմտյան քաղաք կառուցեց Տիգրիսի (Դիլլա) ափին Տիգրոնի (Խայսաֆուն) դիմաց, որը Մա-դաինի (Տիգրոն)¹¹ արևելքում է և այն անվանեց Բեհ Արդաշիր և Սաուա-դից վերադարձավ Իսթախր։

էջ 242

ՀԱՋԿԵՐՏԻ (ՅԱԶԳԱՋԻՐԴ) ՈՐԳԻ ՊԵՐՈՋԻ (ՖԻՐՈՒՋ) ՈՐԳԻ ԿԱՎԱՏԻ (ԿՈՒԲԱԴ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ապա Կավատր հարձակվեց Ռումի վրա, նվաճեց Ամիդ քաղաքը, կառուցեց Առաջան ու Հուլուան քաղաքները և մեռավ։ Նրանից հետո իշ-խեց որդին՝ Խոսրով (Քիսրա) Անուշիրուանը։

Կավատի իշխանությունը իր եղբոր Զամասպի հետ միասին քառա-սուններեք տարի տևեց։ Անուշիրուանը իր իշխանությանը ենթարկեց այն, ինչ որ հայրը թույլ էր նրան նվաճելու։

Նրա [Կավատի] օրոք խազարները դուրս եկան և ասպատակելով նրա երկիրը, հասան Դինավար։ Կավատը իր մեծ զորավարներից մեկին ուղար-

կեց տասներկու հազար [գինվորներով]։ Ապա մտավ Առան և նվաճեց Արաքս (ալ-Ռաս) կոչված գետից մինչև Շիրուան ընկած [տարածութիւնը]։ Ապա Կավատը հասավ նրանց ետեւից և Առանում կառուցեց Բայլական քաղաքը և Պարտավը (Բարդաա), որն ամբողջ սահմանային գոտու [գլխավոր] քաղաքն է և ուրիշ քաղաքներ, իսկ խազարները մնացին։ Ապա կառուցեց Ալանաց պաշտպանության գիծը Շիրուան երկրի ու Ալանաց գոան (Բաբ Ալլան) միջև։ Այս պաշտպանության գծի վրա կառուցեց բազմաթիվ քաղաքներ, որոնք կործանվեցին Բաբ ալ-Աբուաբի կառուցվելուց հետո։

էջ 256—257

ՊԻՂՄ ՀԱՋԿԵՐՏԻ (ՅԱՉԴԱՋԻՐԴԻ) ՈՐԴԻ ԲԱՀՐԱՄ ԳՈՒՐԻ (ՋՈՒՐԻ) ՈՐԴԻ ՀԱՋԿԵՐՏԻ (ՅԱՉԴԱՋԻՐԴԻ) ՈՐԴԻ ՊԵՐՈՋԻ (ՖԻՐՈՒՋ) ՈՐԴԻ ԿԱՎԱՏԻ (ԿՈՒԲԱԴ) ՈՐԴԻ ԽՈՍՐՈՎ (ՔԻՍՐԱ) ԱՆՈՒՇԵՐՈՒԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եվ հավաքվեցին աբխազները, Բանչարը, Բալանչարը¹² և ալանները՝ նրա (Անուշիրուանի) երկրի վրա հարձակվելու նպատակով։ Նրանք մտան Հայաստան (Արմինիա) նրա ժողովրդի վրա հարձակվելու նպատակով, քանզի ճանապարհը այստեղ հեշտ էր։ Խոսրովը (Քիսրա) դանդաղեց մինչև որ սրանք խորացան երկրում, ապա ուղարկեց զորքեր, որոնք կռվի բռնվեցին նրանց հետ ու կոտորեցին, բացի տաս հազար մարդուց, որոնց գերեցին ու բնակեցրին Ատրպատականում

Պերոզ (Ֆիրուզ) թագավորը Սուլի (Ճորա) երկրում ու ալանների [կողմերում], իր երկրի համար լավ ամրություններ էր կառուցել, իսկ նրա որդին՝ Կավատը (Կուբադ) ավելին կառուցեց։ Երբ թագավորեց Խոսրով Անուշիրուանը, Սուլի կողմերում ու Վրկանում (Ջուրջան) շատ կառուցումներ [արեց] ու բերդեր շինեց, որոնցով իր ամբողջ երկիրը ամրացրեց։ Սինչիբուր խականը, որ թուրքերի ամենամեծն էր, դիմեց նրա երկիրը՝ իր կողմը սիրաշահելով խազարներին, աբխազներին ու Բալանչարի մարդկանց, որոնք հպատակվեցին նրան։ Նա եկավ մեծ զորքով և գրեց Խոսրովին հարկ պահանջելով ու շահագանդվելու դեպքում սպառնալով նրան։ Խոսրովը նրա ոչ մի պահանջին պատասխան չտվեց, քանզի իր երկիրը պաշտպանված էր և ամրացրեց Հայաստան (Արմինիա) սահմանային երկիրը այնպես, որ փոքրաթիվ [ռազմիկներով] կարող էր գահանալ։ Խականը հարձակվեց նրա երկրի վրա բայց ոչինչ չկարողացավ անել և ամոթահար վերադարձավ։

ԱՆՈՒՇԻՐՈՒԱՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ՝

Հայաստանի (Արմինիա) և Ատրպատականի մի մասը հռոմեաների ձեռքում էր, իսկ մի մասը խազարների: Կավատը մի պարիսպ կառուցեց այդ երկրներից մի քիչ այն կողմ ու, երբ մեռավ և իշխեց որդին՝ Անուշիրուանը, հզորացավ ու նվաճեց Ֆարդանան, Բուրաջանը և Աղը: Նա կառուցեց Շաբուրան¹⁴, Մասկաթ (Մազբութ) և Բաբալ-Աբուաբ (Դարբանդ) քաղաքները: Իսկ սա կոչվել է Արուար (դռներ), որովհետև կառուցվել է լեռան մի անցքի վրա: Եվ [Անուշիրուանը] բնակեցրեց այդ քաղաքներում մարդկանց, որոնց նա կոչեց ալ-Սիասիշին¹⁵: Շինեց նաև այլ քաղաքներ և ամեն մի դռան (կապանի) առջև քարե պալատ կառուցեց: Վրաց (Ջուրզան)¹⁶ երկրում կառուցեց Սուղդաբիլ քաղաքը և այնտեղ բնակեցրեց Սուղդի [բնակիչներին] ու Պարսկաստանի (Ֆարս) որդիներին: Կառուցեց Ալանաց դուռը (Բաբ Ալլան) և Հայաստանում նվաճեց այն բոլորը, որ հռոմեաների ձեռքում էր: Շենացրեց Արդաբիլ քաղաքը և բազում բերդեր: Նա գրեց թուրքաց¹⁷ թագավորին՝ առաջարկելով բարեկամություն ու համաձայնություն, նրա աղջկա ձեռքը խնդրեց ու ցանկացավ փեսա դառնալ նրան: Նրանցից ամեն մեկը մյուսի աղջկա հետ ամուսնացավ: Սակայն խռսրովը թուրքաց թագավոր հականին ուղարկեց մի աղջկա, որին իր կանանցից մեկը որդեգրել էր և ասաց, որ սա իմ աղջիկն է: Իսկ թուրքաց թագավորը ուղարկեց իր աղջկան և նրանք իրար մերձեցան: Անուշիրուանը հրամայեց իր վստահելիներից ոմանց, որ ինչ-որ կողմից հարձակվեն թուրքաց ճամբարի վրա և հրդեհ գցեն. այդպես էլ արեցին: Երբ առավոտ եղավ թուրքաց թագավորը բողոքեց այդ մասին, իսկ սա ուրացավ, ասելով թե տեղյակ չէ: Մի քանի գիշեր անց նույնը պատվիրեց անել: Թուրքը նեղացավ, իսկ Անուշիրուանը քաղցր խոսեց և ներողություն խնդրեց: Ապա Անուշիրուանը հրամայեց, որ կրակ գցեն իր ճամբարի այն մասի վրա, ուր կային ծղոտե խրճիթներ: Երբ առավոտ եղավ ինքը բողոքեց թուրքին, ասելով, որ կատարեցիր այն, ինչի համար ինձ մեղադրում էիր: Թուրքը երդվեց, որ ոչինչ չգիտի այդ մասին: Ասաց Անուշիրուանը՝ մեր զինվորները դժգոհ են մեր հաշտությունից, քանի որ կտրվեց նրանց տրված հասույթը և վերջ գտան ասպատակությունները: Ես չեմ ուզում, որ նրանք այնպիսի բան անեն, որ մեր սրտերը պղտորեն և վերսկսենք թշնամությունը: Կարծում եմ լավ կլինի, որ ինձ թույլ տաս մի պարիսպ կառուցել իմ և քո միջև, որի վրա դարպասներ կպատրաստենք: Ոչ ոք չի

մոտ չի մտնի, եթե չես ուզի և մեզ մոտ կմտնի միայն նա, որին մենք կուզենանք: [Թուրքը] համաձայնեց այս բանին:

Անուշիրուանը կառուցեց¹⁵ պարիսպը ծովից սկսած մինչև լեռների գագաթը և վրան երկաթե դարպասներ դրեց ու պահակներ նշանակեց: Ասացին թուրքաց թագավորին, թե նա քեզ խաբեց, քո կինը նրա աղջիկը չէ և նա քեզանից պաշտպանվեց, իսկ դու այլևս ոչ մի հնար չես կարող գործադրել:

Անուշիրուանը թագավորներ նշանակեց այդ կողմերում. որոնցից էին Սաբիրի (Գահի) տերը, Ֆիլան շահը, Լաքզի, Մասկաթի [տերերը] և ուրիշներ:

Հայաստանը մնաղ պարսից ձեռքում մինչև որ երևաց մահմեդական-նությունը և Սիասիչին [կոչվածներից] շատերը լքեցին իրենց հանձնված բերդերն ու քաղաքները, մինչև որ դրանք քայքայվեցին և այն գրավեցին խազարներն ու հոռոմները: Այս վիճակում էր երկիրը, երբ երևան եկավ մահմեդականնությունը:

էջ 281

ՈՐՄԻՋՂԻ (ՀՈՒՐՄՈՒՋ) ՈՐԴԻ ԽՈՍՐՈՎ (ՔԻՍՐԱ) ՊԱՐՈՒԵՋԻ (ԱՔԱՐՈՒԻՋ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատրաստվեց Հերակլը (Հիրակլ) և իր որդուն թողեց Կոստանդնուպոլսում (Կուսթանթինիյա), իսկ ինքը, գնաց ոչ Շահրիբադի¹⁶ գնացած ճանապարհով, այլ գնաց մինչև որ մտավ Հայաստան երկիրը, դիմեց Զազիրա և կանգ առավ Մծբինի (Նասիրին) մոտ, խոսրովը զինվորներ ուղարկեց նրա դեմ ու հրամայեց մնալ Մոսուլում: Նա լուր ուղարկեց Շահրիբադին, որպեսզի գա իր մոտ և միասին կովի դուրս գան Հերակլի դեմ:

Հ Ա Տ Ո Ր Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Տ Ա Ս Ն Շ Ի Ն Գ Թ Վ Ա Կ Ա Ն

էջ 344

(14 փետրվար 636—1 փետրվար 637)

ՀԱԼԵՔԻ, ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ԱՎԱՍԻՄԻ ԱՅԼ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆՎԱՃՄԱՆ ՄԱՍԻՆ¹⁷

Իրը Աբու Ուբայդան վերջացրեց Կիննասրինի [նվաճումը] գնաց դեպի Հալեբ: Սակայն նրան լուր հասավ, թե Կիննասրինի բնակիչները ապրստամբել և դավաճանել են: Նա նրանց դեմ ուղարկեց ալ-Սիմթ ալ-

Քինդիին, որը պաշարեց նրանց, նվաճեց ու բռնադրավեց արշաոն ու ոչ-խարը: Իրանց մի մասը բաժանեց իր զորքի մեջ, իսկ մնացածը դարձրեց ավար (դանիմա)²¹:

Աբու Ուբայդան հասավ Հալեբի մեծ արվարձանը, որը նրանից մոտիկ է: Աբու Ուբայդան հավաքեց տարբեր արաբների և նրանց հետ հաշտութուն կնքեց ջիզիա (գլխահարկ) վճարելու պայմանով: Հետագայում դրանք մահմեդականացան: Եկավ Հալեբ, իսկ նրա առաջապահ [զորքի] հրամանատարն էր Իյադ Իբն Ղանմ ալ-Ֆիհրին: Նրա բնակիչները ամրացան, իսկ մահմեդականները պաշարեցին նրանց: Սակայն շուտով խնդրեցին հաշտություն և երաշխավորագիր (աման) իրենց անձերի, զավակների, քաղաքի, եկեղեցիների ու բերդի համար: Տրվեց այն և մզկիթի համար տեղ հատկացրեց:

Նա, որ հաշտություն կնքեց Իյադն էր, իսկ Աբու Ուբայդան համաձայնություն էր տվել: Սակայն ասվում է, որ պայմանավորվել էին նաև նրանց բնակարանները և եկեղեցիները [մահմեդականների միջև] բաժանել: Ասվում է նաև, որ Աբու Ուբայդան Հալեբում ոչ ոքի չհանդիպեց, քանզի ժողովուրդը տեղավորվել էր Անտիոք. գրագրություն ունեցավ հաշտության մասին և, երբ այն իրականացավ, նրանք վերադարձան:

Աբու Ուբայդան Հալեբից գնաց Անտիոք, ուր շատերը Կիննասրինից և այլ վայրերից եկել ու ամրացել էին: Երբ նա դուրս եկավ, հանդիպեց թշնամիների մի խմբի, որին հաղթեց ու ստիպեց քաղաքում ապաստանել: Բոլոր կողմերից պաշարեց այն, իսկ նրանք հաշտություն կնքեցին հեռանալու կամ ջիզիա (գլխահարկ)²² [վճարելու] պայմանով: Ոմանք հեռացան, իսկ ոմանք էլ մնացին, որոնց երաշխավորագիր (աման) տրվեց²³: Սակայն հետո դավաճանեցին և Աբու Ուբայդան նրանց դեմ ուղարկեց Իյադ Իբն Ղանմին և Հաբիբ Իբն Մասլամային, որոնք գրավեցին [քաղաքը]՝ նախկին հաշտության պայմաններով:

Անտիոքը մեծ համբավ ունեւր մահմեդականների մոտ և, երբ նվաճվեց, Օմարը²⁴ գրեց Աբու Ուբայդային, որ Անտիոքում մահմեդականների մի խումբ տեղավորի, նրանց դարձնի [մշտական] կայազոր և ոռոգի չխնայի:

Աբու Ուբայդան տեղեկացավ, որ հոռոմների մի զորամաս կա Մաարատ Մասրայնի և Հալերի միջև և գնաց նրանց դեմ, բախվեց ու հաղթեց նրանց: Շատ պատրիկների (բաթարիկա)²⁵ սպանեց, գերեվարեց ու կողոպտեց: Նվաճեց Մաարատ Մասրայնը՝ Հալեբի հաշտության պայմաններով: Նրա ձիավորները շարժվեցին և հասան Բուկա ու գրավեցին ալ-Ջումա, Սարմայն ու Բիրայն դուղերը և նվաճեցին ամբողջ Կիննասրինը ու Անտիոքը:

Ապա Աբու Ուբայդան եկավ Հալեր, որի ժողովուրդը ըմբոստացել էր, իսկ նա ստիպեց նրանց հպատակվել և քաղաքի [դռները] բացել: Ծվ Աբու Ուբայդան դնաց դեպի Կուրուս, իսկ նրա առաջապահ զորքի [հրամանատարն էր] Իյադը: Նրան դիմավորեց վանականներից մեկը հաշտութուն խնդրելով: [Իյադը] ուղարկեց նրան Աբու Ուբայդային, իսկ սա հաշտութուն կնքեց Անտիոքի պայմաններով: Նա իր ձեռքերը արձակելով նվաճեց ամբողջ Կուրուսի նահանգը, գրավեց Տալլ Ազազը: Աբու Ուբայդայի զորքում էր Սալման իրն Ռաբիա ալ-Բահիլին, որն իջևանեց Կուրուսի բերդերից մեկում, և սա նրա անունով կոչվեց Հիսն (բերդ) Սալման: Ապա Աբու Ուբայդան գնաց Մանբիջ: Նրա առաջապահ զորքի հրամանատարն էր Իյադը և հասավ վերջինիս, երբ արդեն [Մանբիջի] բնակիչների հետ հաշտութուն էր կնքել՝ Անտիոքի պայմաններով: [Աբու Ուբայդան] ուղարկեց Իյադին Տլուքի (Դուլուք) և Ռաաբանի կողմերը և սա հաշտութուն կնքեց բնակիչների հետ՝ Մանբիջի նման պայմաններով, և պարտավորեցրեց նրանց մահմեդականներին տեղյակ պահել հոռոմների գործողությունների մասին: Ամեն մի նվաճած գավառում Աբու Ուբայդան կառավարիչներ նշանակեց և խմբեր բնակեցրեց և կարիք ունեցող վայրերը պարենավորեց: Ապա գնաց Բալիս և Հաբիբ իբն Մասլամայի հետ զորք ուղարկեց Կասրին: Վերջինս հաշտութուն կնքեց բնակիչների հետ՝ չիզիա վճարելու կամ հեռանալու պայմանով: Մեծամասնությունը հեռացավ Ռումի երկիրը, Զազիրա և Զիսր (կամուրջ) Մանբիջ գյուղը: Սակայն այդ ժամանակ դեռ կամուրջ չկար, այլ Օմար խալիֆայի օրոք սարքվեց՝ ամառային հարձակումների համար: Ասվում է, որ այնտեղ կային հին [կամուրջի] ավերակներ և մահմեդականները այս կողմից անցնելով Եփեսոսը՝ գրավել էին Ասորիքը (Շամ):

Աբու Ուբայդան վերադարձավ Պաղեստին (Ֆիլասթին): Ալ-Լուքամ (Ամանոս) լեռների վրա կար մի քաղաք՝ կոչված Զարջարումա, իսկ ժողովուրդը կոչվում էր Զարաջիմա²⁶: Հաբիբ իբն-Մասլաման Անտիոքից այնտեղ գնաց և հաշտության պայմանագրով գրավեց, ըստ որի նրանք պարտավոր էին օժանդակություն ցույց տալ մահմեդականներին:

Այդ տարում Աբու Ուբայդա իբն-ալ-Ջառահը զորք ուղարկեց Մալսարա իբն Մասրուկ ալ-Աբսիի հետ, որն Անտիոքի կողմերում անցավ Բաղրասի լեռնանցքը դեպի Ռումի երկիրը: Նա առաջինն էր, որ անցել էր այս լեռնանցքը և հանդիպեց մի խումբ հոռոմներին: Նրանց հետ էին արաբներ Ղասսան, Տաննուխ և Իյյադ [ցեղերից]²⁷, որոնք ուզում էին Հերակլին միանալ: [Մալսարան] հարձակվեց նրանց վրա և մեծ կոտորած արեց: Ապա նրան միացավ նաև Մալիբ իբն Աշտար ալ-Նախին՝ օգնական զորք բերելով Անտիոքում գտնվող Աբու Ուբայդայից: Նրանք վերջացրին ու ապահով վերադարձան:

[Աբու Ուբայդան] մի ուրիշ զորք ուղարկեց Մարաշ հալիդ իբն ալ-վալիդի հետ, որը գրավեց ու բնակիչներին երաշխավորագրով հեռացնելուց հետո կործանեց։ Մի ուրիշ զորք ևս ուղարկեց Հաբիբ իբն Մասլամայի հետ Հադաս բերդը։ Սա կոչվել է Հադաս (մատղաշ)²⁸, որովհետև մահ-մեղականները այնտեղ գտան մի երիտասարդ տղայի, որը նրանց հետ կովի բռնվեց։ Ուստի և ասվել է Դարբ (լեռնանցք) ալ-Հադաս (երիտասարդի)։ Ասվում է նաև, որ մահմեդականներն այնտեղ վիրավորվել են և այդ պատճառով կոչվել է Դարբ ալ-Հադաս (դեպքի)։ Օմայանները այն կոչում էին Դարբ ալ-Սալամա (ապահովության լեռնանցք)։

ՏԱՍՆՅՈՔ ԹՎԱԿԱՆ

(23 հունվար 638—11 հունվար 639)

էջ 372—375

ԶԱԶԻՐԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՄԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում նվաճվեց Զազիրան²⁹։

Հիշել ենք, որ Սաադը զորք էր ուղարկել Զազիրա։ Ելավ Իյադ իբն Ղանմը իր ընկերակիցների հետ և Սուհայլ իբն Ադդիին ուղարկեց Ռակկա։

Երբ գրավեցին Ռակկան ու Մծբինը (Նասիրին) Իյադն իր հետ վերցրեց Սուհայլին և Աբդալլահին և առաջնորդեց զորքը դեպի հառան (Հառան)։ Երբ այնտեղ հասավ, բնակիչները համաձայնեցին չիզիա վճարել և նա ընդունեց....

Իյադն իր զինվորներով շարժվեց ու կանգնեց Եդեսիայի (Ռուհա) առջև, և բնակչությունը համաձայնություն տվեց հաշտվել հառանի պայմաններով։ Նա ուղարկեց Աբու Մուսային Մծբին, որը նվաճեց այն։ Ապա Իյադը անձամբ գնաց Դարա և նվաճեց։

Օսմանը իբն Աբու-լ-Ասին ուղարկեց Չորրորդ Հայաստան³⁰, և սակովեց նրա բնակիչների դեմ, իսկ Սաֆուան իբն Մուաթթալը նահատակվեց։ Օսմանը նրա բնակիչների հետ հաշտություն կնքեց չիզիա վճարելու պայմանով՝ ամեն մի ծխից մեկ դինար։ Ապա տեղի ունեցավ Պաղեստինի, Կեսարիայի (Կայսարիյա) նվաճումը և Հերակլի փախուստը։ Ըստ այսմ, Զազիրայի նվաճումը Իրաքի արաբների նվաճումներից էր, սակայն մեծամասնությունը համոզված է, որ սա Ասորիքի (Շամ) արաբների նվաճումն է, քանի որ Աբու Ուբայդան էր Իյադին ուղարկել Զազիրա....

Եվ Իյադը ասպատակում է ու վերադառնում Եդեսիա։ Նա նվաճեց Սամոսատը (Սումայսաթը) և հասավ Սարուջ և Ռաս Քայֆա և ալ-Արդ ալ-Բայդա և նրանց բնակիչները Եդեսիայի համաձայնագրի պայմաններով

հաշտութիւն կնքեցին: Հետո Սամոսատի ժողովուրդը դավաճանեց, իսկ Իյադը վերադարձավ, պաշարեց ու գրավեց: Ապա եկավ Կառիյատ՝ Եփրատի վրա, որը Զիսր Մանբիջից այն կողմ գտնվող շրջանն է ու նվաճեց այն: Ապա շարժվեց դեպի Ռաս Այն, որը Այն ալ-Վարդա [վայրն] է, և սա դիմադրեց նրան: Նա [պաշարված] թողեց ու գնաց Տալլ Մաուզան, որը նվաճեց, Եդեսիայի պայմաններով, տասնինը թվին: Ապա շարժվեց դեպի Ամիդ ու պաշարեց այն. բնակիչները կռվի ելան, սակայն հաշտութեան համաձայնեցին՝ Եդեսիայի պայմաններով: Նույն ձևով նվաճեց նաև Նփրկերտը³¹ (Մայաֆարիկին), Քաֆր Տուսան և ապա շարժվեց դեպի Մծբին (Նասիբին), որի բնակիչները կռվեցին և ապա հաշտութիւն կնքեցին՝ Եդեսիայի համաձայնութեան պայմաններով: Նա գրավեց Թուր Արդինը, Մարդինի բերդը և ուղղվեց դեպի Մոսուլ և գրավեց երկու բերդերից մեկը:

Ասվում է, որ դեռ այնտեղ չէր հասել, երբ եկավ Անձեացյաց (Ջավազան)³² պատրիկը և հաշտության պայմանագիր կնքեց, ապա [Իյադը] գնաց Արզն և գրավեց այն, մտավ լեռնանցքը և անցավ Բաղեշ³³ (Բաղլիս), հասավ Խլաթ, որի պատրիկը հաշտութիւն կնքեց նրա հետ, և վերջապես հասավ ալ-Այն ալ-Համիդա (Թթու ջուր)³⁴ Հայաստանում:

Ապա վերադարձավ Ռակկա, գնաց Եմեսա (Հիմս) և մեռավ քսան թվականին:

Օմարը [այս կողմերի] կառավարիչ նշանակեց Սաիդ իբն Ամիր իբն Հուզայմին, որը սակայն քիչ անց մեռավ: Ապա նա կառավարիչ նշանակեց Ումայր իբն Սադ ալ-Անսարին, որը սաստիկ կռվից հետո նվաճեց Ռաս Այնը: Ասվում է, որ Իյադն է Ումայր իբն Սադին Ռաս Այն ուղարկել, և սա նվաճել է այն՝ սաստիկ պայքարից հետո: Ասվում է նաև, որ Օմարը Իյադի մահվանից հետո է Աբու Մուսա ալ-Աշարիին Ռաս Այն ուղարկել: Ասվում է նաև, որ Խալիդ իբն ալ-Վալիդը Իյադի հետ անձամբ ներկա է եղել Ջադիրայի նվաճմանը և Ամիդում մտել է մի բաղնիք և զվարճացել գինով, իսկ Օմարը պաշտոնանկ էր արել նրան: Ասվում է, որ Խալիդը ոչ ոքի դրոշի տակ չի ընթացել, բացի Աբու Ուբայդայից, սակայն ճշմարտութիւնը միայն ալլահի գիտի:

Երբ Իյադը նվաճեց Սամոսատը, Մալաթիա ուղարկեց Հաբիբ իբն Մասլամային, որը ուժով նվաճեց այն, սակայն հաշտութիւն կնքելուց հետո բնակիչները դրժեցին [պայմանը]: Երբ Մուավիան նշանակվեց Ասորիքի (Շամ) ու Ջազիրայի կառավարիչ կրկին այնտեղ ուղարկեց Հաբիբ իբն Մասլամային, որը սրով նվաճեց այն և մահմեդական ուղամիկների տեղավորեց այնտեղ և կառավարիչ նշանակեց:

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ՔՍԱՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(10 դեկտեմբեր 641—29 նոյեմբեր 642)

էջ 9

ՏԱՐԲԵՐ ԿԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ասվում է, որ քսան թվականին (640/641) ամիրներն (կառավարիչներ) էին Ումայր իրն Սադր՝ Դամասկոսի (Դիմաշկ), Հաուրանի, Եմեսսայի (Հիմս), Կիննասրինի և Ջազիրայի (Վերին Միջագետք) վրա, իսկ Մուավիան՝ Բալկայի, Հորդանանի (Ուրդունի), Պաղեստինի (Ֆիլասթին), Ծովափի (սավահիլ), Անտիոքի (Անթաքիա), Կիլիկիայի (Կիլիկիյա) և Մաառատ Մասրայնի վրա։ Այդ ժամանակ Աբու Հաշիմ իբն Ուտբա իբն Ռաբիան հաշտություն կնքեց Կիլիկիայի համար։

ՔՍԱՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(30 նոյեմբեր 642—18 նոյեմբեր 643)

էջ 13

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԵՎԱՃՄԱՆ ՄԱՍԻՆ

Ասվում է, երբ նախմ (Նուայմ) գրավեց Ռեյը (Ռայյ), ոչ թե Աբու Դուջանային, այլ Սիմաք իբն հարաշա ալ-Անսարին ուղարկեց որպես օգնական Բուքայր իբն Աբդալլահի՝ Օմար [խալիֆայի] հրամանով Ատրպատականում կռվելու համար։ Սիմաքը զնաց Բուքայրի մոտ, որը, երբ հասավ Ատրպատական, կանգ առավ և Ջարմիգան լեռը բարձրացավ, բախվեց [մարզպան] Ֆառուխզադի որդի Իսֆանդիարի հետ, որը փախչում էր Վաշի-Ռուդից։ Սա նրա առաջին կռիվն էր Ատրպատականում։ Պարսիկները պարտվեցին և Բուքայրը գերի բռնեց Իսֆանդիարին։ Իսֆանդիարը ասաց նրան՝ հաշտությունն ես նախընտրում, թե՞ պատերազմը, ասաց՝ իհարկե հաշտությունը։ Ասաց՝ այդ դեպքում քեզ մոտ պահիր ինձ, քանզի Ատրպատականի բնակիչները քեզ չեն հպատակվի, եթե ես քեզ հետ հաշտություն չկնքեմ կամ նրանց առջև հանդես չգամ, այլ կգնան շրջակա լեռները՝ Կաբջի (Կովկասի) մարդկանց և Ռումի երկիրը, իսկ ովքեր բերդերում են փակված կմնան որոշ ժամանակ։ Եվ [Բուքայրը] նրան պահեց իր մոտ ու երկիրը նրան հպատակվեց, բացի ամ-

բացված բերդերից: Երբ նրա մոտ օգնության եկավ Սիմաք Իրն Խարաշան, Իսֆանդիարը դեռ մնում էր գերության մեջ: [Բուքայրը] կարողացավ նվաճել շրջակա գավառները, իսկ Ուտբա իրն Ֆարկադը նույնպես նվաճեց մերձակա գավառները:

Բուքայրը գրեց Օմար [խալիֆային] առաջ շարժելու թույլտվություն խնդրելով: Սա թույլատրեց նրան առաջ խաղալ դեպի ալ-Բաբ և իր մինչ այդ նվաճված հողերի վրա որևէ փոխանորդ նշանակել: [Բուքայրը] իրեն փոխանորդ նշանակեց Ուտբա իրն Ֆարկադին, իսկ Ուտբան Բուքայրի նվաճած գավառների վրա նշանակեց Սիմաք իրն Խարաշային: Օմարն ամբողջ Ատրպատականի վրա [կառավարիչ] նշանակեց Ուտբա իրն Ֆարկադին:

Ֆառուխզադի որդի Բահրամը գնաց Ուտբայի անցած ճանապարհով և այնտեղ սպասեց իր զորքով մինչև որ հասավ Ուտբան, նրանք կռվեցին, իսկ Բահրամը պարտվեց: Երբ Իսֆանդիարը, որը գերության մեջ էր Բուքայրի մոտ, լսեց եղելությունը. ասաց՝ այժմ հաշտությունը կայացած համարեք և պատերազմը վերջացած: Եվ նա հաշտություն կնքեց, և նրան հավանություն տվեց ամբողջ Ատրպատականի ժողովուրդը ու խաղաղություն տրեց Ատրպատականում: Այդ մասին Բուքայրը և Ուտբան գրեցին Օմարին՝ ուղարկելով մեկ հինգերորդը [ռազմական ավարի]:

Երբ Օմարը Բուքայրի նվաճած հողերի կառավարչի պաշտոնը տվեց Ուտբային, Ատրպատականի ժողովրդին հաշտության պայմանագիր ուղարկեց:

էջ 14

ԱԼ-ԲԱԲԻ ՆՎԱՃՄԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում տեղի ունեցավ ալ-Բաբի (Դաբրանդ) նվաճումը:

Մինչ այդ Օմարը Աբու Մուսային [ալ-Աշարի] ետ էր ուղարկել Բասրա և ալ-Բաբ ուղարկել Սուրակա իրն Ամրուին, որը կոչվում էր Զուլ-Նուր (Լուսավոր), իսկ նրա առաջապահ զորքին հրամանատար նշանակել Աբդ ալ-Ռահման Իբն Ռաբիային, որը նույնպես կոչվում էր Զուլ-Նուր: Երկու թևերից մեկի վրա [հրամանատար էր] Հուզայֆա իբն Ուսայդ ալ-Ղաֆարին, իսկ մյուսի վրա՝ Բուքայր իբն Աբդալլահ ալ-Լայսին, որն ավելի շուտ էր հասել ալ-Բաբ: Օմարը ռազմական ավարի տնօրինող նշանակեց Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլին: Սուրական առաջ խաղաց: Երբ անցավ Ատրպատականից Բուքայրը հասել էր ալ-Բաբ: Օմար [խալիֆան] Սուրակային, որպես օգնական, Զազիրայից ուղարկել էր Հաբիբ իբն Մասլամային, ուր նրա փոխարեն նշանակել էր Զիադ իբն Հանզալային:

Ծրբ Աբդ ալ-Ռահման իբն Ռաբիան կանգ առավ ալ-Բաբի առջև, ուր այդ ժամանակ կար Շահրիար թագավորը, որը Իսրայելի որդիներին փշաջող և նրանց հետ Ասորիքը նվաճող Շահրիարի սերնդից էր, սա գրեց նրան և երաշխավորագիր խնդրեց, որ նրա մոտ գաւ Այդպես էլ եղավ, և եկավ ու ասաց՝ ես գտնվում եմ դաժան թշնամու և բազմատեսակ անազնիվ ազգերի դիմաց։ Ազնիվ և խելացի մարդը չպետք է նրանց օգնի ընդդեմ ազնիվ մարդու։ Ես ընդհանուր ոչինչ չունեմ Կովկասի (Կաբչի)³⁵ բնակիչների և հայերի հետ։ Դուք արդեն հաղթել եք իմ երկրին ու ազգին և ահա այսօր ես ձեզ հետ եմ, իմ ձեռքը ձեր ձեռքում է, ջիզիան ձեզ եմ վճարելու, կօգնեմ ձեզ և կանեմ ինչ որ կամենաք։ Մի ծանրաբեռնեք մեզ ջիզիայով, թե չէ մեզ կթուլացնեք և օգնած կլինեք ձեր թշնամիներին։

Աբդ առ-Ռահմանը նրան (Շահրիարին) ուղարկեց Սուրակայի մոտ, որի հետ նույն ձևով խոսեց, և Սուրական ընդառաջեց նրան ու ասաց՝ ջիզիան կվճարի նա, ով մնում է [տանը] և չի պատերազմում թշնամու հետ։ [Շահրիարը] համաձայնեց նրա հետ, իսկ Սուրական այդ մասին գրեց Օմարին, որը թույլատրեց և հավանություն տվեց։

էջ 14

ՄՈՒՂԱՆԻ (ՄՈՒԿԱՆ) ՆՎԱՃՄԱՆ ՄԱՍԻՆ

Ծրբ Սուրական ավարտեց ալ-Բաբի [նվաճումը], ուղարկեց Բուքայր իբն Աբդալլահին, Հարիր իբն Մասլամային, Հուդայֆա իբն Ուսայդին և Սալման իբն Ռաբիային՝ Հայաստանը շրջապատող լեռների բնակիչների դեմ։ Նա Բուքայրին ուղարկեց Մուղան (Մուկան), Հաբիբին՝ Տփղիս (Տաֆլիս), Հուդայֆային՝ ալանաց (ալ-լան) լեռները, իսկ Սալմանին՝ մյուս կողմը։ Սուրական գրեց Օմարին նվաճումների և այդ անձնավորություններին վերոհիշյալ վայրերը ուղարկելու մասին։ Օմարն անհանգստացավ, քանի որ այդ գործը գլուխ չէր գա առանց մթերքի, քանզի [նվաճվող] երկիրը ընդարձակ էր և զորքը մեծ էր։ Սակայն երբ [նվաճված ժողովուրդը] վստահեց նվաճողներին և նրան դուր եկավ մահմեդականությունն ու նրա արդարությունը, մեռավ Սուրական իրեն փոխանորդ թողնելով Աբդ ալ-Ռահման իբն Ռաբիային։ Զորավարներից ոչ մեկը նոր բան չնվաճեց, բացի Բուքայրից, որը Մուղանի ժողովրդին ցաք ու ցրիվ արեց, և նրանք համաձայնեցին կրկին վճարել ջիզիան ամեն մի մեծահասակից մեկ դիւնարի չափով։ Այս նվաճումը քսանմեկ թվին էր։

Ծրբ Օմարը լսեց Սուրակայի մահը և Աբդ առ-Ռահման իբն Ռաբիա-

յի նրան փոխարինելը, հաստատեց Աբդ ալ-Ռահմանին որպես ալ-Բաթ սահմանային քաղաքի [կառավարիչ] և հրամայեց նրան արշավել թուրքերի դեմ:

էջ 14—15

ԹՈՒՐԿՆԵՐԻ (ԽԱՋԱՐՆԵՐԻ) ԴԵՄ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Երբ Օմար [խալիֆան] հրամայեց Աբդ-ալ-Ռահման իբն Ռաբիային արշավել թուրքերի դեմ, սա դուրս եկավ իր զորքով և անցավ ալ-Բաբը: Շահրիարը հարցրեց նրան՝ ի՞նչ ես ուզում անել: Ասաց՝ ուզում եմ արշավել Բալանջարի և թուրքերի դեմ: Ասաց՝ մենք դո՛հ կլինենք, եթե նրանք մեզ հանգիստ թողնեն ալ-Բաբից այս կողմ: Ասաց Աբդ ալ-Ռահմանը՝ սակայն մենք չենք գոհանա, մինչև որ արշավենք նրանց երկիրը: Ինձ հետ կան այնպիսի մարդիկ, որ եթե մեր ամիրը⁵⁰ (խալիֆան) թույլ տա [այդ երկրի] խորքերը գնալու, ալլահը վկա ես նրանց հետ կհասնեմ մինչև Ռում^{*}: Ասաց՝ ովքեր են դրանք, պատասխանեց՝ մարդիկ են, որոնք ընկերացել են ալլահի առաքյալին և լծվել են այս գործին անկեղծ ցանկությունով: Նրանք հպարտության և արժանապատվության տեր էին դեռ նախամահմեդական շրջանում և այժմ առավել ևս ավելացել է հպարտությունն ու արժանապատվությունը: Նրանք այս գործը երբեք չեն լքի, հաղթանակը նրանց հետ կլինի, եթե ուրիշները չլքեն և երես չդարձնեն:

Եվ նա արշավեց Բալանջար Օմարի ժամանակ: Ասացին [թուրքերը]՝ նա մեզ վրա չէր համարձակվի արշավել, եթե նրա հետ չլինեին հրեշտակները, որոնք փրկում էին նրանց մահից: Սրանք փախան ու պատրասարվեցին բերդերում, իսկ նա վերադարձավ ավարով ու հաղթանակով: Նրա ձիավորները հասան ալ-Բայդա [քաղաքը]՝ Բալանջարից երկու հարյուր փարսախ [հեռավորության] վրա, ապա վերադարձավ, և նրա մարդկանցից ոչ ոք չէր սպանվել:

Եվ [Աբդ ալ-Ռահմանը] նրանց դեմ արշավանքներ կատարեց նաև Օսման իբն Աֆֆան [խալիֆայի] օրոք և նախկինի նման հաղթանակ տարավ: Սակայն Քուֆայի [ռազմիկների] տրամադրությունը փոխվեց, քանզի Օսմանը կրոնափոխ եղածներին օգտագործում էր [զորքի մեջ], որպեսզի ուղիղ ճանապարհի բերի նրանց: Բայց դա նրանց չուղղեց, այլ առավել ևս փշացան:

Դրանից հետո Աբդ ալ-Ռահմանը նորից արշավեց. թուրքերը սկսեցին զայրանալ ու հավաքվեցին անտառներում: Նրանցից մեկը հանկար-

^{*} Բնագրում կա՝ պարիսպը (ռադմ):

ծակի նետահարեց մի մահամեղականի և սպանեց նրան, իսկ սրա ընկեր-
ները լքեցին ու փախան։ Այդ ժամանակ [խաղարները] դուրս եկան ու
կոխվին սկսեցին։ Կոխվր սաստկացավ և մեկը օդի մեջ գոռաց՝ համբերու-
թյո՛ւն Աբդ ալ-Ռահմանի մարդիկ, ձեզ սպասում է դրախտը։ Կռվեց Աբդ
ալ-Ռահմանը, մինչև որ սպանվեց, իսկ նրա ընկերակիցները ցրվեցին։
Դրոշը վերցրեց նրա եղբայրը՝ Սալման իբն Ռաբիան և շարունակեց կռվել։
Նորից մեկը գոռաց՝ համբերությո՛ւն Սալմանի մարդիկ։ Սալմանն ասաց՝
իսկ մի՞թե անհամբերությունն ես տեսնում։ Դրանից հետո նա իր մարդ-
կանցով և Աբու Հուրայրա ալ-Դուսիի հետ նահանջեց Գեդան (Ջիլան) և
այնտեղից անցան Վրկան (Ջուրջան)։ Ապա թուրքերը հանդուգն դարձան,
և նույնիսկ, խլեցին Աբդ ալ-Ռահմանի դիակը, որի միջոցով մինչև չրս
իրենց աստծուց անձրև են խնդրում։

էջ 15

ՆՎԱՃՎԱԾ ԵՐԿՐՆԵՐԸ ՔՈՒՖԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԲԱՍՐԱՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ նույն տարում Օմար [խալիֆան] նվաճված երկրները վերաբա-
ժանեց քուֆացիների ու բասրացիների միջև...

Երբ կուսակալ դարձավ Մուավիան, որը երկու Իրաքներից* եկած
մարդկանցից, որոնք նրան ներկայացել էին Ալիի [խալիֆայության] ժա-
մանակ, կազմակերպեց Կիննասրինի զորքը, իսկ Կիննասրինը մինչև այդ
Ծմեսայի (Հիմսի) գավառներից էր, ապա նա տվեց նրանց (քուֆացիների)
բաժինը՝ Իրաքի, Ատրպատականի, Մոսուլի և ալ-Բաբի (Դարբանդի)
նվաճումներից, քանզի այդ բոլորը քուֆացիների նվաճումներն էին։ Իսկ
Ջազիրայի ու Մոսուլի բնակչությունը խայտաբղետ էր. Ալիի օրոք այստեղ
էին փոխադրվել վերոհիշյալ երկու քաղաքներից եկած գաղթականներ,
և ահա Մուավիան քուֆացիներին տվեց իրենց բաժինը։

Հայաստանի ժողովուրդը ապստամբեց Մուավիայի ժամանակ, և
սա Հաբիբ իբն Մասլամային նշանակեց ալ-Բաբի կառավարիչ, իսկ Հաբի-
բը այդ ժամանակ Վիրքում (Ջուրջան) էր։ Նա գրեց Տփղիսի և վրաց
(Ջուրպանի) լեռների ժողովուրդներին, և նրանք հպատակվեցին նրան։

* Պարսկական Իրաքը (Համադան քաղաքով) և արաբական Իրաքը (Միլագետք)։

ՍԱԼՄԱ ԻՐՆ ԿԱՅՍ ԱԼ-ԱՇՋԱՅԻԻ ԵՎ ՔՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Օմար խալիֆան, երբ տեսնում էր, որ մահմեդականների զորք էր հավաքվել, հրամայում էր, որ զորավար նշանակվի գիտության և մահմեդական իրավունքին ծանոթ որևէ մարդ։ Եվ ահա հավաքվել էր նրա մոտ մահմեդականների մի զորք և նա նշանակեց Սալմա իբն Կայս ալ-Աշջայիին։ Ասաց՝ գնա՛ ալլահի անունով, կովի՛ր ալլահի համար՝ ալլահին շհավատացողների դեմ։ Երբ թշնամու հանդիպեք, կո՛չ արեք մահմեդականություն ընդունել, եթե ընդունեն կմնան իրենց երկրում և կվճարեն զաբատ³⁷, բայց ֆայից³⁸ բաժին չեն ունենա։ Եթե Ձեզ հետ շարժվեն (կովի գնան), ապա կունենան ձեր իրավունքները և ձեր պարտականությունները։ Սակայն, եթե մերժեն [ընդունել մահմեդականությունը], ապա առաջարկեցեք վճարել ջիզիա։ Եթե ընդունեն, վերցրեք նրանցից [ջիզիան], սակայն, եթե այս էլ մերժեն, կովեցե՛ք նրանց դեմ։ Եթե ապաստանեն ամրություններում և ապա խնդրեն ձեզանից, որ իջնեն [ամրություններից] վստահելով ալլահի ու նրա մարգարեի դատաստանին կամ ալլահի հովանավորությանը (զիմմա), մի՛ ընդառաջեք նրանց, քանզի շգիտեք, կստանա՞ք ալլահի ու նրա մարգարեի դատաստանը և հովանավորությունը, թե՞ ոչ։

Ասվում է, որ նրանք առաջ խաղացին ու հանդիպեցին թշնամի հեթանոս քրդերի և առաջարկեցին մահմեդականություն կամ ջիզիա, սակայն սրանք չհամաձայնեցին։ Կովեցին նրանց հետ և փախուստի մատնեցին [քրդերին], կոտորեցին ռազմիկներին, գերեվարեցին երեխաներին և իրենց միջև բաժանեցին։

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուավիան ամառային արշավանք կատարեց, մինչև որ հասավ Ամորիոն (Ամմուրիյա) և իր հետ էր ալլահի առաքյալի ընկերներից Իբադա իբն ալ-Սամիտը, Աբու Այյուբ ալ-Անսարին, Աբու Զուրրը և Շադդադ իբն Աուսը։

ՔՍԱՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(28 հոկտեմբեր 645—16 հոկտեմբեր 646)

ՀՂ 41—42

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՍԻ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ալեքսանդրիայի (Իսքանդարիյա) բնակիչներն ապստամբեցին և իրենց հաշտության [պայմանագիրը] խախտեցին:

Բանն այն է, որ հռոմեները դժգոհ էին, որ մահմեդականները գրավել էին Ալեքսանդրիան և կարծում էին, որ իրենք ապահով չեն լինի իրենց երկրում՝ Ալեքսանդրիան կորցնելուց հետո: Նրանք գրեցին ներսում եղած հռոմեներին ու դրդեցին նրանց հաշտության [պայմանագիրը] խախտելու: Վերջիններս ընդունեցին:

Կոստանդնուպոլսից նրանց մոտ եկավ մի մեծ բանակ. որի հրամանատարն էր Մանուել (Մանուիլ)³⁹ ներքինին: Նրանք այնտեղ ափ դուրս եկան և նրանց միացան ներսում եղած հռոմեները, սակայն ալ-Մուկաուկիսը (պատրիարքը) շհամաձայնեց նրանց հետ, այլ հավատարիմ մնաց հաշտության [պայմանագրին]: Երբ լուրը հասավ Ամրու իբն ալ-Ասին, շարժվեց նրանց դեմ, և հռոմեները, նույնպես, դուրս եկան նրա դեմ: Նրանք հանդիպեցին, և տեղի ունեցավ սաստիկ ընդհարում: Հռոմեները պարտվեցին և մահմեդականները հետապնդեցին նրանց մինչև որ մտցրեցին Ալեքսանդրիա և սաստիկ կոտորած արեցին քաղաքում: Սպանվածների մեջ էր նաև Մանուել (Մանուիլ) ներքինին: Երբ հռոմեները դուրս եկան քաղաքից, իրենց հետ տարան բոլոր գյուղերի բնակիչների ունեցվածքը, լինեն դրանք իրենց համակիր [գյուղեր], թե՛ հակառակորդ: Երբ մահմեդականները հաղթեցին, այն գյուղերի ժողովուրդը, որ [հռոմեներին] դեմ էր, ասաց Ամրուին՝ հռոմեները վերցրին մեր գրաստը և փողերը, իսկ մենք ձեզ չենք դավաճանել և հպատակ էինք ձեզ: Նա ստուգումից հետո վերադարձրեց նրանց փողերը ինչքան որ նրանք կարող էին ապացուցել: Եվ Ամրուն քանդեց Ալեքսանդրիայի պարիսպները՝ այն թողնելով առանց պարսպի:

ՀՂ 43—44

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՐԻԻ ՀԵՏ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ Օսմանը Վալիդին Քուֆայի կառավարիչ նշանակեց, Ուտբա իբն Ֆարկադին հեռացրեց Ատրպատականից, իսկ սրա ժողովուրդը ապստամ-

բեց: Վալիդը հարձակվեց նրանց վրա քսանհինգ թվականին՝ (645/646) առաջապահ գնդի հրամանատար ունենալով Արգալլահ իբն Շուբայլ ալ-Ահմասին: Նա արշավեց Մուզանի, Բիրի և ալ-Թալասանի ժողովրդի վրա. նվաճեց, կողոպտեց ու գերեվարեց: Ատրպառականի ժողովուրդը հաշտություն խնդրեց և նա համաձայնեց՝ Հուլայֆայի հաշտության պայմաններով, ըստ որի [հարկը] ութհարյուր հազար դիրհեմ էր: Դրամն ստանալով նա զորքը ցրեց, իսկ Սալման իբն Ռաբիա ալ-Բահլիին ուղարկեց Հայաստանի ժողովրդի դեմ տասներկու հազարով: Սա գնաց Հայաստան՝ սպանեց, գերեվարեց ու կողոպտեց, ապա լի ձեռքերով գնաց Վալիդի մոտ: Իտ եկավ նաև Վալիդը՝ հաղթական ավարով: Նա ուղղվեց դեպի Մոսուլ, ապա եկավ ալ-Հադիսա և այնտեղ կանգ առավ:

Այստեղ նամակ ստացավ Օսման [Խալիֆայից], որը գրում էր, թե՝ Մուավիա իբն Աբու Սուֆիանը տեղեկացրել է, որ հռոմեները հարձակվել են մահմեդականների վրա հոծ բազմությամբ: Գտնում եմ, որ քուֆացիք պետք է օգնեն իրենց եղբայրներին: Երբ նամակս ստանաս, մի քաջ և ուժեղ մարդու ուղարկիր ութ հազար կամ ինն հազար [ռազմիկների] հետ, այնտեղից, ուր կստանաս իմ նամակը, ողջույն:

Ելավ Վալիդը ու ծանոթացրեց մարդկանց այդ գործին: Նա նշանակեց Սալման իբն Ռաբիա ալ-Բահլիին, որը ութ հազար հոգու հետ համաձայնեց [կռվի գնալ]: Ասորիքի զորքի հետ գնացին Ռումի երկիրը: Այդ ժամանակ Ասորիքի արաբների զորքի հրամանատարն էր Հաբիբ իբն Մասլամա իբն Խալիդ ալ-Ֆիհրին, իսկ քուֆացիների զորքի [հրամանատարն] էր Սալման իբն Ռաբիան: Նրանք արշավանքներ կատարեցին Ռումի երկրում և գերեվարեցին ինչքան որ կամենում էին ու նրանց ձեռքերը լցվեց կողոպուտով և շատ բերդեր գրավեցին:

Ասվում է նաև, թե Սալման իբն Ռաբիային՝ Հաբիբ իբն Մասլամային օգնական ուղարկողը Սաիդ իբն ալ-Ասն էր: Բանն այն է, որ Օսման [Խալիֆան] գրել էր Մուավիային՝ հրամայելով Հաբիբ իբն Մասլամային ուղարկել Ասորիքի արաբների հետ արշավելու Հայաստան: Նա ուղարկեց նրանց և սա եկավ Կարնո քաղաքը (Կալիկալա), պաշարեց այն և այնքան նեղեց բնակիչներին, որ նրանք երաշխավորագիր խնդրեցին՝ հեռանալու կամ ջիզիա վճարելու պայմանով: Իրոք շատերը հեռացան ու գնացին Ռումի երկիրը: Հաբիբն իր հետ եղած [ռազմիկների] ընկերակցությամբ այստեղ մի քանի ամիս մնաց:

Սա կոչվել է Կալիկալա⁴⁰, որովհետև Արմինիակուսի պատրիկի կինը, որի անունը Կալի էր, կառուցել էր այս քաղաքը և կոչել Կալի Կալա (Կարնո քաղաք), այսինքն Կալիի բարեգործություն, իսկ արաբները արարացնելով, ասել են Կալիկալա: Ապա նա լսեց, որ Արմինիակուսի պատրիկը (սա այն երկիրն է, որն այժմ Կիլիկյան Արսլան սուլթանի որդիների ձեռքումն

է, այսինքն՝ Մալաթիա, Սեբաստիա (Սիվաս)⁴¹, Ակսարա, Իկոնիա և այն կողմ եղած երկրները մինչև Կոստանդնուպոլիս), որի անունն էր ալ-Մաուրիան (Մավրիանոս)⁴², գալիս էր իր կողմը ութսուն հազար հոռոմներով ու թուրքերով: Հաբիբը այդ մասին տեղեկացրեց Մուավիային, իսկ Մուավիան գրեց Օսմանին: Օսմանն ուղարկեց Սաիգ իբն ալ-Ասին, հրամայելով օգնել Հաբիբին, և սա, ինչպես ասվեց, ուղարկեց Սալման իբն Ռաբիային վեց հազար [ռազմիկներով]:

Հաբիբը որոշեց հոռոմների վրա գիշերը հարձակվել և այդ բանը լսեց սրա կինը՝ Ումմ (մայր) Աբգալլահը, Յադիդ ալ-Քալբիի դուստրը և ասաց՝ ո՛ր է քո հանդիպման վայրը, ասաց [Հաբիբը]՝ Մաուրիանի վրանում կամ դրախտում: Նա գիշերանց հարձակվեց ու սպանեց դիմադրողներին, ապա վերադարձավ վրանները և գտավ, որ կինն իրենից առաջ էր հասել: Սա առաջին կինն էր արաբների մեջ, որի համար վրանում վարագույր էր պատրաստվել: Երբ Հաբիբը մեռավ, նրա հետ ամուսնացավ ալ-Դահհակ իբն Կալսը, և նա սրա որդու մայրը դարձավ:

Երբ հոռոմները պարտվեցին, Հաբիբը վերադարձավ Կարնո քաղաք (Կալիկալա), ապա գնաց և կանգ առավ Մարդադիում (Մարբալա)⁴³: Նրա մոտ եկավ իլաթի⁴⁴ պատրիկը՝ Իյադ իբն Ղանմի պայմանագրով և [Հաբիբը] ըստ այնմ վարվեց նրա հետ: Պատրիկն իր վրա դրված հարկը բերեց նրան և Հաբիբը իջավ իլաթ ապա գնաց առաջ և նրան ընդունեց Մոկսի (Մուքս) տերը, որը Վասպուրականի (ալ-Բուսֆուռաջան) գավառներից էր և սրան իր տիրույթներում վերահաստատեց: Այստեղ նա գնաց Արտաշատ (Արդաշաթ), որը մի գյուղ էր, ուր կիրմիզ⁴⁵ է լինում, որով ներկում են: Նա իջավ Դվինի (Դաբիլ)⁴⁶ գետի առջև և իր ձիավորներին ուղարկեց ու պաշարեցին քաղաքը: Բնակիչները ամրացան ներսում, իսկ [ինքը] քարանետ մեքենա (մանջանիկ) դրեց և նրանք երաշխավորագիր (աման) խնդրեցին: Նա ընդառաջեց և ապա իր ձիավորներին առաջ ուղարկեց, և նրանք հասան Զատ ալ-Լուջում (սանձերի վայրը): Այսպես է կոչվել, որովհետև մահմեդականները հանել էին իրենց ձիերի սանձերը և [այդ ժամանակ] վրա էին հասել հոռոմները նախքան սրանք կհասցնեին սանձերը դնել: Այսուհանդերձ սրանք սանձերը դրել, պատերազմել ու հաղթել են նրանց:

Եվ [Հաբիբը] մի ջոկատ ուղարկեց Շիրակ Տայք (Սիրաջ Թայր)⁴⁷ և Բագրևանդ (Բաղրավանդ), որի պատրիկը հաշտություն կնքեց հարկ վճարելու պայմանով: Եկավ նրա մոտ Վասպուրականի (Բուսֆուռաջանի) պատրիկը և հաշտություն կնքեց իր ամբողջ նահանգի համար: [Հաբիբը] եկավ Սիսական (Սիսաջան)⁴⁸, որի բնակիչները կռվեցին, սակայն նա հաղթեց և նրանց բերդերը գրավեց: Նա դնաց Վիրք (Ջուրզան), և եկավ նրա մոտ պատրիկի դեսպանը՝ խնդրելով հաշտություն, և նա հաշտություն

կնքեց: Նա գնաց Տփղիս (Տաֆլիս), որը Վիրքում է և նրա բնակիչների հետ հաշտություն կնքեց, ապա հաշտությամբ գրավեց շրջակա բազմաթիվ բերդեր ու քաղաքներ:

Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլին⁴⁹ գնաց Առան և նվաճեց Բայլականը՝ հաշտության պայմանագրով, ըստ որի [երաշխավորում էր] նրանց կյանքը, ունեցվածքը և քաղաքի պարիսպները, [պահանջելով] ջիզիա և խարաջ: Ապա Սալմանը եկավ Պարտավ (Բարդաա) և բանակ դրեց Թարթառ (Սարսուր)⁵⁰ գետի ափին, որը [քաղաքից] մեկ փարսախ հեռավորության վրա էր գտնվում: Նրա բնակիչները օրերով դիմադրեցին նրան, իսկ նա ասպատակեց գյուղերը: Եվ Պարտավի բնակիչները հաշտություն կնքեցին Բայլականի պայմաններով և նա մտավ [քաղաքը], իր ձիավորներին ցրեց, որոնք այդ նահանգի գյուղերը նվաճեցին: Նա Բաղասականի (Բալասաջան) քրդերին հրավիրեց ընդունելու մահմեդականությունը, սակայն նրանք կռվի դուրս եկան նրա դեմ և նա հաղթեց նրանց, ոմանց պարտավորեցրեց վճարել ջիզիա, իսկ ոմանց, որոնք քիչ էին. պարտավորեցրեց վճարել սադակա [հարկը]: Նա մի ձիավոր ջոկատ ուղարկեց Շամխոր (Շամքուր), որը նվաճեց այն: Սա մի հին քաղաք էր և շեն մնաց մինչև որ այն կործանեցին սևորդիք (Սիյավարդիյա)⁵¹ կոչվածները: Սա մի ժողովուրդ է, որը համախմբվեց, երբ Յազիդ իբն Մազիդ [ոստիկանը] հեռացավ Հայաստանից և նրանք ուժեղացան: Բուղան այն վերականգնեց երկուհարյուր քառասուն թվականին (854/855) և այն կոչեց Մուտավաքիլիյա՝ Մութավաքքիլ [խալիֆայի] անունով:

Ապա Սալմանը գնաց Արաքսի (ալ-Ռաս) և Քուռի միախառնման վայրը, գրավեց Կապաղակը (Կաբալա), և Շաքիի տերը և ուրիշներ հաշտություն կնքեցին հարկ վճարելու պայմանով: Հաշտություն կնքեցին նաև Շիրուանի թագավորը, լեռների մյուս թագավորները, Մասկաթի, Շապուրանի (Շաբուրան) և ալ-Բաբի բնակիչները. սակայն հետո հրաժարվեցին:

էջ 44

ՄՈՒԱՎԻԱՅԻ՝ ՌՈՒՄԻ ԴԵՄ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուավիան արշավեց Ռումի երկիրը, հասավ Ամորիոն (Ամմուրիյա) և Անտիոքի ու Տարսոնի միջև գտնվող բերդերը գտավ լքված վիճակում: Նա Ասորիքի ու Զազիրայի մեծաթիվ զորքեր նշանակեց հսկելու մինչև որ վերջացներ իր արշավանքները: Ապա նա Յազիդ իբն ալ-Հուռ ալ-Աբսիին ուղարկեց ամառային արշավանքի և նրան հրամայեց նույնն անել: Երբ վերադարձավ, քանդեց այդ բերդերը մինչև Անտիոք:

ԵՐԵՄՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(24 օգոստոս 651—11 օգոստոս 652)

էջ 59

Ասվում է, որ այդ տարում նվաճվեց Հայաստանը Հաբիբ իբն Մասլամայի կողմից, որի մասին նախապես հիշել ենք:

ԵՐԵՄՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(12 օգոստոս 652 —1 օգոստոս 653)

էջ 66

ԹՈՒՐԲԵՐԻ (ԽԱՋԱՐՆԵՐԻ) ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԱԲԴ ԱԼ-ՌԱՀՄԱՆ
ԻԲՆ ՌԱԲԻԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում խազարները և թուրքերը հաղթեցին մահմեդականներին՝
Իանն այն էր, որ երբ արշավանքները հաճախակի դարձան, [խա-
զարները] սկսեցին դժգոհել ու խորհրդակցել: Նրանք ասում էին՝ մենք
առաջ մի ազգ էինք, որին ոչ ոք չէր կարող դիմադրել, մինչև որ եկավ այս
փոքրաթիվ ազգը, և մենք անզոր դարձանք նրա դիմաց: Նրանցից ոմանք
ասացին՝ սրանք չեն մեռնում և արշավանքի ժամանակ ոչ ոք չի վիրավոր-
վում: Իրոք, մահմեդականները արշավել էին, բայց ոչ ոք չէր սպանվել
և դրա համար [խազարները] կարծեցին, թե նրանցից ոչ ոք չի մեռնում:
Ասացին իրար՝ արդյոք չփորձենք [սպանել նրանց]: Նրանք դարան մտան
անտառում և մի քանի զինվոր անցավ նրանց մոտով ու նրանք նետա-
հարելով սպանեցին նրանց: Ապա նրանց հրամանատարները պայմանա-
վորվեցին և օր նշանակեցին նրանց վրա հարձակվելու համար: Դրանից
առաջ Ոսման [խալիֆան] Աբդ ալ-Ռահման իբն Ռաբիային, որն այդ
ժամանակ ալ-Բաբի [կառավարիչն] էր, գրել էր՝ մարդկանց (ռազմիկնե-
րին) փափկացրել է կուշտ կյանքը, ուստի մի վտանգի մահմեդականներին
հեռուններ տանելով, քանզի իս վախենում եմ, որ կկոտորվեն: Սակայն
սա ետ չկանգնեցրեց Աբդ ալ-Ռահմանին իր նպատակից: Նա արշավեց
դեպի Բալանջար, իսկ թուրքերն ու խազարները հավաքվել էին, և խիստ
ընդհարվեցին մահմեդականների հետ, և Աբդ ալ-Ռահմանն սպանվեց:
Նա կոչվում էր Զուլ-Նուր (լուսավոր), որը նրա սրի անունն էր: Բալան-
ջարի ժողովուրդը վերցրեց նրա դիակը, դրեց դագաղի մեջ և նրա միջո-
ցով անձրև ու հաղթանակ էր հայցում [աստծուց]:

Երբ նա սպանվեց մարդիկ երկու մասի բաժանվեցին. մի մասն [ուղ-

ղվեց] ալ-Բաբ, ուր միացավ Սալման իրն Ռաբիային՝ Աբդ ալ-Ռահմանի եղբորը, որին Սաիդ իբն ալ-Ասր մահմեդականներին օգնական էր ուղարկել Օսմանի հրամանով: Երբ նրանք միացան, միասին փրկվեցին: Մյուս խումբը [գնաց] Գեղան (Ջիլան) ու Վրկան (Ջուրջան), և սրանց մեջ էին Սալման պարսիկն ու Աբու Հուրայրան:

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(2 օգոստոս 653—21 հուլիս 654)

էջ 68

Այդ տարում տեղի ունեցավ Մուավիայի արշավանքը Հիսն Մարա, Ռումի երկրում, Մալաթիայի կողմերում:

ԵՐԵՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(19 հունիս 657—8 հունիս 658)

էջ 165

Ապա [Ալի խալիֆան] եկավ ու մտավ պալատը և, երբ նա եկավ Քուֆա, խարիջները (ապստամբները) նրա հետ շմտան, այլ եկան, կանդառան Հուրարայում: Իսկ Ալիս ալ-Կարնին սպանվել է Սիֆֆինի ճակատամարտում, սակայն ասվում է, թե նա սպանվել է Դամասկոսում, ասվում է նաև, թե մահացել է Հայաստանում կամ Սիջիստանում:

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(26 ապրիլ 662—14 ապրիլ 663)

էջ 210

Այս տարում մահմեդականներն արշավեցին ալանների, ինչպես նաև հոռոմների դեմ և մեծ պարտության մատնեցին նրանց, կոտորելով մի խումբ պատրիկների:

էջ 212

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարում մեռավ Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրին Հայաստանում, ուր նա Մուավիայի կողմից կառավարիչ (ամիր) էր նշանակված և մասնակցել էր նրա բոլոր պատերազմներին:

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(15 ապրիլ 663—3 ապրիլ 664)

էջ 212

Այդ տարում Բիսր իբն Աբու Արթատը արշավեց Ռումի երկիրը և այնտեղ ձմեռեց, մինչև որ հասավ Կոստանդնուպոլիս, ինչպես ասում է Վակիդին։ Սակայն ավանդությունների դիտակ մարդիկ ժխտում են, ասելով, թե Բիսրը ոչ մի ժամանակ չի ձմեռել Ռումի երկրում։

ՔԱՌԱՍՈՒՆԶՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(4 ապրիլ 664—23 մարտ 665)

էջ 218—219

Այդ տարում մահմեդականները Աբդ ալ-Ռահման իբն խալիդ իբն ավ-Վալիդի հետ մտան Ռումի երկիրը և այնտեղ ձմեռեցին, իսկ Բիսր իբն Աբու Արթատը ծովի վրա հարձակում գործեց։

ՀԻՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(8 հունվար 672—26 դեկտեմբեր 672)

էջ 244

Այդ տարում Սուֆիան իբն Աուֆ ալ-Ասադին արշավեց Ռումի երկիրը և այնտեղ ձմեռեց։ Ըստ ոմանց, նա այնտեղ մեռավ և հետնորդ նշանակեց Աբդալլահ իբն Մասադա ալ-Ֆիզարին։ Ասվում է նաև, որ այդ տարում Ռումի երկրում ձմեռել է Բիսր իբն Աբու Արթատը, որի հետ էր Սուֆիան իբն Աուֆը, իսկ ամառային հարձակումն այդ տարում կատարել է Մուհամմադ իբն Աբդալլահ ալ-Սակաֆին։

ՀԻՍՈՒՆԻՆՆ ԹՎԱԿԱՆ

(25 հոկտեմբեր 678—12 հոկտեմբեր 679)

էջ 256

Այդ տարում ցամաքում Ամրու իբն Մուրրա ալ-Ջահինն ձմեռեց Ռումի երկրում, իսկ ծովում հարձակվեց Ջունադա իբն Աբու Ումայյան։ Ասվում է նաև, թե այդ տարում ծովային հարձակում չէր եղել։

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

էջ 259

Այդ տարում մահմեդականները հարձակվեցին Կամախ (Քամախ) բերդի վրա, և նրանց հետ էր Ումայր իբն ալ-Հուբար ալ-Սուլամին: Ումայրը մագլցեց պարիսպը և մենակ շարունակեց կռվել, մինչև որ հայտնաբերեց հոռոմների [մուտքը]: Մահմեդականները բարձրացան ու գրավեցին այն Ումայրի հետ միասին, որը դրանով (հաղթանակով) շատ էր հպարտանում:

ՎԱԹՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(8 օգոստոս 685—27 հուլիս 686)

էջ 364

ՄՈՒԽՏԱՐԻ՝ ՔՈՒՖԱՅՈՒՄ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

.....
Առաջին պաշտոնը, որ տվեց Մուխտարը⁵⁴ այն էր, որ Աբդալլահ իբն ալ-Հարիսին, ալ-Աշտարի եղբորը նշանակեց Հայաստանի կառավարիչ և Մուհամմադ իբն Ումայր իբն Աթարիդին՝ Ատրպատականի կառավարիչ, իսկ իբն ալ-Ռահման իբն Սաիդ իբն Կայսին Մոսուլի վրա [նշանակեց]:

ՎԱԹՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(28 հուլիս 686—17 հուլիս 687)

էջ 386

ՄՈՒՍԱԲԻ՝ ՄՈՒԽՏԱՐԻ ԴԵՄ ԳԵԱԼՈՒ ԵՎ ՄՈՒԽՏԱՐԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

.....
Աբդ ալ-Մալիք իբն Մարուան [խալիֆան] դրեց իբն ալ-Աշտարին՝ Վոչ անելով հնազանդվել և ասաց՝ եթե համաձայնես, ապա քեզ կլինի Իրաքի [կառավարչությունը]: Իբրահիմ [իբն ալ-Աշտարը] խորհրդակցեց ընկերների հետ, և նրանք տարակարծիք եղան: Ասաց Իբրահիմը՝ եթե վիրավորած լինեի իբն Զիադին և Ասորիքի (Շամի) ազնվականներին, կընդունեի Աբդ ալ-Մալիքի առաջարկը, թեև իմ երկրից ու ընտանիքից ոչինչ չեմ նախընտրի: Նա դրեց Մուսաբին, թե ուզում է միանալ նրան: Մուսաբը դրեց նրան, որ պատրաստ է ընդունելու և նա եկավ ու հնազանդվեց:

Երբ Մուսաբը լսեց նրա գալստյան մասին, ալ-Մուհալլաբին ուղար-

կեց, որպես Մոսուլի (Մաուսիլ), Ջազիրայի, Հայաստանի ու Ատրպատա-
կանի կառավարիչ:

ՎԱԹՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(18 հուլիս 687—5 հուլիս 688)

էջ 389

ԽԱՐԻՋԻՆԵՐԻ ՖԱՐՍՈՒՄ ՈՒ ԻՐԱՔՈՒՄ ՄՂԱԾ ԿՌԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարում Մուսաբը Օմար իբն Ուբայդալլահ իբն Մուամմարին նը-
շանակեց Ֆարսի կառավարիչ և հանձնարարեց պայքարել ազրակի [հո-
սանքին պատկանող] խարիջիների (ապստամբ) դեմ: Մուսաբի առաջին
կառավարչության շրջանին և Համզա իբն Աբդալլահ իբն ալ-Ջուբայրի
կառավարչության ժամանակ նրանց դեմ պայքարը հանձնարարված էր
Մուհալլաբին: Երբ Մուսաբը [Աբդալլահ իբն Ջուբայրի կողմից] կրկին
[Իրաքի] կառավարիչ նշանակվեց, կամեցավ Մուհալլաբին Մոսուլի, Ջա-
զիրայի ու Հայաստանի կառավարիչ դարձնել:

ՀԱՏՈՐ ԶՈՐՐՈՐԴ

ՅՈԹԱՆԱՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(25 հունիս 689—14 հունիս 690)

էջ 9

[Ապստամբ] Ջահհաֆը փախավ, իսկ Աբդ ալ-Մալիք [Խալիֆան]՝
հրամայեց բռնել նրան, և նա անցավ հոռոմների երկիրը:

Ջահհաֆը թափառում էր հոռոմների երկրում՝ Տրապիզոնից (Թարա-
բուզանդա) մինչև Կարնո քաղաք (Կալիկալա): Նա Աբդ ալ-Մալիքի պա-
լատականներից Կայս ցեղին պատկանող մեկին ուղարկեց իրեն համար
երաշխավորագիր խնդրելու՝ Աբդ ալ-Մալիքը տվեց երաշխավորագիրը և
նա (Ջահհաֆը) վերադարձավ:

էջ 28

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ՄԱՐՈՒԱՆԻ՝ ԶԱԶԻՐԱՅԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ
ՆՇԱՆԱԿՎԵԼՍԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Աբդ ալ-Մալիքը իր եղբորը՝ Մուհամմադին, նշանակեց Ջազիրայի ու Հայաստանի կառավարիչ։ Սա արշավանք կատարեց ու ջարդեց թշնամուն։ [Մինչ այդ], Տառետի (Թիրրիխ)⁵⁵ լիճը Հայաստանում ազատ էր [ձկնորսության համար] և ոչ ոք արգելք չէր դնում, այլ ով ուզում էր, վերցնում էր իր ցանկացածը։ Սակայն [Մուհամմադը] արգելեց ձկնորսությունը և [պաշտոնյա] նշանակեց, որը վերցնում էր [ձուկը] վաճառում ու գինը ստանում։ Նրանից հետո անցավ որդուն՝ Մարուանին, և երբ պետական իշխանությունը նրանց (Օմայանների) ձեռքից գնաց, [այս իրավունքը] նրանցից վերցվեց և մինչև օրս մնում է այսպես արգելված։ Քանզի, ով որ վատ օրենք է սահմանում, ինքն է պատասխանատու դրա համար, ինչպես նաև այն մարդկանց համար, որոնք շարունակում են այն պահպանել մինչև վերջին հարության օրը, իսկ նրանց պատասխանատվությունը ոչ մի բանով չի կարելի պակասեցնել։

Այս տառետի (Թիրրիխ) աշխարհի հրաշալիքներից է, քանզի փոքր ձուկ է, որը տարվա որոշ եղանակին է երևան գալիս լճում։ Առաջանում է մի գետի մեջ, որը թափվում է լիճը, այնքան շատ, որ կարելի է ձեռքով որսալ և մանավանդ հատուկ պատրաստված գործիքների միջոցով։ Երբ այդ եղանակը վերջանում է, այլևս ոչինչ չի մնում։

էջ 28

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուհամմադ իբն Մարուանը ամառային արշավանք կատարեց Ռումի երկիրը և հաղթեց։ Այդ տարում էր Օսման իբն Վալիդի ընդհարումը հռոմեաների հետ՝ Հայաստանի կողմերում։ [Օսմանի հետ] կար շորս հազար ռազմիկ, իսկ հռոմեաների մոտ՝ վաթսուն հազար։ Նա [Օսմանը] հաղթեց նրանց ու շատերին կոտորեց։

ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(2 մայիս 694—20 ապրիլ 695)

էջ 41

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուհամմադ իբն Մարուանը ամառային արշավանք կատարեց, երբ հոռոմները Մարաշի կողմից դուրս էին եկել ալ-Ղանիկ,

ՅՈԹԱՆԱՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(21 ապրիլ 695—9 ապրիլ 696)

էջ 53—54

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԴԻՐՀԵՄՆԵՐ ԵՎ ԴԻՆԱՐՆԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Աբդ ալ-Մալիք իբն Մարուանը թողարկեց դինարներ և դիրհեմներ։ Նա առաջինն էր մահմեդական ժամանակաշրջանում, որ այն երևան բերեց և մարդիկ դրանից օգտվեցին։

Թողարկման պատճառն այն էր, որ հոռոմներին ուղղված գրությունների սկզբում գրվում էր՝ «Ասա՛ նա՛ է միակ ալլահը» և հիշվում էր մարգարեի անունը՝ թվականի հետ միասին։ Իսկ Ռումի թագավորը գրեց նրան (խալիֆային)։ Դուք այս և այս բաները նոր եք մտցրել [նամականերում], թողեք դրանք, թե չէ մեր դինարների վրա ձեր մարգարեի մասին վատ բաներ կգրենք։ Այս խոսքերը շատ ծանր էին նրա (խալիֆայի) համար և կանչեց հալիդ իբն Յազիդ իբն Մուավիային խորհրդակցելու ու ասաց նրան՝ արգելի՛ր նրանց դինարները և թողարկիր այնպիսի դրամներ, որոնց վրա բարձրալն ալլահը հիշվի։ Եվ սա թողարկեց դինարներ ու դիրհեմներ։ Ապա Հաջջաջը թողարկեց դիրհեմներ վրան քանդակել տալով «Ասա՛ նա՛ է միակ ալլահը»։ Մարդիկ այն շնորհունեցին Ղուրանի [խոսքերի] պատճառով, քանզի ամեն տեսակ աղտոտ ձեռք քսվում էր դրանց, և արգելվեց նորերը թողարկել։

Սակայն հրեա Սամիրը թողարկեց այդպիսին։ [Հաջջաջը] բռնեց նրան, որ սպանի։ Ասաց նրան [Սամիրը]՝ իմ դիրհեմների մաքրության աստիճանը ավելի բարձր է, քան քո դիրհեմներինը, ինչո՞ւ ես ինձ սպանում։ Սակայն նա (Հաջջաջը) չթողեց նրան։ Եվ սա (Սամիրը) մարդկանց համար սարքեց կշռաքարեր, որպեսզի իրեն բաց թողնեն, սակայն Հաջջաջը՝ այդ բանը չարեց։ Իսկ մարդիկ մինչ այդ [սահմանված] կշռաչափ

շունեին, այլ առարկաները իրարով էին կշռում: Երբ Սամիրը կշռաբարեր սահմանեց, մարդիկ այլևս իրար չէին խաբում:

Առաջինը, որ կշռի հարցում խստություններ մտցրեց և արծաթի իր նախորդներից ավելի զտեց, Օմար իբն Հուբայրան էր՝ Յազիդ իբն Աբդ ալ-Մալիք [խալիֆայի] ժամանակ: Նա դիրհեմները որակավոր (մաքուր) դարձրեց և [արծաթի] մաքրության աստիճանը բարձրացրեց ու խիստ հսկողություն սահմանեց: Ապա հալիդ իբն Աբդալլահ ալ-Կիսրին, Հիշամ իբն Աբդ ալ-Մալիք [խալիֆայի] օրերին, իբն Հուբայրայից ավելի խստություններ մտցրեց: Ապա [այդ գործին] նշանակվեց Յուսուֆ իբն Օմարը, որը խստությունը ծայրահեղ չափի հասցրեց: Մի օր ստուգում կատարեց ու գտավ, որ մի դիրհեմի մեջ մեկ հարբա⁵⁷ (հատիկ) պակաս էր: Հրամայեց ամեն մի արհեստավորին հազար մտրակի հարված հասցնել, իսկ նրանք հարյուր արհեստավոր էին, ուստի մեկ հարբայի համար հարյուր հազար մտրակի հարված հասցրեց: Այսպիսով, ալ-Հուբայրիյյա, ալ-Խալիդիյյա և ալ-Յուսուֆիյյա [կոչվածները] Օմայանների ամենամաքուր դրամներն էին: Ալ-Մանսուր [խալիֆան] դրանցից բացի այլ դրամներ չէր ընդունում խարաջի համար:

Առաջին դիրհեմները «մաքուրհա» (մերժված) էին կոչվում: Ասվում է, որ մաքուրհա էին կոչվում Հաջջաջի թողարկած դրամները, որոնց վրա փորագրված կար «Ասա՝ նա՝ է միակ ալլահը» և գիտուն մարդիկ մերժեցին, քանզի ամեն տեսակ աղտոտ ձեռք կարող էր քսվել դրանց:

Օտարների [թողարկած] դիրհեմները տարբեր էին իրենց մեծությամբ ու փոքրությամբ: Նրանք մեկ միսկալ (մսխալ) էին թողարկում, այսինքն քսան կիրաթ: Կային նաև տասներկու կիրաթ և տասը կիրաթ⁵⁸ [բաշով], քանզի տարբեր միսկալներ կային: Երբ մահմեդականության ժամանակ դիրհեմներ թողարկվեցին, վերցրեցին (գումարեցին) քսան կիրաթը, տասներկու կիրաթը ու տասը կիրաթը և դարձավ քառասուններկու կիրաթ, որը բաժանեցին երեքի և ստացվեց տասնչորս կիրաթ: Այսպիսով, արաբական դիրհեմը տասնչորս կիրաթ է և տասը դիրհեմի կշիռը յոթը միսկալ է: Ասվում է, որ Մուսաբ իբն ալ-Ջուբայրը որոշ չափով դիրհեմներ թողարկեց իր եղբոր՝ Աբդալլահ իբն ալ-Ջուբայրի օրոք, սակայն Աբդ ալ-Մալիքի ժամանակ ջարդվեցին: Ճշմարտությունն այն է, որ Աբդ ալ-Մալիքն առաջինն էր, որ դիրհեմներ ու դինարներ թողարկեց:

էջ 55

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարում Մուհամմադ իբն Մարուանը արշավեց Ռումի երկիրը Մալաթիայի կողմից:

ՈՒԹՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(26 փետրվար 700—14 փետրվար 701)

էջ 75

Այդ տարում Աբդ ալ-Մալիք իբն Մարուան [խալիֆան] իր որդուն՝ Ուբայդալլահին, արշավանքի ուղարկեց և նա նվաճեց Կարնո քաղաքը (Կալիկալա)։

ՈՒԹՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(15 փետրվար 701—3 փետրվար 702)

էջ 84

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում³⁹ Մուհամմադ իբն Մարուանը արշավեց Հայաստան հաղթեց և [հայերը] հաշտություն խնդրեցին և նա հաշտություն կնքեց ու կառավարիչ նշանակեց Աբու Շալխ իբն Աբդալլահին, սակայն նրանք դավաճանեցին ու սպանեցին նրան։ Ասվում է, որ նրան սպանեցին ութսուններեք թվականին։

ՈՒԹՍՈՒՆԶՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(24 հունվար 703—13 հունվար 704)

էջ 94—95

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Աբդալլահ իբն Աբդ ալ-Մալիքը արշավեց Ռումի վրա, զրավեց Մամեստիան (Մասիսա), նրա բերդը կառուցեց և այնտեղ տեղավորեց երեքհարյուր քաջարի ռազմիկների, իսկ մինչ այդ մահմեդականները այնտեղ չէին տեղավորվել։ Նա այնտեղ մզկիթ կառուցեց։ Նույն տարում Մուհամմադ իբն Մարուանն արշավեց Հայաստան։

ՈՒԹՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(14 հունվար 704—1 հունվար 705)

էջ 102

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուհամմադ իբն Մարուանն արշավեց Հայաստան և այստեղ անցկացրեց ամառն ու ձմեռը:

ՈՒԹՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(2 հունվար 705—22 դեկտեմբեր 705)

էջ 106

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքն արշավեց Ռումի երկիրը:

ՈՒԹՍՈՒՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(23 դեկտեմբեր 705—11 դեկտեմբեր 706)

էջ 107

ՌՈՒՄԻ ԵՐԿԻՐ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ասվում է, որ այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքն արշավեց Ռումի երկիրը, և նրանց մեծ կոտորած արեց Սաուսանայում, Մամեսս-տիայի (Մասիսա) կողմերում և բերդը գրավեց: Ասվում է նաև, թե այդ տարում արշավողը Հիշամ իբն Աբդ ալ-Մալիքն էր: Սա գրավեց Հիսն Բուլակը, Հիսն ալ-Ախրամը, Հիսն Բուլուսը (Պոզոսի բերդ) և Կումկումը և սպանեց արաբացածներին մոտավորապես հազար ռազմիկ, իսկ նրանց երեխաներին ու կանանց գերեվարեց:

ՈՒԹՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(12 դեկտեմբեր 706—30 նոյեմբեր 707)

էջ 108

ՏԻԱՆԱՅԻ (ԹՈՒԱՆԱ) ԳՐԱՎՈՒՄԸ ՌՈՒՄԻ ԵՐԿՐՈՒՄ

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը և Աբբաս իբն ալ-Վալիդ իբն Աբդ ալ-Մալիքը արշավեցին Ռումի երկիրը: Վալիդ [խալիֆան] գրել էր Հայաստանի տիրոջը⁶⁰, որ հայտնի Ռումի թագավորին, թե խա-

ղարները և Հայաստանի (Արմինիա) լեռների թագավորներից՝ ոմանք ուրոշել են հարձակվել նրա երկրի վրա։ Սա կատարեց [հրամանը] և Վալիզը Ասորիք ուղարկվելիք մատակարարումը հատկացրեց Հայաստանին, ավելացրեց ղորքը և մեծացրեց սպառազինումը։ Նրանք շարժվեցին դեպի Զադիրա և ապա թեքվեցին դեպի Ռումի երկիրը։ Նրանք հարձակվեցին հոռոմների վրա, վերջիններս փախուստի մատնվեցին, սակայն ետ եկան ու մահմեդականները պարտվեցին։ Մնաց Աբբասը մի խումբ մարդկանց հետ, որոնց մեջ էր իբն Մուհայրիգ ալ-Հաջմին։ Ասաց նրան Աբբասը՝ ո՛ւր է Ղուրանի [հավատացյալ] ժողովուրդը, որը դրախտն է ցանկանում։ Ասաց նրան իբն Մուհայրիգը՝ կանչի՛ր և նրանք կգան։ Կանչեց Աբբասը՝ ո՛վ Ղուրանի ժողովուրդ, և նրանք բոլորը եկան։ Ալլահը փախուստի մատնեց հոռոմներին, որոնք մտան Տիանա (Թուանա)։ Սակայն մահմեդականները պաշարեցին ու գրավեցին այն Զումադա Ա [ամսին] (9 ապրիլ—8 մայիս 707)։

էջ 109

ՄԱՐԳԱՐԵԻ ՄԶԿԻԹԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Վալիզը լուր ուղարկեց՝ Ռումի թագավորին տեղեկացնելով, որ քանդել է մարգարեի մզկիթը՝ վերակառուցելու նպատակով։ Ռումի թագավորը նրան ուղարկեց հարյուր հազար մսխալ (միսկալ) ոսկի, հարյուր գործավոր և քառասուն ուղտի բեռ խճանկարի [հատիկներ]։ Վալիզն այս բոլորն ուղարկեց Օմար իբն Աբդ ալ-Ազիզին։ Եկավ Օմարը մարդկանց հետ և հիմքերը դրեցին ու սկսեցին կառուցել։

Ասվում է, որ այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը կրկին արշավեց Ռումի երկիրը և երեք բերդ գրավեց՝ Հիսն Կուսթանթին (Կոստանդինի բերդ), Ղադալա և Հիսն ալ-Ախրամ։ Նա արաբացածներից՝ մոտավորապես հազար հոգու սպանեց և ունեցվածքը բռնագրավեց։

ՈՒԹՍՈՒՆԻՆՆ ԹՎԱԿԱՆ

(1 դեկտեմբեր 707—19 դեկտեմբեր 708)

էջ 110

ՌՈՒՄԻ ԴԵՄ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ասվում է, որ այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը և Աբբաս իբն ալ-Վալիդ իբն Աբդ ալ-Մալիքը արշավեցին Ռումի երկիրը։ Մասլա-

ման գրավեց Ամորիոն (Ամմուրիյա) բերդը, իսկ Աբբասը գրավեց Ազ-
րուլիյան: Նա բախվեց հռոմեաների մի խմբի ու փախուստի մատնեց նը-
րանց: Ասվում է, որ Մասլաման շարժվեց դեպի Ամորիոն և, այնտեղ
հանդիպելով բազմաթիվ հռոմեաների, փախուստի մատնեց նրանց և ապա
նվաճեց Հերակլիան (Հիրակլա) ու Կամունիյան: Աբբասը ամառային ար-
շավանք կատարեց Բողանդունի (Բաղանդուն) կողմից:

էջ 113

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքն արշավեց թուրքերի դեմ
Ատրպատականի կողմից և այնտեղ նվաճեց բերդեր ու քաղաքներ:

ԻՆՆՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(20 նոյեմբեր 708—8 նոյեմբեր 709)

էջ 116

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքն արշավեց Ռումի երկիրը,
նվաճեց Սուրիայում³ եղած հինգ բերդ: Աբբաս իբն ալ-Վալիդն արշավեց
ու հասավ Արզն (Արզան) և Սուրիա:

Այդ տարում Վալիդ իբն Աբդ ալ-Մալիք [խալիֆան] Կուրրա իբն Շա-
րիքին կառավարիչ նշանակեց Եգիպտոսի վրա և այդ պաշտոնից հեռաց-
րեց իր եղբորը՝ Աբդ ալ-Մալիք իբն Աբդ ալ-Մալիքին:

Այդ տարում հռոմեաները գերեցին ծովի հրամանատար Խալիդ իբն
Քիսանին, սակայն նրանց թագավորը նրան նվիրեց Վալիդին:

ԻՆՆՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(9 նոյեմբեր 709—28 հոկտեմբեր 710)

էջ 119

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Աբդ ալ-Ազիզ իբն ալ-Վալիդը ամառային արշավանք
կատարեց, և զորքի հրամանատարն էր Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը:

Այդ տարում Վալիդ [խալիֆան] հեռացրեց իր հորեղբորը՝ Մուհամմադ իբն Մարուանին, Ջազիրայի ու Հայաստանի [կառավարչութունից] և դրանց վրա կառավարիչ նշանակեց իր հղբորը՝ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին։ Մասլաման արշավեց թուրքերի դեմ, Ատրպատականի կողմից, մինչև որ հասավ ալ-Բաբ (Դարբանդ) և գրավեց քաղաքներ ու բերդեր, դրանց առջև քարանետ մեքենաներ դնելով։

ԻՆՆՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(19 հոկտեմբեր 711—6 հոկտեմբեր 712)

էջ 129

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԷՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Աբբաս իբն ալ-Վալիդն արշավեց Ռումի երկիրը, նվաճեց Սեբաստոպոլիսը (Սիբասթիյա)^ա, ալ-Մարզուբանայնը և Տարսոնը (Թարսուս)։

Այդ տարում Մարուան իբն ալ-Վալիդն արշավեց ու հասավ Խանջարա։

Այդ տարում Մասլաման կրկին արշավեց Ռումի երկիրը և Մալաթիայի կողմերում գրավեց Մասիսան (Մասա), Հիսն ալ-Հադիդը և Ղաղալան։

ԻՆՆՍՈՒՆԶՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(7 հոկտեմբեր 712—25 սեպտեմբեր 713)

էջ 131

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԷՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Աբբաս իբն ալ-Վալիդն արշավեց Ռումի երկիրը, գրավեց Անտիոքը։

Այդ տարում Աբդ ալ-Ազիզ իբն ալ-Վալիդն արշավեց ու հասավ Ղաղալա, Վալիդ իբն Հիշամ ալ-Մուլայթին հասավ Բուրջ ալ-Համմամ^բ։ Իսկ Յազիդ իբն Աբու Քաբշան՝ Սուրիա։

Այդ տարում երկրաշարժ եղավ Ասորիքում և տևեց քառասուն օր։ Երկիրն ավերվեց և մանավանդ Անտիոքը։

ԻՆՆՍՈՒՆԶԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(26 սեպտեմբեր 713—15 սեպտեմբեր 714)

էջ 135

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Աբբաս իբն ալ-Վալիդն արշավեց Ռում, նվաճեց Հերակլիան (Հիրակլա) և այլ վայրեր:

Այդ տարում նվաճվեց Հնդկաստանի ծայրագույն մասը, բացի ալ-Քիրաջից և ալ-Մանդիլից:

Այդ տարում Աբբաս իբն ալ-Վալիդը նվաճեց Կիննասրինը:

Այդ տարում ալ-Վադդահին սպառնվեց Ռումի երկրում, մոտավորապես հազար հոգու հետ:

ԻՆՆՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(16 սեպտեմբեր 714—4 սեպտեմբեր 715)

էջ 146

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սուլայման իբն Արդ ալ-Մալիք [խալիֆան] զորքեր ուղարկեց Կոստանդնուպոլսի դեմ և իր որդուն՝ Դաուդին, նշանակեց ամառային արշավանքի հրամանատար: Սա գրավեց Հիսն ալ-Մարան⁸⁶:

Այդ տարում Մասլաման արշավեց ալ-Վադդահիյա երկիրը, գրավեց այն բերդը, որ նվաճել էր ալ-Վադդահիյայի տեր Վադդահը:

Այդ տարում Օմար իբն Հուբայրան արշավեց Ռումի երկիրը ծովի կողմից և այնտեղ ձմեռեց:

ԻՆՆՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(25 օգոստոս 716—13 օգոստոս 717)

էջ 146—147

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՇԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սուլայման իբն Աբդ ալ-Մալիքը շարժվեց դեպի Դաբիկ և շուրջ սպառազինեց իր եղբոր Մասլամա իբն Արդ ալ-Մալիքի հետ, որ քնա Կոստանդնուպոլսի դեմ:

Եվ մեռավ Ռումի թագավորը ու եկավ Լևոնը (Ալյուն)⁶⁷ Ատրպատականից, իմաց տվեց նրան և երաշխավորեց Ռումի [պետության] նվաճումը և Մասլաման գնաց նրա հետ: Շարժվեցին գեպի Կոստանդնուպոլիս և, երբ մոտեցան նրան, հրամայեց ամեն մի ձիավորի, որ իր հետ ձիու կարողության չափ մթերք՝ երկու մոզ ուտեստեղեն, տանի Կոստանդնուպոլիս: Նրանք զործադրեցին այն և, երբ բերեցին, հրամայեց, որ մթերքը լեռան նման թափեն և ասաց մահմեդական [զինվորներին]՝ ոչինչ չուտեք սրանից, այլ ասպատակեցեք նրանց երկիրը և ցանեցեք: Նա փայտից տներ կառուցեց և անցկացրեց ձմեռն ու ամառը: Մարդիկ ցանեցին, իսկ [բերած] մթերքը դաշտում մնաց, քանդի մարդիկ ուտում էին ասպատակություններից ձեռք բերածը և իրենց ցանածը:

Մասլաման նեղ վիճակի մեջ դրեց հոռոմներին: Նրա հետ էին երևելի մարդիկ՝ Խալիդ իբն Մադանը, Մուջահիդ իբն Ջաբրը, Աբդալլահ իբն Աբի Ջաբարիա ալ-Խուզաին և ուրիշներ: Հոռոմները լուր ուղարկեցին Մասլամային, առաջարկելով ամեն մի զլխի դիմաց մի ոսկի տալ, սակայն նա չընդունեց:

Հոռոմները ասացին Լևոնին (Ալյուն)՝ եթե մահմեդականներին քշեմեր կողմերից, քեզ թագավոր կդարձնենք: Նա վստահեց նրանց: Երբ եկավ Մասլաման, նա ասաց նրան՝ գիտես, որ հոռոմները իմացել են, որ դու կովելու նպատակ չունես, և ձգձգում ես պատերազմը, քանի որ մթերք ունես: Արդ եթե վառես այն, նրանք կգան քեզ կհնազանդվեն: Եվ նա հրամայեց վառել. իսկ հոռոմները ուժեղացան և հարվածներ հասցրեցին մահմեդականներին այնքան, որ քիչ էր մնում ոչնչացնելն նրանց: Այսպես մնացին, մինչև որ մեռավ Սուլայման [խալիֆան]:

էջ 150

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Դաուդ իբն Սուլայմանը արշավեց Ռումի երկիրը, նվաճեց Հիսն ալ-Մարան, որը Մալաթիայից այն կողմ էր:

Այդ տարում աշխարհում շատ երկրաշարժներ եղան և տեղեկին վեց ամիս:

ԻՆՆՍՈՒՆԻՆՆ ԹՎԱԿԱՆ

(14 օգոստոս 717—2 օգոստոս 718)

էջ 154

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Օմար իբն Աբդ ալ-Ազիզ [խալիֆան] լուր ուղարկեց Մասլամային, որը Ռումի երկրում էր՝ հրամայելով ետ դառնալ իր մոտ

եղած մահմեդականների հետ միասին: Ուղարկեց նրան ցեղային ձիեր և շատ մթերք, հրամայելով իր մարդկանց օգնել նրանց:

Այդ տարում թուրքերը հարձակվեցին Ատրպատականի վրա, սպանեցին մի խումբ մահմեդականների: Օմար [խալիֆան] ուղարկեց Հատիմ իբն ալ-Նուման ալ-Բահիլին, որն սպանեց այդ թուրքերին և նրանցից միայն քչերը ազատվեցին: [Հատիմը] եկավ Օմարի մոտ՝ հիսուն գերինների հետ:

ՀԱՐՅՈՒՐ ԹՎԱԿԱՆ

(3 օգոստոս 718—23 հուլիս 719)

էջ 159—160

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Օմար իբն Աբդ ալ-Ազիզը հրամայեց Տարենդեի (Թա-րանգա) բնակիչներին այնտեղից տեղափոխվել Մալաթիա, իսկ Տարենդեն Բումի երկրի կողմերում էր և Մալաթիայից երեք օրվա ճանապարհ (մարհալա)⁵⁵ այն կողմ էր գտնվում: Աբդալլահ իբն Աբդ ալ-Մալիքը այնտեղ բնակեցրել էր մահմեդականների, երբ ութսուներեք թվին նվաճել էր այն, իսկ այդ ժամանակ Մալաթիան ավերակ էր: Այնտեղ գալիս էին զինվորները Ջազիրայից, մնում մինչև ձյան իջնելը ու վերադառնում իրենց երկիրը:

Այդպես մնաց, մինչև որ Օմարը դարձավ խալիֆա ու հրամայեց նրանց (տարենդեցիներին) տեղափոխվել Մալաթիա: Տարենդեն դատարկվեց քանզի նա անհանգստացած էր մահմեդականների համար և վախենում էր թշնամուց: Նա ավերեց Տարենդեն և Մալաթիայի կառավարիչ նշանակեց Ջավանա իբն ալ-Հարասին:

Այդ տարում Օմար իբն աբդ ալ-Ազիզ [խալիֆան] Օմար իբն Հուբայրա ալ-Ֆիզարիին նշանակեց Ջազիրայի կառավարիչ:

ՀԱՐՅՈՒՐ ՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(24 հուլիս 719—11 հուլիս 720)

էջ 167—168

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ՄԱՐՈՒԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում մեռավ Մուհամմադ իբն Մարուան իբն ալ-Հաքամը՝ Աբդ ալ-Մալիք [խալիֆայի] եղբայրը: Նա եղել էր կառավարիչ Ջազիր-

րայի, Հայաստանի ու Ատրպատականի, արշավել էր հռոմեաների դեմ, իսկ Հայաստանի ժողովրդի դեմ՝ մի քանի անգամ:

Նա քաջ էր, ուժեղ, իսկ այդ բանի համար Աբդ ալ-Մալիքը նախանձում էր նրան: Երբ ամեն ինչ դասավորվեց Աբդ ալ-Մալիքի օգտին, նա ցույց տվեց իր սրտում եղածը: Մուհամմադը պատրաստվեց Հայաստանի դեմ արշավելու: Երբ Աբդ ալ-Մալիքը ողջերթ էր մաղթում նրան, հարցրեց հեռանալու պատճառի մասին և նա ասաց.

Դու չես տեսնում, որ ազատորդուն վտարելը
Հավասարազոր է նրան անարգելուն
Եթե երկուսս լինեինք մի աստիճանի
Կսուրայի, իսկ դու կմնայիր մոլորված:

Ասաց նրան Աբդ ալ-Մալիքը՝ երգվում եմ, որ պետք է մնաս, ալլահը վկա, ինձնից վատ բան չես տեսնի: Եվ հաշտվեց նրա հետ:

[Հետագայում] երբ Վալիդ [խալիֆան] ուզեց հանել նրան, պահանջեց մեկին, որ կարողանար փոխարինել: Միայն Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը հարմար գտնվեց այդ բանին (պաշտոնին):

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(12 հուլիս 720—30 հունիս 721)

էջ 182

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Օմար իբն Հուբայրան արշավեց Ռումի երկիրը՝ Հայաստանի կողմից, երբ նա դեռ Ջագիրայի կառավարիչ էր, նախքան Իրաքի կառավարիչ դառնալը: Նա հաղթեց նրանց, շատերին գերեվարեց և սպանեց⁶⁹ յոթհարյուր գերի:

Այդ տարում Աբբաս իբն ալ-Վալիդ իբն Աբդ ալ-Մալիքը արշավեց Ռումի դեմ ու գրավեց Դալսան (Ռասլա):

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

էջ 184

(1 հուլիս 721—20 հունիս 722)

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ասվում է, որ այդ տարում թուրքերը արշավեցին ալանների դեմ:

Այդ տարում ալ-Աբբաս իբն ալ-Վալիդը ասպատակեց Ռումի երկիրը, դրավեց մի քաղաք, որը կոչվում էր Դասլա (Ռասլա):

ՀԱՐՅՈՒՐ ՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(21 հունիս 722—9 հունիս 723)

էջ 186

ԽԱՋԱՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՄ

Այդ տարում մահմեդականների զորքը մտավ Հայաստանի կողմից խաղարաց երկիրը և նրա հրամանատարն էր Սաբիտ ալ-Նաճրանին։ Խաղարաները հավաքվեցին մեծ բազմությամբ և նրանց օժանդակեցին ղփչաղները⁷⁰ (կիֆչակ) և թուրքերի այլ [ցեղեր]։ Նրանք բախվեցին մահմեդականների հետ մի վայրում, որը կոչվում էր Մարջ ալ-Հիջարա (Քարերի մարդագետին) և ուժեղ ճակատամարտ տեղի ունեցավ։ Մահմեդականներից շատ մարդ սպանվեց, խաղարաները նրանց ճամբարը զրավեցին և ամեն ինչ կողոպտեցին։

Փախչողները հասան Ասորիք ու դիմեցին Յազիդ իբն Աբդ ալ-Մալիք [խալիֆային] և նրանց հետ էր նաև Սաբիտը։ Յազիդը հանդիմանեց նրանց պարտության համար։ Սա (Սաբիտը) ասաց՝ ո՛վ իշխան հավատացելոց, ես չվախեցա և ոչ էլ խուսափեցի թշնամուն հանդիպելուց, այլ ձին ձիուն խառնված էր և մարդը մարդուն։ Այնքան խոցեցի, մինչև որ նիզակս ջարդվեց և կոտորեցի, մինչև որ սուրս կոտրվեց։ Սակայն ալ-լահը, օրհնյալն ու բարձրյալը անում է ինչ որ կամենա։

էջ 186—187

ՋԱՌԱՀԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՌՆԱԼԸ, ԲԱԼԱՆՋԱՐԻ
ԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ ԱՅԼՆ

Երբ մահմեդականների հիշյալ պարտությունը տեղի ունեցավ, խաղարանները ցանկացան երկիրը զրավել և հավաքվեցին ու բանակ կազմեցին։ Այդ ժամանակ Յազիդ իբն Աբդ ալ-Մալիք [խալիֆան] ալ-Ջառա հիբն Աբդալլահ՝ ալ-Հաբամիին նշանակեց Հայաստանի կառավարիչ և ստվար բանակ տվեց արշավելու խաղարանների և այլ թշնամիների դեմ և ասպատակելու նրանց երկիրը։

Ջառահը առաջ խաղաց, իսկ խաղարանները լսելով եկան կանգնեցին Բաբ ալ-Աբուաբում (Դաբրանդ)։ Ջառահը հասավ Պարտավ (Բարդաա), ուր մնաց, հանգստանալով իր զինակիցների հետ միասին։ Ապա շարժվեց խաղարանների դեմ, անցավ Կուր գետը և իմացավ, որ իր հետ եղածներից մեկը՝ այդ լեռների բնակիչներից, զրեւ է խաղարաց թագավորին։

իմաց տալով Զառահի առաջխաղացման մասին: Այդ ժամանակ Զառահը հրամայեց իր մունետիկին հայտարարել բոլոր մարդկանց, թե ամիրը (հրամանատարը) մի քանի օր մնալու է այս վայրում, ուստի, պետք է ինչքան կարելի է շատ մթերք հավաքել: Այդ մարդը դրեց խաղարաց թագավորին, տեղեկացնելով, որ Զառահը մնալու է այդ վայրում և խորհուրդ տվեց, որ առաջխաղացում չկատարի, ոռպեսզի մահմեդականները չըպատրաստվեն կռվի: Երբ գիշերը վրա հասավ Զառահը հրամայեց առաջ խաղալ և մեծ եռանդով շարժվեց, մինչև որ հասավ Բաբ ալ-Աբուաբ քաղաքը առանց հանդիպելու խաղարների: Նա մտավ քաղաքը ասպատակ սփռեց, հարձակվեց ու կողոպտեց նրա մերձակայքը: [Ամեն ինչ] ավարի տվեցին և հաջորդ օրը վերադարձան:

Նրա դեմ ելան խաղարները իրենց թագավորի որդու գլխավորությամբ, հանդիպեցին ալ-Ռան գետի մոտ և սաստիկ ճակատամարտ եղավ: Զառահն իր մարդկանց ոգևորեց, կռիվը սաստկացավ և նրանք հաղթեցին ու փախուստի մատնեցին, իսկ մահմեդականները հետապնդեցին նրանց կոտորելով ու գերեվարելով: Շատ մարդ սպանվեց և մահմեդականները ավարի տվեցին խաղարների ամբողջ ունեցվածքը: [Մահմեդականները] առաջ խաղացին մինչև որ կանգ առան Հուսայն (Բերդիկ) կոչված բերդի մոտ: Բնակիչները երաշխավորագիր խնդրեցին գերամական հարկ վճարելու դիմաց: Զառահը ընդունեց պայմանները և դուրս հանեց նրանց: Ապա շարժվեց, գնաց մի քաղաք, որ կոչվում էր Յարղուա և վեց օր պաշարեց այն ու ջանասիրությամբ կռվեց: Նրանք երաշխավորագիր խնդրեցին և նա տվեց նրանց: Նա ստացավ բերդը և նրանց դուրս բերեց այնտեղից:

Ապա Զառահը գնաց Բալանջար, որը նրանց նշանավոր բերդերից էր, ու պաշարեց այն: Բերդի բնակիչները երեքհարյուր սայլ էին հավաքել և իրար կապելով բերդը շրջապատել պաշտպանվելու համար և արգելելու մահմեդականներին մոտենալ բերդին: Այդ սայլերը մեծագույն խոչընդոտը դարձան մահմեդականների առջև՝ կռվի ժամանակ:

Երբ մահմեդականները տեսան, թե ինչպիսի վնաս է գալիս այդ բանից, մոտավորապես երեսուն հոգի հավաքվեցին, որոնք երգվեցին մեռնել, իրենց սրերի պատյանները կոտրեցին և մեկ մարդու պես դեպի սայլերը վազեցին: Անհավատները նույնպես կատաղի կռվեցին և այնքան նետ էին արձակում, որ արևի լույսը ծածկվում էր, սակայն սրանք (երեսուն մարդը) առաջ գնացին, մինչև որ հասան սայլերին: Նրանք կախվեցին դրանցից և կտրեցին այն պարանները, որոնք պահում էին դրանք ու քաշեցին: Յած թափվեցին [պարանները] և դրանց ետևից նաև բոլոր սայլերը, քանի որ մեկը մյուսին էր կապված: Ապա բոլոր [խաղարները] զլորվեցին մահմեդականների դեմ, կռիվը տաքացավ ու

սաստկացավ և այնքան դժվար վիճակ ստեղծվեց, որ «սրտերը հասան կոկորդը»: Ապա խազարները փախուստի դիմեցին, իսկ մահմեդականները սրով գրավեցին բերդը և ամեն ինչ որ կար ավարի տվեցին Ռարի Ա [ամսին] (19 օգոստոս—17 սեպտեմբեր): Ամեն մի հեծյալին բաժին ընկավ երեքհարյուր դինար, իսկ նրանք երեսուն հազարից քիչ ավելի էին:

Ապա Ջառահը վերցրեց Բալանջարի տիրոջ որդիներին և ընտանիքը և կանչելով նրան իր մոտ, վերադարձրեց ունեցվածքը, ընտանիքը, բերդը: Նրան դարձրեց իր գործակալը (լրտես), որը պետք է տեղեկացներ անհավատների ամեն մի արածի մասին: Ապա Բալանջարից հեռացավ ու պաշարեց Օլուբանդարը (Օլուղ Բենդեր) ուր կար մոտավորապես քառասուն հազար թուրք ընտանիք: Նրանք հաշտություն կնքեցին Ջառահի հետ՝ տարեկան որոշ դրամական հարկի դիմաց:

Սակայն այդ երկրի ժողովուրդը հավաքվեց և փակեց մահմեդականների [վերադարձի] ճամփան: Բալանջարի տերը գրեց Ջառահին տեղեկացնելով այդ մասին և սա արագ վերադարձավ, մինչև որ հասավ Մլի կոչված գավառը: Վրա հասավ ձմեռը և մահմեդականները այնտեղ մնացին: Ջառահը գրեց Յազիդ իբն Աբդ ալ-Մալիքին՝ ալլահի օգնությամբ կատարած իր նվաճումների և անհավատների որոշման մասին, օգնություն խնդրելով: Սա խոստացավ զորք ուղարկել, սակայն մահը վրա հասավ նախքան զորք ուղարկելը: [Նոր խալիֆա] Հիշամ իբն Աբդ ալ-Մալիքը [նամակ] ուղարկեց Ջառահին հաստատելով նրան պաշտոնի մեջ և օգնություն խոստանալով:

ՀԱՐՅՈՒՐ ՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(10 հունիս 723—28 մայիս 724)

էջ 193

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ջառահ ալ-Հաքամին արշավեց Ալանք (ալ-Հան) մինչև որ հասավ Բալանջարից այն կողմ [գտնվող] քաղաքներն ու բերդերը: Մի մասը գրավեց և մեծ ավար վերցրեց:

Այդ տարում Մարուան իբն Մուհամմադը ամառային «աջ» արշավանք կատարեց, նվաճեց Իկոնիան (Կոնիա) Ռումի երկրում և Կամախը (Քամախ):

ՀԱՐՅՈՒՐ ՎԵՑ ԹՎԱԿԱՆ
(29 մայիս 724—18 մայիս 725)

էջ 196

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սաիդ իբն Արդ ալ-Մալիքը ամառային արշավանք կատարեց: Նույն տարում Զառահ իբն Աբդալլահն արշավեց Ալանք (ալ-Լան), դաշինք կնքեց բնակիչների հետ, որոնք պարտավորվեցին շիզիա վճարել:

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹ ԹՎԱԿԱՆ
(19 մայիս 725—7 մայիս 726)

էջ 198

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Հիշամ [Խալիֆան] հեռացրեց Զառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամիին Հայաստանի ու Ատրպատականի [փոխարքայությունից] և նշանակեց իր եղբորը՝ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին: Մասլաման [Հայաստանի] կառավարիչ նշանակեց ալ-Հարիս իբն Ամրու ալ-Թաիին, որը թուրքաց երկրում գրավեց բազում գավառներ ու գյուղեր և [Հայաստանում] մեծ ազդեցություն թողեց:

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(8 մայիս 726—27 ապրիլ 727)

էջ 199

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքն արշավեց Ռումի երկիրը՝ Զազիրայից այն կողմ և գրավեց Կեսարիան (Կայսարիյա), որը նըշանավոր քաղաք էր: Նույն տարում Իբրահիմ իբն Հիշամը արշավեց ու նվաճեց Ռումի բերդերից մեկը:

Այդ տարում թուրքաց թագավոր՝ հաէանի որդին, շարժվեց դեպի Ատրպատական, որոշ քաղաքներ պաշարեց: Նրա դեմ դուրս եկավ ալ-Հարիս իրն Ամրու ալ-Թաին: Նրանք բախվեցին և թուրքերը փախուստի: Ղիմեցին: Ալ-Հարիսը հետապնդեց նրանց, մինչև որ անցավ Արաքս (ալ-Ռաս, Արաս) դետր: Ապա վերադարձավ հաէանի որդին, վերսկսեց սլատերազմը, սակայն պարտվեց, և թուրքերից շատ մասոռ սպանվեց:

ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆ ԹՎԱԿԱՆ

էջ 201

(28 ապրիլ 727—15 ապրիլ 728)

Այդ տարում Աբդալլահ իբն Ուկբա ալ-Ֆիհրին հարձակում կատարեց ծովի վրա: Իսկ Մուավիա իբն Հիշամը՝ արշավեց Ռումի երկիրը և դրավեց մի բերդ, որի անունն էր Թիբա:

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքն արշավեց թուրքերի դեմ Ատրպատականի կողմից, ավարի տվեց, դերեվարեց և ողջ վերադարձավ:

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍ ԹՎԱԿԱՆ

(16 ապրիլ 728—4 ապրիլ 729)

էջ 205

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մասլաման արշավեց թուրքերի դեմ՝ Ալանաց ղոների (Բաբ ալ-Լան) կողմից: Հանդիպելով հաէանին և նրա զորքերին, մոտավորապես մեկ ամիս կռվեց: Մաստիկ անձրև եկավ և հաէանը փախուստի ղիմեց ու հեռացավ: Մասլաման վերադարձավ Զուլ-Կարնայնի (երկկոտոշավոր)⁷¹ ճանապարհով:

Այդ տարում Մուավիան արշավեց Ռումի երկիրը և դրավեց Սիմլան (Սիմալա): Այդ տարում ամառային արշավանքը ղլխավորում էր Աբդալլահ իբն Ուկբա ալ-Ֆիհրին, իսկ ծովի վրա հրամանատար էր Աբդ ալ-Ռահման իբն Մուավիա իբն Հուդայջը:

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(5 ապրիլ 729—25 մարտ 730)

էջ 206

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը ամառային «ձախ» արշավանք կատարեց, իսկ Սաիդ իբն Հիշամը՝ ամառային «աջ» արշավանք⁷², մինչև որ

հասավ Կեսարիա (Կայսարիյա)։ Ծովում հարձակում կատարեց Արդալ-լահ իրն Արի Մարիամը։ Հիշամ [խալիֆան] Ասորիքի և Նդիպտոսի կառավարիչ նշանակեց ալ-Հաքամ իբն Կայս իրն Մախրամա իրն Աբդ ալ-Մութալիբ իբն Աբդ Մանաֆին։

Այդ տարում թուրքերը շարժվեցին դեպի Ատրպատական։ Նրանց դեմ դուրս եկավ ալ-Հարիս իբն Ամրուն և պարտության մատնեց։ Այդ տարում Հիշամը ալ-Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամիին նշանակեց Հայաստանի կառավարիչ, այդ պաշտոնից հանելով իր եղբորը՝ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին։ Սա խազարաց երկիրը մտավ Տփղիսի (Տաֆլիս) կողմից, դրավեց նրանց ալ-Բայդա (սպիտակ) քաղաքը և ողջ վերադարձավ։ Խազարները հավաքվեցին, կուտակվեցին և շարժվեցին դեպի մահմեդականների երկիրը, և սա դարձավ պատճառը Ջառահի սպանության, ինչպես կտեսնենք կամոքն ալլահի։

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(26 մարտ 730—14 մարտ 731)

էջ 207—208

ԱԼ-ՋԱՌԱՀ ԱԼ-ՀԱՔԻՄԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այդ տարում սպանվեց ալ-Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամին։

Բանն այն էր, որ ինչպես նախապես հիշեցինք, նա մտել էր խազարաց երկիրը և նրանց պարտության մատնել։ Պարտությունից հետո խազարներն ու թուրքերը հավաքվեցին Ալանաց (ալ-Լան) կողմից և նրանց դեմ դուրս եկավ ալ-Ջառահ իբն Աբդալլահը Ասորիքի զորքերով։ Տեղի ունեցավ ամենասաստիկ ճակատամարտը, որ մարդիկ տեսել էին։ Երկու կողմերն էլ համբերեցին, սակայն խազարներն ու թուրքերը թվով դերազանցում էին մահմեդականներին։ Ջառահը, իր հետ եղածներով, նահատակվեց Արդաբիլի դաշտում։ Նախապես նա իր եղբորը՝ ալ-Հաջջա իբն Աբդալլահին հաջորդ էր նշանակել, որպես Հայաստանի կառավարիչ։

Երբ Ջառահը սպանվեց, խազարների ցանկությունը բորբոքվեց և ներխուժեցին երկիրը, մինչև որ մոտեցան Մոսուլին։ Սա մեծ դժբախտություն էր մահմեդականների համար։

Ջառահը առատաձեռն էր, ազնիվ և Օմար իբն ալ-Ազիզ [խալիֆայի] կառավարիչներից էր ու նրա մասին շատ բանաստեղծներ ողբեր դրեցին։ Ասվում է, որ նա սպանվեց Բալանջարում։ Երբ մահվան լուրը հասավ Հիշամ [խալիֆային], կանչեց Սաիդ ալ-Հարաշիին և սասց նրան՝ ինձ

տեղեկացրել են, որ Ջառահը ետ է կանգնել անհավատների դեմ պայքարից: Ասաց [Հարաշին]՝ ո՛չ, իշխա՛ն հավատացելոց, ալ-Ջառահը այնքան էր նվիրված ալլահին, որ հազիվ թե կովից փախչեր, սակայն նա սպանվեց: Ասաց [խալիֆան]՝ ինչ է կարծիքդ [դրության մասին]: Ասաց՝ ուղարկիր ինձ քառասուն փոստի՝³ ձիերով, ապա ամեն օր քառասուն մարդ ուղարկիր և գրիր զորքերի հրամանատարներին, որպեսզի ինձ օգնության հասնեն: Այդպես էլ արեց Հիշամը:

Հարաշին շարժվեց և ամեն մի քաղաքով անցնելիս խանդավառում էր բնակիչներին, իսկ ովքեր կամենում էին մասնակցել ջիհադին, արձագանքում էին նրա կոչին: Այսպես շարունակվեց, մինչև որ հասավ Արզն (Արզան) քաղաքը, ուր հանդիպեց Ջառահի զորքից մի խմբի: Նրանք արտասվեցին և նա էլ նրանց նայելով, արտասվեց: Նրանց փող բաժանեց ու իր հետ վերցրեց: Դրանից հետո Ջառահի մարդկանցից ում որ հանդիպեց, վերցրեց իր հետ: Նա հասավ հլաթ, որի դռները փակել էին իր առջև: Պաշարեց, գրավեց և ավարը բաժանեց իր ընկերակիցների միջև: Ապա հլաթից շարժվեց և աստիճանաբար բերդերն ու ամրոցները գրավելով հասավ Պարտավ (Բարդաա) ուր և իջևանեց:

Այդ ժամանակ հակառիկ որդին Ատրպատականում ասպատակում էր, ավարի տալիս, գերեվարում ու կոտորում: Նա պաշարել էր Վարդանակերտ՝ (Վարսան) քաղաքը: Հարաշին վախենալով, որ նրան կհաջողվի այն գրավել, իր մարդկանցից ոմանց թաքուն ուղարկեց Վարդանակերտի բնակիչների մոտ՝ հայտնելով իր ժամանումը, հրամայեց համբերել: Նրա սուրհանդակը գնաց, սակայն խաղարների հանդիպեց, որոնք բռնեցին նրան ու հարցաքննեցին: Նա պատմեց և ճիշտ խոսեց: Ասացին նրան, եթե անես այն, ինչ որ քեզ կհրամայենք, քեզ հետ լավ կվերաբերվենք և ազատ կարձակենք, թե չէ՝ կսպանենք: Ասաց՝ իսկ ի՞նչ եք կամենում: Ասացին՝ կասես Վարդանակերտի բնակիչներին, որ դուք ո՛չ մի օգնություն չեք ստանա և ոչ ոք չի կարող ձեր վիճակը բարելավել և կհրամայես քաղաքը մեզ հանձնել: Նա համաձայնեց և երբ քաղաքին մոտեցավ, այնպես կանգնեց, որ բնակիչները լսեն նրա խոսքը: Ասաց նրանց՝ գիտե՞ք ինձ: Ասացին՝ դու այսինչն ես: Ասաց՝ Հարաշին ասում է, որ հասել է այնինչ վայրը շատ զորքով և հրամայում է ձեզ պահել քաղաքը ու դիմանալ. քանզի այս երկու օրում ձեզ [օգնության] կհասնի: Նրանք իրենց ձայները բարձրացրին կոչելով՝ մեծ է ալլահը և չկա աստված բացի ալլահից:

Խաղարները սպանեցին այդ մարդուն և Վարդանակերտ քաղաքից հեռացան: Հասավ Հարաշին իր զորքով, սակայն ոչ ոք չկար այնտեղ: Հետապնդելով խաղարներին, նա այնտեղից գնաց Արդաբիլ, իսկ խաղարները այնտեղից էլ հեռացան: Հարաշին իջավ Բաջարուան⁷⁵ (Բաջրավան) և նրա մոտ եկավ մի ձիավոր՝ սպիտակ ձիու վրա, ողջունեց նրան և ասաց՝ Կա-

մենում ես չիհադի՞ (սրբազան պատերազմ) և ավարի Ասաց՝ ինչպե՞ս կարող եմ այդ բանին հասնել: Ասաց՝ ահա խազարաց զորքը, տասը հազարով և նրանց հետ կան հինգ հազար մահմեդական զերիններ և գերեվարված ժողովուրդ: Նրանք շորս փարսախի (ֆարսախ) վրա են:

Հարաշին գիշերանց գնաց և հասավ նրանց մոտ գիշերվա վերջում, երբ քնած էին: Իր մարդկանց շորս կողմի վրա բաժանեց և արևածագին հանկարծակի հարձակվեց: Մահմեդականները սրի քաշեցին նրանց և դեռ արևը չծագած արդեն բոլորն սպանված էին, բացի մի մարդուց: Հարաշին նրանց ձեռքում գտնվող բոլոր մահմեդականներին ազատ արձակեց ու տարավ Բաջարուան: Երբ մտան [քաղաքը], նրա մոտ եկավ սպիտակ ձիավորը, ողջունեց ու ասաց՝ ահա այնինչ վայրում կա խազարաց մի բանակ և նրա ձեռքում է մահմեդականների ունեցվածքը և Զառահի կանանոցն ու զավակները: Հարաշին շարժվեց այն կողմ և երբ [խազարները] սթափվեցին, մահմեդականներն արդեն նրանց մոտ էին: Սրախող-խող արեցին նրանց ու կոտորեցին ինչպես որ կամենում էին, և խազարներից փրկվեցին միայն մի քանի փախստականներ: Ազատեցին նրանց մոտ գտնվող մահմեդական տղամարդկանց ու կանանց, ավարի տվեցին նրանց ունեցվածքը: [Հարաշին] վերցրեց Զառահի որդիներին. պատվեց ու հարգեց և բոլորին տարավ Բաջարուան (Բազարվան, Բադավան):

Խազարաց զորքի հետ Հաբաշիի կատարածի լուրը հասավ նրանց թագավորի որդուն, որն այսպանեց իր զորքը, ամբաստանեց որպես թուլամորթների ու երկշուտների: Սակայն նրանք իրար ոգևորեցին և նրա հետ խորհրդակցեցին, որ կրկին հավաքի իր զորքը և վերադառնա Հարաշիի դեմ պայքարի: Նա զորք հավաքեց Ատրպատականի կողմերից. և նրա մոտ շատ զորք կուտակվեց: Հարաշին եկավ նրա դեմ և նրանք հանդիպեցին Բարզանդի հողում: Սաստիկ և ահեղ ճակատամարտ եղավ. մահմեդականները մի քիչ թուլացան, սակայն Հարաշին քաջալերեց նրանց և հրամայեց դիմանալ: Նրանք ետ դարձան և արիաբար կռվեցին: Խազարների մոտ գտնվող մահմեդական զերինները օգնության կանչեցին նրանց, գոչելով՝ «մեծ է ալլահը» և «չկա աստված բացի ալլահից»: Այդ լսելով, մահմեդականները իրար քաջալերեցին և բոլորն սկսեցին արտասվել, կարեկցելով զերիններին: Մահմեդականները խիստ կոտորած տվին թշնամուն և փախուստի մատնեցին՝ հետապնդելով նրան մինչև Արաքս գետը: Ապա վերադարձան ու հավաքեցին նրանց ճամբարում եղած ամբողջ ունեցվածքը, ավարը, ազատ արձակեցին թե՛ զերի ընկած ռազմիկներին և թե՛ գերեվարված աղգաբնակչությանը ու բոլորին տարան Բաջարուան: Ապա խազարաց թագավորի որդին նորից հավաքեց իր մոտ գտնվող զորքերը և հարձակվեց Հարաշիի վրա: Նա բանակ դրեց Բալական գետի

մոտ: Տեղեկանալով այդ մասին, Հարաշին նրա դեմ դուրս եկավ մահմեդական զորքով և Բալլական գետի ափին հանդիպեց նրան: Հարաշին խրախուսեց իր մարդկանց և սքանք արիաբար հարձակվեցին ու թուլացրին խազարների շարքերը: Հարձակումները կրկնվեցին, իսկ խազարները մեծ դիմացկունություն ցուցաբերեցին, այսուհանդերձ պարտություն կրեցին և փախուստի դիմեցին: Գետի մեջ խեղդվողների թիվը ավելի մեծ էր, քան սպանվածներինը: Հարաշին հավաքեց ավարը և վերադարձավ Բաջարուան, բաժանեց՝ մեկ հինգերորդն ուղարկեց Հիշամ իբն Աբդ ալ-Մալիքին և տեղեկացրեց, թե ալլահը ինչ հաղթանակ էր սլարդեել մահմեդականներին: Հիշամը շնորհակալագիր ուղարկեց նրան:

Նա (Հարաշին) մնաց Բաջարուանում: Եվ ահա ստացավ Հիշամի գրությունը, որը հրամայում էր նրան իր մոտ գալ: Նա (Հիշամը) իր եղբորը՝ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին, նշանակել էր Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ: Սա տեղ հասնելով՝ շարժվեց թուրքերի դեմ սաստիկ ձմռանը, հետապնդելով նրանց երկրի մեկ ծայրից մյուսը:

էջ 214

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը ամառային արշավանք կատարեց ու գրավեց հարսիանոնը (հարշանա):

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

էջ 214

(15 մարտ 731—2 մարտ 732)

Այդ տարում Մասլաման իր զորքերը սփռեց հականի երկրում և քաղաքներ ու բերգեր գրավեց: Նրանց կոտորեց, [ռազմիկներին] գերեց ու [ժողովրդին], գերեվարեց, հրկիղեց և նրան ենթարկվեցին Բալանջար լեռների այն կողմի մարդիկ: հականի որդին էլ սպանվեց և ահա այս բոլոր ազգերը՝ խազարները և ուրիշներ հավաքվեցին Մասլամայի դեմ այնպիսի բազմություն, որի թիվը միայն բարձրյալն ալլահը դիտի: Մասլաման արդեն Բալանջարից այն կողմ էր, և երբ տեղեկացավ այս բոլորի մասին, հրամայեց իր մարդկանց կրակները (խարույկ) վառած թողնել և ապա թողնելով իր վրաններն ու բեռները, զորքի հետ փախուստի դիմեց: Թույլերին առջևից էին տանում, իսկ ուժեղները ետևից էին զնում, մեկ

օրվա ճանապարհի (մարտի) փոխարեն երկու օրվա ճանապարհ էին անցնում, մինչև որ կիսամեռ հասան Բար ալ-Աբուաբ (Դարբանդ)։

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(3 մարտ 732—20 փետրվար 732)

էջ 215—216

ՄԱՐՈՒԱՆ ԻՔՆ ՄՈՒՀԱՄՄԱԴԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Հիշամ իբն Աբդ ալ-Մալիք [խալիֆան] Մարուան¹ իբն Մուհամմադ իբն Մարուանին, որն իր հորեղբորորդին էր, կառավարիչ նշանակեց Ջազիրայի, Ատրպատականի և Հայաստանի վրա։

Բանն այն էր, որ նա Հայաստանում Մասլամայի զորքի մեջ էր, երբ սա խազարների դեմ էր արշավում։ Երբ Մասլաման վերադարձավ, Մարուանը գնաց Հիշամի մոտ և աննկատելի ձևով ներս մտավ։ Հիշամը հարցրեց գալու պատճառը, իսկ [Մարուանը] ասաց՝ ինձ համար անտանելի է այն, ինչի մասին խոսելու եմ, բայց և այնպես ինձանից բացի ոչ ոք չի կարող այդ հարցը լուծել։ Ասաց՝ իսկ ի՞նչ է դա։ Ասաց, Մարուանը խազարների ներխուժումը իսլամի երկիր, Ջառահի և այլ մահմեդականների սպանությունը հուսալքում առաջացրին մահմեդականների մեջ, Հավատացելուց իշխանը որոշեց իր եղբորը՝ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին, ուղարկել նրանց (խազարների) դեմ, սակայն երգվում եմ ալլահով, որ նրա ոտքը հազիվ է դիպել նրանց ցածրագիր հողերին։ Երբ նա (Մասլաման) տեսավ իր զորքերի հոծ բազմությունը, ոգևորությամբ նամակ գրեց խազարներին՝ նրանց պատերազմ հայտարարելով։ Դրանից հետո երեք ամիս սպասեց, մինչև որ նրանք (խազարները) պատրաստվեցին ու զորք հավաքեցին։ Երբ մտավ նրանց երկիրը, չկարողացավ հաղթել նրանց և հասցրեց սոսկ գլուխն ազատել։ Կամենում եմ, որ ինձ թույլ տաս արշավանք կատարել, մեզանից ջնջել ամոթը և թշնամուց վրեժ լուծել։

Ասաց [խալիֆան]՝ թույլ եմ տալիս։

Ասաց՝ ինձ պետք է հարյուր քսան հազար զորք տաս։

Ասաց՝ համաձայն եմ։

Ասաց՝ բայց պետք է այդ բանը թաքուն պահես բոլորից։

Ասաց՝ համաձայն եմ և քեզ էլ Հայաստանի կառավարիչ եմ նշանակում։

Հրաժեշտ տվեց նրանց և գնաց Հայաստան որպես կառավարիչ։ Հի-

շամը զորքեր ուղարկեց Ասորիքից, Իրաքից և Զադիրայից: Այսպիսով, նրա (Մարուանի) մոտ հավաքվեց հարյուր քսան հազար [կանոնավոր] զորք և կամավորներ: Նա ձևացրեց, թե ալանների դեմ արշավանքի է գնում և իրոք դիմեց նրանց երկիրը, իսկ խազարաց թագավորին դիմեց հաշտություն առաջարկելով: Սա համաձայնեց և մարդ ուղարկեց հաշտություն կնքելու նպատակով: [Մարուանը] իր մոտ պահեց դեսպանին, մինչև որ վերջացրեց պատրաստությունը և արեց ինչ որ կամենում էր: Ապա սկսեց կոպիտ խոսել նրանց (խազարների) հետ, պատերազմ հայտարարեց և նույն դեսպանի միջոցով այդ բանը հայտնեց նրա տիրոջը: Սակայն հանձնարարեց իր մարդկանց, որ նրան (դեսպանին) տանեն երկար ճանապարհով, իսկ ինքը գնաց ամենակարճ ճանապարհով: Երբ դեսպանը հասել էր տիրոջ մոտ, Մարուանն արդեն այնտեղ էր: Նա տեղեկացրեց իր տիրոջը, թե ինչպես Մարուանը զորք է հավաքել ու պատրաստվել:

Խազարաց թագավորը խորհրդակցեց իր մերձավորների հետ, որոնք ասացին՝ սա քեզ խաբեց ու ներխուժեց քո երկիրը: Եթե սպասես զորքդ հավաքելու, այդ բանը երկար կտևի և նա (Մարուանը) կանի ինչ որ կամենում է: Իսկ եթե այս վիճակում դուրս գաս նրա դեմ կհաղթի քեզ ու փախուստի կմատնի: Մեր կարծիքն այն է, որ պետք է նահանջել մինչև քո երկրի ամենախորքը և թողնել նրան, որ անի ինչ ուզում է:

Նա ընդունեց այդ առաջարկը և գնաց ինչպես ասել էին: Մարուանը մտավ նրա երկիրը, խորացավ, ավերեց այն, ավարի տվեց, գերեվարեց ու հասավ մինչև ամենախորքերը: Նա մի քանի օր մնաց, մինչև որ ստորացրեց նրանց և վրեժ լուծեց: Նա մտավ Սարիրի (գահի) տիրոջ՝⁸ երկիրը, կոտորեց ժողովրդին, գրավեց բերդերը: Թագավորը հպատակվեց նրան և հաշտություն կնքեց, խոստանալով տալ 1500 երիտասարդ տղա, հինգ հարյուր սևահեր աղախին և հարյուր հազար մոգ ցորեն, որը պետք է տանեին Բաբ: Մարուանը հաշտություն կնքեց Տումանի բնակիչների հետ հարյուր երիտասարդ տղա երկու մասով [տալու պայմանով], ինչպես նաև քսան հազար մոգ ցորեն [պահանջեց]: Ապա մտավ Զարիքիւրան երկիրը և նրա թագավորի հետ հաշտություն կնքեց: Ապա եկավ Համդին երկիրը, սակայն Համդինը մերժեց հաշտություն կնքել: Նա պաշարեց ու գրավեց նրա բերդը: Ապա եկավ Սուդդան և հաշտության պայմանագրով նվաճեց ու պարտավորեցրեց Թիրշանշահին տարեկան տասը հազար մոգ ցորեն տանել Բաբ (Դարրանդ): Ապա պաշարեց Լաքզի տիրոջ բերդը, որը մերժեց հարկ վճարել: Լաքզի թագավորը դուրս եկավ՝ խազարաց թագավորի մոտ գնալու նպատակով, սակայն մի հովիվ նետով սպանեց նրան, առանց իմանալու, թե ով է: Ապա Լաքզի ժողովուրդը Մարուանի հետ հաշտություն կնքեց, իսկ նա մի կառավարիչ նշանակեց նրանց մոտ: Ապա գնաց Շարուան ամրոցը, որը ծովի ափին էր և բնակիչ-

ները հնադանդվեցին նրան, վերջապես դիմեց Դուդանիյյա (Դիդոյք), հաղթեց նրա (բնակիչներին) ու վերադարձավ:

էջ 216—217

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը ամառային «ձախ» արշավանք կատարեց ու հասավ Ակրանի արվարձանը (ռաբադ), իսկ Աբդալլահ ալ-Բաթթալը բախվեց Կոստանդինի (Կուսթանթին) և այլոց հետ: Հաղթեց ու դերեց Կոստանդինին:

Այդ տարում Սուլայման իբն Հիշամը ամառային «աջ» արշավանք կատարեց ու հասավ Կեսարիա (Կայսարիյյա):

Այդ տարում, հականի պարտվելուց հետո, եկավ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը ու կարգի բերեց գործերը, կառուցեց Բաբը:

Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչն էր Մարուան իբն Մուհամմադը:

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(21 փետրվար 733—9 փետրվար 734)

էջ 217

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը արշավեց Ռումի երկիրը: Նույն տարում ժանտախտ եղավ Ասորիքում:

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՎԵՑ ԹՎԱԿԱՆ

(10 փետրվար 734—30 հունվար 735)

էջ 217

Այդ տարում Մուավիա իբն Աբդ ալ-Մալիքը ամառային արշավանք կատարեց Ռումի երկիրը: Սաստիկ ժանտախտ եղավ Իրաքում:

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(31 հունվար 735—19 հունվար 736)

էջ 219

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը ամառային «ձախ» արշավանք կատարեց, իսկ Սուլայման իբն Հիշամը՝ ամառային «աջ» արշավանք Ջազիրայի կողմից և իր ջոկատները սփռեց Ռումի երկրում:

Այդ տարում Մարուան իրն Մուհամմադը, որը Հայաստանի կառավարիչ էր, երկու բանակ ուղարկեց, որոնցից մեկը ալանաց (ալ-լան) երեք բերդեր գրավեց, իսկ մյուսը պաշարեց Տումանշահը, իսկ ժողովուրդը հատուկ թյուն կնքեց:

էջ 224

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչն էր Մարուան իբն Մուհամմադը:

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(20 հունվար 736—7 հունվար 737)

էջ 224

Այդ տարում Հիշամ իբն Աբդ ալ-Մալիք [խալիֆայի] երկու որդիները՝ Մուավիան և Սուլայմանը, արշավեցին Ռումի երկիրը:

էջ 226

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մարուան իբն Մուհամմադը Հայաստանից արշավեց Վարնիսի՝ երկիրը երեք կողմից: Վարնիսը փախավ խաղաղաց երկիրը և ամրացավ մի բերդում: Մարուանը բանակ դրեց նրա բերդի առջև, պաշարեց և քարանետ մեքենաներ (մանջանիկ) դրեց: Վարնիսին սպանեց մի պատահական անցորդ, որը նրա գլուխն ուղարկեց Մարուանին: Մարուանը այն ցուցադրեց բերդի պաշտպաններին, որի հետևանքով նրանք ընդունեցին նրա պայմանները: Նա կոտորեց ռազմիկներին, իսկ նրանց ընտանիքները գերեվարեց:

Այդ տարում Հայաստանի կառավարիչն էր Մարուան իբն Մուհամմադ իբն Մարուանը:

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԻՆ ԹՎԱԿԱՆ

(8 հունվար 737—28 դեկտեմբեր 737)

էջ 233—234

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Վալիդ իբն ալ-Կական արշավեց Ռումի երկիրը:

Այդ տարում Մարուան իբն Մուհամմադը արշավեց Հայաստան, մտավ

ալանաց երկիրը և առաջ ընթացավ, մինչև որ հասավ խաղարաց երկիրը, անցավ Բալանջար, Սամանդար [քաղաքներով] և հասավ ալ-Բայդա (ըսպիտակ), ուր հականն էր լինում: Սակայն հականը փախավ:

ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆ

(29 դեկտեմբեր 737—17 դեկտեմբեր 738)

էջ 239

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Իսհակ իբն Սալմ ալ-Ուկայլին արշավեց Տումանշահ, գրավեց բերդերը և երկիրն ավերեց:

Այդ տարում Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչն էր Մարուան իբն Մուհամմադը:

ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(18 դեկտեմբեր 738—6 դեկտեմբեր 739)

էջ 240

Այդ տարում Մասլամա իբն Հիշամը արշավեց Ռումի երկիրը և ցորենի շտեմարաններ (մաթամիր)⁸⁰¹ գրավեց:

էջ 245

ՄԱՐՈՒԱՆ ԻԲՆ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ՄԱՐՈՒԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

[Հարյուր] քսանմեկ թվականին Մարուան իբն Մուհամմադ իբն Մարուանն արշավեց Հայաստանի [որոշ մասեր], որի կառավարիչն էր Հասավ Սարիրի տիրոջ բերդը, սպանեց ու գերեվարեց, ապա հասավ մի ուրիշ բերդ, սպանեց ու գերեվարեց. մտավ Ղումիկ⁸⁰² բերդը, որտեղ էր թագավորի դուստրը և նրա գահը: Թագավորը փախավ նրանից ու հասավ մի բերդ, որը կոչվում էր հալդաջ, ուր նրա ոսկե գահն էր: Մարուանը առաջ շարժվեց և ամբողջ ամառն ու ձմեռը կովեց նրա դեմ: Թագավորը համաձայնեց տարեկան տալ հազար գլուխ [անասուն] և հարյուր հազար մոդ [ցորեն]:

Մարուանը գնաց ու մտավ Ազրուբիթրան երկիրը, որի թագավորը հաշտություն կնքեց նրա հետ, ապա ներխուժեց Տուման երկիրը, որի հետ հաշտություն կնքեց: Առաջ խաղաց, մինչև որ հասավ Համզին, որն ավերեց և ապա պաշարեց մեկ ամիս նրա բերդերից մեկը, մինչև որ ստիպեց հաշտություն կնքել: Մարուանը եկավ Մասդարա երկիրը, որը հաշտու-

թյամբ նվաճեց: Ապա գրավեց Քիրանը, (Գիրան) և նրա հետ հաշտու-
թյուն կնքեցին Թաբարսարանն ու Ֆիլանը և ժողովինյա բոլոր նահանգ-
ները՝ Հայաստանից մինչև Թաբարիստան:

էջ 245

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մասլամա իբն Հիշամը արշավեց Ռումի երկիրը և գրա-
վեց ցորենի շտեմարանները (մաթամիր):

Այգ տարում Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչն էր
Մարուան իբն Մուհամմադը:

ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(7 դեկտեմբեր 739—25 նոյեմբեր 740)

էջ 248

ԲԱԹԹԱԼԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ԽՈՒՄԲ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ՝ ՌՈՒՄԻ
ԵՐԿՐՈՒՄ

Այդ տարում մի խումբ մահմեդականների հետ Ռումի երկրում սպան-
վեց Բաթթալը², իսկ նրա բուն անունն էր Աբդալլահ Աբու-լ-Հուսայն ալ-
Անթաթի (Անտիոքացի): Ասվում է նաև, որ [սպանվեց] հարյուր քսանե-
րեք թվականին: Նա հաճախ էր արշավում Ռումի երկիրը, ասպատակում
և մեծ անուն ունեւ նրանց մոտ ու վախենում էին նրանից: Պատմվում է,
որ նա նրանց երկիրը կատարած արշավանքներից մեկի ժամանակ իր ըն-
կերակիցների հետ գիշերանց մտել է մի գյուղ, ուր մի կին իր լացող երե-
խային ասում էր՝ լո՛ւի՛ր, թե չէ քեզ Բաթթալին կտամ, ապա բարձրացնում
է ձեռքի վրա և ասում՝ վերցրու Բաթթալ: Իսկ նա վերցնում է [երեխային]
նրա ձեռքից:

Աբդ ալ-Մալիքն իր որդու՝ Մասլամայի, հետ նրան ուղարկեց Ռումի
երկիրը և հրամանատար դարձրեց Ջազիրայի ու Ասորիքի վրա: Իր որդուն
հրամայեց, որ նրան հանձնի առաջապահ ղորքը:

ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(15 նոյեմբեր 741—3 նոյեմբեր 742)

էջ 254

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սուլայման իբն Հիշամը ամառային արշավանք կատա-
րեց: Նա հանդիպեց Ռումի թաղավոր Լևոնին (Ալյուն) և կողոպտեց [նրա
ճամբարը]:

ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(4 հոյեմբեր 742—24 հոկտեմբեր 743)

էջ 261

Այդ տարում հոռոմները հարձակվեցին Զապետրայի (Զիբաթրա) վրա: Սա մի հին բերդ է, որը դրավել էր Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրին. հոռոմները քանդեցին այն, ապա վերակառուցվեց, սակայն ոչ ամուր ձևով և հոռոմները կրկին եկան ու քանդեցին Մարուան իբն Մուհամմադ ալ-Հիմադի (ավանակ) ժամանակ: Ռաշիդը վերակառուցեց այն և զորք տեղավորեց: Մամունի օրոք հոռոմները հարձակվեցին ու քանդեցին, իսկ Մամունը հրամայեց նորոգել ու ամրացնել: Հոռոմները հարձակվեցին նաև Մուտասիմի օրոք, ինչպես հիշելու ենք, եթե ալլահը կամենա: Այս բոլորը հենց այնպես հիշեցի, որովհետև չգիտեմ [բոլոր] դեպքերի թվականները:

Այդ տարում Վալիդ [խալիֆան] իր եղբորը՝ Ղամր իբն Յազիդին, [Ռումի դեմ] արշավանքի հրամանատար նշանակեց, իսկ ծովերի վրա հրամանատար կարգեց Ասուադ իբն Բիլալ ալ-Մուհադիին, որին ուղարկեց Կիպրոս որպեսզի բնակիչներին առաջարկի ընտրություն կատարել Ասորիք զնալ կամ Ռումի երկիրը: Մի խումբ ցանկացավ մահմեդականների մոտ լինել և նրանց բերեցին Ասորիք, իսկ ուրիշներն ընտրեցին Ռումի երկիրը և նրանց էլ այնտեղ ուղարկեցին:

ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(25 հոկտեմբեր 743—12 հոկտեմբեր 744)

էջ 264—266

ՎԱԼԻԴ ԻԲՆ ՅԱԶԻԴ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻԳԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Զումադա Բ ամսում սպանվեց ալ-Վալիդ իբն Յազիդ իբն Աբդ ալ-Մալիք [խալիֆան], որին նակիս (տհաս, պակաս) էին կոչում: Ուլանության պատճառը նրա անառակությունն էր ու զեխությունը: Երբ խալիֆա դարձավ, շարունակեց զբաղվել խաղամոլությամբ, հաճոյասիրությամբ, որսորդությամբ, գինեմոլությամբ և անառակությամբ, իսկ այս բանից դժգոհ էին ժողովուրդը և զորքը...:

[Սպանության] լուրը հասավ Մարուան իբն Մուհամմադին, որը Հայաստանում էր և գրեց Սաիդ իբն Աբդ ալ-Մալիք իբն Մարուանին հրամայելով մարդկանց արգելել, զգուշացնել դավադրություններից և վախեցնել վատ հետևանքներով...:

Այդ տարում Մարուան իրն Մուհամմադը ըմբոստացավ Յազիդ (Եզիդ) իրն ալ-Վալիդ [խալիֆայի] դեմ:

Դրա պատճառն այն էր, որ երբ Վալիդը սպանվեց, Աբդ ալ-Մալիք իրն Մարուան իրն Մուհամմադը, Վալիդի եղբոր՝ ալ-Ղամր իրն Յազիդի հետ, խառնում էր՝ [Ռումի դեմ] ամառային արշավանքից վերադարձից հետո: Իսկ Ջազիրայում Աբդու իրն ալ-Ռիաճ ալ-Ղասսանին կառավարիչ էր՝ Վալիդի կողմից նշանակված: Երբ Վալիդը սպանվեց, Աբդուն շարժվեց դեպի Ասորիք, իսկ Աբդ ալ-Մալիք իրն Մարուան իրն Մուհամմադը հարձակվեց խառանի (Հառան) ու Ջազիրայի վրա և գրավեց: Ապա գրեց իր հորը, որը Հայաստանում էր, տեղեկացնելով այդ մասին և շտապեցնելով, որ օգնության հասնի: Մարուանը երթի պատրաստվեց և մարդուղարկեց Սահմանային գոտին (Սուդուր)՝ այն կառավարելու և պաշտպանելու համար: Նա ձևացրեց, որ Վալիդի արյան վրեժն է պահանջելու և առաջ խաղաց իր զինվորների հետ, միասին տանելով պաղեստինցի Սաբիտ իրն Նաիմ ալ-Ջուդամիին, որի հետ նրա բարեկամության պատճառն այն էր, որ Հիշամը [Ժամանակին] բանտարկել էր նրան (Սաբիտին): Նրա բանտարկության պատճառն այն էր, որ երբ Աֆրիկայի կառավարիչ Քուլսում իրն Իյադին սպանել էին, Հիշամը [Սաբիտին] Աֆրիկա էր ուղարկել, սակայն սա զինվորներին փշացրել էր, իսկ Հիշամը բանտարկել տվեց նրան: Մարուանն իր այցելություններից մեկում դիմեց Հիշամին և բարեխոսեց նրա համար: Սա արձակեց նրան, և [Մարուանը] բարեկամացավ նրա հետ:

Արդ, երբ Մարուանը այսպիսի ընթացք բռնեց, Սաբիտ իրն Նաիմ (Նուայմ) հրամայեց Մարուանի մարդկանց, որոնք Ասորիքից էին եկել, թողնել Մարուանին և իրեն միանալ՝ Ասորիք վերադառնալու համար: Նրանք պատասխանեցին նրա կոչին, և նրա մոտ Մարուանի մոտ եղածի կրկինը հավաքվեց և զգույշ դիրք բռնեցին:

Երբ առավոտ եղավ, պատերազմի պատրաստվեցին: Մարուանը մուսուլմաններ ուղարկեց զորքերի մեջ, որոնք կանչում էին՝ ո՛վ Ասորիքի մարդիկ, ինչը ձեզ ստիպեց այդ անելու: Եւ որ ես ձեզ լավ եմ վերաբերվել: Պատասխանեցին՝ մենք քեզ հնազանդվում էինք ինչպես խալիֆային, իսկ այժմ նա (խալիֆան) սպանվել է և Ասորիքի ժողովուրդը ընտրել է Յազիդին [որպես խալիֆա]: ուստի հետևելով Սաբիտին, կամեցանք մեր դավառները վերադառնալ: Ասաց [Մարուանը]՝ ստում եք, դուք չեք ուզում սւյն, ինչ ասում եք, այլ ուզում եք կողոպտել ձեր ճանսպարհին պատահած դիմախի մարդկանց ունեցվածքը: Իմ և ձեր միջև մի-

այն սուրը կարող է դատել, սակայն եթե գաք ինձ մոտ և ձեզ կովի տանեմ, ապա կթողնեմ, որ վերադառնանք ձեր գավառները: Հնադանդվեցին նրան և նա ձերբակալեց Սաբիտ իբն Նուայմին ու որդիներին բանտարկեց, իսկ զինվորներին՝ հսկողության տակ տարավ, մինչև որ հասան հառան ու հասցրեց Ասորիք: Նա կոչ արեց Ջազիրայի [մարտունակ] բնակիչներին, որ ներկայանան: Ներկայացան քսան հազարից ավելի և նա պատրաստվեց Յազիդի դեմ գնալու:

Յազիդը գրեց նրան, համոզելով, որ իրեն տա ընտրությունը (բայա), իսկ ինքը նրան կտա այնքան իշխանություն, ինչքան Աբդ ալ-Մալիք իրն Մարուան [խալիֆան] տվել էր նրա հորը՝ Մուհամմադ իբն Մարուանին, այսինքն՝ Ջազիրան, Հայաստանը, Մոսուլն ու Ատրպատականը: Մարուանը [խալիֆայի] ընտրությունը նրան տվեց, իսկ Յազիդը շնորհեց վերոհիշյալ նահանգների [իշխանությունը]:

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(11 սեպտեմբեր 747—30 օգոստոս 748)

Էջ 316

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում ամառային արշավանք կատարեց Վալիդ իբն Հիշամը ու գրավեց ալ-Ամկը (ալ-Ումկ) և Մարաշի բերդը կառուցեց:

Էջ 329

ԻԲՐԱՀԻՄ ԻԲՆ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ԱԼԻ ԱԼ-ԻՄԱՄԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիշել ենք նրա բանտարկության պատճառը, իսկ նրա մահվան մասին տարբեր կարծիքներ կան: Ասվում է, որ Մարուանը նրան բանտարկեց հառանում, ինչպես նաև Սաիդ իբն Հիշամ իբն Աբդ ալ-Մալիքին, նրա երկու որդիներին՝ Օսմանին և Մարուանին, ինչպես նաև Աբդալլահ իբն Օմար իբն Աբդ ալ-Ազիզին, ալ-Աբբաս իբն ալ-Վալիդ իբն Աբդ ալ-Մալիքին և Աբու Մուհամմադ ալ-Սուֆիանին: Այս բոլորից հառանում տեղի ունեցած մի համաճարակի զոհ գնացին ալ-Աբբաս իբն ալ-Վալիդը, Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Ալի ալ-Իմամը և Աբդալլահ իբն Օմարը:

Մարուանի՝ Ջաբի մոտ կրած պարտությունից մեկ շաբաթ առաջ Սաիդ իբն Հիշամը և նրա հորեղբոր որդին, այլ բանտարկյալների հետ միասին, ապստամբեցին, սպանեցին բանտապետին և դուրս եկան: Սակայն հառանի բնակիչները, ամբոխի հետ միասին սպանեցին նրանց: հառանի բնակիչների սպանածների մեջ էին Շուրահիլ իբն Մասլամա իբն Աբդ

ալ-Մալիքը, Աբդ ալ-Մալիք իբն Բիշր ալ-Տաղլիբին և շորրորդ Արմինիա-
յի պատրիկը, որի անունն էր Քուշան⁸⁵ :

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(20 օգոստոս 749—8 օգոստոս 750)

էջ 330

ՄԱՐՈՒԱՆ ԻԲՆ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ՄԱՐՈՒԱՆ ԻԲՆ ԱԼ-ՀԱՔԱՄԻ
ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարյուր երեսուներկու թվականի Զու-լ-Հիջջա [ամսից] երեք. օր
մնացած (6 օգոստոս 750) սպանվեց Մարուան իբն Մուհամմադը, Բու
Սիրում, որը Եգիպտոսի գավառներից է:

Երբ Մարուանը Զաբի մոտ պարտվեց Աբդալլահ իբն Ալիից. եկավ
Մոսուլ քաղաքը, ուր կային Հիշամ իբն Ամրու ալ-Տաղլիբին և Բիշր իբն
Խուզայմա ալ-Ասադին, որոնք կամուրջը փակել էին: Ասորիքի զորքերը
գոռացին նրանց՝ սա հավատացելոց իշխան Մարուանն է: Ասացին՝ սը-
տում եք, հավատացելոց իշխանը չի փախչի: Եվ Մոսուլի բնակիչները
հայհոյեցին նրան ու ասացին՝ ո՛վ ցնդած ապիկար, փառք ալլահին, որ
ձեր իշխանությունը վերացրեց և պետությունը ոչնչացրեց: Փառք ալլահին,
որը մեր մարգարեի տան մարդկանց⁸³ բերեց [իշխանության ղուլիս]:

Երբ այս խոսքերը լսեց, գնաց մի գյուղի ուղղությամբ և Տիգրիսն
անցնելով դիմեց Խառան (Հառան), ուր իր եղբորորդին՝ Իբբան իբն Յա-
գիդ իբն Մուհամմադ իբն Մարուանը կառավարիչ էր՝ [իր կողմից նշա-
նակված]: Այնտեղ մնաց քսան օրից մի քիչ ավելի:

Եկավ Աբդալլահ իբն Ալին, որը հասավ Մոսուլ ու մտավ [քաղաքը]:
Նա պաշտոնից հանեց Հիշամին և կառավարիչ նշանակեց Մուհամմադ
իբն Սուլին: Ապա հետապնդեց Մարուան իբն Մուհամմադին և երբ Աբ-
դալլահը նրան մոտեցավ, Մարուանը իր ղորքի ու ընտանիքի հետ փա-
խավ՝ թողնելով Խառանում իր եղբորորդուն՝ Իբբան իբն Յազիդին, իսկ
նրա հետ նաև Ումմ Օսմանին՝ Մարուանի դստերը:

Աբդալլահ իբն Ալին եկավ Խառան և նրան Իբբանը դիմավորեց սև⁸⁴
[գրոշակով] և ընտրությունը նրան տվեց: Նա հնազանդվեց նրան (Աբ-
դալլահին), իսկ վերջինս ապահովեցրեց նրան, ինչպես նաև Խառանի ու
Ջազիրայի բոլոր բնակիչներին:

Իսկ Մարուանը գնաց Եմեսա (Հիմս), որի բնակիչները հպատակ-
վեցին ու հնազանդվեցին նրան: Նա այնտեղ երկու, թե՛ երեք օր մնաց ու
հեռացավ:

Այդ տարում Ջազիրայի բնակիչները հրաժարվեցին Աբու-լ-Աբբաս Սաֆֆահից՝ և շարժվեցին դեպի հառան, ուր Մուսա իբն Քաաբն էր, Սաֆֆահի զորքերից երեք հազար հոգու հետ, և պաշարեցին նրան։ Սակայն Ջազիրայի ժողովուրդը ղեկավարող առաջնորդ շուների նրանց դեմ ելավ Իսհակ իբն Մուսլիմ ալ-Ուկայլին, որը եկավ Հայաստանից։ Սա դուրս էլ եկել, երբ Մարուանի պարտության լուրը հասել էր նրան։ Ջազիրայի ժողովուրդը հավաքվեց ու պաշարեց Մուսա իբն Քաաբին մոտավորապես երկու ամիս։

Աբու-լ-Աբբասը իր եղբորը՝ Աբու Ջաֆարին, ուղարկեց իր մոտ եղած զորքերի հետ, որոնք Վասիթում պաշարել էին իբն Հուբայրային։ [Աբու Ջաֆարը] շարժվեց դեպի Կիրկիսիա և Ռակկա, որոնց բնակիչները հրաժարվել էին [Սաֆֆահին ընդունել]։ Ապա գնաց դեպի հառան, իսկ Իսհակ իբն Մուսլիմը դիմեց Եդեսիա (Ռուհա)։ Այս բոլորը կատարվեց հարյուր երեսուներեք թվականին (750—751)։

Մուսա իբն Քաաբը դուրս եկավ հառանից ու բախում ունեցավ Աբու Ջաֆարի հետ։ Իսհակ իբն Մուսլիմն իր եղբորը՝ Բաքբար իբն Մուսլիմին, ուղարկեց Ռաբիա [ցեղերի] մոտ՝ Դարա և Մարգին։ Այդ ժամանակ Ռաբիայի ցեղապետը մի մարդ էր Հարուրիյա [տոհմից] և նրա անունն էր Բարիբա։ Աբու Ջաֆարը նրանց կողմը գնաց և խիստ բախումից հետո Բարիբան սպանվեց ճակատամարտում։ Բաքբարը գնաց իր եղբոր՝ Իսհակի, մոտ Եդեսիա և Իսհակը նրան փոխանորդ թողեց Եդեսիայում, իսկ ինքը Սամոսատ (Սումայասթ) գնաց մեծ զորքով։ Աբու Ջաֆարը եկավ Եդեսիա և նրա ու Բաքբարի միջև ընդհարումներ եղան։

Սաֆֆահը գրեց Աբդալլահ իբն Ալիին՝ հրամայելով, որ իր զորքով գնա Սամոսատ։ Սա գնաց ու կանգ առավ Իսհակի մոտ Սամոսատում։ Այդ ժամանակ Իսհակը վաթսուն հազարով կանգնած էր Եփրատի ալն ափին։ Աբու Ջաֆարը եկավ Եդեսիայից և Իսհակին յոթ ամիս պաշարեց Սամոսատում։ Իսհակն ասում էր՝ իմ վզին է ընտրության [պարտքը] և ես չեմ կարող ալն մոռալ, մինչև որ իմանամ նրա տերը մեռած կամ սպանված է։ Աբու Ջաֆարը նրան լուր ուղարկեց, թե Մարուանը սպանված է [Իսհակը] ասաց՝ պետք է վստահ լինեմ։ Երբ վստահ դարձավ, հաշտություն և երաշխավորագիր խնդրեց։ Այդ մասին Սաֆֆահին գրեցին և սա հրամայեց նրան ու ընկերակիցներին երաշխավորել։ Այդ մասին գրություն պատրաստվեց և Իսհակը եկավ Աբու Ջաֆարի մոտ, որի հետ ընկերության հիշատակներ ունեւր, Ջազիրայի և Ասորիքի ժողովուրդը հանդարտվեց։ Աբու-լ-Աբբասն իր եղբորը՝ Աբու Ջաֆարին, նշանակեց Ջա-

ղիրայի, Հայաստանի, Ատրպատականի կառավարիչ: Եվ այսպես մնաց
[Աբու Զաֆարը] մինչև խալիֆա դառնալը:

էջ 339

ՅԱԼԻԱ ԻՐԵՆ ՄՈՒՀԱՄՄԱԴԻ՝ ՄՈՍՈՒԼԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՆՇԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ
ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏՄՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սաֆֆահը իր եղբորը՝ Յահիա իբն Մուհամմադին Մոսուլի կառավարիչ նշանակեց Մուհամմադ իբն Սուլի փոխարեն:

Բանն այն է, որ Մոսուլի բնակիչները ընդվզեցին Մուհամմադ իբն Սուլի դեմ, ասելով՝ չենք ուզում արյունարբուի ստորադրյալին, և դուրս քշեցին նրան: Սա գրեց Սաֆֆահին այդ մասին, իսկ վերջինս իր եղբորը՝ Յահիա իբն Մուհամմադին նշանակեց կառավարիչ և տասներկու հազար զորքով ուղարկեց:

Նա իջևանեց իշխանական պալատում, որը գլխավոր մզկիթի մոտ էր և ոչ մի վատ արարք չգործեց ժողովրդի դեմ ու ոչ մի բանի արգելք չդարձավ: Ապա նրանց հրավիրեց և [հանկարծակի] տասներկու մարդ սպանեց:

Այդ ժամանակ բնակիչները փախան և զենք վերցրին: Սակայն նա երաշխավորագիր տվեց և հրամայեց, որ մունետիկը կանչի, թե ով որ մզկիթ մտնի ապստամբության մեջ կլինի: Մարդիկ խուսնեցին եկան, իսկ Յահիան մզկիթի դռների վրա մարդիկ նշանակեց, որոնք [մտնողներին] անխնա սրի քաշեցին: Ասվում է, որ այսպիսով տասնմեկ հազար սպանվեց միայն կնիք⁸⁷ ունեցողներից, իսկ կնիք չունեցողներից՝ անհաշիվ:

Երբ գիշերը վրա հասավ, Յահիան լսեց կանանց ողբը, որոնց ամուսիններն սպանված էին: Հարցրեց այդ մասին և նրան հայտնեցին: Այն ժամանակ նա ասաց՝ վաղը կսպանեք նաև կանանց ու երեխաներին: Այդպես էլ արեցին և երեք օր կոտորած եղավ: Սակայն նրա բանակում կար մի զորավար, որը ձեռքի տակ ուներ չորս հազար զինքի (սևամորթ) և սրանք կանանց բռնությամբ հափշտակեցին:

Երբ Յահիան երրորդ օրը վերջացրեց կոտորածը Մոսուլում, շորրորդ օրը ձի նստած դուրս եկավ՝ իր հետ ունենալով [ռազմիկներ] մերկացրած նիզակներով ու սրերով: Նրա ճամփան կտրեց մի կին՝ բռնելով ձիու սանձը: Նրա մարդիկ ուզեցին սպանել նրան, սակայն նա արգելեց: Կինն ասաց՝ մի՞թե դու Հաշիմի⁸⁸ տոհմից չես, մի՞թե ալլահի մարգարեի հորեղբորորդին չես: Ինչպե՞ս ես թույլ տալիս, որ մահմեդական արաբ կանանց

[հափշտակեն] զինչինները (սեամորթները) և ամուսնանան: [Յահիան] չպատասխանեց նրան և հրամայեց ապահով տեղ հասցնել, քանզի նրա խոսքերը ավդել էին իր վրա: Հաջորդ օրը նա հրավիրեց զինչիններին զրամ բաժանելու պատրվակով: Երբ հավաքվեցին, հրամայեց բոլորին կոտորել:

Ասվում է, որ Մոսուլի բնակիչների կոտորածի պատճառը նրանց համակրանքն էր Օմայանների նկատմամբ և ատելությունը՝ Աբբասյանների: Մի կին իր գլուխն էր լվացել և խթմիյա (տուղտ) բույսը տանիքից գցել էր ցած և սա ընկել էր խորասանյան ռազմիկներից մեկի գլխին: Կարծելով, որ դիտմամբ է արված, նա հարձակվել էր տան վրա և սպանել բնակիչներին: Քաղաքի ժողովուրդը ոտքի էր կանգնել ու սպանել նրան, որից հետո խռովությունը տարածվել էր:

էջ 340

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սաֆֆահը իր եղբորը՝ Մանսուրին, նշանակեց Ջազիրայի, Ատրպատականի ու Հայաստանի կառավարիչ:

[Այսպիսով], Ջազիրայի, Հայաստանի և Ատրպատականի կառավարիչը դարձավ Աբու Ջաֆար Իբն Մուհամմադ Իբն Ալին:

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(9 օգոստոս 750—29 հուլիս 751)

էջ 341

ՀՈՌՈՄՆԵՐԻ՝ ՄԱԼԱԹԻԱՆ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռումի թագավոր Կոստանդինը⁸⁹ եկավ Մալաթիա ու Կամախ (Քամախ):

Նա պաշարեց Կամախը, որի բնակիչները օգնության կանչեցին Մալաթիայի ժողովրդին: Այնտեղից եկավ ութ հարյուր ռազմիկ, որոնց հռոմեները հաղթեցին, իսկ մահմեդականները փախուստի դիմեցին: Հռոմեները եկան պաշարեցին Մալաթիան: Այդ ժամանակ Ջազիրան, ինչպես տեսանք, խռովյալ վիճակում էր, իսկ նրա կառավարիչ Մուսա իբն Քաաբը հառանում էր: Կոստանդինը Մալաթիայի ժողովրդին լուր ուղարկեց, թե ես ձեզ պաշարում եմ ոչ առանց տեղյակ լինելու մահմեդականների երկպառակության մասին, այնպես որ ես ձեզ կտամ երաշխավորագիր և դուք կգնաք իսլամի երկիրը, իսկ Մալաթիան ես կվերացնեմ:

Սրանք չպատասխանեցին նրան, իսկ նա քարանետ մեքենա դրեց և նրանք հպատակվեցին ու հանձնեցին քաղաքը՝ երաշխավորագիր ստանալով, և ապա տեղափոխվեցին իսլամի երկիրը։ Նրանք իրենց հետ տարան ինչ որ կարող էին տանել, իսկ ինչ չէին կարող՝ գցեցին ջրհորներն ու կոյուղին։ Երբ նրանք շարժվեցին, հոռոմները տեղեկացան այդ մասին։ Նրանք գնացին ու ցրվեցին Ջալիրայի տարբեր կողմերում։

Ռումի թագավորն եկավ Կարնո քաղաք (Կալիկալա), կանգ առավ Մարջ ալ-Խիսիյյ (ներքինու դաշտ) վայրում և ուղարկեց հայազգի Քուշանին, որը պաշարեց այն։ Եվ ահա քաղաքի բնակիչներից երկու հայ եղբայրներ պարիսպների մեջ անցք բացեցին և Քուշանը իր մարդկանց հետ մտավ քաղաք։ Նրանք հաղթեցին, տղամարդկանց կոտորեցին, կանանց գերեվարեցին։ Իսկ կառավարչին տարան Ռումի թագավորի մոտ։

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(30 հուլիս 751—17 հուլիս 752)

էջ 344

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սաֆֆահը Հիլայից Անբար փոխադրվեց Զու-լ-Հիջջա ամսին (19 հունիս—17 հուլիս 752)։

Այդ տարում⁶⁰ ճանապարհների [լույսի] և մղոնների նշաններ դրվեցին Քուֆայի և Մեքքայի միջև։ Ուխտավորներին առաջնորդեց Իսա իբն Մուսան, որը Քուֆայի կառավարիչն էր։ Իսկ Քուֆայի դատավորն էր իբն Աբի Լայլան։

Մադինայի, Մեքքայի (Մաքքա), Թաիֆի և Յամամայի կառավարիչն էր Զիադ իբն Ուբայդալլահը։

Եմենի (Յաման) կառավարիչն էր Ալի իբն ալ-Ռաբի ալ-Հարիսին։

Բասրայի և գավառների ու Տիգրիսի շրջանների ու Օմանի (Ումման) կառավարիչն էր Սուլայման իբն Ալին։ Իսկ դատավորն էր Իբադ իբն Մանսուրը։

Սինգի կառավարիչն էր Մուսա իբն Քաաբը։

Խորասանի, Ջիբալի կառավարիչն էր Աբու Մուսլիմը։

Պաղեստինի (Ֆիլասթին) կառավարիչն էր Սալիհ իբն Ալին։

Եգիպտոսի (Միսր) կառավարիչն էր Աբու Աունը։

Մոսուլի կառավարիչն էր Իսմաիլ իբն Ալին։

Հայաստանի (Արմինիա) կառավարիչն էր Յագիդ իբն Ուսայդը։

Ատրպատականի կառավարիչն էր Մուհամմադ իբն Սուլը։

Հարկային դիվանի [պետն] էր հալիդ իբն Բարմաբը:
Ջազիրայի կառավարիչն էր (փոխարքա) Արու Ջաֆար ալ-Մանսուրը,
իսկ նրա տեղակալներն Ատրպատականի ու Հայաստանի վրա արդեն
հիշել ենք:
Ասորիքի (Շամ) կառավարիչն էր Աբդալլահ իբն Ալի:

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՅՈՒԹ ՔՎԱԿԱՆ

(27 հունիս 754—15 հունիս 755)

էջ 349

ԱՔԴԱԼԼԱՀ ԻԲՆ ԱԼԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ապա Աբդալլահ իբն Ալին եկավ կանդ առավ Մծբինում՝ և խրամատ
փորեց: Եկավ նաև Աբու Մուսլիմը⁹¹ իր հետ եղած [զորքով]: Մանսուր
[խալիֆան] դրել էր Հասան իբն Կահթաբային, որ իր փոխանորդն (խալի-
ֆա) էր Հայաստանում, հրամայելով նրան օգնության դալ Աբու Մուսլիմին:
Սա եկավ Աբու Մուսլիմի մոտ՝ Մոսուլ: Ապա Աբու Մուսլիմը շարժվեց
դեպի Մծբինի կողմերը...:

էջ 350

ԱՐՈՒ ՄՈՒՍԼԻՄ ԽՈՐԱՍԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում սպանվեց Աբու Մուսլիմ ալ-խորասանին՝ Մանսուրի
ձեռքով:

Դրա պատճառն այն էր, որ Աբու Մուսլիմը գրեց Սաֆֆահին՝ թույլ-
տվություն խնդրելով ուխտի գնալ [Մեքքա] նախկինի նման: Սաֆֆահը
գրեց Մանսուրին, որը Ջազիրայի, Հայաստանի ու Ատրպատականի [փո-
խարքան] էր, թե՛ Աբու Մուսլիմը գրել է ինձ թույլտվություն խնդրելով
ուխտի գնալ, իսկ ես թույլ տվեցի, սակայն նա ուզում է նաև խնդրել, որ
իրեն վերակացու նշանակեն ուխտագնացության շրջանում: Ուստի դու
գրիր ինձ ու թույլտվություն խնդրիր ուխտի գնալու, և ես թույլ կտամ.
բանլի, եթե դու լինես Մեքքայում, նա չի համարձակվի քեզանից առաջ
անցնել:

Մանսուրը գրեց եղբորը՝ Սաֆֆահին թույլտվություն խնդրելով ուխ-
տի գնալու, և նա թույլ տվեց: Սա եկավ Անբար: Աբու Մուսլիմն ասաց՝
Աբու Ջաֆարը ուրիշ տարի չի գտել ուխտի գնալու, բացի այս տարվա-
նից ու զայրացավ այս բանի համար: Նրանք միասին գնացին ուխտի...,

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(16 հունիս 755—4 հունիս 756)

էջ 359

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռումի թագավոր Կոստանդինը (Կուսթանթին) ելավ իսլամի երկրի դժմ, բռնությամբ մտավ Մալաթիա, ճնշեց ժողովրդին, քանդեց պարիսպը, սակայն խնայեց [մահմեդական] ռալմիկներին ու նրանց երեխաներին:

Այդ տարում ալ-Աբբաս իբն Մուհամմադ իբն Ալի իբն Աբդալլահ իբն ալ-Աբբասը ամառային արշավանք կատարեց Սալիհ իբն Ալիի և Իսա իբն Ալիի հետ: Ասվում է նաև, որ սա [հարյուր] երեսունինը թվականին էր: Սալիհը վերակառուցեց Մալաթիայի պարիսպներից այն, ինչ որ Ռումի թագավորը քանդել էր:

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(5 հունիս 756—24 մայիս 757)

էջ 359—360

ՀՈՌՈՄՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԳԵՐԻՆԵՐԻ ՓՐԿԱԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սալիհ իբն Ալին և ալ-Աբբաս իբն Մուհամմադը ավարտեցին վերակառուցումը այն ամենի, ինչ հռոմեները քանդել էին Մալաթիայում: Ապա նրանք ամառային արշավանք կատարեցին Դարբ ալ-Հադասից և ներթափանցեցին Ռումի երկիրը: Սալիհի հետ արշավանքի զրնացին նաև երկու քույրերը Ումմ Իսան և Լուբաբան՝ Ալիի դուստրերը: Նրանք երդվել էին, որ եթե Օմայանների պետությունը վերանա, իրենք կռվելու են հանուն ալլահի: Մալաթիայի լեռնանցքի կողմից հարձակվեց Ջաֆար իբն Հանզալա ալ-Մուհրանին:

Այդ տարում գերիների փրկագնում եղավ Մանսուրի ու Ռումի թագավորի միջև: Մանսուրը հռոմեներից փրկագնեց Կարնո քաղաքի (Կալիկալա) գերիներին և այլոց, վերակառուցեց [քաղաքը] ու շենադրեց: Բնակիչներին նորից վերադարձրեց քաղաք և Ջադիրայի մարդկանցից և այլ տեղերից զորք բերեց, որպեսզի հաստատվեն ու պաշտպանեն այն:

Դրանից հետո ամառային արշավանք տեղի չունեցավ մինչև [հարյուր] քառասունվեց թվականը (763—764), որովհետև Մանսուրը զբաղված էր Աբդալլահ իբն ալ-Հասան իբն Ալիի երկու որդիներով:

Ոմանք ասում են, որ Հասան իբն Կահթաբան [հարյուր] քառասուն թվականին ամառային արշավանք կատարեց Աբդ ալ-Վահհաբ իբն Իբրահիմ ալ-Իմամի հետ, իսկ Ռումի թագավոր Կոստանդինը հարյուր հազարով եկավ հասավ Ջայհան [դետր], բայց լսելով մահմեդականների հսկայական թվի մասին, խուսափեց նրանցից: Դրանից հետո ամառային արշավանք չեղավ մինչև [հարյուր] քառասունվեց թվականը:

ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(25 մայիս 757—13 մայիս 758)

էջ 365

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մանսուրն իր եղբոր՝ Իբրահիմ ալ-Իմամի որդուն՝ Աբդ ալ-Վահհաբին և ալ-Հասան իբն Կահթաբային յոթանասուն հազար ռազմիկներով ուղարկեց Մալաթիա: Նրանք իջան այնտեղ և վերակառուցեցին այն, ինչ հռոմեները քանդել էին: Վեց ամսում ավարտեցին այդ արշավանքը, և Հասանը այդ գործում մեծ զեր կատարեց: Մանսուրն այնտեղ չորս հազար ռազմիկ բնակեցրեց, շատ զենք կուտակեց ու զինամթերք և կառուցեց Կալաուզիյա⁹² բերդը: Երբ Ռումի թագավորը լսեց Աբդ ալ-Վահհաբի և Հասանի Մալաթիա գնալու մասին, հարյուր հազարով գնաց նրանց դեմ, կանգ առավ Ջայհան գետի մոտ, բայց լսելով մահմեդականների մեծ թվի մասին, ետ դարձավ:

Երբ Մալաթիան վերակառուցվեց, նրա բնակիչներից ողջ մնացածները վերադարձան:

Այդ տարում Մանսուրը հրամայեց Ջիբրայիլ իբն Յահիային վերակառուցել Մամեստիան (ալ-Մասիսա), որի պարիսպները երկրաշարժից քայքայվել էին, իսկ բնակիչները քաղցել էին: Սա կառուցեց պարիսպը և անվանեց ալ-Մամուրա (շեն), և այնտեղ մայր մզկիթ կառուցեց: Հազար հոգու պարտավորեցրեց այն [պահպանել] և շատերի այնտեղ վերաբնակեցրեց:

ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(4 մայիս 759—21 ապրիլ 760)

էջ 369

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Մանսուրը Ջագիրայի, Սահմանային գոտում (սուղուր) և Ավասիմի⁹³ կառավարիչ նշանակեց իր եղբորը՝ ալ-Աբբաս իբն Մուհամմադին: Նա

Մոսկուից հեռացրեց իր հորեղբորը՝ Իսմայիլ իբն Ալիին, և կառավարիչ նշանակեց Մալիբ իբն ալ-Հայսամ ալ-Խուլափին:

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(1 ապրիլ 762—20 մարտ 763)

էջ 14—15

ԲԱՂԴԱԴ ՔԱՂԱՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մանսուրն սկսեց Բաղդադ քաղաքի կառուցումը:

Բանն այն էր, որ նա կառուցել էր ալ-Հաշիմիյա⁹⁴ քաղաքը Քուֆայի կողմերում, սակայն երբ Ռավանդիյա⁹⁵ [աղանդն] ապստամբեց, նա շուրջեց այնտեղ բնակվել, մանավանդ, որ մոտ էր Քուֆային, որի բնակիչներին նա չէր վստահում. նրանք փշացրել էին իր զորքը:

Նա դուրս եկավ անձամբ բնակության վայր փնտրելու իր և զորքի համար: Նա իջավ Ջարջարայա⁹⁶, ապա բարձրացավ Մոսուլ և քայլեց դեպի լեռը, կառուցման վայր փնտրելով: Իր զինվորներից մեկը ետ էր մնացել Մադաինի (Տիզբոնի) մոտ աչքի ցավի պատճառով: Ապա բժիշկը, որ բուժում էր նրան, հարցրեց Մանսուրի շրջազայության պատճառը: Երբ զինվորը պատմեց նրան, նա ասաց՝ մենք գտել ենք մեզ մոտ եղած մի գրքում, որ մի մարդ, որը կոչվում է Միկլաս (ուղտ կթող) կկառուցի մի քաղաք Տիգրիսի ու Սարատի (Սարահ) միջև⁹⁷, որը կոչվում է ալ-Ջաուրա: Երբ հիմնի այն և սկսի կառուցումը, նրան խանգարելու է Հիջազում ծագած խռովությունը (ճեղքվածքը) և կանգնելու է շինարարությունը, սակայն գործը կարգավորվելու է: Ապա ավելի մեծ վնաս (ճեղքվածք) կգա Բասրայի կողմից: Սակայն բոլոր վնասվածքները կբուժվեն (կնորոգվեն) և նա կշարունակի կառուցումը, ապա երկար կապրի և իրենից հետո նրա թագավորությունը կմնա որդիներին:

Զինվորը եկավ Մանսուրի ճամբարը, որը լեռան կողմերում էր և պատմեց: Սա ասաց՝ ալլահը վկա երեխա ժամանակ ինձ կոչում էին Միկլաս, իսկ հետո մոռացվեց:

Նա գնաց, մինչև որ հասավ այն վանքը, որն իր [հետագայում կառուցված] ալ-Խուլդ կոչված պալատի դիմացն էր և կանչեց վանահորը և Ռիհա (ջրաղաց) ալ-Բաթրիկի տեր պատրիկին, Բաղդադ [գյուղի] տիրոջը, Մուխարիմի⁹⁸ տիրոջը, Էուստան (այգի) ալ-Նաֆասի տիրոջը և ալ-Ատիկայի տիրոջը և ամեն մեկին հարցրեց իրենց տեղերի մասին, թե

ինչպիսին է վիճակը շոգին ու ցրտին, անձրևների, ցեխի ժամանակ, մոծակների ու քնի հարմարության մասին:

Ամեն մեկը իր մոտ եղած վիճակի մասին պատմեց և վերջապես ընտրությունն ընկավ Բաղդադի վրա: [Մանսուրը] խորհուրդ հարցրեց նրա տիրոջից: Սա ասաց՝ ո՛վ հավատացելոց իշխան, հարցնում ես այս վայրերի մասին և ուզում ես ընտրություն կատարել: Ես հարմար եմ գտնում, որ հաստատվես շորս թասուջների⁹⁹ վրա՝ արևմտյան կողմում կլինի երկու թասուջ, որոնք են Կաթրաբլ (Կաթրաբբուլ) և Բադարայա (Բադուրիյա), իսկ արևելյան կողմում՝ երկու թասուջ, որոնք են Նահր Բուկ և Քիլուադի: Դու կլինես արմավենիների մեջ և ջրին մոտիկ, և եթե մի թասուջը շորանա և շինարարությունն ուշանա, մյուսի մեջ շինարարությունը կշարունակվի: Ո՛վ հավատացելոց իշխան, դու կլինես Սարատ դետի վրա և պարենը քեզ կհասնի նավերով Ասորիքից, Ռակկայից, Արևմուտքից՝ Եգիպտոսի կողմերից: Քեզ պարեն կգա Ջինաստանից, Հնդկաստանից, Բասրայից, Վասիթից, Դիար Բաքրից, Լիումի երկրից, Մոսուլից և այլ կողմերից՝ Տիգրիսի վրայով: Քեզ կգա պարենը Հայաստանից և նրա հետ կասլված կողմերից, Տամարայի վրայով մինչև որ կասլվի Հաբի հետ: Դու կլինես գետերի միջև և թշնամին քեզ կարող է հասնել միայն կամուրջների և ջրաթմբերի վրայով: Եթե կտրես կամուրջը կամ քանդես ջրաթումբը, նա քեզ չի հասնի: Տիգրիսը, Եփրատը և Սարատը խրամատներ կլինեն այդ քաղաքի համար: Դու միջին կետում կլինես Բասրայի, Քուֆայի, Վասիթի¹⁰⁰, Մոսուլի և Սավադի միջև, մոտիկ լինելով ցամաքին, ծովին և լեռան:

Մանսուրի ցանկությունը ավելացավ այս վայրում հաստատվելու համար: Ասվում է, որ երբ Մանսուրը կամեցավ իր Բաղդադ քաղաքը կառուցել, տեսավ մի [քրիստոնյա] վանականի, որին կանչեց ու ասաց՝ ձեր գրքերում ասվա՞ծ է, թե այտեղ քաղաք պիտի կառուցվի: Ասաց՝ այո, այն կկառուցի մի Միկլաս: Ասաց՝ ես փոքր ժամանակ միկլաս էի կոչվում: Ասաց՝ ուրեմն դու ես նրա տերը:

Մանսուրն սկսեց գործը [հարյուր] քառասունհինգին և գրեց Ասորիք, ալ-Ջիբալ, Քուֆա, Վասիթ և Բասրա, որպեսզի արհեստավորներ և գործավորներ ուղարկեն: Հրամայեց ընտրել առաքինի, արդարամիտ, աստվածավախ մարդկանց, որոնք կլինեին հավատարիմ և երկրաչափական գիտելիքներ կունենային: Այս նպատակով եկածների մեջ էին Հաջջաջ իբն Արթատը և Աբու Հանիֆան:

Հրամայեց գծել քաղաքի [հատակագիծը] և փորել հիմքերը, հում աղյուսը թափեցին և թրծեցին: Այս բոլորն սկսեց նրանով, որ հրամայեց մոխրով շրջագծել [հիմքերը] և այսպես մտավ [Մանսուրը] դռներից, պարիսպներից, կամարներից ու դահլիճներից [բակերից] ներս, որոնք

մոխրով գծած էին: Ապա հրամայեց մոխրի վրա բամբակի սերմեր ցանալ և վառել: Այդպես էլ արեցին և նա նայելով վառվածին, հասկացավ ու պատկերացրեց հատակագիծը: Եվ հրամայեց այդ նույն ձևով փորել հիմքերը: Իր զորավարներից շորսին վերակացու նշանակեց [բաղաբի] ամեն մի քառորդի վրա, իսկ Աբու-Հանիֆային հանձնարարեց թրծած աղյուսի և հում աղյուսի գործը:

Դրանք առաջ [Մանսուրը] կամեցել էր, որ Աբու Հանիֆան ստանձնի դատական գործը և հանցագործությունների հսկողությունը, սակայն վերջինս չէր համաձայնվել: Մանսուրը պնդեց, որ նա մնա և աշխատի: Այսպիսով որոշվեց, որ նա Բաղդադի շինարարության մեջ վերակացու լինի հում և թրծած աղյուսի պատրաստության գործին՝ օգտագործելով եղեգը և նա առաջինն էր, որ այդ բանն արեց: Մանսուրը պարսպի հիմքի լայնությունը դարձրեց ներքևից հիսուն կանգուն (զիրա)¹⁰¹, իսկ վերևից քսան կանգուն: Շինարարության մեջ նա օգտագործեց եղեգը և փայտը: Նա իր ձեռքով դրեց առաջին աղյուսը՝ ասելով.

«Հանուն ալլահի և փառք նրան: Հողը նրանն է, կժառանգեցնի ում որ կամենա իրեն երկրպագողներից, իսկ [բարի] վախճանը բարեպաշտներինն է»: Ապա ավելացրեց. «Կառուցե՛ք ալլահի օրհնությամբ»: Երբ պարիսպը մարդահասակ բարձրացավ, լուր եկավ, թե գլուխ է բարձրացրել Մուհամմադ Իբն Աբդալլահը: [Մանսուրը] ընդհատեց աշխատանքը և գնաց Քուֆա, վերջացրեց կոիվը Մուհամմադի և եղբոր՝ Իբրահիմի¹⁰², հետ: Ապա վերադարձավ Բաղդադ և ավարտեց նրա կառուցումը: Այստեղ նա հողամասեր հատկացրեց իր մերձավորներին: Մանսուրը պատրաստել էր ամեն ինչ, որ անհրաժեշտ էր բաղաբի կառուցման համար՝ փայտ, կաղնի և այլ բաներ: Մանսուրը Քուֆա գնալու ժամանակ իր փոխարեն շինարարության վերակացու էր նշանակել իր մանուկ Ասլամին: Երբ սրան լուր հասավ, թե իբր Իբրահիմը հաղթել է Մանսուրի զորքին, վառեց այն շինանյութը, որ Մանսուրը թողել էր իրեն: Երբ Մանսուրը լսեց այդ մասին գրեց ու այպանեց նրան: Ասլամը դրեց, թե ինքը վախեցել էր, որ այդ բոլորը Իբրահիմի ձեռքը կանցնի: [Մանսուրը] այլևս ոչինչ չասաց: Քաղաքի կառուցման մասին խոսելու ենք [հարյուր] քառասունվեց թվականի տակ, կամոքն ալլահի:

էջ 27

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում թուրքերն ու խաղարները հարձակվեցին Բաբ ալ-Աբուաբի վրա և Հայաստանում մեծ թվով մահամեղականների կոտորեցին:

Այդ տարում Մանսուրը Մալիք Իբն ալ-Հայսամին հանեց Մոսուլից և նշանակեց իր որդուն՝ Ջաֆար Իբն Արի Ջաֆար ալ-Մանսուրին։ Նրա հետ ուղարկեց նաև Հարր իբն Աբդալլահին, որը նրա մեծագույն ղորավարներից էր և Բաղդադի ղորականների պետը։ Նա Մոսուլի ներքին մասում կառուցեց մի պալատ, ուր ապրեց և մինչև օրս ծանոթ է Հարբի պալատ անունով։

ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(21 մարտ 763—9 մարտ 764)

էջ 20

ՄԱՆՍՈՒՐԻ ԲԱՂԴԱԴ ՏԵՂԱՓՈԽՎԵԼԸ ԵՎ ՆՐԱ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Այդ տարում Սաֆար [ամսին] (20 ապրիլ—18 մայիս) Մանսուրը Իբն Հուբայրա¹⁰³ քաղաքից տեղափոխվեց Բաղդադ և կառուցեց նրա [բուն] քաղաքը։ [Հարյուր] քառասունհինգ թվականին մենք հիշեցինք, թե ինչ պատճառներով Մանսուրը ձեռնարկեց Բաղդադ քաղաքի կառուցումը, իսկ այժմ կհիշենք հենց կառուցումը։

Երբ Մանսուրն արդեն որոշել էր կառուցել Բաղդադը, խորհրդակցեց մերձավորների հետ, որոնց մեջ էր Խալիդ իբն Բարմաքը¹⁰⁴։ Որը գծագրել էր հատակագիծը։ [Մանսուրը] խորհրդակցեց նրա հետ Մադահինը (Տիգրոն) և Իյուան Քիսրան (Խոսրովի պալատ) քանդելու և ավերակները Բաղդադ տեղափոխելու մասին։ Ասաց՝ [Խալիդը] ես համաձայն չեմ դրան, որովհետև սա իսլամի [երկրի] նշանավոր վայրերից մեկն է, որին նայողը եզրակացնում է, որ սա անցողիկ չի լինելու, ինչպես աշխարհիկ բաներն են, այլ կրոնական նշանակություն ունի, մանավանդ, որ Ալի իբն Աբու Թալիբի աղոթավայրն էլ այստեղ է։ Ասաց Մանսուրը՝ [Իրականում] դու դեմ ես այս բանին քո պարսիկ ազգակիցների սիրուն։ Եվ հրամայեց քանդել սպիտակ պալատը։ Մի կողմը քանդեցին և մասերը փոխադրեցին, սակայն պարզվեց, որ այսպիսով ավելի թանկ էր արժեքը, քան նորը կառուցելը։ [Մանսուրը] կանչեց Խալիդ իբն Բարմաքին ու հայտնեց այս բանը։ Ասաց՝ ո՛վ հավատացելոց իշխան, ես դեմ էի այդ անելուն, բայց քանի որ արեցիր, կարծում եմ, որ պետք է լրիվ քանդես, որ չասեն, թե դու չկարողացար քանդել այն, ինչ ուրիշները կառուցել են։ Սակայն [Մանսուրը] չընդունեց և հրաժարվեց քանդելուց։

Նա տեղափոխեց Վասիթի դարպասները և հարմարեցրեց Բաղդադին, մի դարպաս էլ բերվեց Ասորիքից, մի ուրիշն էլ բերվեց Քուֆայից, որը

շինել էր հալիդ իբն Աբդալլահ ալ-Կիսրին: Նա քաղաքը կլոր կառուցեց, որպեսզի բնակիչների մի մասը մյուսներից ավելի մոտիկ շլինի տիրակալին (սուլթան): Երկու պարիսպ դրեց, ընդ որում ներքին պարիսպը արտաքինից ավելի բարձր էր: Իր պալատը կառուցեց նրա մեջտեղում, իսկ պալատի կողքին՝ գլխավոր մզկիթը: Մզկիթի հատակագիծը պատրաստել էր ալ-Հաջաջ իբն Արթատը:

Հում աղյուսի [մեծությունը], որն սգտագործվում էր կառուցման մեջ, կանգունով կանգուն (զիրա) էր, իսկ մեկ աղյուսի կշիռը հարյուր տասնվեց ութլ¹⁰⁵ (լիտր) էր:

[Այդ ժամանակ] շուկաները քաղաքի ներսում էին, և ահա եկավ Ռումի թագավորի դեսպանը: [Մանսուրը] հրամայեց Ռաբիին, որ նրան ման ածի քաղաքում: Ասաց նրան՝ ինչպե՞ս տեսար: Ասաց [դեսպանը]՝ լավ շինություններ տեսա, սակայն տեսնում եմ, որ քեզ հետ են թշնամիներդ: Շուկայի մարդիկ՝ Երբ դեսպանը վերադարձավ, [Մանսուրը] հրամայեց, որ նրանց դուրս բերեն դեպի Քարխի կողմերը: Ասվում է, որ նրանց դուրս բերեցին, քանզի օտարականները մտնում էին [քաղաք] և գիշերում այնտեղ և հավանաբար նրանց մեջ լրտեսներ կային: Ասվում է նաև, որ Մանսուրը հետևում էր Իբրահիմ իբն Աբդալլահի հետ ամեն դուրս եկողին, իսկ Բաղդադի մուհտասիբ¹⁰⁶ Աբու Ջաքարիա Յահիա իբն Աբդալլահը Իբրահիմի հետ մտերիմ էր: Սա ստորին խավի մարդկանցից մի խումբ հավաքեց և խռովություն բարձրացրեց Մանսուրի դեմ: [Վերջինս] ճնշեց նրանց, Աբու Ջաքարիային սպանեց ու շուկաներն էլ դուրս հանեց: Նա հրամայեց, որ ամեն մի թաղամասում լինի նպարավաճառ, որը ծախի միայն բանջարեղեն և քացախ:

[Քաղաքի] կառուցման, ինչպես նաև մզկիթի, պալատի, շուկաների, պարիսպների, խրամատների ու դարպասների վրա ծախսված դրամի գումարը չորս միլիոն ութ հարյուր երեսուներեք դիրհեմ էր: Վարպետ կառուցողը (պատ շարող) օրական ստանում էր մեկ կիրատ արծաթ, օրավարձով աշխատողը (ոուլքարի)¹⁰⁷ երկու հատիկ [արծաթ]: Եվ նա [Մանսուրը] հաշվեց իր [վերակացու] զորավարների, նույնիսկ, ազատ նստած ժամանակը և ստիպեց մնացած փողը վերադարձնել, և գտնելով, որ հալիդ իբն ալ-Սալտի մոտ մնում է տասնհինգ դիրհեմ, բանտարկեց նրան և փողը վերդրեց:

էջ 22

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մալիք իբն Աբդալլահ ալ-Խասամին, որը կոչվում էր «ամառային արշավանքների Մալիք» և Պաղեստինի բնակիչներից էր,

արշավեց Ռումի երկիրը, շատ ավար վերցրեց և վերադարձավ: Երբ Դարբ (լեռնացի) ալ-Հադասից տասնհինգ մղոն հեռավորության վրա էր Ռահուա (բարձունք) կոչված վայրում, երեք օր իջևանեց, վաճառեց ավարը, բաժանելով այն ըստ մասերի: Այդ բարձունքը կոչվեց Ռահուատ Մալիբ (Մալիբի բարձունք):

ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(10 մարտ 764—26 փետրվար 765)

էջ 22

ՀԱՐԲ ԻԲՆ ԱԲԻԱԼԼԱՀԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Աստարիսան ալ-Խուարիզմին (Խորեզմի) թուրքերի զորքով հարձակվեց մահմեդականների վրա՝ Հայաստանում: Գերեվարեց մահմեդականներին ու զիմմայի մարդկանց և մտավ Տփղիս (Տաֆլիս): Հարբը Մոսուլում էր իր երկու հազար ռազմիկներով Զազիրայի ապստամբներին (խարիջիներին) հսկելու նպատակով: Մանսուր [Խալիֆան]՝ թուրքերի դեմ կռվելու համար, ուղարկեց Զիբրայիլ իբն Յահյային և Հարբ իբն Աբդալլահին, որոնք պարտություն կրեցին. Զիբրայիլը փախուստի դիմեց, Հարբը սպանվեց, իսկ Զիբրայիլի մարդկանցից շատերը նույնպես սպանվեցին:

ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(27 փետրվար 765—15 փետրվար 766)

էջ 25

ԽԱԼԻԴ ԻԲՆ ԲԱՐՄԱՔԻ՝ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մանսուրը Մոսուլի կառավարիչ նշանակեց Խալիդ իբն Բարմաքին:

Բանն այն է, որ քրդերը այդ նահանգում տարածվել ու ապականել էին: Նա ասաց՝ ո՞ւմ եք առաջարկում: Ասացին՝ ալ-Մուսայյիդ իբն Զուհայրին. Ումարա իբն Ղամրան առաջարկեց Խալիդ իբն Բարմաքին և [Մանսուրը] սրան նշանակեց կառավարիչ և այնտեղ ուղարկեց:

Սա լավ վերաբերվեց մարդկանց, իսկ ապականողներին ճնշեց ու զսպեց: Երկրի ժողովուրդը սաստիկ վախենում էր նրանից, թեև նա լավ էր վերաբերվում նրանց:

ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆԻՆ թՎԱԿԱՆ

(16 փետրվար 766—5 փետրվար 767)

էջ 28

Այդ տարում ալ-Աբրաս իբն Մուհամմադը ամառային արշավանք կատարեց Ռումի երկիրը, իր հետ ունենալով ալ-Հասան իբն Կահթաբային և Մուհամմադ իբն ալ-Աշասին։ Սակայն Մուհամմադը մեռավ ճանապարհին։

Այդ տարում Մանսուրն ավարտեց Բաղդադ քաղաքի պարսպի և խրամատի կառուցումը և բոլոր աշխատանքներն ավարտեց։

ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(13 դեկտեմբեր 771—1 դեկտեմբեր 772)

էջ 38

Այդ տարում Ռումի թագավորը Մանսուրից հաշտություն խնդրեց՝ ջիզիա (գլխահարկ) վճարելու պայմանով։

Այդ տարում ամառային արշավանք կատարեց Յագիդ իբն Ուսայդ ալ-Սուլամին։

ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(21 նոյեմբեր 773—10 նոյեմբեր 774)

էջ 41

Այդ տարում ամառային արշավանք կատարեց Յագիդ իբն Ուսայդ ալ-Սուլամին։ Նա Բաթթալի մաուլա Սինանին ուղարկեց մի բերդի դեմ և վերջինս գերեվարեց ու ավարի տվեց։ Ասվում է, որ ամառային արշավանք կատարողը Զաֆար իբն Ասիմն էր։

ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(11 նոյեմբեր 774—30 հոկտեմբեր 775)

էջ 48

ՄԱՆՍՈՒՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ասվում է, որ Հայաստանի տերը (սահիր Արմինիա) գրել էր Մանսու-

րին, իմաց տալով, որ զինվորները խռովություն բարձրացրին և կողոպտեցին ինչ որ կար պետական գանձարանում (Բայտ ալ-մալ)¹⁰⁸, իր [պատասխան] գրության մեջ [Մանսուրը] նշում է՝ հեռացի՛ր ով խայտառակված պաշտոնյա. եթե խելոք լինեիր, խռովություն չէին բարձրացնի և եթե խիստ լինեիր, չէին կողոպտի:

Այս և նրա այլ խոսքերը վկայում են նրա ճարտասանության և ճարտար լեզվի մասին:

ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(9 հոկտեմբեր 777—27 սեպտեմբեր 778)

էջ 60

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սումամա իբն ալ-Վալիդը ամառային արշավանք կատարեց [Ռումի երկիր] և կանգ առավ Դաբիկում¹⁰⁹, Հոռոմները Միքայելի (Միխայիլ) առաջնորդությամբ ելան ութսուն հազարով, եկան Մարաշի Ամկը (փուր) կոտորեցին, գերեվարեցին, ավարի տվին: [Միքայելը] եկավ ու պաշարեց Մարաշը: Ճակատամարտ եղավ և մահմեդականներից շատերն սպանվեցին: Մարաշի բերդում գտնվում էր Իսա իբն Ալին, և հոռոմները հեռացան Պիրամոս (Ջիհան) [գետը]: Լուրը հասավ Մահդի [խալիֆային], որը զայրացավ ու պատրաստվեց Ռումի դեմ արշավանքի, ինչպես կհիշենք հարյուր վաթսուներկու թվականին: Այս պատճառով մահմեդականները ամառային արշավանք չունեցան:

ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(28 սեպտեմբեր 778—16 սեպտեմբեր 779)

էջ 62

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մահդին հիմնեց վերահսկող դիվանը (դիվան ալ-ազիմ-մա)¹¹⁰ և վերակացու կարգեց իր մաուլա Ամրու իբն Մուրաբբային:

Մահդին դրամական միջոցներ նշանակեց բորոտներին և բանտարկյալներին՝ բոլոր կողմերում:

Այդ տարում հոռոմները և կան ալ-Հադաս, քանդեցին նրա պարիսպը: Ամառային արշավանք կատարեց ալ-Հասան իբն Կահթաբան ութսուն հազար կանոնավոր լորբու¹¹¹, բացի կամավորներից: Նա հասավ Հիմմատ

(Ջերմուկ) Ագրուլիյա, շատ վայրեր հրդեհեց ու կործանեց Ռումի երկրում: Նա շնվաճեց ոչ մի բերդ և ոչ էլ մարդկանց հանդիպեց: Հոռոմները նրան կոչում էին վիշապ և ասում՝ եկել է Հիմմա (Ջերմուկ), որպեսզի լվացվի իր բորոտութունից: Մարդիկ կովից վերադարձան ողջ-առողջ:

Այդ տարում Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամին Կարնո քաղաքի (Կալիկալա) կողմից արշավեց և երեք բերդ գրավեց ու գերեվարեց մարդկանց:

ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(17 սեպտեմբեր 779—5 սեպտեմբեր 780)

էջ 63

ՌՈՒՄԻ ԵՐԿԻՐԸ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մահդին պատրաստվեց արշավել Ռումի երկիրը: Ելավ արշավանքի և զորքը կանգնեց Բարդան [գետի] մոտ: Նա հավաքել էր զորքը հորասանից և այլ վայրերից և առաջ խաղաց:

Նա անցավ Եփրատը դեպի Հալեբ և այնտեղ եղած ժամանակ հալածել տվեց բոլոր անհավատներին (ղանադիկա), սպանեց նրանց և զրքերը դանակներով կտրտեց: Այնտեղից դուրս եկավ և ճանապարհ գցեց իր որդուն՝ Հարուն ալ-Ռաշիդին, մինչև որ անցավ լեռնանցքը ու հասավ Պիրամոս (Ջիհան): Հարունը և իր ընկերակիցները՝ Իսա իբն Մուսան, Աբդ ալ-Մալիք իբն Սալիհը, Ռաբին, ալ-Հասան իբն Կահթաբան, ալ-Հասանը, Սուլայման իբն Բարմաքը և Յահիա իբն Խալիդ իբն Բարմաքը (վերջինիս էր հանձնարարված հոգ տանել զորքի, ծախսերի, նամակագրության և այլ բաների համար), եկան ու պաշարեցին Սամալու բերդը: Հարունը երեսունութ օր պաշարեց, քարանետ մեքենաներ դրեց և ալլահը նրանց հնարավորություն տվեց նվաճելու երաշխավորագրի պայմանով և նրանք շատ հաղթանակներ տարան:

էջ 63

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մահդին իր որդուն՝ Հարունին ամբողջ Մաղրիբի, Ատրոպատկանի և Հայաստանի կառավարիչ նշանակեց: Սա հարկային դրագիր (քարտուղար) նշանակեց Սաբիթ իբն Մուսային, իսկ նամակագրու-

թյան [քարտուղար] նշանակեց Յահիա իբն Խալիդ իբն Բարմաքին։ Այդ տարում [Մահդին] Զուֆար իբն Ասիմին պաշտոնանկ արեց Զազիրայից և կառավարիչ նշանակեց Արդալլահ իբն Սալիհին։

ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԶՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(6 սեպտեմբեր 780—25 օգոստոս 781)

էջ 64

Այդ տարում Արդ ալ-Քաբիր իբն Արդ ալ-Համիդ իբն Աբդ ալ-Ռահման իբն Զայդ իբն Խաթթաբը Դարբ (լեռնանցք) ալ-Հադասից հարձակվեց Ռումի երկիրը։ Նրա դեմ ելան Միքայել պատրիկը (Միխայիլ ալ-Բաթրիկ) և հայազգի Տաճատ պատրիկը (Թադադ ալ-Արմանի ալ-Բաթրիկ)¹¹² իննրսուն հազարով։ Աբդ ալ Քաբիրը վախեցավ և արգելեց մարդկանց կռվել ու վերադարձավ։ Մահդին ուզեց սպանել նրան, բայց մեղքացավ ու բանտարկեց։

ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(26 օգոստոս 781—14 օգոստոս 782)

էջ 65

ՌՈՒՄԻ ԴԵՄ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մահդին իր որդուն՝ ալ-Ռաշիդին, ուղարկեց ամառային արշավանքի Ռումի դեմ Զումադա Բ [ամսին] (21 հունվար—18 փետրվար), իննսունհինգ հազար ինը հարյուր իննսուներեք մարդկանցով։ Նրա հետ էր նաև Ռաբին։ Հարունը ներխուժեց Ռումի երկիրը։ Նրա դեմ ելավ Կոմսերի կոմս Նիկիտան (Նիկիթա Կոմիս ալ-Կավամիսա)։ Նրա հետ մենամարտեց Յագիդ իբն Մադիդ ալ-Շայբանին և խոցեց նրան, իսկ հռոմեները փախուստի դիմեցին։ Յագիդը գրավեց նրանց ճամբարը և առաջ խաղացին Դոմեստիկոսի (Դոմոստոսիկ) դեմ, որը զինանոցների վերակացուն էր։ Սա հանձնեց նրանց հարյուր իննսուներեք հազար չորս հարյուր հիսուն դինար, իսկ արծաթ դրամով՝ քսանմեկ միլիոն տասնչորս հազար ութ հարյուր դիրհամ։ Ռաշիդը առաջ խաղաց, մինչև որ հասավ Կոստանդնուպոլսի ծոցը։ Ռումի տերը այդ ժամանակ Օգոստան (Աղուսթա) էր, Լևոնի (Ալիուն) կինը¹¹³։ Քանզի որդին ղեռատի էր, իսկ նրա հայրը սպանվել էր, երբ նա մոր գրկում էր։

Հաշտութիւն կայացաւ նրա և Ռաշիդի միջև փրկագին՝ վճարելու պայմանով, ինչպես նաև հոռոմները պետք է ուղղեցույց առաջնորդներ տային և շուկաներ բացեին ճանապարհի վրա, քանի որ [Ռաշիդը] մտել էր մի նեղ, վտանգավոր անցք։ Նա գոհացրեց [Ռաշիդի] պահանջը, իսկ փրկագինը որոշվեց վճարել տարեկան յոթանասուն հազար դինար և Ռաշիդը վերադարձավ։

Զինադադարը կնքվեց երեք տարվա համար։ Դեռ պայմանագրից առաջ մահմեդականները տարան հինգ հազար գլուխ գերի և վեց հարյուր քառասուններեք գլուխ [արջառ], քսան հազար գլուխ հեծնելու ուղտ՝ հարմարանքներով, հարյուր հազար գլուխ կով և ոչխար մորթեցին, ճակատամարտերում հիսունչորս հազար հոռոմների սպանեցին, իսկ գերիներից անխնա կոտորեցին երկու հազար իննսուն հոգու։

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(3 հուլիս 786—21 հունիս 787)

էջ 83

Այդ տարում Ռաշիդը ամբողջ Սահմանային գոտին անջատեց Զազիրայից ու Կիննասրինից և դարձրեց մի շրջան, որը կոչվում էր ալ-Ավասիմ։ Նա հրամայեց շենացնել Տարսոնը (Թարսուս) Ֆարաջ ալ-Հատիմ ալ-Տուրքիի ձեռքով և բնակիչներ ուղարկեց։

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(11 հուլիս 788—30 մայիս 789)

էջ 86

ՏԱՐՔԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռաշիդը Իսհակ իբն Մուհամմադին պաշտոնանկ արեց Մոսուլից և կառավարիչ նշանակեց Սաիդ իբն Սալմ ալ-Բահիլիին։ Ռաշիդը Յազիդ իբն Մազիադ իբն Զայիդային, որը Ման իբն Զայիդայի եղբորորդին էր, Հայաստանից պաշտոնանկ արեց և այնտեղ կառավարիչ նշանակեց իր եղբորը՝ Ուբայդալլահ իբն ալ-Մահդիին։ Այդ տարում ամառային արշավանք կատարեց Իսհակ իբն Սուլայման իբն Ալին։

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(20 մայիս 790—9 մայիս 791)

էջ 88

Այդ տարում մեռավ Ռաուհ իրն Հատիմը: Ռաշիդը գնաց Արարադ [Ջուզիւլիւր] և իջևանեց Բակիրգա և Բագիրգա [վայրերում]: Ջազիրատ իբն Ումարի շրջաններից, և այնտեղ պալատ կառուցեց:

[Այդ տարում] ամառային արշավանք կատարեց Աբդ ալ-Մալիք իբն Սալիհը:

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(28 ապրիլ 792—17 ապրիլ 793)

էջ 94

Այդ տարում ապստամբ Ֆադլը հանդես եկավ Մծբինի (Նասիրին) կողմերում, ժողովրդի ունեցվածքը հափշտակեց ու շարժվեց դեպի Դա-րա, Ամիդ և Արզն և նրանց ունեցվածքը ևս վերցրեց: Այսպես արեց նաև հլաթում, ապա վերադարձավ Մծբին և եկավ Մոսուլ, որի զորքը նրա դեմ դուրս եկավ, սակայն նա Ջաբի մոտ հաղթեց: Ապա նրանք կրկին եկան և Ֆադլը իր ընկերների հետ սպանվեց:

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(7 ապրիլ 794—26 մարտ 795)

էջ 97

ԱՊՍՏԱՄԲ ԱԼ-ՎԱԼԻԴ ԻՐՆ ԹԱՐԻՖԻ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում ալ-Վալիդ իբն Թարիֆ ալ-Տադլիբին ապստամբեց Ջա-զիրայում և Մծբինում սպանեց Իբրահիմ իբն Խազիմ իբն Խուզայմային: Ապա ալ-Վալիդը առավել ուժեղացավ, մտավ Հայաստան ու քսան օր պաշարեց հլաթը: Մարդիկ նրանից ազատվեցին երեսուն հազար [դի-նար] փրկագնով: Ապա գնաց Ատրպատական, հետո Հուլուան և Սավադ երկիրը (Ստորին Միջագետք), ապա անցավ Տիգրիսի արևմտյան կողմը, դիմեց Բալադ քաղաքը, ուր նրանից ազատվեցին հարյուր հազար փրկա-գնով: Նա ասպատակեց Ջազիրան:

Ռաշիդը նրա դեմ ուղարկեց Յազիդ իբն Մազիադ իբն Ջալիդա ալ-Շաբանին, որը Ման իբն Ջալիդայի եղբորորդին էր:

Յազիդն սկսեց խորամանկել նրա հետ: Բարձրագույնները, որոնք հակակրում էին Յազիդին, ասացին Ռաշիդին՝ Յազիդը խուսափում է Վալիդից խնայելով նրան, քանզի երկուսն էլ Վալի տոհմից են: Նրանք ձեռնադրում էին հավատացնել, թե Վալիդը թույլ է: Ռաշիդը մի զայրացած նամակ գրեց նրան (Յազիդին), ասելով՝ եթե իմ ծառաներից մեկին ուղարկեի, քեզանից ավելի գործ կաներ, իսկ դու խաբեբա ես ու խարդախ: Երգվում եմ ավահով, որ եթե դործը չվերջացնես, քո գլուխը բերել կտամ:

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(16 մարտ 796—4 մարտ 797)

էջ 103

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռաշիդը քանդեց Մոսուլի պարիսպը՝ Աթթաֆ իբն Սուֆիան ալ-Ազդիի պատճառով: Անձամբ գնաց այնտեղ, քանդեց պարիսպը և երգվեց, որ բնակիչներից ում որ հանդիպի, կսպանի: Սակայն դատավոր Աբու Յուսուֆը հորդորեց նրան և արգելեց այդ բանն անել: Աթթաֆը այնտեղից շարժվել էր դեպի Հայաստան, իսկ Ռաշիդը չկարողացավ բռնել նրան և գնաց Ռակկա, որը նստավայր (բնակավայր) դարձրեց:

Այդ տարում [Ռաշիդը] Սաիդ իբն Սալմին նշանակեց Զազիրայի կառավարիչ: Ամառային արշավանքը կատարեց Մուհամմադ իբն Մուավիա իբն Զուֆար իբն Ասիմը:

Այդ տարում Ռաշիդը Մոսուլի կառավարիչ նշանակեց Յահիա իբն Սաիդ ալ-Հարաշիին, որը վատ վերաբերվեց բնակչությանը, անիրավություն գործեց և պահանջեց անցած տարիների հարկը: Քաղաքի բնակիչների մեծ մասը հեռացավ:

Այդ տարում Ռաշիդը հրամայեց կառուցել Անարզաբա (Այն Զարբա) քաղաքը, ամրացրեց և խորասանից ու այլ վայրերից գնդեր տարավ և նրանց հողամասեր պարգևեց:

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆ ՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(5 մարտ 797—21 փետրվար 798)

էջ 105

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռաշիդը արշավեց Ռումի երկիրը և գրավեց Սաֆսաֆ բերդը:

Այդ տարում Արդ ալ-Մալիք իբն Սալիհը արշավեց Ռումի երկիրը և հասավ Անկարա, գրավեց մի ցորենի շտեմարան:

Այդ տարում գերիների փրկագնում եղավ հոռոմների և մահմեդականների միջև և սա Աբբասյանների օրոք առաջին փրկագնումն էր: Կասիմ իբն Ռաշիդը նրա (Ռաշիդի) կողմից վերակացու էր: Իսկ [Ռումի] թագավորն էր Նիկեփորը (Նիկիֆոր)¹¹⁴: Մարդիկ ուրախացան այդ բանի համար և Ռումի երկրում եղած բոլոր գերիները փրկագնով ազատվեցին: Փրկագնումը կատարվում էր լամիս [գետի] մոտ, ծովի ափին, իսկ նրա և Տարսոնի (Թարսուս) միջև տասներկու փարսախ կար:

Այս արարողությանը ներկա եղավ երեսուն հազար վարձատրվող (կանոնավոր) զորք՝ Աբու Սուլայմանի հետ: Դուրս եկավ Տարսոնի վերակացու (մուտավալի) ալ-Խադիմը, ինչպես նաև Սահմանային գոտու բնակիչներից մեծ բազմություն և գիտուն ու երևելի մարդիկ: [Փրկագնված] գերիների թիվն էր երեք հազար յոթ հարյուր: Ասվում է նաև, թե ավելի էր:

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(22 փետրվար 798—11 փետրվար 799)

էջ 107

Այդ տարում Խազարաց թագավոր Խականի դստերը [հարսնության] տարան Ֆադլ իբն Յահիայի համար: Սակայն նա մեռավ Պարտավում (Բարդաա) և նրա հետ եղածները վերադարձան հոր մոտ, տեղեկացնելով, որ նա դավաճանաբար սպանվել է: Սա պատրաստվեց իսլամի երկրի դեմ արշավելու:

[Այդ տարում] ամառային արշավանք կատարեց Արդ ալ-Ռահման իբն Աբդ ալ-Մալիք իբն Սալիհը և հասավ [Կիլիկիայի] Եփեսոս (Աֆսոս) քաղաքի մարդկանց (Ասհաբ ալ-Քահֆ)¹¹⁵ քաղաքը:

Այդ տարում հոռոմները իրենց թագավոր Լեոնի որդի Կոստանդինի (Կուսթանթին)¹¹⁶ իբն Ալյուն) աչքերը կուրացրին և նրա մորը Իրենեին (Ռինի) նստեցրին գահին, որը կոչվեց Օգոստա (Աղոսթա):

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(12 փետրվար 799—31 հունվար 800)

էջ 108

ԽԱԶԱՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԻ ԵՐԿԻՐԸ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Խազարները Խականի դստեր պատճառով դուրս եկան Բար ալ-Աբուաբէջ (Դաբրանդ) և մահմեդականների ու զիմմիների կո-

տորած սարքեցին, քշելով սովելի քան հարյուր հազար գլուխ [անասուն] և այնպիսի սարսափելի բաներ արեցին, որի նմանը երկրի վրա չէր լսվել: Ռաշիդը Հայաստանի կառավարիչ նշանակեց Յազիդ իբն Մազիադին, ավելացնելով նաև Ատրպատականը և օգնական զորք տալով, ուղարկեց նրանց դեմ: Նա հուղայմա իբն հազիմին ուղարկեց Մծբին (Նասիբին), որպեսզի օգնի Հայաստանի ժողովրդին:

Ասվում է, որ [խազարների] հարձակման պատճառը այն էր, որ Սա-
իդ իբն Սալմը սպանել էր ալ-Մունաջջիմ ալ-Սուլամիին և ահա սրա որ-
դին գնացել էր խազարաց երկիրը և նրանց օգնության կանչել Սաիդի
դեմ: Սրանք հարձակվեցին և մտան Հայաստան [Բաբ ալ-Աբուաբի պա-
րըսպի] ճեղքվածքից: Սաիդը փախուստի դիմեց և [խազարները] մոտա-
վորապես յոթանասուն օր մնացին: Ապա Ռաշիդը հուղայմա իբն հազի-
մին ու Յազիդ իբն Մազիադին ուղարկեց, որոնք շտկեցին այն, ինչ որ
փչացրել էր Սաիդը և դուրս քշելով խազարներին, ճեղքվածքը նորոգեցին:

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(20 հունվար 801—9 հունվար 802)

էջ 111

Այդ տարում Պարտավում մեռավ Յազիդ իբն Մազիադ իբն Զաիդա
ալ-Շալբանին, որը Մաան իբն Զաիդայի եղբորորդին էր: Նրա փոխարեն
[կառավարիչ] նշանակվեց Ասադ իբն Յազիդը: Յազիդը երևելի էր, առա-
տաձեռն, ազնիվ և քաջարի: Բանաստեղծները շատ ողբեր գրեցին նրա
մասին: Գրված ողբերից լավագույնը Աբու Մուհամմադ ալ-Տամիմիի
հորինածն է:

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(30 դեկտեմբեր 802—19 դեկտեմբեր 803)

էջ 118

ՌՈՒՄ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Կասիմ իբն ալ-Ռաշիդը մտավ Ռումի երկիրը Շաբան
(25 հուլիս—23 օգոստոս) ամսին, կանգնեց Կուրրայի մոտ ու պաշարեց
այն: Ուղարկեց նա Աբբաս իբն Զաֆար իբն Մուհամմադ իբն ալ-Աշա-
սին, որը պաշարեց Սինան բերդը, մինչև որ ընկճեց բնակիչներին, Հո-
ռոմները նրան երեք հարյուր քսան մահմեդական զորի ուղարկեցին, պայ-

մանով, որ վերցնի ու հեռանա: Նա համաձայնեց և հաշտությամբ հեռացավ նրանցից: Այս կռվում Ռումի երկրում մեռավ Ալի իբն Իսան:

Այդ ժամանակ Ռումի տիրակալն էր մի կին, որի անունն էր Իրինն (Իինի): Սրան հոռոմները հանեցին և թագավորեցրին Նիկեփորին (Նիկիֆոր): Հոռոմները ասում են, թե իբր սա Ջաֆնա իբն Ղասսանի հետնորդներից էր: Նախքան թագավորելը հարկերի տեսչության պետն էր Իրինեն հանվելուց (գահընկեց լինելուց) հինգ ամիս հետո մեռավ:

Երբ Ռումի երկրում իր իշխանությունը ամրապնդեց, Նիկեփորը դրեց Ռաշիդին. «Ռումի թագավոր Նիկեփորից՝ արաբաց թագավոր Հարունին: Ինձանից առաջ եղած թագուհին քեզ դրել էր նավակի, իսկ իրեն զինվորի տեղ և քեզ ուղարկում էր այնպիսի գումարներ, որոնց կրկնակին դու պարտավոր էիր նրան ուղարկել: Սակայն այդ բոլորը եղավ կանացի թուլության և տխմարության պատճառով: Երբ կարդաս այս նամակը, վերադարձրու քեզ տրված դրամները և փրկիր քո անձը, վճարելով մեզ պատկանող գումարները, թե չէ սուրը կվճռի իմ և քո միջև»:

Երբ Ռաշիդը կարդաց նամակը, խիստ կատաղեց, այնպես որ ոչ ոք չէր կարող նրան նայել կամ խոսել նրա հետ, իսկ նրա ժողովականները ցրվեցին: Նա բերել տվեց թանաք ու գրեց նամակի հետևում. «Հանուն ալլահի գթած ու գթառատի. հավատացելուց իշխան Հարունից՝ Ռումի շուն Նիկեփորին: Կարդացի նամակդ, ո՞վ անհավատ կնոջ որդի, իսկ պատասխանը դու աչքերովդ կտեսնես և ոչ թե կլսես ալդ մասին: Ողջո՛ւյն»:

Նույն օրը նա շարժվեց, մինչև որ հասավ Հերակլիա (Հիրակլա)՝ Գրավեց, կողոպտեց, հրկիզեց ու կործանեց: Նիկեփորը հաշտություն խնդրեց տարեկան հարկ վճարել խոստանալով: Նա (Ռաշիդը) համաձայնեց, սակայն, երբ վերադարձավ արշավանքից ու հասավ Ռակկա, Նիկեփորը խախտեց պայմանագիրը, քանզի ցուրտը սաստիկ էր և վստահ էր, որ Ռաշիդն այլևս չի կարող վերադառնալ: Երբ [պայմանագիրը] խախտելու լուրը հասավ, ոչ ոք չհամարձակվեց Ռաշիդին իմաց տալ՝ չուզենալով այդպիսի ցուրտ ժամանակ կռվի վերադառնալ, վախենալով իրենց անձի համար և խղճալով Ռաշիդին: Եվ ստիպված խորամանկեցին և համոզեցին զինվորներից մի բանաստեղծի՝ Աբու Մուհամմադ Աբդալլահ իբն Յուսուֆին, ասվում է նաև, թե դա Հաջջաջ իբն Յուսուֆ ալ-Տիմին էր: Նա ասաց հետևյալ տողերը.

Խախտեց Նիկեփորը քո տված պայմանը,
Ուստի նրա բաժինն է դժոխքը:
Հրճվիր իշխան հավատացելուց, քանզի
Ալլահը հաղթանակ է տալու քեզ,

Մի նոր հաղթանակ եղածների վրա,
Հավատում ենք դրոշին քո հաղթական:

Եվ այլ տողեր:

Երբ Ռաշիդը այս բոլորը լսեց, ասաց՝ իրոք այդպե՞ս է արել Նիկի-
փորը և հասկացավ, որ վեզիրները խորամանկություն էին արել այդ հար-
ցում: Նա կրկին դիմեց Ռումի երկիրը ամենավատ ժամանակ և մեծա-
գույն դժվարություններով հասավ նրանց երկիրը ու մնաց այնտեղ, մինչև
որ կարողացավ իր վրեժը հաղեցնել և արեց, ինչ որ ուղում էր:

Ասվում է, որ Նիկեփորի արարքը և այս բանաստեղծական տողերը
պատճառ դարձան Ռաշիդի առաջխաղացման և Հերակլիայի նվաճման,
ինչպես կհիշենք հարյուր իննսուն թվականին, եթե բարձրյալն ակահ
կամենա:

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(20 դեկտեմբեր 803—7 դեկտեմբեր 804)

էջ 120

Այդ տարում Իբրահիմ իբն Ջիբրաիլը ամառային հարձակում կատա-
րեց, մտավ Ռումի երկիրը՝ Սաֆսաֆի լեռնանցքից: Ռումի թագավորը՝
Նիկեփորը, ելավ նրա դեմ, սակայն մի այլ հարցի պատճառով ետ մնաց:
Երբ հանդիպեց մահմեդական զորքին, երեք վերք ստացավ և շատ հոռոմ-
ներ սպանվեցին, ինչպես ասում են՝ քառասուն հազար յոթ հարյուր մարդ:
Այդ տարում Կասիմ իբն Ռաշիդի զորքը հաստատվեց Դարիկում:

ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(27 նոյեմբեր 805—16 նոյեմբեր 806)

էջ 122

ՀԵՐԱԿԼԻԱՅԻ ՆՎԱՃՄԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռաշիդը Հերակլիան նվաճեց ու կործանեց: Նրա հար-
ձակման պատճառ, ինչպես արդեն հիշեցինք, հարյուր ութսունյոթ թվա-
կանի տակ, Նիկեփորի ուխտագրուժ լինելն էր: Նվաճումը կատարվեց Շա-
վալ (20 օգոստոս—17 սեպտեմբեր) ամսին, պաշարումը տևեց երեսուն
օր և (Ռաշիդը) գերեվարեց ժողովրդին: Նա մտել էր երկիրը հարյուր երե-
սունհինգ հազար կանոնավոր զորքով, բացի հպատակներից, կամավոր-
ներից ու ոչ մի դիվանի չենթարկվողներից:

Աբդալլահ իբն Մալիքը կանգ առավ Զի-լ-Քիլա ամրոցի առջև, իսկ Դաուդ իբն Իսա իբն Մուսային [Ռաշիդը] ուղարկեց Ռումի, երկրի խորքը յոթանասուն հաղարով: Սա ավերեց, կողոպտեց և ավասը նրան հաղթանակ պարգևեց: Շուրահբիլ իբն Ման իբն Զաիդան նվաճեց Սակալիբա ամրոցը և Դալսան: Յագիդ իբն Մուխալլադը գրավեց Սաֆսաֆն ու Մալկունիան:

Ռաշիդն ուղղվեց Տիանա (Թուանա) և այնտեղ կանգ առավ: Ապա հեռացավ, թողնելով Ուկբա իբն Զաֆարին: Նիկեփորն ուղարկեց չիզիա (գլխահարկ) և խարաջ (հողահարկ)՝ իր գլխի համար՝ շորս դինար, որդու գլխի համար՝ երկու դինար, նույնքան էլ իր պատրիկների համար: Նիկեփորը գրեց Ռաշիդին՝ Հերակլիայում գերի ընկած մի հարճի մասին, որն իր որդու նշանածն էր և սա ետ ուղարկեց նրան:

էջ 123

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԷՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռաշիդն ամառային արշավանք կատարեց և Մամունին, իր փոխանորդը նշանակելով Ռակկայում, նրան լիազորություններ տվեց: Նա ամեն կողմ գրեց այդ մասին և նրան տվեց Մանսուրի մատանին (կնիքը) որպես բախտաբեր նշան, որի վրա փորագրված էր՝ ավասն է իմ ապավենը, նրան եմ հավատում:

Այդ տարում հոռոմները հարձակվեցին Անարզաբայի (Այն Զարբա) և ալ-Քանիսա ալ-Սաուդայի (Սև եկեղեցի) վրա, ասպատակեցին շրջակայքը:

ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(17 նոյեմբեր 806—5 նոյեմբեր 807)

էջ 127

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԷՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Յագիդ իբն Մուխալլադ ալ-Հուբայրին տասը հազարով արշավեց Ռումի երկիրը: Հոռոմները նրան բռնեցին մի կիրճի մեջ և հիսուն հոգու հետ սպանեցին, իսկ մնացածները փախան: Սա տեղի ունեցավ Տարսոնից երկու օրվա ճանապարհ հեռավորության վրա:

Այդ տարում Ռաշիդն ամառային արշավանքների պետ նշանակեց Հարսամա իբն Այանին, նախքան հորասանի կառավարիչ նշանակելը: Նրան տվեց երեսուն հազար խորասանյան զորք: Ռաշիդը Դարբ ալ-Հադասում հրամանատար նշանակեց Աբդալլահ իբն Մալիքին, իսկ Մարա-

շում՝ Սաիդ իբն Սալմ իբն Կուտայբային: Հոռոմները հարձակվեցին և սա մեղականներին վնաս հասցնելով հեռացան: Իսկ Սաիդն իր տեղից շարժվեց:

Ռաշիդը Մուհամմադ իբն Յապիդ իբն Մադիադին ուղարկեց Տարսոն. նա 'Իարբ ալ-Հադասում մնաց Ռամադան ամսում երեք օր, ապա վերադարձավ Ռակկա: Ռաշիդը հրամայեց Սահմանային գոտում քանդել եկեղեցիները և [սպառնաց], որ կպատժի ղիմմի¹¹ բնակչությանը, եթե իր հագուստով (տարազով) ու գրաստով շտարբերվի մահմեդականներից: Նա Հարսամային հրամայեց վերակառուցել Տարսոն քաղաքը ու բնակչությունը ավելացնել, սա կատարեց հրամանը: Այս գործին վերակացու նշանակվեց Ֆառուխ ալ-Խադիմին (ներքինի), որի համար Ռաշիդը հորասանից երեք հազար զորք ուղարկեց, ապա Մամեստիայի (Մասիսա) բնակիչներից հազար հոգի, իսկ Անտիոքից ևս հազար: Կառուցումը ավարտվեց հարյուր իննսուններկու թվականին:

ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(6 հոկտեմբեր 807—24 հոկտեմբեր 808)

էջ 128

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում հուռամյանները շարժվեցին Ատրպատականի կողմերը: Ռաշիդը Աբդալլահ իբն Մալիքին ուղարկեց տասր հազար զորքով: Սա կոտորեց, գերեվարեց [ժողովրդին] ու գերեց [ռազմիկներին]: Նա [Ռաշիդին] հանդիպեց Կարմասինում, որը կարգադրեց կոտորել գերի ռազմիկներին և վաճառել գերեվարված [կանանց ու երեխաներին]:

Այդ տարում Ռաշիդը Սահմանային գոտու կառավարիչ նշանակեց Սաբիտ իբն Նասր իբն Մալիքին. սա արշավեց ու գրավեց մի ցորենի շտեմարան: Այդ տարում գերիների փրկագնում եղավ Պոզանտիում (Բադանդուն):

Այդ տարում երկրորդ փրկագնումն եղավ մահմեդականների և հոռոմների միջև: Այս գործին հսկում էր Սաբիտ իբն Նասր իբն Մալիք ալ-Խուզաիբ: Մահմեդական գերիների թիվը երկու հազար հինգ հարյուր էր:

ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(25 հոկտեմբեր 808—14 հոկտեմբեր 809)

էջ 137

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում սպանվեց Ռումի թագավոր Նիկեփորը Բուրջանի կովում: Նա իշխել էր յոթը տարի: Նրանից հետո իշխեց որդին՝ Ստավրակիոսը:

(Իստիբրակ)¹¹⁸, որը վիրավոր էր և երկու ամսից մեռավ: Նրանից հետո թագավորեց Գեորգի որդի Միքայելը (Միխայիլ իբն Զուրջիս)՝ նրա փեսան քրոջ կողմից:

Այդ տարում Ամինն իր եղբորը՝ Կասիմ Մուտամինին, հանեց Զադիրայից և կառավարիչ նշանակեց Կիննասրինի ու Ավասիմի վրա, իսկ Զադիրայի վրա նշանակեց հուղայմա իբն հազիմին:

ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(15 հոկտեմբեր 809—3 հոկտեմբեր 810)

էջ 142

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում հոռոմները ապստամբեցին իրենց թագավոր Միքայելի դեմ, որը փախավ և վանական դարձավ: Նա թագավորել էր մոտավորապես երկու տարի և նրանից հետո թագավորեց Լևոն (Ալյուն)¹¹⁹՝ զորավարը:

Մոսուլի կառավարիչ էր Իբրահիմ իբն ալ-Աբբասը, որին նշանակել էր Ամին [Խալիֆան]:

ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԻՆՆ ԹՎԱԿԱՆ

(22 օգոստոս 814—10 օգոստոս 815)

էջ 173—174

ԱԼԻԱԿԱՆ (ՇԻԱՅԱԿԱՆ) ԻԲՆ ԹԱԲԱԹԲԱՅԻ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ասվում է, թե իբն Թաբաթբայի՝ Աբու-լ-Սարայայի հետ դաշնակցելու պատճառն այն էր, որ վերջինս թեև նախապես ավանականներ էր վարձով տալիս, շուտով վիճակը լավացավ և մի քանի հոգի հավաքելով՝ Զադիրայում սպանեց Տամիմ ցեղից մի մարդու և ունեցվածքը վերցրեց: Նրան փնտրեցին, իսկ նա թաքնվեց, անցավ Եփրատը՝ դեպի Սիրիական ափը և այդ կողմերում ճանապարհ էր կտրում: Ապա Հայաստանում միացավ (Ասադ իբն) Յագիդ իբն Մազիադ ալ-Շայբանիին, իր հետ ունենալով երեսուն ձիավոր: (Ասադը) նրան կռվի ուղարկեց հուղամյանների դեմ, որոնց նա կոտորեց ու ջարդեց և նրանցից վերցրեց իր ծառա Աբու-լ-Շաուբին: Երբ Ասադը հանվեց Հայաստանից, Աբու-լ-Սարայան գնաց Ահմադ իբն Մազիադի մոտ:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(30 հուլիս 816—19 հուլիս 817)

էջ 184

ԲԱՐԵԿ ԽՈՒՌԱՄՅԱՆԻ ԳՈՐՕՒ ՍԿՋԲԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Բաբեկ խուռամին¹²⁰ չլիսավորեց Ջավիդանյաններին՝ Բաղդի տեր Ջավիդան իբն Սահլի կողմնակիցներին։ Նա հավատացնում էր, թե Ջավիդանի հոգին իր մեջ է մտել և սկսեց երկիրը ապականել ու փրշացնել։ Ջավիդան նշանակում է մնայուն, հավիտյան, իսկ խուռամ նշանակում է հաճույք և դա մոգերի ուսմունքն է։ Նրանց մոտ մարդը կարող էր ամուսնանալ իր մոր, քրոջ և աղջկա հետ և դրա համար էլ հաճույքի կրոն է կոչվում։ Նրանք հավատում են փոխակերպման ուսմունքին՝ այն, որ հոգիները մի կենդանի արարածից անցնում են մյուսին։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(17 հունիս 820—5 հունիս 821)

էջ 197

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Մամուն [խալիֆան] Յահիա իբն Մուադին նշանակեց Ջազիրայի (Վերին Միջագետքի) կառավարիչ, իսկ Իսա իբն Մուհամմադ իբն Աբի խալիդին՝ Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ։ Բաբեկի դեմ պայքարելու պարտականությունը մարմնավորում էր իրենց համար։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(27 մայիս 822—15 մայիս 823)

էջ 205

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում իրաքում գները բարձրացան այնքան, որ ցորենի մի կաֆիզր¹²¹ Հարունիում հասել էր քառասունից հիսուն դիրհեմի։ Այդ տարում Մուհամմադ իբն Հաֆսր նշանակվեց Թաբարիստանի, Ռույանի և Դամավանդի (Դանբավանդ) կառավարիչ, իսկ մարդկանց (մահմեդականներին) հետ ուխտագնացության ելավ Աբու Իսա իբն ալ-Ռաշիդը։

Այդ տարում Մամուն [խալիֆան] հրամայեց Մոսուլի կառավարիչ ալ-Սայյիդ իբն Ունսին հարձակվել Շաբան և այլ արաբական ցեղերի վրա, քանզի նրանք երկիրը ապականում էին։ Սա հարձակվեց, ներխուժեց նրանց կալվածները, կոտորեց, ունեցվածքը կողոպտեց ու վերադարձավ։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆ ԹՎԱԿԱՆ

(4 մայիս 824—23 ապրիլ 825)

էջ 208

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մամուն [խալիֆան] Ալի իբն Սադակային՝ Զուրայկ կոչված, նշանակեց Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ՝ հանձնարարելով պայքարել Բաբեկի դեմ։ (Ատրպատականում) նրան փոխանորդ նշանակվեց Ահմադ իբն ալ-Զունայդ ալ-Իսքաֆին։ Բաբեկը սրան գերեց և Իբրահիմ իբն ալ-Լայսը նշանակվեց Ատրպատականի կառավարիչ։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(2 ապրիլ 827—21 մարտ 828)

էջ 215—216

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ՀՈՒՄԱՅԴԻ՝ ՄՈՍՈՒԼԸ (ՄԱՌԻՍԻԼ) ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մամունը Մուհամմադ իբն Հումայդ (Համիդ) ալ-Թուսին ուղարկեց Բաբեկ խուռամյանի դեմ կռվելու և հրամայեց նաև, որ ճանապարհին անցնի Մոսուլի վրայով ու դրուժյունը կարգավորի՝ կռվելով Զուրայկ իբն Ալիի դեմ։ Մուհամմադը եկավ Մոսուլ իր զորքով ու հավաքեց այնտեղ եղած Յամանի ու Ռաբիա ցեղերի ռազմիկներին։ Նա առաջ խաղաց՝ պատերազմելու Զուրայկի դեմ։ Նրա հետ էր նաև Մուհամմադ իբն ալ-Սայյիդ իբն Ունս ալ-Ազդին։

Լուրը հասավ Զուրայկին, որը եկավ նրանց դեմ և իրար հանդիպեցին Զաբ [գետի] վրա։ Մուհամմադ իբն Հումայդը նամակ ուղարկեց նրան հնազանդության հրավերելով, սակայն սա մերժեց և Մուհամմադը պայքարի ելավ։ Զուրայկը պարտվեց և լուր ուղարկեց՝ խնդրելով երաշխավորագիր (աման)։ Մուհամմադը տվեց և նրան ուղարկեց Մամունի մոտ։ Մա-

մունը գրեց Մուհամմադին, հրամայելով ըոնագրավել Զուրայկի բոլոր դու-
ղերը, քաղաքամերձ կալվածները (ռուստակ), ունեցվածքը և այլն, և նա այս
բոլորն իրեն վերցրեց: Մուհամմադը հավաքեց Զուրայկի զավակներին, եղ-
բայրներին ու տեղեկացրեց. թե ինչ էր հրամայել Մամունը: Նրանք հնա-
զանդվեցին: [Մուհամմադը] ասաց նրանց՝ հավատացելոց իշխանը ինձ
այսպես էր հրամայել, իսկ ես վերցրեցի միայն ինչ որ հաճելի թվաց, իսկ
[մնացածը] վերադարձնում եմ ձեզ: Նրանք շնորհակալություն հայտնե-
ցին այդ բանի համար:

Ապա գնաց Ատրպատական, Մոսուլում փոխանորդ նշանակելով
Մուհամմադ իբն ալ-Սայյիդին: Նա գնաց Ատրպատականում տիրություն
անող ապստամբների դեմ: Նա՝ ձերբակալեց Ալի իբն Մուռային և նրա
նմաններին և ուղարկեց Մամունի մոտ, ապա ուղղվեց դեպի Բաբեկ ալ-
Խուռամը, նրա դեմ պատերազմելու համար:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(22 մարտ 828—10 մարտ 829)

էջ 216

Այդ տարում Մամունը իր որդուն՝ Աբբասին, նշանակեց Ջազիրայի,
Սահմանային գոտու և Ավասիմի կառավարիչ, իսկ իր եղբորը՝ Աբու
Իսհակ ալ-Մուտասիմին, Ասորիքի և Եգիպտոսի կառավարիչ, հրամայելով
տալ ամեն մեկին, ինչպես նաև Աբգալլահ իբն Թահիրին, հինգ հարյուր
հազար դիրհամ: Ասվում է, որ ոչ մի ժամանակ որևէ մեկին այդքան դրամ
չէր տվել:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(11 մարտ 829—27 փետրվար 830)

էջ 217—218

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼ-ԹՈՒՍԻԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում սպանվեց Մուհամմադ իբն Հումայդ (Համիդ) ալ-Թու-
սին՝ Բաբեկ Խուռամյանի ձեռքով:

Բանն այն էր, որ [Մուհամմադը] վերջացնելով ապստամբների (մու-
տաղալիբների) գործը [Ատրպատականում], ուղղվեց Բաբեկի կողմը:
Նա հավաքեց զորք, զենքեր (մերենաններ) և պարեն: Նրա մոտ հավաքվել

էին մեծ թվով կամավորներ՝ տարրեր կողմերից: Նա լեռնանցքներով ընթանում էր Բաբեկի կողմը և ամեն մի լեռնանցքից կամ դժվարանցանքի վայրից անցնելիս պահակներ էր թողնում այն պաշտպանելու համար, մինչև որ հասավ Հեշտադսար, ուր խրամատ փորեց և խորհրդակցեց [մարդկանց հետ] Բաբեկի քաղաքը մտնելու մասին: Նրանք խորհուրդ տվեցին ինչ-որ մի կողմից մտնելու մասին: Նա ընդունեց նրանց կարծիքը և պատրաստեց իր մարդկանց: Կենտրոնում հրամանատար նշանակեց Մուհամմադ իբն Յուսուֆ իբն Աբդ ալ-Ռահման ալ-Թաիին, որը կոչվում էր Աբու Սաիդ, աջ թևում՝ ալ-Սաադի իբն Ասրամին, ձախ թևում՝ ալ-Աբբաս իբն Աբդ ալ-Ջաբբար ալ-Յակթինին, իսկ ետևում կանգնեց Մուհամմադ իբն Հումայդը մի խմբով հսկելու և կարիքի դեպքում օգնելու նպատակով:

Բաբեկը լեռան վրայից հետևում էր նրանց և իր մարդկանց դարան էր մտցրել ամեն մի ժայռի տակ: Երբ Մուհամմադի մարդիկ մոտեցան ու երեք փարսախ բարձրացան լեռը, դարանամուտ մարդիկ դուրս եկան, իսկ Բաբեկը իր մարդկանցով վերևից հարձակվեց նրանց վրա: Հարձակվողները պարտվեցին: Աբու Սաիդը և Մուհամմադ իբն Հումայդը հրամայեցին դիմանալ, սակայն (զինվորները) չլսեցին նրանց և կոտորվելով փախուստի դիմեցին: Մուհամմադ իբն Հումայդն իր տեղում դիմացավ, սակայն նրա մոտ եղածները բոլորը փախան, բացի մի հոգուց և նրանք երկուսով նահանջեցին փրկվելու համար: Մուհամմադը տեսավ մի խումբ, որը կոչվում էր. մոտեցավ ու տեսավ, որ խուռամյանները կոչվում էին իր մարդկանց մի խմբի հետ: Երբ խուռամյանները նրան տեսան, նկատելով նրա վայելուչ արտաքինը, հարձակվեցին: Նա կովի բռնվեց նրանց հետ, սակայն նրա ձիուն հարվածեցին նիզակով և սա ընկավ գետին: Թափվեցին Մուհամմադ իբն Հումայդի վրա և սպանեցին նրան:

Մուհամմադը գովասանքների էր արժանացել և առատաձեռն էր: Ողբացին նրան բանաստեղծները, մանավանդ շատ ողբեր գրեց ալ-Թաին: Երբ նրա սպանվելու լուրը հասավ Մամունին, շատ վշտացավ նրա համար և նրա փոխարեն նշանակեց Աբդալլահ իբն Թահիրին, Բաբեկի դեմ կռվելու համար և սա առաջ խաղաց:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(28 փետրվար 830—17 փետրվար 831)

էջ 219

ՄԱՄՈՒՆԻ՝ ՌՈՒՄԻ ԵՐԿԻՐԸ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մամունը Ռումի դեմ գնաց Մուհառամ (28 փետրվար—29 մարտ) ամսին: Գնալու ժամանակ Բաղդադում իրեն փոխանորդ նշա-

նակեց Իսհակ իբն Իբրահիմ իբն Մուսաբին, որին միաժամանակ կառավարիչ նշանակեց Սավադի (Ստորին Միջագետք) Հուլուանի և Տիգրիսի շրջանների վրա:

Մամունը գնաց Մոսուլի ճանապարհով, մինչև որ հասավ Մանբիջ, ապա Դաբիկ, Անտիոք, ապա Մամեստիա և Տարսոն, որտեղից մտավ Ռումի երկիրը Զումադա Ա (26 հունիս—25 հուլիս) ամսին: Նրա որդին՝ ալ-Աբբասը, Մալաթիայից հարձակվեց:

Մամունը կանգ առավ Կուռա¹²² ամրոցի առջև, մինչև որ գրավեց ու քանդեց այն Զումադա Ա ամսվա վերջին շորս օր մնացած: Ասվում է, որ բնակիչները նրանից երաշխավորագիր խնդրեցին, և Մամունը տվեց: Նա ուղարկեց Աշնասին Սունդուս ամրոցը և սա բերեց նրա բերդապահին: [Մամունը] ուղարկեց Ուջայֆին ու Զաֆար ալ-Խայյաթին Սինադ (Սինան) ամրոցի տիրոջ մոտ, որը հպատակվեց ու հնազանդվեց:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՎԵՑ ԹՎԱԿԱՆ

(18 փետրվար 831—6 փետրվար 832)

էջ 220

ՀԵՐԱԿԼԻԱՅԻ ՆՎԱԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մամունը վերադարձավ Ռումի երկիրը:

Բանն այն էր, որ նա իմացավ, թե Ռումի թագավորը Տարսոնի ու Մամեստիայի բնակիչներից հաղար վեց հարյուր հոգու կոտորել էր: Նա շարժվեց ու մտավ Ռումի երկիրը Զումադա Ա (16 հունիս—15 հուլիս) ամսին և մնաց մինչև Շաաբանի (13 սեպտեմբեր—11 հոկտեմբեր) կեսը:

Ասվում է, որ նրա հարձակման պատճառն այն էր, որ Ռումի թագավորը նրան նամակ էր գրել, սակայն նա շարժվեց առանց նամակի կարդալու: Երբ մտավ Ռումի երկիրը, կանգ առավ Անթիղուի¹²³ առջև և բնակիչները հաշտություն խնդրեցին, ապա գնաց Հերակլիա, որի բնակիչները նույնպես հաշտություն խնդրեցին: Նա իր եղբորը՝ Աբու Իսհակ Մուտասիմին, ուղարկեց, որը գրավեց Երեսուն բերդ և ցորենի շտեմարան (մաթամիր):

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(7 փետրվար 832—26 հունվար 833)

էջ 221

Այդ տարում Մամունը վերստին հարձակվեց Ռումի երկրի վրա: Կանդ առավ Հուլուայի առջև հարյուր օր, ապա հեռացավ իր փոխարեն

թողնելով Ուշայֆին, որին բնակիչները խաբելով գերի բռնեցին: Սա ութ օր մնաց նրանց ձեռքում, որից հետո արձակեցին նրան:

Եկավ Ռումի թագավոր Թեոփիլոսը (Տուֆիլ)¹²⁴, պաշարեց Ուշայֆին, սակայն Մամունը զորք ուղարկեց նրան, և Թեոփիլոսը, նախքան սրա հասնելը, հեռացավ: Լուլուայի բնակիչները երաշխավորագրով հանձնվեցին Ուշայֆին: Ռումի թագավորը հաշտություն խնդրեց, բայց այդ բանը տեղի չունեցավ:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՄՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(27 հունվար 833—15 հունվար 834)

էջ 227

ՄԱՄՈՒՆԻ ՄԱՀՎԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՒ ՆԿԱՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում մեռավ Մամունը Ռաջաբ (23 հուլիս—21 օգոստոս) ամսվա վերջին տասներկու օր մնացած: Երբ հիվանդությունը սաստկացավ և մահը մերձեցավ, խնամողն առաջարկեց նրան վկայության տալ (շիհադա)¹²⁵: Նրա մոտ էր բժիշկ իբն Մասավայհը, որն ասաց այդ մարդուն (խնամողին)՝ թող նրան, այդ վիճակում նա չի տարբերում իր Տիրոջը և Մանիին¹²⁶: Մամունը աչքերը բացեց և ուզում էր ճգմել նրան, բայց ի վիճակի չէր: Ուզեց խոսել, բայց չկարողացավ: Ապա խոսեց ասելով՝ ո՛վ անմահ, ողորմիր մահկանացուիս, ապա մեռավ նույն պահին:

Երբ նա մեռավ, նրա Աբբաս որդին և եղբայրը՝ Մուտասիմը, տարան նրան Տարսոն և թաղեցին Ռաշիդի ծառա խականի տանը: Նրա վրա աղոթեց Մուտասիմը: Նրա վրա պահակ դրեցին Տարսոնի բնակիչներից և ուրիշներից հարյուր հոգու, նրանցից ամեն մեկին տալով ինըսուն դիրհեմ:

Նրա խալիֆայությունը տևեց քսան տարի հինգ ամիս քսաներեք օր, բացի այն տարիներից, երբ նրան խալիֆա էին հռչակել Մեքքայում, իսկ եղբայրը՝ Ամինը, պաշարված էր Բաղդադում: Նա ծնվել էր Ռաբի Ա ամսվա կեսին հարյուր յոթանասուն (3 հուլիս 786—21 հունիս 787) թվականին: Նրա Քունիան էր Աբու-լ-Աբբասը: Նա սպիտակ դեմք ուներ, գեղեցիկ էր, երկար մորուքով, ալեհեր: Ասվում է նաև, որ նա թուխ էր, որոշ գեղնությամբ, երկար մորուքով, ալեհեր, հոնքերը իրար կպած, իսկ երեսի վրա սև խալ կար:

էջ 231

ՏԱՐՔԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մամունը վերադարձել էր Սալդուս և իր որդուն՝ Աբբասին, ուղարկել Տիանա (Թուանա), հրամայելով վերակառուցել այն: Նա

գործավորներն էր ուղարկել, որոնք մղոնով մղոն սկսեցին կառուցումը: Նրա պարիսպը երեք փարսախ դարձրեց, նրա վրա շորս դարպաս դրեց, ամեն մի դարպասի վրա մի բերդ (աշտարակ): Նա նամակ դրեց տարբեր նահանգներ և պարտավորեցրեց, որ ամեն քաղաքից ղորքեր փոխադրվեն Տիանա: Ամեն մի ձիավորին նա տալիս էր հարյուր դիրհեմ, իսկ հետևակին՝ քառասուն դիրհեմ:

Այդ տարում Ջիբալի, Համադանի, Սպահանի (Իսֆահան), Մուսիբդանի (Մասբադան) և այլ վայրերի շատ բնակիչներ խուռամյան կրոնն ընդունեցին և հավաքվելով իրար մոտ, Համադանի գավառում բանակ դրեցին: Մուտասիմը նրանց դեմ ղորք ուղարկեց, որոնց մեջ էր Իսհակ իբն Իբրահիմ Մուսաբը, որին նա Ջիբալի կառավարիչ նշանակեց Շավալ (20 հոկտեմբեր—17 նոյեմբեր) ամսին: Սա գնաց նրանց դեմ և Համադանի կողմերում հաղթեց՝ սպանելով վաթսուն հազարի, իսկ մնացածները փախան Ռումի երկիրը: Նրա հաղթանակի մասին նամակը կարդացվեց տարվիայի¹⁴¹ օրը:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆ

(5 հունվար 835—25 դեկտեմբեր 835)

Էջ 234

ԱՖՇԻՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԽՈՒՌԱՄՅԱՆ ԲԱԲԵԿԻ ԴԵՄ

Այդ տարում Մուտասիմ [խալիֆան] Աֆշին Հայդար իբն Քաուսին նշանակեց Ջիբալի կառավարիչ և ուղարկեց Բաբեկի դեմ պատերազմի, և սա գնաց:

Բաբեկի երևան գալու սկիզբը երկու հարյուր մեկ թվականն էր և նրա քաղաքը Բադդն էր, նա խալիֆայի շատ զորքեր պարտության մատնեց ու կոտորեց և բազմաթիվ զորավարների սպանեց: Երբ իշխանությունն անցավ Մուտասիմին, սա Աբու Սաիդ Մուհամմադ իբն Յուսուֆին Արդաբիլ ուղարկեց, հրամայելով վերակառուցել Բաբեկի քանդած բերդերը, որոնք գտնվում էին Զինջանի և Արդաբիլի միջև: Նա ռազմիկների նշանակեց պահպանելու այն ճանապարհները, որոնցով պարենը բերվում էր Արդաբիլ: Աբու Սաիդը գնաց այս բանի համար ու կառուցեց բերդերը:

Մի օր Բաբեկը մի ձիավոր ջոկատ ուղարկեց արշավանքի և սա որոշ շրջաններ ասպատակեց ու վերադարձավ: Լուրը հասավ Աբու Սաիդին, որը հավաքեց մարդկանց և դուրս եկավ այդ ջոկատի հետևից: Նա հասավ ինչ-որ ճանապարհի վրա և սաստիկ ընդհարման ժամանակ Աբու Սաիդը Բաբեկի մի խումբ մարդկանց սպանեց ու մի մեծ խումբ գերի

վերցրեց, փրկելով նախկինում [մահմեդականներից] գերի ընկածներին։ Նա [սպանվածների] գլուխները և գերիներին ուղարկեց Մուտասիմին։ Սա Բաբելի մարդկանց առաջին պարտությունն էր։ Ապա տեղի ունեցավ երկրորդ պարտությունը Մուհամմադ իբն ալ-Բաիսի ձեռքով։

Բանն այն է, որ Մուհամմադը գտնվում էր իր մի ամուր բերդում, որը կոչվում էր ալ-Շահի, որը իբն ալ-Բաիսը գրավել էր իբն ալ-Ռավվադից և գտնվում էր Ատրպատականում։ Նա մի ուրիշ բերդ ևս ուներ Ատրպատականում, որը կոչվում էր Դավրեթ (Տաբրիզ)։ [Իբն ալ-Բաիսը] հաշտ էր Բաբելի հետ, նրա ջոկատները գալիս էին իր մոտ, իսկ սա հյուրասիրում էր նրանց, այնպես որ նրանք վստահում էին նրան։ Մի օր Բաբելն իր զորավարներից (Իս-բահբադ) մեկին, որի անունն էր Իսմատ, մի հեծյալ ջոկատի հետ ուղարկեց (Իբն ալ-Բաիսի մոտ)։ Նա իջևանեց իբն ալ-Բաիսի մոտ, որը, ըստ սովորության, հյուրասիրությունը ներքև [ստորին հարկը] ուղարկեց, իսկ նրան իր երեւելի մարդկանց հետ վերև հրավիրեց։ Սա բարձրացավ, և նա կերցրեց ու գինի խմեցրեց, մինչև որ արեցին։ Ապա նա հարձակվեց Իսմատի վրա, բայց վերջինիս խնդրանքով խնայեց, իսկ բոլոր նրա հետ եղածներին սպանեց։ Նա հրամայեց նրան (Իսմատին) մեկ առ մեկ վերև կանչել իր մարդկանց։ Հենց որ մեկին անունով կանչում էր և սա բարձրանում էր, նրա վիզը կտրում էին, մինչև որ [մնացածները] հասկացան ու փախան։

Նա Իսմատին ուղարկեց Մուտասիմի մոտ։ Մուտասիմն Իսմատին հարցրեց Բաբելի երկրի մասին և սա հայտնեց նրան ճանապարհների և նրա պատերազմելու ձևերի մասին։ Նա Իսմատին թողեց բանտարկված և այնտեղ մնաց մինչև Վասիկի [խալիֆայության] օրերը։

Ապա Աֆշինը գնաց Բաբելի երկիրը։ Սա կանգ առավ Բարզանդում ու բանակ դրեց և նրա ու Արդաբիլի միջև եղած ճանապարհներն ու բերդերը հսկողության տակ դրեց։ Նա Մուհամմադ իբն Յուսուֆին ուղարկեց մի վայր, որ կոչվում էր Խուշ, և վերջինս այնտեղ խրամատ փորեց։ Իսկ Հայսամ ալ-Ղանավին կանգ առավ Արշակ գավառակում (ռուստակ), բերդը նորոգեց ու խրամատ փորեց։ Միականի Ալավայհը՝ «Աբնա» [կոչվածների]¹²⁹ զորավարներից, տեղավորվեց գետի բերդում, որը Արդաբիլից այն կողմն էր գտնվում։

Անցորդներն ու կարավանները դուրս էին գալիս Արդաբիլից հսկող խմբի ընկերակցությամբ, մինչև որ հասնում էին գետի բերդը, ապա բերդի տերը նրանց տանում էր ալ-Հայսամ ալ-Ղանավի մոտ։ Հայսամը հանդիպում էր նրանց որևէ այլ կողմից, որոշակի վայրում, որը ոչ ոք հասնելուց հետո, չէր անցնում։ Հանդիպումից հետո վերցնում էր նրանց

մոտ եղածը և տալիս էր իր մոտ եղածը: Ապա Հայսամն իր մարդկանց հետ հանդիպում էր ճանապարհի մեջտեղում Արու Սաիդի մարդկանց, որոնց հետ զորախումբ էր լինում: Նրանք վերցնում էին Հայսամի մոտ եղածը և իրենց մոտ եղածը հանձնում նրան: Իթե իրենցից որևէ մեկը ճանապարհի մեջտեղը մյուսից շուտ հասներ, չպետք է առաջ անցներ: Իսկ Աբու Սաիդը իր մոտ եղած զորքի հետ դնում էր Աֆշինի ճամբարը, ուր նրան հանդիպում էր Աֆշինի ջոկատի պետը, ընդունում էր նրանից նրա ընկերակցողներին և հանձնում իր հետ եղած ռազմիկներին: Այսպես գործը ընթանում էր:

Երբ նրանք որևէ լրտես էին բռնում, տանում էին Աֆշինի մոտ, որը նրանց հետ լավ էր վարվում, նվերներ տալիս, հարցնում, թե Բսրեկը ինչքա՞ն էր տալիս և ինքը կրկնակին էր վճարում՝ համոզելով, որ լինեն իր լրտեսները և օգտվում էր նրանցից:

էջ 235—237

ԱՖՇԻՆԻ ՄԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԲԱԲԵԿԻ ՀԵՏ

Այդ տարում տեղի ունեցավ Աֆշինի կոիվը Բաբեկի հետ, որի ընթացքում Բաբեկի մարդկանցից մեծ բազմություն կոտորվեց:

Մուտասիմ [խալիֆան] Ավագ Բուղային ուղարկել էր Աֆշինի մոտ: Սա իր հետ ուներ փող՝ զինվորների և ծախսերի համար: Հասավ Արդաբիլ, և Բաբեկը լուր ստանալով, պատրաստվեց իր մարդկանցով, որպեսդի նրա ճանապարհը կտրեն նախքան Աֆշինի մոտ հասնելը: Սակայն լրտեսը եկավ և հայտնեց Աֆշինին այդ մասին: Երբ Աֆշինը ստուգեց այդ լուրը, դրեց Բուղային, որ ձեռքների, թե ուղում է տեղից շարժվել և փողը բարձած ուղտերի վրա գալ իր (Աֆշինի) մոտ, ապա հասնելով դեռի բերդը, իր մարդկանց պահի և բաց թողնի [միայն նրանց], որոնք ընկերակցում էին և փողը իր հետ ունենալով վերադառնա Արդաբիլ: Բուղան այս բանն արեց, և կարավանը շարժվեց: Լրտեսները եկան Բաբեկին տեղեկացրին, որ նա փողի հետ միասին հասել է, գետրու նույն օրվա երեկոյան, որ Աֆշինը նշանակել էր Բուղային, նա Բարդանդից դուրս եկավ Խուշ՝ մայրամուտի ժամանակ և կանգ առավ Աբու Սաիդի խրամատից դուրս: Առավոտյան թաքուն հեծան ձիերը՝ առանց թմբուկների խփելու ու դրոշներ պարզելու, հրամայելով մարդկանց ձայն չհանել և արագ առաջ խաղաց: Շարժվեց նաև կարավանը, որն այդ օրը գետից անցնելով պետք է գնար Հայսամի կողմը:

Բաբեկը նույնպես պատրաստվեց իր մարդկանցով և շարժվեց դեպի գետի ճանապարհը, կարծելով, որ գտնելու է փողը: Բաբեկի ձիավորները

հարձակվեցին կարավանի վրա, որի հետ էր դետի բերդի տերը: Նա կռվի ելավ նրանց դեմ, սակայն սպանեցին նրան, ինչպես նաև նրա հետ եղած չինվորներին, վերցնելով այն ամենը, որ կար նրանց մոտ և ահա այդտեղ իմացան, որ փողո իրենց ձեռքից բաց են թողել: Նրանք վերցրին նրա դրոշը և մարդկանց ղգեստները և իրենք հաղնվելով, կերպարանափոխվելով ու՝ Վեցին [խաբեությամբ] բռնել Հայսամ ալ-Ղանավիին և նրա հետ եղած մարդկանց: Նրանք չդիտեին Աֆշինի դուրս դալու մասին և եկան, ձեռք-նելով, թե՛ դետի բերդի տիրոջ մարդիկ են, սակայն շիմանալով, թե որն է դետի տիրոջ դրոշի տեղը, այլ տեղում կանգնեցին:

Եկավ Հայսամը, կանգնեց իր սովորական տեղում և նրան խորթ թվացին իր առջևում տեսած [մարդիկ]։ Նա իր հորեղբոր տղային ուղարկեց, ասելով՝ գնա այդ գարշելիի մոտ և ասա, թե ինչու է այնտեղ կանգնել: Գնաց և նրան էլ [այդ մարդիկ] խորթ թվալով, եկավ ու զեկուցեց: [Հայսամը] այլ մարդկանց ուղարկեց և նրանք նույնպես, չճանաչեցին նրանց և տեղեկացրին [Հայսամին], թե Բաբեկը սպանել է գետի բերդի տիրոջը՝ Ալավալահին, ու նրա մարդկանց, վերցնելով դրոշները և ղգեստները: Հայսամը վերադարձավ, փրկելով կարավանը, որն իր հետ էր: Նա և իր մարդիկ [կարավանի] ետևից էին ընթանում, պաշտպանելով նրան, մինչև որ կարավանը հասավ Արշակ բերդը: Նա երկու հոգու ուղարկեց Աֆշինի և Աբու Սալդի մոտ՝ իմաց տալու կատարվածի մասին և սրանք սրընթաց գնացին:

Հայսամը մտավ բերդը, իսկ Բաբեկը պաշարեց նրան: Նա մի աթոռ դրեց բերդի դիմացի լեռներում և լուր ուղարկեց Հայսամին, թե՛ թող բերդն ու հեռացիր: Հայսամը մերժեց և Բաբեկը կռիվ սկսեց, ըստ իր սովորության, գինի խմելով կռվի ընթացքում:

Երկու ձիավորները դնացին ու գտան Աֆշինին մեկ փարսախից պակաս հեռավորության վրա: [Աֆշինն] ասաց իր առաջապահ զորքի հրամանատարին՝ տեսնում եմ երկու ձիավոր խիստ սրընթաց գալիս են, ապա ավելացրեց՝ գարկեք թմբուկները, պարգեցեք դրոշները, և սրընթաց գնացեք նրանց կողմը գոչելով՝ այստեղ ենք ահա, այստեղ ենք¹²⁹: Այդպես էլ արեցին, և մարդիկ ձիերի սանձերը բաց թողեցին և հասան Բաբեկին, որը նստած էր: Նա դեռ չէր նստել իր ձին, երբ ձիավորները վրա հասան: Սկսվեց կռիվը և Բաբեկի մարդկանցից ոչ ոք չազատվեց. միայն իներ մի քանի ձիավորներով փախավ Մուզան (Մուկան), սակայն նրա ջոկատները նրանից կտրվեցին:

Աֆշինը վերադարձավ Բարդանդ, իսկ Բաբեկը մնաց Մուզանում: Նա լուր ուղարկեց Բադդ և զորք ստանալով, նրա հետ հեռացավ Մուզանից, մինչև որ հասավ Բադդ:

Աֆշինը մնաց Բարգանդում՝ իր ճամբարում: Մի օր մի կարավան

անցավ. որի վրա հարձակվեց Բարեկի իսբահադը (սպահապետը) կողոպտեց և սպանեց այնտեղ եղած մարդկանց: Աֆշինի զորքը այդ պատճառով սովի մատնվեց, իսկ Աֆշինը գրեց Մարաղայի տիրոջը, հրամայելով շտապ պարեն բերել: Սա նրան ուղարկեց մի հսկայական կարավան, որի մեջ կար մոտավորապես հազար ցուլ, բացի ուրիշ գրաստից, որոնք պարեն էին տանում զինվորների ընկերակցութեամբ: Նրանց վրա հարձակվեց Բաբեկի մի ձիավոր ջոկատ, որն ամեն ինչ կողոպտեց: [Աֆշինի] զորքը շատ նեղ վիճակում էր և Աֆշինը գրեց Շիրուանի տիրոջը, հրամայելով, որ իրեն մթերք բերեն և սա շատ ուտեստեղեն ուղարկեց ու փրկեց մարդկանց:

Աֆշինի մոտ եկավ Բուղան իր հետ եղածներով միասին:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(26 դեկտեմբեր 835—13 դեկտեմբեր 836)

էջ 237—239

ԲԱԲԵԿԻ ԴԵՄ ԿՈՎԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Բաբեկը ընդհարում ունեցավ Ավագ (քաբիր, մեծ) Բուղայի հետ, որին փախուստի մատնեց: Աֆշինը, նույնպես, կռիվ ունեցավ (Բաբեկի հետ) և հաղթեց նրան:

Բանն այն էր, որ Ավագ Բուղան եկել էր Աֆշինի մոտ իր հետ բերած փողերով և սա բաժանեց (փողերը) իր զորքի մեջ և կովի պատրաստվեց նովրուզից (իրանական ամանոր) հետո: Նա Բուղային զորք ուղարկեց, որպեսզի Հեշտադսարի շուրջը պտտվի և կանգ առնի Մուհամմադ իբն Հումայդի խրամատների մոտ՝ այն փորելով ու ամրացնելով: Բուղան գրեց խրամատների մոտ, իսկ Աֆշինը Բարզանդից հեռացավ, շարժվեց նաև Աբու Սաիդը՝ Խուշից, և նրանք երկուսով ուզում էին Բարեկի [դեմ գնալ] ու պայմանավորվեցին մի վայրում, որը կոչվում էր Դարուազ:

Աֆշինը խրամատ փորեց և նրա մոտ պարիսպ կառուցեց, իսկ նրա ու Բադդի միջև վեց մղոն կար: Բուղան առանց Աֆշինի հրամանի պատրաստվեց և իր հետ տանելով պարեն ու պտտվելով Հեշտադսարի շուրջը, մտավ Բադդ գյուղը և այնտեղ կանգ առավ: Ապա հազար հոգու ուղարկեց անասնակերի հետևից: Նրանց դեմ դուրս եկան Բաբեկի զինվորները, որոնք խլեցին անասնակերը և ջարդեցին նրանց, ով իրենց հետ կովի բռնվեց, իսկ մնացածներին գերի վերցրեցին: Դրանցից երկուսին [Բաբեկը] ուղարկեց Աֆշինի մոտ, տեղեկացնելու կատարվածի մասին:

Բուղան վերադարձավ Մուհամմադ իբն Հումայդի խրամատը, ձևացնելով, որ փախուստի է դիմել և դրեց Աֆշինին՝ այդ բանն իմաց տալով

և օգնություն խնդրելով: Աֆշինը նրա մոտ ուղարկեց իր եղբորը՝ Ֆադլին, Ահմադ իբն ալ-Խալիլ իբն Հիշամին, իբն Զաուշանին և միականի Զանահին՝ ոստիկանապետին, Հասան իբն Սահլին, ինչպես նաև Ֆադլ իբն Սահլի աղգական երկու եղբայրներից մեկին, և նրանք բոլորը եկան Բուղայի մոտ: Աֆշինը գրեց Բուղային, հիշեցնելով, որ նա Բաբեկի վրա պետք է հարձակվի իր նշանակած այն օրը [եթե ինքն էլ էր հարձակվելու], որպեսզի նրա վրա երկու կողմից հարձակում լինի: Այդ օրը Աֆշինը Դարուադից ելավ Բաբեկի գեմ, իսկ Բուղան դուրս եկավ խրամատից ու գնաց Հեշտադսար: Սակայն մարդիկ չէին դիմանում սաստիկ ցրտին ու քամուն, ուստի վերադարձան ճամբար՝ կանչի հեռավորության վրա: Երբ ցուրտ քամին վիչեց և խիստ անձրևեց, Բուղան էլ վերադարձավ ճամբար: Իսկ Աֆշինը, Բուղայի վերադառնալու մյուս օրը, հարձակվեց Բաբեկի մարդկանց վրա, գրավեց ճամբարը, նրա վրանները, գերեց նրա հետ եղած կնոջը և կանգ առավ Բաբեկի ճամբարում:

Մյուս օրը Բուղան պատրաստվեց ու բարձրացավ Հեշտադսար և հասավ զորքին, որն իրենից առաջ արդեն Բաբեկի վրա հարձակվել էր, և վերադարձավ, որոշ բան ձեռք բերելով նրանց կահ-կարասիից ու թամբերից: Նա իջավ Հեշտադսարից՝ Բադդ գնալու նպատակով, իսկ նրա առաջապահ զորքի հրամանատարն էր Դաուդ Սիահը: Բուղան նրան լուր ուղարկեց, թե արդեն երեկո է. մարդիկ հոգնած են և մեզ ծանոթ վայր ենք հասել, ուստի ընտրիր մի լավ պաշտպանված լեռ, ուր կկարողանանք այս գիշեր բանակ դնել: [Դաուդ Սիահը] բարձրացավ մի լեռ, որը նայում էր Աֆշինի ճամբարին: Նրան ասացին՝ այս գիշեր այստեղ կմնանք մինչև վաղը և ապա կիջնենք կովելու անհավատի դեմ, եթե ալլահը կամենա: Այդ գիշեր ամպր պատեց, ցրտեց և ուժեղ ձյուն տեղաց, այնպես որ ցրաի սաստկությունից առավոտյան ոչ ոք չէր կարող իջնել ջուր վերցնելու կամ անասուններին խմեցնելու, քանզի շատ ձյուն էր եկել ու մառախուղ պատել: Երբ երրորդ օրը եղավ, զինվորները ասացին Բուղային՝ մեր պարենը վերջացել է, իսկ ցուրտը մեզ նեղում է, ուստի ամեն գնով մեզ իջեցրու՝ կամ վերադառնալու և կամ անհավատի վրա հարձակվելու նպատակով:

Մառախուղի և ձյան օրերին Բաբեկը գիշերով հարձակվել էր Աֆշինի ու նրա զորքի մի մասի վրա և Աֆշինը վերադարձել էր իր ճամբարը: Իսկ Բուղան թմբուկը խփել տվեց և իջավ լեռից՝ կամենալով հարձակվել Բադդի վրա, առանց իմանալու, թե ինչ էր կատարվել Աֆշինի հետ և կարծում էր, թե նա իր [նախկին] ճամբարում է: Երբ ձորը իջավ, գտավ, որ հրկինքը պարզ է, իսկ եղանակը հաճելի, բացի այն լեռան կատարից, ուր ինքն էր գտնվում: Նա իր զորքը կարգի բերեց և ուղղվեց դեպի Բադդ

[և առաջացավ], մինչև որ գրեթե կպավ Բագդի լեռան, այնպես, որ իր եղած տեղից կես մղոն մնաց, որ տեսներ Բագդի տները: Նրա առաջապահ գնդի մեջ կային մարդիկ, որոնց մեջ էր իբն ալ-Բախսի ծառաներից մեկը. սա ազգականներ ուներ Բագդում: Սրանց տեսան Բաբելի առաջապահները և նրանցից մեկը ճանաչեց այդ ծառային: Նրա հորեղբայրը հարցրեց, թե ո՞վ կար իր մոտ ազգականներից և սա պատասխանեց: [Հորեղբայրը] ասաց՝ վերադարձիր և ասա, ում որ պետք է, թող հեռանա, մենք արդեն հաղթել ենք Աֆշինին, որը փախավ իր խրամատները, իսկ մենք ձեր դեմ երկու զորք ենք պատրաստել. շտապիր գնալ, գուցե ազատվես: Ծառան վերադարձավ և տեղեկացրեց իբն ալ-Բախսին, որն իմաց տվեց Բուղային: Վերջինս խորհրդակցեց իր մերձավորների հետ: Ոմանք ասացին՝ դա սուտ խաբեություն է, իսկ ուրիշներ՝ ահա լեռան կատարը, որ-տեղից կարելի է տեսնել Աֆշինի ճամբարը: Բուղան մի քանի մարդկանցով բարձրացավ լեռան կատարը և չտեսնելով Աֆշինի զորքը, հասկացավ, որ հեռացել է:

Խորհրդակցեցին և որոշեցին, որ պետք է հեռանալ գիշերը վրա չհասած: Հեռացան և արագ ընթանում էին, սակայն [Բուղան] շանցավ եկած ճանապարհով, քանզի շատ կիրճեր կային, այլ գնաց այն ճանապարհով, որը Հեշտադսարի շուրջն է պտտվում, ուր միայն մեկ կիրճ կար: Գինվորները ճանապարհին զենքերը գցում էին և վախի մեջ էին: Բուղան մի խումբ զորավարների հետ թիկունքում էր, քանի որ Բաբելի առաջապահները, թվով տասը ձիավոր, հետապնդում էին: Բուղան իր մարդկանց հետ խորհրդակցեց, ասելով՝ վախենում եմ, որ սրանք մեզ զբաղեցնելով ետ պահեն, որպեսզի հնարավորություն տան իրենց ընկերներին կիրճը գրավել: Ֆադլը ասաց նրան՝ դրանք գիշերապահներն են, ուստի շտապիր և չդանդաղես, մինչև որ կիրճը անցնենք: Մեկ ուրիշն ասաց՝ զորքը բաժան-բաժան է եղել, զինվորները զենքը գցել են, իսկ փողն ու զենքերը մնացել են ջորիների վրա՝ առանց հսկողության և Վստահ չենք, որ այն չեն տանի, նույնպես և գերին, որ այնտեղ է: Նրանց հետ էր Ջավիդանի որդին գերի վիճակում, և ուղում էին նրան փոխանակել [որևէ մեկի հետ]:

Նրանք բանակ դրեցին մի անառիկ լեռան կատարին, սակայն մարդիկ զզված ու հոգնած լինելով իջան, քանի որ պարենը վերջացել էր: Նրանք ուշադիր հսկում էին վերև բարձրանալու ճանապարհը, իսկ Բաբելը այլ կողմից եկավ և հարձակվեց Բուղայի ու նրա զորքի վրա: Բուղան փախավ հետիոտն, սակայն տեսնելով մի ձի՝ նստեց, Ֆադլ իբն Քաուսը վիրավորվեց, Ջանահ ալ-Սուքքարին և իբն Ջաուշանը սպանվեցին, իսկ Ֆադլ իբն Սահլի երկու ազգական եղբայրները գերի ընկան: Բուղան և այլ մարդիկ ազատվեցին, իսկ Խուռամյանները չհետապնդեցին

նրանց, վերցնելով դրամը, զենքերն ու գերուն: Մարդիկ հասան իրենց ճամբարը ու մտան խրամատները, և Բուղան տասնհինգ օր այսպես մնաց:

Աֆշինը նրան գրեց՝ հրամայելով վերադառնալ Մարաղա և օգնական ուժեր ուղարկել: Բուղան գնաց Մարաղա, իսկ Աֆշինը այդ տարում զորքերը տեղավորեց ձմեռանոցներում, սպասելով մինչև գարնան գալը:

Այդ տարում սպանվեց Թարխանը՝ Բաբեկի մեծագույն զորավարներից մեկը: Բանն այն էր, որ Բաբեկից թույլտվություն էր խնդրել, որպեսզի ձմեռն անցկացնի իր գյուղում, որը Մարաղայի կողմերում էր, իսկ Աֆշինը հետապնդում էր նրան և երբ տեղեկացավ նրա մասին, գրեց Թուրքին՝ Իսհակ իբն Իբրահիմի մաուլային, որը Մարաղայում էր, որպեսզի գիշերով գնա այդ գյուղը և սպանի նրան կամ գերի վերցնի: Թուրքը արեց այդ բանը, գնաց ու սպանեց նրան, իսկ գլուխը կտրեց և ուղարկեց Աֆշինին:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(14 դեկտեմբեր 836—2 դեկտեմբեր 837)

էջ 239—240

ԿՐԿԻՆ ԲԱՖԵԿԻ ԴԵՄ ԿՈՒՎԸ

Այդ տարում Մուտասիմ [խալիֆան] Զաֆար ալ-Խայյաթին ուղարկեց Աֆշինի մոտ օգնության, ուղարկեց նաև Իտախին՝ երեսուն միլիոն դիրհեմով՝ զինվորների և ծախսերի համար: Սա բոլորը հանձնեց Աֆշինին և վերադարձավ:

Այդ տարում ընդհարում տեղի ունեցավ Աֆշինի զինվորների և Բաբեկի զորավարներից մեկի միջև, որի անունն էր Ագին:

Բանն այն էր, որ երբ երկու հարյուր քսանմեկ թվականի ձմեռը վերջացավ, եկավ գարունը, և սկսվեց քսաներկու թվականը, և հենց որ հնարավորություն ստեղծվեց, Աֆշինը գնաց այն վայրը, որը կոչվում էր Գիլան (Քիլան) Ռուդ, որը նշանակում է Մեծ գետ: Այստեղ նա խրամատ փորեց և գրեց Աբու Սաիդին, որպեսզի Բարզանդից գա Գիլան Ռուդի կողմերը, իսկ նրանց միջև երեք մղոն հեռավորություն կար: Աֆշինը Գիլան Ռուդում հինգ օր մնաց: Նրան իմաց տվին, թե Բաբեկի զորավարներից մեկը, որի անունն էր Ադին, բանակ է դրել նրա մոտ, իսկ իր ընտանիքին ձիավորների հետ ետ էր ուղարկել: Բաբեկը մեկ անգամ ասել էր նրան՝ ավելի լավ է նրանց (ընտանիքը) բերդի մեջ պահել: Ասել էր՝ չեմ ուզում պաշտպանվել հրեաներից, այսինքն մահմեդականներից. ալլահը վկա նրանց (ընտանիքին) երեք բերդ չեմ մտցնի:

[Իմանալով այդ մասին], Աֆշինը ուղարկեց Զաֆար իբն ալ-Ալա ալ-Սաադիին ձիավոր և հետիոտն մի խմբի հետ: Նրանք գիշերով հասան մի նեղ կիրճ, որով մեկ-մեկ կարելի էր անցնել: Մարդկանց մեծ մասը իրենց ձիերի սանձերը քաշեցին ու մազլցեցին լեռը և հափշտակեցին Ադինի կանանց և որդիներին մի քանիսին:

Այդ լուրը հասավ Ադինին: Աֆշինը վսխենում էր, որ նրանց ճանապարհը կկտրեն, ու հրամայեց, որ ամեն մի լեռան գլխին մարդիկ նշանակեն սև դրոշներով և նրանք վտանգ տեսնելու դեպքում դրոշները պետք է շարժեն: Այդպես էլ արեցին: Երբ նրանք Ադինի կանանց բռնեցին ու վերադարձան դեպի ճանապարհը, նախքան կիրճը անցնելը նրանց դեմ եկավ Ադինը իր մարդկանցով, նրանց մի մասին կոտորեց, իսկ կանանցից ոմանք ազատվեցին: Լեռան վրա նշանակված մարդիկ դրոշները շարժեցին: Ադինը մարդկանց ետ ուղարկեց, որ կիրճը բռնեն: Երբ Աֆշինը տեսավ իր կողքի դրոշի շարժվելը, դինվորների մի խումբ ուղարկեց Մուղաֆար իբն Քալդարի հետ, որն աճապարեց նրանց մոտ: Ապա ուղարկեց Աբու Սաիդին և Բուխարախուդային: Երբ կիրճի մոտ եղած Ադինի հետիոտն շուկատր տեսավ նրանց, թողեց ու գնաց ընկերների մոտ: Այսպիսով, Զաֆար իբն ալ-Ալան իր ընկերակիցների հետ հաղթեց և իր հետ տարավ Ադինի կանանցից (ընտանիքից) մի քանիսին:

էջ 240—245

ԲԱԳԴԻ ԳՐԱՎՄԱՆ ԵՎ ԲԱԲԵԿԻ ԳԵՐԻ ԲՈՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում գրավվեց Բադդր՝ Բաբեկի քաղաքը: Մահմեդականները մտան, ավերեցին ու կողոպտեցին: Սա տեղի ունեցավ Ռամադան (7 օգոստոս—5 սեպտեմբեր) ամսվա վերջին տասը օր մնացած:

Բանն այն էր, որ Աֆշինը, երբ որոշեց Գիլան Ռուդից դուրս գալով մերձենալ Բադդին, հակառակ իր նախկին վարմունքի քիչ-քիչ էր առաջանում: Նրան գրեց Մուտասիմ [խալիֆան], հրամայելով, որ ձիավոր մարդկանց գիշերապահ նշանակի, որպեսզի գիշերային հարձակումների առաջն առնեն, սակայն մարդիկ հոգնածության պատճառով ընդվզեցին, ասելով՝ մեր և թշնամու միջև չորս փարսախի կա, իսկ մենք այնպես ենք վարվում, կարծես թշնամին մեր կողքին է: Մարդկանց առջև ծիծաղելի ենք դառնում: Տար մեզ կովի, կամ մենք կհաղթենք, կամ նրանք: Ասաց [Աֆշինը]՝ գիտեմ, որ ճշմարիտ եք ասում, սակայն հավատացելոց իշխանը ինձ այսպես է հրամայել: Եվ, իրոք, նորից նամակ ստացավ Մուտասիմից, որը կրկին նույնն էր հրամայում:

Այդպես էլ շարունակեց [Աֆշինը] մի քանի օր և ապա իջավ Ռուդալ-Ռուդ և առաջացավ, մինչև որ հասավ այն վայրը, ուր անցյալ տարի ընդհարում էր եղել։ Այնտեղ նա տեսավ հուռամյանների մի հեծյալ ջուկատ, սակայն չկռվեց նրանց հետ։ Նա մնաց մինչև կեսօր, ապա վերադարձավ իր ճամբարը, ուր երկու օր մնալուց հետո վերադարձավ նախկինից ավելի մեծ զորքով, սակայն դարձյալ կռվի չբռնվեց։ Աֆշինը մնաց Ռուդալ-Ռուդում և հրամայեց բռնաբաններին¹³⁰, որոնք հետախույզներ էին, որ լեռների կատարին հայտնաբերեն այնպիսի վայրեր, ուր հետիոտն զինվորները կարող էին ամրանալ։ Նրանք ընտրեցին երեք լեռ, որոնց վրա ամուր բերդեր էին եղել, բայց ավերվել։ Նա իր հետ վերցնելով գործավորներ, ինչպես նաև շոր խմորեղեն և ցորենի ապուր¹³¹, գնաց այդ լեռները։ Նա հրամայեց գործավորներին քարերը տեղափոխել և փակել ճանապարհը դեպի լեռները, որպեսզի բերդի նման [պաշտպանված] դառնան։ Նա հրամայեց, որ քարե [պարսպից] դուրս ամեն մի ճանապարհի վրա խրամատ փորեն և ոչ մի ճանապարհ չթողնեն դեպի լեռը, բացի մի նեղ անցքից։ Այդ խրամատները փորելը վերջացավ տաս օրից, որի ընթացքում նա և իր զորքը գիշեր-ցերեկ պահպանում էին գործավորներին ու հետիոտն զորքին։ Երբ վերջացավ այդ գործը, հետիոտն զորքը տեղավորվեց նրա մեջ։

Իսկ Բաբեկը նրա մոտ պատգամաբեր ուղարկեց, որն իր հետ տարավ մեծ վարունգ, ձմերուկ և մանր վարունգ։ Նա հրամայել էր նրան ասել, որ գու [հավանաբար] զգվել և ձանձրացել ես շոր խմորեղեն ուտելուց, իսկ մենք այստեղ առատության մեջ ենք։ (Աֆշինը) ընդունեց այս բոլորը և ասաց՝ հասկացա, ինչ է ուզում ասել իմ եղբայրը, և վերև տանելով պատդամարներին, ցույց տվեց, թե ինչ էր կատարված, ման ածեց բոլոր խրամատները և ասաց՝ գնա և պատմիր, ինչ որ տեսար։

Հուռամյանների մի խումբ մոտիկ էր գալիս Աֆշինի խրամատին ու գողգողում։ Աֆշինը ոչ ոքի չէր թողնում նրանց դեմ դուրս գալ։ Նրանք երեք օր այդ բանը կրկնեցին։ Ապա Աֆշինը դարան մտցրեց իր մարդկանց և երբ նորից եկան, սրանք հարձակվեցին և նրանք փախան ու այլևս չվերադարձան։

Աֆշինը դասավորեց իր զինվորներին և ամեն մեկին պարտավորեցրեց իր տեղը գրավել։ Նա ձիով անցնում էր, իսկ մարդիկ նրա առջև իրենց տեղում կանգնած էին։ Նա առավոտները մութն ու լուսին աղոթում էր, ապա հրամայում էր թմբուկները զարնել ու գրոհել։ Առաջ շարժվելու և կանգնելու նշանը թմբուկների հարվածներն էին, քանի որ մարդիկ շատ էին և շարքերով գնում էին լեռներով ու հովիտներով։ Երբ քայլում էին՝ խփում էին, իսկ կանգնելու համար դադարում էին խփելուց։ Բոլորը միա-

սին քայլում էին և միասին կանգնում: [Աֆշինը] դանդաղ էր առաջ շարժվում: Ամեն անգամ, երբ մի լեռնային հետախույզ (քուհբանի) լուր էր բերում, նա առաջ էր շարժվում կամ կանգնում: Եթե ուզում էր [օրինակ] առաջանալ մինչև այն վայրը, ուր անցյալ տարի կռիվ էր եղել, թողնում էր Բուխարախուդային լեռնանցքի գլխին հազար ձիավորով ու վեց հարյուր հետիոտն զինվորներով՝ ճանապարհը պահպանելու, որպեսզի հունամյանները նրան հանկարծակիի չբերեն:

Բաբեկը, երբ զգում էր նրա գալուստը, իր մարդկանց մի խումբ էր ուղարկում, որ դարան մտնեն ձորում այդ լեռնանցքի տակ Բուխարախուդայի եղած տեղից ներքև: Աֆշինը աշխատում էր Բաբեկի դարանի վայրը իմանալ, սակայն չէր կարողանում: [Այն ժամանակ] նա հրամայեց Աբու Սաիդին, Ջաֆար ալ-հայյաթին և Ահմադ իբն ալ-հալիլին, որ ամեն մեկը ճեղքի կիրճը մի ձիավոր ջոկատով: Այսպիսով, այնտեղ կլինեք երեք ջոկատ տարբեր կողմերում: Բաբեկը դուրս էր բերում իր զորքը և կանգնում այդ ջոկատների կողքին, որպեսզի նրանցից ոչ մեկը առաջ գնալով չհասնի Բադդի գուռը: Նա իր զորքը դարան էր մտցնում և միայն քչերն էին մնում իր մոտ:

Աֆշինը նստում էր բարձր բլուրի վրա, որտեղից դիտում էր Բաբեկի պալատը, իսկ զորքը ջոկատներով [կանգնած էր]: Ով որ նրա հետ էր կիրճի կողմից, իջնում էր իր ձիուց, իսկ ով որ այն կողմում էր՝ Աբու Սաիդի, Ջաֆարի և Ահմադ իբն ալ-հալիլի հետ, թշնամուց հեռու չէր: Բաբեկը և իր մարդիկ գինի էին խմում և զուռնա նվագում: Աֆշինը կեսօրվա աղոթքից հետո վերադառնում էր խրամատները Ռուդ-ալ-Ռուդում, ընդ որում վերադառնում էր նախ և առաջ թշնամուն մոտիկ գտնվողը, ապա հաջորդը և ապա նրա հաջորդը, իսկ ամենավերջինը վերադառնում էր Բուխարախուդան, որովհետև նա թշնամուց ամենահեռուն էր կանգնած: Երբ նրանք վերադառնում էին, հուռամյանները գոռում-գոչում էին նրանց ետևից:

Սակայն մի օր հուռամյանները ձանձրացան ձգձգումից, իսկ Աֆշինը սովորականի նման գնաց. ձիավոր ջոկատները, որոնք կիրճի այն կողմում էին, երբ ետ դարձան և մնացել էր միայն Ջաֆար ալ-հայյաթը, հուռամյանները բացին Բադդի գուռը և [ռազմիկների] մի խումբ հարձակվեց Ջաֆարի զինվորների վրա: Աղաղակ բարձրացավ և Ջաֆարը անձամբ առաջ անցավ ու ետ մղեց հուռամյաններին դեպի Բադդի գուռը և լսողուկ բարձրացավ զորքի մեջ: Ետ դարձավ Աֆշինը և տեսավ Ջաֆարին ու զինվորներին կռվելիս: Երկու կողմից էլ առանձին մարդիկ դուրս եկան [կռվի]: Իսկ Աֆշինը իր տեղում նստած զայրանում էր Ջաֆարի վրա, ասելով՝ վրացրեց իմ ծրագիրը: Աղմուկը ավելի բարձրացավ և ահա Աբու Դուլաֆի հետ եղած կամավորները, առանց Աֆշինի հրամանի,

դիմեցին Զաֆարի կողմը և մոտեցան Բաղդի պարիսպներին, որոշ վնաս պատճառեցին և քիչ էր մնում, որ բարձրանան ու մտնեն Բաղդ:

Զաֆարը լուր ուղարկեց Աֆշինին, թե օգնիր ինձ հինդ հարյուր հետիոտն նետաձիգ զինվորներով, քանզի ես ուզում եմ, կամոքն ալլահի, մտնել Բաղդ: Աֆշինը լուր ուղարկեց, թե՝ դու իմ գործը փշաքրիր, կամաց-կամաց գլուխդ ազատիր, ազատիր նաև զինվորներդ և հեռացիր: Կամավորները աղմուկ բարձրացրին և մոտեցան Բաղդին: Բաբեկի դարանամուտ մարդիկ կարծեցին, որ կռիվը սկսվել է, և մի մասը Բուխարախուդայի [կանգնած տեղի] տակից դուրս ցատկեց, իսկ ուրիշները այլ կողմերից դուրս թռան: Բոլոր դարան մտած խուռամյանները շարժման մեջ մտան և ոչ ոք տեղում չմնաց, իսկ [Աֆշինի] զորքերը նրանց գլխի վերևում էին գտնվում:

Աֆշինն ասաց՝ փառք ալլահին, որ նրանց տեղերը (դարանը) հայտնի դարձրեց: Զաֆարը վերադարձավ իր մարդկանցով ու կամավորներով, եկավ Աֆշինի մոտ այգանեց նրան չօգնելու համար և նրանք խիստ լարվեցին իրար դեմ: Եկավ կամավորներից մեկը՝ բերելով մի քարի կտոր ու ասաց Աֆշինին՝ գու մեզ ետ կանգնեցրիր այն բանից հետո, երբ արդեն պարսպից քար էի պոկել: Ասաց [Աֆշինը], եթե գնաս կտեսնես, թե ովքեր էին քո ճանապարհին: Նկատի ունեն դարանը, որը Բուխարախուդայի մոտ էր: Նա ասաց Զաֆարին՝ եթե այս դարանամուտ մարդիկ հարձակվեին, ի՞նչ կլիներ այս կամավորների վիճակը: Ապա նա իր զինվորների հետ սովորականի նման վերադարձավ: Երբ նրանք տեսան այն դարանը, որ Բուխարախուդայի մոտ էր, հասկացան, թե ինչ է եղել իրենց թիկունքում, և եթե Բուխարախուդան առաջ շարժվեր, նրանք (դարանամուտ մարդիկ) այդ վայրը կգրավեին և մահմեդականները ամբողջովին կկոտորվեին:

Ապա Աֆշինը օրերով մնաց իր խրամատներում, իսկ կամավորները բողոքում էին նրան անասնակերի, մթերքի և ռոճիկի ուշացման պատճառով: Նա ասաց՝ ով կհամբերի, թող դիմանա, իսկ ով ոչ՝ ճանապարհը լայն է՝ թող գնա: Հավատացելոց իշխանի զորքը ինձ բավական է: Կամավորները հեռացան, ասելով՝ եթե Աֆշինը Զաֆարին և մեզ թողներ կգրավեինք Բաղդը, սակայն նա կամենում է ձգձգել: Նրան (Աֆշինին) հասան այս և այլ բամբասանքներ, որ կամավորները ասում էին նրա մասին: Նրանցից մեկը, նույնիսկ, պատմում էր մյուսներին՝ երազումս տեսա ալլահի առաքյալին, որն ինձ ասաց՝ ասա Աֆշինին, որ թող դրա (Բաբեկի) դեմ կռվի և լրջորեն զբաղվի այդ գործով, թե չէ կհրամայեմ, որ լեռները քեզ վրա քարեր տեղան: Մարդիկ խոսում էին այդ մասին և խոսքը հասավ Աֆշինին, որը կանչել տվեց նրան ու հարցրեց երազի մասին: Նա

պատմեց և նա ասաց՝ ալլահը գիտի իմ նպատակները և թե ինչ եմ կամենում այս ժողովրդին և եթե ալլահը որևէ մեկի վրա քարեր տեղար, ապա կտեղար այս անհավատի վրա և մեզ էլ կաղատեր նրանից: Կամավորներին մեկն ասաց՝ ով իշխան (ամիր) մի զրկիր մեղ նահատակ դառնալու [հնարավորությունից], քանի որ գա մեր առջև է: Մեր նպատակն է ալլահից վարձատրություն ստանալ և նրա երեսը տեսնել: Թող մեղ, մենակ առաջ գնանք քո թույլտվությամբ, չէ՞ որ ալլահը մեղ հաղթանակ կտա: Աֆշինն ասաց՝ տեսնում եմ, որ դուք պատրաստակամ եք և կարծում եմ, որ այն կամենում է բարձրյալն ալլահը և թող բարին կատարվի, բարձրյալն ալլահի կամքով: Տեսնում եմ, որ դուք և [խալիֆայի] զորքը եռանդուն եք, և ես այն չգիտեի նախապես, սակայն այս ժամին, երբ լսեցի ձեր խոսքերը (հասկացա): Որոշեցեք, ալլահի ողորմածությամբ, որ որը կուզեք, որպեսզի մենք նրա (Բաբեկի) գեմ դուրս գանք, քանզի ուժն ու ամրությունը միայն բարձրյալ և փառավորյալ ալլահի մեջ է: Նրանք դուրս եկան [Աֆշինի մոտից] ուրախությամբ լի և հեռանալ ուզողները արգեն մնացին: Աֆշինը նշանակեց նրանց [հարձակման] օրը և հրամայեց մարդկանց պատրաստվել: Նա հրամայեց դրամները, պարենը և ջուրը բառնալ, իսկ հիվանդների համար ջորիների վրա պատգարակներ պատրաստել: Նշանակված օրը նա զորքի հետ հարձակվեց, իսկ Բուխարախուդային թողեց իր տեղում՝ լեռնանցքի մոտ: Նույն տեղում նստելով, ուր նստում էր նախկինում, Աֆշինը հրամայեց Աբու Դուլաֆին՝ ասա կամավորներին որ կողմն ավելի հեշտ է նրանց համար, թող այնտեղ էլ տեղավորվեն: Ջաֆարին ասաց՝ ամբողջ զորքը քո առջև է՝ նետաձիգներ, նավթաձիգներ, վերցրու նրանցից, ում որ կամենում ես, գործի ալլահի ողորմածությամբ և շարժվիր որտեղից ուզում ես: Սա գնաց այն տեղը, ուր գտնվում էր [անցած] օրը: [Աֆշինը] ասաց Աբու Սաիդին՝ դու և քո զինվորները կանգնեցեք ինձ մոտ, իսկ Ջաֆարին ասաց՝ կանգնիր հենց այս տեղում և ցույց տվեց [ասելով]՝ եթե Ջաֆարը հետիոտն կամ ձիավոր զորք ուզենա, կօգնենք նրան:

Ջաֆարը կամավորների հետ առաջ անցավ և նրանք հարձակվեցին ու կռուցեցին Բադդի պարիսպներին: Ջաֆարը խփեց Բադդի դարպասին և այնտեղ կանգնեց կռվելով: Աֆշինը նրան և կամավորներին գրամ ուղարկեց, որպես չի բաժանեն նրանց, ովքեր առաջ կգնան. նաև գործավորներ ուղարկեց կացիներով, ինչպես նաև ջուր, որ շծարավեն և չոր խմորեղեն ու ցորենի ապուր: Դարպասի մոտ կոխվր երկարեց և հուռամյանները դարպասը բաց անելով դուրս եկան Ջաֆարի զորքի գեմ և ետ մղեցին դարպասից, իսկ մյուս կողմից նեղում էին կամավորներին, որոնց ետ շարտեցին պարսպից և ժայռեր նետեցին նրանց վրա: Նրանք այնքան

վնասներ պատճառեցին [կամավորներին], որ սրանք այլևս ի վիճակի չէին պատերազմելու: Ջաֆարն իր զինվորներից մոտավորապես հարյուր մարդու հետ կանգնեցին վահաններով պաշտպանված այնպես, որ պատենշ դարձան երկուսի միջև և ոչ մեկը մյուսին չէր կարող մերձենալ: Այսպես տևեց մինչև կեսօրվա աղոթքի ժամը և ապա նրանք ցրվեցին:

Աֆշինը իր մոտ եղած հետիոտն զորքն ուղարկեց կամավորներին, մի մասն էլ Ջաֆարին, որ չլինի թե թշնամին համարձակություն ունենա (ավելի նեղելու նրանց): Սակայն Ջաֆարն ասաց՝ ես [մարդկանց] պակասությունից չեմ նեղվում, այլ պարզապես կովելու համար հարմար տեղ չեմ տեսնում: [Աֆշինը] հրամայեց նրանց հեռանալ և նա հեռացավ: Աֆշինը հրամայեց վիրավորներին և նետված քարերից թուլացածներին բարձրացնել ջորիների պատգարակների վրա: Նրանք հեռացան և մարդիկ այդ տարում [քաղաքը] նվաճելուց հուսահատվեցին, իսկ կամավորների մեծ մասը ցրվեց:

Սակայն երկու շաբաթ անց Աֆշինը նորից պատրաստվեց: Նա կես գիշերին հազար հետիոտն նետածիգ ուղարկեց, որոնցից ամեն մեկին տվեց ջրի կաշե տոպրակ, չոր խմորեղեն, ինչպես նաև [նիզակին] շամրացված դրոշներ: Նրանց հետ դրեց ուղեցույցներ և նրանք դժվարանցանելի լեռներով, տարբեր ճամփաներով քայլեցին, մինչև որ հասան բլրի ետևը, որի վրա [ընդհանրապես] կանգնում էր Ագինը: Սա մի բարձր լեռ էր: [Աֆշինը] հրամայել էր, որ նրանք այնպես գնան, որ ոչ ոք չիմանա և երբ տեսնեն Աֆշինի դրոշները, աղոթքը կատարեն և հենց որ տեսնեն ճակատամարտի սկսվելը, ապա թող դրոշները հագցնեն նիզակների վրա, թմբուկները խփեն, իջնեն լեռից և նետեր ու քարեր արձակեն խուռամյաւնների վրա: Սակայն, եթե չտեսնեն [Աֆշինի] դրոշները, տեղից չշարժվեն, մինչև որ լուր ստանան: Այդպես էլ արեցին: Նրանք հասան լեռան կատարը կանուխ առավոտյան: Մի գիշեր Աֆշինը լուր ուղարկեց զինվորներին, որ պատրաստվեն կովի: Նա ուղարկեց Բաշիր ալ-Տուրքիին և ֆերդանացի զորավարներին, որոնք իր հետ էին, հրամայելով քայլել, մինչև որ հասնեն այն բլրի տակ, որի վրա գտնվում էր Ագինը: Նա գիտեր, որ Բաբեկը դարան է մտցրել այդ լեռան տակ:

Նրանք առաջ գնացին գիշերով և զորքի մեծ մասը այդ մասին չգիտեր: Իսկ ինքը և զորքը արշալույսին առավոտյան աղոթքը կատարեցին, թմբուկները զարկին և հեծան [ձիերը]: Նա եկավ այն վայրը, ուր միշտ կանգնում էր և, ըստ սովորության, նստեց: Բուխարախուդային հրամայեց, որ կանգնի Ջաֆար ալ-Խայյաթի, Աբու Սաիդի և Ահմադ իբն Խալիլ իբն Հիշամի մոտ, իսկ ինքը կանգնած մնաց իր տեղում: Այս բանը տարօրինակ թվաց զորքին: Նա հրամայեց, որ մոտենան այն բլրին, որի վրա

էր Ադինը և շրջապատել նրան, իսկ նախապես այդ բանը արգելում էր նրանց: Այս շորս զորավարների հետ շարժվեց նաև զորքը:

Ջաֆարը կանգնած էր [Բադդի] դարպասի մոտ, նրա կողքին՝ Աբու Սաիդը, վերջինիս կողքին՝ Բուխարախուդան, իսկ Ահմադը՝ Բուխարախուդայի մոտ: Նրանք բոլորվեցին բլրի շուրջը: Կիրճի ներքևից աղմուկ բարձրացավ և Բաբեկի դարանամուտ մարդիկ հարձակվեցին Բաշիր ալ-Տուրքիի և ֆերդանացիների վրա ու կռվի բռնվեցին նրանց հետ: Զորքը լսեց նրանց գոռում-գոչումը և ուզեց շարժվել, սակայն Աֆշինը մունետիկ ուղարկեց նրանց հայտնելու, թե Բաշիրն էր, որ գրգռել էր դարանամուտ մարդկանց, ուստի ոչ ոք թող տեղից չշարժվի և նրանք լռեցին:

Իսկ այն մարդիկ, որոնց [Աֆշինը] տարել էր լեռան կատարը, երբ զորքի գոռում-գոչումը լսեցին գրոշները ամրացրին նիզակների ծայրին: Տեսավ զորքը, թե ինչպես դրոշները գլորվում (գրոհում) են լեռից ցած Ադինի ձիավորների վրա: Ադինը իր մարդկանց ուղարկեց նրանց դեմ, իսկ Ջաֆարը իր մարդկանցով Ադինի վրա հարձակվեց, մինչև որ բարձրացան նրա մոտ և այնպիսի ուժեղ հարվածներ տվեցին, որ ստիպեցին իջնել ձորը: Աբու Սաիդի զորքի մի մասն էլ հարձակվեց, սակայն պարզվեց, որ նրանց ձիերի ոտքերի տակ հորեր են փորված, որոնց մեջ ընկան ձիավորները: Աֆշինը գործավորներ ուղարկեց, որ լցնեն հորերը և նրանք այդպես էլ արեցին: [Մահմեդական] զորքը սաստիկ հարձակում գործեց նրանց վրա: Ադինը լեռան վրա պատրաստել էր մի սայլ, որի վրա ժայռաբեկորներ կային և ահա, երբ զորքը հարձակվեց, նա ցած գլորել տվեց սայլը: Զորքը ետ քաշվեց այնպես, որ [բարերր] ցած գլորվեցին: Ապա զորքը հարձակվեց ամեն կողմից:

Երբ Բաբեկը տեսավ, որ իր զորքը ամեն կողմից շրջապատված է, դուրս եկավ Բադդի այն կողմը, ուր Աֆշինն էր: Եկավ նրա կողմը և Աֆշինին ասացին, թե Բաբեկը դիմում է քեզ: Սա մոտեցավ այնքան, որ կարող էր լսել նրա և զորքերի խոսքերը, իսկ Ադինի շուրջը կռիվը շարունակվում էր:

[Բաբեկն] ասաց՝ ուղում եմ երաշխավորադիր ստանալ հավատացելոց իշխանից:

Աֆշինն ասաց՝ ես քեզ առաջարկել էի այն և դա քեզ կտրվի, երբ որ կամենաս:

Ասաց նրան [Բաբեկը]՝ հիմա եմ ուզում, միայն այն պայմանով, որ ինձ ժամանակ տաս ընտանիքս դուրս բերելու և պատրաստվելու:

Աֆշինն ասաց՝ խորհուրդ եմ տալիս այսօր դուրս գալ և ոչ վաղը: Ասաց՝ ընդունում եմ:

Ասաց Աֆշինը՝ ապա ուղարկիր պատանդներին:

Ասաց՝ այո, այսինչն ու այնինչը գտնվում են այդ բլրի վրա, հրամայիր մարդկանցդ, որ կռիվը դադարեցնեն:

Եկավ Աֆշինի սուրհանդակը, որպեսզի մարդկանց ետ կանգնեցնի [կռվից], սակայն ասացին նրան՝ ֆերդանացիք դրոշներով արդեն մտան Բադդ և բարձրացել են դղյակը: Այն ժամանակ [Աֆշինը] ձին նստեց և մարդկանց կանչելով մտավ [քաղաքը] և նրանք էլ ետևից մտան: Զորքը դրոշներով բարձրացավ Բաբեկի դղյակը: Այնտեղ իր շորս պալատներում [Բաբեկը] դարան էր մտցրել վեց հարյուր մարդ, որոնք դուրս եկան [հարձակվող] զորքի դեմ և կռվի բռնվեցին: Իսկ Բաբեկը սրանից օգտվելով անցավ, մինչև որ աննկատելի մտավ կիրճը, որը Հեշտադսաբից այն կողմ էր:

Աֆշինը և նրա զորքը կռվում էին դղյակների դռների մոտ: Նա բերել տվեց նավթաձիգներին, որոնք հրկիզեցին այն և զորքը քանդեց դղյակները ու բոլոր հուռամյաններին կոտորեց: Աֆշինը գերի վերցրեց Բաբեկի որդիներին ու ընտանիքը (կանանց): Նա այնտեղ մնաց մինչև երեկո և զորքին հրամայեց ցրվել ու նրանք վերադարձան Ռուդ ալ-Ռուդի խրամատները:

Իսկ Բաբեկը, Աֆշինի դուրս գալուց հետո, իր ընկերակիցների հետ վերադարձավ Բադդ և նրանք ուտելիք ու դրամ վերցրին ինչքան որ կարող էին:

Մյուս օրը Աֆշինը կրկին եկավ Բադդ և հրամայեց [լրիվ] կործանել դղյակները և հրկիզել այնպես, որ ոչ մի տուն չմնա:

Նա գրեց Հայաստանի բոլոր թագավորներին ու պատրիկներին, իմաց տալով, որ Բաբեկը մի քանի հոգու հետ փախել է և կանցնի նրանց կողմերով: Նա հրամայեց նրանց, որ հսկողություն սահմանեն իրենց գավառներում և ոչ ոքի չթողնեն առանց ստուգման անցնել այդ կողմերով:

Եկան Աֆշինի լրտեսները և նրան տեղեկացրին, թե որտեղ է Բաբեկը: Սա մի ծառաշատ և առատ խոտով կիրճի մեջ էր, որի ծայրը Ատրպատականի կողմն էր, մյուս՝ ծայրը՝ Հայաստանի: Զիեբը չէին կարող այնտեղ իջնել և եթե մեկը թաքնվեր, չէր երևա ծառերի ու ջրերի առատության պատճառով: Այդ կիրճը կոչվում էր Ղայդա (Թավուտ): Աֆշինը կիրճը տանող բոլոր ճամփաներին խմբեր (դասակներ) նշանակեց՝ պահպանության համար, և դրանք տասնհինգ խումբ էին:

Այդ ժամանակ հասավ Մուսասիմ [խալիֆայի] հրովարտակը Բաբեկին երաշխավորագիր շնորհելու մասին: Աֆշինը կանչեց Բաբեկի մարդկանցից նրանց, որոնց երաշխավորագիր էր տվել և տեղեկացրեց այդ մասին, հրամայելով, որ այդ գրությունը գնան նրա մոտ: Նրանց հետ էր

նաև [Բաբեկի] որդին: Սակայն ոչ ոք չհամարձակվեց գնալ՝ վախենալով նրանից: [Աֆշինը] ասաց՝ նա կուրախանա այդ երաշխավորագրի համար: Նրանք պատասխանեցին՝ մենք քեզանից լավ չիտենք նրան: Ապա երկու մարդ ելան ու ասացին՝ երաշխավորի, որ մեր ընտանիքին կհոգաս [եթե սպանվենք]: Նա երաշխավորեց նրանց և վերցնելով գրությունը գնացին: Երբ նրան (Բաբեկին) տեսան, տեղեկացրին, թե ինչու են եկել: Նա մեկին սպանեց, իսկ մյուսին հրամայեց, որ այդ գրությամբ վերադառնա Աֆշինի մոտ: Նրա որդին այդ երկուսի հետ նամակ էր ուղարկել նրան, իսկ նա ասաց՝ ասա այդ անառակ կնոջ որդուն, որ, եթե իմ որդին լինեիր, ինձ հետ կգայիր, սակայն դու իմ որդին չես: Լավ է, որ մեկ օր ապրեիր որպես ազատ մարդ, քան թե քառասուն տարի՝ որպես ստոր:

Նա մնաց իր տեղում այդ թավուտի մեջ, մինչև որ պարենը վերջացավ: Նա դուրս եկավ [դիտելու] վերոհիշյալ ճանապարհներից մեկը, որի պահապան զինվորները մի քիչ հեռացել էին, թողնելով միայն չորս հոգու՝ հսկողության համար: Մի օր կեսօրին Բաբեկը իր մարդկանց հետ դուրս եկավ և շտեպնելով ոչ զորք և ոչ էլ այն պահապաններին, որոնք հսկում էին, կարծեց մարդ չկա: 'Դուրս եկավ նա, նրա եղբայրները՝ Աբդալլահը, Մուավիան, մայրը և մի կին: Նրանք շարժվեցին, կամենալով գնալ Հայաստան: Նրանց տեսան պահակները և լուր ուղարկեցին իրենց ընկերներին, թե նկատեցին անծանոթ ձիավորների: Սրանց պետն էր Աբու-լ-Սաջը: Նրանք ձի նստեցին և գնացին նրա կողմը, տեսան Բաբեկին ու ընկերակիցներին, որոնք մի ջրի մոտ ճաշում էին: Տեսնելով զորքը, [Բաբեկը] ձի նստեց իր ընկերակիցների հետ: Նա փրկվեց [սակայն] Մուավիան, Բաբեկի մայրը և այն մյուս կինը բռնվեցին: Աբու-լ-Սաջը նրանց ուղարկեց Աֆշինին:

Իսկ Բաբեկը գնաց Հայաստանի լեռները թաքնվելու: Նա ուտելիքի կարիք չգաց, սակայն Հայաստանի պատրիկները պահպանում էին իրենց գավառները, կարգադրելով, որ եթե որևէ մեկը անցնի, բռնեն ու ստուգեն: Բաբեկը սովածացավ և մի կիրճի մեջ տեսնելով մի հողագործի, ասաց իր ծառային՝ իջիր այդ հողագործի մոտ, վերցրու քեզ հետ գինարներ ու դիրհեմներ ու եթե հաց ունի, գնիր նրանից: Հողագործը մի ընկերունք, որն ինչ-որ կարիքի համար տեղ էր գնացել և երբ ծառան իջավ հողագործի մոտ նրանից ուտելիք վերցնելու, հողագործի այն ընկերը տեսավ և կարծելով, որ նա բռնի է վերցնում. ինչ որ վերցնում է, գնաց դիմավորական պահակակետը և իմաց տվեց, թե սրով ու զենքով զինված մի մարդ հափշտակել է իր ընկերոջ հացը: Սմբատի որդու (Իբն Սինբաթ) լեռներում գտնվող այս պահակակետի հրամանատարը տեղեկացրեց Սահլիբն Սինբաթին: Սա մի ջոկատով եկավ և հասավ հողագործին, իսկ ծառան

դեռ նրա մոտ էր: Նա հարցրեց նրան և հողագործը պատմեց պատահածը: Մառան պատմեց իր տիրոջ մասին և առաջնորդեց նրա մոտ: Երբ նա (Սահլ իբն Սինբաթը) տեսավ Բաբելի դեմքը, ճանաչեց, իջավ ու համբուրեց նրա ձեռքը, ասելով՝ ո՞ւր ես ուղում գնալ: Ասաց՝ Ռումի երկիրը: Ասաց՝ չես գտնի մի մարդ, որ ինձնից ավելի գնահատի քեզ, ես խալիֆայի (սուլթան) հետ գործ չունեմ: Այստեղի բոլոր պատրիկները քո հարազատներն են, դու նրանց [կանանցից] զավակներ ես ունեցել:

Բանն այն է, որ Բաբելը հենց որ իմանում էր, թե [պատրիկներից] որևէ մեկը գեղեցիկ կին ունի, պահանջում էր¹³², Եթե ուղարկեին նրան [գործը դրանով վերջանում էր], ապա թե ոչ՝ լույսը չբացված գնում էր, խլում նրան (կնոջը) և կողոպտում ունեցվածքն ու վերադառնում: Սմբատի որդին այնպես խաբեց նրան, որ նա գնաց մինչև նրա ամրոցը, իսկ իր եղբորը Աբդալլահին ուղարկեց Ստեփանոսի (Իսթիֆանուսի) բերդը:

Սմբատի որդին Աֆշինին լուր ուղարկեց այդ մասին և Աֆշինը գրեց նրան խոստումներ անելով ու հույսեր տալով: Նա ուղարկեց Աբու Սաիդին և Բուրմարային (Բուղբարա) իրենց ջոկատներով ու հրամայեց նրանց հնազանդ լինել [իբն Աինբաթին]: Սմբատի որդին հրամայեց նրանց իր նշանակած տեղում նմալ և ասաց՝ տեղից չշարժվեք, մինչև որ իմ սուրհանդակը գա և կանեք այն, ինչ որ կասի ձեզ:

Ապա նա ասաց Բաբելին՝ երևի ձանձրացար այս բերդից, եկ իջնենք որսի: Բաբելը համաձայնեց, բայց հենց որ բերդից իջան, Սմբատի որդին իմաց տվեց Աբու Սաիդին ու Բուրմարային՝ հրամայելով, որ նրանցից մեկը գա կիրճի մի կողմից, իսկ մյուսը՝ այլ կողմից: Բանն այն է, որ նա չէր ուզում իր ձեռքով (Բաբելին) նրանց հանձնել: Մինչդեռ Բաբելը և Սմբատի որդին որսում էին, նրանց վրա հարձակվեցին Աբու Սաիդը և Բուրմարան իրենց ջոկատներով: Բաբելի վրա կար սպիտակ քաթանե շապիկ: Նրանք երկուսին էլ բռնեցին, հրամայելով Բաբելին իջնել: Նա ասաց՝ ովքեր եք դուք: Ասաց՝ ես Աբու Սաիդն եմ, իսկ սա այնինչն է: Նա իջավ, ապա ասաց Սմբատի որդուն վատ խոսքեր և հայհույանքներ¹³³, ավելացնելով՝ դու ինձ ծախեցիր հրեաներին շնչին բանի դիմաց, եթե դրամ էիր ուզում, ես քեզ ավելին կտայի, քան նրանք են քեզ տալիս:

Աբու Սաիդը ձիու վրա նստեցրեց նրան և տարան Աֆշինի մոտ: Երբ մոտեցան զորքին, Աֆշինը վերև բարձրացավ ու նստեց [մի գահի], դիտելով նրանց: Նա իր զորքը երկու շարք կանգնեցրեց ու հրամայեց Բաբելին իջեցնել ու երկու շարքի մեջտեղից քայլեցնել: Աֆշինը նրան մտքորեն մի տուն և պահապաններ նշանակեց:

Սմբատի որդին Սահլը (իբն Սինբաթ)¹³⁴ (Բաբելի) հետ ուղարկել էր իր Մուավիա որդուն, որին Աֆշինը հարյուր հազար դիրհեմ տվեց, իսկ

Սահլին հրամայեց տալ մեկ միլիոն դիրհեմ, թանկարժեք քարերից ընդելուզված մի գոտի և պատրիկություն թագ¹³⁵։

Աֆշինը իսա իրն Յունիս իրն իսթաֆանուսին¹³⁶ լուր ուղարկեց, պահանջելով Բաբեկի եղբորը՝ Աբդալլահին։ Սա ուղարկեց նրան և [Աֆշինը] նրան բանտարկեց եղբոր հետ։ Ապա այդ մասին գրեց Մուտասիմին, իսկ վերջինս հրամայեց երկուսին էլ բերել իր մոտ։

Բաբեկը հասավ Բարզանդ՝ Աֆշինի մոտ, Շավվալ ամսվա վերջին տաս օր մնացած։ Աֆշինն ազատ արձակեց բազմաթիվ կանանց ու երեխաների, որոնք վկայեցին, որ Բաբեկը գերել էր նրանց, իսկ նրանք արաբ և գեհկան ազատներ էին¹³⁷։ Նա հրամայեց նրանց հատկացնել մի մեծ փարախ ու հրամայեց, որ գրեն ու գտնեն իրենց հարազատներին։ Ով գալիս ու ճանաչում էր իր կնոջը, երեխային կամ հարճին և երկու վկա գտնում, տանում էր նրան։ Այսպիսով, մարդիկ շատերին տարան, սակայն շատերն էլ մնացին։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(3 դեկտեմբեր 837—22 նոյեմբեր 838)

էջ 245—246

ԱՖՇԻՆԻ ԲԱԲԵԿԻ ՀԵՏ ԳԱԼԸ

Այդ տարում Աֆշինը եկավ Սամարա և իր հետ բերեց Բաբեկ ալ-Խուռամիին և եղբորը՝ Աբդալլահին, քսաներեք թվականի Սաֆար [ամսին]։

Այդ օրվանից, երբ Աֆշինը դուրս եկավ Բարզանդից, մինչև Սամարա հասնելը Մուտասիմ [խալիֆան] ամեն օր մի թանկարժեք զգեստ (խիլա) և մի նժույգ էր ուղարկում։ Երբ Աֆշինը հասավ Հուզայֆայի կամուրջը, նրան դիմավորեցին Մուտասիմի որդին՝ Հարուն ալ-Վասիկը և Մուտասիմի ամբողջ տունը։ Աֆշինը Բաբեկին վերցրեց իր մոտ՝ Մաթիրայի պալատը։ Նրա մոտ եկավ Ահմադ իբն Աբու Դուազը ծպտված նայեց Բաբեկին, խոսեց նրա հետ ու վերադարձավ Մուտասիմի մոտ նկարագրեց նրան։ Նրա մոտ եկավ նաև Մուտասիմը ծպտված ու տեսավ նրան։

Մյուս օրը Մուտասիմը հանդիսավոր հավաք կազմակերպեց։ Մարդիկ շարժվեցին Հասարակաց դռնից (Բաբ ալ-Ամմա) մինչև Մաթիրա։ Մուտասիմը նրան (Բաբեկին) անարգանքի ենթարկեց, հրամայեց փղի վրա նստել։ Նա նստեց և ժողովուրդը նրան ընկերակցեց մինչև Հասարակաց դուռը։

Մուհամմադ իբն Աբդ ալ-Մալիք ալ-Ջայյատն ասաց.

Փղին զարդարել են ըստ սովորության,

նա տանում է հորասանի սատանային,

Չէ՞ որ զարդարվում է մարմինը փղի
Միայն հանդիսավոր դեպքերում:

Ապա Բաբեկին բերեցին Մուտասիմի ապարանքը¹³⁸: Նա հրամայեց բերել Բաբեկի դահճին, ու հրամայեց կտրել նրա ձեռքերն ու ոտքերը: Նա կտրեց և սա ընկավ: Ապա հրամայեց զլխատել նրան ու գլխաթեց նրան: Նրա փորը պատռել տվեց և գլուխը ուղարկել տվեց Խորասան, իսկ իրանը խաշել տվեց Սամառայում: Նա հրամայեց նրա եղբորը՝ Աբդալլահին, տանել Իսհակ իբն Իբրահիմի մոտ՝ Բաղդադ ու հրամայեց վերջինիս անել այն, ինչ որ ինքը Բաբեկին էր արել: Նա այդպես էլ վարվեց՝ կտրեց գլուխը և նրան խաշեց արևելյան կողմում՝ երկու կամուրջների միջև:

Պատմում են, որ Աֆշինը Բաբեկի դեմ կռվի ժամանակ, բացի պարենից, նվերներից և օժանդակությունից, ամեն մի օրվա համար, որ ձի էր նստում ստացել էր հազար դիրհեմ, իսկ այն օրը, որ ձի չէր նստում՝ հինգ հարյուր դիրհեմ: Քսան տարում Բաբեկի կողմից բոլոր սպանվածների թիվն էր երկու հարյուր հիսունհինգ հազար և հինգ հարյուր մարդ: Հաղթել էր հետևյալ զորավարներին՝ Յահիա իբն Մուադ, Իսա իբն Մուհամմադ իբն Աբի Խալիդ, Ահմադ իբն ալ-Ջունայդ, որին գերել էր. Ջուրայկ իբն Ալի իբն Սադակա, Մուհամմադ իբն Հումայդ ալ-Թուսի և Իբրահիմ իբն ալ-Լայս: Բաբեկի հետ գերի ընկան երեք հազար երեք հարյուր ինն մարդ, իսկ նրա ձեռքում գերի ընկած յոթը հազար վեց հարյուր մահմեդական կանայք ու երեխաներ ազատվեցին: Աֆշինի ձեռքն ընկան Բաբեկի որդիներից տասնյոթ հոգի, աղջիկներից ու կանանցից՝ քսաներեք կին:

Երբ Աֆշինը հասավ, նրան դիմավորեց Մուտասիմը, հագցրեց երկու ակնազարդ սուր¹³⁹, նվիրեց քսան միլիոն գիրհեմ, իսկ տասը միլիոն բաժանեց նրա ղորքին, նրան զորահրամանատար նշանակեց Սինդ նահանգում ու բանաստեղծներ հատկացրեց, որ ներբողեն նրան:

էջ 246—247

ՀՈՌՈՄՆԵՐԻ՝ ԶԱՊԵՏՐԱՅԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այգ տարում Ռումի թագավոր Միքայելի որդի Թեոփիլոսը (Տուֆիլ) հարձակման դուրս եկավ իսլամի երկրի դեմ: Նա հարձակվեց Զապետրայի (Զիբաթրա) և այլ վայրերի բնակիչների վրա:

Բանն այն էր, որ երբ Բաբեկը նեղվեց Աֆշինից և կորստյան սպառնալիքի տակ էր, գրեց Ռումի Թեոփիլոս թագավորին, տեղեկացնելով, որ Մուտասիմն իր դեմ է ուղարկել բոլոր զորքերն ու ռազմիկներին, նույն-

իսկ իր դերձակին, այսինքն՝ Ջաֆար իրն Դինար ալ-Խայյաթին¹⁴⁰ և խոհարարին, այսինքն՝ Իտախին, այնպես որ իր դռանը մարդ չի մնացել։ Ուստի, եթե կամենում ես հարձակվել, քեզ խանգարող չի լինի։ Բաբեկը մտածում էր, որ եթե Ռումի թագավորը շարժվի, ապա իր վիճակը մասամբ կթեթևանա, քանի որ Մուտասիմն իր զորքը կուղարկի Ռումի դեմ։

Թեոփիլոսը ելավ հարձակման հարյուր հազարով։ Ասվում է, որ նրանց մեծ մասը [կանոնավոր] զորք էր, մոտավորապես յոթանասուն հազար, իսկ մնացածները՝ հպատակներ։ Սրանց հետ էին նաև Մուհամմիրաներ¹⁴¹, որոնք լեռներն էին բարձրացել և հասել հոռոմների մոտ, երբ նրանց դեմ կռվում էր Իսհակ իբն Իբրահիմ իբն Մուսաբը։

[Թեոփիլոսը] հասավ Զապետրա, կոտորեց տղամարդկանց, իսկ երեխաներին ու կանանց գերեվարեց։ Հարձակվեց Մալաթիայի ու մահմեդականների այլ բերդերի բնակիչների վրա, գերեվարեց մահմեդական կանանց, իր առջև բերել տվեց գերիներին ու կուրացրեց, քթերն ու ականջները կտրել տվեց։ Նրանց դեմ դուրս եկան Ասորիքի ու Զազիրայի Սահմանային զոտու բնակիչները, բացի նրանցից, ովքեր շունեին գրաստ կամ զենք։

էջ 247—251

ԱՄՈՐԻՈՆԻ (ԱՄՄՈՒՐԻՅԱ) ԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Երբ Ռումի թագավորը հարձակվեց և իսլամի երկրում գործեց վերոհիշյալ գործերը, լուրը հասավ Մուտասիմին, որը երբ լսեց, զայրացավ ու կատաղեց։ Նա լսեց, որ Հաշիմի ընտանիքից մի կին հոռոմների ձեռքը գերի ընկնելիս գոչել է՝ ով Մուտասիմ, իսկ նա իր դահից գոչեց՝ լսում եմ, լսում եմ, և անմիջապես վեր կենալով գոռաց իր պալատում՝ շեփորը, շեփորը։ Ապա նստեց իր ձին, որից կախված էր մի շղթա, խոփ և տոպրակ, սակայն չէր կարող երթի դուրս գալ, մինչև չպատրաստվեր ու զորքերը չհավաքեր։

Նա նստեց Հասարակաց պալատում (Դար ալ-Ամմա)¹⁴², կանչեց Բադդադի դատավորին, որը Աբդ ալ-Ռահման իբն Իսհակն էր և Շուբա իբն Սահլին, որոնց մոտ երեք հարյուր քսանութ հոգի կար արդարադատության մարդկանցից։ Նա վկա դարձրեց նրանց իր վակֆ¹⁴³ հայտարարած կավածքների համար։ Մեկ երրորդը տվեց իր որդուն, մեկ երրորդը՝ բարձրյալն ալլահին, իսկ մեկ երրորդը՝ իր մանուկներին¹⁴⁴։

Ապա շարժվեց գնաց Տիգրիսից արևմուտք Զումազա Ա (31 մարտ—29 ապրիլ) ամսվա վերջին երկու օր մնացած։ Նա Ուջայֆ իբն Անբասային, Օմար ալ-Ֆարղանիին, Մուհամմադ Քուտահին և մի խումբ զորավարների

ուղարկեց Զապետրա՝ օգնելու նրա բնակիչներին: Նրանք [հասնելով] տեսան, որ Ռումի թագավորը հեռացել էր իր երկիրը, գործելուց հետո այն, ինչ որ ասացինք: Նրանք որոշ ժամանակ սպասեցին, մինչև որ մարգիկ վերադարձան իրենց գյուղերն ու ապահով դարձան:

Երբ Մուտասիմը հաղթեց Էաբեկին, ասաց՝ Ռումի ո՞ր քաղաքը ավելի անառիկ է և ամուր: Ասացին՝ Ամորիոնը, դեռ ոչ ոք չի գրավել այն իսլամի երևան գալուց հետո: Դա քրիստոնյաների լավագույն քաղաքն է և Կոստանդնուպոլսից ավելի պատվական:

Մուտասիմը շարժվեց Սուռա Ման Ռաաից (Սամառայից): Պատմվում է, որ նրա երթը քսաներկու թվականին էր, ասվում է նաև, թե քսանչորսին (838/839) էր: Նա այնպես պատրաստվեց, որ իրենից առաջ ոչ մի խալիֆա այդպես չէր պատրաստվել: Նա պատրաստել էր զենքեր, սարքավորումներ, մեքենաներ, հաց (ուտելիք), ջրամաններ, ջրի տիկեր և այլ բաներ: Առաջապահ դարձրեց Իշնասին (Աշինաս), որին հետևում էր Մուհամմադ իբն Իբրահիմ իբն Մուսաբը, աջ կողմում՝ Իտախին, ձախ կողմում՝ Զաֆար իբն Դինար իբն Աբդալլահ ալ-Խայյաթին, իսկ կենտրոնում՝ Ուջայֆ իբն Անբասային:

Երբ [Մուտասիմը] մտավ Ռումի երկիրը, իջևանեց ալ-Սինն գետի ափին, որը Սելեկիայի (Սալուկիյա) վրա էր, ծովի մոտ, նրա և Տարսոնի միջև մի օրվա ճանապարհ էր և այնտեղ էր լինում գերիների փոխանակումը: Մուտասիմը Աֆշինին ուղարկեց Սարուջ, հրամայեց ներխուժել Դարբ ալ-Հադասից (Հադասի լեռնանցք), նշանակելով օրը, երբ պետք է մտնելու և այն օրը, երբ պետք է իրար հանդիպեն:

Նա Իշնասին ուղարկեց Տարսոնի լեռնանցքը և հրամայեց՝ իրեն սպասել Սաֆսաֆի մոտ: Իշնասը դուրս եկավ Ռաջաբ (29 մայիս—27 հունիս) ամսվա վերջից երկու օր առաջ: Մուտասիմը Իշնասի ետևից ուղարկեց Վասիֆին, իսկ ինքը շարժվեց Ռաջաբ [ամսի] վերջից վեց օր մնացած (23 մայիս): Երբ Իշնասը հասավ Մարջ ալ-Ուսկուֆ [Կիլիկիայում], ստացավ Մուտասիմի նամակը Մաթամիրից, որի մեջ տեղեկացնում էր, որ Ռումի թագավորը իր առջև է և որ ինքը կամենում է նրա վրա հանկարծակի հարձակվել ու հրամայում էր մնալ տեղում, մինչև որ ինքը հասնի նրա մոտ: Նա մնաց երեք օր:

Նրան (Իշնասին) տեղեկացրին, որ [Ռումի] թագավորը երեսուն օրից ավելի է, որ սպասում է Մուտասիմի առաջապահ զորքին, որպեսզի հարձակում կատարի, սակայն նա լուր էր ստացել, թե նրա երկիրը մտել է մի մեծ բանակ Ալմենիակոնի (Արմինիակ) կողմից, այսինքն՝ Աֆշինի բանակը:

Մուտասիմն իշնասի ետևից ուղարկեց Վասիֆին, իսկ ինքը՝ Մուտասիմը, շարժվեց Ռաջաբ [ամսվա] վերջին վեց օր մնացած:

.....

Զորքը բերեց գերի ընկած ռազմիկների և գերեվարած խայտաբղետ ժողովրդին: Մուտասիմը հրամայեց ազնվականներին անջատել մնացածներից: Նա հրամայեց ավարը վաճառել մի քանի տեղերում, և հինգ օրից ավելի վաճառք կատարվեց, իսկ մնացածը նա հրամայեց վառել: Որևէ բան վաճառելիս միայն երեք անգամ էին ձայն տալիս, ապա անմիջապես վաճառում, որպեսզի արագ վերջանա: Իսկ ստրուկներին հինգ-հինգ կամ տաս-տաս էին աճուրդի հանում արագության համար:

Ավարը վաճառելու օրերին զորքը հարձակվեց ավարի վրա, սակայն Մուտասիմն իր ձին հեծած, սուրը ձեռքին, սրընթաց վազեց նրանց վրա և նրանք ետ քաշվեցին ու հրաժարվեցին կողոպուտից:

Նա [Մուտասիմը] վերադարձավ իր վրաններն ու նրա հրամանով Ամորիոնը կործանվեց ու հրկիզվեց: Նա պաշարումը սկսել էր Ռամադանի (27 հուլիս—25 օգոստոս) վերջին վեց օր մնացած և այն պաշարել էր հիսունհինգ օր: Նա գերի ընկածներին բաժանեց իր զորավարներին, իսկ ինքը գնաց Տարսոն:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(23 նոյեմբեր 838—11 նոյեմբեր 839)

էջ 257

ԱՖՇԻՆԻ ԱԶԳԱԿԱՆ ՄԱՆՔԻՋՈՒՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Աֆշինը Բաբեկի գործը վերջացրեց և վերադարձավ Սամառա. իր իշխանության տակ գտնվող Ատրպատականի կառավարիչ նշանակեց Մանքիջուրին (Մանգիջաուր), որը նրա ազգականներից էր: Սա Բաբեկի գյուղերից մեկում հսկայական գումար էր գտել, բայց չէր հայտնել ո՛չ Մուտասիմին, ո՛չ էլ Աֆշինին: Այդ մասին փոստի տերը (պաշտոնյան) գրեց Մուտասիմին, սակայն Մանքիջուրը նույնպես գրեց, հերքելով նրան, և նրանց միջև վեճ սկսվեց: Մանքիջուրն ուզեց սպանել նրան, սակայն Արգաբիլի բնակիչները արգելեցին և Մանքիջուրը կռվի բռնվեց նրանց հետ: Այս բանը լսելով Մուտասիմը հրամայեց Աֆշինին հեռացնել Մանքիջուրին և հսկայական զորքով ուղարկեց մի զորավարի: Երբ Մանքիջուրն

այս բանը լսեց ապստամբեց [խալիֆայի դեմ] և հավաքելով թափառական հանցագործներին (սաալիք), դուրս եկավ Արդաբեյլից, սակայն [հիշյալ] զորավարը նրա դեմ դուրս գալով փախուստի մատնեց նրան: Նա գնաց Ատրպատականի բերդերից մեկը, որը Բաբեկը քանդել էր և այն վերակառուցեց, նորոգեց, այնտեղ ամրացավ և մի ամիս մնաց, սակայն նրա զորքը ընդվզեց նրա դեմ ու նրան հանձնեց զորավարին: Սա տարավ նրան Սամառա, և Մուտասիմը նրան բանտարկեց, իսկ Աֆշինին մեղադրեց այդ գործի համար: Նրա (Մանքիջուրի) բերվելը տեղի ունեցավ երկու հարյուր քսանհինգ թվականին:

Ասվում է, թե Մանքիջուրի մոտ ուղարկված զորավարը Բուղա ալ-Քաբիրն էր (ավագ Բուղան) և թե Մանքիջուրը նրան հանձնվեց երաշխավորագիր ստանալով:

էջ 258

ԱՔԴԱԼԼԱՀԻ՝ ՄՈՍՈԼԻՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՆՇԱՆԱԿՎԵԼԸ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այդ տարում Մոսուլի¹⁴⁶ նահանգում ապստամբեց քրդերի առաջնորդներից մեկը, որի անունն էր Ջաֆար իրն Ֆահրջաս, որին հետեց քրդերի և այլ խռովարարների մի մեծ խումբ: Մուտասիմը Մոսուլի կառավարիչ նշանակեց Աբդալլահ իբն ալ-Սայյիդ իբն Անաս ալ-Ադդին և հրամայեց պայքարել Ջաֆարի դեմ:

Աբդալլահը եկավ Մոսուլ, իսկ Ջաֆարը տիրել էր Մատիսին: Աբդալլահը գնաց նրա դեմ ու կռվեց և դուրս հանեց Մատիսից: Սա դիմեց Դասին լեռը ու ամրացավ մի բարձրաբերձ անմատչելի վայրում, որը մենք ճանապարհ ունենք: Աբդալլահը այնտեղ էլ գնաց և թափանցեց կիրճերը, մինչև որ հասավ նրան ու կռվեց նրա հետ: Ջաֆարը և նրան ընկերակցող քրդերը նեղեցին Աբդալլահին, քանի որ այդ վայրերը իրենց ծանոթ էին և ընդունակ էին կռվելու առանց ձիու: Աբդալլահը փախուստի դիմեց, իսկ նրա հետ եղածների մեծամասնությունը սպանվեց:

Սակայն նրանցից մեկը, որի անունն էր Ռիբահ, կարողացավ քրդերին նեղ վիճակի մեջ դնել, ճեղքեց նրանց շարքերը, խոցեց ու կոտորեց նրանց և նրանց թիկունքի կողմն անցնելով կարողացավ նրանց ուշադրությունը շեղել իր ընկերներից, այնպես որ ով կարողացավ, ազատվեց: Քրդերը կուտակվեցին նրա շուրջը, իսկ նա լեռան կատարից իրեն նետեց իր ձիու վրա: Ներքևում գետ կար, ձիւն ընկավ գետի մեջ, իսկ Ռիբահը փրկվեց:

Ջաֆարի ձեռք գերի ընկածների մեջ կար երկու մարդ. որոնցից մեկի անունն Իսմայիլ էր, իսկ մյուսինը՝ Իսհակ իբն Անաս: Առաջինը

Աբղալլահ իբն Սալլիդի հորեղբայրն էր, իսկ Իսհակը Ջաֆարի փեսան էր: Ջաֆարը բերել տվեց նրանց իր մոտ: Իսմայիլը կարծում էր, որ իրեն կսպանի, իսկ Իսհակին՝ ազգակից լինելու պատճառով չի [սպանի]: Նա [Իսմայիլը] ասաց՝ ով Իսհակ, երեսաներիս քեղ եմ թողնում: Իսհակը պատասխանեց նրան՝ կարծու՞ ես, որ կսպանվեմ, իսկ ես քեզանից հետո կմնա՞մ: Ապա շուռ գալով Ջաֆարին ասաց՝ խնդրում եմ ինձ սպանիր նրանից առաջ, որպեսզի նրա սիրտը հանգստանա: Եվ նա [Ջաֆարը] նախ սրան սպանել տվեց և ապա Իսմայիլին:

Երբ Մուտասիմը այս բանը լսեց, հրամայեց Իտախին հարձակվել Ջաֆարի վրա և կռվել նրա հետ: Սա եկավ Մոսուլ [երկու հարյուր] քսանհինգ թվին և բարձրացավ Դասին լեռը և ճանապարհին անցավ Սուլ ալ-Ահագից (Կիրակնօրյա շուկա): Նրան հանդիպեց Ջաֆարը և նրանք սաստիկ կռվեցին: Ջաֆարն սպանվեց, իսկ ընկերները ցրվեցին և այսպիսով վերջ գտավ մարդկանց պատճառած նրանց շարիքն ու վնասը:

Ասվում է, որ Ջաֆարը թույն խմեց, որն իր հետ ուներ, և մեռավ: Իտախը ջարդեց քրդերին, շատերին կոտորեց, ունեցվածքը կողոպտեց, իսկ գերիներին, կանանց և ունեցվածքը հավաքեց, Տաքրիտ ուղարկեց: Ասվում է, որ Իտախի հաղթանակը Ջաֆարի դեմ տեղի էր ունեցել [երկու հարյուր] քսանվեց թվին, սակայն ալլահն է միայն լավատեղյակ:

էջ 259

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուհամմադ իբն Աբղալլահ ալ-Վարսանին ապստամբեց Վարդանակերտում (Վարսան), ապա հպատակություն հայտնեց՝ և եկավ Մուտասիմի մոտ երաշխավորագիր խնդրելու՝ երկու հարյուր քսանհինգ թվականին:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(12 նոյեմբեր 839—30 հոկտեմբեր 840)

էջ 259

ՄՈՒՏԱՍԻՄԻ ԶԱՅՐՈՒՅԹԸ ԱՅՇԻՆԻ ԴԵՄ ԵՎ ՍՐԱ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Այդ տարում Մուտասիմը զայրացավ Աֆշինի դեմ և բանտարկել տրվեց նրան:

Բանն այն էր, որ Աֆշինը Բաբեկի դեմ կռվի ժամանակ ինչ նվերներ որ ստանում էր Հայաստանի և Ատրպատականի ժողովրդից, ուղարկում էր

Աշրուսանա, իսկ նվերների [կարավանը] երբ անցնում էր Աբղալլահ իբն Թահիրի մոտով, վերջինս դրում էր Մուտասիմին տեղեկացնելով այդ մասին: Մուտասիմը նախապես նրան դրել էր, որ իրեն տեղեկացնի ամեն ինչի մասին, որ ուղարկում էր Աֆշինը և Աբղալլահը կատարեց հրամանը: Ամեն անգամ, որ Աֆշինի մոտ դրամ էր կուտակվում, նա իր մարդկանց գոտիների մեջ կապում էր և ուղարկում Աշրուսանա:

Մի անգամ նա շատ փող ուղարկեց իր մարդկանց հետ, որոնք հասան Նիշապուր (Նիսաբուր): Աբղալլահը մարդ ուղարկեց, ստուգել տվեց նրանց և դրամ գտան նրանց գոտիներում: Ասաց՝ ձեզ որտեղից է այս դրամը: Ասացին՝ Աֆշինինն է: Նա ասաց՝ ստում եք, եթե իմ եղբայր Աֆշինը կամենար այսպիսի նվերներ ու դրամներ ուղարկել, [բացեիքաց] կգրեր ինձ ու կտեղեկացներ այդ մասին, դուք պարզապես գողեր եք: Աբղալլահը վերցրեց դրամը և տվեց իր զինվորներին, իսկ Աֆշինին գրեց նրա մարդկանց ասածի մասին: Նա ավելացրեց՝ ես չեմ հավատում, որ դու այդպիսի դրամներ ուղարկած լինես առանց ինձ տեղեկացնելու: Ես այն բաժանեցի զինվորներին այն դրամի փոխարեն, որ հավատացելոց իշխանը ուղարկում է [այդ նպատակով]: Եթե իրոք դա քո դրամն է, ինչպես նրանք ասում են, ապա հենց որ հավատացելոց իշխանից դրամը գա, այն ես քեզ կուղարկեմ, իսկ այլ դեպքում հավատացելոց իշխանի իրավունքն է այն ստանալ: Ես այն վճարեցի իմ զինվորներին, քանզի ուզում եմ նրանց ուղարկել Թուրքաց երկիրը:

Աֆշինը գրեց՝ իմ և հավատացելոց իշխանի դրամները մեկ են ու խնդրեց, որ իր մարդկանց բաց թողնի և սա բաց թողեց: Սհա այս էր թշնամության պատճառը երկուսի միջև, իսկ Աբղալլահը հետապնդում էր նրան: Աֆշինը Մուտասիմից երբեմն լսում էր, որ ուզում է Աբղալլահին հեռացնել խորասանից և ահա ինքը ցանկացավ այդ նահանգին տիրանալ: Նա գրեց Մազհարին համոզելով ապստամբել [իշխանության դեմ], ենթադրելով, որ եթե նա ապստամբի, Մուտասիմը Աբղալլահին կհեռացնի խորասանից և իրեն կնշանակի կառավարիչ, հանձնարարելով պայքարել Մազհարի դեմ: Մենք արդեն տեսանք, թե ինչով վերջացավ Մազհարի գործը, ինչպես նաև Մանքիջուրի ապստամբությունը:

Մուտասիմը ստուգելով Աֆշինի գործը, զայրացավ նրա դեմ: Աֆշինը զգաց այդ բանը և չգիտեր ինչ անել ու որոշեց իր պալատում մակույկներ պատրաստել և Մուտասիմի ու զորավարների ղեաղված վիճակում հղած մի օր [Տիգրիսի վրայով] րնկնել Մոսուլի ճանապարհը, ապա անցնել Զաբ [գետը], այդ կողմերի վրայով անցնել Հայաստան, իսկ Հայաստանը նրա իշխանության տակ էր, ապա անցնել հազարաց երկիրը, շրջել Թուրքաց երկրում ու վերադառնալ Աշրուսանա և կամ խազարներին գրգռել

մահմեդականների դեմ: Սակայն այդ բանը չկարողացավ անել և որոշեց մեծ ճաշկերույթ պատրաստել, հրավիրել Մուտասիմին ու զորավարներին, [ճաշի] մեջ թույն դնել և եթե նույնիսկ Մուտասիմը չգա զբաղված լինելու պատճառով, ապա կթունավորի զորավարներին՝ օրինակ՝ Իշնասին, Իտախին և ուրիշներին: Երբ նրանք դուրս կգան իր մոտից, ինքն էլ գիշերվա սկզբում կփախչի: Նա սկսեց պատրաստվել այդ բանին, իսկ զորավարները [այդ ժամանակ] հերթով պահպանություն էին անում Մուտասիմի տանը, ինչպես (ընդհանրապես) անում են զորավարները:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(7 սեպտեմբեր 845—27 օգոստոս 846)

էջ 275

ՏԱՐԻՔԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում [գերիների] փոխանակում եղավ մահմեդականների և հոռոմների միջև: Մահմեդականները հավաքվեցին ալ-Լամիս գետի ափին Տարսոնից մեկ օրվա ճանապարհի վրա: Վասիկը (խալիֆան) գնեց Բաղդադում և այլ վայրերում եղած հոռոմներին: Վասիկը Ահմադ իբն Սաիդ իբն Սալմ իբն Կուտայբա ալ-Բահիլին Սահմանային գոտու և Ավասիմի կառավարիչ նշանակեց, հրամայելով նրան և խական ալ-Խագիմին (ներքինի) ներկա լինել և ստուգել մահմեդական գերիներին: Ով կասի Ղուրանը ստեղծված է¹⁴⁷ և ալլահը անտեսանելի է հանդերձյալում, փոխանակել նրան և տալ մեկ դինար, իսկ ով այդ բանը չի ասի, թողնել նրան հոռոմների ձեռքում:

[Երկու հարյուր] երեսունմեկ թվականի Աշուրայի¹⁴⁸ օրը մահմեդականները իրենց հետ եղած գերիների հետ հավաքվեցին գետի ափին, եկան նաև հոռոմները՝ իրենց հետ եղած գերիների հետ, և գետը ընկած էր երկուսի միջև: Մահմեդականները բաց էին թողնում մի գերու, իսկ հոռոմները նույնպես մի մահմեդական գերու էին բաց թողնում, որոնք գետի մեջտեղում իրար էին հանդիպում: Եվ այսպես գալիս էին բոլորը և երբ գերին հասնում էր մահմեդականների մոտ, բոլորը գոռում էին՝ ալլահ աքբար (մեծ է ալլահը) և երբ [հոռոմ] գերին հասնում էր հոռոմների մոտ, սրանք էին գոռում, և այսպես մինչև վերջ:

Մահմեդական գերիների թիվը չորս հազար չորս հարյուր վաթսուներեք, կանայք ու երեխաները ութ հարյուր հոգի էին, իսկ մահմեդականնե-

րի [իշխանության տակ գտնվող] ոչ մահմեդականները (զիմմա) հարյուր հոգի էին:

Գետը ծանծաղուտ ունեւ, որտեղից էլ անցնում էին գերիները: Ասվում է նաև, որ նրա վրա կամուրջ կար:

Երբ փոխանակումը ավարտեցին, Ահմադ իբն Սաիդ իբն Սալմ ալ-Բահիլին ձմեռային արշավանք կատարեց: Մարդիկ ձյան և անձրևի տակ մնացին և երկու հարյուր մարդ մեռավ, նույնքան էլ գերի ընկավ, իսկ Պոզանտի (Բադանդուն) [գետի] մեջ շատերը խեղդվեցին: Վասիկը զայրացավ Ահմադի վրա:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(28 օգոստոս 846—16 օգոստոս 847)

էջ 278

ՄՈՒՏԱՎԱՔՔԻՒԻ ԽԱԼԻՖԱ ԴԱՌՆԱԼԸ

Այդ տարում Մուտավաքքիլ ալ-ալլահ Զաֆար իբն Մուտասիմին երդում (բայա)¹⁹ տվեցին Վասիկի մահվանից հետո:

Բանն այսպես կատարվեց: Երբ մեռավ Վասիկը, [խալիֆայական] տուն եկան Ահմադ իբն Աբու Դուադը, Իտախը, Վասիֆը, Օմար իբն Ֆարջը, իբն Զայյատը և Աբու-լ-Վազիր Ահմադ իբն Խալիդը ու որոշեցին երդում տալ Մուհամմադ իբն ալ-Վասիկին, որն անմորուք կարճ տղա էր: Նրան հազցրեցին սև շապիկ ու սաղավարտ և տեսան, որ կարճահասակ է: Վասիֆն ասաց՝ ալլահից չեք վախենում, որ սրան խալիֆա եք հռչակում: Նրանք վիճեցին, թե ո՞ւմ հռչակեն և շատերի անունները տվեցին: Ապա բերել տվեցին Մուտավաքքիլին: Երբ եկավ, Ահմադ իբն Աբու Դուադը հազցրեց նրան երկար [զբաժն] և փաթթոց կապեց [զլխին] և աչքերի մեջտեղը համբուրեց, ասելով՝ ողջույն քեզ, ո՞վ իշխան հավատացելոց, և ալլահի գթությունն ու ողորմությունը քեզ:

Ապա լվացին Վասիկին, աղոթեցին նրա վրա ու թաղեցին: Մուտավաքքիլի տարիքը [խալիֆա] հռչակման օրը քսանվեց էր: Նա զինվորներին ութ ամսվա ռոճիկ վճարեց: Երբ իբն Զայյատը կամեցավ նրան Մունտասիր (Հաղթանակող) պատվանունը տալ, Ահմադ իբն Աբու Դուադը ասաց՝ ես մի պատվանուն գտա, որը հարմար է՝ Մուտավաքքիլ ալալլահ (ալլահին ապավինող): Նա հրամայեց կնիք պատրաստել և այսպես էլ գրվեց (հայտնվեց) ամեն կողմ:

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ԲԱԻՍԻ ՓԱԽՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուհամմադ իբն ալ-Բաիս իբն ալ-Ջալիսը փախավ [բանտից]:

Փախուստի պատճառն այն էր, որ նա գերի էր ընկել Ատրպատականում և բերվել Սամառա: Նա ուներ մի ծառա, որը կոչվում էր հալիֆա: Մուտավաքթիլ [խալիֆան] հիվանդ էր և հալիֆա [կոչված] իբն ալ-Բաիսին հայտնեց, թե Մուտավաքթիլը մեռավ: Սակայն վերջինս չէր մեռել, այլ [ծառան] ուզում էր իբն ալ-Բաիսին համոզել, որ փախչի և սա համաձայնություն տվեց փախչելու: [Ծառան] ձեռքը պատրաստեց և նրանք երկուսով փախան Ատրպատականում գտնվող մի վայր, որը կոչվում էր Մարանդ: Ասվում է, որ նա ուներ Շահի և Յակդար ամրոցները: Ասվում է նաև, որ Բաիսը Իսհակ իբն Իբրահիմ իբն Մուսաբի բանտում էր գտնվում: Նրա համար բարեխոսել էր Բուղա ալ-Շարաբին, և նրան արձակել էին մոտավորապես երեսուն հոգուց երաշխիք վերցնելով, որոնցից էր Մուհամմադ իբն հալիֆ իբն Յազիդ իբն Մադիադ ալ-Շայբանին: [Իբն ալ-Բաիսը] հաճախ այցելում էր Սամառա և այնտեղից էլ փախել էր Մարանդ և պարեն ամբարել:

Սա ամրացված քաղաք էր, ջրի աղբյուրներով, շատ պարտեզներով: Նրա մոտ հավաքվեցին խռովության 'սիրահարներ'՝ Ռաբիա և այլ ցեղերից: Եվ այսպիսով նա ունեցավ երկու հազար երկու հարյուր մարդ:

[Այդ ժամանակ] Ատրպատականի կառավարիչն էր Մուհամմադ իբն Հատիմ իբն Հարսաման, որը բավարար չափով չհետապնդեց նրան, և Մուտավաքթիլը Ատրպատականի կառավարիչ նշանակեց Համդաուլայհ իբն Ալի իբն ալ-Ֆադլ ալ-Սաադին, որին ուղարկեց փոստի [ձեռքով]: Սա զորք հավաքեց և գնաց իբն ալ-Բաիսի դեմ ու պաշարեց նրան Մարանդում: Երբ պաշարումը երկարեց, Մուտավաքթիլն ուղարկեց Զիրաք ալ-Տուրքին երկու հարյուր թուրք ձիավորներով, սակայն ոչինչ չկարողացավ անել: Մուտավաքթիլն ուղարկեց Օմար իբն Սիսիլ իբն Քալին՝ ինը հարյուր ձիավորներով, սակայն ոչ մի օգուտ չտվեց: Այն ժամանակ նա ուղարկեց Բուղա ալ-Շարաբին՝ երկու հազար ձիավորներով:

Համդաուլայհը, իբն Սիսիլը և Զիրաքը Մարանդի շուրջը հարյուր հազար ծառ էին կտրել և քսան քարանետ մեքենա էին զետեղել: Իբն Բաիսը ևս դրեց նույնքան [քարանետներ] և նրանք չկարողացան մոտե-

նալ պարսպին: Ութ ամսվա պատերազմի ընթացքում Մուտավաքքիլի զորքից մոտավորապես հարյուր մարդ սպանվեց և շորս հարյուր՝ վիրավորվեց: Նույնքան մարդ էլ տուժեց նրա (իբն ալ-Բախսի) զորքից:

Համդաուայհը, Օմարը և Զիրաքը կռվում էին նրա դեմ առավոտյան և երեկոյան, իսկ նրա մարդիկ, նիզակները ձեռքներին, պարաններով կախվում էին պարսպից և կռվի բռնվում նրանց հետ: Երբ խալիֆայի զորքը հարձակվում էր, ապաստանում էին պարսպի ներսում ու պաշտպանվում: Երբեմն նրանք բացում էին դարպասները, կռվում և ապա վերադառնում:

Երբ Բուղա ալ-Շարաբին մոտեցավ Մարանդին, Իսա իբն ալ-Շայխ իբն ալ-Սալիլին ուղարկեց՝ տալով երաշխավորագիր (աման) իբն ալ-Բախսի լորքի համար, ե՛րբ իջնեն բերդից, և [առանձին] երաշխավորագիր նաև իբն ալ-Բախսին, եթե նա իջնի ըստ Մուտավաքքիլի պայմանների: Նրա մարդկանցից շատերը իջան ըստ երաշխավորագրի և ապա բացեցին քաղաքի դուռը, և Մուտավաքքիլի զորքը մտավ: Իբն ալ-Բախսը փախավ, սակայն զորքի մի մասը հասավ նրա հետևից և գերի բռնեց նրան: Զինվորները կողոպտեցին նրա և մերձավորների տները, ինչպես նաև քաղաքի որոշ բնակիչների տները: Ապա ընդհանուր երաշխիք (աման) տրվեց: Գերի տարան իբն ալ-Բախսի երկու քույրերին, երեք դուստրերին և բազմաթիվ աղախինների: Ապա մյուս օրը հասավ Բուղա ալ-Շարաբին և մունետիկի միջոցով արգելեց կողոպուտը: Նա գրեց (խալիֆային) իր հաղթանակի մասին և իբն ալ-Բախսին իր հետ տարավ նրա մոտ:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(26 հուլիս 849—14 հուլիս 850)

էջ 284

ՄՈՒՏԱՎԱՔՔԻԼԻ ՈՐԴԻՆԵՐԻՆ ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ՀՌԶԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուտավաքքիլն իր երեք որդիներին գահաժառանգ հռչակեց: Դրանք էին՝ Մուհամմադը, որին տվեց ալ-Մունտասիր Բիլլահ պատվանունը, Աբու Աբդալլահ Մուհամմադը և նրան տվեց ալ-Մուտազզ Բիլլահ պատվանունը և Իբրահիմը, որին տվեց ալ-Մուայյիդ Բիլլահ պատվանունը: Նրանցից ամեն մեկին տվեց երկուական դրոշ՝ մեկը սև, որը գահաժառանգման (երդման) դրոշն էր, իսկ մյուսը՝ սպիտակ, որն աշխատանքի դրոշն էր: Նրանցից ամեն մեկին տվեց հետևյալ լնահանգները՝

Մունտասիրին պարգևեց Աֆրիկա նահանգը (Իֆրիկիա) և ամբողջ

Մաղրիբը, Ավասիմը, Կիննասրինը, ամբողջ Սահմանային գոտին՝ Ասորիքի և Ջազիրայի մասերով, Դիար Մուգարը, Դիար Ռաբիան, Մոսուլը, Հիտը, Անան, Անբարը, Խաբուրը, Բաջուրմի շրջանները, Տիգրիսի շրջանները, Սավազի բոլոր գավառները, երկու սրբավայրերը¹⁵⁰, Եմենը, Հագ-րամաուտը, Յամաման, Բահրայնը, Սինգը, Մուքրանը, Կանգաբիլը, Ֆարաջ Բայթ ալ-Ջահաբը, Ահուազի շրջանները, Սամաուայի բերքերը, Մահ ալ-Քուֆան, Մահ ալ-Բասրան, Մահ Սուրագանը, Միհրաջան Կողակը, Շահրղուրը, Սամղանը, Իսբահանը, Կումը, Կաշանը, ամբողջ Զիբալը և Բասրայի արաբների հարկերը (սահակա)։

Մուտագզին պարգևեց Խորասանը իր հարակից մասերով, Թաբարիստանը, Ռեյը (Ռայ), Հայաստանը, Ստրպատականը, Պարսից (Ֆարիս) շրջանը, ապա ավելացրեց [երկու հարյուր] քառասուն թվին (854/855) բոլոր [հիշյալ] նահանգների դրամների հավաքումը և բոլոր փողերանոցների (դար ալ-Դարբ) հսկողությունը և հրամայեց, որ իր անունը դնի դիրհմանների վրա։

Իսկ Մուայյիդին պարգևեց Եմեսայի (Հիմս), Դամասկոսի (Դիմաշկ) և Պաղեստինի (Ֆիլասթին) ջուղերը¹⁵¹։

էջ 285

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուտավաքիլը զիմմայի ժողովրդին (ոչ մահմեդականներին) հրամայեց կրել մեղրագույն պատմուճաններ (թայլասան), կապել ղուննար [կոշված] գոտիներ և նստել թամբին փայտե ասպանդակներով, թամբի ետևում երկու գունդ կապել, իրենց ստրուկների (մամլուք) հագուստների վրա դրանց գույնից տարբեր գույնով երկու շերտ դնել չորս մատ մեծությամբ և իրարից տարբեր գույնով։ Նրանց կանայք դուրս գալուց պետք է կրեին մեղրագույն քող։ Նա արգելեց նրանց հանդիսավոր գոտիներ կապել։ Հրամայեց քանդել նորակառույց եկեղեցիները և տասանորդ (ուշր) վերցրեց նրանց տներից։ Նրանց տների դռների վրա պետք է սատանայի փայտե պատկերներ լինեին։ Արգելեց նրանց պետական (արքունի) պաշտոններ ստանալ և մահմեդականը չէր կարող նրանց ուսուցանել։ Արգելեց նրանց ծաղկազարդին իաշ ցուցադրել և կամ ճանապարհներում [խաշ] դնել։ Նա հրամայեց նրանց գերեզմանները հողին հավասարեցնել։ Այս բոլորի մասին նա գրավոր հայտնեց ամեն կողմ։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՎԵՑ ԹՎԱԿԱՆ

(15 հուլիս 850—4 հուլիս 851)

էջ 288

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում հանկարծակի մեռավ Արու Սաիդ Մուհամմադ իբն Յուսուֆ ալ-Մարուազին, որին տրված էր Հայաստանի և Ատրպատականի կառավարչությունը: Նա մի կոշիկը հագել էր և [ոտքը] մեկնել էր մյուսը հագնելու, բայց հենց այդ պահին մահացել էր: Մուտավաթբիլը նրա որդուն հանձնարարեց հոր վարած պատերազմը ղեկավարելու և իրավունք տվեց նահանգի հարկերը հավաքելու: Նա գնաց և երկիրը զսպեց:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(5 հուլիս 851—22 հունիս 852)

էջ 288—289

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԻՒՒ ԻՐԵՆՑ ԿԱՌԱՎԱՐՁԻ ԴԵՄ ԱՊՍՏԱՄԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Հայաստանի ժողովուրդը ապստամբեց իր կառավարիչ Յուսուֆ իբն Մուհամմադի դեմ և սպանեց նրան:

Բանն այն էր, որ Յուսուֆը երբ գնաց Հայաստան, նրան դիմավորեց մի պատրիկ, որի անունն էր Բագարատ որդի Աշոտի (Բակրաթ իբն Աշութ)¹⁵² և կոչվում էր պատրիկների պատրիկ (բաթրիկ ալ-բաթարիկա): Սա նրանից երաշխավորագիր (աման) խնդրեց¹⁵³: Յուսուֆը նրան և որդուն¹⁵⁴ ձերբակալեց և ուղարկեց խալիֆայի դուռը: Հայաստանի պատրիկները հավաքվեցին Աշոտի որդի Բագարատի եղբորորդու¹⁵⁵ մոտ և երդվեցին սպանել Յուսուֆին: Նրանց հետ համաձայնեց նաև Մուսա իբն Զուրարան¹⁵⁶, որը Բագարատի փեսան էր աղջկա կողմից: Լուրը հասավ Յուսուֆին, որին մերձավորները զգուշացրին, որ այնտեղ չմնա, սակայն նա չլսեց նրանց:

Երբ ձմեռը վրա հասավ, իջավ ձյունը, նրանք (հայերը) սպասեցին, մինչև որ ձյունը նստի: Ապա եկան նրա մոտ Տարոն (Թաբուն)¹⁵⁷ քաղաքը և պաշարեցին նրան: Նա դուրս եկավ քաղաքից, կովեց նրանց հետ, սակայն նրանք սպանեցին նրան ու նրա զինակիցներին: Իսկ ովքեր չէին կոչվում նրա հետ, ասացին նրանց՝ հագուստներդ հանեցեք և մերկ փրկվեցեք: Այդպես էլ արեցին և բոկոտն, մերկ գնացին. մեծ մասը ցրտից մե-

ռավ և շատերի մատները պոկվեցին և [այսպես] փրկվեցին: Այս բոլորը կատարվեց Ռամադան (26 փետրվար—26 մարտ) [ամսին]:

Դրանից առաջ Յուսուֆն իր մարդկանց բաժանել էր ըստ իր նահանգի շրջանների (ռուստակ) և ամեն մի ջոկատի դեմ ուղարկվեց պատրիկների մի խումբ, որոնք մեկ օրում կոտորեցին նրանց:

Երբ Մուտավաքքիլը լսեց այս բանը, նրանց դեմ ուղարկեց Բուղա ալ-Քաբիրին (Ավագ Բուղային)՝ Յուսուֆի արյան վրեժը լուծելու: Նա գնաց Մոսուլի ու Ջազիրայի վրայով և սկսեց [իր գործունեությունը] Արզնում, ուր Մուսա իբն Զուրարան էր, որի եղբայրներն էին Իսմայիլը, Սուլայմանը, Ահմադը, Իսան, Մուհամմադը և Հարունը: Բուղան Մուսա իբն Զուրարային ուղարկեց Մուտավաքքիլի մոտ: Ապա նա հարձակվեց Յուսուֆին սպանողների վրա և կոտորեց մոտավորապես երեսուն հազար մարդ և մեծ թվով մարդկանց գերեվարեց ու վաճառեց: Նա գնաց Աղբակ (ալ-Բակ)¹⁵⁸ երկիրը, գերեվարեց Աշութ (Աշոտ)¹⁵⁹ իբն Համզա (Համազասպ) Աբու-Աբբասին՝ Աղբակի տիրոջը, իսկ Աղբակը Վասպուրականի (Բուսֆուռաշան) գավառներից էր: Ապա գնաց Դվին (Դաբիլ) քաղաքը Հայաստանում, մնաց մեկ ամիս, հետո գնաց Տփղիս (Տաֆլիս) ու պաշարեց այն:

էջ 291

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում ամառային արշավանք կատարեց Ալի իբն Յահիա ալ-Արմանին:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(23 հունիս 852—11 հունիս 853)

էջ 291—292

ԲՈՒՂԱՅԻ ՏՓՂԻՍՈՒՄ ԿԱՏԱՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիշեցինք Բուղայի գնալը Տփղիս և պաշարելը: Երբ Բուղան այնտեղ գնաց, ուղարկեց Զիրաք ալ-Տուրքին, որը Կուր գետը անցավ: Սա մեծ գետ էր, որի [արևմտյան] ափին էր Տփղիս քաղաքը, իսկ Սուղդաբիլը նրա արևելյան կողմում էր: Երբ նա անցավ գետը, կանգնեց Տփղիսի հրապարակում (մայդան): Բուղան ուղարկեց նաև քրիստոնյա Աբու-լ-Աբբաս

ալ-Վարիսիին¹⁶⁰ Հայաստանի ժողովրդին՝ նրա արաբներին և օտարներին¹⁶¹ (աջամ)։ [Զիրաքը] եկավ Տփղիս Բաբ ալ-Ռաբադի¹⁶² կողմից։ Իսհակ իբն Իսմայիլը՝ Օմայանների մաուլան, Տփղիսից դուրս եկավ Զիրաքի դեմ և հանդիպեց նրան հրապարակի մոտ։ Բուղան կանգնած էր մի բարձր բլրի վրա և դիտում էր Զիրաքի և Աբու-լ-Աբբասի՝ գործողությունները։ Բուղան կանչեց նավթածիգներին, որոնք կրակի տվեցին քաղաքը, հրկիզեցին այն, քանզի կառուցված էր սոճու փայտից։ Իսհակ իբն Իսմայիլը եկավ քաղաք և տեսավ, որ կրակը վառել էր իր պալատը և շրջապատել հարճերին։ Եկան թուրքերը և մաղրիբցիները¹⁶³ և գերի վերցրին նրան ու որդուն՝ Օմարին և երկուսին էլ բերեցին Բուղայի մոտ։ Նա հրամայեց Իսհակի վիզը կտրել, իսկ մարմինը խաչ հանել Կուր գետի վրա։ Սա մի գեր ծերունի էր խոշոր գլխով, շիլ աչքերով։ Քաղաքում վառվեց մոտավորապես հիսուն հազար մարդ, իսկ ով կրակից ազատվեց, գերի տարվեց և մեռյալներն էլ կողոպտվեցին։ Տարան նաև Իսհակի ընտանիքը և նրա հորեհից հետո մնացած ամբողջ ունեցվածքը Սուդադաբիլում։ Սա մի ամրացված քաղաք էր Տփղիսի դիմացը, որը կառուցել էր Խոսրով (Քիսրա) Անուշիրուանը, իսկ Իսհակը ամրացրել էր այն և այնտեղ պահել իր ունեցվածքը, ինչպես և կնոջը՝ Սաբիրի տիրոջ դստերը¹⁶⁴։

Ապա Բուղան իր զորքի մի մասի հետ Զիրաքին ուղարկեց Գարդման (Ջարդաման), որը Պարտավի (Բարդաա) և Տփղիսի մեջտեղ էր գտնվում։ Սա գրավեց այն և նրա պատրիկին¹⁶⁵ գերի վերցրեց։ Ապա Բուղան գնաց Իսա իբն Յուսուֆի դեմ, որը Քաթիշ (Քատիշ)¹⁶⁶ ամրոցում էր Բայլականի գավառում։ Նա գրավեց այն և նրան գերի բռնելով տարավ։ Նրա հետ տարավ նաև Աբու-լ-Աբբաս ալ-Վարիսիին, որի անունն էր Սմբատ որդի Աշոտի (Սինբաթ իբն Աշութ)¹⁶⁷, ինչպես նաև Սմբատի որդի Սահլի որդի Մուավիային (Մուավիա իբն Սահլ իբն Սինբաթ)¹⁶⁸ Առանի պատրիկին։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(12 հունիս 853—1 հունիս 854)

էջ 293

Այդ տարում Մուտավաքբիլ [խալիֆան] հրամայեց զիմմի ժողովրդին (ոչ մահմեդականներին) հագնել կրկնակի դեղին շապիկ՝ որպես պատմունճան և հեծնել միմիայն ջորի ու ավանակ, բայց ոչ ձի կամ նը-ժուլզ։

Այդ տարում ամառային արշավանք կատարեց Ալի իբն Յահիա ալ-Արմանին¹⁶⁹։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(22 մայիս 855—9 մայիս 856)

էջ 295

ԳԵՐԻՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ՄԱՀՄԵԳԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՌՈՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Այդ տարում մահմեդական և հռոմ գերիների փոխանակում եղավ այն բանից հետո, երբ Ռումի թագուհի Թեոդորան (Տուդուրա)¹⁷⁰ տասներկու հազար հոգի սպանել էր տվել մահմեդական գերիներից: Նա առաջարկեց նրանց քրիստոնեությունն ընդունել, և ով ընդունեց, նրան համարեց, որ փոխարինում է սպանված քրիստոնյաներին, իսկ ով մերժեց՝ սպանվեց: Մնացածների համար նա լուր ուղարկեց փոխանակում առաջարկելով:

Մուտավաքբիլը Շանիֆ (Շունայֆ) խաղիմին (ներքինի)¹⁷¹ ուղարկեց փոխանակման համար և պահանջեց դատավորաց դատավոր Ջաֆար իբն Աբդալ-Վահիդին, որ ներկա լինի փոխանակման [արարողությանը], իր փոխարեն մեկին թողնելով որպես դատավոր: Նա թույլտվություն ստացավ և իր փոխարեն դատավոր նշանակեց իբն Աբու-լ-Շավարիբին, որը երիտասարդ էր: Փոխանակումը տեղի ունեցավ Լամիս գետի մոտ: Մահմեդական գերիներն էին յոթ հարյուր ութսունհինգ տղամարդ և հարյուր քսանհինգ կին:

Այդ տարում Մուտավաքբիլը ամբողջ Շիշմաթ¹⁷² գավառը դարձրեց ուշրիյա¹⁷³ (տասանորդական), իսկ մինչ այդ խարաշիյա (խարաջային) էր:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆԻՅԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(10 մայիս 856—29 ապրիլ 857)

էջ 297

Այդ տարում հռոմեները հարձակվեցին Սամոսատի (Սումայսաթ) կողմերը՝ Ալի իբն Յահիա ալ-Արմանիի ամառային արշավանքից հետո, և մոտեցան Ամիդին: Նրանք դուրս եկան Ջազիրայի Սահմանային գոտուց (սուդուր), կողոպտեցին, գերեցին մոտավորապես տաս հազարի: Նրանք մտան Աբրիկի (Արինի)¹⁷⁴ Կարբեասի (Կարիբաս)¹⁷⁵ գյուղի կողմից, ապա վերադարձան: Նրանց հետապնդեցին Կարբեասը, Օմար իբն Աբդալլահ ալ-Ակթան և կամավորների մի խումբ, սակայն չհասան: Մուտավաքբիլը գրեց Ալի իբն Յահիա ալ-Արմանիին, որ նրանց դեմ ձմեռային հարձակում կատարի:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(8 ապրիլ 859—27 մարտ 860)

էջ 298—299

Այդ տարում Մաղրիբի երկրում երկրաշարժ եղավ, կործանվեցին բերդեր, տներ, կամուրջներ: Մուտավաքքիլը երեք միլիոն դիրհեմ բաժանեց անտուն մնացածներին:

Երկրաշարժ եղավ Մահդիի ճամբարում (Ասքար ալ-Մահդի, Բաղդադի Ռուսաֆա), Մադահնում (Տիզբոն), ինչպես նաև Անտիոքում և շատ մարդ մեռավ, ու քանդվեց հազար հինգ հարյուր տուն, իսկ [քաղաքի] աշտարակներից իննսունից ավելին քանդվեց: Ահեբի և աննկարագրելի ձայներ լսվեցին: Քաղաքի մոտ եղած Ակոա (լերկ) լեռը պատռվեց և ընկավ ծովը: Այդ օրը ծովը ակեկոծվեց և սև թանձր կեղտոտ ծուխ բարձրացավ, որի հետևանքով մի գետ մեկ փարսախ հեռավորության վրա ցրվեց, և շիմացան թե ուր: Տիննիսի¹⁰ ժողովուրդը, ինչպես ասվում է, հսկայական, երկարատև գղրղյուն լսեց, որից շատերը մեռան: Երկրաշարժ եղավ Զազիրայում, Սահմանային գոտում, Տարսոնում, Ադանայում, ինչպես նաև Ասորիքում: Լաոդիկեի (Լադակիա) ժողովրդից միայն քչերը փրկվեցին:

Այդ տարում հոռոմները հարձակվեցին Սամոսատի (Սումասաթ) վրա, կոտորեցին, գերեվարեցին [ժողովրդին] և մեծ թվով գերեցին [զինվորներին]:

Նույն տարում Ալի իբն Յահիա ալ-Արմանին ամառային արշավանք կատարեց:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(28 մարտ 860—16 մարտ 861)

էջ 300

Այդ տարում Ամրու (Օմար) իբն Աբդալլահ ալ-Ակթան ամառային հարձակում կատարեց [Ռումի երկիրը]: Նա տասնյոթ հազար զուլխ [անասուն] տարավ: Արշավեց Կարբեասը (Կարիբաս) և տարավ հինգ հազար զուլխ [անասուն]: Արշավեց նաև Ֆադլ իբն Կաբինը, մոտավորապես քսան նավով և նվաճեց Անտիոքի բերդը: Բալքաջուրը արշավեց, ավարի տվեց և գերեվարեց: Արշավեց Ալի իբն Յահիա ալ-Արմանին և տարավ հինգ հազար զուլխ [ոչխար], իսկ ձիեր, ուղտեր և ավանակներ՝ մոտավորապես տաս հազար զուլխ:

Այդ տարում Մուտավաքքիլը տեղափոխվեց Զաֆարիյա՝
Այդ տարում գերինների փոխանակությունն եղավ Սաֆար ամսին (27
ապրիլ—25 մայիս) Ալի իբն Յահիա ալ-Արմանիի ձեռքով։ Փոխանակվե-
ցին երկու հազար երեք հարյուր վաթսունյոթ հոգի։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(7 մարտ 862—23 փետրվար 863)

էջ 312

Այդ տարում Ալի իբն Յահիա ալ-Արմանին հանվեց Ասորիքի Սահ-
մանային գոտուց և Ռամադան ամսին (29 հոկտեմբեր—27 նոյեմբեր)
նշանակվեց Հայաստանի և Ատրպատականի կառավարիչ։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆԻՆԼԻ ԹՎԱԿԱՆ

(24 փետրվար 863—13 փետրվար 864)

էջ 312—313

ՀՈՌՈՄՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԵՎ ԱԼԻ ԻԲՆ ՅԱՀԻԱ ԱԼ-ԱՐՄԱՆԻԻ
ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Զաֆար իբն Դինարը ամառային արշավանք կատարեց,
գրավեց մի բերդ և ցորենի շտեմարաններ (մաթամիր)։ Օմար իբն Ուբայ-
դալլահ ալ-Ակթան հրաման խնդրեց Ռումի երկիրը արշավելու։ [Զաֆա-
րը] թույլ տվեց և նա Մալաթիայի մարդկանցից բաղկացած մեծ զորքով
գնաց։ Նրա դեմ դուրս եկավ Ռումի թագավորը՝ մեծ զորքով, Մարջ ալ-
Ուսկուֆ վայրում։ Սաստիկ պատերազմ եղավ, որի ընթացքում երկու
կողմից շատերն սպանվեցին։ Ապա նրան շրջապատեցին հոռոմները, ո-
րոնք հիսուն հազար էին։ Սպանվեց Օմարը և նրա հետ եղածներից երկու
հազար մահմեդական, Ռաջաբ ամսի (20 օգոստոս—18 սեպտեմբեր) կե-
սին։

Երբ Օմար իբն Ուբայդալլահը սպանվեց, հոռոմները դուրս եկան
Զազիրայի սահմանային գոտի, ձեռք մեկնեցին մահմեդականների ու-
նեցվածքին ու կանանց։ Այս բանը լսեց Ալի իբն Յահիան, որը Հայաստա-
նից գալիս էր նփրկերտ (Մայաֆարիկին), նրա և Սալսալայի¹⁷⁷ բնակիչ-
ների մի խմբի հետ։ Նա հարձակվեց, սակայն պարտվեց և մոտավորապես
չորս հարյուր հոգու հետ սպանվեց Ռամադան ամսին (18 հոկտեմբեր—
16 նոյեմբեր)։

Այդ տարում ղինվորները և վարձկանները Բաղդադում խռովություն բարձրացրին:

Բանն այն է, որ այստեղ և Սամառայում ու նրա մերձակայքում հասավ Օմար իբն Աբդալլահի (ալ-Ակթա) և Ալի իբն Յահյայի (ալ-Արմանի) սպանության լուրը, որոնք իսլամի քաջերից ու կորովի զորականներից էին և Սահմանային գոտում (սուղուր) կարևոր դեր էին կատարել մահմեդականների (հոռոմների դեմ) մղած պայքարում: Ծանր էր այն, որ սրանք մեկը մյուսի ետևից էին սպանվել և մանավանդ մարդիկ դեռ չէին մոռացել թուրքերի (ռազմիկների) Մուտավաքքիլ խալիֆային սպանելը, մահմեդական պետության գործերին միջամտելը: Վերջիններս սպանում էին խալիֆաներին և իրենց ուղածին դարձնում խալիֆա, առանց հարգելու ո՛չ կրոնը, ո՛չ էլ մահմեդականներին:

Բազմությունը հավաքվեց Բաղդադում գոռոցներով ու շեփորներով և նրան միացան աբնա (արաբի ու պարսիկի խառնուրդ) կոչվածները, վարձկանները, որոնք ռոճիկ էին պահանջում: Սա տեղի ունեցավ Սաֆար ամսին (26 մարտ—25 ապրիլ): Նրանք բանտերի դռները բացեցին, բանտարկյալներին աղատեցին, երկու կամուրջներից մեկը վառեցին, իսկ մյուսը ջարդեցին: Նրանք կողոպտեցին (քրիստոնյա) Հարունի Բիշր և Իբրահիմ որդիների տունը, որոնք Մուհամմադ իբն Աբդալլահի քարտուղարներն էին: Ապա Բաղդադի ու Սամառայի հարուստները շատ դրամ տրամադրեցին և բաժանեցին այնպիսիներին, որոնք կռվի էին գնում Սահմանային գոտի: Եկան մարդիկ Զիբալից, Ֆարսից և այլ վայրերից հոռոմների դեմ կռվի գնալու, թեև խալիֆան ո՛չ հրաման էր տվել, ո՛չ զորք ուղարկել:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(2 փետրվար 865—21 հունվար 866)

Այդ տարում Հայաստանում երկու մարդ երևան եկան (ապստամբեցին), որոնց դեմ կռվեց Ալա իբն Ահմադը՝ Բուղա ալ-Շարաբիի նշանակած կառավարիչը (պաշտոնյան): Սա հաղթեց նրանց և նրանք բարձրացան մի ամրոց նույն տեղում: Նա պաշարեց, քարանետ մեքենաներ դրեց ու փախուստի մատնեց նրանց: Նրանք թաքնվեցին, իսկ բերդը գրավվեց:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(22 հունվար 866—10 հունվար 867)

էջ 333

ՄՈՒԱՅՅԻՒՒ ՇՆՈՐՀԱՋՈՒՐԿ ԼԻՆԵԼԸ ԵՎ ՄԱՀԸ

Այդ տարվա Ռաջաբ ամսին Մուտազզ [խալիֆան] իր եղբորը՝ Մուայյիդին, իրենից հետո գահը ժառանգելու [իրավունքից] ղրկեց։

Բանն այն է, որ Հայաստանի կառավարիչ (ամիր) ալ-Ալա իրն Ահմադը Մուայյիդին ուղարկել էր հինգ հազար ղինար, որպեսզի իր դործերը կարգի բերի, և սա ուղարկեց Իսա իրն Ֆարխանշահին և վերցրեց [դուամարը]։ Մուայյիդը թուրքերին ղրգեց Իսայի գեմ, իսկ մաղրիբցիները հակառակվեցին։ Մուտազզը Մուայյիդի և Աբու Ահմադի մոտ մարդ ուղարկեց և ձերբակալեց ու բանտարկեց երկուսին։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(9 դեկտեմբեր 869—28 նոյեմբեր 870)

էջ 359

ԻՍԱ ԻՐՆ ԱԼ-ՇԱՅԽԻ ԱՍՈՐԻՔԻՅ ՀԱՆՎԵԼԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՆՇԱՆԱԿՎԵԼԸ

Երբ իրն ալ-Շայխը ղրավեց Դամասկոսը և այլևս հարկերը շուղարկեց Բաղդադ, այնպես պատահեց, որ իրն ալ-Մուդաբբիրը մոտավորապես յոթ հարյուր հազար ղինար եզիպտոսից ուղարկեց Բաղդադ, սակայն Իսա իրն ալ-Շայխը ճանապարհին վերցրեց այն։ Բաղդադից նրա մոտ ուղարկվեց ծառա (խադիմ, ներքինի) Հուսայնը՝ ղրամը պահանջելու։ Սա պատասխանեց, որ ծախսել է զինվորների վրա։ Հուսայնը նրան հրովարտակ տվեց Հայաստանի կառավարիչ դառնալու համար, միայն թե խալիֆա ճանաչեր Մուտամիդին, իսկ նա [նախապես] այդ բանից հրաժարվել էր։ Նա վերցրեց հրովարտակը ու ճանաչեց Մուտամիդին և սև հագավ, հուսալով, որ Ասորիքը կմնա իր ձեռքում։

Մուտամիդը ուղարկեց Ամաջուրին և նշանակեց Դամասկոսի ու շրջակա նահանգների կառավարիչ։ Սա եկավ մոտավորապես հազար հոգով և երբ մոտեցավ, Իսան նրա գեմ ուղարկեց իր որդուն՝ Մանսուրին, քսան հազար զինվորներով։ Երբ իրար բախվեցին, Մանսուրի ղորքը պարտվեց, իսկ Մանսուրն սպանվեց։ Իսան թուլացավ ու զնաց Հայաստան՝ ծովափի ճանապարհով, իսկ Ամաջուրը Դամասկոսի կառավարիչ դարձավ։

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(7 նոյեմբեր 872—26 հոկտեմբեր 873)

էջ 370

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում բախվեցին Մուհամմադ իրն ալ-Ֆադլ իրն Բայանը և Վահսուդան իրն Զաստան ալ-Դայլամին և պարտվեց Վահսուդանը:

Այդ տարում հոռոմները հարձակվեցին Սամոսատի վրա, ապա իջան Մալաթիա, որի բնակիչները կռվեցին նրանց դեմ: Հոռոմները պարտվեցին և սպանվեց պատրիկների պատրիկը:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(6 հոկտեմբեր 873—23 սեպտեմբեր 874)

էջ 371

ՄՈՍՈՒԼՈՒՄ ԽԱԳԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՁԻ ՀԵՌԱՑՄԱՆ
ՄԱՍԻՆ

Մուտամիդ ալալլահ խալիֆան Մոսուլի կառավարիչ էր նշանակել Ասատիքինին, որը թուրքերի մեծ զորավարներից էր: Սա իր որդուն՝ Ադքուտիքինին ևրկու հարյուր հիսունինը թվականին Զումադա Ա ամսին (5 մարտ—3 ապրիլ 873) այնտեղ ուղարկեց: Երբ այդ տարվա նիրուզ (նով-բուզ) օրը հասավ, որը նիսան (ապրիլ) ամսի տասներեքն է, նա Ադքուտիքինին և Մոսուլի մեծամեծներին հրավիրեց հրապարակի վրա մի դմբեթավոր շենք և բերել տվեց հաճույքի միջոցներ, առատ դինի և բացահայտ կերպով խմեց, իսկ նրա ընկերակիցները բացեիրաց անառակություն էին անում և մարդկանց նկատմամբ վատ վերաբերվում:

Այդ տարում խիստ ցուրտ էր, որից փչացան ծառերը, պտուղները, ցորենը և դարին, իսկ նա փչացած բերքի հողահարկն (խարաջ) էր պահանջում: Սա շատ դայրացրեց մարդկանց: Հենց որ լսում էր, թե մեկի մոտ ընտիր նժույգ կա, խլում էր: Մոսուլի բնակիչները համբերում էին, մինչև որ մի օր նրա մերձավորներից մեկը հարձակվեց մի կնոջ վրա ու բռնեց փողոցում, իսկ [կինը] պաշտպանվեց և օգնություն խնդրեց: Իդրիս ալ-Հիմիարի անունով մի անձնավորություն, որը Ղուրանի գիտակ էր, բարեպաշտ, հասավ և աղատեց կնոջը նրա ձեռքից: Զինվորը գնաց Ադքուտիքինի մոտ և բողոքեց այդ մարդուց: Սա առանց գործն ստուգելու, բերել տվեց ու խիստ գանակոծության ենթարկեց նրան:

Մոսուլի մեծամեծները հավաքվեցին մայր մզկիթում և ասացին՝ համբերեցինք ունեցվածքը հափշտակելուն, հայհոյանքին, ավանդու-

թյունները ոտնահարելուն, բռնությունը, սակայն գործը հասավ պատիվը անարգելուն: Նրանք որոշեցին հեռացնել նրան և խալիֆային բողոքել: Իսկ նա լսեց այդ մասին և իր ղինվորներով ու նավթածիգներով հարձակվեց: Սաստիկ կռիվ եղավ, մինչև որ նրան ղուրս բերեցին Մոսուլից և տունը ավարի տվին: Մի քար կպավ նրան և վիրավորեց: Այդ օրվանից նա գնաց իր քաղաքը, իսկ այնտեղից էլ Սամառա: Մարդիկ հավաքվեցին Յահիա իբն Սուլայմանի մոտ և իշխանությունը նրան հանձնեցին: Այդպես էլ եղավ և նա մնաց մինչև [երկու հարյուր] վաթսուն թվականի վերջը:

Հ Ա Տ Ո Ր Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(16 հոկտեմբեր 874—5 հոկտեմբեր 875)

էջ 3

Այդ տարում՝ Շավալ ամսին, Մուտամիդը¹⁷⁸ նստեց հասարակաց տանը (դար ալ-ամմա) և իր որդուն՝ Զաֆարին, գահաժառանգ հռչակեց, շնորհելով ալ-Մուֆավիդադ իլալահ պատվանունը և նրան [օգնական] տալով Մուսա իբն Բուղային: Նրան կուսակալ նշանակեց [հետևյալ նահանգներում]՝ Աֆրիկա (Իֆրիկիա), Եգիպտոս (Միսր), Ասորիք (Շամ), Զադիրա, Մոսուլ (Մաուսիլ), Հայաստան, Խորասանի ճանապարհը և Միհրաջանկոդակ: Իր եղբորը՝ Աբու Ահմադին, փոխանորդ նշանակեց Զաֆարին, նրան տալով ալ-Նասիր լիդին Իլահ ալ-Մուվաֆֆակ պատվանունը, և նշանակելով կուսակալ [հետևյալ նահանգներին]՝ Արևելյան կողմեր (Մաշրիկ), Բաղդադ, Սավադ, Քուֆա, Մեքքայի ճանապարհը, Մադինա, Եմեն (Յաման), Քասքար, Տիգրիսի գավառները (Քուր Դիշլա), Ահուազ, Պարսք (Ֆարիս), Սպահան (Իսբահան), Կում, Քարաջ, Դինավար, Ռեյ (Ռայ), Զինջան և Սինգ: Եվ նրանցից ամեն մեկին տվեց երկուական դրոշ՝ սև և սպիտակ:

էջ 7

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մուտամիդ ալալահ խալիֆան Ատրպատականի կառավարիչ նշանակեց Մուհամմադ իբն Օմար իբն Ալի իբն Մուռ ալ-Թաի ալ-Մաուսիլին: Սա այնտեղ եկավ իր շուրջը հավաքելով հարիջիներից* և այլոց մեծ բաղմունքով: Ատրպատականում ղրանից առաջ կառավարիչ

* Իսլամի հոսանքներից մեկը: Բառացի՝ ապստամբ:

էր ալ-Ալա իրն Ահմադ ալ-Ազդին, որը հաշմանդամ էր դարձել: Սա պատ-
դարակի վրա դուրս եկավ, որպեսզի թույլ չտա Մուհամմադ իբն Օմարին
կառավարիչ դառնալ և կռիւի բռնկեց: Ալայի զորքը պարտվեց, և ինքն
էլ գերի ընկավ: Մուհամմադ իբն Օմար իբն Ալին գրավեց Ալայի բերդը
և այնտեղից վերցրեց երեք միլիոն գիրհեմ, իսկ Ալան մեռավ նրա ձեռ-
քում՝ գերութեան մեջ:

Այդ տարում Մուտամիդ ալալլահը Մոսուլի կառավարիչ նշանակեց
ալ-Խադր իբն Ահմադ իբն Օմար իրն ալ-Խաթթաբ ալ-Տաղլիբիին:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(24 սեպտեմբեր 876—12 սեպտեմբեր 877)

էջ 14

ՀՈՌՈՄՆԵՐԻ՝ ԼՈՒԼՈՒԱՆ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում սլավոնները (սակալիբա)¹⁷⁹ Լուլուան¹⁸⁰ հանձնեցին հո-
ռոմներին:

Բանն այն է, որ Ահմադ իբն Թուլունը տարվեց Տարսոն (Թարսուս)
արշավելու գաղափարով նախքան Եգիպտոսի կառավարիչ դառնալը: Երբ
Եգիպտոսի կառավարիչ դարձավ, ձգտում էր նաև Տարսոնն ստանալ, որ-
պեսզի, իբրև կառավարիչ, [հոռոմների դեմ] արշավանքներ կազմակեր-
պի: Նա գրեց Աբու Ահմադ ալ-Մուվաֆֆակին, խնդրելով այդ պաշտոնը,
սակայն սա չընդառաջեց նրան և կառավարիչ նշանակեց Մուհամմադ
իբն Հարուն ալ-Տաղլիբիին: Սա նավ նստեց Տիգրիսի վրա և քամին նրան
ափ գցեց, իսկ Մուսավիր ալ-Շարիի մարդիկ բռնեցին նրան ու սպանե-
ցին: Նրա փոխարեն նշանակվեց Մուհամմադ իբն Ալի ալ-Արմանին, որին
տրվեց նաև Անտիոքը: Սակայն Տարսոնի բնակիչները ապստամբեցին ու
սպանեցին նրան:

Ապա կառավարիչ նշանակվեց Արխուզ (Ուրխուզ) իբն Յուլազ (Ուլուզ)
իբն Թարխան ալ-Տուրքին, որն այնտեղ գնաց, սակայն անփորձ և տգետ
էր ու վատ վերաբերմունք ունեցավ: Նա Լուլուայի մարզկանց ռոճիկն ու
մթերքները ուշացրեց և սրանք ապստամբեցին ու գրեցին Տարսոն, բողո-
քելով՝ եթե մեր ռոճիկն ու մթերքը չուղարկեք, ապա բերդը հոռոմներին
կհանձնենք: Տարսոնի մարդիկ ազդվեցին այդ բանից և իրենց մեջ հավա-
քեցին տասնհինգ հազար գինար, որ նրանց տանեն: Արխուզը այն վերց-
րեց նրանցից՝ Լուլուայի մարզկանց տանելու համար, սակայն իր մոտ
պահեց: Երբ դրամը ուշացավ, սրանք բերոր հանձնեցին հոռոմներին:
Տարսոնի ժողովրդի համար սա կործանում էր, [այդ բերդը] փուշ էր
թշնամու կոկորդին, քանզի հոռոմները հենց որ [հարձակման] էին դուրս

գալիս ցամաքով, թե ծովով, [բերգի պահապանները] տեսնում էին նրանց
և ազդանշան տալիս:

Այդ լուրը հասավ Մուսամիդին, որը Ահմադ իբն Թուլունին նշանա-
կեց Տարսոնի կառավարիչ և տեղում առանձին հրամանատար նշանա-
կեց մեկին, որը կարողանար արշավանքներ կատարել հռոմեացիների դեմ և
պահպանել այդ սահմանային ամրությունը:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԶՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(13 սեպտեմբեր 877—2 սեպտեմբեր 878)

էջ 16

ԱՐԳԱԼԱՀ ԻԲՆ ՔԱՌԻՍԻ ԳԵՐԵՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում հռոմեացիները գերի բռնեցին Աբգալահ իբն Ռաշիդ իբն
Քաուսին:

Բանն այն էր, որ նա մտավ Ռումի երկիրը, Ասորիքի Սահմանային գո-
տու զորքից չորս հազար հոգու հետ և կողոպտեց ու կոտորեց: Երբ Պո-
ղանգիից (Բաղանդուն) հեռացավ, նրա դեմ դուրս եկավ Սելեկիայի (Սա-
լուկիյա) պատրիկը և Կուռատ Քաուբաբի ու Խարսիանունի (Խարշանա)
պատրիկը և պաշարեցին մահմեդականներին: Մահմեդականներն ի-
ջան ձիերից, կտրեցին նրանց ծնկատակի ջլերը ու կովի անցան:
Նրանք բոլորն էլ սպանվեցին, բացի հինգ հարյուրից, որոնք մի
մարդու նման հարձակվեցին և իրենց ձիերով ազատվեցին: Հռոմեացիներն
սպանեցին, ում որ կարողացան սպանել և գերեցին Աբգալահ իբն Ռա-
շիդին, նրան վիրավորելուց հետո, ու տարան Ռումի թագավորի մոտ:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(23 օգոստոս 879—11 օգոստոս 880)

էջ 25

ՏԱՐՆԵՐ ԴԵՊԲԵՐԻ ՄԱՍԻՆ

[Այդ տարում] իբն Քունդաշը գրավեց Մծբինը, Դիար Ռաբիան, իսկ
իբն Այյուբը դիմեց Իսա իբն ալ-Շայի ալ-Շայբանիին, որն Ամիդում էր,
և նա օգնության եկավ: Դիմեց նաև Աբու-լ-Մուխլի¹⁸¹ իբն Մուսա իբն Զու-
բարային, որն Արզնում էր, և նա էլ օգնության եկավ: Իբն Քունդաշը վերա-
դարձավ Մոսուլ և Մուսամիդ խալիֆայից հրովարտակ ստացավ Մոսուլի
կառավարիչ դառնալու համար և այնտեղ էլ վերադարձավ:

Այն ժամանակ իբն ալ-Շայխ¹⁸² և իբն Զուբաբան և ուրիշներ երկու

հարյուր հաղար դինար առաջարկեցին [իբն Քունդաշին], որպեսզի վերջինս նրանց հաստատի իրենց դավառներում: Նա շնորհառաջեց և սրանք հավաքվեցին կովի: Սակայն, երբ այս բանը տեսավ, դոհացրեց նրանց պահանջն ու վերադարձավ, իսկ նրանք էլ վերադարձան իրենց երկրները:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(12 օգոստոս 880—31 հուլիս 881)

էջ 36

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում ճակատամարտ տեղի ունեցավ մի կողմից Իսհակ իբն Քունդաշիկի և մյուս կողմից Իսհակ իբն Այյուբի, Իսա իբն ալ-Շայխի, Աբու-լ-Մաղրայի, Համդան իբն Համդանի և նրանց հարած Ռաբիա, Տաղլիբ, Բաքր և Եմենի (Յաման) ցեղերի մարդկանց միջև: Իբն Քունդաշիկը նրանց փախուստի մատնեց Մծբին ու հետապնդեց մինչև Ամիդ:

Նա Ամիդի մոտ զորք թողեց Իսային պաշարելու համար, և Ամիդի մոտ նրանց միջև մի քանի ընդհարումներ տեղի ունեցան:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(1 օգոստոս 881—20 հուլիս 882)

էջ 40

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռումի թագավորը⁸³, որը կոչվում էր Սլավոնուհու որդի (իբն ալ-Սակլաբիյյա), պաշարեց Մալաթիան: Վերջինիս օդնեց Մառաշի ու Հաղասի զորքը և Ռումի թագավորը պարտվեց: Ասորիքի Սահմանային դոտու-կողմից ամառային արշավանք կատարեց իբն Թուլունի տեղակալ ալ-Ֆարղանին: Սա հոռոմներից մի քանի տասնյակ հաղար մարդ սպանեց և այնպես կողոպտեց ժողովրդին, որ ամեն մի ռազմիկի բաժինը քառասուն դինար դարձավ:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(21 հուլիս 882—10 հուլիս 883)

էջ 50

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում մեռավ Իսա ալ-Շայխ իբն ալ-Սալիլ ալ-Շայբանին, որի ձեռքում էին Հայաստանը և Դիար Բաքըրը:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(11 հուլիս 883—28 հունիս 884)

էջ 55

ՀՈՌՈՄՆԵՐԻ ԴԵՄ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Այդ տարում հռոմէները կովի դուրս եկան հարյուր հազարով և պաշարեցին Կալամիյան, որը Տարսոնից վեց մղոնի վրա էր: Նրանց դեմ գիշերով դուրս եկավ Բազմարը¹⁸⁴ և հարձակում կատարեց Ռարի Ա ամսին (ութ սեպտեմբեր—7 հոկտեմբեր) և, ինչպես ասվում է, յոթանասուն հազար մարդ կոտորեց: Սպանեց նրանց առաջնորդին, որը պատրիկների պատրիկ էր, նաև Կապադովկիայի (Ֆանադին) և Անատոլիկի (Բաթլիկ) պատրիկներին: Կուռայի պատրիկը փախավ վերքերով ծածկված: [Բազմարը] նրանցից խլեց յոթը ոսկե ու արծաթե խաչ, որոնց մեջ էր նրանց մեծագույն ոսկե խաչը՝ գոհաբերով զարդարված: Նա վերցրեց տասնհինգ հազար ձի և ջորի, ինչպես նաև թամբեր և այլ բաներ: [Նա վերցրեց] նաև զարդարուն սրեր, շորս ոսկե գահեր, իսկ երկու հարյուր՝ արծաթե, բազմաթիվ ամաններ, մոտավորապես տասը հազար դիպակե դրոշ, բազում դիպակ, մեծ քանակությամբ մետաքս (բաղյուն) և այլն:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(8 հունիս 886—27 մայիս 887)

էջ 61

ՎԵՃԸ ԻՔՆ ԱՔՈՒ-Լ-ՍԱՋԻ ԵՎ ԻՔՆ ՔՈՒՆԴԱՋԻ ՄԻՋԵՎ
ԵՎ ՋԱՋԻՐԱՅՈՒՄ ԻՔՆ ԹՈՒԼՈՒՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒՄԸ
[ԻՔՐԵՎ ՏԻՐԱԿԱԼԻ]

Այդ տարում Մուհամմադ իբն Աբու-լ-Սաջի և Իսհակ իբն Քունդաջի միջև հարաբերությունները սրվեցին, մինչդեռ նրանք [նախապես] հաշտ իշխում էին Ջազիրայում:

Բանն այն է, որ իբն Աբու-լ-Սաջը վեճ ունեցավ Իսհակի հետ կառավարման գործերում և ուղեց առաջինը լինել, իսկ Իսհակը շհնազանդվեց նրան: Աբու-լ-Սաջը լուր ուղարկեց Եգիպտոսի տիրոջ՝ Ահմադ իբն Թուլունի, որդուն՝ հումարավայհին, հնազանդություն հայտնեց, նրա կողմն անցավ և իր դավառում, որն էր Կիննասրինը, խութբայում նրա

անունը հիշեց [որպես տիրակալի]: Նա իր որդուն՝ Դիվդադին, ուղարկեց հումարավայհի մոտ՝ որպես պատանդ և հումարավայհը շատ փող ուղարկեց նրան ու նրա զորավարներին: հումարավայհը եկավ Ասորիք և Բալիսի մոտ հանդիպեց իբն Աբու-լ-Սաջին: Իբն Աբու-լ-Սաջը անցավ Եփրատի գետի Ռակկա, բախվեց իբն Քունդաջի հետ և կռիվ տեղի ունեցավ, որի ժամանակ իբն Քունդաջը պարտվեց և իբն Աբու-լ-Սաջը դրավեց նրա ունեցվածքը:

հումարավայհը անցավ Եփրատի և իջևանեց Ռաֆիկայում: Իսհակը փախավ Մարդինի ամրոցը, իսկ իբն Աբու-լ-Սաջը պաշարեց նրան և այնտեղից դնաց Սինջար ու հաղթեց մի խումբ արաբ [բեդևիների]: Իբն Քունդաջը Մարդինից դնաց Մոսուլ, իսկ իբն Աբու-լ-Սաջը Բառկադում հանդիպեց նրան, և [ռազմիկներին] դարանակալ պահեց: Սրանք կռվի ժամանակ դուրս եկան իբն Քունդաջի դեմ և նա պարտվեց ու փախավ վերադառնալով Մարդին, ուր նախապես մնում էր: Իբն Աբու-լ-Սաջը ուժեղացավ, նրա անունը բարձրացավ, տիրեց Ջադիրային ու Մոսուլին և սկսեց հիշել նախ հումարավայհին և ապա՝ հենց իր անունը [մզկիթում]:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(23 մարտ 893—12 մարտ 894)

էջ 76

ՄՈՒՏԱԴԻԻ [ԽԱԼԻՖԱՅԻ]՝ ՇԱՅԲԱՆԻՆԵՐԻ ԴԵՄ ԳՆԱԼԸ ԵՎ
ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆՑ ՀԵՏ

Այդ տարում Սաֆար [ամսի] մեկին Մուտադիդը Բաղդադից դնաց Շալբանիների դեմ՝ այն վայրը, ուր նրանք հավաքվում էին Ջադիրայի երկրում: Երբ լսեցին նրա գալուստը, հավաքեցին իրենց ունեցվածքը և ընտանիքները: Մուտադիդը արշավեց արաբ [բեդևիների] վրա, Սին-նի մոտ կողոպտեց նրանց ունեցվածքը, մեծ կոտորած արեց և մեծ թըվով էլ ջրախեղդ արեց Ջաբի մեջ: Սակայն մարդիկ չկարողանալով տանել իրենց վերցրած կողոպուտը, մի ոչխարը ծախում էին մեկ դիրհեմի, իսկ ուղտը հինգ դիրհեմի: Նա դնաց Մոսուլ և Բալադ, ուր նրան ընդառաջ եկան Շալբանիները թողություն խնդրելով և պատանդներ տալով: Նա համաձայնեց նրանց խնդրանքին ու վերադարձավ Բաղդադ: Նա լուր ուղարկեց Ահմադ իրն Իսա իրն ալ-Շալխին, պահանջելով նրանից Ամիրում իբն Քունդաջիքից խլած ունեցվածքը: Սա ուղարկեց նրան առատ նվերներով հանդերձ:

Իսկ Շավալ ամսին (14 դեկտեմբեր 893—11 հունվար 894) լուսինը խավարեց և Դվինի ու ամբողջ երկրի ժողովուրդը խավարի մեջ մնացին: Եվ խավարը մնաց, մինչև որ երեկոյան սև քամի փչեց և տևեց մինչև գիշերվա երրորդը: Իսկ գիշերվա երրորդին երկրաշարժ եղավ և քաղաքն ավերվեց: Նրա տներինց միայն հարյուրի չափ տուն մնաց: Սրանից հետո հինգ անգամ ցնցվեց: Ավերակների տակից հանվածների թիվն էր հարյուր հիսուն հազար, բոլորն էլ մեռած:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(28 հունվար 898—16 հունվար 899)

էջ 91

Այդ տարում Մուտադիդը Մուհամմադ իբն Աբու-լ-Սաջին կառավարիչ նշանակեց Ատրպատականի ու Հայաստանի վրա¹⁸⁵: Վերջինս խալիֆայի տիրացել էր այդ [երկրներին] և ըմբոստացել: Նա պատվական զգեստներ էր ուղարկել նրան [որպես ընծա]:

Այդ տարում մեռավ Ահմադ իբն Իսա իբն ալ-Շալխը և Ամիդում ու Ենթակա հողերում նրան հաջորդեց որդին՝ Մուհամմադը, որպես բռնր տիրացող: Մուտադիդը Զու-լ-Հիջա (19 դեկտեմբեր—16 հունվար) ամսում զորքով Մոսուլի վրայով եկավ նրա դեմ՝ Ամիդ, իր հետ ունենալով որդուն՝ Աբու Մուհամմադ Ալի ալ-Մուքտաֆին: Նա հասավ Ամիդ ու քառանետ մեքենաներ դնելով պաշարեց մինչև երկու հարյուր ութսունվեց թվականի Ռաբի Բ (16 ապրիլ—14 մայիս) ամիսը: Մուհամմադ իբն Ահմադ իբն Իսան լուր ուղարկեց նրան, խնդրելով երաշխավորագիր իր, մերձավորների ու քաղաքի բնակիչների համար: Մուտադիդը համաձայնեց, և սա դուրս եկավ ու հանձնեց քաղաքը: Մուտադիդը ընտիր զգեստներ նվիրեց, պատվեց, սակայն քաղաքի պարիսպները քանդեց: Ապա նրան լուր հասավ, որ Մուհամմադ իբն ալ-Շալխը ուղում է փախչել և նա ձերբակալեց նրան ու նրա ընտանիքը:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՅՈՒ ԹՎԱԿԱՆ

(7 հունվար 900—25 դեկտեմբեր 900)

էջ 94

ՄՈՒՏԱԴԻԴԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՎԱՍԻՖԻ ԵՎ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԵՄ

Այդ տարում Մուհամմադ իբն Աբու-լ-Սաջի ծառա Վասիֆը Պարտավից (Բարդա) փախավ Մալաթիա, որը նրա տիրոջ կալվածներից էր: Նա

դրեց Մուտադիդին, խնդրելով, որ իրեն կառավարիչ նշանակի Սահմանային գոտում: Սա հարցաքննեց նրա սուրհանդակներին Վասիֆի տիրոջից հեռանալու մասին: Նրանք նշեցին, որ նա հեռացել էր նախօրոք համաձայնելով, որ երբ Վասիֆը Սահմանային գոտու կառավարիչ դառնա, նրա տերը հտեկից կգա և նրանք միասին կհարձակվեն Դիար, Մուղարի վրա ու կգրավեն...:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(30 սեպտեմբեր 908—19 սեպտեմբեր 909)

էջ 135

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում [խալիֆան] Յուսուֆ իբն Աբու-լ-Սաջին նշանակեց Հայաստանի և Ատրպատականի կառավարիչ պարտավորեցնելով [վճարել] հարյուր քսան հազար դինար [տարեկան հարկ]: Նա այնտեղ գնաց Դինավարից:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(29 օգոստոս 911—17 օգոստոս 912)

էջ 140

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սահմանային գոտու հրամանատար Ռուստամը ամառային արշավանք կատարեց Տարսոնի կողմից, իր հետ ունենալով Դիմիանային: Նա պաշարեց հայազգի Մլեհի (Մալիհ ալ-Արմանի)¹⁸⁸ բերդը, ապա մտավ նրա գավառը և հրկիզեց:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(17 հուլիս 915—4 հուլիս 916)

էջ 152

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում հայազգի Մլեհը հարձակվեց Մարաշի վրա, ասպատակեց և նրա շրջակայքից շատերին գերեվարելով, վերադարձավ:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ԶՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(5 հուլիս 916—23 հունիս 917)

էջ 154

ՅՈՒՍՈՒՖ ԻՔՆ ԱՔՈՒ-Լ-ՍԱՋԻ ՄԱՍԻՆ

Իբն ալ-Ֆուրատի¹⁸⁷ առաջին վեզիրության հենց սկզբից Յուսուֆ իբն Աբու-լ-Սաջը, որպես Ատրպատականի ու Հայաստանի կառավարիչ, [իր ձեռքում ունեւոր] պատերազմական, կրոնական (աղոթքի), դատական և այլ գործեր: Նա պաշտավոր էր որոշակի գումար մուծել խալիֆայական դիվանը: Երբ իբն ալ-Ֆուրատը հանվեց, և վեզիր դարձավ ալ-Խականին և նրանից հետո Ալի իբն Իսան, նրա մեջ ազահ ցանկություն առաջացավ և [խալիֆային] ուղարկվելիք հարկի մի մասը ուղարկեց: Այսպիսով, նրա մոտ այնքան գրամ կուտակվեց, որ իրեն ի վիճակի զգաց [խալիֆային] հպատակվելուց հրաժարվել և այսպես մնաց մինչև այս տարին:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍ ԹՎԱԿԱՆ

(1 մայիս 922—20 ապրիլ 923)

էջ 172

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԺԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում հաջիբ Մուհամմադ իբն Նասր¹⁸⁸ Մոսուլից գնաց Կարնո քաղաք (Կալիկալա)¹⁸⁹ ղազինների հրամանատարությունը ստանձնելու և այդ կողմից արշավեց Ռումի երկիրը:

Այդ տարում Տարսուսի զորքը մտավ Մալաթիա, հաղթեց, մտավ Ռումի երկիրը և, սպասվածից ավելի հաջողություն ունենալով, վերադարձավ:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԶՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(19 մարտ 926—7 մարտ 927)

էջ 185

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԺԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարվա Ռաբի Բ (16 հունիս—14 հուլիս) ամսում Մալաթիայի ու շրջակա գավառների վրա հարձակվեցին հոռոմները Դոմեստիկոսի (Դուստուկ) հետ, որին ընկերակցում էր կիրճերի տեղի հայազգի Մլեհը: Նրանք պաշարեցին Մալաթիան, իսկ նրա բնակիչները դիմադրեցին:

Հոռոմները նրա արվարձանի (ծայրամաս) մի քանի դարպասներ գրավեցին ու ներս մտան, սակայն բնակիչները կռվեցին և դուրս քշեցին նրանց։ Հոռոմները քաղաքում ոչինչ ձեռք չբերեցին, սակայն նրա գյուղերից շատերը ավերեցին, նույնիսկ մեռելները դուրս բերեցին և մեջտեղը գցեցին, ապա հեռացան։

Մալաթիայի բնակիչները Ջումադա Ա ամսին (15 հուլիս—13 օգոստոս 926) դիմեցին Բաղդադ՝ օգնություն խնդրելու, սակայն չստացան և ձեռնունայն վերադարձան։

[Այդ տարում] Տարսոնի զորքը ամառային արշավանք կատարեց և ավարով վերադարձավ։

Այդ տարում Տիգրիսը սառեց Մոսուլի մոտ՝ Բալադից մինչև ալ-Հադիսա, այնպես, որ սառույցի պնդությունից ձիերը անցնում էին գետի վրայով։

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(8 մարտ 927—24 փետրվար 928)

էջ 186

Այդ տարում հոռոմները աշխուժացան և հարձակվեցին Սահմանային գոտու վրա, մտան Սամոսատ (Սումայսաթ) ու լրիվ կողոպտեցին՝ ունեցվածք, զենք և ամեն ինչ, իսկ մայր մզկիթում աղոթքի ժամանակ զանգ հնչեցրին։ Ապա մահմեդականները հետապնդեցին հոռոմներին, կռվի բռնվեցին և մեծ ավար վերցրեցին։

էջ 189—190

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՀՈՌՈՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Այդ տարում Տարսոնից մի ձիավոր զորամաս դուրս եկավ Ռումի երկիրը։ Թշնամին հարձակվեց նրա վրա, և կռվի բռնվեցին, հոռոմները հաղթեցին ու մահմեդականներից շորս հարյուր հոգու բռնեցին ու անխնա սպանեցին։

Այդ տարում Դոմեստիկոսը (Դուսուստուկ)¹⁹⁰ մեծ բանակով շարժվեց Ռումի երկրից դեպի Դվին (Դաբիլ) քաղաքը, ուր նասր ալ-Սուրուբին էր՝ պաշտպան զորքով։ Դոմեստիկոսը ուներ խոյեր (դաբբադատ) և քարանետ մեքենաներ (մանաշիկ) և հրարձակ գործիքներ (սրվակներ), որոնցից ամեն մեկը տասներկու մարդ կարող էր վառել և այնքան ուժեղ կրակ ուներ ու

կաշում էր մարդուն, որ ոչ ոք չէր կարող դիմանալ: Մահմեդականները ամենից ավելի դրանից էին վախենում: Այդ մեքենաները ղեկավարում էր մի հրարձակ նետաձիգ, որը նրանց քաջագույններից էր, սակայն մի մահմեդական զինվոր նետահարեց նրան ու սպանեց և ալլահը մահմեդականներին փրկեց նրանց շարիքից:

Դոմեստիկոսը նստում էր մի բարձր գահի վրա, որը նայում էր քաղաքին ու զորքին: Նա հրամայեց կռիվն սկսել իր աչքի առջև: Քաղաքի բնակիչները գիմագրեցին: Հոռոմները Դոմեստիկոսի հրամանատարության տակ համառ պայքարով հասան քաղաքի պարիսպներին և այնտեղ բազմաթիվ ճեղքվածքներ բացին ու մտան քաղաք: Քաղաքի ժողովուրդը և ներսի զորքը սաստիկ պատերազմ տվեցին, և մահմեդականները հաղթեցին ու հոռոմներին դուրս քշեցին, սպանելով մոտավորապես տասը հազար մարդ:

Այդ տարում Զուլ-Կադա (28 դեկտեմբեր—26 հունվար) ամսում Սամալը իր ընկերակիցների հետ ողջ առողջ ամառային արշավանքից վերադարձավ Տարսոն: Նա կռիվ էր բռնվել հոռոմների մի մեծ խմբի հետ, մահմեդականները հաղթել էին, հոռոմներից շատերին սպանել և անհաշիվ ավար էին վերցրել: Նրանց ավարի մեջ պետք է հաշվել և այն, որ Ռումի երկրում երեք հարյուր հազար գլուխ ոչխար էին մորթել, բացի ողջ վիճակում տարածից: Նրանց դեմ դուրս եկավ մի մարդ Իբն ալ-Դա-հաբ անունով՝ մի քուրդ ցեղապետ, որը Զաֆարի կոչված մի բերդ ուներ: Սա մահմեդականությունից հավատափոխ էր եղել ու անցել Ռումի թագավորի կողմը, որը նրան մեծ պարգևներ էր տվել ու հրամայել վերադառնալ իր բերդը: Մահմեդականները հանդիպեցին նրան, կռվեցին, գերեցին և սպանեցին նրան ու բոլոր ընկերակիցներին:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(25 փետրվար 928—13 փետրվար 929)

էջ 198—199

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Դոմեստիկոսը մեծ բանակով Ռումի երկրից եկավ Հայաստան, պաշարեց Խլաթը¹⁹¹, որի բնակիչները հաշտություն կնքեցին: Նա հեռացավ այնտեղից մզկիթից բեմը (մինբար) հանելուց և փոխարենը խաչ դնելուց հետո: Այդ նույնը արեց նաև Բաղեշում (Բաղլիս): Արզնի և այլ [քաղաքների] բնակիչները վախեցան նրանից ու թողնելով իրենց եր-

կիրը հեռացան, իսկ նրանց մեծամեծերը գնացին Բաղդադ՝ խալիֆայից օգնություն խնդրելու, բայց չստացան:

Այդ աարում յոթ հարյուր հոգի՝ հոռոմներ ու հայեր, հասան Մալաթիա և ունենալով ռահեր ու բրիչներ, ձևացրին, որ իբր թե [սևագործ] աշխատանքով ապրողներ են: Սակայն պարզվեց, որ կիրճերի տեր հայազգի Մլեհը (Մալիհ ալ-Արմանի) նրանց ուղարկել էր, որպեսզի մնան և, երբ որ ինքը պաշարի քաղաքը, այն իրեն հանձնեն: Այդ բանն իմացան Մալաթիայի բնակիչները, կոտորեցին նրանց և ունեցվածքն էլ վերցրեցին:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՅՈՒ ԹՎԱԿԱՆ

(14 փետրվար 929—2 փետրվար 930)

էջ 201—202

ՄՈՒԿՏԱԴԻՐԻ ԿՐԿԻՆ ԽԱԼԻՖԱ ԴԱՌՆԱԼԸ

Ապա հետիոտն զորքը (ռաջալա) եկավ (պահակազորքի պետ) Մուհիսի տունը՝ գոռալով և պահանջելով Մուկտադիրին: Եկան ծառաները (ներքինիներ) և փակեցին խալիֆայական տան (դար ալ-խիլաֆա, ապարանք) դռները:

Երբ Մուկտադիրին ասացին, որ դուրս գա, վախեցավ իր անձի համար, կարծելով, որ դա ծուղակ է և հրաժարվեց դուրս գալ: Սակայն նրան դուրս բերեցին և հետիոտն ռազմիկները նրան իրենց վզին նստեցրած տարան մինչև խալիֆայական տունը:

Իսկ Բանի իբն Նաֆիսը, որ Մուկտադիրի ամենակատաղի թշնամիներից էր, հենց որ լսեց կատարվածի մասին, այսինքն թե նա (Մուկտադիրը) վերստին խալիֆա է դարձել, հեծավ մի նժույգ և փախավ Մոսուլ, ապա գնաց Հայաստան, իսկ հետո շարունակեց ճանապարհը, մինչև հասավ Կոստանդնուպոլիս և ընդունեց քրիստոնեությունը:

էջ 206

Այդ տարում Զազիրայի սահմանային գոտում Մալաթիա, Նփրկերտ, Ամիդ, Արզն և այլ վայրեր իրենց թույլ զգացին հոռոմների առջև և որոշեցին հպատակվել Ռումի թագավորին ու հանձնվել նրան, քանզի Մուկտադիր բիլլահ խալիֆան ի վիճակի չէր նրանց պաշտպանել: Մարդ ուղարկեցին Բաղդադ հանձնվելու թույլտվություն խնդրելով, հիշեցնելով իրենց

թույլ լինելը և օդնական զորք խնդրելով, որպեսզի պաշտպանվեն, սակայն ոչինչ չստացան ու վերադարձան:

Այս տարում Մուֆլիհ ալ-Սաջին բախվեց Դոմեստիկոսի հետ, նրանք կռվեցին և Դոմեստիկոսը պարտվեց, իսկ Մուֆլիհը նրա հետևից Ռումի երկիրը մտավ:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(3 փետրվար 930—23 հունվար 931)

էջ 208—209

ՆԱՍԻՐ ԱԼ-ԴԱՌԻԱ ԻԲՆ ՀԱՄԴԱՆԻ ՄՈՍՈՒԼԻՑ ՀԱՆՎԵԼԸ ԵՎ ՆՐԱ ՓՈԽԱՐԵՆ ՍԱԻԴ ԵՎ ՆԱՍԻ ՀՈՐԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Այս տարում Ռաբի Ա ամսին (3 ապրիլ—2 մայիս) Նասիր ալ-Դաուլա Հասան իբն Աբդալլահ իբն Համդանը Մոսուլից հանվեց և այնտեղ կառավարիչ նշանակվեցին Համդանի որդիներ Սաիդ և Նասր հորեղբայրները: Նասիր ալ-Դաուլան նշանակվեց Դիար Ռաբիայի, Մծբինի, Սինջարի, Խաբուրի, Ռաս Այնի, ինչպես նաև Դիար Բաքրի, Նփրկերտի ու Արզնի կառավարիչ, որոշակի դոմարի դիմաց և նա դնաց: Սաիդը Մոսուլ հասավ Ռաբի Բ ամսին:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(24 հունվար 931—12 հունվար 932)

էջ 216—217

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՀՈՌՈՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Այդ տարում Ռաբի Ա ամսին (23 մարտ—22 ապրիլ 931) Տարսոնի կառավարիչ Սամալը արշավեց Ռումի երկիրը: Նա անցավ մի դետ, ապա ձյուն տեղաց, [ծածկելով] մինչև ձիերի կրծքերը: Նրանց վրա հարձակվեց հոռոմների մի մեծ բազմություն, սակայն ալլահը մահմեդականներին հաղթանակ պարգևեց և նրանք հոռոմներից վեց հարյուր հոգու սպանեցին և մոտավորապես երեք հազար հոգու դերեվարեցին, կողոպտելով մեծ քանակությամբ ոսկի, արծաթ, դիպակ (դիբաջ) և այլ բաներ:

Այդ տարում Ռաջաբ ամսին (20 հուլիսի—18 օգոստոս 931) Սամալը վերադարձավ Տարսոն և մտավ Ռումի երկիրը մեծ դորքով՝ թե՛ ձիավոր, թե՛ հետիոտն: Նրանք Ամորիոն (Ամմուրիյա) հասան, ուր մեծ թվով

հոռոմներ էին հավաքվել, սակայն հենց որ լսեցին Սամալի [գալստյան] մասին, ցրվեցին: Մահմեդականները մտան և այնտեղ գտան շատ ապրանք ու մթերք, որը վերցրեցին և ապա վառեցին թշնամու բոլոր կառույցները: Նրանք մտան Ռումի երկիրը և կողոպտելով, կոտորելով ու ավերելով հասան մինչև Անկարա, որն այժմ կոչվում է Անկիրիոն (Անքուրիյա) և ողջ-առողջ վերադարձան, առանց որևէ վտանգի հանդիպելու: Ավարի արժեքը կազմում էր հարյուր երեսունվեց հազար դինար: Նրանք հասան Տարսոն Ռամադան ամսի (17 սեպտեմբեր—16 հոկտեմբեր 931) վերջում:

Այդ տարում իբն ալ-Դայրանին⁹² (Դերենիկի որդին) և Հայաստանի ծայրամասային [գավառների] այլ հայազգի [իշխաններ] գրեցին հոռոմներին, դրդելով հարձակվել իսլամի երկրի վրա և խոստանալով իրենց օգնությունը: Հոռոմները մեծ բազմությամբ հարձակվեցին, ավերեցին Բերկրին (Բարքարի), իսլավ իր շրջակայքով, մահմեդականներից շատերին սպանեցին և մեծ բազմություն գերեցին: Այս լուրը հասավ Մուֆլիհին՝ Յուսուֆ իբն Աբու-լ-Սաջի ղուլամին, որն Ատրպատականի կառավարիչն էր: Սա Հայաստան եկավ մեծ զորքով, որին հետևում էին կամավորներ և հասավ Ռամադան ամսին: Նա դիմեց իբն ալ-Դայրանիի երկիրը և կովեց նրանց դեմ, որոնք առաջինի հետ համախոհ էին այգը ընդհարումների ժամանակ: Նա սպանեց նրա մարդկանց, կողոպտեց նրանց ունեցվածքը: Իբն ալ-Դայրանին ամրացավ իր մի բերդում: Հայերից այնքան շատ կոտորեցին, որ ասվում է, թե դրանց թիվը հասնում էր հարյուր հազարի, սակայն ալլահը ավելի լավ գիտի:

Ռումի զորքերը գնացին Սամոսատ (Սումայսաթ) ու պաշարեցին: Բնակիչները օգնություն խնդրեցին Սաիդ իբն Համդանից, որին Մուկտադիրը Մոսուլի ու Դիար Ռաբիայի կառավարիչ էր կարգել, պարտավորեցնելով արշավել Ռումի կողմերը և նրանցից փրկել Մալաթիան, որի բնակիչները վատ դրության մեջ լինելով հաշտություն էին կնքել հոռոմների հետ՝ նրանց հանձնելով քաղաքի բանալիները և սրանք դարձել էին մահմեդականների տերերը: Արդ, երբ Սամոսատի բնակիչների սուրհանդակը եկավ Սաիդ իբն Համդանի մոտ, սա պատրաստվեց ու շտապ գնաց նրանց մոտ: Հասավ, երբ հոռոմները գրեթե գրավելու վրա էին, սակայն երբ նա մոտեցավ, նրանք փախան: Այնտեղից նա գնաց Մալաթիա, ուր կար հոռոմների բազմություն, ինչպես նաև հայազգի Մլեհի (Մալիհ ալ-Արմանի) զորքը: Սրա հետ էր Մուկտադիրի [հին] զորապետ Բանի (Բունայյ) իբն Նաֆիսը, որը, լինելով հոռոմների ձեռքում, ընդունել էր քրիստոնեությունը: Երբ իմացան, որ Սաիդը գալիս է, դուրս եկան քաղաքից, վախենալով, որ քաղաքի դրսի կողմից Սաիդը

կգա իր զորքով, իսկ [ներսից] բնակիչները կապստամբեն ու կսպանեն իրենց: Ուստի փախան, իսկ Սաիդը մտավ քաղաք, ապա, որպես փոխանորդ թողնելով իր զորապետներից մեկին, վերադարձավ:

Նա մտավ Ռումի երկիրը, որպես ղազի (հավատի մարտիկ), Շավվալ ամսին (17 հոկտեմբեր—15 նոյեմբեր 931): Նրա երկու առաջապահ զորամասերը, դեռ նախքան իր Ռումի երկիրը ներթափանցելը, արդեն հռոմեներից մեծ բազմություն կոտորել էին:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(22 դեկտեմբեր 933—10 դեկտեմբեր 934)

էջ 243

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Դոմեստիկոս (Դոմոստոկ) Կուրկուասը (Կուրկաշ) հիսուն հազար հռոմեների հետ եկավ ու պաշարեց Մալաթիան երկար ժամանակ, այնպես որ բնակիչների մեծ մասը սովից մեռավ: Նա երկու վրան խփեց, որոնցից մեկի վրա խաչ կար և ասաց՝ ով ուզում է քրիստոնյա դառնալ, թող գա այն վրանի մոտ, որի վրա խաչ կա, որ ստանա իր ընտանիքը և ունեցվածքը, իսկ ով ուզում է մահմեդական մնալ, թող մյուս վրանի մոտ գա և կստանա իր կյանքի ապահովությունը և ապահով տեղ կհասնի: Մահմեդականների մեծ մասը եկավ այն վրանի մոտ, ուր խաչ կար, ցանկանալով ստանալ իրենց ընտանիքը և ունեցվածքը: Մնացածներին մի պատրիկի հետ ապահով վայր ուղարկեց և երաշխավորագրով գրավեց (քաղաքը) Զումադա Բ ամսի սկզբին, կիրակի օրը (19 մայիս 934): Նրանք տիրեցին նաև Սամոսատին, ավերեցին այդ շրջանը, շատ կոտորեցին ու սարսափելի արարքներ գործեցին և երկրի մեծ մասը նրանց ձեռքն ընկավ:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(8 նոյեմբեր 937—28 հոկտեմբեր 938)

էջ 267—268

ԼԱՇՔԱՐԻԻ՝ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԸ ԳՐԱՎԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Լաշարի իբն Մարգին գրավեց Ատրպատականը¹⁹³: Այս Լաշարին ավելի հզոր էր, քան վերոհիշյալը, քանզի Վաշմգիրի¹⁹⁴ տեղա-

կալն էր Զաբալ նահանգում: Նա շատ դրամ և զորք հավաքեց ու գնաց Ատրպատական, ուր այն ժամանակ իշխում էր Դալսամ իբն Իբրահիմ ալ-Քուրդին՝ իբն Աբու-լ-Սաջի մերձավորներից (զորականներից) մեկը: Դալսամը զորք հավաքեց ու կռվեց Լաշքարիի հետ և պարտվեց, ապա, նորից եկավ, [զորք] հավաքեց ու կռվի բռնվեց, սակայն նորից պարտվեց:

Լաշքարին գրավեց նրա երկիրը, բացի Ատրպատականի մայրաքաղաք Արդաբիլից, քանզի նրա բնակիչները շուղեցին, հանձնվել, հույսը դնելով քաղաքի անառիկության վրա, իսկ իրենք ևս քաջ և ուժեղ էին: Լաշքարին նամակներ ուղարկեց խոստանալով լավ վերաբերմունք ցուցաբերել, քանզի նրանք լսել էին դեմիկների (դալամի)¹⁹⁵ Զաբալ նահանգում, Համադանում և ալլուր ցույց տված վատ վերաբերմունքի մասին: Նա երկար ժամանակ պաշարեց նրանց, ապա նրա զինվորները բարձրացան պարիսպը, մի քանի տեղ ծակեցին ու մտան քաղաքը: Լաշքարին ցերեկը մտնում էր քաղաք, իսկ գիշերը՝ վերադառնում իր զորքի մոտ: Սակայն քաղաքի բնակիչները պարսպի ճեղքվածքը փակեցին, ըմբոստացան նրա դեմ ու նորից սկսեցին պատերազմը: Նա զղջաց իր դանդաղ կոտորության և անվճռականության համար:

Արդարիլի բնակիչները լուր ուղարկեցին Դալսամին, տեղեկացնելով այդ վիճակի մասին և օր որոշեցին, որ դա, ընդ որում իրենք դուրս էին գալու Լաշքարիի դեմ կռվի, իսկ նա գալու էր ետևից: Նա այդպես էլ արեց ու գնաց նրանց մոտ, և նրանք նշանակված օրը դուրս եկան մեծ բաղմունքով ու կռվեցին Լաշքարու գեմ: Դալսամը եկավ ետևից, և նա [Լաշքարին] սաստիկ պարտություն կրեց ու նրա մարդկանցից մեծ բաղմունքով կոտորվեց:

Նա փախավ Մուղան (Մուկան), որի իսբահբադը (սպահապետ), իբն Դաուլա կոչված, պատվեց նրան ու լավ հյուրասիրություն ցույց տվեց:

Լաշքարին [զորք] հավաքեց ու շարժվեց Դալսամի դեմ: Նրան օգնեց իբն Դաուլան, իսկ Դալսամը փախավ ու անցավ Արաքս (Արաս) գետը: Լաշքարիի մարդկանցից ոմանք անցան գետը նրա ետևից, և Դալսամը պարտություն կրեց: Նա գնաց Վաշմգիրի մոտ, որը Ռեյում (Ռայ) էր ու վախեցրեց նրան Լաշքարուց: Դալսամը տարեկան որոշ գումար խոստացավ այն բանի համար, որ սա (Վաշմգիրը) իրեն զորք տա: Վերջինս ընդառաջեց նրան և հետը զորք ուղարկեց:

Լաշքարիի զորականները գրեցին Վաշմգիրին, տեղեկացնելով, որ իրենք հնազանդ են նրան և երբ որ տեսնեն նրա զորքը, նրա կողմը կանցնեն՝ ընդդեմ Լաշքարու: Սակայն Լաշքարին բռնեց այդ նամակներն ու ծածկեց այդ բանը նրանցից (Վաշմգիրի կողմնակիցներից): Երբ Վաշմգիրը մոտեցավ, հավաքեց իր զորքն ու հայտնեց ամեն ինչ և ասաց, որ

ինքը նրանց հետ չի կարող կռվել ու որոշել է գնալ Անձեաքայաց (ալ-Ջավազան) կողմերը՝ կողոպտելու ճանապարհի վրա գտնվող հայերին, ապա գնալ Մոսուլ, այն գրավելու և այլ վայրեր [արշավել]։ Նրանք համաձայնեցին, և նա գնաց Հայաստան, որի բնակիչները անտեղյակ նստած էին։ Նա կողոպտեց, ավարի տվեց, գերեվարեց ու հասավ Անձեաքի՝ իր հետ ունենալով ավարը։ Նա կանգ առավ մի հայի տիրույթներում։ Սա գրամ առաջարկեց նրան, միայն թե հանգիստ թողներ իրեն և իր երկիրը։ (Լաշքարին) համաձայնեց նրա հետ։ Ապա հայր ծուղակ լարեց մի կիրճում ու հրամայեց մի քանի հայերի, որ Լաշքարի ունեցվածքից որևէ բան կողոպտեն ու գնան այգ կիրճի կողմը։ Նրանք այդպես էլ արեցին ու լուրը հասավ Լաշքարուն։ Սա հեծավ իր ձին ու հետապնդեց նրանց հինգ մարդկանցով, իսկ դարան մտածները դուրս զալով սպանեցին նրան ու ընկերներին։ Ապա եկան նրա ղորքերը ու տեսնելով նրանց սպանված վիճակում, վերադարձան։ Նրանք հրամանատար ընտրեցին որդուն՝ Լաշքարիստանին, ու որոշեցին գնալ Տիննին լեռնանցքով, որը Ջուղի (Արարադ) լեռան այն կողմում էր և այնտեղ ապահով վայրում թողնելով իրենց հոտերը, վերադարձան հայազգի Ատոմի (Աթում ալ-Արմանի)¹⁹⁶ մոտ, որ վրեժ լուծեն նրանից։ Ատոմը այս բանը լսելով, մարդկանց տեղավորեց կիրճերի վրա, որպեսզի քարկոծեն նրանց ու թույլ չտան անցնելու։ Նրանք (հայերը) մեծ թվով մարդկանց սպանեցին և միայն քչերը փրկվեցին, որոնց մեջ էր Լաշքարիստանը։ Սա իր մարդկանցով գնաց Նասիր ալ-Դաուլա իբն Համդանի¹⁹⁷ մոտ՝ Մոսուլ, նրա ղորքի մի մասը սրա մոտ մնաց, իսկ ուրիշները գնացին Բաղդադ։

Մոսուլում մնացածներին (Նասիրը) չորեղբորորդու՝ Աբու Աբդալլահ ալ-Հուսայն իբն Սաիդ իբն Համդանի, հետ ուղարկեց Ատրպատականի իր իշխանության տակ գտնվող մասը, այն ժամանակ, երբ Դալսամը այնտեղ էր եկել գրավելու նպատակով։ Աբու Աբդալլահն իր հորեղբորորդու՝ Նասիր ալ-Դաուլայի, կողմից կառավարիչի օգնական (մուավին) էր¹⁹⁸ նշանակվել Ատրպատականում, սակայն Դալսամը եկավ, կռվեց նրա դեմ, և իբն Համդանը անկարող գտնվելով նրան դիմադրել, հեռացավ Ատրպատականից, իսկ Դալսամը գրավեց այն։

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(25 սեպտեմբեր 941—14 սեպտեմբեր 942)

էջ 286

ԴԵԼՄԻԿՆԵՐԻ՝ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ Մարզուբանը¹⁹⁹ դնաց Ատրպատական, Դալսամը նույնպես գնաց և երբ դեմ առ դեմ դուրս եկան պատերազմելու, դեմիկները (դալա-

միններ) և նրանց ետևից նաև շատ քրդեր նորից անցան Մարզուրանի կողմը, նրա հովանավորության տակ: Մարզուրանը հաղթեց Դալսամին և սա մերձավորների մի փոքրիկ խմբով փախավ Հայաստան՝ ապաստանելով Դերանիկի որդի Գագիկին (Ջաջիկ իբն ալ-Դայրանի) մոտ, քանզի նրանց միջև մտերմություն կար, և վերջինս պատվով ընդունեց նրան: Դալսամը սկսեց կազմակերպել քրդերին: Նրա մտերիմները խորհուրդ էին տալիս, որ հեռացնի իր զորքի մեջ եղած դելմիկներին (դալլամի), որոնք խորթ էին թե՛ ցեղով, թե՛ հավատով, սակայն նա չընդունեց: Եվ Մարզուրանը տիրեց Ատրպատականին ու նրա գործերը հաջող էին, մինչև որ նրա հարաբերությունները փշացան իր վեղիրի՝ Ալի իբն Ջաֆարի, հետ:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(15 սեպտեմբեր 942—3 սեպտեմբեր 943)

էջ 294

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռումի թագավորը լուր ուղարկեց Մուստակի լիլլահ [խալիֆային], խնդրելով մի թաշկինակ, որի մասին ասում էին, թե Քրիստոսը իր երեսին էր քսել, և դեմքը նրա վրա էր պատկերվել: Դա գտնվում էր Եդեսիայի (Ռուհա) եկեղեցիներից մեկում: Նա նշում էր, որ եթե թաշկինակը (մանդիլ) իրեն ուղարկվի, ապա ինքը մեծ թվով մահամեղական գերիների ազատ կարձակի:

Մուստակի լիլլահը հրավիրեց դատավորների (կադի), օրենսգետների (ֆակիհ) և նրանցից ֆատուա²⁰⁰ պահանջեց: Նրանք տարբեր կարծիքներ հայտնեցին. ոմանք համաձայն էին այն հանձնել [Ռումի] թագավորին և գերիներին փրկել, իսկ ուրիշներ ասացին՝ այս թաշկինակը հնագույն ժամանակներից եղել է իսլամի երկրում և Ռումի ոչ մի թագավոր այն չի պահանջել, ուստի հանձնելը նվաստացում է: Հավաքվածների մեջ էր նաև Ալի իբն Իսա վեզիրը, որն ասաց՝ մահամեղականներին գերությունից, նեղությունից ու զրկանքից ազատելը ավելի լավ է, քան այդ թաշկինակը մեզ մոտ պահելը: Եվ խալիֆան հրամայեց այն հանձնել և գերիներին ազատել: Այդպես էլ արվեց և մարդ ուղարկվեց, որ դնա Ռումի երկրից գերիներին բերի, և [իրոք] սրանք ազատ արձակվեցին:

էջ 297—298

ՌՈՒՍՆԵՐԻ՝ ՊԱՐՏԱՎ (ԲԱՐԴԱԱ) ՔԱՂԱՔԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում ռուսները²⁰¹ մի խումբ դուրս եկավ դեպի [Կասպից] ծով և հարձակվեց Ատրպատականի կողմերը:

Ծովի վրա նավելով նրանք բարձրացան Կուրն ի վեր, որը մեծ գետ է, և հասան Պարտավ (Բարդաա): Նրանց դեմ ելավ Մարզուբանի Նաիրը (տեղակալը)²², Պարտավի դեմիկների ու կամավորների բազմությամբ, որոնց թիվը հինգ հազարից ավելի էր, և նրանք բախում ունեցան ռուսների հետ, սակայն, հաջիվ մեկ ժամ անց, մահմեդականները պարտություն կրեցին: Դեմիկները լրիվ կոտորվեցին, իսկ ռուսները [մահմեդականներին] հետապնդեցին դեպի քաղաք և, ով որ հեծնելու գրաստ ուներ, փախավ, լքելով քաղաքը: Ռուսները գրավեցին քաղաքը, երաշխավորագիր (աման) առաջարկեցին և լավ վերաբերվեցին: Ապա ամեն կողմից մահմեդականների զորքեր եկան և ռուսները կովի էին բռնվում նրանց հետ, իսկ մահմեդականները չէին կարողանում դիմադրել նրանց: Քաղաքի ռամիկը դուրս էր գալիս և քարկոծում ռուսներին ու աղաղակում: Ռուսները այդ բանն արգելում էին նրանց, սակայն նրանք չէին հրաժարվում այդ բանից, բացի որոշ խելոքներից, որոնք ետ կանգնեցին, իսկ հասարակ ժողովուրդը և ռամիկը իրենց չէին զսպում:

Երբ այս բանը երկարեց, նրանց (ռուսների) մուսնետիկը հայտարարեց, որ քաղաքի ժողովուրդը պետք է երեք օրում դուրս գա: Դուրս եկավ, ով որևէ [գրաստ] ուներ, որի միջոցով կարող էր դուրս գալ, սակայն մեծամասնությունը մնաց նշված ժամկետից հետո: Ռուսները շարդեցին նրանց, շատ ժողովուրդ կոտորեցին և կոտորելուց հետո էլ մի քանի տասնյակ հազար գերեվարեցին: Մնացածներին հավաքեցին մզկիթում և ասացին՝ ձեր փրկագինը տվեք, թե չի կկոտորենք: Նրանց համար միջնորդեց մի քրիստոնյա և ամեն մի մարդու համար քսան դիրհեմ որոշեցին, սակայն այս բանը ընդունեցին միայն խոհմաները: Երբ ռուսները տեսան, որ ոչինչ չի դուրս գալիս, բոլորին կոտորեցին և միայն փախչողներն ազատվեցին: Նրանք [քաղաքի] բնակիչների ունեցվածքը ավարի տվին, գերեվարեցին և կանանցից, ով որ իրենց հաճելի թվաց, տարան:

Երբ ռուսները Պարտավի (Բարդաա) բնակիչների նկատմամբ վերո-
հիշյալը արեցին, մահմեդականները զայրացան և իրար կովի կոշ արեցին։
Մարդուբան իրն Մուհամմադը հավաքեց մարդկանց և կովի կոշ արեց։
Նրա մոտ երեսուն հազար մարդ հավաքվեց, որոնց հետ նա կովի գնաց,
սակայն չկարողացավ ռուսներին դիմադրել։ Թե՛ առավոտյան, թե՛ երեկո-
յան կռիվ էր տալիս, սակայն միշտ պարտված էին վերադառնում։ Այդպես
տևեց մի քանի օր։

Արդ, ռուսները գնացել էին Մարաղայի կողմերը և որովհետև շատ
միտք էին կերել, հիվանդացան, և նրանց մեջ հիվանդություններ ու մահ
տարածվեց։ Երբ գործը երկարեց, Մարդուբանը խորամանկությամբ գոր-
ծադրեց։ Նա որոշեց մարդկանց դարանակալ պահել, իր զորքով հարձակ-
վել, ապա նահանջ ձեռնել և երբ դարանակալ մարդիկ դուրս գային,
ինքն էլ նորից հարձակվեց [ռուսների] վրա։ Այս բանը նա առաջարկեց
իր զորքերին և նրանց դարան մտցրեց։ Ապա նրանք հանդիպեցին, ընդ-
հարկեցին, և Մարդուբանն ու նրա զորքը փախուստ ձեռնարկեցին, իսկ ռուս-
ները նրանց ետևից ընկան, մինչև որ դարանի տեղն անցան, սակայն
[Մարդուբանի] մարդիկ շարունակեցին փախչել առանց ետ նայելու։

Մարդուբանը [հետագայում] պատմել է այդ մասին՝ գոռացի մարդ-
կանց, որ ետ դառնան, սակայն նրանք այդ բանը չարեցին, որովհետև
սաստիկ վախեցել էին ռուսներից, և ես հասկացա, որ եթե մարդիկ շա-
րունակեն փախչել, ռուսները նրանց մեծ մասին կկոտորեն և ապա վե-
րադառնալով դարանակալների մոտ, կկռահեն եղածը և սրանց ևս լրիվ
կսպանեն։ Ապա ես մենակս ետ դարձա,—ասաց նա,—և ինձ հետևեցին
եղբայրս ու ընկերս. ես պատրաստ էի շահիդ (հավատի նահատակ) դառ-
նալ։ Այդ ժամանակ դեմիկների մեծ մասը ամոթից ետ դարձավ և մենք
հարձակվեցինք, իսկ դարանակալներին մեր ազդանշանով կանչեցինք։
Նրանք հարձակվեցին [ռուսների] ետևից և քաջաբար կովեցինք ու շա-
տերին սպանեցինք, որոնց մեջ էր նրանց ամիրը (իշխանը)։ Մնացած-
ները ապաստանեցին Շահրիստան կոչված քաղաքի բերդը, ուր նրանք
շատ մթերք էին փոխադրել, ինչպես նաև գերիներին և ունեցվածքը։

Մարդուբանը նրանց համառ կերպով պաշարեց, սակայն նրան լուր
հասավ, թե Աբու Աբդալլահ ալ-Հուսայն իբն Սաիդ իբն Համդանը մտել է
Ատրպատական ու հասել Սալմաստ։ Նրան ուղարկել էր վերջինիս հորեղ-
բորորդին՝ Նասիր ալ-Դաուլան, որպեսզի նվաճի Ատրպատականը։ Երբ
լուրը հասավ Մարդուբանին [մի զորամաս] թողեց ռուսների պաշարման
համար, իսկ ինքը գնաց իբն Համդանի գեմ և ընդհարվեցին։ Ապա ձյուն

տեղաց, և իբն Համդանի զորքը ցրվեց, քանզի մեծ մասամբ անապատի արաբներ էին: Նասիր ալ-Դաուլայից նամակ եկավ [իբն Համդանին]՝ իմաց տալով, որ Տուգունը մահացել է, իսկ ինքը կամենում է իջնել Բաղդադ և հրամայում էր նրան վերադառնալ, և սա ետ դարձավ:

Իսկ Մարզուբանի մարդիկ շարունակեցին կռվել ռուսների դեմ և հիվանդությունները տարածվեցին ռուսների մեջ: Երբ նրանք թաղում էին մարդուն, հետը դնում էին նաև զենքերը, և [հետագայում] ռուսների հեռանալուց հետո մահմեդականները դրա մեծ մասը դուրս բերեցին: Ապա նրանք (ռուսները) գիշերով բերդից դուրս եկան, իրենց մեջքի վրա տանելով ցանկացած ունեցվածքը և այլ բաներ: Նրանք իջան Կուր և իրենց նավերը նստելով հեռացան: Մարզուբանի զորքերը չկարողացան նրանց հետապնդել և տարած ունեցվածքը խլել նրանցից ու թողեցին նրանց: Եվ ալլահը երկիրը մաքրեց նրանցից:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(13 օգոստոս 945—1 օգոստոս 946)

էջ 317

ԵՐԿՐԻ (ՏԵՐՈՒԹՅԱՆ) ԲԱԺԱՆՈՒՄԸ ԱՎԱՏՆԵՐԻ (ԻԿԹԱ) ԵՎ ՆՐԱ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ²⁰³

Այդ տարում զորքը ըմբոստացավ Մուիզզ ալ-Դաուլա իբն Բուայհի դեմ և շատ անվայել խոսքեր ասացին, և նա պարտավորվեց որոշված ժամկետում վճարել նրանց ռոճիկը: Այդ պատճառով նա ստիպված եղավ կողոպտել ժողովրդին և ապօրինի ճանապարհներով փողեր վերցնել: Նա իր բոլոր զորավարներին ու մերձավորներին պարգևեց սուլթանի (տերունի) և կալվածատիրական (ամլաք) գյուղերը, որի պատճառով [պետական] դիվանների մեծ մասը դադարեց գործելուց և պաշտոնյաներն անգործ մնացին: Երկիրն արդեն ավերվել էր երկպառակությունների, սղության և կողոպուտի պատճառով:

Ջորավարները գրավեցին շեն գյուղերը և գրանք առավել շենացան և եկամուտը ավելացավ սրանց [բարձր] դիրքի շնորհիվ: Իսկ Մուիզզ ալ-Դաուլան չկարողացավ այդ [կալվածները] ետ վերցնել նրանցից: Ինչ վերաբերում է հասարակ [աստիճանավորներին], ապա նրանց վերցրած [հողերը] առավել ևս ավերվեցին և նրանք վերադարձրին ու փոխարենը [նորը] պահանջեցին ու տրվեց նրանց: [Շարքային] զինվորականները հոգ չէին տանում գյուղերում ջրանցքներ փորելու և դրանց հունը մաքրե-

լու գործին և դրանք փշացան ու շատերը անօգտագործելի դարձան: Ավատառուներին²⁰⁴ ղուլամները սկսեցին անիրավություն գործել [գյուղացիների նկատմամբ], հարկը ժամկետից շուտ էին հավաքում և եթե մեկը չէր կարողանում հարկը վճարել, ամբողջ ունեցվածքը գրավվում էր:

Ապա Մուիդը ալ-Դաուլան ամեն մի տեղի պաշտպանութունը հանձնարարեց իր մերձավոր մեծամեծներից որևէ մեկին: Սրանք այն դարձրին բնակելի [կալվածներ] և առավել ազահ դարձան և նրանց եղբայրներն էլ եկան հավաքվեցին: Զորավարները բողոքում էին, թե հասույթը վատ է, սակայն ո՛չ վեզիրը, ո՛չ էլ ուրիշը չէր կարող այդ բանը ստուգել և եթե որևէ մեկը վիճեր [զորավարների հետ], ապա սրանք թշնամի էին դառնում նրան: Այսպիսով, ամեն ինչ թողեցին նրանց կամքին, իսկ սրանք առավել ազահ դարձան և ոչ մի բանի առջև կանգ չէին առնում:

Մուիդը ալ-Դաուլան անկարող դարձավ մթերք հավաքելու, աղետները և անակնկալները [դիմագրավելու] համար: Եվ սկսեց ավելի շատ տիրույթներ պարզել իր թուրք ղուլամներին, որին նախանձեցին դեմիկները և ծնունդ առան թշնամություն ու երկպառակություններ, որոնց մասին կիսոսենք ստորև:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(11 հուլիս 948—30 հունիս 949)

էջ 330—331

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սայֆ ալ-Դաուլա իբն Համդանը հարձակվեց Ռումի երկրի վրա, պատերազմ տեղի ունեցավ և պարտվեց Սայֆ ալ-Դաուլան, իսկ հոռոմները գրավեցին Մարաշը և պարտության մատնեցին Տարսոնի զորքը:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(18 մայիս 953—6 մայիս 954)

էջ 342

ԴԱՅՍԱՄԻ ՓԱԽՈՒՍԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻՑ

Այդ տարում Ատրպատականից փախավ Դայսամ իբն Իբրահիմ Աբու Սալիմը, որն, ինչպես հիշել ենք, գրավել էր Ատրպատականը:

Փախուստի պատճառն այն էր, որ Ռուբն ալ-Դաուլա իբն Բուայհը²⁰⁵ ձերբակալել էր նրա զորավարներից մեկին, որի անունն էր Ալի իբն Միսքի: Սա փախավ բանտից և դիմեց Զաբալ [նահանգը], հավաքեց մարդկանց ու գնաց Մարզուբանի եղբոր՝ Վահսուգանի, մոտ: Նրանք միաբանեցին և դաշնակցեցին Դալսամի դեմ: Ապա Դալսամը գրավեց Սամիրամ բերդը, որի մասին կհիշենք: Նրա նամակաները ազատվելու մասին հասան եղբորը և Ալի իբն Միքսիին: Նա գրեց նաև դեմիկներին՝ նրանց իր կողմը սիրաշահելու համար: Սակայն Դալսամը չգիտեր Մարզուբանի ազատման մասին և կարծում էր, որ իր դեմ կռվում են Վահսուգանն ու Ալի իբն Միսքին:

Նա (Դալսամը) ուներ մի վեզիր, որը կոչվում էր Աբու Աբգալլահ ալ-Նաիմի: [Դալսամը] աչք դրեց նրա ունեցվածքին, ձերբակալեց նրան և նրա փոխարեն նշանակեց մի մարդու, որը նախապես Նաիմիի քարտուղարն էր եղել: Նաիմին խորամանկորեն զիջեց նրա բոլոր պահանջներին և համաձայնեց վճարել այդ քարտուղարի համար: Դալսամը ազատ արձակեց [Նաիմիին], նրան հանձնեց քարտուղարին և նրան վերադարձրեց նախկին դիրքին:

Ապա Դալսամը դուրս եկավ Արդաբիլից՝ թողնելով նրան (Նաիմիին), որպեսզի պատրաստի այն փողերը, որ խոստացել էր: Սակայն Նաիմին սպանեց իր քարտուղարին և իր ամբողջ ունեցվածքով փախավ Ալի իբն Միսքիի մոտ: Երբ լուրը հասավ Դալսամին, որը Զինջանի մոտ էր, վերագարձավ Արդաբիլ: Նրա դեմ ըմբոստացան դեմիկները, և նա իր մոտ եղած զորամեները բաժանելով [հանգստացրեց նրանց]:

Երբ նա տեղեկացավ, որ Ալի իբն Միսքին փոքրաթիվ ջոկատով գնացել էր Արդաբիլ, ինքն էլ գնաց: Նրանք հանդիպեցին ու ընդհարվեցին, դեմիկներն անցան Ալիի կողմը, իսկ Դալսամը մի քանի քրգերի հետ փախուստի դիմեց Հայաստան, որի թագավորները²⁰⁶ նրան օգնեցին, որպեսզի գիմանա:

Նա լուր ստացավ, որ Մարզուբանը Սամիրամ ամրոցից ղնացել է Արդաբիլ, գրավել Ատրպատականը և բանակ ուղարկել իր դեմ: Նա չկարողացավ մնալ և Հայաստանից փախավ Բաղդադ, ուր հասավ հենց այս տարում: Նրան դիմավորեց Մուիզզ ալ-Դաուլան, մեծարեց, լավ վերաբերվեց և նա գոհ վիճակում էր գտնվում:

Սակայն նրա մերձավորներն ու բարեկամները Ատրպատականից գրեցին նրան և ահա [երեք հարյուր] քառասուններ թվին նա դուրս եկավ Բաղդադից: Նա օգնական ուրբ խնդրեց Մուիզզ ալ-Դաուլայից²⁰⁷, սակայն սա չտվեց, քանզի Մարզուբանը հաշտություն էր կնքել Ռուբն ալ-

Դառուլայի հետ և խնամհացել, իսկ Մուիզզ ալ-Դաուլան չկարողացավ Ռուքն ալ-Դաուլային հակառակ գործել:

Դայսամը գնաց Մոսուլ՝ նասիր ալ-Դաուլա իրն Համգանի մոտ՝ օգնություն խնդրելու, սակայն սա չօգնեց նրան, ապա գնաց Ասորիք՝ Սայֆ ալ-Դաուլայի մոտ և մնաց մինչև երեք հարյուր քառասունչորս թվականը:

Այդ ժամանակ Բաբ ալ-Աբուաբի (Դարբանդ) ժողովուրդը ապստամբեց Մարդուբանի դեմ: Նա գնաց նրանց դեմ արշավանքի և ահա Ատրպատականի քուրդ ցեղապետներից մեկը լուր ուղարկեց Դայսամին՝ հրավիրելով Ատրպատական և խոստանալով օգնել նրան իշխանությանը տիրանալու: Սա գնաց ու գրավեց Սալմաստ քաղաքը: Մարդուբանը զորավարներից մեկին ուղարկեց, և կովի մեջ զորավարի մարդիկ անցան Դայսամի կողմը և նա պարտվեց, իսկ Դայսամը մնաց Սալմաստում:

Երբ Մարդուբանը [Դարբանդի] ապստամբների գործը վերջացրեց, վերադարձավ Ատրպատական: Երբ մոտեցավ Դայսամին, վերջինս Սալմաստը թողեց ու հեռացավ Հայաստան ու դիմեց Դերանիկի որդուն (իբն ալ-Դայրանի) և Գագիկի որդուն (իբն Ջաջիկին)²⁰⁸, քանի որ վստահում էր նրանց: Մարդուբանը գրեց Դերանիկի որդուն, հրամայելով ձերբակալել Դայսամին, սակայն սա չենթարկվեց: Վերջապես ձերբակալեց նրան, վախենալով Մարդուբանից: Երբ բռնեցին նրան, Մարդուբանը հրամայեց խրեն հանձնել և այս անգամ էլ [Արծրունին] չենթարկվեց, սակայն ի վերջո ստիպված եղավ հանձնել նրան: Երբ Մարդուբանը ձեռք բերեց նրան, աչքերը փորել տվեց, կուրացրեց նրան և ապա բանտարկեց:

Երբ մեռավ Մարդուբանը, նրա մերձավորներից (զորականներից) մի քանիսը սպանեցին Դայսամին՝ վախենալով նրանում կուտակված ուժից:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(7 մայիս 954—26 ապրիլ 955)

էջ 346—347

ՍԱՅՖ ԱԼ-ԴԱՈՒԼԱ ԻԲՆ ՀԱՄԴԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Այդ տարում Ռաբի Ա ամսին (5 հուլիս—3 օգոստոս) Սայֆ ալ-Դաուլա իբն Համդանը²⁰⁹ արշավեց Ռումի երկիրը: Նա կոտորեց, գերեց, գերեվարեց [ժողովրդին], ավարի տվեց: Սպանվածների մեջ էր Դոմեստիկոսի որդի Կոստանդինը (Կուսթանթին), և այս բանը ծանր էր հոռոմներին և Դոմեստիկոսին: Նա զորք հավաքեց հոռոմներից, ռուսներից, բուլղարներից և ուրիշներից ու շարժվեց գեպի Սահմանային գոտին (սուղուր):

Նրա դեմ դուրս եկավ Սայֆ ալ-Դաուլա իբն Համդանը և նրանք հանդիպեցին Հադասի մոտ Շաաբան ամսին (30 նոյեմբեր—28 դեկտեմբեր) և սաստիկ կռիվ տեղի ունեցավ նրանց միջև, քանզի երկու կողմերը համառ դիմադրեցին։ Սակայն բարձրյալն ալլահը հաղթանակը տվեց մահմեդականներին և հռոմեները փախուստի դիմեցին։ Նրանցից ու նրանց ընկերացողներից մեծ բազմություն կոտորվեց, դերի ընկավ Դոմեստիկոսի փեսան, աղջկա տղան և բազում պատրիկներ, իսկ Դոմեստիկոսը վերադարձավ պարտված և ընկճված։

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(15 ապրիլ 956—3 ապրիլ 957)

էջ 351

ՍԱՅՖ ԱԼ-ԴԱՈՒԼԱՅԻ՝ ՌՈՒՄԻ ԵՐԿԻՐ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռաջաբ ամսին (9 հոկտեմբեր—7 նոյեմբեր) Սայֆ ալ-Դաուլա իբն Համդանը մեծ զորքով շարժվեց դեպի Ռումի երկիրը, արշավեց մինչև խարշանա և Սարիխա, բազում բերդեր գրավեց ու գերեվարեց [ժողովրդին], գերեց, հրկիզեց, ավերեց ու շատերին կոտորեց։ Նա վերադարձավ Ադանա, մնաց այնտեղ մինչև եկավ Տարսոնի պետը, որին նա պատվական զգեստներ շնորհեց, շատ նվերներ տվեց ու վերադարձավ Հալեբ։

Երբ հռոմեները լսեցին, թե նա ինչ էր արել, հավաքվեցին ու հարձակվեցին Նփրկերտի վրա, հրկիզեցին երկիրը, կողոպտեցին, ավերեցին, գերեվարեցին ժողովրդին և, ամբողջ ունեցվածքը հափշտակելուց հետո, վերադարձան։

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(4 ապրիլ 957—24 մարտ 958)

էջ 352

ՄԱՐՁՈՒԲԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռամադան ամսին (նոյեմբեր 957) Ատրպատականում մեռավ նրա տերը Սալլար Մարզուբանը։

Երբ նա [առողջանալու] հույսը կտրեց, իշխանությունը կտակեց իր եղբորը՝ Վահսուդանին, որից հետո պետք է անցներ իր որդուն՝ Զաստան

իբն ալ-Մարղուբանին: Սակայն մինչ այդ նա դիմել էր բերդերի վրա իր թողած տեղակալներին, որ դրանք (բերդերը) իր մահվանից հետո հանձնեն միայն իր որդուն՝ Ջաստանին, որի մահից հետո պետք է տրվեին իր Իբրահիմ որդուն, իսկ եթե սա էլ մեռնի՝ իր [մյուս] որդուն՝ Նասիրին և եթե դրանցից ոչ մեկը չմնար, ապա իր եղբորը՝ Վահսուդանին: Բայց, երբ այս կտակը տվեց իր եղբորը, տեղեկացրեց նրան իր և բերդերի հրամանատարների միջև եղած պայմանական նշանների մասին, որով նա կարող էր [հետագայում] այդ բերդերը ստանալ:

Երբ Մարղուբանը մեռավ, նրա եղբայրը՝ Վահսուդանը, [բերդերի հրամանատարներին] ուղարկեց իր կնիքը և պայմանական նշանները, սակայն նրանք ցույց տվեցին նրան առաջին կտակը: Վահսուդանը կասկածեց, որ եղբայրը խաբել է իրեն: Նա մնաց իր եղբորորդիների մոտ, սակայն, երբ նրանք իշխանությունը իրենց ձեռքը վերցրին առանց նրա, նա հեռացավ Արդաբեյից, ապաստանելով Թարոմ:

Իշխանությունը վերցրեց Ջաստանը, իրեն ենթարկելով եղբայրներին, իսկ վեզիր նշանակվեց Աբու Աբգալլահ ալ-Նաիմին: Նրան ներկայացան իր հոր զորավարները, բացի Ջաստան իբն Շարմազանից, որը վճռել էր գրավել Հայաստանը, քանի որ նրա կառավարիչն էր [համարվում]:

Իսկ Վահսուդանը սկսեց երկպառակություն մտցնել իր եղբորորդիներին միջև, իրար դեմ գրգռել և թշնամիներին դրդել նրանց դեմ, մինչև որ հասավ իր նպատակին և նրանցից մի քանիսին սպանեց:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(3 մարտ 960—19 փետրվար 961)

էջ 357

ՄՈՒՍՏԱՋԻՐ ԲԻԼԼԱՀԻ՝ ԵՐԵՎԱՆ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ատրպատականում ալ-Մուքտաֆի Բիլլահ [խալիֆայի] որդի Իսայի որդիներից մեկը երևան եկավ, որը կրում էր Մուստաջիր Բիլլահ անունը:

Նա [հավատարմության] երդում տվեց Մուհամմադի ընտանիքից սերվող Ռիդային, բրդե զգեստ հագավ, արդարություն էր գործում, հրամայում էր բարիք [գործել] և արգելում չարիքը: Նրա հետևորդները շատացան:

Նրա երևան գալու պատճառն այն էր, որ Ատրպատականի տեր Ջաստան իբն ալ-Մարղուբանը թողել էր իր հոր՝ զորքով զբաղվելու սովորու-

թյունը և զբաղվում էր խաղերով ու կանանց հետ հավաքույթներով: Այդ ժամանակ Ջաստան իբն Շարմազանը Հայաստանում ամրացած էր, իսկ Վահսուդանը Թարոմում էր և բանսարկություններ էր գցում իր եղբորորդիների մեջ, որպեսզի կռվեն իրար հետ: Ջաստան իբն ալ-Մարզութանը ձերբակալեց իր վեզիր Նախմին, բայց քանի որ սա ազգակցական կապ ունեն Ջաստան իբն Շարմազանի վեզիր Աբու-լ-Հասան Ուբայդալլահ իբն Մուհամմադ իբն Համգուլայի (Համդավայհ) հետ, ապա վերջինս դայրացավ Նախմին ձերբակալման համար և իր տիրոջը՝ իբն Շարմազանին դրոգեց, որ նամակագրության մեջ մտնի Հայաստանում գտնվող Իբրահիմ իբն ալ-Մարզութանի հետ: Սա գրեց և դրոգեց նրան [Ատրպատականում] իշխանությանը տիրանալու, և, իրոք, սա եկավ, հարձակվեց Մարդայի վրա ու գրավեց այն:

Երբ Ջաստան իբն ալ-Մարզութանն այդ բանն իմացավ, նամակ գրեց իբն Շարմազանին, որի վեզիրն էր Աբու-լ-Հասանը: Նա երկուսի հետ էլ լավացրեց իր հարաբերությունները և վստահեցրեց, որ ազատ կարձակի Նախմին և այսպիսով [իբն Շարմազանը] հրաժարվեց Իբրահիմին օգնելուց: Սակայն [իբն ալ-Մարզութանը] և իր եղբայրը իմացան, որ իբն Շարմազանը կեղծում է իրենց և նրանք նամակների միջոցով պայմանավորվեցին նրա դեմ (պայքարել): Այդ ժամանակ Նախմին փախավ Ջաստան իբն ալ-Մարզութանի բանտից ու գնաց Մուղան, նամակ գրեց իբն Իսա իբն ալ-Մուքտաֆի Բիլլահին ու հրապուրեց նրան խալիֆայական իշխանությամբ, խոստանալով զորք հավաքել ու նրա անունով տիրել Ատրպատականին, իսկ եթե հնարավորություն ունենա՝ նաև Իրաքին: [Իբն Իսան] եկավ նրա կողմը երեք հարյուր հոգով, և այստեղ եկավ նաև Ջաստան իբն Շարմազանը, և սա ուժեղացավ ու մարդիկ նրան [հավատարմության] երգում տվեցին, և նրա գործը հաջողություն գտավ: Ներանց դեմ դուրս եկան Մարզութանի որդիները՝ Ջաստանը և Իբրահիմը, կռվելու նպատակով: Երբ նրանք բախվեցին, Մուստաջիրի մարդիկ փախուստի գիմեցին, իսկ ինքը գերի ընկավ և ոչնչացվեց: Ասվում է, որ նա սպանվեց, ասվում է նաև, թե՝ մեռավ [բնական մահով]:

էջ 357

ՎԱՀՍՈՒԴԱՆԻ ԻՐ ԵՂԲՈՐՈՐԴԻՆԵՐԻՆ ԲՈՆԵԼՈՒ ԵՎ ՍՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իսկ Վահսուդանը, երբ տեսավ իր եղբորորդիների անհամաձայնությունը և թե ինչպես նրանցից ամեն մեկը ձգտում էր մյուսին դավել, Մուստաջիրի հետ կռվից հետո գրեց Իբրահիմին ու հրավիրեց իր մոտ այցելության: Սա եկավ, հորեղբայրը հյուրասիրեց նրան և այնքան նվեր-

ներ տվեց, որ սա լիացավ: Նա գրեց նաև իր մյուս եղբորորդուն՝ Նասիրին՝ ու հրապուրեց նրան: Սա թողնելով իր եղբորը՝ Ջաստանին, գնաց Մուղան, իսկ ղորքը կարծելով, որ արդեն առիթ է ներկայացել ավար (ունեցվածք) ձեռք բերելու, մեծ մասամբ լքեց Ջաստանին ու գնաց եղբոր՝ Նասիրի ետևից: Այսպիսով, սա եղբորից՝ Ջաստանից, ավելի ուժեղ դարձավ ու գրավեց Արդաբիլը, սակայն երբ զինվորները Նասիրից դրամ պահանջեցին, վերջինս չկարողացավ գոհացնել, մանավանդ որ հորեղբայրը՝ Վահսուղանը, հրաժարվեց նրան օգնելուց: Երբ նա [Նասիրը] իմացավ, որ վերջինս սոսկ հրապուրում է նրան, նամակ գրելով իր եղբորը՝ Ջաստանին, հաշտվեց նրա հետ ու գաշնակեց:

Սակայն, քանի որ գրամական խիստ նեղության մեջ էին, գործերը խառն էին, իսկ գավառների կառավարիչները բռնության միջոցով իրենց ձեռքի տակ եղած [տիրույթների] տերերն էին դարձել, ապա Ջաստանը և Նասիրը՝ Մարզուբանի որդիները, ստիպված եղան իրենց մոր հետ գնալ հորեղբոր՝ Վահսուղանի մոտ: Նրանք նախօրոք նամակ գրեցին նրան և պայմանագրեր վերցնելուց հետո նրա մոտ գնացին: Սակայն, երբ գնացին, սա դավաճանեց, ուխտադրուժ եղավ ու ձերբակալեց նրանց՝ Ջաստանին, Նասիրին և նրանց մորը՝ իրեն ենթարկելով զորքը: Նա իշխանությունը հանձնեց իր որդուն՝ Իսմայիլին, տալով իր բերդերի մեծ մասը և դրամ բաժանելով գոհացրեց ղորքը:

[Այդ ժամանակ] Իբրահիմ իբն ալ-Մարզուբանը գնացել էր Հայաստան²¹⁰: Սա կռվի պատրաստվեց Իսմայիլի դեմ, նպատակ ունենալով իր երկու եղբայրներին ազատել հորեղբոր՝ Վահսուղանի բանտից: Երբ Վահսուղանը այս բանը լսեց և տեսավ, որ բոլորը տրամագրված են իր դեմ, աճապարեց սպանել եղբոր որդիներին՝ Ջաստանին ու Նասիրին, ինչպես նաև նրանց մորը: Նա գրեց Ջաստան իբն Շարմազանին, պահանջելով հարձակվել Իբրահիմի վրա: Նա ղորք և գրամ ուղարկեց նրան և սա կատարեց նրա պահանջը: Իբրահիմը ստիպված եղավ փախչել ու վերադառնալ Հայաստան, իսկ իբն Շարմազանը տիրացավ նրա ճամբարին ու Մարաղա քաղաքին, Ուրմիայի հետ միասին²¹¹:

էջ 358

ՍԱՅՖ ԱԼ-ԴԱՌԻԼԱՅԻՒ ՌՈՒՄԻ ԵՐԿԻՐԸ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սայֆ ալ-Դաուլան մեծ զորքով արշավեց Ռումի երկիրը, շատ հաղթանակներ տարավ, հրկիղեց ու գրավեց բազում բերդեր և վերցնելով մեծ թվով գերիներ ու ավար, հասավ Խարսիանոն (Խարշանա): Ապա հռոմեները բռնեցին կիրճերը և, երբ նա ուզեց վերադառնալ, նրա

հետ եղած Տարսնի զորքերը ասացին նրան՝ հռոմեները տիրացել են քո թիկունքում գտնվող կիրճերին (լեռնանցքներին) և չես կարող այստեղից վերադառնալ։ Ավելի լավ է, որ մեղ հետ վերադառնաս։ Սակայն նա շընդունեց, քանզի համառ էր իր կարծիքի վրա, սիրում էր պնդել և ոչ ոքի հետ չէր խորհրդակցում, որ շասվի, թե ուրիշի կարծիքով շարժվեց։ Նա վերադարձավ նույն կիրճով, որի միջով եկել էր և ահա նրա առջև ելան հռոմեները, խլեցին նրա ամբողջ ավարն ու բեռները, կոտորեցին նրա մարդկանց ու շատերին սպանեցին ու գերեցին։ Նա մեծ դժվարությամբ հազիվ կարողացավ փրկվել երեք հարյուր մարդկանց հետ միասին։ Սա է խելոք մարդկանց կարծիքը անտեսելու վատ հետևանքը։ Իսկ ճշմարտությանը միայն ակահը դիտի։

ՀԱՏՈՐ ՅՈԹԵՐՈՐԴ

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(9 փետրվար 962—29 հունվար 963)

էջ 5

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարվա Զումադա Բ (7 հուլիս—4 օգոստոս) ամսին Սայֆ ալ-Դաուլան վերակառուցեց Անազարբան (Այն Զարբա) և իր հաջիբին Տարսնի բնակիչներից բաղկացած զորքով ուղարկեց Ռումի երկիրը։ Սրանք ավերեցին, կոտորեցին, գերեվարեցին ու վերադարձան։ Իսկ հռոմեները հարձակվեցին Սիս (Սիսիյա) ամրոցի վրա ու տիրեցին։

Այդ տարում Սայֆ ալ-Դաուլայի ծառա (ղուլամ) Նաջան զորքով հարձակվեց Խարբերդի (Հիսն Զիյադ) վրա։ Հռոմեների մի զորամաս դիմադրեց նրան, սակայն նա հաղթեց և հռոմեներից հինգ հարյուր հոգի հանձնվեց երաշխավորագրով։

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(30 հունվար 963—18 հունվար 964)

էջ 7

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարում Ռաբի Ա (30 մարտ—28 ապրիլ) ամսին հայերը հետիոտն (ռաջջալա) մեծ բազմությամբ հավաքվելով զուրս եկան Եդեսիայի դեմ, հարձակվեցին, կողոպտեցին, գերեցին և լի ավարով վերադարձան։

(19 հունվար 964—6 հունվար 965)

էջ 9

ՆԱԶԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՅՖ ԱԼ-ԴԱՌՈՒԱՅԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐՈՇ ՄԱՍԵՐԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մենք արդեն հիշեցինք. թե ինչ էր արել Սայֆ ալ-Դաուլա իբն Համ-դանի ծառա (ղուլամ) Նաջան խառանի ժողովրդին [երեք հարյուր] հիսուններկու թվականին և թե ինչպես խլել էր նրանց ունեցվածքը: Երբ այս դրամները կուտակվեցին նրա մոտ, նա իրեն ուժեղ զգալով երախտամոռ դարձավ, ապերախտ գտնվեց իր բարերարի նկատմամբ և ամբարշտությամբ շարժվեց դեպի Նփրկերտ (Մայաֆարիկին) ու հարձակվեց Հայաստանի վրա, որի շատ մասերին տիրել էր մի արաբ՝ Աբու-լ-Վարդը²¹², նրա հետ կռվեց Նաջան, և սպանեց Աբու-լ-Վարդին: Նա գրավեց նրա բերդերը, ինչպես նաև հլաթը, Մանասկերտը (Մանազքիրդ), Մուշը և այլ վայրեր: Նրա մոտ շատ հարստություն կուտակվեց Աբու-լ-Վարդի ունեցվածքը հափշտակելուց և նա ապստամբեց Սայֆ ալ-Դաուլայի դեմ:

Այնպես պատահեց, որ այդ ժամանակ Մուհզզ ալ-Դաուլա իբն Բուայհը Բաղդադից շարժվեց դեպի Մոսուլ և Մծբին ու գրավեց և դուրս քշեց Նասիր ալ-Դաուլային, ինչպես կհիշենք շուտով: Նաջան գրեց նրան, երբ նա Մծբինում էր, խնդրելով նրա օգնությունը իր տերերի՝ Համդանի տոհմի դեմ: Սակայն երբ Մուհզզ ալ-Դաուլան վերադարձավ Բաղդադ ու հաշտվեց Նասիր ալ-Դաուլայի հետ, Սայֆ ալ-Դաուլան հարձակվեց Նաջայի վրա, քանի որ սա ապստամբել և ըմբոստացել էր: Երբ նա հասավ Նփրկերտ, Նաջան փախավ, իսկ Սայֆ ալ-Դաուլան գրավեց նրա քաղաքներն ու բերդերը, որ սա իր հերթին գրավել էր Աբու-լ-Վարդից: Նաջայի մերձավորներից որոշ մարդիկ երաշխավորագիր խնդրեցին նրանից (Սայֆ ալ-Դաուլայից), սակայն նա սպանեց նրանց: Երաշխավորագիր խնդրեց նաև Նաջայի եղբայրը և նա լավ վերաբերվեց ու հարգեց նրան: Նա (Սայֆ ալ-Դաուլան) մարդ ուղարկեց Նաջայի մոտ, համոզելով ու սպառնալով, որ վերադառնա, և սա եկավ նրա մոտ: Նա լավ վերաբերվեց և նրան վերադարձրեց իր պաշտոնին: Սակայն Սայֆ ալ-Դաուլայի զուլամները (ծառաները) նրա ներկայությամբ հարձակվեցին Նաջայի վրա Սայֆ ալ-Դաուլայի տանը Նփրկերտում և սպանեցին նրան [երեք հարյուր] հիսունչորս թվականի Ռաբի Ա ամսին (18 մարտ—16 ապրիլ): Սայֆ ալ-Դաուլան շատ վատ զգաց, իսկ Նաջային դուրս տա-

րան ու գցեցին ջրի ու կեղտերի առուն, ուր նա մնաց մինչև հաջորդ օրը.
ապա հանեցին ու թաղեցին նրան:

էջ 9

ՀՈՌՈՄՆԵՐԻ ՄԱՄԵՍՏԻԱՆ ՊԱՇԱՐԵԼԸ ԵՎ ԽՈՐԱՍԱՆԻՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՀԱՍՆԵԼԸ

Այդ տարում հռոմեները Դոմեստիկոսի հետ պաշարեցին Մամեստիան (Մասիսա), բնակիչների դեմ կռվեցին և պարիսպը ծակեցին, սակայն բնակիչները նրա շուրջը ուժեղ դիմադրություն ցուցաբերեցին, մինչև որ նրանց ետ մղեցին՝ սաստիկ կռվից հետո: Հռոմեները հրկիզեցին նրա, ինչպես նաև Ադանայի ու Տարսոնի գավառները, քանի որ վերջիններիս բնակիչները օգնել էին սրա ժողովրդին: Մահմեդականներից տասնհինգ հազար մարդ կոտորվեց: Հռոմեները երկրում մնացին տասնհինգ օր, սակայն ոչ ոք նրանց չդիմադրեց: Նրանք գների թանկության և ուտելիքի պակասի պատճառով ետ դարձան: Այդ ժամանակ խորասանից Ասորիք եկավ մի մարդ՝ կռվելու նպատակով, իր հետ ունենալով մոտավորապես հինգ հազար ռաղմիկ: Նրանց ճանապարհը անցնում էր Հայաստանի ու Նփրկերտի վրայով: Երբ Սաֆար ամսին (18 փետրվար—17 մարտ) հասան Սայֆ ալ-Դաուլայի մոտ, նրանց կռվի տարավ Ռումի երկրի դեմ, որպեսզի մահմեդականներին զորավիգ լինեն: Սակայն տեսնելով, որ հռոմեները վերադարձել են, խորասանյան ռաղմիկներն էլ ցրվեցին Սահմանային գոտում (սուղուր)՝ թանկության պատճառով: Նրանց մեծ մասը եկավ Բաղդադ, այնտեղից էլ գնաց խորասան:

Երբ Դոմեստիկոսը վերադառնում էր Ռումի երկիրը Մամեստիայի, Ադանայի և Տարսոնի բնակիչներին լուր էր ուղարկել, թե ես հեռանում եմ ձեզանից ոչ թե թուլության, այլ անասնակերի պակասության և ուժեղ թանկության պատճառով: Սակայն ես կվերադառնամ և ձեզանից, ով որ հեռացած լինի, կփրկվի, իսկ ում որ տեղում գտնեմ՝ կսպանեմ:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(28 դեկտեմբեր 965—16 դեկտեմբեր 966)

էջ 18

ԻԲՐԱՀԻՄ ԻԲՆ ԱԼ-ՄԱՐՋՈՒԲԱՆԻ ՓԱԽՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Իբրահիմ իբն ալ-Մարզուբանը Ատրպատականից փախավ Ռեյ:

Թանն այն էր, որ երբ Իբրահիմը պարտվեց Զասաան իբն Շարմազանից, ինչպես հիշեցինք, երեք հարյուր քառասունինը թվականին, ապա նա գնաց Հայաստան և սկսեց պատրաստվել վերադառնալու համար Ատրպատական, իսկ Հայաստանի թագավորներն (տերերն) էին²¹³ հայեր և քրդեր։ Նա նամակագրություն ունեցավ Զաստան իբն Շարմազանի հետ, հաշտվեց նրա հետ, և նրա մոտ շատ զորք հավաքվեց։

Այնպես պատահեց, որ [այդ ժամանակ] նրա հորեղբոր Վահուդանի որդի Իսմայիլը մեռավ, և Իբրահիմը գնաց տիրացավ Արդաբիլին։ Աբու-լ-Կասիմ իբն Մասիբին եկավ Վահուդանի մոտ և նրան միացավ։ Իբրահիմը գնաց իր հորեղբոր՝ Վահուդանի դեմ իր եղբայրների վրեժը պահանջելով։ Վերջինս վախեցավ և իբն Մասիբի հետ գնաց Դալամի երկիրը, իսկ Իբրահիմը տիրացավ իր հորեղբոր զավառներին, հարվածեց նրա մերձավորներին ու գրավեց նրա ունեցվածքը։ Վահուդանը հավաքեց զորքը և վերադարձավ իր Թարում (Թարում) բերդը, իսկ Աբու-լ-Կասիմ Մասիբին զորքով ուղարկեց Իբրահիմի դեմ։ Նրանք իրար հանդիպեցին և մեծ ընդհարում եղավ, իսկ Իբրահիմը պարտվեց ու նրան հետապնդեցին, սակայն չհասան։ Նա գնաց մենակ, մինչև որ հասավ Ռեյ՝ Ռուբն ալ-Դինի մոտ։ Սա հյուրասիրեց նրան, լավ վերաբերվեց, քանի որ Իբրահիմի քրոջ ամուսինն էր և այդ պատճառով չափազանց հարգեց նրան և բազում ընծաներ ու պարգևներ տվեց։

էջ 18

ԽՈՐԱՍԱՆՅԱՆ ՂԱԶԻՆԵՐԻ ԵՎ ՌՈՒՔՆ ԱԼ-ԴԱՌԻԼԱՅԻ ՎԵՃԸ

Այս տարում Ռամադան ամսին (21 օգոստոս—19 սեպտեմբեր) խորասանից դուրս եկավ մի մեծ բազմություն, որի թիվը հասնում էր քսան հազարի ու ժամանեց Ռեյ, որպես ղազի (հավատի ուղղորդ) կովի գնալու նպատակով։ Լուրը հասավ [Բուայհի] Ռուբն ալ-Դաուլային, այն ամսին, թե եկել են մեծ բազմությամբ, նրա երկրի ծայրամասերում շարագործություններ են կատարել, իսկ նրանց զորապետները այդ բանը չեն արգելել նրանց։ Նրա վեզիրը՝ ուստադ (ուսուցիչ, գիտնական) Աբու-լ-Ֆադլ իբն ալ-Ամիդը առաջարկեց չթողնել նրանց երկիրը մտնել։ Սակայն Ռուբն ալ-Դինն ասաց՝ թող այլ թագավորներ չկարծեն, թե ղազիների մի խմբից վախեցա։

Երբ նրանք Ռեյ հասան, զորապետները իբն ալ-Ամիդի մոտ հավաքվեցին և իրենց ծախսերի համար դրամ պահանջեցին։ Նա խոստացավ, սակայն նրանք հանդգնորեն թելադրեցին, ասելով՝ պահանջում ենք այս

երկրի ամբողջ խարաշը (հարկը), քանզի դա արքունի գանձարանին (բայտ ալ-մալ) է պատկանում: Չէ՞ որ հոռոմները, ինչպես տեղյակ եք, ինչեր են արել մահմեդականներին, գրավել են ձեր երկիրը, նույնն արել են նաև հայերը, իսկ մենք ղաղիններ ենք, աղքատ ու թափառական և ավելի իրավունք ունենք [պետական] դրամների նկատմամբ, քան դուք:

էջ 19—20

ՀՈՌՈՄՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԻՍԼԱՄԻ ԵՐԿՐԻ ՎՐԱ

Այդ տարվա Շավվալ (20 սեպտեմբեր—18 հոկտեմբեր) ամսին հոռոմները ելան ու հարձակվեցին Ամիդ քաղաքի վրա և պաշարեցին ու կռվեցին նրա բնակիչների հետ: Երեք հարյուր մարդ կոտորեցին, շորս հարյուր հոգի գերեցին, սակայն չկարողացան գրավել: Նրանք դիմեցին Դարա ու մոտեցան Մծբինին: Նփրկերտից եկող մի քարավան հանդիպեց նրանց, որը գրավեցին: Մարդիկ Մծբինից փախան, նրանցից վախենալով, այնքան որ մեկ անասունի (գրաստի) վարձքը հարյուր դիրհամ դարձավ:

Սալֆ ալ-Դաուլան, որը Մծբինում էր, կապ հաստատեց արաբների հետ, որպեսզի նրանց հետ փախչի: Սակայն այնպես պատահեց, որ հոռոմները հեռացան նախքան նրա փախուստը կկայանար և նա մնաց իր տեղում:

Նրանք (հոռոմները) Զազիրայից գնացին Ասորիք (Շամ), պաշարեցին Անտիոքը, երկար ժամանակ կռվեցին նրա բնակիչների դեմ, սակայն չկարողանալով գրավել, շրջակայքը ավերեցին, կողոպտեցին ու վերադարձան Տարսոն:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(14 նոյեմբեր 969—3 նոյեմբեր 970)

էջ 37

ՀՈՌՈՄՆԵՐԻ ՄԱՆԱԶԿԵՐՏԸ ԴՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռումի թագավորը զորք ուղարկեց Մանազկերտ (Մալազքիրդ), որը Հայաստանում է, և պաշարեց այն ու նեղը գցելով տեղի մահմեդականներին, բռնի ուժով գրավեց²¹⁴, նրանց (հոռոմների) ուժը ավելացավ, և երկրի տարբեր կողմերում մահմեդականները վախենում

էին նրանցից: Երկիրը անտեր էր մնացել, առանց պաշտպանի և [հոռոմ-ները] ուր որ կամենային կհարձակվեին:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(12 հոկտեմբեր 972—1 հոկտեմբեր 973)

էջ 49

ՀՈՌՈՄՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՄԵՍՏԻԿՈՍԻ ԳԵՐԻ ԸՆԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում ընդհարում տեղի ունեցավ Հիբատուլլահ իբն Նասիր ալ-Դաուլա իբն Համդանի և Դոմեստիկոսի (Դոմուստուկի) միջև Նփըր-կերտի (Մայաֆարիկին) դավառում:

Բանն այն է, որ, ինչպես հիշեցինք, Դոմեստիկոսը արշավել էր իսլամի երկիրը և կողոպտել Դիար Ռաբիան ու Դիար Բաքրը: Երբ Դոմեստիկոսը տեսավ, որ դիմադրող չկար, ցանկացավ տիրանալ նաև Ամիդին: Նա առաջ շարժվեց, իսկ այնտեղ կար Աբու-լ-Հայջա իբն Համդանի ղուլամ Հադարմարդը: Սա նամակ դրեց, օգնություն և օժանդակություն խնդրելով Աբու-Տաղլիբից²¹⁵, բացատրելով դրությունը: Վերջինս նրա մոտ ուղարկեց իր եղբորը՝ Աբու-լ-Կասիմ Հիբատուլլահ իբն Նասիր ալ-Դաուլային, և սրանք երկուսով պատրաստվեցին Դոմեստիկոսի դեմ կռվի ու եկան հանդիպեցին նրան Ռամազանի վերջին: Դոմեստիկոսը մեծ զորքով էր, սակայն այն երկուսը նրան հանդիպեցին մի կիրճում, որի միջով ձիերը չէին կարող անցնել, իսկ հոռոմները պատրաստ չէին, ու պարտվեցին և մահմեդականները գերի վերցրեցին Դոմեստիկոսին: Սա բանտարկված մնաց, մինչև որ հիվանդացավ երեք հարյուր վաթսուներեք թվականին: Աբու Տաղլիբը շատ ջանք թափեց նրան բուժելու, հավաքեց բժիշկներին, սակայն ոչինչ չօգնեց ու մեռավ:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(19 օգոստոս 977—8 օգոստոս 978)

էջ 92—93

ԱԳՈՒԴ ԱԼ-ԴԱՌԻԱՅԻ՝ ՀԱՄԴԱՆԻ ՏՈՀՄԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ Աբու Տաղլիբը և Բախտիարը պարտվեցին, Ադուդ ալ-Դաուլան շարժվեց դեպի Մոսուլ և Զու-լ-Կադա [ամսի] տասներկուսին գրավեց այն հարակից շրջանների հետ:

Աբու Տաղլիբը կարծեց, որ սա ևս ուրիշների նման մի քիչ մնալուց հետո հաշտութիւն կկնքի և կվերադառնա, սակայն Ադուդ ալ-Դաուլան շատ վճռական էր: Մոսուլ դալիս իր հետ բերել էր պարեն, անասնակեր և Մոսուլն ու նրա նահանգը ճանաչող մարդկանց: Նա վստահ հաստատովեց Մոսուլում ու ձիավոր ջոկատներ ուղարկեց փնտրելու համար Աբու Տաղլիբին:

Աբու Տաղլիբը լուր ուղարկեց նրան, խնդրելով, որ երաշխավորի իր տիրույթները, սակայն Ադուդ ալ-Դաուլան չընդառաջեց և ասաց՝ այս երկիրը ինձ համար ավելի ցանկալի է, քան Իրաքը:

Աբու Տաղլիբի մոտ էին Մարզուբան իբն Բախտիարը, Աբու Իսհակը և Աբու Թահիրը՝ Մուիզդ ալ-Դաուլայի որդիները, ինչպես նաև նրանց մայրը, որը Ումմ (մայր) Բախտիարն էր՝ իրենց իրերով:

Աբու Տաղլիբը շարժվեց դեպի Մծբին (Նասիբին), իսկ Ադուդ ալ-Դաուլան մի ջոկատ ուղարկեց Զադիրատ իբն Ումար՝ իր հաջիբ (սենեկապետ) Աբու Հարբ Թուդանի գլխավորությամբ: Մի ջոկատ էլ ուղարկեց Սինջարի ճանապարհը՝ Աբու Տաղլիբին գտնելու, հրամանատար նշանակելով Աբու-լ-Վաֆա Թահիր իբն Մուհամմադին:

Աբու Տաղլիբը աճապարեց, եկավ Նփրկերտ և այնտեղ հաստատովեց իր ընտանիքի հետ, սակայն երբ լսեց Աբու-լ-Վաֆայի գալուստը իր դեմ, շարժվեց դեպի Բաղեշ (Բաղլիս)՝ իր հետ տանելով իր կանանց և ընտանիքի անդամներին: Աբու-լ-Վաֆան հասավ Նփրկերտ, որի դռները փակ էին իր առջև: Սա անառիկ բերդ էր՝ հռոմեացիների հին բերդերից: Նա թողեց ու գնաց Աբու Տաղլիբին փնտրելու, իսկ վերջինս Կարինից (Արզան ալ-Ռում) հեռացել էր Հասանիյյա, որը Զապիրայի շրջաններից էր, բարձրացել էր Քավաշի ամրոցը և այլ ամրոցներ հավաքելով իր ամբողջ ունեցվածքը: Աբու-լ-Վաֆան վերադարձավ Նփրկերտ ու պաշարեց այն:

Երբ Ադուդ ալ-Դաուլան լսեց, թե Աբու Տաղլիբը գնացել է իր բերդերը, ինքն անձամբ գնաց նրա դեմ, սակայն չգտավ նրան, այլ միայն նրա (Աբու Տաղլիբի) մերձավորներից շատերը հանձնվեցին նրան: Նա վերադարձավ Մոսուլ և Աբու Տաղլիբի հետևից դորք ուղարկեց իր բարեկամ զորավարներից մեկի հետ, որի անունն էր Թուդան: Աբու Տաղլիբը փախավ Բաղեշ (Բաղլիս), կարծելով, որ ոչ ոք չի հետևի իրեն, սակայն Թուդանը հետապնդեց, և նա Բաղեշից փախչելով դիմեց Ռումի երկիրը, որպեսզի հարաբերության մեջ մտնի նրանց Վարդ ալ-Ռումի կոչված թագավորի հետ, որը թագավորական ընտանիքից չէր, այլ բրունությամբ թագավոր էր դարձել: Հռոմեները նրան չենթարկվեցին և մեկ ուրիշին բերեցին իրենց թագավորների որդիներից, և պատերազմը երկարեց նրանց միջև: Այս Վարդը տղապատան կապ հաստատեց Աբու

Տաղլիբի հետ, որպեսզի հզորանա, սակայն Աբու Տաղլիբն էր, որ կարիք ունեւր նրա օգնութեանը:

Երբ Աբու Տաղլիբը Բաղեշից հեռանում էր, Ադուդ ալ-Դաուլայի զորքը հասավ նրա ետեից և ցանկացավ կողոպտել նրա մօտ եղած ամբողջ ունեցւածքը, քանզի լսել էր, որ շատ մեծ է: Երբ զորքը հարձակւել էր, հրամանատարը գոչեց՝ ձեռք շտաք այդ հարստութեանը, որովհետև դա Ադուդ ալ-Դաուլայինն է: Այդ ժամանակ [զինվորները] ետ կանգնեցին կռւից: Տեսնելով, որ նրանք թուլացան, Աբու Տաղլիբը հարձակւեց նրանց վրա և պարտութեան մատնեց՝ մեծ կոտորած սարքելով: Ազատւելով նրանցից, նա եկավ Հիսն Զիյադ, որն այժմ հայտնի է Խարբերդ (Խարտբիրտ) անունով:

Հիշյալ Վարդը զրեց նրան, տեղեկացնելով, որ հռոմէները հավաքւել են իր դեմ և օգնութեան խնդրեց, ասելով՝ եթե վերջացնեմ [այս գործը], կգամ քեզ մօտ [օգնութեան]: Աբու Տաղլիբն իր զորքից մի մաս ուղարկեց, սակայն այնպես պատահեց, որ Վարդը պարտւեց: Աբու Տաղլիբը, երբ այդ բանն իմացավ, հույսը կտրեց հաղթանակից, վերադարձավ իսլամի երկիրը ու հաստատւեց Ամիդում: Այստեղ նա մնաց երկու ամիս, մինչև որ նփրկերտը գրավւեց:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(9 օգոստոս 978—28 հուլիս 979)

էջ 95

ՆՓՐԿԵՐՏԻ, ԱՄԻԴԻ ԵՎ ԱՅԼ ՎԱՅՐԵՐԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԴԻԱՐԲԱՔՐՈՒՄ ԱԴՈՒԴ ԱԼ-ԴԱՌԻԼԱՅԻ ԿՈՂՄԻՑ

Երբ Աբու-լ-Վաֆան վերադարձավ Աբու Տաղլիբին հետապնդելուց, պաշարեց նփրկերտը (Մայյաֆարիկին), որի կառավարիչն էր Հազարմարդը: Սա կաղմակերպեց քաղաքի պաշտպանութեանը և երեք ամիս կատաղի կռւեց Աբու-լ-Վաֆայի դեմ: Ապա մեռավ Հազարմարդը և Աբու Տաղլիբին այդ մասին գրւեց և նա հրամայեց, որ նրա փոխարեն դրվի Համդանիների ծառաներից (ղուլամ) Մունիսը, որը դարձավ կառավարիչ: Աբու-լ-Վաֆան ելք չգտնելով, նամակ գրեց քաղաքի երևելիներից Ահմադ իբն Ուբայդալլահին, սիրաշահելու նպատակով: Սա համաձայնեց ու սկսեց քաղաքի հպատակներին (ժողովրդին) սիրաշահել Աբու-լ-Վաֆայի կողմը, և սրանք ևս համաձայնեցին, ու նրա ազդեցութեանը

ուժեղացավ: Վերջինս լուր ուղարկեց Մունիսին, պահանջելով քաղաքի բանալիները, որը չկարողացավ մերժել, քանի որ [Ահմադը] համակիրներ շատ ուներ, և նա ուղարկեց [բանալիները], խնդրելով, որ իր համար երաշխավորագիր ստանա: Ահմադ իբն Ուբայդուլլահը լուր ուղարկեց Աբու-լ-Վաֆային, որը երաշխավորեց նրա (Մունիսի) և ամբողջ բնակչության [անվտանգությունը]: Այսպիսով դռները բացվեցին և քաղաքը հանձնվեց:

Աբու-լ-Վաֆան նփրկերտը պաշարելու ժամանակ իր ջոկատներն էր ուղարկել դրացի բերդերը, որոնք բոլորը դրավվեցին: Երբ Աբու Տաղլիբն այս լսեց, ինքը և իր քույրը՝ Ջամիլան, Ամիդից գնացին Ռահբա, և հրամայեց իր մերձավորներից ոմանց ապաստան խնդրել Աբու-լ-Վաֆայից, և նրանք արեցին:

Ապա Աբու-լ-Վաֆան եկավ պաշարեց Ամիդը: Բնակիչները այս տեսնելով, նփրկերտի բնակիչների օրինակին հետևեցին և երաշխավորագիր ստանալով քաղաքը հանձնեցին: Աբու-լ-Վաֆան տիրեց ամբողջ Դիարբաքրին, և Աբու Տաղլիբի մերձավորները եկան հանձնվելու, իսկ նա երաշխավորեց նրանց և վերադարձավ Մոսուլ:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(15 հունիս 893—3 հունիս 984)

էջ 121—122

ՄԱՐՈՒԱՆԻՆԵՐԻ ՔԵՌԻ ԲԱԴ ԱԼ-ՔՈՒՐԴԻԻ ԵՎ ՆՐԱ՝ ՄՈՍՈՒԼԸ
ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում ուժեղացավ Բադ ալ-Քուրդին²¹⁶, իսկ նրա անունն էր Աբու Աբդալլահ ալ-Հուսայն իբն Դուստաբ: Նա Համիդիյյա քրդերից էր: Սկզբում հաճախ էր ասպատակում Դիար Բաքրի Սահմանային գոտին (սուղուր): Հաստամարմին էր, ջլապինդ և ուժեղ:

Երբ Ադուդ ալ-Դաուլան գրավեց Մոսուլը, սա եկավ նրա մոտ [Ժառայություն], սակայն, երբ Ադուդ ալ-Դաուլան տեսավ նրան, վախեցավ և ասաց՝ չեմ կարծում, որ ինձ մոտ մնա և իրոք, հենց որ դուրս եկավ, փախավ: Նրա դուրս գալուց հետո Ադուդ ալ-Դաուլան հրամայեց ձերբակալել ու բերել նրան, որովհետև, ասաց Դաուլան, նա ջլապինդ է և ուժեղ, նրանում շարություն կա և այդպիսիներն չի կարելի [կենդանի] թողնել: Հայտնեցին, որ փախել է, նա այլևս չհետաքրքրվեց նրանով:

Նա (Բաղը) գնաց Դիար Բաքրի Սահմանային գոտին և մնաց, մինչև որ հաջողություն գտավ, ուժեղացավ ու Ադուդ ալ-Դաուլայի մահվանից հետո գրավեց Նփրկերտը (Մայյաֆարիկին) ու Դիար Բաքրի մեծ մասը: Նրա մարդկանցից մի խումբ եկավ ու գրավեց Մծբինը:

[Բուլայհի] Սամսամ ալ-Դաուլան²¹⁷ Վորք պատրաստեց և ուղարկեց Աբու Սադ. Բահրամ իբն Արդաշիրի հետ, սակայն կռվում պարտվեց Բահրամը և նրա մերձավորների մի խումբ դերի ընկավ, իսկ Բադի ուժն ավելացավ: Սամսամ ալ-Դաուլան ուղարկեց հաջիբ Աբու-լ-Կասիմ Սադ իբն Մուհամմադին՝ մեծ զորքով, և բախվեցին Բաջլայայում, հաբուր ալ-Հուսայնիյայի վրա, Քավաշի գյուղի մոտ: Սաստիկ կռիվ եղավ, Սադը և ընկերները փախուստի դիմեցին, իսկ Բադը շատ ղեկավարների (ղայլամի) բռնեց, սպանեց ու գերեվարեց, ապա անխնա կոտորեց գերիներին:

Երբ Բադը փախուստի մատնեց ղեկավարներին ու Սադին և արեց այն, ինչ որ ասվեց, Սադը կանխեց նրան ու մտավ Մոսուլ, և Բադը նրան հետապնդեց: Ժողովուրդը ապստամբեց Սադի դեմ՝ ղեկավարների վատ վերաբերմունքի պատճառով: Սա հազիվ ազատվեց նրանցից, իսկ Բադը մտավ Մոսուլ ու գրավեց:

Նրա ուժն ավելացավ, դուրս եկավ ծայրամասայինների շարքից ու դասվեց մեծամեծների շարքը և նա մտածեց գրավել Բադղադը և այնտեղից վերացնել ղեկավարներին: Սամսամ ալ-Դաուլան վախեցավ ու մտահոգվեց և միայն այս հարցով էր զբաղվում: Նա զորք հավաքեց նրա դեմ ուղարկելու համար, սակայն տարին վերջացել էր:

Իմ (Իբն ալ-Ասիրի) մտերիմ Համիդիյյա քրդերից մեկը, որ Բադի մասին հետաքրքրվում է, ինձ պատմել է, որ Բադի քունյան²¹⁸ էր Աբու Շուջա, անունը Բադ, իսկ Աբու Աբդալլահը Հուսայն իբն Դուստաքն է՝ Բադի եղբայրը:

Նա սկզբում հոտեր էր արածացնում, հյուրասեր էր ու առատաձեռն, իր ունեցած ոչխարները մորթում էր ու մարդկանց հյուրասիրում և այդ պատճառով, որպես առատաձեռն հայտնի դարձավ: Նրա մոտ զորք հավաքվեց, սկսեց ճանապարհ կտրել և ինչ որ ստանում էր բաժանում էր: Նրա մարդկանց թիվը աստիճանաբար շատացավ, և նա սկսեց արշավանքներ կատարել, ապա մտավ Հայաստան, գրավեց Արճեշ (Արշիշ) քաղաքը և դա առաջին քաղաքն էր, որ նա գրավել էր: Նա ուժեղացավ և այնտեղից գնաց Դիար Բաքր ու գրավեց Ամիդ քաղաքը, ապա Նփրկերտը (Մայյաֆարիկին) և Դիար Բաքրի այլ քաղաքներ: Գրավեց նաև Մոսուլը, ինչպես արդեն հիշեցինք:

ՎԱՐԴ ԱԼ-ՌՈՒՄԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ, ՆՐԱ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ՌՈՒՍՆԵՐԻ
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այգ տարում Սամսամ ալ-Դաուլան ազատ արձակեց Վարդ ալ-Ռումիին²¹⁹, որի բանտարկության մասին խոսել ենք:

Արդ, նա բաց թողեց և ազատ արձակեց նրան այն պայմանով, որ մեծ թվով մահմեդական գերիների արձակելու, Ռումի բերդերից յոթը շըր-ջակա գավառների (ռուստակ) հետ միասին հանձնելու և քանի կենդանի էր իսլամի երկրի վրա շհարձակվելու ո՛չ նա, ո՛չ էլ նրա մերձավորներից որևէ մեկը: Նա նրան (Վարդին) դրամ և այլ բաներ մատակարարեց, և սա գնաց Ռումի երկիրը: Ճանապարհին շատերին ներգրավեց, թե՛ անապատի, թե՛ այլ վայրերի բնակիչներից և հրապուրեց նրանց նվերների ու կողոպուտի հույսով: Նա եկավ, մինչև որ հասավ Մալաթիա, գրավեց այն և, այսպիսով, իր դիրքը ուժեղացրեց, օգտագործելով նաև այն դրամները և միջոցները, որ այնտեղ կային: Նա դիմեց Վարդիս իբն Լաունին, հետը նամակագրություն ունեցավ և նրանք պայմանավորվեցին, որ Կ. Պոլիսը (Կոսթանթինիյա) և ծոցի՝ նրան հարող հյուսիսային շրջանները Վարդիսին լինեն, իսկ ծոցից այս կողմ (հարավում) ընկածը՝ Վարդին: Նրանք դաշնակցեցին և միացան:

Վարդիսը [հանկարծ] ձերբակալեց Վարդին ու բանտարկեց, բայց զղջաց և շուտով ազատ արձակեց: Վարդիսն անցավ ծոցն ու պաշարեց Կ. Պոլիսը, որտեղ կային երկու թագավորներ՝ Ռոմանոսի (Արմանուս) որդիներ Վասիլը (Բասիլ) և Կոստանդինը (Կոսթանթին):

Նա (Վարդիսը) նրանց շատ նեղեց, և նրանք նամակով դիմեցին ռուսների (Ռուսիյա) թագավորին, օգնության կանչեցին և նրան ամուսնացրին իրենց քրոջ հետ: Սակայն [նրանց քույրը] մերժած լինելով հանձնվել այլակրոնին, նա (ռուսների թագավորը) քրիստոնյա դարձավ, և սա ռուսների մոտ քրիստոնեության սկիզբն էր: Նրանք ամուսնացան, և նա (ռուսաց թագավորը) գնաց Վարդիսի դեմ ու կռվեց նրա հետ: Վարդիսն սպանվեց և երկու թագավորները իրենց իշխանությունը պահպանեցին: Նրանք նամակ դրեցին Վարդին հաստատելով նրա իշխանությունը այն ամենի վրա, որ իր ձեռքում էր: Սա երկար ապրելուց հետո մեռավ: Ասվում է, որ նա թունավորումից մեռավ:

Վասիլը (Բասիլ) առաջ գնաց թագավորության կառավարման մեջ: Նա քաջ էր, արդար, իմաստուն և նրա թագավորությունը հարատևեց:

նա երեսունհինգ տարի պատերազմեց բուլղարների հետ, հաղթեց նրանց, շատերին իրենց երկրից դուրս քշեց և հռոմեաների բնակեցրեց: Նա բարյացակամ էր վերաբերվում մահմեդականներին և համակրանք ունեւր նրանց նկատմամբ:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(31 մարտ 990—19 մարտ 991)

էջ 143

ՄԱՐՈՒԱՆԻ ՈՐԴԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԻՋՔԸ

Երբ Բագն սպանվեց, նրա քեռորդին՝ Աբու Ալի իբն Մրուանը (Մարուան) զորքի մի մասի հետ գնաց Հիսն Քայֆա (Հիսն Քեյֆ), որը Տիգրիսի վրա է և լավագույն ամրոցներից է: Այնտեղ էր Բագի կինը իր ընտանիքով: Երբ հասավ բերդը, ասաց քեռու կնոջը՝ քեռիս ինձ ուղարկել է քեզ մոտ կարևոր գործով: Նա հավատաց նրան, և երբ [քեռորդին] բարձրացավ նրա մոտ, տեղեկացրեց նրա մահը և համոզեց, որ իր հետ ամուսնանա, և նա համաձայնեց՝ բերդում և այլ վայրերում իշխելու պայմանով:

Սա գնաց ու նվաճեց բազում բերդեր, մինչև որ գրավեց իր քեռու բոլոր տիրույթները: Գնաց նվերներ տուր եկան նաև Աբու Թահիրը և Աբու Աբդալլահը՝ Համդանի որդիները, որոնք աչք ունեին նրա (նվերներ տուր) վրա: Նրանց մոտ էր Բագի գլուխը: Սրանք տեսնելով Աբու Ալիի ուժեղանալը, կռվի մտան նրա հետ ու ընդհարվեցին: Սակայն հաղթեց Աբու Ալին և գերեց Աբդալլահ իբն Համդանին, որին լավ վերաբերվեց ու ազատ արձակեց: Սա գնաց իր եղբոր՝ Աբու Թահիրի մոտ, որը պաշարել էր Ամիդը և առաջարկեց նրան հաշտվել իբն Մրուանի (Մարուանի) հետ, սակայն նա մերժեց և ինքն էլ ստիպված եղավ նրան միանալ ու գնալ իբն Մրուանի դեմ: Սակայն կռվում պարտվեցին և Աբու Աբդալլահն էլ գերի ընկավ: Նա [իբն Մրուանը] վատ վերաբերվեց նրանց, մինչև որ Եգիպտոսի տերը գրեց նրան, բարեխոսեց և նա ազատ արձակեց նրանց:

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(9 մարտ 992—25 փետրվար 993)

էջ 158

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռումի թագավորը եկավ Հայաստան, պաշարեց Խլաթը, Մանաղկերտը (Մալազքիրդ) և Արճեշը (Արշիշ): Մարդիկ վախեցան նրա-

նից, ապա նրա հետ հաշտութիւն կնքեց Աբու-ալ-Հասան իբն Մարուանը, տաս տարվա համար, և Ռումի թագավորը վերադարձավ:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆ

(20 հունվար 1029—8 հունվար 1030)

էջ 335

ՅԱՄԻՆ ԱԼ-ԴԱՌԻԼԱՅԻՆ՝ ՌԵՅԸ (ՌԱՅ) ԵՎ ԶԱԲԱԼ ՆԱՀԱՆԳԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Յամին ալ-Դաուլա Մահմուդ իբն Սեբուքթեգինը (Սաբուքտաքին)²²⁰ գնաց դեպի Ռեյյ (Ռայ): Նրա մոտ եկավ Մինուչիհ իբն Կաբուսը, որը Վրկանի (Ջուրջան) և Թաբարիստանի տերն էր և բերեց նրան շոբս հարյուր հազար դինար և շատ նվերներ:

Իսկ Ռեյյի տեր Մաջդ ալ-Դաուլա իբն Ֆախր ալ-Դաուլա իբն Բուայհը²²¹ նրան (Մահմուդին) գրել էր՝ բողոքելով իր զինվորներին: Սա զբաղված էր կանանցով և [ձեռագիր] մատյանների ընթերցանությամբ և ընդօրինակությամբ: Նրա մայրն էր թագավորությունը կառավարում և, երբ մեռավ, զորքը [իշխանությունը] խլելու ցանկություն ունեցավ, և դրությունը խառնաշփոթ էր:

Երբ նրա գրությունը հասավ Մահմուդին, նրա դեմ ուղարկեց մի զորք, որի հրամանատարն էր իր հաջիբը, հրամայելով ձերբակալել Մաջդ ալ-Դաուլային: Երբ զորքը հասավ Ռեյյ, Մաջդ ալ-Դաուլան ձիով ընդառաջ ելավ, սակայն նրան ու որդուն Աբու Դուլաֆին ձերբակալեցին: Ձերբակալման լուրն առնելուն պես Յամին ալ-Դաուլան եկավ Ռեյյ ու հասավ Ռաբի Բ (19 ապրիլ—17 մայիս) ամսին: Նա մտավ [պալատ] ու վերցրեց հազար-հազար (միլիոն) դինար (ոսկեդրամ), հինգ հարյուր հազար դինար արժողությամբ գոհարեղեն, վեց հազար հատ զգեստ, իսկ գործիքներ և այլ բաներ անհաշիվ:

Իր մոտ բերել տվեց Մաջդ ալ-Դաուլային ու ասաց՝ չե՞ս կարդացել Շահնամեն՝ Պարսից պատմությունը, և Թաբարու պատմագիրքը, որը մահմեդականների պատմությունն է: Ասաց՝ կարդացել եմ: Ասաց՝ չի երեւում, որ կարդացել ես, իսկ ճատրակ (շաթրանջ, շախմատ) չե՞ս խաղացել: Ասաց՝ խաղացել եմ: Ասաց՝ տեսե՞լ ես մի արքա (շահ), որ մոտենա այլ արքայի: Ասաց՝ ոչ: Ասաց՝ իսկ ինչը քեզ ստիպեց, որ քո անձը հանձնես քեղանից ուժեղին: Եվ նրան ձերբակալված ուղարկեց Խորասան:

Ապա նվաճեց Ղազվինը (Կազուին) և նրա ամրոցները...

Եվ Մահմուդի անունն էր հիշվում [ուրբաթ օրվա] խութբայի ժամանակ Զաբալ նահանգի մեծ մասում, մինչև Հայաստանի սահմանները:

ՂՈՒԶԶԵՐԻ (ՕՂՈՒԶՆԵՐԻ)՝ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ
ՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արդեն հիշել ենք, որ Ղուզղերի (ալ-դուզղ)²²² մի խումբ հասել էր Ատրպատական, Վահսուդանը պատվեց նրանց ու խնամիացավ՝ հուսալով, որ օգնություն կստանա և կկանխի նրանց շարագործությունները: Նրանց զորավարների անուններն էին՝ Բուկա, Քուքտաշ, Մանսուր և Դանա: Սակայն նրա հույսերը չիրականացան, քանզի նրանք անմիջապես անցան շարագործության, ապականության, սպանության և կողոպուտի: Գնացին Մարաղա (չորս հարյուր) քսանինը թվականին, վառեցին մզկիթը, անխրնա կոտորեցին հասարակ ժողովուրդին, ինչպես նաև Հադբանիյա քրդերին: Դրությունը ծանրացավ, և շարիքը շատացավ: Երբ քրդերը տեսան, թե ինչ էր կատարվում իրենց հետ և իրենց երկրում, որոշեցին բանակցել և համաձայնություն կայացնել, որպեսզի ետ մղեն նրանց (օղուղների) շարիքը: Այսպիսով, Աբու-լ-Հաջա իբն Ռաբիբ ալ-Դաուլան և Ատրպատականի տեր Վահսուդանը համաձայնեցին և սկսեցին համատեղ գործել: Նրանց միացավ նաև այդ երկրի ժողովուրդը, և սկսեցին վրեժ լուծել ղուզղերից: [Վերջիններս] տեսնելով, որ երկրի ժողովուրդը իրենց դեմ ոտքի է կանգնել պայքարի, հեռացան Ատրպատականից, քանզի անկարելի էր այնտեղ մնալը:

* * *

Երբ Ալա ալ-Դաուլան հեռացավ Ռեյից, նրան հետևեց ղուզղերի մի խումբ, սակայն չհասավ նրան և թեքվեց դեպի Քարաջ, կողոպտեց և ամենաալանդակ արարքները գործեց: Նրանցից մի խումբ նասուղլիի գլխավորությամբ գնաց Ղազվին (Կազուին), որի բնակիչները դիմադրեցին, սակայն հաշտություն կնքեցին՝ յոթ հազար դինար [վճարելու պայմանով] և նրանց հպատակվեցին: Նրանցից մի խումբ կար Ուրմիայում, որը գնաց Հայոց երկիր (Բիլադ ալ-Արման), հարձակվեց, ջարդեց, շատերին կոտորեց, կողոպտեց, գերեվարեց ու վերադարձավ Ուրմիա՝ Աբու-լ-Հաջա ալ-Հադբանիի գավառը: Այստեղ նրանց հետ կռվի մտան քրդերը, որոնք զայրացած էին նրանց (օղուղների) վատ հարևանությունից: Շատերն սպանվեցին, և ղուզղերը կողոպտեցին ամբողջ երկիրը և քրդերից շատերին սպանեցին:

[Զորս հարյուր] երեսուններեթ թվին (31 օգոստոս 1041—20 օգոստոս 1042) ղուզգերը հեռացան Ատրպատականից:

Պատճառն այն է, որ Իբրահիմ Յաննալը²³, որը Թուղրիլ բեկի եղբայրն էր, գնաց Ռայյ: Սակայն, երբ այնտեղ եղած ղուզգերը լսեցին, վախից թողեցին Ջաբալ երկիրը և հեռացան, գնացին Ատրպատական: Բայց այստեղ ևս չէին կարող մնալ, քանի որ վատ էին վերաբերվել նրա ժողովրդին և Իբրահիմ Յաննալը իրենց ետևում էր, իսկ նրանից վախենում էին, որովհետև նրա Թուղրիլ բեկ և Դաուզ եղբայրների հպատակներն էին: Այդ պատճառով նրանք իրենց հետ վերցրին մի խումբ քրդերի, որոնք ճանապարհը գիտեին, անանցանելի լեռներով գնացին Անձևացիք (ալ-Ջավազան) և այնտեղից դուրս եկան Ջազիրատ իբն Ումար:

Բուկան, Նասուղլին և ուրիշներ եկան Դիար Բաքր, կողոպտեցին Կարգան, Բազաբգան, ալ-Հասանիյյան և Ֆիշաբուրը, իսկ Մանսուր իբն Ղիզուղլին մնաց Ջազիրայի արևելյան կողմերում: Նրա հետ նամակակցեց Ջազիրայում իշխող Սուլայման իբն Նասր ալ-Դաուլա իբն Մարուամանը գավազրություն էր նյութում [Մանսուրի դեմ]: Նա հանդիսավոր ճաշկերույթ սարքեց ու հրավիրեց նրան, սակայն, երբ սա մտավ Ջազիրայի [իրեն պատկանող մասը], նա ձերբակալել տվեց նրան, բանտարկեց, իսկ նրա զորքը ցրվեց ամեն կողմ:

Երբ այդ մասին իմացավ Կարվաշը, մեծ զորք ուղարկեց, որին միացան Բաշնավի քրդերը, Ֆանսքի զորքը և Նասր ալ-Դաուլայի զորքը: Նրանք հետապնդեցին ղուզգերին, հասան ու կռվի բռնվեցին նրանց հետ: Ղուզգերը առաջարկեցին վերադարձնել ամեն ինչ, որ իրենք ավարի էին տվել, պայմանով, որ երաշխավորագիր (աման) տրվի, սակայն չտրվեց: Այն ժամանակ [ղուզգերը] կռվեցին այնպես, ինչպես կկռվեին մահվան [ըսպառնալիքից] վախեցող մարդիկ, և արաբներից շատերին սպանեցին ու նրանք ցրվեցին:

Ղուզգերից ոմանք գնացել էին Մծբին (Նասիրին) և Սինջար՝ արշավանքի, սակայն վերադարձան Ջազիրա ու պաշարեցին այն: Արաբները գնացին Իրաք՝ այնտեղ ձմեռելու համար, իսկ ղուզգերը ավերեցին Դիար Բաքրը, կողոպտեցին, կոտորեցին: Նասր ալ-Դաուլան վերցրեց իր որդու՝ Սուլայմանի մոտ [դերի վիճակում] գտնվող ղուզգերի ամիր Մանսուրին

և նամակ գրեց ղուղղերին՝ առաջարկելով դրամ տալ ու Մանսուրին ազատ արձակել, պայմանով, որ հեռանան իր տիրույթներից և նրանք համաձայնեցին: Նա բաց թողեց Մանսուրին, որոշ գումար ուղարկեց, սակայն [ղուղղերը] դավաճանեցին և է՛լ ավելի մեծ շարիքներ գործեցին: Նրանց մի մասը գնաց Մծրին (Նասիբին), Սինչար և Խաբուր, կողոպտեց ու վերադարձավ. մի մասն էլ գնաց Զուհայնա և ալ-Ֆարջի կողմերն ու կողոպտեցին: Նրանցից վախենալով Կարվաշը մտավ Մոսուլ:

էջ 342

ՄՈՍՈՒԼԻ ԺՈՂՈՎՐԴԻ՝ ՂՈՒՋՋԵՐԻ ԴԵՄ ԱՊՍԱՄԲԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՏԱՐՎԱՍԻ ՄԱՍԻՆ

Երբ նրանք (ղուղղերը) երկար մնացին այդ երկրում և պատահեց այն, ինչ որ հիշել ենք, ալ-Մալիք Ջալալ ալ-Դաուլա իբն Բուայհր գրեց Թուղրիլ բեկին, պատմելով եղածի մասին: Նրան գրեց նաև նասր ալ-Դաուլա իբն Մարուանը, բողոքելով նրանց (ղուղղերի) դեմ²²⁷:

[Թուղրիլ բեկը] գրեց նասր ալ-Դաուլային՝ լսեցի, որ մեր ստրուկները (աբիդ)²²⁸ եկել են ձեր երկիրը և դու դրամներ ես ծախսել նրանց վրա: Դու Սահմանային գոտու (սաղր) տեր ես և պետք է օժանդակություն ցուցաբերես անհավատների դեմ կռվում: Նա խոստանում էր, որ (զորք) կուղարկի, որպեսզի նրանց դուրս բերի նրա երկրից: Իսկ նրանք (ղուղղերը) հարձակվում էին Հայոց երկրի (Բիլադ ալ-Արման) վրա, կողոպտում էին, գերեվարում այնքան շատ, որ գեղեցիկ հարճի գինը իջել էր հինգ դինարի, իսկ տղաներին (ղուլամ) ոչ ոք չէր ուզում:

Ինչ վերաբերում է Թուղրիլ բեկի՝ Ջալալ ալ-Դաուլային գրած նամակին, ապա նրանում նա ներողություն էր խնդրում, ասելով, որ այդ թուրքմենները մեր ստրուկները, ծառաներն ու հպատակներն էին, միշտ ժառաջության մեջ լինելով: Սակայն երբ ձեռնարկեցինք Մահմուդ իբն Սաբուքտաբինի տոհմի գործերով զբաղվելուն և լիազորված էինք հորեղմի գործերը դասավորելու, սրանք խուժեցին դեպի Ռեյ, ապականեցին, փչացրին և մենք մեր զինվորներով հորասանից իջանք նրանց ետևից, ենթադրելով, որ երաշխավորագիր կխնդրեն, ներողություն ու թողություն կաղերսեն, բայց մոռացել էին պատկառանքն ու համեստությունը: Պետք է նրանց մեր դրոշներին հպատակեցնել և մեր ղորությանը ըմբոստներին տալ արժանի հատուցում, լինեն մոտիկ, թե հեռու, ասպատակեն, թե օգնության դան:

.....
 Եվ ալլահը Մոսուլի ժողովրդին ազատեց նրանց (ղուղզերի) շարիքից
 և Կարվաշը հետապնդեց նրանց մինչև Մծբին ու վերադարձավ:

Նրանք (ղուղզերը) դիմեցին Դիար Բաքր, կողոպտեցին, ապա թեքվե-
 ցին հայերի և հռոմեաների (երկրների) դեմ, կողոպտեցին նրանց և գնացին
 Ատրպատական:

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(9 հունվար 1030—28 դեկտեմբեր 1030)

ՌՈՒՄԻ ԹԱԳԱՎՈՐԻ՝ ԱՍՈՐԻՔԻ ՎՐԱ ՀԱՐՋԱԿՎԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ
 ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռումի թագավորը²²⁹ Կ. Պոլսից երեք հարյուր հազար
 զինվորներով հարձակվեց Ասորիքի վրա: Նրանք հասան Հալեբ, որի տերն
 էր Շիբլ ալ-Դաուլա Նասր իբն Սալիհ իբն Միրզասը, և կանգ առան մեկ
 օրվա հեռավորության վրա: Նրանք խիստ ծարավեցին, իսկ ժամանակն
 ամառ էր: Նրա (թագավորի) մարդիկ տարբեր տրամադրություններ ունե-
 ին. ոմանք նախանձում էին նրան, ոմանք ատում: Նրա հետ էր նաև իբն
 Դուկասը, որը նրա մեծամեծներից էր և կամենում էր թագավորի մահը,
 որպեսզի նրանից հետո ինքը թագավորի:

Թագավորն ասաց՝ կարծում եմ պետք է սպասենք, մինչև որ անձրե-
 ներ գան ու ջուրը շատանա: Իբն Դուկասը այս կարծիքը մերժեց և խոր-
 հուրդ տվեց աճապարել, քանզի շարիք էր կամենում և դավադրություն էր
 նյութել: Նա առաջ շարժվեց, իսկ Դուկասի որդին և Լուլույի որդին տասը
 հազար ձիավորներով բաժանվեցին և այլ ճանապարհով ընթացան: Թա-
 գավորի մտերիմներից ոմանք տեղեկացրին, որ Դուկասի որդին և Լուլույի
 որդին քառասուն հոգու հետ որոշել են սպանել իրեն: Նա զգացվեց ու վա-
 խեցավ այս բանից և անմիջապես վերադարձավ: Դուկասի որդին հասավ
 նրա ետևից ու հարցրեց վերադարձի պատճառը: Նա ասաց՝ արաբները մեզ
 շրջապատել էին և նրանք մոտ են: Նա անմիջապես ձերբակալեց Դուկա-
 սի որդուն, Լուլույի որդուն և մյուսներին: Մարդիկ վրդովվեցին և իրար-
 անցման մեջ ընկան:

Թագավորը հեռացավ, իսկ արաբները, գյուղացիները և նույնիսկ

հայերը հետապնդեցին նրանց կոտորելով, կողոպտելով և թագավորից խլեցին շորս հարյուր ջորի բեռնավորված դրամով (ունեցվածքով) և ըզգեստներով: Հոռոմներից շատերը մեռան ծարավից: Փրկվեց միայն թագավորը, սակայն նրա ունեցվածքից ու գանձերից ոչինչ չփրկվեց և ավա-հը հավատացյալներին փրկեց կոտորածից, քանզի հզոր է ու բարեգութ:

Նրա վերադարձի մասին այլ բան էլ է պատմվում: Արաբների մի խումբ, ոչ շատ բազմամարդ, մոտենում է նրա զորքին և հոռոմները կարծելով, որ դա շուրջկալ է, չեն իմանում ինչ անել, այն աստիճանի, որ թագավորը հագնում է սև կոշիկ, մինչդեռ սովորաբար նրանց թագավոր-ները կարմիր կոշիկ են հագնում: Բայց նա թողնելով [կարմիրը] սևն է հագնում, որպեսզի իրեն չճանաչեն հետապնդողները: Նրանք փախուստի դիմեցին և մահմեդականները ավարի տվեցին ինչ որ կար նրանց մոտ:

էջ 351

ՖԱԴԼՈՒՆ ԱԼ-ՔՈՒՐԳԻԻՒ ԽԱՋԱՐՆԵՐԻ (ՋՈՒՐՋԵՐ) ԴԵՄ ԱՐՇԱՎԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ՊԱՏԱՀԱՄԻ ՄԱՍԻՆ

Այս Ֆադլուն ալ-Քուրդին²³⁰ իր ձեռքում ուներ Ատրպատականի մի մասը, որին նա տիրացել էր ու իշխել: Այնպես պատահեց, որ այդ տա-րում նա արշավեց խազարների (ջուրզեր) դեմ, կոտորեց նրանց, գերե-վարեց ու մեծ ավար վերցրեց: Երբ վերադառնում էր իր երկիրը, դանդա-ղեցրեց իր ընթացքը և անտարբեր գտնվեց, կարծելով, որ արդեն նրանց ջարդել ու թուլացրել էր: Սակայն նրանք (ջուրզերը) ուշադիր հետևեցին նրան և հարձակվեցին, կոտորելով տաս հազար հոգուց ավելի նրա մեր-ձավորներից ու կամավոր զորքից: Նրանք վերստին ձեռք բերեցին նրանց տարած ավարը և իրենք կողոպտելով մահմեդական զորքերի ունեցված-քը, վերադարձան:

Հ Ա Տ Ո Ր Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Դ

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(19 դեկտեմբեր 1031—6 դեկտեմբեր 1032)

էջ 3

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Նասր ալ-Դաուլա իբն Մարուանի տեղակալը (Նաիր) Ջազիրայում տաս հազարից ավելի զորք հավաքեց և արշավեց իրեն հա-րևան հայերի վրա, մեծ հարվածներ հասցրեց, շատ կողոպտեց ու գերե-վարեց և հաղթական վերադարձավ:

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՀԻՆԴ ԹՎԱԿԱՆ

(26 նոյեմբեր 1033—16 նոյեմբեր 1034)

էջ 7

ՀՈՌՈՄՆԵՐԻ ԲԵՐԿՐԻ (ԲԱՐՔԱՐԻ) ԱՄՐՈՅԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սա Հայոց [երկրին] սահմանակից ամրոց էր և գտնվում էր Վահու-
գան իբն Մամլանի քեռորդի Աբու-լ-Հաջա իբն Ռաբիբ ալ-Դաուլայի ձեռ-
քում: Նրա և իր քեռու հարաբերությունները վատացան և վերջինս հո-
ռոմներին լուր ուղարկեց, համոզելով գրավել այն (Բերկրին): [Ռումի]
թագավորը մեծ զորք ուղարկեց, որը գրավեց այն: Երբ լուրը հասավ խա-
լիֆային, մարդ ուղարկեց հաշտեցնելու Աբու-լ-Հաջային և քեռուն, որ-
պեսզի համատեղ ուժերով ամրոցը գրավեն: Նրանք հաշտվեցին, սակայն
չկարողացան այն վերստին գրավել: Նրանց միացավ նաև կամավորների
մի մեծ խումբ, սակայն չկարողացան [վերագրավել], քանզի հոռոմները
հաստատուն կերպով ոտք էին գրել [այնտեղ]:

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(5 նոյեմբեր 1035—25 հոկտեմբեր 1036)

էջ 11

ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԻ (ՍԱՆԱՍԻՆԱ) ՉԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ
ԳԵՐԵՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԱՐԱՄԻ ԵՏ ԲԵՐՎԵԼԸ

Այդ տարում Ատրպատականից, Խորասանից, Թաբարիստանից և այլ
երկրներից մեծ բազմություն ելավ ուխտի գնալու և սրանք իրենց ճանա-
պարհը ընտրեցին Հայաստանի ու Խլաթի վրայով: Նրանք եկան Անի և Ոս-
տան (Վասթան), սակայն այդ կողմերի հայերը ընդվզեցին նրանց դեմ:
Նրանց օգնեցին սասունցիք (Սանասինա), որոնք նույնպես հայեր են, սա-
կայն անառիկ բերդեր ունեն Խլաթի մոտ և դաշինք ունեն Խլաթի տիրոջ
հետ: Այդ բերդերը ըստ պայմանագրի իրենց ձեռքում պահեցին ինքնուրույն
կերպով, մինչև հինգ հարյուր ութսուն թվականը (1184—1185)²³¹, երբ
մահմեդականները գրավեցին այդ բերդերը և նրանց դուրս քշեցին այն-
տեղից, ինչպես հիշելու ենք կամոքն ալլահի:

Երբ [սասունցիք] պայմանավորվեցին երկրի հպատակ (ռաիյա)²³²
հայերի հետ, բռնեցին ուխտավորներին, շատերին սպանեցին, գերեցին,
գերեվարեցին ու ունեցվածքը կողոպտեցին: Այս բոլորը տարան Ռումի

կողմերը, և հայերը ցանկացան նաև տիրանալ այդ երկրին: Նասր ալ-Դաուլա իրն Մարուանը, երբ լսեց այս լուրը, զորք հավաքեց, որոշելով հարձակվել նրանց վրա: Սակայն սասունցիների թագավորը (Մալիք ալ-Սանասինա), երբ իմացավ ու տեսավ նրանց ջանքերը, նամակ գրեց ու խոստացավ վերադարձնել իր մարդկանց վերցրած ամբողջ [ավարը], արձակել գերիներին և գերեվարված [ժողովրդին]: Սա հաշտության համաձայնեց և ետ դարձավ, քանզի նրանք (սասունցիք) անառիկ բերդեր ունեն, նեղ կիրճեր և հողմներին մերձակա են, իսկ [Նասրը] վախենալով, որ օղնության կկանչեն նրանց ու կպաշտպանվեն, հաշտություն կնքեց:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(14 հոկտեմբեր 1037—2 հոկտեմբեր 1038)

էջ 15

ԱՔԵԱԶՆԵՐԻ՝ ՏՓՂԻՍԸ ՊԱՇԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՏ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում աբխազաց թագավորը²³³ Տփղիս քաղաքը պաշարեց, սակայն բնակիչները պաշտպանվեցին, իսկ նա պաշարեց ու նեղեց նրանց այնքան, որ սննդամթերքը և պարենը վերջացավ: [Մահմեդական] բնակիչները լուր ուղարկեցին Ատրպատական՝ հրահրելով մահմեդականներին և օգնության կանչելով: Երբ ղուզգերը Ատրպատական հասան, ապա աբխազները լսելով նրանց մոտիկ լինելը և թե ինչ էին արել հայերի հետ, խիստ վախեցած հեռացան Տփղիսից:

Երբ Ատրպատականի տեր Վահուդանը տեսավ ղուզգերի ուժը և թե ինչպես ինքը թույլ էր նրանց դիմաց, սիրաշահեց, խնամիական կապեր հաստատեց նրանց հետ և նրանց ապավինեց ինչպես նախապես հիշել ենք:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(16 հունիս 1048—4 հունիս 1049)

էջ 48

ԻԲՐԱՀԻՄ ՅԱՆՆԱԼԻ՝ ՌՈՒՄԻ ԴԵՄ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Իբրահիմ Յաննալը արշավեց Ռումի դեմ, հաղթեց և ավար բերեց:

Բանն այն է, որ Մավարաննահրից (Մա վարա ալ-նահր)²³⁴ ղուզգերի

մեծ բազմություն եկավ նրա մոտ, իսկ նա ասաց՝ իմ երկիրը չի կարող ձեզ տեղավորել ու գոհացնել ձեր կարիքները: Կարծում եմ, որ պետք է արշավեք Ռումի երկիրը և կովեք հանուն ալլահի, ավար վերցրեք, իսկ ես կգամ ձեր ետևից և ձեզ զորավիգ կլինեմ: Այդպես էլ արեցին ու գնացին նրա առջևից, իսկ նա հետևեց նրանց: Հասան Մանազկերտ (Մալազքիրդ), Արզան ալ-Ռում² և Կալիկալա, ապա հասան Տրապիզոն (Թարաբզոն) և մինչև այլ վայրեր: Նրանց դեմ ելավ հոռոմների և աբխազների հիսուն հազարանոց մի մեծ բանակ: Նրանք կովի բռնվեցին, որը սաստկացավ և բազում ընդհարումներ եղան: Մերթ սրանք էին հաղթում, մերթ նրանք, սակայն ի վերջո հաղթանակը մահմեդականներինը եղավ և նրանք մեծ կոտորած տվեցին հոռոմներին, փախուստի մատնեցին նրանց և մեծ թվով պատրիկների գերի վերցրեցին: Գերվածների մեջ էր աբխաղաց թագավոր Կարիթը³, որն իր համար առաջարկեց երեք հարյուր հազար դինար, և հարյուր հազար [արժողությամբ] ընծաներ, սակայն նա (Յաննալը) չընդառաջեց նրան: Նա շարունակեց ավերել, կողոպտել, մինչև որ իր և Կ. Պոլսի միջև մնացել էր տասնհինգ օրվա [ճանապարհ]: Մահմեդականները գրավեցին այն կողմերը, կողոպտեցին, ավարի տվեցին ամեն ինչ: Գերեվարեցին հարյուր հազար մարդուց ավելի, այնքան՝ գրաստ, ջորիներ, ավար և հարստություն խլեցին, որ անհնար էր հաշվել: Ասվում է, որ ավարը տարան տասը հազար սայլի վրա, ընդ որում ավարի մեջ կար տասնինն հազար զրահ:

Սրանից առաջ Ռումի երկիրը մտել էր ղուլզերի մի խումբ Թուղրիլ-բեկի մի ազգականի գլխավորությամբ, որը մեծ գործ չկատարեց, նրա ընկերակիցներից շատերը սպանվեցին, ու նա վերադարձավ: Ահա նրանից հետո մտավ Իբրահիմ Յաննալը և արեց այն, ինչ որ հիշեցինք:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(12 ապրիլ 1054—1 ապրիլ 1055)

էջ 67

ԹՈՒՂՐԻԼԲԵԿԻՒ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԸ ԳՐԱՎԵԼՈՒ ԷՎ ՌՈՒՄԻ ԴԵՄ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Թուղրիլբեկը եկավ Ատրպատական, դիմեց Դավրեժ (Տաբրիդ), որի տերն էր ամիր Աբու Մանսուր Վահսուդան իբն Մուհամմադ ալ-Ռավվադին: Սա հպատակվեց նրան, անունը խութբայի մեջ հիշել տրվեց, նվիրեց, ինչ որ նրան դուր կգար և իր որդուն պատանդ տվեց: Այս-

տեղից Թուղրիլբեկը եկավ Գանձակի (Ջանդա) տիրոջ՝ ամիր Աբու-լ-Ա-սուարի, մոտ և նա էլ հպատակվեց ու խուժբայում հիշեց նրա անունը։ Այսպես, այդ բոլոր կողմերից [դեսպաններ] ուղարկեցին, հնազանդություն հայտնելով նրան, անունը խուժբայի մեջ հիշելով և զորք ուղարկով, իսկ նա նրանց թողեց իրենց տիրույթներում։ Նա վերցրեց նրանցից պատանդներ և եկավ Հայաստան ու դիմեց Մանազկերտ (Մալազքիրդ), որը պատկանում էր հոռոմներին։ Նա պաշարեց այն, ժողովրդին նեղեց և շրջակա դավառները կողոպտեց ու ավերեց, սակայն սա մի անառիկ քաղաք էր։ Դիար Բաքրի տեր Նասր ալ-Դաուլա իբն Մարուանը բազում ընծաներ և շորք ուղարկեց։ Նա դրանից առաջ էլ նրա անունը հիշում էր խուժբայում և հնազանդություն էր հայտնել նրան։

Սուլթան Թուղրիլբեկը հոռոմների դեմ արշավանքի ընթացքում մեծ զործեր կատարեց և շատ կողոպտեց, սպանեց, գերեվարեց և արշավելով հասավ Կարնո քաղաք (Արզան ալ-Ռում), ապա, երբ ձմեռը վրա հասավ, վերադարձավ Ատրպատական, առանց Մանազկերտը (Մալազքիրդ) դրավելու²³⁷։ Նա ձևացրեց, թե [Ատրպատականում] մնալու է մինչև ձմեռվա վերջը, ապա վերադառնալու ու շարունակելու է նվաճումները, սակայն
 • դիմեց դեպի Ռեյ և այնտեղ մնաց մինչև (չորս հարյուր) քառասունյոթ թվականն ու վերադարձավ Իրաքի կողմերը, ինչպես հիշելու ենք, եթե ալ-լահը կամենա։

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(21 մարտ 1056—9 մարտ 1057)

էջ 79

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Իրաքի ճանապարհները փակվեցին՝ կողոպտվելու րսպառնալիքի պատճառով, և գները բարձրացան։ Թանկությունը շատացավ, սննդամթերք և այլ բաներ ճարելը դժվարացավ։ Մարդիկ սկսեցին մեռելներ ուտել և սաստիկ համաճարակ սկսվեց, մահացումները շատացան, այնպես որ մեռելներին թաղում էին առանց լվանալու և պատանքելու։ Մսի մի լիտրը (ռաթլ) ծախում էին մեկ դինար, չորս հավը՝ մեկ դինար, երկու լիտր գինին՝ մեկ դինար, մեկ սերկևիլը՝ մի դինար, մեկ նուռը՝ մեկ դինար և այսպես ամեն ինչ։

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(6 փետրվար 1060—25 հունվար 1061)

էջ 90

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարում վախճանվեց ալ-Կաիմ Բիամր Իլլահ [աբբասյան] խալիֆայի (1031—1075) մայրը, որի անունն էր Կաթր ալ-Նադա (ցողի կաթիլ), ասվում է նաև Բադր ալ-Դուլա (դիշերվա լուսին), կոչվել է նաև Իլմ (գիտություն)։ Նա հայ ստրկուհի (աղախին) էր։

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(26 հունվար 1061—14 հունվար 1062)

էջ 92

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարում Դամասկոսում վախճանվեց Աբու-լ-Կասիմ Ալի իբն Մուհամմադ իբն Յահիա ալ-Շիմշաթին։ Սա փիլիսոփա, ասկան դիտություններից դիտակ էր երկրաչափությանը և մաթեմատիկային։ Նրա անունով էր Դամասկոսի մայր մզկիթի մոտ դռնվող ուրբաթը (մենաստան)։

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆԶԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(4 հունվար 1063—24 դեկտեմբեր 1063)

էջ 94

ՍՈՒԼԹԱՆԻ՝ ԲԱՂԴԱԴ ԳԱԼՈՒ ԵՎ ԽԱԼԻՖԱՅԻ ԱՂԶԿԱ ՀԵՏ
ԱՄՈՒՍՆԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Մուհամադ ամսին, սուլթան Թուղրիլբեկը Հայաստանից գնաց Բաղդադ։ Խալիֆան ուզեց նրան [անձամբ] դիմավորել, բայց նա ազատեց նրան (խալիֆային) այդ բանից, և նրան ընդունելու եկավ վեղիթ իբն Ջահիրը (Ջուհայր)։

էջ 96

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում ամիր ալ-Ջուլուշ (զորաց հրամանատար)²³⁸ Բաղրը տիրեց Դամասկոսին (Դիմաշկ) և կառավարիչ նշանակվեց Եդիպտոսի տեր

Մուստանսիր [խալիֆայի] կողմից: Նա այնտեղ հասավ Ռաբի Բ ամսի քսաներեքին (25 ապրիլ) և մնաց: Սակայն նրա և զորքերի միջև տարակարծություն առաջացավ, և նրանք [զինվորները] ապստամբեցին նրա դեմ: Հասարակ ժողովուրդը նրանց կողմնակից եղավ և նա, անկարող լինելով նրանց ճնշել, հեռացավ [չորս հարյուր] հիսունվեցի Ռաջաբ ամսին (19 հունիս—18 հուլիս 1064):

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(25 դեկտեմբեր 1063—12 դեկտեմբեր 1064)

էջ 98

Ջումս:դա Ա ամսի յոթին (27 ապրիլ) խալիֆան հանդիսավոր ընդունելություն սարքեց և տեսնվեց [Ալբ Արսալանի] դեսպանների հետ՝ Ալբ Արսլանին (Ալփ Արսլան) սուլթանություն տալու նպատակով: Նա պատվական զգեստներ շնորհեց նրան ժողովրդի ներկայությամբ: Դիվանի կողմից ուղարկվեց նակիր²³³ Թիրադ ալ-Ջայնաբին՝ հավատարմության երդում վերցնելու համար: Սրանք [բոլորը] հասան նրա (Ալբ Արսլանի) մոտ, երբ Նախճավանում (Նակջուան) էր, որը Ատրպատականի մեջ է, և նա հագավ պատվական զգեստներ (խիլա), հավատարմության երդում (բայա) տալով խալիֆային:

էջ 98—100

ԱԼԲ ԱՐՍԼԱՆԻ՝ ԱՆԻ ՔԱՂԱՔԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ ԱՅԼ ՎԱՅՐԵՐԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ապա սուլթանը Ռեյից դուրս եկավ Ռաբի Ա ամսի մեկին (22 փետրվար) ու գնաց Ատրպատական: Նա հասավ Մարանդ, որոշած լինելով կռվել և արշավանք կատարել հռոմեաների դեմ: Երբ նա Մարանդում էր, նրա մոտ եկավ թուրքմենների ամիրներից մեկը, որը հաճախ էր արշավել հռոմեաների դեմ և անունն էր Թուղդաբին: Սրա հետ իր ցեղակիցների մեծ բազմություն կար, որը ջիհադի (սրբազան պայքարի) սովոր էր և այդ երկիրը ճանաչում էր: Սա համոզեց նրան հարձակվել [այդ] երկրի վրա, խոստանալով ցույց տալ այնտեղ գնալու ուղիղ ճանապարհը: Նա (սուլթանը) գնաց նրա հետ, որը զորքը տարավ այդ երկրի կիրճերով ու լեռնային ճանապարհներով ու հասավ Նախճավան (Նակջուան): Նա հրամայեց նավեր պատրաստել՝ Արաքս (Արաս) գետը անցնելու համար:

Նրան ասվեց, որ Ատրպատականում հոյի (հուայյ) և Սալմաստի (Սալմաս) բնակիչները հրաժարվել են հնազանդվելուց, ամրանալով իրենց երկրում: Նա (Ալբ Արսլանը) նրանց դեմ ուղարկեց իտրասանի ամիրին²³⁴ (կառավարչին), որը կոչ արեց հնազանդվել, իսկ հակառակ դեպքում՝

սպառնաց, նրանք հնազանդվեցին և անցնելով նրա կողմը, դարձան նրա զինվորները:

Այստեղ նրա մոտ հավաքվեցին անթիվ թագավորներ ու զորքեր և երբ զորքերի հավաքումն ու նավերի պատրաստումն ավարտվեց, շարժվեց²⁴¹ դեպի վրաց (Քուրջ) երկիրը, իր փոխարեն զորքի հրամանատար նշանակելով իր որդուն՝ Մալիքշահին, և վեզիր Նիզամ ալ-Մուլքին: Մալիքշահը և Նիզամ ալ-Մուլքը ուղղվեցին դեպի մի ամրոց²⁴², ուր շատ հոռոմներ կային: Նրա բնակիչները դուրս եկան և զորքից շատերին բռնելով, սպանեցին: Սակայն Նիզամ ալ-Մուլքը և Մալիքշահը իջան և կռվի ենելով, սպանեցին ամրոցի մարդկանց ու ներխուժելով սպանեցին ամրոցի ամիրին (հրամանատարին), և մահմեդականները գրավեցին այն:

Այստեղից նրանք գնացին Սուրմարի ամրոցը, ուր կան հոսող ջրեր ու պարտեզներ: Նրանք կռվեցին ու գրավեցին այն և բնակիչներին դուրս բերեցին: Սրա մոտակայքում կար մի այլ ամրոց, որը Մալիքշահը գրավեց և ուզեց քանդել, սակայն Նիզամ ալ-Մուլքը համոզեց շանել այդ, ասելով, որ սա սահմանային ամրություն է (սադր) մահմեդականների համար և ռազմիկներ, ռազմամթերք, դրամ ու զենք մատակարարելուց հետո այս ամրոցները հանձնեց Նախճավանի (Նակչուան) ամիրին:

Մալիքշահը և Նիզամ ալ-Մուլքը շարժվեցին դեպի Մարիամ Նիշին²⁴³, ուր շատ վանականներ ու քահանաներ (հոգևորականներ) կային: Քրիստոնյա թագավորներն ու նրանց ժողովուրդը բարյացակամ էին այս քաղաքի բնակիչների նկատմամբ: Սա մի ամրացված քաղաք էր, որի պարիսպները պատրաստված էին հսկայական պինդ քարերով, որոնք կապարի ու երկաթի միջոցով իրար լին կապված, իսկ նրա մոտ կար մի մեծ գետ:

Նիզամ ալ-Մուլքը պատրաստեց կռվի համար պետք եղած նավերը և այլ բաներ ու կռվի բռնվեց: Կռիվը տևեց գիշեր ու ցերեկ, իսկ նա զինվորներին կռվի էր բերում հերթով: Անհավատները հոգնեցին և հուսահատությունը պատեց նրանց: Մահմեդականները հասան նրա պարիսպները և աստիճաններ դնելով վեր բարձրացան, քանզի բրիչները բթացան քարի կարծրության պատճառով: Երբ բնակիչները մահմեդականներին պարսպի վրա տեսան, թուլացան և հուսալքվեցին: Մալիքշահը մտավ քաղաքը Նիզամ ալ-Մուլքի հետ և նրանք վառեցին ու կործանեցին եկեղեցիները, բնակիչներից շատերին կոտորեցին և շատերը մահմեդականություն ընդունելով մահվանից փրկվեցին:

Ալբ Արսլանը իր մոտ կանչեց որդուն և Նիզամ ալ-Մուլքին, ուրախանալով, որ ալլահի օգնությամբ իր որդին նվաճումներ էր կատարել: Մալիքշահը իր ճանապարհին գրավեց բազմաթիվ ամրոցներ, բերդեր և ան-

համար թվով քրիստոնյաներ գերեվարեց: Ապա գնացին Սաբիդշահ²⁴⁴, որի բնակիչների և մահմեդականների միջև սաստիկ կռիվ տեղի ունեցավ և այդ ժամանակ բազմաթիվ մահմեդականներ նահատակվեցին: Սակայն ալլահի օգնությամբ նվաճվեց և Ալբ Արսլանը գրավեց և այնտեղից գնաց Աալ Լալ²⁴⁵ քաղաքը, որն ամրակուռ էր, բարձր պարիսպներով, բարձրաբերձ կնիքավածքներով. արևելյան և արևմտյան կողմերից գտնվում էր բարձր լեռան վրա, իսկ լեռան վրա կային բազմաթիվ բերդեր: Մյուս երկու կողմերում կար մի անանցանելի մեծ գետ: Երբ մահմեդականները այն տեսան, հասկացան, որ անկարելի է գրավել ու նվաճել այն: Սրա, ինչպես նաև վերոհիշյալ նվաճված վայրերի թագավորը վրացի (քուրջ) էր:

Սուլթանը գետի վրա մեծ կամուրջ կառուցել տվեց և կոիվր բորբոքվեց ու վիճակը ծանրացավ: Քաղաքից երկու մարդ դուրս եկան օգնություն խնդրելու և երաշխավորագիր հայցելու, խնդրելով սուլթանից, որ մի զորամաս ուղարկի, և նա ուղարկեց մի բավական մեծ զորամաս: Երբ սրանք կամուրջն անցան, քաղաքի բնակիչ վրացիք (քուրջ) շրջապատեցին նրանց, սկսեցին կռվել ու շատերին կոտորեցին, իսկ մահմեդականները ճանապարհի նեղ լինելու պատճառով չկարողացան փախչել: Վրացիք դուրս եկան քաղաքից, հարձակվեցին զորքի վրա և կոիվր սաստկացավ:

Այդ ժամանակ սուլթանը աղոթում էր և լսելով գոռում-գոչումը, չվերկացավ, մինչև որ ավարտեց աղոթքը, ապա նստեց [իր ձին] և հարձակվեց անհավատների վրա ու սկսեց կռիվը: Մահմեդականները «Ալլահ օքս» (Մեծ է ալլահը) գոչելով հարձակվեցին, իսկ նրանք սկսեցին փախուստը ու մտան քաղաք և մահմեդականներն էլ նրանց ետևից: Մտավ նաև սուլթանը ու գրավեց այն: Բնակիչների մի խումբ ապաստանեց քաղաքի աշտարակներից մեկը և մահմեդականները կռվի բռնվեցին նրանց հետ: Սուլթանը հրամայեց աշտարակի շուրջը փայտ լցնել ու վառել: Այդպես էլ արվեց և աշտարակը վառվեց այնտեղ եղածների հետ միասին: Սուլթանը վերադարձավ իր վրանները, իսկ մահմեդականները քաղաքից անթիվ անհամար ավար տարան: Երբ գիշերը վրա հասավ, սաստիկ քամի փչեց և աշտարակը վառող կրակը դեռ բավական բոցավառ լինելով քամուց տարածվեց և ամբողջ քաղաքը վառեց: Սա տեղի ունեցավ [չորս հարյուր] հիսունվեց թվականի Ռաջաբ ամսին (19 հունիս—18 հուլիս):

Սուլթանը գրավեց մի ամուր բերդ, որն այդ քաղաքի մերձակայքում էր և ապա շարժվեց դեպի Կարսի կողմերը և Անի քաղաքը, որին մոտիկ կային երկու գավառներ, որոնք կոչվում էին Դաբի՛լ (Դասիլ), Ուարդա և Նուրա²⁴⁶: Սրանց բնակիչները դուրս եկան, հնազանդվեցին իսլամին և [մահմեդականները] քանդեցին եկեղեցիներն ու մզկիթներ կառուցեցին:

Այնտեղից նա գնաց Անի քաղաքը և, երբ հասավ, տեսավ, որ ամուր և խիստ անառիկ քաղաք է: Նրա երեք բառորդը գտնվում էր Արաքս

(Արաս) դետի վրա, իսկ մի քառորդը՝ արագահոս խորր գետի վրա էր, որի մեջ եթե խոշոր քարեր նետեին, [չուրր] կարող էր ջարդել ու քշել-տանել: Ճանապարհը դեպի քաղաք գնում էր մի խրամատի միջով, որի վրա պինդ քարից պարիսպ կար: Սա մի շեն ու բազմամարդ քաղաք էր, ուր կար հինգ հարյուրից ավելի եկեղեցի:

Նա պաշարեց և սկսեց նեղել նրանց, սակայն մահմեդականները հուսահատվեցին գրավելուց, երբ տեսան, թե ինչ անառիկ է: Սուլթանը փայտե աշտարակ շինել տվեց, լցրեց զինվորներով և դրեց քարանետ մեքենա (մանջանիկ) նետաձիգների հետ միասին: Սրանք հոռոմներին քշեցին պարիսպից հեռու ու մահմեդականները մոտեցան, որպեսզի քանդեն այն և ահա ալլահի ողորմածությամբ պատահեց այն, ինչ նրանց հաշվի մեջ չկար (մտքից չէր անցնում)՝ պարսպից մի մեծ կտոր փուլ եկավ առանց պատճառի²⁴⁷: Նրանք քաղաք մտան և անթիվ անհամար կոտորեցին բնակիչներին, այնքան, որ մահմեդականներից շատերը դիակների շատության պատճառով չկարողացան քաղաք մտնել: Նրանք գրեթե նույնքան էլ գերի տարան:

Այս նվաճումների ուրախ լուրը տարածվեց երկրում և մահմեդականները հրճվեցին: Բաղդադում՝ խալիֆայական տան մեջ, նվաճման մասին նամակը կարդացվեց: Ալբ Արսլանին ուղարկվեց խալիֆայի դրությունը, որի մեջ գովում էր նրան և աղոթում նրա համար:

[Ալբ Արսլանը] այնտեղ (Անիում) թողեց մի ամիր (հրամանատար) հսկայական զորքի հետ միասին ու վերադարձավ: Վրաց (Քուրջի) թագավորը²⁴⁸ գրեց նրան հաշտության մասին, և [սուլթանը] պայմանագիր կնքեց ամեն տարի ջիզիա (գլխահարկ) վճարելու պայմանով, և նա ընդունեց:

Այնտեղից դուրս գալով, սուլթանը²⁴⁹ դիմեց Սպահան (Իսֆահան), ապա Քիրման և նրան ընդունեց եղբայրը՝ Կաուրտ բեկը, Ջաղրի (Չադրի) բեկ Դաուդի որդին: Ապա գնաց Մերվ (Մարվ) և իր որդուն Մալիքշահին ամուսնացրեց Մավարաանահրի խականի դստեր հետ և հանդիսավորապես [դուստրը] բերվեց նրա մոտ: Մյուս որդուն՝ Արսլանշահին ամուսնացրեց Ղազնայի տիրոջ դստեր հետ և այսպիսով միացան երկու տները՝ Սելջուկի (Սալջուկ) ու Մահմուդի, և համաձայնություն կայացավ:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(20 հոկտեմբեր 1069—8 հոկտեմբեր 1070)

էջ 107

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարում զորահրամանատար (ամիր ալ-Ջուլուշ) Բադրը Եգիպտոսից մեծ զորքով գնաց ու պաշարեց Տյուրոսը (Սուր), որը գրավել էր

դատավոր Այն ալ-Դաուլա իրն արու Ուկայլը, Երբ նա (Բադրը) պաշարեց, դատավորը օգնության կանչեց Ասորիքի թուրքերի առաջնորդ ամիր Կուրլույին: Սա եկավ տասներկու հազար ձիավորներով և պաշարեց Սիդոն (Սայդա) քաղաքը, որը զորահրամանատար, Բադրի ձեռքում էր: Այդ ժամանակ Բադրը հեռացավ և թուրքերն էլ վերադարձան: Սակայն Բադրը մեկ տարի ևս շարունակեց Տյուրոսի պաշարումը ցամաքից ու ծովից և այնքան նեղեց բնակիչներին, որ հացի լիտրը (ռաթլ) կես գինարով (ոսկեդրամ) էին վերցնում: Այսուհանդերձ նա (Բադրը) չհասավ իր նպատակին ու հեռացավ:

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(9 հոկտեմբեր 1070—28 սեպտեմբեր 1071)

էջ 109—110

ՌՈՒՄԻ ԹԱԳԱՎՈՐԻ՝ ԽԼԱԹ ԳԱԼՈՒ ԵՎ ԳԵՐԻ ԸՆԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռումի թագավոր Ռոմանոսը (Արմանուս) զուրս եկավ երկու հարյուր հազար հոռոմների, ֆրանկների, արևմտյան [ազգերի], ռուսների, պաթինականների (բաջանաք) և վրացիների (քուրջ) ու այդ երկրներից եկած ուրիշ խմբերի²⁵⁰ բազմությամբ, և եկան հսկայական զորքով ու գեղեցիկ հանդերձանքով, դիմեցին իսլամի երկիրը: Նա եկավ Խրլաթ նահանգի Մանազկերտ (Մալադքիրդ) քաղաքը: Այս լուրը հասավ Ալբ Արսլանին, երբ նա վերադարձել էր Հալեբից և Ատրպատականի Խոյ (Խուսայյ) քաղաքում էր: Նա լսեց, թե ինչպիսի մեծ զորքով էր եկել Ռումի թագավորը, սակայն չկարողացավ իր զորքերը ի մի հավաքել, քանզի նրանք հեռու էին գտնվում, իսկ թշնամին մոտ էր: Նա իր գանձերը կնոջ ու նիզամ ալ-Մուլքի հետ ուղարկեց Համադան, իսկ ինքն իր մոտ եղած տասնհինգ հազար հեծյալներով ճանապարհ ընկավ: Նա ասաց նրանց՝ ես կովելու եմ [ճակատագրին] հնազանդ և համբերատար կերպով. եթե ողջ մնամ, դա կլինի ալլահի ողորմությունը, իսկ եթե նահատակվեմ, ապա իմ որդին՝ Մալիքշահը իմ գահաժառանգն է:

Նրանք շարժվեցին առաջ, և երբ թշնամին մոտեցավ, նա առաջապահ զորամաս ուղարկեց, որը Խլաթի մոտ հանդիպեց ռուսների²⁵¹ (ռուսիյա) առաջապահ զորամասին, որի մեջ կային տասը հազար հոռոմներ: Նրանք բախվեցին և ռուսները պարտվեցին, նրանց առաջապահի հրամանատարը գերի ընկավ, տարվեց սուլթանի մոտ և նրա քիթը կտրեցին: Ավարը նա ուղարկեց նիզամ ալ-Մուլքին, հրամայելով, որ ուղարկի Բադդադ:

Երբ երկու զորքերը իրար մոտեցան, սուլթանը լուր ուղարկեց Ռումի թագավորին հաշտություն խնդրելով, բայց սա ասաց՝ հաշտություն

չկնքվի միայն Ռեյում: Սուլթանը վրդովվեց այս բանի համար: Նրա իմամը (կրոնապետ) և ֆակիհը (իրավագետ) Աբու Նասր Մուհամմադ իրն Արդալ-Մալիք ալ-Բուխարի ալ-Հանաֆին ասաց՝ դու այն հավատի համադես կռվում, որին ալլահը խոստացել է օգնություն և հաղթանակ, բոլոր մյուս կրոնների նկատմամբ: Ես հույս ունեմ, որ բարձրյալն ալլահը քո անունով է գրել այս հաղթանակը: Ելիր նրանց դեմ ուրբաթ օրը մայրամուտից հետո, այն ժամին, երբ քարոզիչները մինբարներից (մզկիթի բեմերից) աղոթելու են սրբազան պայքարի ռազմիկների հաղթանակի համար, իսկ աղոթքը անպատասխան չի մնա:

Երբ ալդ ժամը հասավ, [իմամը] նրանց հետ աղոթք կատարեց և սուլթանն արտասովեց, մարդիկ ևս լաց եղան նրա հետ, նա աղոթեց, և նրանք աղոթեցին նրա հետ: Նա ասաց՝ ով կամենում է հեռանալ, թող գնա, քանզի այստեղ չկա տիրակալ (սուլթան), որը հրամայի կամ արգելի: Նա դեն գցեց աղեղն ու նետը և վերցրեց սուրն ու գուրզը և իր ձիու պոչը ձեռքով կապեց: Նույնը արեց նաև նրա զորքը: Նա սպիտակ հագավ ու օծվելուց հետո ասաց՝ եթե սպանվեմ, սա է իմ պատանքը:

Նա արշավեց հոռոմների դեմ, իսկ նրանք [նույնպես] դուրս եկան նրա դեմ: Երբ մոտեցավ նրանց, իջավ ձիուց, իր դեմքը շփեց հողին, արտասովեց և երկար աղոթեց: Ապա հեծավ իր ձին և սկսեց հարձակումը ու զորքը նույնպես հարձակվեց: Մահմեդականները մնացին [հոռոմների] մեջտեղում և փոշին նրանց անջատել էր իրարից: Մահմեդականները կոտորեցին նրանց ինչքան որ կամեցան, ալլահը հաղթանակ պարգևեց նրանց⁴⁵², հոռոմները փախուստի դիմեցին և անհամար զոհեր տվեցին, այնպես, որ երկիրը ծածկվեց սպանվածների դիակներով:

Գերի ընկավ Ռումի թագավորը: Նրան բռնեց Քաուհարայինի (Գաուհարային) ծառաներից (դուլամ) մեկը և ուզեց սպանել, քանզի շգիտեր նրան, բայց թագավորի մոտ գտնվող մի ծառա ասաց՝ մի սպանիր, սա թագավորն է: Այս ծառային Քաուհարայինը [ժամանակին] առաջարկել էր Նիզամ ալ-Մուլքին, բայց վերջինս արհամարհանքով հրաժարվել էր: Քաուհարայինը գովել էր նրան, իսկ Նիզամ ալ-Մուլքը [կատակով] ասել էր՝ գուցե նա Ռումի թագավորին գերի բռնած բերի: Այդպես էլ եղավ: Երբ ծառան թագավորին գերի բերեց Քաուհարայինի մոտ, սա տեղեկացրեց սուլթանին թագավորի գերի ընկնելը և նա հրամայեց բերել իր մոտ: Երբ բերեցին, սուլթան Ալբ Արսլանը երեք անգամ իր ձեռքով մտրակի հարված տվեց, ասելով՝ չէ՞ որ ես քեզ հաշտություն առաջարկեցի, իսկ դու մերժեցիր: Թող ինձ այպանելը և արա ինչ որ կամենում ես, ասաց նրան [թագավորը]: Սուլթանն ասաց՝ ի՞նչ կանեիր ինձ, եթե գերի վերցնեիր: Ասաց՝ վատ կվերաբերվեիր: Իսկ ի՞նչ ես կարծում, ես քո նկատմամբ ի՞նչ կանեմ: Ասաց՝ կամ կսպանես ինձ, կամ խայտառակ ցու-

ցաղրութեան կենթարկես մահմեդական երկրներում, իսկ վերջինը, որը քիչ հավանական է, ներում կշնորհես, դրամ վերցնելով և ինձ քո տեղակալը դարձնելով: Ասաց՝ հենց այդպես էլ որոշել եմ անել:

Նա [թագավորի] համար փրկագին նշանակեց հազար հաղար (մեկ միլիոն) հինգ հարյուր հազար դինար, պարտավորեցնելով, որ Ռումի զորքեր ուղարկվեն, հենց որ ինքը պահանջի և ազատ արձակի Ռումի երկրում եղած բոլոր [մահմեդական] դերիներին: Այդպես էլ գործերը կարգավորվեցին: Նա [թագավորին] տվեց մի վրան և տասը հազար դինար ուղարկեց, որպեսզի պատրաստություն տեսնի և պատրիկների մի մասին էլ ազատ արձակեց: Մյուս օրը Ռումի թագավորն ասաց՝ ո՞րն է խալիֆայի կողմը, ցույց տվեցին նրան, և նա ելավ գլուխը բացեց ու երկրպագեց, որպես ծառայության նշան: Սուլթանը հաշտություն կնքեց հիսուն տարվա համար, զորքի ընկերակցությամբ ուղարկեց նրան իր երկիրը և նրան ապահով տեղ հասցրեց: Մեկ փարսախ տարածության վրա սուլթանը ուղեկցեց նրան:

Իսկ Ռումի (երկրում) լսելով ճակատամարտի լուրը, թագավորի դեմ ապստամբություն բարձրացրեց Միքայելը (Միխայիլ), որը տիրացավ երկրին: Երբ Ռումանոս (Արմանուս) թագավորը հասավ Դուկիա^{2,3} ամրոցը և լսեց կատարվածը, բուրդ հագավ և խստակրոն կյանք վարեց: Նա լուր ուղարկեց Միքայելին, տեղեկացնելով, թե ինչ էր որոշվել սուլթանի հետ և ասաց՝ եթե ուզում ես ընդունիր այն, ինչ որոշված է, իսկ եթե ոչ՝ վերցրու [իշխանությունը]: Միքայելը պատասխանեց, որ նախընտրում է ընդունել որոշվածը և խնդրեց նրա միջնորդությունը սուլթանի կարծիքը հարցնելու համար:

Ռումանոսը (Արմանուս) հավաքեց իր մոտ ունեցած հարստությունը, որը երկու հարյուր հազար դինար էր և ուղարկեց սուլթանին, ինչպես նաև մի ոսկե ափսե, գոհարներով դարդարված՝ իննսուն հազար դինար արժողությամբ և երգվեց, որ ավելին չի կարող վճարել: Ապա Ռումանոսը (Արմանուս) գրավեց հայոց կողմերը և նրանց երկիրը: Իսկ բանաստեղծները ներբողեցին սուլթանին և շատ հաճախ հիշում էին այս նվաճումը:

ՉՈՐՍ ՇԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՎԵՑ ԹՎԱԿԱՆ

(6 սեպտեմբեր 1073—26 օգոստոս 1074)

էջ 118

Չորս հարյուր վաթսունվեց թվականին Եգիպտոսում իշխանության տեր դարձավ Բադր ալ-Գամալի (Ջամալի) ղորահրամանատարը (ամիր լալ-ջուլուշ): Նա սպանեց Ալդիգիզին, վեզիր իբն Քադինային և պահակա-

զորքի մարդկանց մի խմբի: Նա պետութեան ղեկն իր ձեռքում պահեց մինչև իր մահը: Նրանից հետո իշխեց որդին՝ Աֆղալը: Նրանց մասին խոսվելու է ստորև:

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԻՆ ԹՎԱԿԱՆ

(5 օգոստոս 1076—24 հուլիս 1077)

էջ 123

ԱԿՍԻՍԻՒ ԿԱՀԻՐԵՆ ՊԱՇԱՐԵԼՆ ՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ասորիքի պատմիչներից մեկը հիշել է, թե Ակսիսը (Աթսիզ) երբ հասավ Եգիպտոս (Կահիրե), զորահրամանատարը (ամիր ալ-ջուլուշ Բադրը) զորքը կազմակերպեց և արաբներից ու երկրի այլ բնակիչներից մեծ զորք հավաքեց: Նրանք ընդհարվեցին և Ակսիսը (Աթսիզ) փախուստի մատնվեց և նրա զորքի մեծ մասը կոտորվեց ու փախավ:

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(14 հուլիս 1078—3 հուլիս 1079)

էջ 126

Այդ տարում Տաջ ալ-Դաուլա (պետության թագ) Տուտուշ իբն Ալբարսլանը գրավեց Դամասկոսը:

Բանն այն է, որ նրա եղբայր Մալիքշահ (Մելիքշահ) սուլթանը, չորս հարյուր յոթանասուն (1077—1078) թվականին նրան պարգևել էր Ասորիքի իշխանությունը և ամեն ինչ, որ կնվաճեր այդ կողմերում:

Նա եկավ Հալեբ ու պաշարեց, իսկ բնակչությունը սաստիկ սովի ենթարկվեց: Նա իր մոտ ունեւ թուրքմենների մեծ զորք և ահա Դամասկոսի տեր Ակսիսը (Աթսիզ) նրանից օգնություն խնդրեց, հայտնելով, որ եգիպտական զորքերը իրեն պաշարել են Դամասկոսում: Զորահրամանատար (ամիր ալ-ջուլուշ) Բադրը Եգիպտոսից զորք էր ուղարկել նասր ալ-Դաուլա կոչված մի զորավարի գլխավորությամբ, որը պաշարել էր Դամասկոսը: Ուստի Ակսիսը Տաջ ալ-Դաուլա Տուտուշին լուր էր ուղարկել օգնության կանչելով և վերջինս եկավ պաշտպանելու Ակսիսին: Երբ եգիպտացիք լսեցին նրա մոտենալու մասին, վախեցած նրա ձեռքից փախան գրեթե պարտված վիճակում:

Ակսիսը դուրս եկավ պարսպի մոտ գիմավորելու Տուտուշին, սակայն վերջինս զայրացավ, թե ինչու [ընդառաջ չէր եկել] և միայն պարսպի մոտ էր սպասում ու մեղադրեց նրան: Ակսիսն ուզեց արդարանալ տարբեր

ձևերով, սակայն Տուտուշը շրնդունեց այդ խոսքերը և անմիջապես ձեր-
րակալել տալով սպանեց նրան ու գրավեց քաղաքը:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(10 մայիս 1084—28 ապրիլ 1085)

էջ 134

**ՊԱՏԵՐԱԶՄԸ ՖԱԽՐ ԱԼ-ԴԱՌԻԼԱ ԻՔՆ ԶՈՒՀԱՅՐԻ ԵՎ ԻՔՆ ՄԱՐՈՒԱՆԻ
ՈՒ ՇԱՐԱՖ ԱԼ-ԴԱՌԻԼԱՅԻ ՄԻՋԵՎ**

Արդեն հիշել ենք, որ Ֆախր ալ-Դաուլա իրն Զուհայրը (խալիֆայի նախկին վեզիրը) սուլթանական զորքերով շարժեց դեպի Դիար Բաքր: Այս տարում սուլթանը (Մելիքշահ) նորից զորք ուղարկեց, որի հետ էր Ուրտուկ (Արտուկ) իբն Աքսաբը և հրամայեց օգնել նրան (Ֆախր ալ-Դաուլային): [Դիար Բաքրի տեր] իրն Մարուանը գնացել էր [Հալեբի տեր] Շարաֆ ալ-Դաուլայի մոտ և օգնություն խնդրել, այն պայմանով, որ ինքը նրան կզիջի Ամիդը: Նրանք իրար երգվեցին, սակայն ամեն մեկը գիտեր, որ մյուսը ստում է, քանի որ թշնամանք կար նրանց միջև, սակայն միացել էին Ֆախր ալ-Դաուլայի դեմ պայքարում:

Երկու կողմերի միջև սաստիկ կռիվ սկսեց և արաբները պարտվեցին: Վեզիր Ֆախր ալ-Դաուլան և Ուրտուկը ճակատամարտին ներկա չեն եղել, իսկ նրանց թուրքմեն ռազմիկները գրավել էին արաբների վրանների ճամբարները (հիլլա) և տարել նրանց ձիերը: Շարաֆ ալ-Դաուլան պարտվեց և մտավ Ամիդի պարիսպից ներս: Ֆախր ալ-Դաուլան պաշարեց նրան ու նրա ընկերակիցներին:

Իբն Զուհայրը (Ֆախր ալ-Դաուլա) գնաց նփրկերտ և ապա Խլաթ:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(29 ապրիլ 1085—17 ապրիլ 1086)

էջ 139

ՏԱՐԲԵՐ ԴԵՊԷՆՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարում Ռաբի Ա ամսին (27 հունիս—26 հուլիս) զորահրամա-
նատարը (ամիր ալ-Զուլյուշ, Բադր) եգիպտական զորքով հասավ Ասորիք,
պաշարեց Դամասկոսը, ուր նստում էր նրա տերը՝ Տաջ ալ-Դաուլա Տու-
տուշը: Նա (Բազըր) նեղեց նրան ու կռվեց, սակայն չկարողանալով ոչինչ
նվաճել, վերադարձավ Եգիպտոս:

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(16 մարտ 1089—5 մարտ 1090)

էջ 150

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԶՈՐՔԻ ԱԿՐԱՆ (ԱՔՔԱ) ԵՎ ԱՍՈՐԻՔԻ ԱՅԼ ՎԱՅՐԵՐ
ՆՎԱՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այս տարում Եգիպտոսի զորքը դուրս եկավ դեպի Ասորիք մի քանի զորահրամանատարներով ու պաշարեց Տյուրոս (Սուր) քաղաքը։ Այն գրավել էր դատավոր Այն ալ-Դաուլա իրն աբու Ուկայլը, որը պաշտպանվեց ներանցից, սակայն մեռավ և որդիները իշխեցին։ Երբ եգիպտական զորքը պաշարեց նրանց (որդիներին), գիմագրելու բավական ուժ չունենալով, հանձնեցին քաղաքը։

Ապա զորքերը շարժվեցին դեպի Սիդոն (Սայդա) և այնտեղ ևս նույնը կատարվեց, ապա գնացին դեպի Ակրա, պաշարեցին, բնակիչներին նեղեցին ու գրավեցին։ Ապա հարձակվեցին Բիբլոսի (Ջուբայլ) վրա, որը նույնպես նվաճեցին։ Նրանք (եգիպտացիք) բարեկարգեցին այս երկրի վիճակը և կարգ ու կանոն հաստատեցին և ապա վերադարձան Եգիպտոս։ Զորահրամանատարը (ամիր ալ-Ջուլուշ, Բադր) այս քաղաքներում կառավարիչներ (ամիր) և բարձրաստիճան պաշտոնյաներ (ամիլ) նշանակեց։

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(1 փետրվար 1093—20 հունվար 1094)

էջ 167

ՏՈՒՏՈՒՇԻ ԴԻԱՐ ԲԱՔՐԸ, ԱՏՐՊԱՏԱԿԱՆԸ ՆՎԱՃԵԼՈՒ ԵՎ ԱՍՈՐԻՔ
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ Տաջ ալ-Դաուլա Տուտուշը²⁵⁴ վերջացրեց արաբների հետ իր գործերը և Մոսուլի ու այլ վայրերի նվաճումը Ռաբի Բ ամսին (1 մայիս—29 մայիս), եկավ Դիար Բաքր, իբն Մարուանի ձեռքից վերցրեց նփրկերտը և ամբողջ Դիար Բաքրը։ Այնտեղից նա գնաց Ատրպատական։

էջ 168

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ՝ ՏՅՈՒՐՈՍԸ [ԿՐԿԻՆ] ՊԱՇԱՐԵԼՈՒ ԵՎ
ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այս տարում Զումագա Բ ամսին (29 հունիս—27 հուլիս) Եգիպտոսի ալիական (շիայական) տեր (խալիֆա) ալ-Մուստանսիր ըիլլահի զորքերը գրավեցին Տյուրոսը (Սուր)։

Բանն այն է, որ երբ շորս հարյուր ութսուներկու թվականին Մուստանսիր [խալիֆայի] վեզիր, զորահրամանատար (ամիր ալ-ջուլուշ) Բադրը

առաջնորդել էր զորքերը դեպի Տյուրոս (Սուր) և Ասորիքի (Շամ) այ: ժովափնյա քաղաքները, դրանց ներսում գտնվող [զորքերը] մերժել էին հպատակվել, սակայն [Բաղրը] գրավել էր, կարգավորել տեղական գործերը և կառավարիչներ նշանակել: Նա Տյուրոսի կառավարիչ էր նշանակել մի ամիրի, որին կոչում էին Մունիր ալ-Դաուլա ալ-Ջուլուշի: Սա ապրտամբել էր Մուստանսիրի ու զորահրամանատարի դեմ և պաշտպանվել Տյուրոսում:

Ահա սրա դեմ Եգիպտոսից զորք ուղարկվեց, իսկ Տյուրոսի բնակչությունը մեղադրում էր Մունիր ալ-Դաուլային իր տիրակալի դեմ ապրտամբելու համար, և երբ Եգիպտական զորքերը հասան Տյուրոս, պաշարեցին ու կռվեցին, ապա բնակիչները ապստամբեցին և Մուստանսիրի ու զորահրամանատարի (Բաղրի) անունները կանչեցին: Նրանք հանձնեցին քաղաքը և Եգիպտական զորքերը մտան առանց դիմադրության կամ պաշտպանության հանդիպելու, մեծ կողոպուտ վերցրեցին, գերեցին Մունիր ալ-Դաուլային, նրա մերձավորներին ու տարան Եգիպտոս: Քաղաքի բնակչությունից վաթսուն հազար դինար պահանջվեց, որը ծանր էր: Երբ Մունիր ալ-Դաուլան գերիների հետ Եգիպտոս տարվեց, բոլորը կոտորվեցին և ոչ ոքի ներում չշնորհվեց:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(21 հունվար 1094—10 հունվար 1095)

էջ 170

ԱԼ-ՄՈՒԿՏԱԴԻ ԲԻԱՄՐԻԼԼԱՀ [ԽԱԼԻՖԱՅԻ] ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Նա ապրեց երեսունութ տարի, ութ ամիս և յոթ օր: Իր խալիֆայության [շրջանն] էր տասնինն տարի և ութ ամսից երկու օր պակաս: Նրա մայրը հայ ստրկուհի էր (ուժմ վալազ), որի անունն էր Արգավան (Արջուան)²⁵⁵ և կոչվում էր Կուռատ ալ-Այն: Նրա մայրն ապրեց, նրա, նրա որդու ալ-Մուստազհիր Բիլլահի և թոռան ալ-Մուստարշիդ Բիլլահի խալիֆայության օրերը:

էջ 170—171

ԿԱՍԻՄ ԱԼ-ԴԱՌԻԼԱ ԱԿՍՈՒՆԿՈՒՐԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՈՒՏՈՒՇԻ ՏԻՐԵԼԸ ՀԱԼԵԲԻՆ, ԶԱԶԻՐԱՅԻՆՔ ԳԻԱՐ ԲԱՔՐԻՆ, ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻՆ ՈՒ ՀԱՄԱԳԱՆԻՆ ԵՎ ՆՐԱ ԱՆՈՒՆՈՎ ԽՈՒԹԲԱ ՀԻՇՎԵԼԸ ԲԱՂԴԱԴՈՒՄ

Այս տարի Զուժագա Ա ամսին (19 մայիս—17 հունիս) սպանվեց Կասիմ ալ-Դաուլա. Ակսունկուրը, Մոսուլի մեր թագավորների՝ նահատակ Զանգի իբն Ակսունկուրի որդիների պապր:

Երբ Տուտուշը գրավեց Խառանը, Եգեսիան շարժվեց դեպի Զաղիրա, որին ամբողջովին նվաճեց, ապա գրավեց Դիար Բաքրը և Խլաթը և ապա դիմեց դեպի Ատրպատական ու բոլոր քաղաքները նվաճեց:

էջ 172

ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԱՄԻՐ ԱԼ-ՋՈՒՅՈՒՇԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Եգիպտոսում Զու-լ-Կադա՝ ամսին (12 նոյեմբեր—11 դեկտեմբեր) մեռավ զորքի տեր, Ամիր ալ-Ջույուշ (զորահրամանատար) Բադր ալ-Ջամալին (Գամալի): Նա անցել էր ութսուն տարին և նա էր, որ տնօրինում էր և կառավարում Մուստանսիր (Խալիֆայի) օրոք:

Սա (Մուստանսիր Խալիֆան) նշանակել էր նրան Ասորիքի (Շամ) կառավարիչ չորս հարյուր հիսունհինգ թվականին (1063): Իր և հպատակների ու զորքի միջև Դամասկոսում պատահածի պատճառով, վախեցավ իր անձի համար և դուրս գալով, հեռացավ: Նա [զորք] հավաքեց ու կուտակեց, ապա եկավ Ասորիք և լրիվ գրավեց այն (չորս հարյուր) հիսունվեց թվականին (1063—1064): Ապա Դամասկոսի ժողովուրդը նորեն ապստամբեց և նա փախավ այնտեղից (չորս հարյուր) վաթսուն թվականին (1067—1068): Ժողովուրդն ու զորքը ավերեցին ամիրի պալատը: Ապա Ամիր ալ-Ջույուշը գնաց Եգիպտոս, հաջողություն ունեցավ և իշխանության տերը դարձավ:

Երբ Բադր մեռավ, նրա գործերը վերցրեց որդին՝ Աֆդալը:

էջ 172—173

ՄՈՒՍՏԱՆՍԻՐԻ ՄԱՀՎԱՆ ԵՎ ՈՐԴՈՒ՝ ՄՈՒՍՏԱԼԻԻ, ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ՏԻՐԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ մեռավ (Մուստանսիրը), նրան հաջորդեց Աբու-լ-Կասիմ Ահմադ ալ-Մուստալի Բիլլահը: Նա ծնվել էր չորս հարյուր վաթսույնյոթ թվականի Մուհամմադ ամսին: Նա (Մուստանսիրը), իր կենդանության օրոք, Խալիֆայությունը կտակել էր իր նիդար որդուն, սակայն Աֆդալը²⁵⁸ հանեց նրան և [Խալիֆա] հռչակեց Մուստալի Բիլլահին:

Նրա հանելու պատճառն այն էր, որ Աֆդալը մի անգամ, Մուստանսիրի օրոք, ձի նստած մտավ պալատի բակը ոսկե դռնից: Նիզարը դուրս էր գալիս, իսկ միջանցքը մութ էր և Աֆդալը շտեմսավ նրան: Նիզարը գոռաց՝ իջիր ձիուց ո՛վ շուն հայ, ինչ անքաղաքավար ես: Սա ոխ պահեց

ներա դեմ և, երբ մեռավ Մուստանսիրը, հեռացրեց նրան, վախենալով իր անձի համար և [խալիֆա] հռչակեց Մուստալիին:

Նիզարը փախավ Ալեքսանդրիա (ալ-Իսքանդարիյա), ուր Նասիր ալ-Դաուլա Աֆտաքինն էր և այստեղ Ալեքսանդրիայի ժողովուրդը [խալիֆա] հռչակեց նրան, կոչելով ալ-Մուստաֆա Լիդինիլահ: Մարդիկ նրան խուժքա տվեցին ու անիծեցին Աֆդալին: Նրան օժանդակեց նաև Ալեքսանդրիայի դատավոր (կադի) Ջալալ ալ-Դաուլա իբն Ամմարը:

Աֆդալը գնաց նրանց դեմ, պաշարեց Ալեքսանդրիան, սակայն պարտված վերադարձավ: Ապա ավելացրեց զորքը ու գնաց [կրկին] պաշարեց, գրավեց այն ու բռնելով Աֆտաքինին սպանեց: Մուստալին բռնեց Նիզարին ու վրան պատ շարել տվեց, ու սա մեռավ: Սպանեց նաև դատավոր Ջալալ ալ-Դաուլա իբն Ամմարին ու նրան օժանդակողներին:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(9 դեկտեմբեր 1097—27 նոյեմբեր 1098)

էջ 186

ՖՐԱՆԿՆԵՐԻ՝ ԱՆՏԻՈՓՈԼ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

.....
Երբ ֆրանկները²⁵⁷ որոշեցին Ասորիքի (Շամ) վրա հարձակվել, գնացին Կ. Պոլիս, որպեսզի նեղուցը անցնելով մտնեն մահմեդականների երկիրը, ընթանալով ցամաքի ճամփով, որն ավելի դյուրին էր: Սակայն, երբ այնտեղ հասան, Ռումի թագավորը արգելեց նրանց իր երկրի միջով անցնել, ասելով՝ չեմ թողնի, որ անցնեք իսլամի երկրները, մինչև որ երդում չտաք, որ ինձ կհանձնեք Անտիոքը: Նրա նպատակն էր դրդել նրանց, որ հարձակվեն իսլամի երկրների վրա՝ հույս ունենալով, որ թուրքերը նրանցից ոչ ոքի կենդանի չեն թողնի, քանի որ տեսավ սրանց (ֆրանկների) հաստատակամությունը և ուժը: Նրանք համաձայնեցին և անցան նեղուցը Կ. Պոլսի մոտ [չորս հարյուր] իննսուն թվականին և հասան Կիլիք Արսլան իբն Սուլայման իբն Կուտուլմիշի երկիրը, որն [ընդգրկում է] Իկոնիան այլ [չրջանների] հետ միասին: Երբ հասան, Կիլիք Արսլանն իր զորքով դիմադրեց և արգելք եղավ, սակայն նրանք կռվեցին ու հաղթեցին [չորս հարյուր] իննսուն թվականի Ռաջաբ ամսին (4 հունիս—3 հուլիս): Նրա երկրի միջով անցնելով նրանք մտան հայազգի Լևոնի որդու (իբն Լայուն ալ-Արմանի)²⁵⁸ երկիրը, որի միջով անցան և դուրս եկան Անտիոք (Անթաքիա) ու պաշարեցին:

Երբ նրա (Անտիոքի) տեր Բադի Սիյանը լսեց նրանց հարձակման

մասին, վախեցավ այնտեղ ապրող քրիստոնյաներից: Մի օր մահմեդականներին դուրս բերեց քաղաքից և հրամայեց խրամատ փորել: Մյուս օրն էլ քրիստոնյաներին դուրս բերեց, որպեսզի խրամատ փորեն, սակայն առանց մահմեդականների: Նրանք մինչև երեկո աշխատեցին և երբ կամեցան քաղաք մտնել, նա արդելեց նրանց, ասելով՝ Անտիոքը ձերն է, այն նվիրեցեք լինձ, մինչև որ իմանամ. թե ինչ կլինի իմ ու ֆրանկների հարցը: Ասացին՝ իսկ ով կպահի մեր երեխաներին ու կանանց. ասաց՝ նրանց ես հոգ կտանեմ: Իսկ սրանք ելան գնացին ֆրանկների մոտ: Անտիոքի պաշարումը տևեց ինն ամիս...²⁵:

[Բաղի Սիյանը] բացեց քաղաքի դուռը և երեսուն ծառաներով (ղուլամ) փախավ...: Երբ նա գետին ընկավ, ընկերակիցները ուզեցին նրան ձի նստեցնել, սակայն նա ուժ չունեց, քանի որ մահմեդ չէր: Նրանք թողեցին նրան ու հեռացան: Նրա մոտով անցավ մի հայ մարդ, որը փայտահատ էր: Նա վերջին շունչն էր փչում, երբ սա սպանեց նրան ու գլուխը տարավ ֆրանկների մոտ՝ Անտիոք: Ֆրանկները գրել էին Հալեբի ու Դամասկոսի տերերին, թե մենք կամենում ենք զրավել միայն այն՝ երկիրը, որը [նախապես] Ռուհի ձեռքում էր գտնվում և ուրիշ բան չենք ցանկանում: Այս բանն ասացին խորամանկորեն, խաբելու համար, որպեսզի Անտիոքի տիրոջը չօգնեն:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(28 նոյեմբեր 1098—16 նոյեմբեր 1099)

էջ 189

ՖՐԱՆԿՆԵՐԻ՝ ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔԸ (ԵՐՈՒՍԱՂԵՄ) ԳՐԱՎԵԼԸ

Սուրբ քաղաքը Տաշ ալ-Դաուլա Տուտուշին էր պատկանում, և նա որպես պարզեական տիրույթ (իկթա) տվել էր Ուրտուկ թուրքմենի որդուն՝ Սուկմանին: Երբ ֆրանկները Անտիոքի մոտ հաղթեցին թուրքերին ու կոտորեցին, թուրքերը թուլացան և ցրվեցին: Եգիպտացիք տեսնելով թուրքերի թուլացումը, առաջ խաղացին Բաղր ալ-Դամալիի (Ջամալիի) որդի Աֆղալի հրամանատարության տակ և պաշարեցին քաղաքը: Քաղաքում էին Ուրտուկի որդիները՝ Սուկմանն ու Իլդազին:

Նրանք (եգիպտացիք) քառասունից ավելի քարանետ մեքենաներ (մանջանիկ) գրեցին և պարսպի շատ մասեր քանդեցին, սակայն բնակիչները ուժեղ դիմադրեցին, և կռիվն ու պաշարումը տևեց քառասուն օրից ավելի: Վերջապես, շորս հարյուր ութսունինը թվականի Շուաբան ամսին (1096)՝ գրավեցին՝ երաշխավորագիր (աման) տալով: Աֆղալը Սուկմա-

նին, իլղազիին և նրանց հետ եղածներին լավ վերաբերվեց, նրանց պարգևներ տվեց և բաց թողեց: Սրանք գնացին Դամասկոս, ապա անցան Եփրատ: Սուկմանը հաստատվեց Եդեսիայում, իսկ իլղազին գնաց Իրաք:

Եգիպտացիք [Երուսաղեմում] տեղակալ (նախ) նշանակեցին Իֆտիխար ալ-Դաուլա (պետութւյան պարծանք) կոչված մի ամիրի, որն այնտեղ մնաց, մինչև որ ֆրանկները Ակրան (Աքքա) պաշարելուց ու չգրավելուց հետո պաշարեցին այն (Երուսաղեմը): Երբ հասան, քառասուն օրից ավելի պաշարեցին...

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(17 նոյեմբեր 1099—5 նոյեմբեր 1100)

էջ 195

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՖՐԱՆԿՆԵՐԻ ԴԵՄ

Ջուլ-կաադա (սեպտեմբեր) ամսին ընդհարում տեղի ունեցավ Մալաթիայի մոտ, Գիմիշտեգին իբն Դանիշմանդ Տիլուի (Թալու) և ֆրանկ պետերից Բոհեմունդի (Բիմունգ) միջև: Սա կոչվել էր Դանիշմանդ, քանզի նրա հայրը ուսուցիչ էր եղել թուրքմենների մոտ: Գիմիշտեգինի վիճակը շատ փոփոխություններ կրեց, մինչև որ նա տիրեց Մալաթիա, Սեբաստիա (Սիվաս) և այլ քաղաքների:

Մալաթիայի տերը²⁶⁰ նրան (Բոհեմունդին) գրել էր և իր մոտ հրավիրել: Սա եկավ հինգ հազարով, սակայն բախվելով իբն Դանիշմանդի հետ, պարտություն կրեց ու գերի ընկավ: Ապա ծովի ճանապարհով եկան յոթ ֆրանկ կոմսեր (կամամիսա) և կամեցան փրկել Բոհեմունդին: Նրանք հասան Անկիրին (Անքուրիյա) կոչված բերդը, գրավեցին և այնտեղի մահմեդականներին կոտորեցին, ապա ուրիշ բերդի վրա հարձակվեցին, ուր Իսմաիլ իբն Դանիշմանդն էր ու պաշարեցին: (Գիմիշտեգին) իբն Դանիշմանգր մեծ ղորք հավաքեց և շարժվեց ֆրանկների դեմ: Նա (իր մարդկանց) դարան մտցրեց և կռիվն սկսելուց հետո դարանակալները դուրս եկան, իսկ ֆրանկները, որոնք երեք հարյուր հազար էին, կոտորվեցին և միայն երեք հազարը գիշերը գաղտնի փախավ վիրավոր վիճակում:

Ապա իբն Դանիշմանդը շարժվեց դեպի Մալաթիա, որը գրավեց ու տիրոջը գերի բռնեց: Անտիոքը պաշարող ֆրանկները դուրս եկան նրա դեմ, իսկ նա կռվեց ու ջարդեց նրանց: Այս դեպքերը կատարվեցին մի քանի ամսվա ընթացքում:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԶՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(6 հոկտեմբեր 1100—25 հոկտեմբեր 1101)

էջ 204

ՖՐԱՆԿՆԵՐԻ՝ ԱՍՈՐԻՔՈՒՄ ԿԱՏԱՐԱՄ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ասորիքում (Շամ) ֆրանկների թագավոր և Սուրբ քաղաքի (Երուսաղեմ) տեր Գոդֆրիդը (Քուլդիֆրի)²⁶¹ շարժվեց դեպի Ակրա (Աքքա)՝ Ասորիքի ափին և պաշարեց, սակայն նետը կապվ նրան և սպանվեց: Նա Հոբբե (Յաֆա) քաղաքը շենացրել և հանձնել էր մի ֆրանկ կոմսի, որի անունն էր Թանկրետ (Թանքրի):

Երբ Գոդֆրիդն սպանվեց, նրա եղբայր Բալդուինը (Բաղդուին) եկավ Սուրբ քաղաքը՝ հինգ հարյուր ձիավորներով ու հետևականներով: Լուրը հասավ Դամասկոսի (Դիմաշկ) տեր Դուկակին, որը նրա դեմ ելավ իր զորքով, և նրա հետ էր ամիր Ջանահ ալ-Դաուլան՝ իր զորքով: Կռվեցին ու հաղթեցին ֆրանկներին:

Այդ տարում ֆրանկները Ջազիրայում գրավեցին Սարուջ քաղաքը: Բանն այն է, որ ֆրանկները գրավել էին Եղեսիա (Ռուհա) քաղաքը, նրա բնակիչներից գրավոր [հրավեր] ստանալով, քանզի նրա մեծամասնությունը հայեր են²⁶², իսկ մահմեդականները այնտեղ շատ քիչ են: Արդ, Սուլթանը Սարուջում թուրքմենների մեծ բազմություն հավաքեց ու հարձակվեց: Նրանք [ֆրանկները] կռվի ելան նրա դեմ ու փախուստի մատնեցին Ռաբի Ա ամսին (հունվար): Մահմեդականների այս պարտությունից հետո, ֆրանկները գնացին Սարուջ, պաշարեցին, գրավեցին, ժողովրդից շատերին կոտորեցին, կանանց գերեվարեցին, նրանց ունեցվածքը կողոպտեցին, և միայն փախչողները փրկվեցին:

ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(15 հոկտեմբեր 1102—4 հոկտեմբեր 1103)

էջ 217

ԲԱՐՔԻԱՐՈՒԿԻ ԵՎ ՄՈՒՀԱՄՄԱԴԻ ՄԻՋԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

.....

Երբ Բարքիարուկը լսեց սուլթան Մուհամմադի և Մալիք Մաուդուդի²⁶³ միաբանության մասին, առանց կանգ առնելու եկավ, [սակայն] հասավ Մաուդուդի մահվանից հետո: Մաուդուդի զորքը համաձայնել էր սուլթան

Մուհամմադին հպատակություն հայտնել և երդում էր տվել նրան: Սրանց մեջ էին Սուբման ալ-Կութբի և Մուհամմադ իրն Բաղի Սիյան, որի հայրը Անտիոքի տերն էր՝ Կիլիշ Արսլան իբն ալ-Սաբ ալ-Ահմարը²⁶⁴: Երբ Բարքիարուկը հասավ, նրանց երկուսի միջև կռիվ տեղի ունեցավ Խոյի (Խուլայյ) դարպասի մոտ՝ Ատրպատականում, մայրամուտի ժամանակ և տեեց մինչև գիշերային աղոթքը: Եվ պատահեց, որ ամիր Այադն իր հետ վերցնելով հինգ հարյուր կազդուրված ձիավորներ, նրանց կռվի տարավ, զորքը երկու կողմից սեղմեց սուլթան Մուհամմադի զորքը, ջարդեց նրան ու փախուստի մատնեց:

Սուլթան Բարքիարուկը գնաց մի սար՝ Մարաղայի ու Դավրեժի (Տաբրիզ) միջև, ուր առատ խոտ և ջուր կար և այնտեղ մնաց մի քանի օր, ապա շարժվեց դեպի Զինջան: Իսկ սուլթան Մուհամմադն իր մերձավորների մի խմբի հետ գնաց Արճեշ (Արշիշ), որը Հայաստանում է, ճակատամարտից²⁶⁵ քառասուն փարսախ հեռավորության վրա: Սա Խլաթի գավառներից է, ամիր Սուբման ալ-Կութբիի տիրույթներից: Նա այնտեղից գնաց Խլաթ, և նրա հետ հարաբերության մեջ մտավ ամիր Ալին՝ Արզան ալ-Ռումի տերը²⁶⁶, ապա գնաց Անի, որի տերն էր Ֆազլուն ալ-Ռավվադիի եղբայր Մինուջիհը²⁶⁷: Այնտեղից գնաց Դավրեժ (Տաբրիզ), որն Ատրպատականում է:

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(5 հոկտեմբեր 1103—22 սեպտեմբեր 1104)

էջ 220

ՍՈՒԼԹԱՆ ԲԱՐՔԻԱՐՈՒԿԻ ԵՎ ՄՈՒՀԱՄՄԱԴԻ ՄԻՋԵՎ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռաբի Բ ամսին հաշտություն կայացավ երկու սուլթանների՝ Բարքիարուկի ու Մուհամմադի, Մալիքշահի երկու որդիների միջև²⁶⁸:

Բանն այն է, որ պատերազմները երկարեցին երկուսի միջև, ապականությունն էր տիրում, [մարդկանց] ունեցվածքը կողոպտում էին, արյուն էր թափվում, քաղաքները կործանվում էին, գյուղերը հրկիզվում էին, իսկ իշխանությունը բոլորի կամայականության և քմահաճույքի առարկա էր դարձել: Թագավորները դարձել էին պարտված (կորցրել էին իրենց գիրքն ու հեղինակությունը), միեզդեռ նրանք հաղթական էին [ու հզոր], իսկ մեծամեծ ամիրները այս բանը նախընտրում էին, որպեսզի իրենց կողմից խլած իշխանությունը մնա և ընդարձակվի:

Այդ ժամանակ սուլթան Բարքիարուկը Ռեյում էր: Նրա անունը խութ-
բայի մեջ հիշել էին այնտեղ, Ջիբալում, Թաբարիստանում, Խուզիստա-
նում, Ֆարսում, Դիար Բաքրում, Ջաշիրայում, երկու պատվական սրբա-
վայրերում (Մեքքա և Մադինա): Սուլթան Մուհամմադը Ատրպատակա-
նում էր և նրա անունը խութբայի մեջ հիշում էին այնտեղ, Առանում,
Հայաստանում, Սպահանում և ամբողջ Իրաքում, բացի Տաբրիսից:

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(23 սեպտեմբեր 1104—12 սեպտեմբեր 1105)

էջ 227

ՍՈՒԿՄԱՆ ԻԲՆ ՈՒՐՏՈՒԿԻ ՄԱՀԸ

Քիրբուկա [զորավարը] դուրս եկավ Մոսուլից, հարձակվեց Ամիդի
վրա և կռվեց նրա տիրոջ դեմ: Վերջինս, որ թուրքմեն էր, օգնության
կանչեց Սուկմանին և սա եկավ:

Սուկմանը պարտվեց, և նրա եղբորորդին՝ Յակուտին, գերի ընկավ:
Քիրբուկան նրան բանտարկեց Մարդինում:

Յակուտին մնաց բանտում, մինչև որ Ուրտուկի (Արտուկ) կինը եկավ
Քիրբուկայի մոտ և խնդրեց արձակել նրան: Սա արձակեց նրան (Յակու-
տին), որը հաստատվեց Մարդինի մոտ:

Նա ասպատակում էր [Մարդինի] Խլաթի դռնից մինչև Բաղդադ:

էջ 228

Յակուտիից հետո Մարգինին տիրեց եղբայրը՝ Ալին, որը հպատակվեց
[Մոսուլի աթաբեկ] Չուբիքիչին և տեղակալ թողեց մի ուրիշ Ալի: Այս
վերջինը Մարգինից լուր ուղարկեց Սուկմանին, հայտնելով, որ քո եղբոր-
որդին կամենում է Մարգինը հանձնել Չուբիքիչին: Սուլթանն անձամբ
եկավ և վերցրեց քաղաքը: Նրա մոտ եկավ եղբորորդի Ալին և բերդը պա-
հանջեց, իսկ նա (Սուկմանը) պատասխանեց թե՛ վերցրել եմ, որպեսզի
մեր տունը (Իշխանությունը) կանգուն մնա և նրան պարգևեց Ճապաղ
ջուրը (Ջաբալ ջուր) ու նրան այնտեղ փոխադրեց:

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԻՆՆ ԹՎԱԿԱՆ

(13 սեպտեմբեր 1105—1 սեպտեմբեր 1106)

էջ 235—236

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարում Բաղդադ հկավ մի մարդ՝ րողարկվածներից (ալմորա-
վիդներ), Մաղրիբի (Հյուսիսային Աֆրիկա) տիրակալներից: Նա դիմեց

խալիֆայական պալատը (դար ալ-խիլաֆա) և պատվով ընդունվեց: Նրա հետ էր նաև մի մարդ, որը կոչվում էր Ֆակիհ (իրավագետ հոգևորական) և նույնպես քողարկվածներից (մուլասսամուն) էր: Այս հոգևորականը քարոզեց պալատի մզկիթում, ուր մեծ բազմություն հավաքվեց: Նա քարոզում էր երեսը քողարկված և միայն աչքերն էին երևում:

Այս քողարկվածը զորահրամանատար (ամիր ալ-ջուլուշ) Աֆդալի որդու հետ մասնակցել էր ֆրանկների դեմ պատերազմին և իրեն լավ դերսևորել:

Նրա Բադզաֆ գալու պատճառն այն էր, որ [սուննի] մադրիբցիները Եգիպտոսի տեր ալիականների (ֆաթիմիների) մասին խիստ վատ կարծիք ունեին և ուխտագնացության [Մեքքա] գնալիս Եգիպտոսի [տիրույթներին] չէին անցնում:

Զորահրամանատար (ամիր ալ-ջուլուշ) Բադրը, Աֆդալի հայրը, կամեցել էր նրանց հետ լեզու գտնել, սակայն նրանք չէին ընդառաջել, ուստի նա (Բադրը) հրամայել էր կոտորել, նրանցից ով որ պատահի: Սա, երբ Աֆդալը պաշտոնի գլուխ էր անցել (դարձել վեզիր), լավ էր վերաբերվել և օգտագործել էր նրանց ֆրանկների դեմ պատերազմում: Ահա վերոհիշյալը մեկն էր նրանցից, որ նրա կողքին կովեցին:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԹՎԱԿԱՆ

(2 սեպտեմբեր 1106—21 օգոստոս 1107)

էջ 240

ԿԻԼԻՋ ԱՐՍԼԱՆԻ՝ ՄՈՍՈՒԼՈՒ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գնաց [Կիլիջ Արսլանը] Մոսուլ ու տիրեց նրան Ռաջաբ ամսի քսանհինգին (22 մարտ): Կիլիջ Արսլանի կողմնակիցներն էին Ամիգի տեր Իբրահիմ իբն Յաննալ ալ-Տուրքմանին և Մուհամմադ իբն Ջաբալ ալ-Տուրքմանին՝ Հիսն Ջիյազի տերը, որը հարբերգն (հարտեիրտ) է: Իբրահիմ իբն Յաննալի՝ Ամիգին տիրանալու պատճառն այն էր, որ երբ Տաջ ալ-Դաուլա Տուտուշը տիրել էր Դիար Բաքրին, այն հանձնել էր նրան և այդպես էլ մնացել էր նրա ձեռքում: Իսկ Մուհամմադ իբն Ջաբալի՝ հարբերդին (Հիսն Ջիյազ) տիրելու պայմանները հետևյալներն էին. այս բերդը գտնվում էր Փիլարտոս Հոռոմի (Ֆիլարդուս²⁶⁹ ալ-Ռումի)՝ Ռումի թագավորի թարգմանի ձեռքում, իսկ Եղեսիան (Ռուհա) և Անտիոքը (Անթաքիա) սրա գավառներից էին: Երբ Սուլայման իբն Կուտուլմիշը՝ Կիլիջ Արսլանի հայրը, տիրեց Անտիոքին, իսկ Ֆախր ալ-Դաուլա իբն Ջուհայրը (Ջահիր) տիրեց Դիար Բաքրին, Փիլարտոսը (Ֆիլարդուս) չկարողացավ Հիսն Ջիյազ [բերդը] մատակարարել սննդամթերքով ու մարդկանցով, այն

գրավեց Ջաբակը, իսկ Փիլարտոսը մահմեդականացավ սուլթան Մալիք շահի մոտ։ Սա կառավարիչ նշանակեց նրան Եդեսիայում և այնտեղ նա մնաց մինչև իր մահը։ Նրանից հետո այն գրավեց Պմիր Բուզանը։

Հիսն Զիյադին մոտիկ կար մի ուրիշ [բերդ], մի հռոմի ձեռքում, որի անունն էր Իֆրանջի (ֆրանկ), որը ճանապարհներ էր կտրել և շատ մահմեդականներ կոտորել։ Ջաբակը նրան նվեր ուղարկեց և բարեկամություն հաստատեց, որպեսզի մեկը մյուսին օգնեն, և վերջինս համաձայնեց։ Այսպիսով, Ջաբակը օգնում էր Իֆրանջիին ճանապարհ կտրելու և այլ բաների մեջ, իսկ Իֆրանջին օգնում էր Ջաբակին։ Երբ արդեն մեկը մյուսին վստահում էր, Ջաբակը լուր ուղարկեց, թե ուզում է ինչ-որ տեղ գնալ և խնդրեց նրա մարդկանց։ Սա ուղարկեց, և երբ նրանք միասին գնում էին, ճանապարհին [Ջաբակը] կապեց նրանց, տարավ Իֆրանջիի բերդը և ասաց բնակիչներին՝ ալլահը վկա, եթե շհանձնեք Իֆրանջիին, սրանց բոլորի գլուխները կկտրեմ և բերդը բռնի ուժով կգրավեմ և բոլորից կսպանեմ մի մարդու պատճառով։ Սրանք բերդի գուռը բացին և Իֆրանջիին նրան հանձնեցին։ Նա մաշկը քերթեց, ունեցվածքն ու դենքը խլեց, իսկ սա շատ հղոր էր։ Ջաբակը մեռավ և նրան հաջորդեց որդին՝ Մուհամմադը։

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(11 օգոստոս 1108—30 հուլիս 1109)

էջ 252

ՄԱՌԻԴՈՒԴԻ ԵՎ ՍՈՒԼԹԱՆԻ ԶՈՐԲԻ՝ ՄՈՍՈՒԼԸ ԴՐԱՎԵԼՈՒ ԵՎ ՄԱՌԻԴՈՒԴԻ
ԿԱՌԱՎԱՐԻՉ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ [Մուհամմադ] սուլթանը ազատվեց Սադակայի²⁷⁰ գործերից և սպանեց նրան, դիմեց Բուրսուկի որդիներին՝ [Խլաթի տեր] Սուքման ալ-Կուբբիին, Մաուդուգ իբն Ալտունտեգինին, Ակսունկուր ալ-Բուրսուկիին, Նասր իբն Մուհալհիլ իբն Աբի-լ-Շաուք ալ-Քուրդիին և Արբելայի (Իրբիլ) տիրոջը՝ Աբու-լ-Հայջային, որպեսզի շարժվեն դեպի Մոսուլ և Ջաուլիի երկիրը ու նրանից նվաճեն։ Սրանք ճանապարհ ընկան դեպի Մոսուլ և տեսան, որ Ջաուլին ապստամբել է, Մոսուլի պարիսպները վերակառուցել և ամրացրել այն, ինչ Զիքիրմիշն էր կառուցել, իսկ քաղաքը ապահովել էր պարենով, մթերքով ու մեքենաներով։

ԿՈՄՍԻ ԵՎ ԱՆՏԻՈՔԻ ՏԻՐՈՋ ՄԻՋԵՎ ՊԱՏԱՀԱԾ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ կոմսը (կումս)²⁷¹ ազատ արձակվեց և գնաց Անտիոք, նրա տեր Թանքրետը (Թանքրի) նրան տվեց երեսուն հազար գինար, ձիավորներ, զենք, զգեստ և այլ բաներ, իսկ Թանքրետը վերցրել էր Եգիպտոսի կոմսի մերձավորներից, երբ սա բանտարկված էր։ Այժմ սա (կոմսը) գիմեց նրան այն վերադարձնելու համար, բայց նա (Թանքրետը) չընդունեց։ Նա (կոմսը) դուրս եկավ նրա մոտից, գնաց Տալլ Բաշիր և երբ նրա մոտ եկավ Ջոսլինը, որին Ջաուլին ազատ էր արձակել, շատ ուրախացավ։

Անտիոքի տեր Թանքրետն այս երկուսի դեմ կովի դուրս եկավ իր զորքով, նախքան նրանց ուժեղանալը, զորք հավաքելը, Ջաուլիի նրանց միանալը և օգնելը։ Նրանք կովեցին և կռիվը վերջացնելուց հետո հավաքվեցին իրար մոտ, ճաշեցին ու զրուցեցին։ Կոմսը իր մոտ եղած մահմեդական գերիներից հարյուր վաթսուներեք թողեց, որոնք բոլորը Հալեբի հասարակ (գյուղական) ժողովրդից էին։ Նա հագցրեց ու ճանապարհ գցեց նրանց։

Թանքրետը վերադարձավ Անտիոք առանց Եգիպտոսի (Ռուհա) մասին որևէ հստակ որոշում առնելու։ Իսկ կոմսն ու Ջոսլինը հարձակվեցին Անտիոքի տեր Թանքրետի բերդերի վրա, և կոմսը ապաստանեց Քուվասիլի²⁷² նահանգը։ Սա հայ էր և նրա մոտ կային շատ հավատափոխ (մահմեդականներ) և ուրիշներ։ Նա տեր էր Ռաբանի, Քեսունի (Քայսում) և Հալեբից հյուսիս գտնվող ուրիշ շատ ամրոցների։ Նա կոմսին օգնեց հավատափոխների հազար ձիավորով ու երկու հազար հետիոտն [զինվորներով]։ Նրանց դեմ հարձակվեց Թանքրետը և նրանք կովեցին Եգիպտոսի համար։ Միջնորդեց պատրիարքը (բաթրաք), որը նրանց մոտ նույնն է, ինչ որ իմամը մահմեդականների մոտ, որի հրամանը չի մերժվում։ Եպիսկոպոսներից (մութրան) և քահանաներից շատերը վկայեցին, որ Թանքրետի (Թանքրի) քեռին Բոհեմունգը (Բիմունգ), երբ կամեցել էր նավ նստել ու գնալ իր երկիրը, կարգադրել էր, որ Եգիպտոսի պետք է վերադարձվեր կոմսին, հենց որ գերությունից ազատվեր։ Ուստի Թանքրետը հրաժարվեց իր հավակնություններից և վերադարձրեց այն Սաֆար ամսի իննին (18 սեպտեմբեր 1108)։

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Շավվալ ամսին (մայիս 1109), հլաթի տեր ամիր Սուքման ալ-Կութբին²⁷³ տիրացավ Նփրկերտին (Մայաֆարիկին)՝ երաշխավորագրով (աման), այն բանից հետո, երբ երկար ամիսներ պաշարեց ու նեղեց բնակիչներին։ Մթերքն սպառվեց, սովն ուժեղացավ, և բնակիչները հանձնվեցին։

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԶՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(20 հուլիս 1110—9 հուլիս 1111)

էջ 260—261

ԵԳԻՊՏԱՅԻՆԵՐԻ՝ ԱՍԿԱԼՈՆԸ (ԱՍԿԱԼԱՆ) ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ասկալոնը²⁷⁴ եգիպտացի ալափներին էր պատկանում, ապա ալ-Ամիր Բիաֆամիլլահ խալիֆան այնտեղ կառավարիչ նշանակեց մի մարդու, որի անունն էր Շամս ալ-Խիլաֆա։

Սա սկսեց ֆրանկների թագավոր Բալդուինի (Բաղդուին) հետ նամակագրության մեջ մտնել։ Նրա հետ հաշտ հարաբերության մեջ էր, նրան գրամ և թանկարժեք իրեր էր նվիրել։ Այսպիսով, Եգիպտոսի իշխանությանը չէր ենթարկվում, սակայն բացեիքաց չէր ըմբոստանում։ Երբ այս լուրը հասավ Եգիպտոսի տեր ալ-Ամիր Բիաֆամիլլահին և նրա վեդիր Ամիր ալ-ջուլուշ (զորաց հրամանատար) ալ-Աֆդալին, դայրացյան և մի բանակ պատրաստեցին ու իրենց մեծ զորավարներից մեկի հետ ուղարկեցին Ասկալոն։ Նա պետք է ձևացներ, թե գնում է սրբազան պատերազմի (ընդդեմ քրիստոնյաների), սակայն նրան գաղտնի պատվիրված էր, որ, մոտենալով Ասկալոնին, ձերբակալի Շամս ալ-Խիլաֆային, հենց որ վերջինս իրեն ներկայանա, և ինքը փոխարինի նրան որպես Ասկալոնի կառավարիչ։ Զորքը շարժվեց, սակայն Շամս ալ-Խիլաֆան իմացավ դրության մասին, հրաժարվեց ներկայանալ եգիպտական զորքին, բացեիքաց ապստամբեց և իր մոտ եղած եգիպտական զորքը դուրս բերեց [Ասկալոնից]՝ վախենալով նրանից։

Երբ Աֆդալը տեղեկացավ այդ մասին, վախեցավ, որ նա Ասկալոնը կարող է ֆրանկներին հանձնել։ Նրա մոտ մարդ ուղարկեց, սիրտը շահեց, հանգստացրեց, վերահաստատեց իր իշխանության մեջ և նրան վեոազարձրեց Եգիպտոսում ունեցած կալվածները։

Սակայն Շամս ալ-Խիլաֆան կասկածելով Ասկալոնի բնակիչներին, հայերի մի խումբ (ջոկատ) բերեց և իրեն պորթ դարձրեց։ Այսպես էր դրությունը մինչև հինգ հարյուր շորս թվականի վերջը։

Այս բանը վրդովեցրեց քաղաքի բնակիչներին, և նրանց մեծամեծները հարձակվեցին, երբ նա ձիով գնում էր, ու վիրավորեցին նրան, և նա փախավ իր տունը։ Նրանք հետապնդեցին ու սպանեցին նրան։ Կողոպտեցին նրա տունն ամեն ինչով։ Օգտվելով առիթից, կողոպտեցին նաև այլ հարուստների տները։

Նրանք Եգիպտոս՝ տիրակալին (Խալիֆային) և Աֆղալին լուր ուղարկեցին, որոնք ուրախացան ու վարձատրեցին այս ավետիսը բերողին և նոր կառավարիչ ուղարկեցին, որը պետք է բարյացակամ լիներ բնակիչներին և լավ վարք ունենար։ Այս բանը կատարվեց և վերացավ այն. ինչից վախենում էին։

էջ 261

ՖՐԱՆԿՆԵՐԻ՝ ԱՍԱՐԻԲ ԲԵՐԴԸ ԵՎ ԱՅԼ ՎԱՅՐԵՐ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Անտիոքի տերը ֆրանկներից զորք հավաքեց՝ ձիավոր ու հետիոտն, և դիմեց դեպի Ասարիբ բերդը, որը Հալեբին մոտ էր, երեք փարսախ²⁷⁰ հեռավորության վրա։ Նա պաշարեց այն, արգելեց պարենի մուտքը (բերդ), և այնտեղ գտնվող մահմեդականները նեղվեցին։ Նրանք բերդից անցք փորեցին և փորձեցին նրանով հասնել Անտիոքի տիրոջ վրանի մոտ ու սպանել նրան։

Երբ այս բանն արեցին և մոտեցել էին նրա վրանին, մի հայ տղա, ապաստանելով նրա մոտ, հայտնեց այս մասին և սա (Անտիոքի տերը) զգուշացավ նրանցից և ուժերը լարելով կարողացավ բռնությանմբ և ուժով գրավել բերդը։ Երկու հազար մարդ կոտորեց և գերեվարեց մնացածներին։

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(10 հուլիս 1111—27 հունիս 1112)

էջ 262

ԶՈՐՔԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄԸ ՖՐԱՆԿՆԵՐԻ ԴԵՄ ԿՌՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այդ տարում հավաքվեցին այն զորքերը, որոնք սուլթան [Մուհամմադի] հրամանով պետք է գնային ֆրանկների դեմ։ Դրանց [հրամանատարներն] էին՝ Մոսուլի տեր ամիր Մաուդուդը, Դիար Բաքրի տեր ամիր Սուլեյման ալ-Կուլթին, Բուրսուքի որդիներ Իլենքին ու Զանգին՝ Համադանի ու հարևան շրջանների տերերը, Մարաղայի տեր Ահմադիլը։ Գրել էին

նաև Արբելայի (Իրբիլ) տեր Աբու-լ-Հաջային և Մարդինի տեր ամիր Իլ-ղազին ու Բաքչիյա ամիրներին՝ գալու միանալու Մալիք Մասուգին և Մասուգին։ Եկան, բացի Մարդինի տեր Իլղազից, որն ուղարկել էր իր որդուն՝ Այազին, իսկ ինքը մնացել էր։

Երբ հավաքվեցին և շարժվեցին Սինջար քաղաքի դեմ, ֆրանկների բաղում բերդեր նվաճեցին, կոտորեցին այնտեղ գտնվողներին և որոշ ժամանակ պաշարեցին Եդեսիան (Ռուհա)։ Ապա հեռացան առանց գրավելու։

Բանն այն էր, որ ֆրանկները հավաքվել էին ձիավոր ու հետիոտն, և գնացել էին Եփրատ գետի մոտ, այն անցնելու և մահմեդականների կողմից Եդեսիան գրավելը արգելելու նպատակով։ Երբ գետը հասան ու լսեցին, որ մահմեդականները շատ են, մնացին Եփրատի մոտ։ Հենց որ այս տեսան մահմեդականները, Եդեսիայից հեռացան հառան (Հառան), որպեսզի ֆրանկները հրապուրվելով անցնեն Եփրատը և իրենք կռվի բռնվեն նրանց հետ։

Երբ նրանք հեռացան, ֆրանկները իրենց պարենով ու պաշարներով եկան Եդեսիա։ Նրանք քաղաքն ապահովեցին ամեն ինչով, իսկ մինչ այդ պարենը սակավ էր և քիչ էր մնացել քաղաքը գրավվելու։ Ապա հեռացրին քաղաքից հիվանդներին, տկարներին, տնանկներին, վերադարձան Եփրատ և անցան Ասորիքի կողմը ու ասպատակեցին Հալեբի գավառները, փչացրին, կողոպտեցին, կոտորեցին, գերեվարելով մեծ բազմություն։

Բանն այն է, որ ֆրանկները, երբ անցել էին Վերին Միջագետքի (Ջաղիրա) կողմը, Հալեբի տեր Մալիք Ռիդուանը հարձակվել ու նվաճել էր ֆրանկների ձեռքում գտնվող որոշ գավառներ, նրանց կողոպտել ու կոտորել էր։ Ահա թե ինչու ֆրանկները Եփրատն անցնելով արեցին այն, ինչ պատմեցինք։

Իսկ սուլթանի զորքը, երբ լսեց ֆրանկների վերադարձը և Եփրատն անցնելը, գնաց Եդեսիան պաշարելու, սակայն տեսնելով, որ նրանք (քաղաքի բնակիչները) ուժեղ են ու ինքնավստահ ստացած պաշարով և ունեն շատ ռազմիկներ, հուսահատվեցին ու հեռացան։ Նրանք անցան Եփրատը և Տելլ Բաշիրը և քառասունհինգ օր պաշարելուց հետո ձեռնունայն հեռացան ու գնացին Հալեբ։ Սակայն Մալիք Ռիդուանը փակեց Հալեբի դռները և մերժեց հարաբերություն ունենալ նրանց հետ։

Այստեղ Սուբման ալ-Կութբի ամիրը հիվանդացավ ու կամեցավ վերադառնալ, սակայն մեռավ Բալիսում։ Նրա մարդիկ դագաղի մեջ դրեցին նրան և իրենց հետ վերցնելով շարունակեցին ընթացքը։ Նրանց հետապնդեց Իլղազին, որպեսզի կողոպտի։ Նրանք, իրենց մեջտեղում պահելով դագաղը, կատաղի դիմադրություն ցուցաբերեցին։ Իլղազին պարտվեց ու փախավ, իսկ նրանք կողոպտեցին նրա ունեցվածքն ու գնացին իրենց երկիրը։

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(28 հունիս 1112—17 հունիս 1113)

Էջ 265

Այդ տարում մեռավ կիրճերի տեր հայազգի Վասիլը (Բասիլ ալ-Արմանի)²⁷⁶, [ուրի տիրույթները գտնվում էին] Լեոնի որդու (Իրն Լայուն) երկրում: Անտիոքի տեր Թանքրետը (Թանքրի) Ջումազա Բ ամսի մեկին (23 նոյեմբեր) եկավ նրա երկիրը՝ տիրելու ցանկությամբ, սակայն ճանապարհին հիվանդացավ, վերադարձավ Անտիոք ու մեռավ Ջումազա Բ ամսի ութին: Նրանից հետո իշխեց քեռորդին՝ Սարխալան (Սիրջալ)²⁷⁷: Այս առթիվ վեճ առաջացավ ֆրանկների միջև, իսկ քահանաներն ու վանականները հաշտեցրին նրանց, և նրա գործերը կարգավորվեցին:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(7 հունիս 1114—26 մայիս 1115)

Էջ 269

ՄԱՐԱՇԻ ԵՎ ԱՅԼ ՎԱՅՐԵՐԻ ՏԻՐՈՋ ՀՊԱՏԱՎԵԼԸ ԲՈՒՐՍՈՒԿԻՆ

Այդ տարում վախճանվեց Հայոց թագավորներից մեկը²⁷⁸, որի անունն էր Գող Վասիլ (Քուվասիլ) և Մարաշի, Քեսունի (Քայսում), Ռաբանի և այլ վայրերի տերն էր: Նրա իշխանությանը տիրացավ կինը ու պաշտպանվեց ֆրանկներից: Նա զինվորներին լավ վերաբերվեց և նամակ գրեց Աքսունկուր ալ-Բուրսուկիին²⁷⁹, որը Եդեսիան էր պաշարել ու հրավիրեց նրա մերձավորներից (հրամանատարներից) մեկին, որպեսզի նրան ենթարկվի: Սա ուղարկեց խաբուրի տիրոջը՝ ամիր Սունկուր Դազդարին, որին, երբ եկավ, նա (կինը) հարգեց ու մեծ նվերներ տվեց: Նրա այստեղ գտնվելու ժամանակ, ֆրանկների մի զորամաս եկավ ու բախվեց վերջինիս զորքի հետ, որը բաղկացած էր մոտավորապես հարյուր ձիավորից: Խիստ ընդհարում տեղի ունեցավ, սակայն մահմեդականները հաղթեցին ֆրանկներին ու մեծ մասին կոտորեցին: Իսկ Սունկուր Դազդարը վերադարձավ, նրա (կնոջ) կողմից նվերներ տանելով Մալիք Մասուդին և ալ-Բուրսուկիին և նա (կինը) հպատակութուն հայտնեց: Երբ ֆրանկները իմացան այդ բանը, շատերը, որոնք այդ կնոջ մոտ էին ծառայում, վերադարձան Անտիոք:

(2 ապրիլ 1120—21 մարտ 1121)

էջ 293—294

ՎՐԱՅԻՆԵՐԻՒ ԻՍԼԱՄԻ ԵՐԿԻՐԻ ՎՐԱ ՀԱՐՉԱԿՄԱՆ ԵՎ ՏՓՂԻՍԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Այդ տարում վրացիք (ալ-Քուրշ)²⁸⁶, որոնք ալ-Ջուրդ էլ են կոչվում, հարձակվեցին իսլամի երկրի վրա: Նրանք հնում էլ ասպատակություններ էին կատարել, սակայն դադարել էին Մալիքշահի ժամանակ, մինչև սուլթան Մուհամմադի [իշխանության] վերջը:

Այդ տարում նրանք հարձակվեցին, և նրանց հետ կային նաև դփշաղներ (կիֆշակ) և դրացի այլ ժողովուրդներ: Նրանց հարևան [մահմեդական] երկրների ամիրները իրար գրեցին ու հավաքվեցին: Նրանց մեջ էր ամիր Իլդադին, Դուբայս իբն Սադական²⁸⁷, որը նրա մոտ էր, Մալիք Թուղրիլ իրն Մուհամմադը և նրա աթաբեկ Քինտուղդին: Թուղրիլին էին պատկանում Առան երկիրը և Նախճավանը (Նակչուան) մինչև Արաքս (Արաս): Նրանք հավաքվեցին ու դիմեցին վրացիների կողմը, երբ մոտեցան Տփղիսին, մահմեդականների զորքն արդեն բազմամարդ էր՝ երեսուն հազար: Նրանք հանդիպեցին իրար և երկու կողմում էլ դասավորվեցին պատերազմի: Ղփշաղներից երկու հարյուր մարդ դուրս եկավ, և մահմեդականները կարծելով, որ ուզում են հանձնվել, չզգուշացան նրանցից: Սրանք (ղփշաղները) մտան նրանց մեջ ու սկսեցին նետահարել, և մահմեդականների շարքերում շփոթություն ընկավ: Հեռու կանգնածները կարծելով, որ նահանջը սկսվել է, փախուստի դիմեցին և մարդիկ իրար հետեւելով փախան, իրարանցման սաստկությունից իրար էին խփում ու մեծ թվով սպանվեցին: Անհավատները տասը փարսախ հետևեցին նրանց, կոտորելով ու գերեվարելով: Նրանց (մահմեդականների) մեծ մասը ռուպանվեց և շորս հազար հոգի գերի ընկավ: Մալիք Թուղրիլը, Իլդադին և Դուբայսը ազատվեցին:

Վրացիք դարձյալ կողոպտեցին իսլամի երկիրը և պաշարեցին Տփղիս քաղաքը: Կռիվը սաստկացավ նրանում եղած [զորքի] դեմ, դրությունը լրջացավ և բնակիչները ծանր վիճակի մատնվեցին: Պաշարումը տևեց մինչև (հինգ հարյուր) տասնհինգ թվականը (1121—1122), և նրանք բռնի ուժով գրավեցին [քաղաքը]: Երբ բնակիչները զգացին իրենց անհուսալի վիճակը, դատավորին և խաթիբին (քարոզիչ) ուղարկեցին վրացիների մոտ երաշխավորագիր խնդրելով: Սակայն վրացիք կարևորություն չտվեցին նրանց խնդրանքին, հայհոյեցին նրանց և բռնի ուժով մտան քաղաք, քանդեցին ու կողոպտեցին: [Մահմեդական] փախստականները հասան

Բաղդադ [հինգ հարյուր] տասնվեց թվականին (12 մարտ 1122—29 փետրվար 1123), օգնություն և պաշտպանություն խնդրելով: Նրանք լսեցին, որ սուլթան Մահմուդը²⁸² Համագանում է և դիմեցին օգնություն խնդրելու: Սա գնաց Ատրպատական ու կանգ առավ Դավրեժում (Տարրիզ) Ռամահան ամսին և զորք ուղարկեց վրացիների դեմ, որի հետ կատարվածի մասին հիշատակվելու է, եթե ալլահը կամենա:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՆԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(22 մարտ 1121—11 մարտ 1122)

էջ 303

ԱՄԻՐ ԱԼ-ՋՈՒՅՈՒՇԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռամահան ամսի 23-ին (5 դեկտեմբեր 1121) սպանվեց ամիր ալ-ջույուշ (զորաց հրամանատար) Աֆղալը՝ Բադր ալ-Գամալիի (Ջամալի) որդին, որը Եգիպտոսի իշխանության տերն էր (վեզիր) և կառավարիչը:

Նա ձի հեծած գնացել էր զինանոց, որպեսզի, ըստ տոնական օրերի ընդունված սովորության, զենք բաժանի զորականներին: Նրա հետ եկել էր հետիոտն և հեծյալ մեծ բազմություն (զորք): Բայց ահա փոշի բարձրացավ [ամբոխի երթից], և նա հեռացրեց բազմությունը և ինքը մենակ, երկու հոգու ընկերակցությամբ գնաց և երբ հասավ զենք փայլեցնողների շուկան, նրա դիմաց դուրս եկան երկու հոգի, որոնք դանակներով խփեցին նրան ու վիրավորեցին: Եկավ նաև երրորդը ետևից ու դանակով խփեց նրա կողին: Նա ձիուց ընկավ: Նրա մարդիկ եկան ու երեքին էլ սպանեցին, իսկ նրան հոգեւարքի մեջ տարան իր բնակարանը:

Նրա մոտ եկավ խալիֆան և ցավակցեց նրան, ապա հարցրեց ունեցվածքի մասին: Նա ասաց՝ ինչ վերաբերում է հայտնի [հարստության], այդ մասին տեղյակ է Աբու-լ-Հասան իրն Ուսամա քարտուղարը: Սա Հալեբից էր և նրա հայրը Կահիրեի (ալ-Կահիրա) դատավոր էր եղել: Իսկ թաքուն [հարստության] մասին տեղյակ է Իբն ալ-Բաթաիհին: Նրանք երկուսն էլ ասացին՝ ճիշտ է:

Երբ մեռավ Աֆղալը, նրա բնակարանից սլնքան ունեցվածք տարան, որի մասին միայն ալլահը գիտի: Խալիֆան քառասուն օր մնաց նրա բնակարանում: Քարտուղարները (գրագիրները) նրա մոտ արձանագրում էին բերված իրերը, իսկ անասունները գիշեր ցերեկ փոխադրում էին: Նրա մոտ գտնվեցին այնպիսի արժեքավոր և զարմանահրաշ հազվագյուտ իրեր, որոնց նմանը տեսնված չէր:

Նրա որդիները ձերբակալվեցին: Նա հիսունյոթ տարեկան էր: Իր հորից հետո իշխեց քսանութ տարի:

էջ 304

ՆՓՐԿԵՐՏԸ ԻԼՂԱՋԻՆ ԱՎԱՏ (ԻԿԹԱ) ՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում սուլթան Մահմուդը նփրկերտ քաղաքը, որպես ավատ պարգևեց Իլդազի ամիրին:

Բանն այն է, որ նա իր տասնյոթ տարեկան որդուն՝ Հուսամ ալ-Դին Տիմուրտաշին, ուղարկել էր սուլթանի մոտ միջնորդելու Դուբայս իրն Սադակայի համար և նրա կողմից հայտնելու, որ հնազանդ է լինելու, հարկերը վճարելու է, ձիավորներ է հայթայթելու և ամեն օր Հիլլային²⁸³ տրամադրելու է հազար դինար ու ձի: Նրա միջնորդն էր դատավոր Բահա ալ-Դին Աբու-լ-Հասան Ալի իբն ալ-Կասիմ իբն ալ-Շահրզուրին, որն այդ հարցով անդադար զբաղվեց, բայց ապարդյուն: Երբ (Հուսամ ալ-Դինը) ուզեց վերադառնալ, սուլթանը նրա հորը, որպես ավատ, պարգևեց նփրկերտ քաղաքը, որը նախապես պատկանում էր Խլաթի տեր ամիր Սուլթանին: Իլդազին վերցրեց այն և մնաց նրա ու նրա որդիների ձեռքում, մինչև որ հինգ հարյուր ութսուն (1184—1185) թվականին Սալահ ալ-Դին Յուսուֆ իբն Այյուբը այն գրավեց, ինչպես հիշելու ենք, եթե ալլահը կամենա:

էջ 304

ԲԱԼԱՔ ԻԲՆ ԲԱՀՐԱՄԻ՝ ԵԴԵՍԻԱՆ ՊԱՇԱՐԵԼԸ ԵՎ ՆՐԱ ՏԻՐՈՋԸ ԳԵՐԵԼԸ

Այդ տարում Իլդազիի եղբորորդին՝ Բալաք իբն Բահրամը, շարժվեց Եդեսիա քաղաքի դեմ ու պաշարեց, իսկ այն պատկանում էր ֆրանկներին:

Նա որոշ ժամանակ պաշարեց, սակայն չկարողանալով հաղթել, հեռացավ: Նրա մոտ եկավ մի թուրքմեն ու հայտնեց, որ Եդեսիայի ու Սարուջի տեր Զուսլինը (Զուսլին) ի մի է հավաքել իր ձեռքի տակ եղած զորքերը և որոշել է հանկարծակի նրա վրա հարձակվել: Բալաքի զորքերն այդ ժամանակ ցրված էին և մնացել էր միայն չորս հարյուր ձիավոր: Սակայն նա պատրաստվեց պատերազմի:

Շուտով եկան ֆրանկները: Բարեբախտաբար ֆրանկները հասան մի այնպիսի տեղ, ուր հողը նոր էր ջրված և նրանց ձիերը ցեխի մեջ խրվեցին, ասպետները իրենց զենքի ծանրության պատճառով չկարողացան

աճապարել ու վաղել, իսկ Բալաքի մարդիկ նրանց վրա նետերի տարափ տեղացին: Ոչ ոք չկարողացավ փախչել և Ջոսլինը զերի ընկավ: Նրան դրեցին ուղտի մորթու մեջ և վրան կարեցին: Բալաքը նրանից պահանջեց Ծղեսիան հանձնել, իսկ սա մերժեց և առաջարկեց հսկայական գումար տալ ու մեծ թվով մահմեդական զորիների աղատ արձակել: Բալաքն այդ առաջարկը մերժեց և նրան տարավ հարբերդ (հարտրիրտ) ու բանտարկեց: Նրա հետ գերի էր ընկել նաև նրա մորաքրոջ որդին, որի անունն էր Գիլյոմ (Գուլիամ): Սա (Ջոսլինը) անհավատների սատանա [ոսղ-միկներին] էր: Բալաքը գերել էր նաև նրա նշանավոր ասպետներից ու բանտարկել:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(12 մարտ 1122—29 փետրվար 1123)

էջ 309

ԻԼՂԱՋԻԻ ՄԱՀՎԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ ՀԱԼԵՔԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Ռամադան ամսին (3 նոյեմբեր—3 դեկտեմբեր), նրա փրկներտում (Մայաֆարիկին) մեռավ Իլղազի իբն Ուրտուկը²⁸⁴ և նրա որդին՝ Հուսամ ալ-Դին Տիմուրտաշը, տիրեց Մարգին գլխակը, իսկ Սուլայման որդին՝ Նփրկերտը: Հալբում էր [իշխում] նրա եղբորորդին՝ Բադր ալ-Դաուլա Սուլայման իբն Աբդալ-Ջաբբար իբն Ուրտուկը և նա մնաց, մինչև որ հորեղբորորդին այն վերցրեց նրանից:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(1 մարտ 1123—18 մարտ 1124)

էջ 312—313

ՖՐԱՆԿՆԵՐԻ՝ ԽԱՐԲԵՐԴԸ ԳՐԱՎԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑԻՑ ԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռաբի Ա ամսին (29 ապրիլ—29 մայիս) ֆրանկները գրավեցին հարբերդը (հարտրիրտ, հարտաբիրտ)²⁸⁵, որը Դիար Բաքրի գավառներից էր:

Բանն այն է, որ Բալաք իբն Բահրամ իբն Ուրտուկը, որը հարբերդի տերն էր, պաշարեց Քարքար (Կառկառ) ամրոցը, որը հարբերդի մոտ էր: Ասորիքի ֆրանկները այս բանը լսեցին, և ֆրանկների թագավոր Բալդուինը (Բաղդուին) իր զորքով եկավ նրան զուրս քշելու այդտեղից, վախենա-

լով, որ նրան տիրելով կարող է ուժեղանալ: Երբ Բալաքը լսեց նրա մոտիկ գտնվելը, գնաց նրա դեմ և ընդհարվեցին Սաֆար ամսին (31 մարտ—28 ապրիլ), կռվեցին, և ֆրանկները նահանջեցին, ու նրանց թագավորը գերի ընկավ մի խումբ մեծամեծ ասպետների հետ, որոնց նա բանտարկեց հարբերդի ամրոցում: Այդ ամրոցում էին նաև Եգեսիայի տեր Զոսլինը և ֆրանկ առաջնորդներից ուրիշներ, որոնց նա գերել էր [հինգ հարյուր] տասնհինգ թվականին: Բալաքը հարբերդից գնաց հառան Ռաբի Ա ամսին ու գրավեց այն: Ֆրանկները խորամանկությամբ գործադրեցին՝ սիրաշահելով որոշ [մահմեդական] ղինվորների և հաղթելով, գրավեցին ամրոցը, իսկ Բաղդադի թագավորը գիշերը ուղտի վրա հեռացավ իր երկիրը: Լուրը հասավ [ամրոցի] տիրոջ՝ Բալաքին, որը կրկին եկավ իր զորքով, պաշարեց, նեղեց բերդում եղածներին և ֆրանկների ձեռքից գրավելով, այնտեղ ղինվորներ նշանակեց պաշտպանության համար, իսկ ինքը վերադարձավ:

էջ 313

ՍՈՒԼԹԱՆ ՄԱՆՄՈՒԴԻՒ՝ ՎՐԱՅ ԴԵՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում սաստկացան վրաց (քուրջ) շարագործությունները իսլամի երկրում և մարդկանց դրությունը վատացավ, մանավանդ Դարբանդ-Շիրուանի ժողովրդի, որոնց մեծամեծների մի բաղմամարդ խումբ գնաց սուլթանի մոտ՝ բողոքելու նրանց ձեռքից իրենց քաջածի մասին: Նրանք պատմեցին իրենց անզորության և երկիրը պաշտպանելու մեջ անկարող լինելու մասին:

Սա եկավ վրացիների դեմ, երբ սրանք հասել էին Շամախի: Սուլթանը կանգ առավ մի այգում, իսկ վրացիք շարժվեցին նրա դեմ: [Սուլթանի] զորքը սաստիկ վախեցավ, և վեղիր Շամա ալ-Մուլք Օսման իբն Նիզամ ալ-Մուլքը խորհուրդ տվեց սուլթանին այստեղից ետ գնալ, սակայն Շիրուանի ժողովուրդը, երբ այս բանը լսեց, դիմեց սուլթանին ու ասաց՝ մենք կկռվենք, քանի դու մեզ հետ ես, իսկ եթե հեռանաս, մահմեդականների ոգին կթուլանա և կկորչեն: Նա ընդունեց նրանց խոսքն ու մնաց իր տեղում և գիշերն անցկացրեց լարված տրամադրությամբ ու կռվի վճռականությամբ: Եվ ալլահը հաջողություն բերեց նրանց՝ վրացիների ու ղփչաղների միջև վեճ ու թշնամություն սերմանելով: Նրանք այդ գիշեր կռվեցին ու փախստականների նման հեռացան և այսպիսով «ալլահը հավատացյալներին ազատեց այդ պատերազմից» (Ղուրան, ԼԳ, 25):

Սուլթանը որոշ ժամանակ մնաց Շիրուանում, ապա վերադարձավ
Համադան և հասավ Զումադա Բ ամսին (27 հուլիս—25 օգոստոս):

ՀԻՆԳ ՀԱՐՅՅԱԻՐ ՔՍԱՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(1 հոկտեմբեր 1133—21 հոկտեմբեր 1134)

էջ 343

ԱԹԱԲԵԿ ԶԱՆԳԻԻ (ԶԱՆՔԻ)՝ ԱՄԻԴԸ ՊԱՇԱՐԵԼՈՒ ԵՎ ՍՈՒՐ ԲԵՐԴԸ
ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Աթաբեկ Զանգին²³⁵ և Մարդինի տեր Տիմուրտաշը հա-
վաքվեցին, դիմեցին Ամիդ քաղաքն ու պաշարեցին այն: Նրա տերը լուր
ուղարկեց Հիսն Քայֆայի (Քեյֆ) տիրոջը՝ Դաուդ իբն Սուբմանին, օգ-
նության կանչելով: Սա հավաքեց իր և այլոց զորքն ու գնաց Ամիդ, որ-
պեսզի նրանց դուրս քշի: Նրանք հանդիպեցին Ամիդի դռան մոտ ու ճա-
կատամարտը տեղի ունեցավ Զումադա Բ ամսին (29 մարտ—26 ապրիլ),
կռվեցին, և Դաուդը պարտվեց ու փախուստի դիմեց, իսկ զորքի մի մասը
կոտորվեց:

Զանգին և Տիմուրտաշը շարունակեցին Ամիդը պաշարել, [շրջակա]
ժառերը կտրատեցին, երկիրը ապականեցին և այնտեղից վերադարձան
առանց արդյունքի հասնելու: Զանգին գնաց ու պաշարեց Սուր բերդը,
որը Դիար Բաբրում է, նեղեց նրա [զորքը] և գրավեց այգ տարվա Ռա-
շաբ ամսին (27 ապրիլ—26 մայիս):

էջ 344

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մալաթիայի տեր Դանիշմանդը հաղթեց Ասորիքում գըտ-
նըվող ֆրանկներին և նրանցից շատերին կոտորեց ու գերեվարեց:

Այդ տարում խալիֆան հաշտվեց Աթաբեկ Զանգիի հետ:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(22 հոկտեմբեր 1134—10 հոկտեմբեր 1135)

էջ 346—347

ՀԱՍԱՆ ԻՐՆ ԱԼ-ՀԱՖԻԶԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արդեն հինգ հարյուր քսանվեց թվականի տակ հիշել ենք, որ Եգիպ-
տոսի տեր (խալիֆա) ալ-Հաֆիզ Լիդինիլահն իր որդուն՝ Հասանին, վե-

զիր էր նշանակել և գահաժառանգ հայտարարել: Սա մնաց մինչև այս տարին և մեռավ թունավորված:

.....

Երբ Հասանը մեռավ, Հաֆիզը վեզիր նշանակեց ամիր Տաջալ-Դաուլա (տերության թագ) Վահրամին (Բահրամ)²⁸, որը քրիստոնյա էր: Սա իշխանության տեր դարձավ և հայերին պաշտոնների նշանակեց, իսկ մահմեդականները արհամարհվեցին: Այդ մասին հիշելու ենք հինգ հարյուր երեսունմեկ թվականին, եթե բարձրյալն ալլահը կամենա:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(29 սեպտեմբեր 1136—18 սեպտեմբեր 1137)

էջ 356

ՎԱՀՐԱՄԻ՝ ՀԱՖԻԶԻ ՎԵԶԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՑ ՀԱՆՎԵԼԸ ԵՎ ՌԻԴՈՒԱՆԻ ՎԵԶԻՐ ՆՇԱՆԱԿՎԵԼԸ

Այդ տարում Զումադա Ա ամսին (25 հունվար—23 փետրվար) Եգիպտոսի (Միսր) տեր ալ-Հաֆիզ Լիդինիլա հալավի (խալիֆայի) վեզիր Տաջալ-Դաուլա Վահրամը (Բահրամը) փախավ:

Նրան վեզիր էր նշանակել իր որդու՝ Հասանի, սպանությունից հետո, հինգ հարյուր քսանինը թվականին (1134—1135): Սա հայ քրիստոնյա էր, կարողացավ երկիրը իր իշխանության տակ առնել, հայերին պաշտոնի նշանակեց, իսկ մահմեդականներին հանեց: Նա և իր նշանակած հայերը վատ վերաբերվեցին, արհամարհեցին [մահմեդականներին] և փափագեցին նրանց [պաշտոնները]:

Եգիպտոսի ժողովրդի մեջ այդ բանից խորշեց Ռիդուան իբն ալ-Ռիհինին, որը զայրանալով և անհանգստանալով մեծ զորք հավաքեց ու քայլեց Կահիրեի (ալ-Կահիրա) վրա: Վահրամը լսելով, առանց կովի ու պատերազմի փախավ Սահդ (Հարավային Եգիպտոս): Նա դիմեց Ասուան քաղաքը, որի կառավարիչը արգելեց նրան մտնել ու կռվեց նրա հետ, իսկ սկամորթները շատ հայերի կոտորեցին: Երբ նա չկարողացավ Ասուան մտնել, լուր ուղարկեց Հաֆիզին երաշխավորագիր խնդրելով: Սա տվեց և նա վերադարձավ Կահիրե ու բանտարկվեց պալատում: Որոշ ժամանակ մնալուց հետո վանական դարձավ ու դուրս եկավ բանտից:

ՌՈՒՄԻ ԹԱԳԱՎՈՐԻ՝ ԻՐ ՆՐԿՐԻՑ ԱՍՈՐԻՔ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախապես ասվեց, որ ֆրանկները Կ. Պոլսի (Կուսթանթինիյա) թա՛գավորին լուր ուղարկեցին՝ օգնության կանչելով և հիշեցնելով, թե ինչ էր արել Զանգին։ Նրանք համոզում էին նրան օգնության հասնել այս երկրին, քանի զեռ ուրիշները չէին տիրել և զեռ ավելորդ չէր նրա գալը։ Սա պատրաստվեց և ջանասիրությամբ ճանապարհ ընկավ։ Սկզբում ծովի վրա [նավ] նստեց և եկավ Ատտալիա (Անթալիա), որը (նախապես) նրանն էր ծովի ափին։ Այստեղ խարիսխ գցեց և մնաց, սպասելով նավերի գալստյանը, որոնց մեջ կային իր բեռները և զենքեր։ Երբ հասան, այգտեղից նա գնաց Նիկիա, որը պաշարեց, ու նրա տերերը հաշտության կնքեցին՝ դրամական [հարկ] վճարելու պայմանով։ Ասվում է նաև, որ նա նվաճեց այն (առանց պայմանի)։ Այստեղից նա գնաց Ադանա և Մամեստիա (Մասիսա) քաղաքները, որոնք կիրճերի, ամրոցների տեր հայազգի Լեոնի որդու (իբն Լայուն ալ-Արմանի) ձեռքում էին։ Նա երկուսն էլ պաշարեց ու գրավեց։ Ապա գնաց Անարզաբա (Այն Ջարբա), պաշարեց ու բռնի ուժով գրավեց։ Նա տիրեց Տալլ Համդունին և ժողովրդին տեղափոխեց Կիպրոս (Կուրբուս) կղզին։ Ապա Ալեքսանդրեկ (Իսթանդարիյա) նավահանգստից անցնելով, դուրս եկավ Ասորիք, պաշարեց Անտիոքը, Զուլ-Կադա ամսին (21 հուլիս—19 օգոստոս), նեղեց ժողովրդին, և այնտեղ էր նրա ֆրանկ տերը՝ Ռայմոնդը (Ռիմունգ)։ Նրանց միջև դեսպաններ երթևեկեցին, և նրանք հաշտության կնքեցին։ Նա այնտեղից գնաց Բադրաս և դրա վրայով մտավ հայազգի Լեոնի որդու (իբն Լայուն ալ-Արմանի) երկիրը, իսկ վերջինս շատ հարստություն տվեց ու նրան հպատակվեց։ Սակայն ալլահը գիտի ճշմարտությունը։

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(19 սեպտեմբեր 1137—7 սեպտեմբեր 1138)

ՌՈՒՄԻ ԹԱԳԱՎՈՐԻ՝ ԱՍՈՐԻՔ ԳԱԼՈՒ, ԲՈՒՋԱՆ ԳՐԱՎԵԼՈՒ ԵՎ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մենք հինգ հարյուր երեսունմեկ թվականի տակ հիշեցինք Ռումի թագավորի²⁸⁸ իր երկրից դուրս գալու և ֆրանկների ու Լեոնի որդու (իբն Լայուն) հետ ընդհարվելու մասին։

Իսկ այս տարում նա հասավ Ասորիք, և մարդիկ շատ վախեցան: Նա դիմեց Բուզաա, պաշարեց այն: Իսկ սա գեղեցիկ քաղաք էր Հալեբից վեց փարսախ հեռավորության վրա: Եվ ահա Հալեբի մեծամեծների մի խումբ դիմեց Աթաբեկ Զանգիին, որը պաշարել էր Եմեսան (Հիմս), և նրանից օգնություն ու պաշտպանություն խնդրեցին: Սա նրանց բազմաթիվ զորքեր ուղարկեց, որոնք մտան Հալեբ այն պաշտպանելու հռոմեացի պաշարումից:

Քշ 363

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Մարդինի տեր Հուսամ ալ-Դին Տիմուրտաշ Իլդազին գրավեց Հատտախ բերդը՝ Դիար Բաքրում: Այն գրավեց ինչ-որ մեկից՝ Մարուանի տոհմից, որի [տոհմը] ամբողջ Դիար Բաքրի տերն էր: Սա նրանց վերջին մնացորդներից էր:

Այդ տարում մեռավ Դիար Բաքրի, Բաղեշ (Բաղլիս) ու Արզն [քաղաքների] տեր Թուղան Արսլանը, որից հետո իշխեց որդին՝ Ֆարնին, որը կարգավորեց գործերը:

Այդ տարում՝ Սաֆար ամսին (19 հոկտեմբեր—16 նոյեմբեր), մեծ երկրաշարժ եղավ Ասորիքում, Զազիրայում, Դիար Բաքրում, Մոսուլում, Իրաքում և այլ երկրներում: Շատ ավերածություն եղավ, և ավերակների տակ շատ ժողովուրդ մնաց:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(28 օգոստոս 1139—16 օգոստոս 1140)

Քշ 368

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Գանձակում (Քանջա, Գանջա) և Ատրպատականի ու Առանի այլ կողմերում երկրաշարժ եղավ, սակայն ամենաուժեղը Գանձակում էր, ուր շատ տներ կործանվեցին: Անհամար ժողովուրդ զոհվեց, ասվում է, որ մեռածների թիվը երկու հարյուր երեսուն հազար էր: Մեռածների թվում էին երկրի տեր Կարասունկուրի երկու որդիները: Կործանվեց մի ամրոց, որի տերն էր Մուշահիդ ալ-Դին Բիհրուզը, որն այնտեղ մեծ քանակությամբ գանձեր ու ունեցվածք կորցրեց:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(17 օգոստոս 1140—7 օգոստոս 1141)

էջ 369

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Արդաբիլ քաղաքում մեռավ Ատրպատականի ու Առանիյայի տեր Աթաբեկ Կարասունկուրը, որը հիվանդացել էր թոքախտով։ Սա Թուղրիլ թագավորի մամուլքներից էր և Ատրպատականն ու Առանը (Առանիյա) հանձվեցին ամիր Զաուլի Թուղրիլիին։

Այդ տարում՝ Ռաշաբ ամսին (10 փետրվար—11 մարտ), Մալաթիայի և այլ վայրերի տեր Դանիշմանդը հռոմեաների մի խմբի հաղթեց, որոնց կոտորեց ու ավարի տվեց ունեցվածքը։

ՀԱՏՈՐ ԻՆՆԵՐՈՐԴ

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(27 հուլիս 1142—15 հուլիս 1143)

էջ 6

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում մեռավ Մալաթիայի ու Սահմանային դոտու (Սաղր) տեր Մուհամմադ իբն Դանիշմանդը²⁸⁹, և նրա երկրին տիրացավ Իկոնիայի (Կոնիյա)²⁹⁰ տեր Մասուդ իբն Կիլիշը, որը սելջուկներից էր։

Այդ տարում Ռումի մեծ զորք եկավ Ասորիք ու պաշարեց Փրանկնե-րին Անտիոքում։ Դուրս եկավ նրա տերը, հանդիպեց Ռումի թագավորին և իրենց հարաբերությունները բարելավեց ու մտավ իր քաղաքը, իսկ այդ տարվա Ռամադան ամսին (20 մարտ—18 ապրիլ) նա մեռավ։

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(16 հուլիս 1143—3 հուլիս 1144)

էջ 7

ԱԹԱՅԵԿԻ ԴԻԱՐ ԲԱՔՐԻ ՈՐՈՇ ՄԱՍԵՐԸ ՔՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Աթաբեկ Զանդին շարժվեց դեպի Դիար Բաքր և մի քանի քաղաքներ ու բերդեր զրավեց։ Դրտնցից էին Թանզա քաղաքը, ապա Սղերդ (Իսիրդ) ու Հիզան քաղաքները և ալ-Դուկ, Մաթլիս, Բանիսբա

(Բատիսիյա), Զու-լ-Կարնայն ամրոցները և ուրիշ վայրեր, ուր իրենից առաջ ուրիշները չէին հասել: Մարդինի շրջանում գրավեց ֆրանկների ձեռքում եղած Համլին, ալ-Մաուզիր, Տալլ Մաուդիր և այլ բերդեր, որոնք Զոսլինին էին պատկանում: Նա բուլղրի դրությունը կարգավորեց, պահպանության համար զորք նշանակեց: Ապա դիմեց Ամիդ ու Հանի քաղաքները և պաշարեց: Նա մնաց այդ կողմերում, կարգի բերելով իր նվաճած [վայրերը] և պաշարեց շնվաճվածները:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԻՆԸ՝ ԹՎԱԿԱՆ

(4 հուլիս 1144—23 հունիս 1145)

էջ 8—9

ԵԳԵՍԻԱՅԻ ԵՎ ԶԱԶԻՐԱՅԻ ՈՐՈՇ ՎԱՅՐԵՐԻ ԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Զումադա Բ ամսին (29 նոյեմբեր—27 դեկտեմբեր), Աթաբեկ Իմադ ալ-Դին Զանգի իբն Ակսունկուրը ֆրանկներից գրավեց Եղեսիա քաղաքը, ինչպես նաև նրանց այլ բերդերը Զաղիրայում:

Նրանց վնասը համակել էր ամբողջ Զաղիրան և շարիքը տարածվել, նրանց ասպատակությունները հասել էին ամենահեռավոր անկյունները, մինչև Ամիդ, Մծբին (Նասիբին), Ռաս ալ-Այն և ալ-Ռակկա: Նրանց թագավորությունը այդ երկրում տարածվում էր Մարդինի մոտից մինչև Եփրատ, ինչպես Եղեսիա (Ռուհա), Սարուջ, ալ-Բիրա, Սինն իբն Աթիյա, Համլին (Զամլին), ալ-Մաուդիր և Կարագի ու այլ վայրեր: Այս շրջանները, ինչպես նաև Եփրատից արևմուտք ընկած այլ վայրեր, պատկանում էին Զոսլինին, որը մեծ հեղինակություն էր ֆրանկների մեջ և նրանց զորքի հրամանատարը, քանզի քաջ էր ու խորամանկ:

Աթաբեկը գիտեր, որ եթե գնար այն պաշարելու, այնտեղ կհավսքվեին պաշտպան ֆրանկները և անկարելի կլիներ գրավել անառիկության պատճառով: Ուստի ղեաղվեց Դիար Բաքրով, որպեսզի այն տպավորությունը թողնի, թե ժամանակ չունի նրանց երկիրը արշավելու: Երբ (ֆրանկները) տեսան, որ նա անկարող է Դիար Բաքրի Ուրտուկիյա [տոհմի] և այլ տեղերի հետ կռիվը կես թողնելու, հանգստացան, և Զոսլինը թողեց Եղեսիան, անցավ Եփրատը՝ դեպի արևմտյան կողմերը: Եկան Աթաբեկի լրտեսներն ու տեղեկացրին կատարվածի մասին: Նա երթի կոչ արեց իր զորքին (հրամայելով), որ մյուս օրը Եղեսիայի կռվից ոչ որևէ շմնա: Ամիրներին իր մոտ հավաքեց ու ասաց՝ ճաշը մատուցեք, և ավելացրեց, իմ սեղանի վրա ինձ հետ թող ուտի միայն նա, ով ինձ հետ կխոցվի Եղեսիայի դռան մոտ: Միայն մի ամիր մոտեցավ նրան, ինչպես

նաև մի տղա, որի համարձակության և քաջության մասին չգիտեին, մինչ-դեռ ոչ ոք չէր կարող նրան հավասարվել պատերազմում: Ամիրն ասաց տղային՝ ի՞նչ գործ ունես դու այստեղ: Աթաբեկն ասաց՝ թող նրան, ալլահը վկա, ևս տեսնում եմ մի դեմք (մի մարդ), որն ինձանից ետ չի մնալու:

Նրանք զորքի հետ շարժվեցին առաջ և հասան Եդեսիա: Նա առաջինն էր, որ հարձակվեց և տղան էլ նրա հետ: Ֆրանկների հեծելազորից (խայյալա) մի ասպետ (ֆարիս) հարձակվեց Աթաբեկի վրա, իսկ հիշյալ ամիրը նրա առաջը կտրեց և խոցեց ու սպանեց, փրկելով նահատակին* (Աթաբեկին): Նա (Աթաբեկը) քսանութ օր պաշարեց քաղաքը, կովեց և բաղում հարձակումներ գործեց: Եկան քանդողները և քաղաքի պարիսպը ծակեցին: Նա շտապում էր կովի մեջ, քանզի վախենում էր, որ ֆրանկները կհավաքվեն, կհարձակվեն և կստիպեն թողնել քաղաքը: Եվ ահա փլվեց այն մասը (բաղնա), որ քանդողները ծակում էին և նա քաղաքը գրավեց բռնի ուժով: Նա պաշարեց միջնաբերդը և այն էլ գրավեց: Ապա կողոպտեցին մարդկանց ունեցվածքը, գերեվարեցին երեսաներին և կոտորեցին ռազմիկներին:

Սակայն, երբ Աթաբեկը դիտեց քաղաքը, նրան դուր եկավ և մտածեց որ նման քաղաքի կործանումը [խելոք] քաղաքականություն չէ: Նա հրամայեց իր զորքին ետ տանել [գերված] տղամարդկանց, կանանց, ու երեսաներին իրենց տները, վերադարձնել ավարը՝ կահ-կարասի և այլ պիտույքներ: Ամեն ինչ վերադարձվեց և ոչ ոք ոչինչ չկորցրեց, բացի շնչին բաներից, որ զինվորները մոռացել էին: Քաղաքը վերստացավ իր նախկին վիճակը և նա զորք թողեց այն պաշտպանելու:

Նա (Աթաբեկը) գրավեց Սարուջը և Եփրատից (ալ-Ֆուրատ) արևելք ֆրանկների ունեցած այլ վայրերը, բացի ալ-Բիրայից, որն ամուր էր և անառիկ Եփրատի ափին: Նա գնաց պաշարեց, սակայն [քաղաքը] շատ մթերք և զորք ուներ, որի շնորհիվ պաշարված դիմացավ, մինչև որ նա հեռացավ այնտեղից, ինչպես պատմելու ենք, եթե ալլահը կամենա:

Պատմվում է, որ տոհմաբանությունների և պատմության տեղյակ մի իմաստուն ասել է. Սիկիլիայում կղզու տերը ծովի վրա մի ջուկատ էր ուղարկել արևմտյան Տրիպոլիս (Թարաբուլուս) ու նրա շրջանները և նրանք կողոպտել ու կոտորել էին: Իսկ Սիկիլիայում կար մի գիտուն ու բարեպաշտ մահմեդական, որին կղզու տերը հարգում, պատվում էր, նրա կարծիքը նկատի առնում և նրան նախապատվություն էր տալիս քահանաների ու վանականների նկատմամբ: Այդ պատճառով նրա նահանգի ժողովուրդը ասում էր, որ նա (կղզու տերը) մահմեդական էր: Մի օր սա

* Աթաբեկ Զանգին պատմիչների մոտ կոչվում է շահիդ (նահատակ):

(կղզու տերը) նստած էր մի հյուրասենյակում, որը նայում էր դեպի ծովը և ահա գալիս է մի գեղեցիկ նավ, որի [մարդիկ] պատմում են, որ նրա զորքը մտնւ է իսլամի երկիրը, կողոպտել, կոտորել և հաղթանակ տարել: Այդ մահմեդականը նստած էր նրա կողքին, սակայն ննջում էր: Ասում է նրան թագավորը՝ ո՛վ այսինչ, չե՛ս լսում, թե ինչ են ասում, ասում է՝ ո՛չ, ասում է՝ նրանք պատմում են այսպես և այսպես, ինչո՞ւ Մուհամմադը (մոռացել) այդ երկիրը և նրա ժողովրդին: Ասաց (մահմեդականը)՝ նա րացակա էր, որովհետև ներկա է եղել Եդեսիայի նվաճմանը, որը մահմեդականները նոր են իրագործել: Ներկա եղող ֆրանկները ծիծաղում են. թագավորն ասում է՝ մի ծիծաղեք, ալլահը վկա, նա միայն ճշմարտությունն է ասում: Մի քանի օրից Ասորիքի ֆրանկներից լուր է հասնում նրա (Եդեսիայի) գրավման մասին: Բարեպաշտ և կրոնասեր մարդկանցից լսել եմ, որ մի բարեպաշտ մարդ երազում տեսել է (Եդեսիայի) նահատակին (Աթաբեկին) և հարցրել նրան, թե ի՞նչ է արել քեզ ալլահը և նա ասել է՝ ներեց (իմ մեղքերը) Եդեսիայի նվաճման փոխարեն:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(24 հունիս 1145—12 հունիս 1146)

էջ 11

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում մեռավ Բուրունկուշ ալ-Ջաքավին՝ Իսֆահանի տերը, որը նույնպես Իրաքում շիհնա²⁹¹ էր (ոստիկանապետ): Սա մի հայազգի էր, որ ծառա էր եղել վաճառականներից մեկի մոտ:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(13 հունիս 1146—1 հունիս 1147)

էջ 13

ԱԹԱՐԵԿ ԻՄԱԴ ԱԼ-ԴԻՆ ԶԱՆԳԻԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՔԻ ՈՐՈՇ
ԳՄԵՐԻ ՄԱՍԻՆ

[Զանգիի] իշխանությանը տիրանալուց հետո, թշնամիները շրջապատել էին նրա երկիրը: Ամեն մեկն աչք էր դրել նրա տիրույթներին ու կամենում էր գրավել, իսկ ինքը իր տիրույթները պահպանելուց բացի, տարի չէր անցնում, որ նվաճումներ չկատարեր: Մուստաբշիդ Բիլլահ խալիֆայի տիրույթները սահմանակից էին Տաքրիտի կողմից, և նա եկել պա-

շարեւ էր Մոսուլը: Մյուս՝ Շահրզուրի կողմից նա նկատում էր սուլթան Մասուդի [գործունեությունը]: Նույնպիսին էին հարաբերությունները Խըլաթի տեր Իբն Սուլեմանի, Հիսն Քայֆայի տեր Դաուդ Իբն Սուլեմանի և Ամիդի ու Մարդինի տիրոջ հետ: Սրան ավելացրեք նաև ֆրանկներին, որոնք սահմանակից էին Մարդինից մինչև Դամասկոս և հենց Դամասկոսի ամիրներին: Այս տարբեր նահանգները (իշխանությունները) շրջապատել էին նրա տիրույթները ամեն կողմից, իսկ ինքը մեկ այս կողմից էր հարձակվում, մեկ այն, մեկ գրավում էր, մեկ խորամանկում, այնպես որ ամեն մեկից մի բան նվաճել էր:

էջ 14

ԱԹԱՐԵԿԻ ՄԱՀՎԱՆԻՅ ՀԵՏՈ ԵԴԵՍԻԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ջոսլին Ֆրանկը (Ջուսլին ալ-Ֆիրինջի)²⁹² Եդեսիայի [նախկին] տերը, իր տիրույթներից, այսինքն՝ Տելլ Բաշիրից և դրացի վայրերից նամակ դրեց Եդեսիայի բնակիչներին, որոնք ընդհանրապես հայեր էին, համոզեց նրանց ըմբոստանալու և մերժելու մահմեդականների [տիրապետությունը] և քաղաքն իրեն հանձնելու: Նրանք համաձայնեցին, և նա նշանակեց այն օրը, երբ ինքը կհասնեի նրանց մոտ:

Նա իր զորքով գնաց Եդեսիա, գրավեց քաղաքը, սակայն միջնաբերդում գտնվող մահմեդականները գիմարեցին, և նա կռվեց նրանց հետ: Լուրը հասավ Նուր ալ-Դին Մահմուդ Իբն Ջանգիին, որը Հալեբում էր և սա աճապարանք հասավ իր զորքով: Երբ [Ջանգիին] մոտեցավ, Ջոսլինը դուրս եկավ ու փախավ, վերադառնալով իր տիրույթները: Նուր ալ-Դինը մտավ քաղաք, կողոպտեց ու գերեվարեց ժողովրդին և այս անգամ արդեն [քաղաքը] կողոպտվեց ու դատարկվեց իր բնակչությունից և քչերը մնացին: Այսուհանդերձ, շատերը կարծում են, թե քաղաքը կողոպտվեց այն ժամանակ, երբ (վերոհիշյալ) նահատակը (Աթաբեկը) գրավեց քաղաքը, սակայն սա ճիշտ չէ:

Եդեսիայի ապստամբության լուրը հասել էր Սայֆ ալ-Դին Ղազիին, որը զորք ուղարկեց, սակայն նրան կանխել էր [եղբայրը]՝ ալ-Մալիք Նուր ալ-Դինը, որը մտել էր քաղաք ու կողոպտել, իսկ վերջիններս (Ղազիի զորքը), որոնք դեռ ճանապարհին էին, ետ դարձան:

էջ 15

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում սուլթան Մասուդը բանտարկեց իր եղբորը՝ Սուլայմանին, Տաքրիտի բերդում:

Այդ տարում մեռավ Առանիյայի և Ատրպատականի որոշ մասերի տեր ամիր Ջաուլի ալ-Թուղրիլին։ Նա սկսել էր ապստամբության պատրաստվել, բայց մահը հանկարծակի վրա հասավ՝ արյունահոսություն ունեցավ և մեռավ։

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(20 ապրիլ 1151—7 ապրիլ 1152)

էջ 29—30

ՆՈՒՐ ԱԼ-ԴԻՆԻ՝ ՋՈՍԼԻՆԻՅ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՋՈՍԼԻՆԻ ԳԵՐԻ ԸՆԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Նուր ալ-Դին Մահմուդն իր զորքը հավաքեց ու գնաց Ջոսլին Ֆրանկի երկիրը, որը Հալեբի հյուսիսում էր։ Նրանում էին Տայլ Բաշիրը, Այնթապը (Այն Տաբ), Ազազը և այլ վայրեր։ Նա որոշեց պաշարել ու գրավել այն։ Ջոսլինը, ալլահի անեծքը նրա վրա, ֆրանկների անպարտելի ասպետն էր, թե՛ քաջ, թե՛ խելոք։ Սա երբ իմացավ այդ մասին, շատ ֆրանկների հավաքեց ու գնաց Նուր ալ-Դինի դեմ։ Նրանք բախվեցին ու ընդհարվեցին։ Մահմեդականները պարտվեցին, կոտորվեցին, և մեծ բազմություն գերի տարվեց։

Գերի ընկածների մեջ էր Նուր ալ-Դինի զինակիրը (սիլահդար)։ Ջոսլինը վերցրեց նրան ու Նուր ալ-Դինի զենքերը և ուղարկեց Իկոնիայի և Ակսարայի տեր ալ-Մալիք Մասուդ իբն Կիլիշ Արսլանին, ասելով՝ սա քո փեսայի զենքերն են և հետագայում սրանից ավելին էլ է գալու։

Երբ Նուր ալ-Դինը այս մասին իմացավ, շատ վիրավորվեց և հնարներ մտածեց Ջոսլինի դեմ, իր հանգիստը կորցրեց վրեժի մասին մտածելով։ Նա թուրքմենների ամիրների մի խումբ կանչեց, լավ վարձատրեց, պայմանով, որ Ջոսլինին բերեն ու հանձնեն սպանված կամ գերի բռնված, քանզի գիտեր, որ եթե ինքը անձամբ չնար, նա կպաշտպանվեր իր զորքով ու բերդերով։

Թուրքմենները նրա (Ջոսլինի) վրա լրտեսներ նշանակեցին։ Երբ սա որսի դուրս եկավ, սրանցից մի խումբ հասավ նրա ետևից ու բռնեց նրան։ Նա դրամ խոստացավ նրանց, և սրանք համաձայնեցին բաց թողնել, եթե դրամը [անմիջապես] բերվեր։ Նա մարդ ուղարկեց բերելու։ Սակայն նրանցից մեկը գնաց Հալեբ Նուր ալ-Դինի տեղակալ (նախ) Աբու Բաքր իբն ալ-Դայայի մոտ ու տեղեկացրեց դեպքերի մասին, և նա զորք ուղարկեց։ Սա վրա հասավ թե՛ թուրքմեններին, թե՛ Ջոսլինին, որին գերի բռնեց և նրա (Նուր ալ-Դինի) մոտ տարավ։

Նրա (Ջոսլինի) գերի բռնվելը մեծագույն նվաճումներից էր, որովհետև սատանա էր, շարագործ, մահմեդականների համար սպառնալիք և դաժան՝ սրտով: Այսպիսով ամբողջ քրիստոնեությունը մեծ վնաս կրեց, իսկ սա գերի ընկավ, Նուր ալ-Դինը եկավ ու կարճ ժամանակում գրավեց նրա բերդերը՝ Տալլ Բաշիր, Այնթափ (Այն Տափ), Ազազ, Տալլ Խալիֆ, Կուրուս, ալ-Ռավանդան, Բուրջ ալ-Ռուսաս, Հիսն ալ-Բարա, Քաֆր Սուդ, Քաֆր Լասա, Տլուֆ (Դուլուֆ), Մարաշ, Նահր ալ-Ջաուզ և այլ վայրեր՝ նրա կալվածներում:

Ամեն անգամ, որ Նուր ալ-Դինը մի բերդ էր գրավում, այնտեղ էր տանում տաս տարվա անհրաժեշտ ամեն ինչ բերդերի համար: Սա էր նրա սովորությունը, քանզի վախենում էր, որ ֆրանկների կողմից որևէ շարիք կհասնի մահմեդականներին և երկիրը անպաշտպան կմնար թշնամու դիմաց:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(8 ապրիլ 1152—28 մարտ 1153)

էջ 37

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում մեռավ Մարդինի ու Նփրկերտի տեր Հուսամ ալ-Դին Տիմուրտաշը: Նրա իշխանությունը երեսուն տարուց ավելի տևեց: Նրան հաջորդեց որդին՝ Նաջմ ալ-Դին Ալրին (Ալփի):

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(29 մարտ 1153—17 մարտ 1154)

էջ 43

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Հայաստանում վրացիների (քուրջերի) և Կարնո քաղաքի (Արզան ալ-Ռում)²⁹³ տեր Սալդուկի միջև սաստիկ պատերազմ եղավ, Սալդուկը պարտվեց: Վրացիները նրան գերեցին և ապա ազատ արձակեցին:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(7 մարտ 1155—24 փետրվար 1156)

էջ 47

Այդ տարում Անի քաղաքում²⁹⁴ Հայոց կրոնավորները (քահանաներ) ապստամբեցին և այն գրավելով ամիր Շադդադից, հանձնեցին եղբորը՝ Ֆադլունին:

(31 դեկտեմբեր 1160—20 դեկտեմբեր 1161)

էջ 73

ԻՔՆ ԱԿՍՈՒՆԿՈՒՐԻ ԵՎ ԵԼՏԿՈՒԾԻ ԶՈՐՔԻ ՄԻՋԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Երբ հաշտութիւն կայացաւ Ելտկուզ (Իլդիգուզի)²⁹⁵ և Ինանչի²⁹⁶ միջև, նա (Ելտկուզը) [մարգ] ուղարկեց, Մարաղայի տիրոջ Իբն Ակսունկուր ալ-Ահմադիլիին հրավիրեց՝ գալ, հպատակութիւն հայտնել սուլթան Արսւլան շահին²⁹⁷։ Սա հրաժարվեց այդ բանից, ասելով՝ ինձանից հրաժարվեք, ես սուլթան (տիրակալ) ունեմ։

Ելտկուզը զորք հավաքեց իր որդու՝ Բահլավանի, հետ մեկտեղ։ Լուրը հասավ իբն Ակսունկուրին, որը իմաց տվեց իւր թի տեր Շահ Արմանին, դաշնակցեց նրա հետ, ու ձեռք ձեռքի տվեցին։ Շահ Արմանը մեծ զորք ուղարկեց ներողութիւն խնդրելով, որ ինքը չի գալու, որովհետև գտնվում էր (իշխում էր) մի սահմանային ամրութիւնում (սաղը), որը թողնել չէր կարող։ Այսպիսով, իբն Ակսունկուրը ուժեղացավ, նրա զորքը մեծացավ ու գնաց Բահլավանի դեմ։ Նրանք ընդհարվեցին Ասբիռուդ գետի վրա ու կռիվը սաստկացավ։ Բահլավանը ամենախայտառակ ձևով փախուստի դիմեց և նա ու իր զորքը հասան Համադան՝ տխուր վիճակում։ Նրա մերձավորների մեծ մասը երաշխավորագիր խնդրելով [հանձնվեց] իբն Ակսունկուրին, և վերջինս հաղթական վերադարձավ իր երկիրը։

էջ 75

ՍԱԼԻՀ ԻՔՆ ՌՈՒԶՁԻՔԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԴՈՒ՝ ՌՈՒԶՁԻՔԻ ՎԵՋԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Ռամադան ամսին, սպանվեց հայազգի ալ-Մալիք ալ-Սալիհ Աբու-լ-Ղարատ Թալաի իբն Ռուզզիքը²⁹⁸ Եգիպտոսի տեր ալավի (շիաական) ալ-Ադիդ [խալիֆայի] վեզիրը։

Նրա սպանութիւն պատճառն այն էր, որ նա տերութիւն մեջ մեծ բռնակալ էր դարձել և իր ձեռքն էր վերցրել հրամայելու, արգելելու և հարկերը տնօրինելու [իրավունքը], քանի որ Ադիդը փոքրահասակ էր և հենց ինքն էր նրան նշանակել։ Նա ճնշեց մարդկանց, շատ մեծամեծների հեռացրեց ու ցրեց երկրում, որպեսզի չապստամբեն իր դեմ, իսկ իր դստերն ամուսնացրեց Ադիդի հետ։ Պալատի կանայք նրան թշնամի էին, իսկ Ադիդի հորաքույրը դրամ ուղարկեց Եգիպտոսի իշխաններին և հրավիր-

րեց նրանց սպանելու [Սալիհին]։ Այս հարցում նրա ամենամեծ թշնամին մի մարդ էր, որը կոչվում էր Իբն ալ-Դաի։ Նրանք (դավադիրները) սպասեցին նրան պալատի մի դահլիճում։ Երբ մտավ [դահլիճ], հանկարծակի խփեցին դանակներով և մահացու վերքեր հասցրեցին։ Նրան տարան իր տունը դեռ կենդանի վիճակում։ Նա լուր ուղարկեց Ադիդին, մեղադրելով, որ հակառակ նրան մատուցած իր ծառայությունների համաձայնվել էր իրեն սպանել տալ։ Ադիդը երդվեց, որ բոլորովին տեղյակ չէ և ոչ մի համաձայնություն չի տվել։ [Սալիհ] ասաց՝ եթե իրոք անմեղ ես, ապա քո հորաբորոջը՝ ինձ հանձնիր, որպեսդի վրեժս լուծեմ։ [Ադիդը] հրամայեց ձերբակալել և ուղարկել նրան։ [Սալիհը] բռնի բերել տվեց նրան իր մոտ և սպանեց, իսկ վեզիրությունը կտակեց իր որդուն՝ Ռուզզիքին, որը կոչվեց ալ-Ադիլ (արդար)։ Հոր մահից հետո սա ստանձնեց իշխանությունը։

Սալիհը լավ, ճարտար լեզվով բանաստեղծություններ ունի, որոնք վկայում են նրա հարուստ արժանիքների մասին։

էջ 77

ՎՐԱՑԻՆԵՐԻ՝ (ՔՈՒՐՋ) ԱՆԻ ՔԱՂԱՔԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Շաբան ամսին (26 հուլիս—23 օգոստոս), վրացիք (քուրջ) հավաքվեցին իրենց թագավորի շուրջ ու շարժվեցին դեպի Անի քաղաքը՝ Առան (Արման)²⁹⁹ երկրում, գրավեցին³⁰⁰ ու շատերին կոտորեցին։

Երբ տեղեկացավ իսլաթի տեր Շահ Արման իբն Իբրահիմ իբն Սուլեմանը, հավաքեց զորքը, նրա հետ հավաքվեցին նաև մեծ թվով կամավորներ։ Եկավ նրանց դեմ, հանդիպեց նրանց, ու կռվեցին։ Մահմեդականները պարտվեցին, նրանց մեծ մասն սպանվեց, շատերը գերի ընկան, իսկ Շահ Արմանը պարտված հեռացավ և նրա հետ իր զորքից վերադարձավ միայն շորս հարյուր ձիավոր³⁰¹։

էջ 77

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում վրացիների (քուրջ) և Կարնո քաղաքի (Արզան ալ-Ռումի) տեր ալ-Մալիք Սալդուկ իբն Ալիի միջև կռիվ ու պատերազմ տեղի ունեցավ, որի մեջ Սալդուկը և իր զորքը պարտվեցին, իսկ ինքը գերի ընկավ։ Նրա Շահ Բանուար (Բանու) քրոջ հետ ամուսնացել էր իսլաթի տեր Շահ Արման իբն Սուլեման իբն Իբրահիմ իբն Սուլեմանը։ Սա (քուրջը)

մի թանկարժեք նվեր ուղարկեց վրաց (քուրջ) թագավորին, խնդրելով նրանից աղատել իր եղբորը: [Թագավորը] աղատ արձակեց, և սա վերադարձավ իր երկիրը:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(21 դեկտեմբեր 1161—9 դեկտեմբեր 1162)

էջ 79—80

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՎՐԱՅ ՄԻՋԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Շաաբան ամսին (16 հուլիս—13 օգոստոս), վրացիք (քուրջ) հավաքվեցին մեծ բազմությամբ՝ երեսուն հազար ռազմիկ, և մրտան մահմեդականների երկիրը ու դիմեցին Դուին³⁹² քաղաքը Ատրպատականում: Գրավեցին այն, կողոպտեցին և նրա ու շրջակայքի բնակիչներից տաս հազար մարդ կոտորեցին, նրանց կանանց հափշտակեցին ու շատերին գերեվարեցին: Կանանց մերկացրին և բոբիկ ու մերկ քայլել տվեցին, վառելով նաև գլխավոր մզկիթը և [այլ] մզկիթներ:

Երբ իրենց երկիրը հասան, վրացի կանայք դատապարտեցին մահմեդականների կանանց նկատմամբ արածը, ասելով՝ դուք մահմեդականներին ստիպում եք մեր նկատմամբ անել այն, ինչ որ դուք արել եք նրանց կանանց և հագցրեցին նրանց:

Երբ լուրը հասավ Ատրպատականի, Ջաբալի ու Սպահանի տեր Շամսալ-Դին Իլդիզուզին, հավաքեց իր զորքն ու կուտակեց. նրան միացավ Խլաթի տեր Շահ Արման իբն Սուբման ալ-Կութբին, Մարաղայի տեր իբն Ակսունկուրը և ուրիշներ: Հավաքվեց մի մեծ զորք, որի թիվը հիսուն հազար ռազմիկից ավելի էր և շարժվեց դեպի վրաց (քուրջ) երկիրը (հինգ հարյուր) հիսունութ թվականի Սաֆար ամսին, կողոպտեցին, հափշտակեցին կանանց ու երեխաներին, գերեվարեցին տղամարդկանց: Վրացիք (քուրջ) նրանց դեմ ելան, և սաստիկ ճակատամարտ եղավ, որի ընթացքում երկու կողմերն էլ դիմացան և նրանց միջև պատերազմը մեկ ամսից ավելի տևեց: Մահմեդականները հաղթեցին, իսկ վրացիք փախուստի դիմեցին և շատերն սպանվեցին, ինչպես նաև դերի ընկան:

Պարտության պատճառն այն էր, որ վրացիներից մեկը եկավ Իլդիզուզի մոտ, ընդունեց մահմեդականությունը և ասաց՝ տուր ինձ զորք, որ ես իմ իմացած ճանապարհով տանեմ ու ետևի կողմից հասցնեմ վրաց ճամբարը այնպես, որ նրանք այդ բանը չկռահեն: [Իլդիզուզը] վստահեց նրան, տվեց զորք և նշանակեց վրաց [ճամբարը] հասնելու օրը: Երբ այդ

օրը հասավ, մահամեղականները հարձակվեցին վրացիների վրա և երբ կռվում էին, հասավ մահամեղականացած վրացին զորքի հետ միասին, գոռացին ալլահ աքբար և թիկունքից հարձակվեցին վրացիների վրա: Սրանք պարտվեցին ու շատերը կոտորվեցին, իսկ մահամեղականները նրանց ունեցվածքից անհաշիվ ավար տարան, քանզի [վրացիք] հույս դնելով իրենց թվի վրա, վստահ էին իրենց հաղթանակին, իսկ ալլահը հուսախափ արեց նրանց: Մահամեղականները երեք օր ու գիշեր հետապնդում, կոտորում ու գերեվարում էին և հաղթական վերադարձան:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(18 նոյեմբեր 1164—6 նոյեմբեր 1165)

էջ 91

ԿԻԼԻՋ ԱՐՍԼԱՆԻ ԵՎ ԻԲՆ ԴԱՆԻՇՄԱՆԴԻ ՄԻՋԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում թշնամություն ընկավ Իկոնիայի (Կունիյա) և Ռումի երկրից իրեն հարևան [հոգերի] տեր ալ-Մալիք Կիլիջ Արսլան իբն Մասուդ իբն Կիլիջ Արսլանի³⁰³ և Մալաթիայի ու Ռումի այլ մասերի տեր Յադի Արսլան իբն Դանիշմանդի միջև և սաստիկ պատերազմ տեղի ունեցավ:

Բանն այն է, որ Կիլիջ Արսլանը ամուսնացել էր ալ-Մալիք Սալդուկ իբն Ալի իբն Աբու-լ-Կասիմի դստեր հետ: Հարսը տարվեց Կիլիջ Արսլանի մոտ մեծ օժիտով, որի արժեքը չգիտենք: Մալաթիայի տեր Յադին հարձակվեց նրա վրա, հափշտակեց հարսին իր ամբողջ ունեցվածքով և կամեցավ ամուսնացնել նրան իր եղբորորդու՝ Զու-լ-Նուն իբն Մուհամմադ իբն Դանիշմանդի հետ: Նա հրամայեց հարսին հրաժարվել մահամեղականությունից և ամուսնացրեց իր եղբորորդու հետ:

Կիլիջ Արսլանը հավաքեց իր զորքը և շարժվեց իբն Դանիշմանդի դեմ: Նրանք իրար հանդիպեցին, պատերազմեցին ու պարտվեց Կիլիջ Արսլանը: Նա օգնություն խնդրեց Ռումի թագավորից, որը մեծ զորք ուղարկեց նրան:

Այդ օրերին մեռավ Յադի Արսլան իբն Դանիշմանդը և Կիլիջ Արսլանը տիրեց նրա երկրի մի մասին: Նա հաշտվեց Մալիք Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Դանիշմանդի հետ, որը տիրացել էր երկրին հորեղբոր՝ Յադի Արսլանի [մահվանից] հետո: Զու-լ-Նուն իբն Մուհամմադ իբն Դանիշմանդը տիրացավ Կեսարիա (Կայսարիյա) քաղաքին, իսկ Շահան Շահ իբն Մասուդը՝ Կիլիջ Արսլանի եղբայրը, տիրացավ Անկիրիոն (Անքուրիյա)

քաղաքին և նրանց միջև հարաբերությունները կարգավորվեցին, ու համաձայնություն գոյացավ:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(7 նոյեմբեր 1165—27 հոկտեմբեր 1166)

էջ 94

ՏԱՐԻՆՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այգ տարում վրացիք (քուրջ) մեծ զորքով դուրս եկան և ասպատակեցին տարբեր գավառներ, մինչև որ հասան Գանձակ (Քանջա, Գանջա) կոտորեցին, գերեցին, շատերին գերեվարեցին և անհաշիվ կողոպտեցին:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(5 հոկտեմբեր 1168—24 սեպտեմբեր 1169)

էջ 101

ԱՍԱԴ ԱԼ-ԴԻՆ ՇԻՐՔՈՒԶԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

.....
Ինչ վերաբերում է նրա (Շիրքուհի) գործունեության սկզբնավորմանը և նուր ալ-Դինի մոտ ծառայության մտնելուն, ապա (պիտի ասենք), որ նա և եղբայրը՝ Նաջմ ալ-Դին Այյուբը՝ Շաղիի երկու որդիները, Ատրպատականի (ՏԻՇ) Դուին քաղաքից են: Նրանք ծագում են քրդական ալ-Ռավադիյա [ցեղից], իսկ այս ցեղի մարդիկ ամենաազնիվ քրդերից են: Նրանք եկան Իրաք ու ծառայության մտան Բաղդադի շիհնա (ոստիկանապետ, կառավարիչ) Մուջահիդ ալ-Դին Բիհրուդի մոտ:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(23 օգոստոս 1172—11 օգոստոս 1173)

էջ 119

ԼԵՎՈՆԻ ՈՐԴԻ ՄԼԵԶԻ՝ ՈՌԻՄԻ ԴԵՄ ՏԱՐԱՍ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Ջումադա Ա ամսին (19 դեկտեմբեր—18 հունվար), Հալեբին հարևան լեռնանցքների երկրի տեր հայազգի Լևոնի որդի Մլեհը

(Մալիհ իբն Լայուն) հաղթեց Կ. Պոլսի (Կուսթանթինա) Ռումի զորքին: Բանն այն է, որ հիշյալ Մլեհը ենթակա էր Նուր ալ-Դինին, որը նրան ավատական ընդարձակ տիրույթներ (իկթա) էր տվել և միաժամանակ Նուր ալ-Դինի ծառայության մեջ էր, ֆրանկների դեմ նրա պատերազմների կազմակերպիչն ու ընկերակիցը: [Նուր ալ-Դինի] այս վերաբերմունքը հետևանք էր խելացիության: Երբ Նուր ալ-Դինին ասացին, թե ի՞նչ իմաստ ունի նրան ծառայության ընդունելը և Ասորիքում տիրույթներ շնորհելը, նա պատասխանեց՝ նրան օգտագործում եմ իր կրոնի (միլլատ)³⁰⁴ մարդկանց դեմ պայքարելու համար և այդ միջոցով իմ զինվորների մի մասը ապատում եմ դրացի երկրների վրա հարձակվելու [պարտականությունից]: Սակայն Մլեհն (Մալիհ)³⁰⁵ էլ իր հերթին հենվում էր Նուր ալ-Դինի վրա դրացի հայերի և հուռմանների դեմ [պայքարելու համար]: Ադանա, Մամեստիա (Մասիսա) և Տարսոն (Թարսուս) քաղաքները Կ. Պոլսի տիրոջ՝ Ռումի թագավորի ձեռքում էին, իսկ Մլեհը վերցրեց նրանից, որովհետև դրանք իր երկրին հարևան էին: Ռումի թագավորը մեծ զորք ուղարկեց նրա դեմ, (հրամանատար) նշանակելով իրենն ազգական մի քանի հայտնի պատրիկներին: Մլեհը Նուր ալ-Դինի զորքերի հետ նրանց դեմ դուրս եկավ պատերազմի և համառ կռիվից հետո հուռմանները պարտվեցին, շատերն սպանվեցին ու գերի ընկան: Մլեհի ուժն ավելացավ, իսկ հուռմանները իրենց հույսը կտրեցին այդ երկրից: Մլեհը Նուր ալ-Դինին ուղարկեց իր ավարի զգալի մասը և երեսուն հոգի [հուռմանների] նշանավոր ու երևելի մարդկանցից: Նուր ալ-Դինը սրա մի մասը ուղարկեց ալ-Մուստադի Բիամր-Իլահ խալիֆային և գրեց նրան, հպարտանալով ձեռք բերված հաղթանակով [որպես իրենը ներկայացնելով], քանի որ իր զինվորներն էլ էին այն իրագործել:

էջ 120

ՆՈՒՐ ԱԼ-ԴԻՆԻ՝ ԿԻԼԻՋ ԱՐՍԼԱՆԻ ԵՐԿՐԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Նուր ալ-Դին Մահմուդ իբն Ջանգին շարժվեց դեպի Իզդ ալ-Դին Կիլիջ Արսլան իբն Մասուդ իբն Կիլիջ Արսլանի թագավորությունը, որի մեջ են Մալաթիա, Սեբաստիա (Սիվաս), Ակսարա և այլ վայրեր, պատերազմելով փրավելու նպատակով:

Բանն այն էր, որ Կիլիջ Արսլանը հարձակվել էր Մալաթիայի ու Սեբաստիայի տեր Ջուլ-Նուն իբն Դանիշմանդի վրա, գրավել նրա երկիրը և քշել նրան՝ թողնելով վտարված ու միայնակ վիճակում: Սա եկավ ապաստանեց Նուր ալ-Դինին և օգնություն խնդրեց նրանից: Նուր ալ-Դինը հյուրընկալեց նրան, լավ վերաբերվեց, արքայավայել պատիվներ

ցույց տալով, օժանդակութիւն ու օգնութիւն խոստացաւ՝ նրա իշխանութիւնը վերականգնելու համար: Ապա նա լուր ուղարկեց Կիլիշ Արսլանին միջնորդելով, որ վերադարձնի [Իբն Դանիշմանդի] թագավորութիւնը, բայց Նուր ալ-Դինը պատասխան չստացաւ և շարժվեց նրա դեմ: Նա սկսեց Քեսունի, Բահասնիի, Մարաշի ու Մարղուբանի և նրանց միջև ընկած վայրերի նվաճումով: Մարաշը գրավեց Զուլ-Կապա ամսի սկզբին, իսկ ապա մնացածը:

Դրանից հետո իր զորքի մի մասը ուղարկեց Սեբաստիա (Սիվաս), որը նվաճեց: Երբ Նուր ալ-Դինը այդ երկիրն էր մտել, Կիլիշ Արսլանը Ասորիք տանող ճանապարհներից ետ քաշվելով, գնացել էր իր երկրի միջին մասը և այնտեղից նամակ ուղարկել Նուր ալ-Դինին՝ սիրաշահելով ու հաշտութիւն խնդրելով: Նուր ալ-Դինը կանգ առավ և հանուն այս խնդրի առանց պատերազմի կարգավորմանը, հրաժարվեց իր նպատակից: Այդ ժամանակ անհանգստացնող լուրեր եկան ֆրանկների կողմից և նա համաձայնեց հաշտութիւն կնքել՝ պայմանով, որ [Կիլիշ Արսլանը] օգնական զորք տար պատերազմի համար: Նա (Նուր ալ-Դինը) ասաց նրան՝ դու դրացի ես հոռոմներին և շես հարձակվում դրանց վրա, մինչդեռ քո ձեռքում է գտնվում իսլամի երկրի մի ընդարձակ մասը, ուստի պետք է ինձ հետ մասնակցես այս արշավանքին: Վերջինս ընդառաջեց նրան, իսկ Սեբաստիան մնաց Նուր ալ-Դինի տեղակալների ձեռքում՝ որպէս Զուլ-Նունին ենթակա՝ [քաղաք] և զորքը նույնպէս մնաց Զուլ-Նունի ծառայության մեջ, մինչև Նուր ալ-Դինի մահը: Դրանից հետո [Նուր ալ-Դինի] զորքը ետ դարձավ և Կիլիշ Արսլանը նորից դալով տիրացավ [Սեբաստիային] և նրա որդիների ձեռքում մնում է մինչև օրս՝ վեց հարյուր քսան երկու թվականը (1225):

Երբ Նուր ալ-Դինն այս արշավանքից վերադարձավ, Բաղդադից նրա մոտ եկավ Քամալ ալ-Դին Աբու-լ-Ֆադլ Մուհամմադ իբն Աբդալլահ իբն ալ-Շահրզուրիի դեսպանը, բերելով խալիֆայի հրովարտակը՝ [նրան պարգևելու] Մոսուլը, Ջագիրան, Արբեւան (Իրբիլ), Խլաթը (Խիլաթ), Ասորիքը, Կիլիշ Արսլանի երկիրը և Եգիպտոսը:

էջ 121—122

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարում [թուրքմենները] ասպատակեցին Համագանի գավառները, կողոպտեցին Դինավարը, կանանց գերեվարեցին, իսկ Ելթկուդը (Իլդիգիդ), որն այդ ժամանակ նախճավանում (նախշուան) էր իր դորքով, շտապ հարձակվեց:

Այդ տարում նուր ալ-Դին Մահմուդ իրն Զանգին դեսպան ուղարկեց խալիֆայի մոտ: Սա տանում էր մի նամակ, որի մեջ [նուր ալ-Դինը] հիշատակում էր իր ծառայությունները [արքունի] դիվանին, իր մղած կրոնական պայքարը (ջիհադ) անհավատների դեմ և նրանց քաղաքների գրավումը, խնդրելով, որ իր իշխանությունը հաստատվի իր ձեռքում եղած երկրների՝ Եգիպտոսի, Ասորիքի, Ջաղիրայի, Մոսուլի և իրեն ենթակա Դիար Բաքրի վրա, ինչպես նաև այս բոլորին դրացի հլաթի ու Կիլիշ Արսլանի երկրի նկատմամբ: Խնդրում էր, որ իրեն տրվեն նաև իր հոր Զանգիի ստացած պարգևական տիրույթները Իրաքի Սավադում (սևահող):

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(19 հունիս 1178—7 հունիս 1179)

էջ 145

ԹԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում անձրևները բոլորովին դադարել էին ամբողջ Ասորիքում, Ջաղիրայում, Իրաքում, Դիար Բաքրում, Մոսուլում, Ջիբալում, հլաթում և այլ վայրերում. տիրեց թանկությունը և դա ընդհանուր էր բոլոր երկրներում:

Մարդիկ աղոթքով անձրև հայցեցին, սակայն անձրև չտեղաց, սնունդ չէր ճարվում և մարդիկ մեռելներ էին ուտում: Այսպես տեեց մինչև [հինգ հարյուր] յոթանասունհինգ թվականի վերջը: Ապա սկսեց նաև ուժեղ և ընդհանուր համաճարակ ու շատերը մահացան: Հիվանդությունը հիմնականում մեկ տեսակ էր՝ ուղեղապատակի բորբոքում (մենինգիտ, սիրսամ) և մարդիկ չէին հասցնում մեռելները թաղել: Որոշ երկրներ ավելի վատ վիճակում էին, քան մյուսները:

Ապա ալլահը ողորմեց իր ծառաներին, երկրներին ու անասուններին անձրևներ ուղարկեց ու գները իջեցրեց:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(8 հունիս 1179—27 մայիս 1180)

էջ 148

ԱԼ-ՄՈՒՍՏԱԳԻ ԲԻԱՄՐ ԻԼԼԱՀԻ ՄԱՀԸ ԵՎ ԱԼ-ՆԱՍԻՐ ԼԻԳԻՆ
ԻԼԼԱՀԻ ԽԱԼԻՖԱՅՈՒՆԻԹՅՈՒՆԸ

Այդ տարում Զուլ-Կաադա ամսին (դեկտեմբեր) վախճանվեց իմամ (խալիֆա) ալ-Մուստադի Բիամր-Իլլահը, այսինքն՝ հավատացելոց իշ-

խան Աբու Մուհամմադ Հասան իբն Յուսուֆ ալ-Մուստանջիդը: Նրա մայրը հայազգի ստրկուհի էր (ուժ վալադ), որը կոչվում էր Ղադդա (Թարմ, Նուրբ):

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(28 մայիս 1180—16 մայիս 1181)

էջ 151

ՍԱԼԱՀ ԱԼ-ԴԻՆԻ ՀԱՅԱՋԳԻ ԼԵՎՈՆԻ ՈՐԴՈՒ ԵՐԿԻՐԸ ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սալահ ալ-Դինը հարձակվեց հայազգի Լեոնի որդու (իբն Լայուն ալ-Արմանի)³⁰⁷ երկիրը, Կիլիշ Արսլանի հետ գործը վերջացնելուց հետո:

Բանն այն է, որ հայազգի Լեոնի որդին մի խումբ թուրքմենների հրավիրել էր իր երկիրը, դրամական նվերներ տվել ու հրամայել, որ իրենց հոտերը արածացնեն իր երկրում, իսկ իր երկիրը ամրակուռ էր, ամբողջովին ծածկված անառիկ բերդերով և այնտեղ մտնելը դժվար էր, քանզի [շրջապատված էր] լեռնանցքներով ու անանցանելի լեռներով: Սակայն հետո նա դավաճանեց նրանց, կանանց գերեվարեց, ունեցվածքը խլեց, իսկ տղամարդկանց՝ տարիքավորներին կոտորելուց հետո, մի մասին գերեվարեց:

Սալահ ալ-Դինը³⁰⁷ իջավ Ասուադ (Սև) գետի մոտ և սկսեց նրա երկիրը ասպատակել: Լեոնի որդին անհանգստացավ լեռան գլխին գտնվող իր մի բերդի համար [վախենալով], որ կգրավվի, ուստի քանդեց ու հրկիզեց այն: Երբ Սալահ ալ-Դինը այդ մասին լսեց, շտապեց նրա մոտ և հասավ նախքան նա կհասցնեք գանձերն ու պարենը տեղափոխել: Նա կողոպտեց, և մահմեդականները ավար վերցրեցին: Լեոնի որդին լուր ուղարկեց, [խոստանալով] ազատ արձակել իր մոտ եղած գերիներին, գերեվարած [կանանց] և վերադարձնել փողերը, պայմանով, որ հեռանային իր երկրից: Սալահ ալ-Դինը ընդունեց և դրուժյունը կարգավորվեց: Գերիներն արձակվեցին և ունեցվածքը վերադարձվեց, իսկ Սալահ ալ-Դինը այնտեղից հեռացավ Զումահա Բ ամսին (23 հոկտեմբեր—20 նոյեմբեր):

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(7 մայիս 1182—25 ապրիլ 1183)

էջ 157--158

ՍԱԼԱՀ ԱԼ-ԴԻՆԻ ՄՈՍՈՒԼԸ ՊԱՇԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ Սալահ ալ-Դինը նվաճեց Մծբինը (Նասիբին), իր մոտ խորհրդակցելու հավաքեց ամիրներին ու մեծամեծ խորհրդականներին, թե ո՞ր

երկրից սկսի և ո՞րի վրա հարձակվի՝ Մոսուլի՞, Սինջարի՞, թե՞ Զազի-
րատ իրն Ումարի։ Նրանց միջև տարակարծություն եղավ։ Մուզաֆֆար
ալ-Դին-Քաուքաբերի իրն Զայն ալ-Դինն ասաց՝ պետք է սկսել Մոսուլից,
քանի որ դա մեր ձեռքում է և արդելող չկա, իսկ Իզզ ալ-Դինն ու Մուշա-
հիդ ալ-Դինը երբ լսեն մեր գալստյան մասին, կթողնեն այն և կհեռանան
լեռնային ամրոցները։ Նրա ասածը հաստատեց [Սալահ ալ-Դինի] հոր-
եղբոր Շիրքուհի որդին՝ Նասիր ալ-Դին Մուհամմադը։ Սա մեծ նվեր-
ներ էր տվել Սալահ ալ-Դինին, որպեսզի Մոսուլը գրավելուց հետո իրեն
պարգևի [որպես տիրույթ], իսկ Սալահ ալ-Դինը ընդունել էր, քանի որ
համակրում էր նրան։ Եվ շարժվեց Սալահ ալ-Դինը դեպի Մոսուլ, իսկ
նրա տեր Իզզ ալ-Դինը և տեղակալ Մուշահիդ ալ-Դինը մեծ զորք էին հա-
վաքել Մոսուլում։

.....

Սուրհանդակներ ուղարկվեցին Իզզ ալ-Դինին և Մուշահիդ ալ-Դինին՝
հաշտության համար։ Իզզ ալ-Դինը պահանջեց վերադարձնել այն հողերը,
որ նրանից գրավել էին, իսկ Սալահ ալ-Դինը պատասխանեց, որ այդ
դեպքում պետք է Հալեբը իրեն տրվեր։ Իզզ ալ-Դինը և Մուշահիդ ալ-Դինը
հրաժարվեցին։ Ապա [Սալահ ալ-Դինը] գլխից և համաձայնեց վերա-
դարձնել իր գրաված հողերը, պայմանով, որ [Մոսուլի տերը] հրաժար-
վեր Հալեբի տիրոջը օգնելուց։ Սակայն այս ևս չընդունվեց և Իզզ ալ-Դինը
ասաց՝ նա իմ եղբայրն է և ունի ինձ հետ դաշնագրեր ու պայմանագրեր,
որոնք չեմ կարող խախտել։ Սուրհանդակներ ուղարկեցին նաև Ատրպա-
տականի տեր Կիլիշ Արսլանը և Խլաթի տեր Շահ Արմանը, ունյն այս առ-
թիվ, սակայն գործերը չկարգավորվեցին ու հաշտություն չկայացավ։ Երբ
Սալահ ալ-Դինը տեսավ, որ Մոսուլում ոչ մի արդյունքի չի հասնում և,
բացի նեղությունից ու հոգնությունից, ոչինչ չի ստանում, և որ Սինջարում
գտնվող մոսուլական զորքերը իր զորքի ու մարդկանց ճանապարհն են
փակում, Մոսուլից օդով ղեկավարեց։

էջ 159

ԻԶԶ ԱԼ-ԴԻՆԻ ԵՎ ՇԱՀ ԱՐՄԱՆԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարվա Զուլ-Հիջջա ամսին (28 մարտ—25 ապրիլ) Մոսուլի
տեր Աթաբեկ Իզզ ալ-Դինը և Խլաթի տեր Շահ Արմանը միացան Սալահ
ալ-Դինի դեմ պայքարի համար։

Բանն այն էր, որ Իզզ ալ-Դինի սուրհանդակները եկել էին Շահ Առ-
մանի մոտ՝ օգնություն և օժանդակություն խնդրելու Սալահ ալ-Դինի դեմ։
Շահ Արմանը մի քանի սուրհանդակներ էր ուղարկել Սալահ ալ-Դինին՝ միջ-
նորդելու համար, որ հրաժարվի Մոսուլից և ընդհանրապես Իզզ ալ-Դինին

[հանգիստ թողնի]: Սակայն [Սալահ ալ-Դինը դրական] պատասխան չէր տվել և նույնիսկ կոպտել էր նրան: Վերջին տնգամ [Շահ Արմանը] ուղարկեց նրան իր մամլուք Սալահ ալ-Դին Բաքտամուրին, որը [հետագայում] Շահ Արմանից հետո տիրեց հլաթին: Սա եկավ [Սալահ ալ-Դինի] մոտ, երբ նա պաշարում էր Սինջարը և պահանջեց նրանից, որ թողնի պաշարումը և հեռանա: [Շահ Արմանը] ասել էր, որ նա առաջարկի հեռանալ, այլապես պետք է սպառնար, որ կհարձակվի ու կպատերազմի: Բաքտամուրը այս առաջարկը հաղորդեց [Սալահ ալ-Դինին], բայց սա ձգձգեց պատասխանը, հույս ունենալով, որ շուտով կգրավի [Սինջարը]: Երբ Բաքտամուրը այս տեսավ, հաղորդեց նրան սպառնալի առաջարկը և զայրացած հեռացավ, շրնդունելով նրա նվիրած զգեստները կամ ընծաները: Նա տեղեկացրեց իր տիրոջը և վախեցրեց, որ վատ կլինի, եթե ինքը անհոգ ու անտարբեր գտնվի Սալահ ալ-Դինի նկատմամբ: Շահ Արմանը շարժվեց հլաթից, որի դրսում իր վրաններն էր խփել և գնաց Մարգին, իսկ սրա տերն էր Կութբ ալ-Դին իբն Նաջմ ալ-Դին Ալբին, որը Շահ Արմանի քեռորդին էր և իզզ ալ-Դինի քեռու որդին ու [միաժամանակ] նրա աները, քանի որ իզզ ալ-Դինը մամուսնացել էր Կութբ ալ-Դինի դստեր հետ: Շահ Արմանի հետ եկել էր նաև Բաղեշի (Բաղլիս) և Արզանի տեր Դաուլատ Շահը, իսկ Աթաբեկ իզզ ալ-Դինը Մոսուլից եկավ իր զորքով, առանց բեռների:

Սալահ ալ-Դինը գրավել էր Սինջարը և այնտեղից գնացել հառան (Հառան) ու ցրել իր զորքերը: Երբ լսեց նրանց միավորման մասին, լուր ուղարկեց իր եղբորորդուն՝ Տակի ալ-Դինին, որը Համայում էր, հրավիրելով նրան: Սա արագ հասավ ու խորհուրդ տվեց հեռանալ, սակայն ուրիշներ զգուշացրին այդ բանից: Իսկ Սալահ ալ-Դինը ցանկություն ուներ հեռանալ և նա գնաց Ռաս Այն: Երբ լսեցին նրա հեռանալը, բաժանվեցին. Շահ Արմանը վերադարձավ հլաթ, պատճառաբանելով, թե ուզում է զորք հավաքել ու նորից գալ, իզզ ալ-Դինը վերադարձավ Մոսուլ, իսկ Կութբ ալ-Դինը մնաց Մարգինում: Սալահ ալ-Դինը մի քանի օր կանգ առավ Զաուզամում՝ Մարգինից ոչ հեռու:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(14 ապրիլ 1184—3 ապրիլ 1185)

էջ 166—167

ՄԱՐԴԻՆԻ ՏԻՐՈՋ ՄԱՀՎԱՆ ԵՎ ՈՐԴՈՒ ԻՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում մեռավ Մարգինի տեր Կութբ ալ-Դին իլդազի իբն Նաջմ ալ-Դին իբն Ալբի իրն Տիմուրտաշ իբն իլդազի իբն Ուրտուկը, և նրանից

հետո իշխեց որդին՝ Հուսամ ալ-Դին Բուլակ Արսլանը, որը մանուկ էր։
Նրա դաստիարակությամբ ու իշխանության տնօրինմամբ զբաղվեց նրա
հոր մամուլը Նիզամ ալ-Դին ալ-Բուկուշը։ Իսկ իլաթի տեր Շահ Արմանը,
որը Կուլթե ալ-Դինի մորեղբայրն էր, իշխեց նրա պետության մեջ և ինքն
էր, որ նշանակեց ալ-Բուկուշին՝ որդու հետ միասին։

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(4 ապրիլ 1185—23 մարտ 1186)

էջ 167—169

ՍԱԼԱՀ ԱԼ-ԴԻՆԻ ՄՈՍՈՒԼԸ ՊԱՇԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՊԱ ՇԱՀ ԱՐՄԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Սալահ ալ-Դին Յուսուֆ իբն Այյուբը երկրորդ անգամ
պաշարեց Մոսուլը։

.....

Այստեղ նա մնաց Ռաբի Բ ամսի (3 հունիս—1 հուլիս) սկզբից մինչև
ամսի վերջը։ Ապա այնտեղից նա գնաց Նփրկերտ (Մայյաֆարիկին)։

Բանն այն էր, որ իլաթի տեր Շահ Արմանը մեռավ Ռաբի Բ ամսի ին-
նին, և մահվան լուրը հասավ նույն ամսի քսանին, իսկ նա (Սալահ ալ-Դի-
նը) որոշեց գնալ ու տիրանալ [նրա երկրին], քանզի Շահ Արմանը չէր
թողել ո՛չ որդի, ո՛չ էլ որևէ մեկը իր ընտանիքից, որպեսզի իրենից հետո
տիրի երկրին։ Նրանից հետո տիրացավ նրա մամուլը, որի անունը Բաք-
տամուր էր և մականունը՝ Սայֆ ալ-Դին։ Սալահ ալ-Դինը խորհրդակ-
ցեց իր ամիրների ու վեզիրների հետ, որոնք տարբեր կարծիքներ ունեին։
Մի մասը համոզում էր, որ մնա ու շարունակի Մոսուլի պաշարումը, իսկ
ով որ դեմ էր (Մոսուլի) աթաբեկների տանը վնաս հասցնելուն, համոզում
էր, որ հեռանա, ասելով, թե իլաթի նահանգը ավելի ընդարձակ է և մեծ,
անտեր է և իշխող չկա և ահա ինքը կարող էր դառնալ նրա տերը, պահ-
պանել ու պաշտպանել, մահավանդ, որ եթե տիրեր (իլաթին), սրա (Մո-
սուլի) գրավման գործը կդյուրանար և այլն։ Իսկ (Սալահ ալ-Դինը) տա-
տանվում էր և ահա այնպես պատահեց, որ իլաթի (իլաթ) մի քանի
երևելի բնակիչներից ու ամիրներից նամակներ եկան, հրավիրելով նրան
քաղաքը գրավելու։

Նա շարժվեց Մոսուլից, իսկ այն նամակները, որ գրել էին, ծուղակ էր
և խորամանկություն։ Բանն այն է, որ Ատրպատականի, Համադանի և
այդ երկրի տեր Շամս ալ-Դին ալ-Բահլավան իբն Իլդիգուզը գալիս էր

այդ երկիրը գրավելու Դրանից առաջ նա իր աղջկան ամուսնացրել էր Շահ Արմանի հետ, թեկուզ վերջինս մեծահասակ էր, որպեսզի այդ ճանապարհով տիրի հլաթին (հիլաթ) ու նրա գավառներին: Երբ (հլաթում) լսեցին նրա մերձենալու մասին, գրեցին Սալահ ալ-Դինին, հրավիրելով, որ ստանձնի երկրի իշխանությունը, որպեսզի նրա միջոցով հաղթեն Բահլավանին, իսկ նրան էլ ետ մղեն Բահլավանի միջոցով, և երկիրը իրենց կմնար:

Շարժվեց Սալահ ալ-Դինը ու նրա առաջապահ զորքի գլխին էր հորեղբորորդին՝ Նասիր ալ-Դին Մուհամմադ իբն Շիրքուհը, Մուհաֆֆար ալ-Դին իբն Զայն ալ-Դինը և ուրիշներ: Նրանք գնացին հլաթ (հիլաթ), իջան Թուանայի³⁰⁸ մոտ՝ հլաթից ոչ հեռու, և Սալահ ալ-Դինը շարժվեց դեպի Նփրկերտ: Իսկ Բահլավանը գնաց հլաթ (հիլաթ) և գնում էին սուրհանդակները հլաթի բնակչության ու նրա, ինչպես նաև [հլաթի] ու Սալահ ալ-Դինի միջև: Վերջապես նրանք (հլաթի ժողովուրդը) իրենց գործերը կարգավորեցին Բահլավանի հետ և դարձան նրան կողմնակից ու հպատակության խութբա տվեցին:

էջ 169

ՍԱԼԱՀ ԱԼ-ԴԻՆԻ՝ ՆՓՐԿԵՐՏԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ Սալահ ալ-Դինը գալիս էր հլաթ, իր ճանապարհը թեքեց դեպի Նփրկերտ, ցանկանալով գրավել այն, քանզի նրա տերը՝ Մարդինի տեր Կութբ ալ-Դինը, ինչպես հիշեցինք, մահացել էր և իշխում էր նրա մանկահասակ որդին: [Այս երկիրը] Շահ Արմանի և նրա զորքի իշխանության տակ էր և երբ վերջինս մահացավ, Սալահ ալ-Դինը ցանկություն ունեցավ գրավել այն:

Երբ տեղ հասավ, տեսավ, որ [քաղաքը] լի է ռազմիկներով և այնտեղ էր հանգուցյալ Կութբ ալ-Դինի կինը իր աղջիկների հետ, իսկ սա Հիսն [Քայֆայի] տիրոջ՝ Նուր ալ-Դին Մուհամմադի քույրն էր: Սալահ ալ-Դինը պաշարեց այն Զումադա Ա ամսի (31 հուլիս—29 օգոստոս) սկզբին: [Դիմադրող] զորքի հրամանատարն էր մի ամիր, որի անունն էր Բուրունկուշ, իսկ մականունը՝ Ասադ ալ-Դին: Սա քաջարի էր և լավ էր պաշտպանում քաղաքը: Կոիվը սաստկացավ, գործի դրվեցին քարանետ (մանջանիկ) ու խորտակիչ մեքենաներ (առադատ), սակայն Սալահ ալ-Դինը իր նպատակին չհասավ:

Երբ այս տեսավ, հրաժարվեց բռնի ուժից ու պատերազմից և դիմեց խորամանկության: Նամակ ուղարկեց Կութբ ալ-Դինի կնոջը, որ քաղաքում էր, ասելով, որ Ասադ ալ-Դին Բուրունկուշը համաձայնել է քաղաքը մեղ

հանձնել, իսկ մենք կճանաչենք քեզ որպես եղբորդ՝ Նուր ալ-Դինի, իրավունքների [ժառանգորդ] նրա մահվանից հետո և կուզենանք, որ դու բաժին ունենաս այդ գործում: Իսկ ես քո աղջիկներին կամուսնացնեմ իմ որդիների հետ և, այսպիսով, նփրկեցիք և մյուս վայրերը կմնան քո իշխանության տակ: [Միաժամանակ] գրեց Ասադին՝ իմաց տալով, որ հաթունը (քաղաքի տիրուհին) արդեն հակված է մերձենալու սուլթանին (Սալահ ալ-Դինին), իսկ հլաթի [մեծամեծները] գրել են իրեն, թե պատրաստ են հանձնվելու, ուստի լավ մտածիր: Պատահաբար [այդ ժամանակ] հլաթից սուրհանդակ հասավ [տեղեկացնելով], թե պատրաստ են հպատակվելու և հրավիրում էին նրան (Սալահ ալ-Դինին), ինչպես մի ժամանակ արել էին: Սալահ ալ-Դինը հրամայեց սուրհանդակին մտնել նփրկերտ: Վերջինս ասաց Ասադին՝ դու ո՞ւմ համար ես կռվում, ահա ես եկել եմ հլաթը հանձնելու Սալահ ալ-Դինին: Սրա ուժերը թուլացան և մարդ ուղարկեց [Սալահ ալ-Դինին], առաջարկելով իր կալվածները և հարստությունը: Նա ընդունեց և քաղաքը հանձնվեց Ջումազա Ա ամսին (31 հուլիս—29 օգոստոս): Նրա որդիներից մի քանիսը ամուսնացան հաթունի (տիրուհու) մի քանի աղջիկների հետ, իսկ նրան տրվեց Հատտախ ամրոցը, որպեսզի ինքը և մնացած աղջիկները այնտեղ ապրեն:

էջ 170—171

**ՋԱԶԻՐԱՅԻՄ ԵՎ ՄՈՍՈՒԼՈՒՄ ԹՈՒՐԲՄԵՆՆԵՐԻ ՈՒ ՔՐԴԵՐԻ
ԽՈՒՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Այդ տարում խռովություն սկսեց թուրքմենների ու քրդերի միջև Ջաղիրայում, Մոսուլում, Դիար Բաքրում, հլաթում, Ասորիքում, Շահր-լուրում և Ատրպատականում: Անհաշիվ մարդ սպանվեց, մի քանի տարի տևեց, ճանապարհները կտրվեցին, մարդկանց ունեցվածքը կողոպտվեց, արյուն հոսեց:

Բանն այն է, որ մի թուրքմեն ամուսնացել էր մի թուրքմեն կնոջ հետ և [իր տան] ճանապարհն անցնում էր Անձևացիքի (Ջավազան) քրդերի մի ամրոցի մոտով: Եկան բնակիչները և թուրքմեններից պահանջեցին, որ իրենք ևս [մասնակցեն] հարսանեկան խնջույքին, սակայն սրանք չընդունեցին: Նրանք սկսեցին վիճել և բանը հասավ կռվի: Բերդի տերը իջավ և սպանեց փեսային: Սկսվեց խռովությունը, թուրքմենները կռվի ելան և քրդերից մեծ բազմություն կոտորեցին: Ոտքի ելան քրդերը և նրանք ևս թուրքմեններին կոտորեցին: Չարիքը տարածվեց ու շարունակվեց: Վերջապես, Մուշահիդ ալ-Դին Կայմազն իր մոտ հրավիրեց քրդերի ու թուրքմեն-

ների զլիսավորներին, հաշտեցրեց, պատվական պատմութեաններ, զդեստներ և այլ բաներ նվիրեց, շատ դրամ պարդեց: Այսպիսով, վերջ դտավ խռովութիւնը և ալլահն ազատեց [երկիրն] այդ շարիքից և վերստին տիրեց վստահութիւնն ու ապահովութիւնը:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(13 մարտ 1187—1 մարտ 1188)

էջ 188

ԽՈՌՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՅԱՏ ԼԵՌԱՆ ՄՈՏ ԵՎ ԻՐՆ ՄՈՒԿԱԴԴԱՄԻ
ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս տարում Արաֆատի տոնի օրը սպանվեց Շամս ալ-Դին Մուհամմադ իբն Աբդ ալ-Մալիքը, որը ծանոթ է իբն Մուկադդամ անվամբ և Սալահ ալ-Դինի հայտնի ամիրներից էր:

Նա սպանվեց հետևյալ պարագաներում: Երբ մահմեդականները նվաճեցին Երուսաղեմը (բայտ ալ-Մակդիս), նա Սալահ ալ-Դինից խնդրեց, որ ուխտադնացութիւն կազմակերպի Երուսաղեմ:

Նրան թույլատրվեց և այդ տարին ուխտավորներ հավաքվեցին Ասորիքից մեծ բազմությամբ, Իրաքից, Մոսուլից, Ջազիրայից, Խլաթից, հոռոմների երկրից, Եդիպտոսից և այլ վայրերից, որպեսզի միաժամանակ այցելեն Երուսաղեմ ու Մեքքա:

Իբն Մուկադդամը ուխտադնացության վերակացու նշանակվեց:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(2 մարտ 1188—18 փետրվար 1189)

էջ 195

ԲԱՂՐԱՍԻ ԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Ապա [Սալահ ալ-Դինը] Դարբ Սաքից (Դարբսաք) դնաց Բաղրաս բերդը ու պաշարեց: Այն պաշարելու մասին տարբեր կարծիքներ կային իր զորականների մեջ: Ոմանք համաձայն էին, իսկ ոմանք էլ՝ դեմ: [Վերջիններս] ասում էին, թե ամուր բերդ է և անառիկ ամրոց, մոտ է Անտիոքին (Անթաքիա) և տարբերութիւն չկա, սա կամ Անտիոքը պաշարելու մեջ: [Բոլոր դեպքերում] անհրաժեշտ է, որ զորքերի մեծամասնութիւնը լինի Անտիոքի դիմաց հսկողի (յազաք)²⁰⁹ դերում և քանի որ այդպիսին է դրութիւնը, ապա քիչ կլինի կռիւղների թիւը և անկարելի կլինի այնտեղ հասնել: Սակայն աղոթքով ապավինելով բարձրյալն ալլահին, [Սալահ ալ-

Դիներ] շարժվեց և զորքերի մեծ մասը դարձրեց հսկող (յաղաք)՝ Անտիոքի դիմաց: Նրանք ասպատակում էին շրջակա գավառները, սակայն զգույշ էին, վախենալով Անտիոքի բնակիչներից, քանի որ շատ մոտ էր: Սալահ ալ-Դինը մի խումբ ձիավորների հետ կովում էր (Բաղրաս) ամրոցի առջև. նա քարանետ մեքենաներ դրեց, սակայն չկարողացավ վնասել, քանի որ [բերդը] շատ բարձր էր: Երբ բերդի գրավումը ուշացավ, գերակշռեց այն տեսակետը, թե գրավելը անկարելի է, և մահմեդականները նեղվեցին իրենց մոտ ջրի պակասությունից: Սակայն Սալահ ալ-Դինը հրամայեց ջրավազաններ կառուցել ու ջուրը բերել լցնել, և այսպիսով, նրանց գործը թեթևացավ:

Այսպիսին էր դրությունը, երբ ամրոցի դարպասը բացվեց ու դուրս եկավ մի մարդ, որը երաշխավորագիր (աման) էր խնդրում: Նրան ընդառաջեցին և թույլ տրվեց մոտենալ: Նա մոտեցավ ու խնդրեց բերդում գրտնըվողներին երաշխավորագիր տալ, մինչև որ բերդը հանձնեն այնտեղ եղած ամեն ինչով՝ ըստ Դարբ Սաքի անձնատվության պայմանների: [Սալահ ալ-Դինը] համաձայնեց, իսկ պատգամավորը վերադարձավ, իր հետ տանելով մահմեդական գրոշները, որոնք բարձրացվեցին ամրոցի կատարին: Ներսում եղածները իջան, իսկ մահմեդականները ստանձնեցին բերդը նրանում եղած գանձերով, հարստություն մեծացնելով: Սալահ ալ-Դինը հրամայեց քանդել [բերդը] և իրոք քանդեցին: Իսկ սա մեծ վնաս էր մահմեդականներին, քանզի Հայոց տեր (Սահիբ ալ-Արման) Լևոնի որդին (Իբն Լայուն), որը սահմանակից էր, իր երկրից եկավ, նորոգեց նրա կառուցվածքը, կատարելագործեց և այնտեղ նշանակեց իր զինվորների մի խումբ, որն այնտեղից ասպատակում էր դրացի երկիրը և սրանից շատ տուժեց Հալեբի շրջակայքի ժողովուրդը: Այն մինչև օրս նրանց (հայերի) ձեռքում է:

էջ 195

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ԱՆՏԻՈՔԻ ՏԻՐՈՋ ՄԻՋԵՎ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ Սալահ ալ-Դինը գրավեց Բաղրասը, որոշեց գնալ Անտիոք ու պաշարել այն: Նրա տեր Բոհեմունդը (Բիմունգ) վախեցավ այդ բանից և [մարդ] ուղարկեց Սալահ ալ-Դինի մոտ ու հաշտություն խնդրեց, խոստանալով իր մոտ եղած բոլոր մահմեդական գերիներին արձակել: Սալահ ալ-Դինը իր մեծամեծների հետ խորհրդակցեց և մեծ մասը խորհուրդ տվեց համաձայնել, որպեսզի զինվորները վերադառնալին, հանգստանալին ու կարգավորելին իրենց գործերը: Նա համաձայնեց և հաշտություն կնքեց

ութ ամսվա համար, որի սկիզբը Տիշրին Ա (հոկտեմբեր) ամսի³¹⁰ մեկն էր, իսկ վերջը Այյար (մայիս) ամսի վերջին օրը: Նա իր պատգամավորին ուղարկեց Անտիոքի տիրոջ մոտ, որպեսզի նրան երդվել տա և նրա մոտ եղած գերիներին ազատի:

Այդ ժամանակ Անտիոքի տերը ֆրանկների մոտ ամենաբարձր հեղինակություն և ամենամեծ տիրույթներն ուներ: Ֆրանկները Կոմսի (Կոմս) մահվանից հետո նրան էին հանձնել Տրիպոլիսը (Թարաբուլուս) իր բոլոր գավառներով, բացի արգեն ունեցածից, քանզի Կոմսը տղա զավակ չունեի, և երբ [Բոհեմունդին] հանձնեցին Տրիպոլիսը, սա իր ավագ որդուն այնտեղ տեղակալ նշանակեց:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(8 փետրվար 1190—28 հունվար 1191)

էջ 207

ԳԵՐՄԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԻՒ ԱՍՈՐԻՔ ՀԱՍՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Այգ տարում գերմանների (ալմանների) թագավորը³¹¹ դուրս եկավ իր երկրից: Սրանք ֆրանկների մի տեսակն են, ամենաբազմամարդը և ամենաուժեղը նրանց մեջ: Նրան (գերմանների թագավորին) հուզում էր մահամեղականների Սուրբ քաղաքը (ալ-Բալտ ալ-Մուկադդաս) գրավելը: Նա հավաքեց իր զորքը, կարիքները ապահովեց և իր երկրից շարժվեց դեպի Կ. Պոլիս (Կոսթանթինիյա): Ռումի. թագավորը սուրհանդակ ուղարկեց Սալահ ալ-Ղիլին՝ իմաց տալով և նշելով, որ ինքը նրան (գերմանների թագավորին) չի թողնելու, որ իր երկրից անցնի: Բայց երբ գերմանների թագավորը հասավ Կ. Պոլիս, սրա թագավորը չկարողացավ արգելել նրան անցնելու, քանի որ գերմանները մեծ բազմությամբ էին: Սակայն արգելեց նրանց պարեն տալ և թույլ չտվեց, որ իր հպատակներից որևէ մեկը նրանց ուզածը տա:

Սրանք պարենի ու մթերքի մեծ պակաս ունեցան, մինչև որ անցան Կ. Պոլսի ծոցը և մտան իսլամի երկիրը, որը Կիլիչ Արսլան իրն Մասուդ իրն Կիլիչ Արսլան իրն Կուտուլմիշ իրն Սալջուկի թագավորությունն էր: Երբ նրա սահմանը հասան, նրանց դեմ դուրս եկան թուրքմենները և հետապնդում ու կոտորում էին նրանց, հենց որ միայնակ էին գտնում, կողոպտում, ինչքան որ կարող են: Ժամանակը ձմեռ էր և ցուրտը այս երկրում շատ խիստ է լինում, իսկ ձյունը կուտակվում է: Ցուրտը, անոթությունը և թուրքմենները կոտորեցին նրանց և թիվը պակասեց (նրանք նվազեցին):

Երբ Իկոնիա (Կոնստանդնուպոլս) քաղաքին մերձեցան, նրանց դեմ դուրս եկավ Կութբ ալ-Դին Մալիքշահ իբն Կիլիշ Արսլան թագավորը, որ կանգնեցնի նրանց, սակայն չկարողացավ ու վերադարձավ Իկոնիա՝ հոր մոտ։ Այս որդին իր հորը չեզոքացրել էր [իշխանությունից], և որդիները տարածվեցին երկրում ու ամեն մեկը մի կողմին տիրացավ։ Երբ Կութբ ալ-Դինը վերադարձավ նրանց (գերմանների) մոտից, վերջիններս նրա ետևից եկան ու հասան Իկոնիա և բանակ դրեցին։ Նրանք նվեր ուղարկեցին Կիլիշ Արսլանին և ասացին նրան՝ մենք քո երկիրը չէ, որ եկել ենք և այն չէ, որ ցանկանում ենք, այլ մեր նպատակն է գնալ Սուրբ քաղաքը (ալ-Բայտ ալ-Մուկադդաս)։ Նրանք խնդրեցին, որ թույլ տա իր հպատակներին, որ դուրս բերեն ինչ որ իրենց պետք է՝ ուտեստեղեն և այլ բաներ։ [Կիլիշ Արսլանը] թույլատրեց և նրանք ստացան ինչ որ կամենում էին, կշտացան, պաշար հավաքեցին ու շարժվեցին առաջ։ Նրանք պահանջեցին Կութբ ալ-Դինից, որ իր հպատակներին հրամայի իրենց չհետապնդել, ինչպես նաև իրենց հանձնել որոշ ամիրների՝ որպես պատանդ։ Սա վախենալով նրանցից (գերմաններից), հանձնեց քսանից ավելի ամիրների, որոնց ատում էր, և նրանք տարան։ Սակայն ավազակները և ուրիշներ չհրաժարվեցին նրանց հետապնդելուց ու նեղելուց, իսկ գերմանների թագավորը բռնեց նրանց ու շղթայեց և ոմանք մեռան գերություն մեջ, ոմանք էլ փրկագանով ազատվեցին։

Առաջ խաղաց գերմանների թագավորը, մինչև որ հասավ Հայոց երկիրը (Բիլագ ալ-Արման), որի տերն էր Լևոնի որդի Ստեփաննի որդի Լևոնը (Լաֆուն իբն Իսթիֆանա իբն Լայուն)։ Սա պարենավորեց նրանց մրթերքով ու անասնակերով, իր երկրում տեղ տվեց և հպատակություն հայտնեց։ Ապա շարժվեցին դեպի Անտիոք և նրանց ճանապարհին կար մի գետ, որի մոտ իջան նրանք։ Թագավորը մտավ գետը լողանալու և խեղդվեց այնպիսի տեղում, ուր ջուրը մարդու մեջքին չի հասնի և ալլահը ազատեց (մեզ) նրա շարիքից։

Նրա մոտ էր որդին, որը դարձավ թագավոր և քայլեց դեպի Անտիոք²²։ Նրան ընկերակցողները այլևս չէին ենթարկվում։ Ոմանք նախընտրեցին վերադառնալ իրենց երկիրը և թողեցին նրան (թագավորին), ոմանք կամեցան նրա եղբորը թագավորեցնել և նույնպես վերադարձան, իսկ ուրիշներ, որ նրան կողմնակից էին, եկան միասին և նրանց թիվը քառասուն հազարից ավելի էր։ Սրանց մեջ համաճարակ ու մահ տարածվեց և երբ նրանք Անտիոք հասան, կարծես գերեզմանից դուրս եկած լինեին։ Անտիոքի տերը նեղվեց նրանցից և հեշտացրեց նրանց երթը դեպի Ակրան (Աքքա) պաշարող ֆրանկների մոտ։ Նրանք անցան Զաբալա, Լաոդիկե (Լազակիյա) և այլ վայրերից, որոնք մահմեդականները գրավել էին։ Նրանց դեմ դուրս եկան Հալեբի և այլ վայրերի զորքեր, շատերին գերեցին,

որոնց մեծ մասը մեռավ: Նրանք հասան Տրիպոլիս (Թարաբուլուս), մի քանի օր մնացին, սակայն մահացումներն այնքան շատացան, որ միայն մոտավորապես հազար մարդ մնաց: Ապա ծովի ճամփով գնացին Ակրա-
տում (Աքքա) գտնվող ֆրանկների մոտ: Երբ հասան, իմացան, թե (վերջին-
ներս) ինչ փորձանքներից էին անցել ճանապարհին և ինչպիսի տարակար-
ծությունների մեջ էին, իրենք էլ վերադարձան իրենց երկիրը, սակայն
նրանց նավերը ընկղմվեցին և ոչ ոք չփրկվեց:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(29 հունվար 1191—17 հունվար 1192)

էջ 212—213

ՏԱԿԻ ԱԼ-ԴԻՆԻ՝ ԵՓՐԱՏԸ ԱՆՑՆԵԼԸ, ԽԱՌԱՆ ՈՒ ԶԱԶԻՐԱՅԻ ԱՅԼ ՎԱՅՐԵՐԻՆ
ՏԻՐԱՆԱԼԸ, ԵՐԹԸ ԴԵՊԻ ԽԼԱԹ ՈՒ ՄԱՀԸ

Այդ տարում՝ Սաֆար ամսին (28 փետրվար—28 մարտ), Տակի ալ-Դինը Ասորիքից գնաց Զազիրայի հառան (Հառան), Եդեսիա (Ռուհա) քաղաքները, որոնք իր հորեղբայր Սալահ ալ-Դինը Մուզաֆֆար ալ-Դինից առնելուց հետո, պարգևել էր նրան որպես տիրույթ (իկթա), բացի այն տիրույթներից, որ արդեն ուներ Ասորիքում: Նա նրա (Սալահ ալ-Դինի) հետ որոշեց, որ երկիրը ավատ (իկթա) տրվի ռազմիկներին և նրանք իր հետ վերադառնան, որպեսզի նրանց միջոցով կարողանա ճնշել ֆրանկներին: Երբ անցավ Եփրատը և երկրի վիճակը կարգավորվեց, գնաց Նփեր-կերտ, որն իրենն էր: Սակայն երբ այնտեղ հասավ, իր մեջ նորից ցանկու-թյուն առաջացավ դրացի երկրները ևս նվաճելու: Նա գնաց Հանի քաղա-քը, որը Դիար Բաքրի մեջ էր, պաշարեց և իր յոթ հարյուր ձիավորներով տիրեց:

Երբ Խլաթի տեր Սայֆ ալ-Դին Բաքտամուրը լսեց նրա՝ Հանին գրա-վելը, զորք հավաքեց ու գնաց նրա դեմ: Նրա զորքը հասավ չորս հազար ձիավորի: Սակայն երբ ընդհարվեցին, Խլաթի զորքը չդիմացավ Տակի ալ-Դինի [զորքերին] և փախուստի դիմեց, իսկ Տակի ալ-Դինը հետապնդեց նրան (Խլաթի տիրոջ) ու մտավ նրա երկիրը: [Մինչ այդ] Բաքտա-մուրը բռնել էր իր տիրոջ՝ Շահ Արմանի վեզիր Մաջդ ալ-Դին իբն Ռաշիկին ու բանտարկել մի բերդում, սակայն երբ պարտվեց, գրեց բերդապահին՝ հրամայելով սպանել իբն Ռաշիկին: Սուրհանգակը հասավ այն ժամանակ, երբ Տակի ալ-Դինը պաշարել էր բերդը: Վերջինս վերցրեց նամակը, տի-րեց բերդին և ազատ արձակեց իրն Ռաշիկին: Ապա գնաց Խլաթ ու պաշա-

րեց, սակայն, բավարար բազմությամբ զորք շունենալով, չկարողացավ իր նպատակին հասնել և դարձավ դեպի Մանազկերտ, որը պաշարեց. բնակիչներին նեղեց ու երկար մնաց: Երբ [բնակիչները] նեղվեցին, նրանից մի քանի օր ժամկետ խնդրեցին և նա համաձայնեց: Սակայն Տակի ալ-Դինը հիվանդացավ ու մեռավ նախքան ժամկետի լրանալը՝ երկու օր առաջ, իսկ նրա զորքը ցրվեց: Նրա որդին ու մերձավորները նրան մեռած վիճակում տարան Նփրկերտ, իսկ Բաքտամուրը վերականգնեց իր դիրքը, ուժեղացավ և իշխանությունը կայունացավ, մինչդեռ ոչնչացման սպառնալիքի առջև էր: Այս այն պարագան էր, երբ ասվում է «թեթևացում՝ գառնությունից հետո», քանզի իբն Ռաշիկը մահվանից ազատվեց, իսկ Բաքտամուրը գերի ընկնելուց փրկվեց:

էջ 218

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այտ տարում Ռումի տեր Մուիզզ ալ-Դին Կայսար Շահ իբն Կիլիշ Արսլանը Ռամադան ամսին (22 սեպտեմբեր—21 հոկտեմբեր) եկավ Սալահ ալ-Դինի մոտ:

Նրա գալստյան պատճառն այն էր, որ հայրը՝ Իզզ ալ-Դին Կիլիշ Արսլանը, իր թագավորությունը որդիների միջև բաժանելիս, այս որդուն տվել էր Մալաթիան, իսկ Կութբ ալ-Դին Մալիք Շահ որդուն՝ Սեբաստիան: Սակայն Կութբ ալ-Դինը հարձակվել էր հոր վրա, ձերբակալել, խեղադարձադատարարել ու խլել նրա իշխանությունը: Նա [որոշել էր] ստիպել նրան (հորը) վերցնել Մալաթիան իր եղբորից և իրեն հանձնել:

Մուիզզ ալ-Դինը վախեցած գնաց Սալահ ալ-Դինի մոտ ապավինելով ու ապաստանելով նրան: Սալահ ալ-Դինը նրան պատվեց և ամուսնացրեց իր եղբոր՝ ալ-Մալիք ալ-Ագիլի, աղջկա հետ: [Այն ժամանակ] Կութբ ալ-Դինը հրաժարվեց իր ժրագրից, իսկ Մուիզզ ալ-Դինը վերադարձավ Մալաթիա Զուլ-Կադա ամսին (20 նոյեմբեր—19 դեկտեմբեր):

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(18 հունվար 1192—6 հունվար 1193)

էջ 220

ԱՅԴԱԼԻ ԵՎ ԱԴԻԼԻ ԶԱԶԻՐԱ ԳՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արդեն հիշել ենք Տակի ալ-Դին Ումար իբն Սալահ ալ-Դինի մահվան և նրա որդու՝ Նասիր ալ-Դին Մուհամմադի՝ Զազիրան գրավելու մասին: Երբ սա գրավեց, լուր ուղարկեց Սալահ ալ-Դինին՝ խնդրելով հաստա-

տել իր իշխանութիւնը այդ, ինչպես նաև Ասորիքում իր հոր ունեցած երկրամասերի վրա: Սակայն Սալահ ալ-Դինը հարմար շտեմով, որ այդքան երկիր հանձնվի մի տղայի և շընդունեց:

Սա որոշեց այլևս չենթարկվել [Սալահ ալ-Դինին], քանի որ վերջինս զբաղված էր ֆրանկների հետ: Եվ ահա, ալ-Աֆդալ Ալի իբն Սալահ ալ-Դինը խնդրեց իր հորից, որ իրեն, որպես տիրույթ, պարզևի այն, ինչ որ Տակի ալ-Դինը ուներ, բացի Դամասկոսից (Դիմաշկ) և նա (Սալահ ալ-Դինը) ընդառաջեց նրան ու հրամայեց դնալ [իր նոր կալվածները]: Սա իր շորքով եկավ Հալեբ, իսկ Սալահ ալ-Դինը դրեց արևելյան երկրամասերի տերերին, ինչպես Մոսուլի, Սինջարի, Ջազիրայի, Դիար Բաքրի և այլ վայրերի տերերին, հրամայելով զորք տալ իր որդուն՝ Աֆդալին:

Երբ Տակի ալ-Դինի որդին այս բոլորը տեսավ, իմացավ, որ ինքը անդոր է նրանց դիմաց և նամակ դրեց իր հոր հորեղբորը՝ ալ-Մալիք ալ-Ադիլին³¹³, խնդրելով շտկել իր հարաբերութիւնները Սալահ ալ-Դինի հետ: Սա համաձայնեցրեց Սալահ ալ-Դինի հետ, հարաբերութիւնները բարելավեց և որոշեցին, որ այն, ինչ նրա (նասիր ալ-Դինի) հորն էր պատկանում Ասորիքում, նրան մնա, իսկ Ջազիրան վերցվի նրանից: Այդպես էլ արվեց: Այսպիսով, Ջազիրան, այսինքն Խառանը, Եդեսիան, Սամոսատը, Նփրկերտը և Հանին Սալահ ալ-Դինը տվեց Ադիլին և նրան ուղարկեց Տակի ալ-Դինի որդու մոտ, որպեսզի նրանից ստանա այդ երկիրը, նրան էլ ուղարկի իր մոտ, իսկ Աֆդալին՝ որտեղ հանդիպի, ետ վերադարձնի:

Հինգ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆԻՆ ԹՎԱԿԱՆ

(7 հունվար—26 դեկտեմբեր 1193)

ՍԱԼԱՀ ԱԼ-ԴԻՆԻ ՄԱՀՎԱՆ ՈՒ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ

էջ 225

Նախքան հիվանդանալը նա իր մոտ կանչեց որդուն՝ ալ-Աֆդալ Ալիին և եղբորը ալ-Մալիք ալ-Ադիլ Աբու Բաքրին և խորհուրդ հարցրեց, թե ինչ անի, ասելով՝ ֆրանկների հետ մեր գործերը վերջացրել ենք և այս կողմերում մեզ զբաղեցնող չկա: Ո՞ր կողմը հարձակվենք: Եղբայրը՝ Ադիլը, խորհուրդ տվեց հարձակվել Խլաթի վրա, քանզի նա խոստացել էր նրան պարգևել, եթե նվաճի: Որդին՝ Աֆդալը, խորհուրդ տվեց հարձակվել Ռումի երկիրը, նրա այն մասը, որ Կիզիլ Արսլանի որդիների ձեռքում է գտնվում, ավելացնելով՝ թեև այդ երկիրը ունի շատ քաղաքներ, զորք, ունեցվածք, այսուհանդերձ դյուրին կնվաճվի: Միաժամանակ ցամաքի կողմից ֆրանկների ճանապարհի վրա է և եթե գրավենք, նրանց թույլ չենք տա միջով անցնել:

Ասաց [Սալահ ալ-Դինը] երկուսդ էլ սխալ եք ու համարձակությունից զուրկ: Ես կգամ նախ հռոմեացիների երկիրը, իսկ դու, ասաց եղբորը, կվերցնես իմ որդիներից մի քանիսին և իմ զորքի մի մասը ու կգնաս հլաթ և ես երբ վերջացնեմ գործերս հռոմեացիների երկրում, կգամ քեզ մոտ և կշարժվենք դեպի Ատրպատական ու կմտնենք Պարսից (Աջամ) երկիրը, ուր մեզ գիմագրող չկա:

Ապա իր եղբորը՝ Ադիլին, հրամայեց գնալ Քարաք (ամրոցը), որն իրեն էր պատկանում և ասաց՝ պատրաստվիր ու սպասիր երթի: Սակայն, երբ վերջինս մեկնեց Քարաք, Սալահ ալ-Դինը հիվանդացավ ու մեռավ:

էջ 228—229

ԽԱԼԹԻ ՏԵՐ ԲԱՔՏԱՄՈՒՐԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Զումագա Ա ամսին (5 մայիս—4 հունիս), սպանվեց Սալահ ալ-Դին Բաքտամուրը՝ հլաթի տերը: Նրա սպանության և Սալահ ալ-Դինի մահվան միջև երկու ամիս կար: Նա չափազանց ուրախություն ցուցաբերեց Սալահ ալ-Դինի մահվան առթիվ, սակայն ալլահը նրան երկար ապրել չտվեց: Երբ Սալահ ալ-Դինի մահը լսեց, այնչափ ուրախացավ, որ մի գահ պատրաստեց, վրան նստեց և իրեն հռչակեց ալ-Սուլթան ալ-Մուադդամ Սալահ ալ-Դին: Նրա պատվանունն էր Սալահ ալ-Դին, սակայն փոխելով իրեն անվանեց Աբդ ալ-Ազիզ: Նրա մոտ խանգարում ու շփոթություն առաջացավ և պատրաստվեց գնալ արշավանքի նփրկերտ (Մայյաֆարիկին), այն պաշարելու նպատակով, սակայն մահը վրա հասավ:

Նրա սպանության պատճառն այն էր, որ Զահիր ալ-Դին Շահ Արմանի մամուլքներից մեկը՝ Հազարգինարին, ուժեղացել էր, շատ կողմնակիցներ ուներ և ամուսնացել էր Բաքտամուրի աղջկա հետ: Եվ ահա նա ցանկացավ իշխանությանը տիրանալ և մարդ ուղարկելով սպանել տվեց նրան: Նրա սպանությունից հետո հլաթի քաղաքների վրա իշխեց Հազարգինարին:

Բաքտամուրը ողորմած էր խստակյացներին (սուֆի)¹¹:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(23 հոկտեմբեր 1199—11 հոկտեմբեր 1200)

էջ 249—250

ԱԼ-ՄԱԼԻԲ ԱԼ-ԱԴԻԼԻ ԵԳԻՊՏՈՍԻՆ ՏԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եկավ [Սալահ ալ-Դինի եղբայր] Ադիլը և պաշարեց Կահիրեն (ալ-Կահիրա), իսկ [Սալահ ալ-Դինի որդի] Աֆդալը հավաքեց ամիրներին ու

խորհրդակցեց, բայց տեսնելով նրանց թուլութիւնը, դեսպան ուղարկեց իր հորեղբորը, հաշտութիւն կնքելու և երկիրը (Եգիպտոս) նրան հանձնելու համար, փոխարենը տիրույթներ պահանջելով: Նա պահանջեց Դամասկոսը, սակայն պատասխան չստացավ, պահանջեց Խառանն ու Եդեսիան, նույնպես պատասխան չստացավ, ապա պահանջեց Նփրկերտը, Հանին ու Ծապաղ ջուրը (Ջաբալ ջուր) և հորեղբայրը համաձայնեց ու հաշտութիւն կնքեցին:

Աֆղալը Կահիրեից (Եգիպտոսից) դուրս եկավ և Ռաբի Բ ամսի 18-ի (փետրվար ?) շաբաթ օրվա գիշերը, Ագիլի հետ հանդիպելուց հետո, գնաց Սարխադ [Դամասկոսի մոտ]: Ագիլը մտավ Կահիրե նույն Ռաբի Բ ամսի 18-ի շաբաթ օրվա ցերեկը:

Երբ Աֆղալը հասավ Սարխադ, մարդ ուղարկեց վերցնելու համար Նփրկերտը, Հանին ու Ծապաղ ջուրը, սակայն Նաջմ ալ-Դին Այյուբ իբն ալ-Մալիք ալ-Ագիլը հրաժարվեց հանձնել Նփրկերտը, իսկ մյուսները տվեց:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՍՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(12 հոկտեմբեր 1200—30 սեպտեմբեր 1201)

էջ 255

ՌՈՒՔՆ ԱԼ-ԴԻՆԻ ՄԱԼԱԹԻԱՆ ԻՐ ԵՂԲՈՐԻՑ [ԽԵԼՈՒ] ԵՎ ԿԱՐՆՈ ՔԱՂԱՔԸ
ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Ռամադան ամսին (5 հունիս—5 հուլիս), Ռուքն ալ-Դին Սուլայման իբն Կիլիշ Արսլանը գրավեց Մալաթիա քաղաքը, որն իր եղբոր՝ Մուիզզ ալ-Դին Կայսար Շահին, էր պատկանում: Նա գնաց ու բաղում օրեր պաշարելուց հետո գրավեց և այնտեղից գնաց Կարնո քաղաք (Արդան ալ-Ռում), որը պատկանում էր ալ-Մալիք իբն Մուհամմադ իբն Սալդուկի տղային: Նրա տոհմը երկար ժամանակ տիրում էր Կարնո քաղաքին: Երբ այնտեղ գնաց ու մոտեցավ, նրա տերը, վստահելով նրան, դուրս եկավ հաշտութիւն կնքելու՝ Ռուքն ալ-Դինի ուղած պայմաններով, սակայն վերջինս ձերբակալեց նրան, իր մոտ բանտարկեց ու գրավեց երկիրը: Սա վերջինը եղավ իր տոհմի այն մարդկանցից, որոնք իշխեցին [այդ քաղաքում]:

ԱՄԻԴԻ ՏԵՐ ՍՈՒԿՄԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԵՎ ԵՂԲՈՐԻ ՄԱՀՄՈՒԴԻ,
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում մեռավ Ամիդի և Հիսն Քայֆայի տեր Կուլթ ալ-Դին Սուկման իբն Մուհամմադ իբն Կարա Արսլան իբն Դաուդ իբն Սուկմանը: Նա մեռավ ընկնելով պատշգամբից (ջաուսակ), որը նրա Հիսն Քայֆա բերդի դրսում էր: Նա իր եղբորը (Մահմուդին) սաստիկ ատում էր ու խորշում նրանից: Նրան հեռացրել ու տարել էր Հիսն Մանսուր՝ իր տիրույթների ծայրամասում: Նա Այաս անունով մի մամլուքի ամուսնացրել էր իր քրոջ հետ, և սաստիկ սիրում էր նրան և իր իշխանության ժառանգորդ էր դարձրել:

Երբ մեռավ, իրենից հետո մի քանի օր իշխեց [մամլուքը] և սկսեց սպառնալ Կուլթ ալ-Դինի վեզիրին ու պետության այլ ամիրների: Սրանք դադարեցին լուր ուղարկեցին եղբորը՝ Մահմուդին, հրավիրելով իրենց մոտ: Նա ջանասիրությամբ ճանապարհ ընկավ, հասավ Ամիդ, որտեղ իրենից առաջ իր եղբոր մամլուք Այասն էր հասել, սակայն վերջինս չփորձեց դիմադրել: Մահմուդը ստանձնեց ամբողջ երկիրը, իշխեց ու բանտարկեց մամլուքին: Որոշ ժամանակ բանտում մնալուց հետո Ռումի տերը միջնորդեց նրա համար, և սա բանտից արձակվեց ու գնաց Ռում, դառնալով նրա ամիրներից մեկը:

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(20 սեպտեմբեր 1202 — 9 սեպտեմբեր 1203)

ՎՐԱՑԻՆԵՐԻ ԴՈՒՆՆ³¹⁵ ՔԱՂԱՔԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում վրացիք (քուրջ)³¹⁶ գրավեցին Դուին քաղաքը, որն Ատրոպատականում էր, կողոպտեցին, անկարգություններ արեցին, բնակիչներից շատերին կոտորեցին: Սա, ինչպես նաև ամբողջ Ատրպատականը (Ադարբայջան), պատկանում էր ամիր Աբու Բաքր իբն Բահլամանին, որն, ըստ իր սովորության, գիշեր-ցերեկ զբաղված էր խմելով, ո՛չ զգաստանում էր, ո՛չ սթափվում, ո՛չ էլ թագավորության, հպատակների ու հորքի գործերով էր զբաղվում, ամեն ինչ հեռու էր վառել իր սրտից և այնպես էր պահում իրեն, կարծես այդ բոլորը իրեն չէր վերաբերում:

Այդ երկրի (Դուինի շրջակայքի) բնակիչները հաճախ էին օգնության դիմում, նրան տեղեկացնելով վրացիների (քուրջ) հարձակվելու ցանկության մասին, բայց կարծես խուլ ժայռի դիմաց էին գոռում:

Երբ այդ տարում վրացիք (քուրջ) Դուին քաղաքը պաշարեցին, մի խումբ մարդիկ օգնություն խնդրելու գնացին, սակայն նա օգնություն չցուցաբերեց: Ամիրների մի մասը զգուշացրեց, թե նրա անտարբերությունը, անփութությունը և իր ասածի վրա համառելի վատ վախճան կունենան, սակայն չլսեց նրանց:

Երբ այս վիճակը երկարեց, մարդիկ թուլացան և շփման, իսկ վրացիք (քուրջ) սրով նվաճեցին [երկիրը] և արեցին այն, ինչ որ վերևում հիշեցինք: Ապա, երբ վիճակը կայունացավ, վրացիք (քուրջ) բնակիչների մնացորդի հետ լավ վերաբերվեցին: Թող ալլահը հսկի մահմեդականներին և նրանց ուժ տա պաշտպանելու սահմանային ամրությունները (սուղուր), որոնք պաշտպանության կարիք ունեն, մանավանդ այս երկիրը: Հիրավի մենք ալլահին ենք պատկանում և նրա մոտ էլ կվերադառնանք: Այն, ինչ արել էին վրացիք (քուրջ) Դուինի ժողովրդին՝ սպանություն, գերեվարություն և այլ շարագործություններ, ապա այդ մասին միայն լսելիս մարդու մարմինը կդողա:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(29 օգոստոս 1204—17 օգոստոս 1205)

էջ 268

ԱՄԻԴԻ ՏԻՐՈՋ՝ ԽԱՐԲԵՐԴԸ ՊԱՇԱՐԵԼՈՒ ՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Խարբերդը (խարտբիրտ, խարտաբիրտ) իմադ ալ-Դին իբն Կարա Արսլանին էր պատկանում: Նրա մահվանից հետո տիրեց որդին՝ Նիզամ ալ-Դին Աբու Բաքրը, որն ապավինեց [Ռումի տեր] Ռուքն ալ-Դին իբն Կիլիջ Արսլանի [հովանավորությանը], իսկ նրանից հետո եղբորը՝ Ղիյաս ալ-Դինին, որպեսզի պաշտպանվի իր հորեղբորորդուց՝ Նասիր ալ-Դին Մահմուդ իբն Մուհամմադ իբն Կարա Արսլանից և իրոք պաշտպանվեց:

Ամիդի տերը ապավինել էր ալ-Մալիք ալ-Ադիլի հովանավորությանը և հպատակ էր նրան: Վերջինս եկավ իր որդու՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆի, հետ Մոսուլի տիրոջ կովին մասնակցելու, այն պայմանով, որ սա զորք ուղարկի խարբերդը գրավելու նա [խարբերդը] գրավելու ցանկություն էր ունեցել Ռուքն ալ-Դինի մահվանից հետո:

Երբ այս տարին հասավ, պահանջեց այն, որ որոշված էր: Նրա հետ գնացին ալ-Մալիք ալ-Աշրաֆը և Ջադիրայի զորքերը՝ Սինջարից, Ջա-

զիրատ իբն Ումարից, Մոսուլից և այլ վայրերից: Նրանք պաշարեցին [Բերդը] Շաաբան ամսին (24 մարտ-22 ապրիլ), իսկ Ռամադանին (22 ապրիլ—22 մայիս). գրավեցին նրա արվարձանը (ռաբադ)³¹⁷: Նրա տերը միացել էր Ղիյաս ալ-Դինին, երբ վերջինս Ռումի երկրի տերն էր դարձել, հպատակ դառնալով նրան, ուստի, երբ Ամիդի տերը պաշարեց հարբերդը, նրա տերը դիմեց Ղիյաս ալ-Դինին՝ օգնական ղոբ խնդրելով, որ հեռացնի [թշնամուն]: Սա մեծ չորք պատրաստեց՝ վեց հազար ձիավորից բաղկացած և ուղարկեց Սամոսատի (Սումայսաթ) տիրոջ՝ ալ-Մալիք ալ-Աֆդալի հետ: Երբ զորքը Մալաթիա հասավ, Ամիդի տերը և նրա ընկերակիցները հարբերդից հեռացան, իջան դաշտը, պաշարեցին այն լիճը, որը կոչվում էր Սահնինի լիճ, ուր երկու բերդ կար՝ մեկը Ամիդի տիրոջը, իսկ մյուսը՝ հարբերդի տիրոջը: Սա պաշարեց ու գրավեց Զուլ-Հիջլա ամսի երկուսին (21 հուլիս): հարբերդի տերը Ռումի զորքերով եկավ դեպի հարբերդի կողմերը, Ամիդի տերը հեռացավ լճից, ամրացրեց իր գրաված բերդը, սակայն հիվանդության պատճառով նահանջեց մեկ օրվա ճանապարհ (մարհալա) ու կանգ առավ: Սուրհանդակների միջոցով Ռումի զորքը պահանջում էր վերադարձնել լիճը, իսկ Ամիդի տերը հրաժարվում էր: Երբ խնդիրը երկարեց, բերդը մնաց Ամիդի տիրոջ ձեռքում և երկու ղոբերը բաժանվեցին ու ամեն մեկը վերադարձավ իր երկիրը:

էջ 269

ՎՐԱՑԻՆԵՐԻ ԻՍԼԱՄԻ ԵՐԿԻՐԸ ԱՍՊԱՏԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում վրացիք (քուրջ) Ատրպատականի կողմից արշավեցին իսլամի երկիրը, բռնություններ ու ավերածություն գործելով, կողոպտելով ու գերեվարելով, ապա ներխուժեցին հլաթի գավառը, որը Հայաստանում էր, երկրի խորքերը մտան, մինչև որ հասան Մանազկերտ: Մահմեդականներից ոչ ոք կռվի դուրս չեկավ նրանց դեմ և նրանք տարածվեցին երկրում, կողոպտելով, գերեվարելով և ինչքան առաջ էին գնում, մահմեդական զորքերը այնքան նահանջում էին: Ապա նրանք ետ դարձան: Թող ալլահը հոգ տանի իսլամի երկրին ու ժողովրդին, ուժ տա նրա պաշտպաններին, պահպանի սահմանային ամրություններն ու հարվածի թշնամիներին:

Այդ տարում վրացիք (քուրջ) հարձակվեցին հլաթի երկիրը, հասան Արճեշ (Արշիշ) ու նրա գավառները կողոպտեցին, գերեվարեցին, ավերեցին երկիրն ու գնացին հլաթ գավառում գտնվող ալ-Տին բերդը, որը Կարնո քաղաքին (Արղան ալ-Ռում) մերձավոր էր: հլաթի տերը հավաքեց իր ղորքը և դիմեց Թուղրի Շահին՝ Արղանի տիրոջ Կիլիշ Արսլանի որդուն,

օգնության կանչելով նրան վրացիների (քուրջ) դեմ: Սա իր ամբողջ ղոր-
քրն ուղարկեց և նրանք [բոլորը] եկան վրացիների (քուրջ) դեմ, բախ-
վեցին նրանց հետ, կռվեցին և վրացիք (քուրջ) պարտվեցին: Սպանվեց
փոքր Ջաքարեն (Ջաքարի)³¹⁸, որը նրանց գլխավոր առաջնորդներից էր
և վրացիների այս ղորքի առաջնորդն ու հրամանատարը: Մահմեդական-
ները տիրացան նրանց ունեցվածքին, զենքերին, ձիերին և այլ բաներին,
նրանցից մեծ բազմություն կոտորելով ու գերեվարելով: Ապա նա [խյու-
թի տերը] վերադարձավ իր երկիրը:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(18 օգոստոս 1205—7 օգոստոս 1206)

էջ 282

ՄԱՐԱՂԱՅԻ ՏԻՐՈՋ ՈՒ ԱՐԲԵԼԱՅԻ ՏԻՐՈՋ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻՎՐԱ

Այդ տարում Մարաղայի տերը՝ Ալա ալ-Դինը, համաձայնեց Արբելա-
յի (Իրբիլ) տեր Մուզաֆֆար ալ-Դին Գաուքարիի հետ, որպեսզի հար-
ձակվեն Ատրպատականի վրա ու գրավեն այն նրա տիրոջ՝ Աբու Բաքր իբն
իբն ալ-Բահլավանի, ձեռքից, որը գիշեր-ցերեկ զբաղված էր հարբեցողու-
թյամբ, թողել էր պետական գործերը, զորքի ու հպատակների հսկողու-
թյունը:

Արբելայի (Իրբիլ) տերը եկավ Մարաղա ու միանալով նրա տիրոջ՝
Ալա ալ-Դինի հետ, գնացին Դավրեթի (Տաբրիզի) կողմը: Երբ նրա տեր
Աբու Բաքրը իմացավ, լուր ուղարկեց Ջաբալի, Համադանի, Իսֆահանի
ու Ռայյի և դրանց միջև ընկած երկրների տիրոջը՝ Իտղամիշին, որն իր
հոր՝ Բահլավանի մամուլներից էր. Աբու Բաքրին հպատակ, սակայն
[րստ էության] դարձել էր երկրի տերը և հաշվի չէր նստում Աբու Բաքրի
հետ: Ահա սրան լուր ուղարկեց Աբու Բաքրը, օգնության կանչելով և դրու-
թյունը բացատրելով, իսկ վերջինս այն ժամանակ Իսմաիլիների³¹³ (Իս-
մաիլիյա) քաղաքում էր: Երբ լուրը հասավ, մեծ զորքով եկավ ու հաս-
նելով լուր ուղարկեց Արբելայի (Իրբիլի) տիրոջը, ասելով՝ մենք քո մասին
լսել էինք, որ սիրում ես գիտություն մարդկանց ու բարեգործներին և բար-
յացակամ ես նրանց նկատմամբ: Հետևաբար, քո մասին կարծում էինք,
որ բարեգործ ու բարեպաշտ ես: Արդ, տեսնում ենք հակառակը, [քանի որ]
դու հարձակվել ես իսլամի երկրի վրա, ուղում ես կոտորել մահմեդական-
ներին, կողոպտել նրանց ունեցվածքը և խռովություն բարձրացնել: Եթե

այդպիսինն էս, ուրեմն դու անխելք ես: Լինելով մի գյուղի տեր, հարձակվում ես մեղ վրա, որ իշխում ենք հորասանի դռներից մինչև հլաթ (Խիլաթ) և Արբելա (Իրբիլ): Ենթադրենք, որ սրան (Աբու Բաքրին) պարտության մատենցիր, չգիտե՞ս, որ նա ունի մամուլներ, որոնցից մեկը ես եմ: Եթե նա ամեն մի գյուղից մի ջոկատ (շիհնա) վերցնի և կամ ամեն մի քաղաքից տասը հոգի, ապա նրա մոտ քո զորքից մի քանի անգամ ավելին կհավաքվի: Քեղ համար ավելի լավ է, որ վերադառնաս քո քաղաքը: Այս ամենը ասում եմ քեզ խնայելու համար:

Այս նամակից հետո նա շարժվեց նրա դեմ և երբ Մուզաֆֆար ալ-Դինը կարդաց ու իմացավ, որ Իտղամիշը առաջ էր շարժվել, որոշեց ետ դառնալ: Սակայն Մարաղայի տերը ամեն կերպ փորձեց նրան տեղում հաստատ պահել, համոզելով, որ զորքն իրեն հանձնի: Վերջինս ասաց նրան՝ նրա բոլոր ամիրները ինձ գրել են, որ հենց հարձակվեմ, իմ կողմը կանցնեն: Սակայն Մուզաֆֆար ալ-Դինը չընդունեց այս խոսքերը, վերադարձավ իր քաղաքը և վախենալով հետապնդումից ընթացավ դժվարանցանքի ճանապարհներով, կիրճերով ու բարձր լեռնանցքներով:

Ապա Աբու Բաքրը և Իտղամիշը գնացին Մարաղա, պաշարեցին և ապա նրա տիրոջ հետ հաշտություն կնքվեց, այն պայմանով, որ նա Աբու Բաքրին հանձնի մի բերդ, որը կովախնձոր էր, իսկ Աբու Բաքրը նրան տվեց Իստավա և Ուրմիա քաղաքները ու հեռացավ:

էջ 282

ԼԵՎՈՆԻ ՈՐԴՈՒ՝ ՀԱԼԵԲԻ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԴԵՄ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում կիրճերի տեր հայազգի Լևոնի որդին (իբն Լայուն ալ-Արմանի) մի քանի անգամ արշավեց Հալեբի նահանգի վրա, կողոպտեց, հրկիզեց, գերեց և գերեվարեց: Հալեբի տեր ալ-Մալիք ալ-Ջահիր Ղազի իբն Սալահ ալ-Դին Յուսուֆը հավաքեց իր զորքը և այլ թագավորների օգնության կանչելով, հավաքեց բազմաթիվ հեծյալ ու հետիոտն [զորք] ու Հալեբից գնաց Լևոնի որդու կողմը: Իսկ Լևոնի որդին իր երկրի մի այնպիսի մասում էր, Հալեբի երկրից այն կողմ, ուր գնալու համար ճանապարհ չկար, քանզի նրա ամբողջ երկիրը գնալու համար չկար այլ ճանապարհ, բացի քարքարոտ լեռներից ու դժվարանցանքների կիրճերից և իրենցից զատ ոչ ոք չէր կարող մտնել: Ճանապարհը անանցանելի էր մանավանդ Հալեբի կողմից:

Ջահիրը կանգ առավ Հալեբից հինգ փարսախ հեռավորության վրա: Նա իր զորքի մի մասը առաջապահ նշանակեց մի մեծ ամիրի գլխավո-

րությամբ, որն իր հոր մամուլներինց էր ու կոչվում էր Մայմուն ալ-Կաս-
րի (պալատային), Եգիպտոսի Ալավի (Ֆաթիմյան) խալիֆաների պալատի
(կասր) անունով, քանզի հայրը նրանցից (Ֆաթիմյաններից) էր ստացել
այդ [մամուլին]։ Զահիրը սննդամթերք և զենք ուղարկեց իր մի բերդը,
որը դրացի էր Լևոնի որդուն և կոչվում էր Դարբ Սաք։ Նա լուր ուղարկեց
Մայմունին, որ իր զորքի մի մասը ուղարկի այս ռազմամթերքին ընկե-
րակցելու համար մինչև Դարբ Սաք։ Այդպես էլ արեց նա և իր զորքի մեծ
մասն ուղարկեց, իսկ ինքը մնաց փոքր զորամասով։ Լուրը հասավ Լևոնի
որդուն, որն շտապ հասավ ու, գտնելով նրան փոքրաթիվ զորքով, կռվի
բռնվեց նրա հետ։ Երբ կռիվը սաստկացավ, Մայմունը լուր ուղարկեց Զա-
հիրին իմաց տալով այդ մասին, սակայն սա հեռու էր նրանից։ Պատե-
րազմը երկարեց, իսկ Մայմունը պաշտպանում էր իր անձն ու բռնները
փոքրաթիվ մահմեդականներով մեծաթիվ հայերի դեմ։ Մահմեդականները
փախուստի դիմեցին, իսկ թշնամին հաղթեց, կոտորեց ու գերեվարեց։
Մահմեդականները ևս երկարատև կռվի ընթացքում սպանեցին հայերի։
Հայերը վերցրեցին մահմեդականների բռնները, ավարի տվին ու տարան։
Ճանապարհին նրանց պատահեցին այն մահմեդականները, որոնք զինա-
մթերքի հետ գնում էին Դարբ Սաք, սակայն չհասկացան ինչ էր կատար-
վել և միայն զգուշանում էին թշնամուց։ Թշնամին հարձակվեց նրանց
վրա, սրի քաշեց և կռիվը խիստ սաստկացավ։ Այստեղ ևս մահմեդական-
ները փախուստի դիմեցին, իսկ հայերը ավարի հետ միասին վերադարձան
իրենց երկիրը և ամրացան իրենց լեռներում ու բերդերում։

էջ 283

ՎՐԱՑԻՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում վրացիք (քուրջ) մեծ ռազմությամբ ներխուժեցին հլաթի
նահանգը Հայաստանում, կողոպտեցին, կոտորեցին մեծ թվով, գերեցին
[զորքը] ու գերեվարեցին [մահմեդական ժողովրդին], տարածվեցին
երկրով մեկ, առանց վախի և հլաթի [երկրից] ոչ ոք նրանց դեմ դուրս
չեկավ կանգնեցնելու։ Նրանք շարունակեցին կողոպտել, գերեվարել, իսկ
երկիրը մնացել էր անտեր, անպաշտպան, քանզի նրա տերը մանուկ էր,
իսկ իրական կառավարողը իշխանություն չունեի զորքի վրա։

Երբ մարդկանց դժբախտությունը սաստկացավ, ըմբոստացան, սկսե-
ցին իրար դրդել, և այգ նահանգի մահմեդական զորքերը հավաքվեցին։
Նրանց վրա ավելացան նաև բազմաթիվ կամավորներ և բոլորը միասին
վախով լցված գնացին վրացիների (քուրջ) դեմ։ Բարեպաշտ սուֆիներից
մեկը երազում տեսավ Շայխ Մուհամմադ ալ-Բուստիին, որը մաքրակրոն

մարդկանցից էր և մեռած, սուֆին ասաց նրան՝ քեզ այստեղ եմ տեսնում, ասաց նրան՝ եկել եմ մահմեդականներին օգնելու թշնամիների դեմ: Սա ուրախությամբ վարթենց և քանի որ Բուստին երևելի տեղ էր գրավում իսլամական աշխարհում, եկավ զորքի հրամանատարի ու [խլաթի տիրոջ] գործերի կառավարչի մոտ ու պատմեց իր երազը: Սա շատ ուրախացավ և որոշեց անպայման գնալ վրացիների (քուրջ) դեմ: Նա իր զորքով գնաց և մի տեղում կանգ առավ:

Լուրը հասավ վրացիներին (քուրջ), որոնք որոշեցին հանկարծակի բերել մահմեդականներին ու հովտից դեպի վեր տեղափոխվեցին, ուր մնացին, որպեսզի գիշերը հանկարծակի հարձակվեն մահմեդականների վրա: Սակայն մահմեդականները իմացան և հարձակվեցին վրացիների (քուրջ) վրա և կիրճի գլուխն ու ելքը բռնեցին, իսկ այդ կիրճը բացի այդ երկու [անցքից] այլ ճանապարհ չունեի: Երբ վրացիք (քուրջ) այդ տեսան, հասկացան, որ կորած են և իրենց ձեռքերը թուլացան: Մահմեդականները համարձակություն ստացան ու նեղեցին նրանց, կռվեցին, շատերին կոտորեցին ու նույնքան էլ գերեցին: Վրացիներից (քուրջ) միայն քչերին հաջողվեց փախչել: Այսպիսով, ավազը մահմեդականներին ազատեց նրանց շարիքից, մինչդեռ նրանք կործանման էին դատապարտված:

էջ 284

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ռումի տեր Ղիյաս ալ-Դին խոսրով Շահը հարձակվեց Տրապիզոնի (Թարաբզոն) վրա ու պաշարեց նրա տիրոջը, որը դուրս էր եկել նրա հնազանդությունից: Նա նեղեց նրան և այսպիսով, կտրվեցին ճանապարհները Ռումի, ռուսների, ղփչաղների (կիֆչակ) և այլ երկրներից, թե՛ ցամաքից, թե՛ ծովից և ոչ ոք այնտեղից չեկավ Ղիյաս ալ-Դինի երկիրը: Մեծ վնաս հասավ մարդկանց, քանզի այդ երկրների հետ առևտուր էին անում ու մտնում էին նրանց երկիրը: Գալիս էին վաճառականները [նաև] Ասորիքից, Իրաքից, Մոսուլից, Ջազիրայից և այլ երկրներից:

Սրանցից (վաճառականներից) մի մեծ խումբ հավաքվել էր Սեբաստիայում (Սիվաս), բայց քանի որ ճանապարհը չէր բացվել, մեծ վնաս կրեցին և բախտավոր էր համարվում նա, ով կարողանում էր գոնե իր դրամագլուխը աղատել:

Այդ տարում Ատրպատականի ու Առանի տեր Աբու Բաքր իրն ալ-Բահլավանը ամուսնացավ վրաց (քուրջ) թագավորի աղջկա հետ:

Բանն այն էր, որ վրացիք հաճախ էին արշավում նրա երկրի վրա՝ տեսնելով նրա թուլությունը, հարբեցողությամբ, խաղամոլությամբ ու

նման բաներով տարվելը, թաղավորության գործերը վարելուց և երկիրը պաշտպանելուց հրաժարվելու: Ինքն էլ այդ բանն զգաց, սակայն շունեք արժանապատվություն և սլատվասիրություն, որպեսզի, զգվելով այդ մոլորություններից, թողներ այն, ինչ որ վնասակար էր իր համար: Տեսնելով, որ չի կարող երկիրը պաշտպանել [սրով], նա դիմեց penis-ով³²⁰ պաշտպանվելու գաղափարին: Նա նշանվեց ու ամուսնացավ նրանց թագավորի աղջկա հետ, իսկ վրացիք (քուրջ) հրաժարվեցին կողոպտելուց ու ասպատակելուց: Այսպիսով, պատահեց այն դեպքը, որի մասին ասվում է «Իր սուրը պատյան դրեց ու մերկացրեց իր penis-ը»:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(8 օգոստոս 1206—27 հուլիս 1207)

էջ 288

ՂԻՅԱՍ ԱԼ-ԴԻՆ ՔԱՅ ԽՈՒՍՐԱՈՒԻՒ՝ ԱՆԹԱԼԻԱ ՔԱՂԱՔԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում, Շաաբան ամսի երեքին (5 մարտ), Իկոնիայի (Կունիա) և Ռումի երկրի տեր Ղիյաս ալ-Դին Քայ Խուսրաուր³²¹ երաշխավորագրով (աման) գրավեց Անթալիա³²² քաղաքը, որը ծովի ափին էր և պատկանում էր հոռոմներին:

Բանն այն է, որ այդ թվականից առաջ նա պաշարել էր, երկար մնացել, նրա պարսպի մի քանի աշտարակներ քանդել և մնում էր միայն սրով գրավել այն և ահա նրանում գտնվող հոռոմները լուր ուղարկեցին մերձակա Կիպրոս (Կուբրուս) կղզու ֆրանկներին, օգնության կանչեցին: Երբ սրանց զորքը հասավ, Ղիյաս ալ-Դինը հուսահատվեց ու հեռացավ: Նա իր զորքի մի մասը թողեց իր և նրանց երկրի միջև գտնվող լեռներում ու հրամայեց նրանց պարենի [ճանապարհ] կտրել: Այսպես շարունակվեց, մինչև որ քաղաքի ժողովուրդը նեղության մեջ ընկավ և երբ նրանց վիճակը ծանրացավ, պահանջեցին ֆրանկներից, որ դուրս գան և ետ մղեն մահմեդականներին, [փրկելով] նրանց ճնշումից: Ֆրանկները կարծեցին, որ հոռոմները ուզում են այս ձևով իրենց զուրս բերել քաղաքից: Անհամաձայնություն սկսեց նրանց մեջ և ընդհարվեցին: Հոռոմները լուր ուղարկեցին մահմեդականներին, խնդրելով, որ վերցնեն քաղաքը: Սրանք հասան ու նրանց հետ միանալով սկսեցին կռվել ֆրանկների դեմ: Ֆրանկները փախուստի գիմեցին, մտան միջնաբերդը ու պատսպարվեցին:

Մահմեդականները լուր ուղարկեցին, կանչելով Ղիյաս ալ-Դինին, որը գտնվում էր Իկոնիա քաղաքում: Սա մի զորամասի հետ աճապարանոք առաջ շարժվեց, հասավ Շաաբան ամսի երկուսին, և համաձայնություն կայացավ նրա ու հոռոմների միջև: Ամսի երեքին նա ստանձնեց քաղա-

քը, պաշարեց միջնաբերդը, ուր ֆրանկներն էին, այն էլ գրավեց և բոլոր ֆրանկներին կոտորեց:

էջ 288

ԽԼԱԹԻ ՏԵՐ ԲԱՔՏԱՄՈՒՐԻ ՈՐԴՈՒ ՀԵՌԱՅՄԱՆ, ԲԱԼԲԱՆԻ ՏԵՐ ԴԱՌՆԱԼՈՒ, ՄԱՐԴԻՆԻ ՏԻՐՈՋ ԽԼԱԹ ԳՆԱԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում Խլաթի (Խիլաթ) գորքը ձերբակալեց իր տիրոջը՝ Բաքտամուրի որդին, և տեղ դարձավ Բալբանը (Բալբան)՝ Շահ Արման իրն Սուլթանի մամլուքը: Խլաթի ժողովուրդը դրեց Նասիր ալ-Դին Ուրտուկ իրն Իլդադի իրն Ալբի Տիմուրտաշ իրն Իլդադի իրն Ուրտուկին՝ հրավիրելով իրենց մոտ:

Բանն այն է, որ Բաքտամուրի որդին դեռ տղա էր ու անփորձ: Նա ձերբակալել էր Շահ Արմանի մամլուքներից ամիր Շուշա ալ-Դին Կուտլուդին, որը նրա աթաբեկն էր ու երկրի կառավարիչը և լավ վերաբերմունք ունեւր զինվորների ու հասարակ ժողովրդի նկատմամբ: Երբ սրան սպանեց, զինվորները և հասարակ ժողովուրդը դժգոհեցին, իսկ ինքը (Բաքտամուրի որդին) զբաղված էր հաճույքներով, խաղամուրթյամբ, հարբեցողութեամբ: Եվ ահա Խլաթի ժողովրդից ու զինվորներից մի խումբ գրեց Մարդինի տիրոջը՝ Նասիր ալ-Դինին, հրավիրելով իրենց մոտ: Ներանք գրեցին հենց նրան և ոչ այլ թագավորների, որովհետև նրա հայրը՝ Կուլթ ալ-Դին Իլդադին, Շահ Արման իրն Սուլթանի քեռորդին էր: Շահ Արմանը իր կենդանության ժամանակ մարդկանցից հպատակության երդում էր վերցրել նրա համար, քանզի ինքը տղա չունեւր: Արդ, երբ այս դեպքը պատահեց, հիշեցին այդ երդումը և ասացին՝ հրավիրենք և տեղ դարձնենք, քանի որ Շահ Արմանի ընտանիքից է: Գրեցին ու հրավիրեցին նրան:

Սակայն Շահ Արմանի մամլուքներից մեկը, որի անունն էր Բալբան, Բաքտամուրի տղայի նկատմամբ թշնամական դիրք բռնեց և, ըմբոստանալով նրա դեմ, Խլաթից հեռացավ Մանազկեռտի երկիրը, տիրացավ նրան, զորք հավաքեց մեծ բազմութեամբ ու գնալով Խլաթի դեմ, ուզեց գրավել այն:

Սա զուգահեռեց Մարդինի տիրոջ գալստյանը, իսկ վերջինս կարծում էր, որ ոչ ոք չի խանգարի իրեն, և քաղաքը կհանձնեն: Սա կանգնեց Խլաթին մոտիկ վայրում մի քանի օր, և Բալբանը նրան[ւոր] ուղարկեց, ասելով՝ Խլաթի ժողովուրդը ինձ մեղադրում է, թե ես քեզ համակրում եմ, իսկ նրանք արաբներից խորշում են: Լավ կլինի, որ դու մեկ օրվա ճանա-

պարհ ետ գնաս ու սպասես, եթե քաղաքն ստանձնեմ, քեզ կհանձնեմ, քանզի ես չեմ կարող նրան տիրել: Մարդինի տերը այդպես էլ արեց և երբ հլաթից հեռացավ, [Բալբանը] լուր ուղարկեց, ասելով՝ վերադարձիր քո երկիրը, ապա թե ոչ կհարձակվեմ քեզ վրա ու կկոտորեմ քեզ և քո ընկերակիցներին: Սա քիչ զորք ունեւ, ուստի վերադարձավ Մարդին:

Խառանի ու Ջազիրայի տեր ալ-Մալիք ալ-Աշրաֆ Մուսա իբն ալ-Ադիլ Աբու Բաքր իբն Այյուբը, երբ լսեց, որ Մարդինի տերը ուզում է գնալ հրաթ, լուր էր ուղարկել նրան, ասելով՝ եթե գնաս հլաթ, ես էլ քո երկրի վրա կհարձակվեմ, քանզի վախենում էր, որ սա հլաթին տիրանալով իրենց վրա գերակշռութուն կունենա:

Ուստի, երբ սա հլաթ գնաց, Աշրաֆը զորք հավաքեց ու դիմեց Մարդին նահանգը, խնդրեց նրա [հարկերի] հասույթը ու կանգ առավ Դունայսարում, մինչև որ փողերը հավաքի: Այս բանը վերջացնելուց հետո նա վերադարձավ Խառան: Սակայն Մարդինի տիրոջ նման ինքն էլ, ինչպես ասում են, դուրս եկավ երկու կոտոշ գտնելու, սակայն վերադարձավ առանց ականջների:

Բալբանը զորք հավաքեց ու պաշարեց հլաթը, նեղեց բնակիչներին: Այնտեղ էր Բաքտամուրի տղան, որը քաղաքում եղած զինվորներին ու հասարակ ժողովրդին հավաքելով դուրս եկավ նրա դեմ: Նրանք ընդհարվեցին և Բալբանը իր հետ եղածներով միասին փախուստի մատնվեց ու վերադարձավ այն վայրերը, որոնք արդեն իր ձեռքում էին, այսինքն՝ Մանազկերտ, Արճեշ և այլ բերդեր: Նա շատ զորք հավաքեց ու կրկին պաշարեց հլաթը, նեղեց բնակիչներին և ստիպեց նրանց լքել Բաքտամուրի որդուն, [տարիքով] փոքր լինելու, կառավարման մեջ անփորձության և հաճույքներով ու խաղամոլութամբ զբաղվելու համար: Սրանք բանտարկեցին նրան ամրոցում և լուր ուղարկեցին Բալբանին, երգվել տալով իրենց պայմանները ընդունել և համաձայնեցին քաղաքն ու Բաքտամուրի որդուն [հանձնել նրան]: Սա տիրացավ հլաթի բոլոր գավառներին, բանտարկեց Բաքտամուրի որդուն այնտեղի մի բերդում, և ամրապնդվեց նրա իշխանությունը: Օրհնյալ լինի նա, որը երբ որևէ բանի հաջողությունը կամենում է, նախադրյալներ է պատրաստում: Դեռ երեկ Շամս ալ-Դին Մուհամմադ իբն Բահլավանը և Սալահ ալ-Դին Յուսուֆը հարձակվել էին, սակայն ոչ մեկը չկարողացավ գրավել, իսկ այժմ այս թույլ մամլուքը, որը շուններ ո՛չ զորք, ո՛չ տիրույթներ, ո՛չ ունեցվածք, հեշտութամբ տիրեց:

Ապա նփրկերտի տեր Նաջմ ալ-Դին Այյուբ իբն ալ-Ադիլը շարժվեց դեպի հլաթի նահանգը, որի բազմաթիվ բերդեր գրավել էր, ինչպես Մուսայի (Մուվսես) բերդն ու քաղաքը: Երբ հլաթին մոտեցավ, Բալբանը ան-

զոր ձևացավ նրան դիմադրելու, իսկ սա ոգևորվեց և առաջ խազաց: Բալ-
բանը նրան ճամփան կտրեց, կռվի բռնվեց ու պարտության մատնեց:
Սրա ռազմիկներից քչերը փրկվեցին, այն էլ վիրավոր վիճակում, իսկ ինքը
նփրկերտ (Մայյաֆարիկին) վերադարձավ:

էջ 289

ՎՐԱՑԻՆԵՐՈՒ՝ ԿԱՐՍ ՔԱՂԱՔԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՈՒ ՆՐԱՆՑ ԹԱԳՈՒՂՈՒ ՄԱՀԱՆ
ՄԱՍԻՆ

Այդ տարում վրացիք (քուրջ) դրավեցին Կարս բերդը, որը հլաթի
գավառներում էր: Նրանք պաշարեցին երկար ժամանակ, նեղեցին բնա-
կիչներին և այդ գավառի մի քանի տարվա հարկը վերցրեցին, իսկ հլաթի
բնակիչները չէին օգնում նրանց և չէին ձգտում թեթևացնել նրանց վի-
ճակը: Տեղի կառավարիչը սուրհանդակներ էր ուղարկում օգնություն
ու պաշտպանություն խնդրելու վրացիների (քուրջ) դեմ, սակայն ոչ մի
պատասխան չէր ստանում: Երբ խնդիրը երկարեց ու տեսավ, որ ոչ ոք
չէր օգնում, հաշտություն կնքեց վրաց (քուրջ) հետ՝ [պարտավորվելով]
ամրոցը հանձնել և (փոխարենը) նրանցից ստանալ շատ ունեցվածք և
տիրույթներ (իկթա): Այսպիսով, [Կարսը] դարձավ բազմաստվածյաննե-
րի³²³ (հեթանոսական) երկիր այն բանից հետո, երբ միաստվածյանների
երկիր էր:

Մենք ալլահինն ենք և նրանն ենք դառնալու. թող ալլահը հաղթու-
թյուն պարգևի իսլամին ու նրա ժողովրդին, քանզի մեր ժամանակի թա-
գավորները տարվել են իրենց զվարճություններով. խաղամոլությամբ,
անիրավությամբ [և մոռացել] սահմանային ամրությունները պահպանել,
երկիրը պաշտպանել: Սակայն բարձրյալն ալլահը տեսնելով իսլամի պաշտ-
պանների սակավությունը, ինքն ստանձնեց [նրա պաշտպանությունը],
նա մահ բերեց վրաց (քուրջ) թագուհուն, որից հետո նրանց միջև տա-
րակարծություններ սկսվեցին և այդպիսով: ալլահը վերջ տվեց նրանց
շարագործություններին մինչև տարվա վերջը:

ՎԵՑ ՀԱՐՅՈՒՐ ՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(28 հուլիս 1207—15 հուլիս 1208)

էջ 296

ՆԱՋՄ ԱԼ-ԴԻՆ ԻԲՆ ԱԼ-ՄԱԼԻԳ ԱԼ-ԱԴԻԼԻ՝ ԽԼԱԹԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում ալ-Մալիք ալ-Աուհադ³²⁴ նաչմ ալ-Դին Այյուբ իբն ալ-
Մալիք ալ-Ադիլ Աբու Բաքր իբն Այյուբը գրավեց հլաթ քաղաքը:

Բանն այն է, որ նա տիրում էր նփրկերտ քաղաքին՝ հոր կողմից [նշանակված]: Սակայն, երբ լսեց Բալբանի՝ հլաթը գրավելու մասին, ինչպես հիշեցինք, ինքը գնաց Մուշ քաղաքը պաշարեց ու գրավեց այն, ինչպես նաև հարևան այլ քաղաքներ: Բալբանի դիրքը չէր ամրացել, որ կարողանար նրան դիմադրել: Այն (Մուշը) գրավելուց հետո, [Նաջմ ալ-Դինը] ցանկացավ հլաթը ևս գրավել և առաջ շարժվեց: Բալբանը պարտության էր մատնել նրան, ինչպես արդեն հիշել ենք: Սա վերադարձավ իր երկիրը, զորք հավաքեց, հայրը նույնպես նրան ղորք ուղարկեց և [այսքանով] նա հարձակվեց հլաթի վրա: Նորից Բալբանը ելավ նրա դեմ, ընդհարվեցին ու կռվեցին, Բալբանը պարտվեց, իսկ Նաջմ ալ-Դինը գրավեց այդ երկիրը և շատ այլ վայրեր: Բալբանը մտավ հլաթ և պատըսպարվեց ու դեսպան ուղարկեց Արզան ալ-Ռումի տեր Մուղիս ալ-Դին Թուղրիլ Շահ իբն Կիլիշ Արսլանին՝ օգնության կանչելով Նաջմ ալ-Դինի դեմ: Սա եկավ անձամբ իր զորքով և նրանք միասին պարտության մատնեցին Նաջմ ալ-Դինին, պաշարեցին Մուշը և արդեն պետք է գրավեին, երբ իբն Կիլիշ Արսլանը դավաճանեց հլաթի տիրոջը և սպանեց նրան՝ ցանկանալով նրա երկիրը: Սպանելուց հետո նա գնաց հլաթ, սակայն բնակիչները դիմադրեցին նրան և նա գնաց Մանազկերտ, որի բնակիչները նույնպես ետ մղեցին նրան ու հրաժարվեցին նրան [հնազանդվելուց]: Երբ տեսավ, որ երկրի ոչ մի մասը չկարողացավ [գրավել], իր երկիրը վերադարձավ:

Այդ ժամանակ հլաթի բնակիչները Նաջմ ալ-Դինին լուր ուղարկեցին հրավիրելով, որպեսզի իշխանությունը նրան հանձնեն: Նա եկավ ու տիրեց հլաթին ու նրա գավառներին, բացի մի փոքր մասից: Դրացի թագավորները չէին ուզում նրա իշխանության հզորացումը, քանզի վախենում էին նրա հորից: Նրանից վախենում էին նաև վրացիք (քուրջ) և ատում նրան: Նրանք անընդհատ հարձակումներ էին գործում հլաթի գավառների ու նրա երկրի վրա: Նաջմ ալ-Դինը մնում էր հլաթում՝ չկարողանալով հեռանալ այնտեղից, իսկ մահմեդականները այդ բանից շատ վնաս կրեցին: հլաթի զորքերից մի մաս հեռացավ ու գրավեց Վան ամրոցը, որը մեծագույն և ամենից անառիկ բերդերից էր: Նրանք (անջատված զորքերը) ըմբոստացան Նաջմ ալ-Դինի գեմ. նրանց շուրջը ղորք հավաքվեց և նրանք գրավեցին Արճեշ (Արշիշ) քաղաքը:

Նաջմ ալ-Դինը լուր ուղարկեց իր հորը՝ ալ-Մալիք ալ-Ադիլին, տեղեկացնելով վիճակը և օգնություն ու ղորք խնդրելով: Սա զորքի հետ ուղարկեց նաև նրա եղբորը՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆ իբն ալ-Ադիլին: Այսպիսով, երկուսը միասին մեծ զորք հավաքեցին ու պաշարեցին Վան ամրոցը, ուր խլաթեցիք (ալ-խիլաթիյյա) էին [ամրացել] և համառ կռիվներից հետո սրանք այլևս չկարողացան դիմադրել, հաշտությամբ հանձ-

նեցին ամբողջը և այնտեղից դուրս եկան: Նաջմ ալ-Դինը գրավեց այն, և ամրապնդվեց նրա իշխանությունը հլաթում ու նրա գավառներում, իսկ եղբայրը՝ ալ-Աշրաֆը վերադարձավ իր երկիրը՝ հառան (Հառան) և Եդեսիա (Ռուհա):

էջ 297

ԽԼԱԹՈՒՄ ԽԹՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՑ ՇԱՏԵՐԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ ալ-Մալիք ալ-Աուհադ Նաջմ ալ-Դին ալ-Ադիլը գրավեց հլաթն ու նրա գավառները, այնտեղից գնաց Մանագկերտ, որպեսզի այնտեղ ևս կարգ հաստատի և անի ինչ որ անհրաժեշտ էր: Երբ հլաթից դուրս եկավ, բնակիչներն ըմբոստացան տեղի զորքի դեմ և դուրս քշեցին: Ներանք ապստամբեցին, պաշարեցին ամրոցը, որտեղ ալ-Աուհադի մերձավորներն էին և Շահ Արմանի նշանաբանով կոչ արեցին, թե պետե՛ս նա վաղուց մեռած էր: Սրանով ուզում էին ասել, թե պետք է իշխանությունը վերադարձնել [նախկին] տերերին ու նրանց մամուլներին:

Լուրը հասավ ալ-Մալիք ալ-Աուհադին, որը վերադարձավ նրանց մոտ: Մինչ այդ նա զորք էր ստացել Զազիրայից, որի շնորհիվ ուժեղացավ ու պաշարեց հլաթը: Բնակիչների մեջ տարածայնություն կար՝ մի մասը հակվեց նրա կողմը՝ ի հեճուկս ուրիշների: Նա տիրեց [հլաթին] և բնակիչներից մեծ բազմություն կոտորեց, մեծամեծների մի խումբ գերեց ու տարավ նփրկերտ, ընդ որում ամեն օր մարդ էր ուղարկում ու մի մասին սպանել տալիս և միայն քչերը փրկվեցին: Այս դեպքից հետո հլաթի բնակչությունը ստորացած վիճակում էր, իսկ երիտասարդների մեջ տարակարծություն կար: [Նախապես] նրանց ձեռքում էր իշխանությունը և [այժմ] մարդիկ ազատվեցին նրանց չարագործությունից, քանզի մեկին թագավոր էին նշանակում, մյուսին՝ սպանում. իսկ պետությունը հեղինակություն չունեւ, որովհետեւ ամբողջ իշխանությունը նրանց ձեռքում էր:

ՎԵՑ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՆԿ ԹՎԱԿԱՆ

(16 հուլիս 1208—5 հուլիս 1209)

էջ 299

ՎՐԱՑԻՆԵՐԻ՝ ԱՐՃԵՇՐ ԳՐԱՎԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԳԱՐՋԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում վրացիք (քուրջ) զորքով մտան հլաթի նահանգը և դիմեցին դեպի Արճեշ քաղաքը, պաշարեցին ու սրով գրավե-

ցին. կողոպտեցին ամբողջ ունեցվածքը, ապրանքները և այլ բաներ: Նրա-
րանք ժողովրդին գերեվարեցին, [քաղաքը] հրկիղեցին և ամբողջովին
կործանեցին: Բնակիչներին ոչ ոք չմնաց, այնպես որ դարձավ ամաչի
«Կարծես դեռ երեկ հարուստ չէր եղել» (Ղուրան, Բ, 261, Ժ, 25): Հայաս-
տանի տեր³²⁵ նաջմ ալ-Դին Այյուբը հլաթ քաղաքում էր՝ բաղմամարդ
ղորբով, սակայն որոշ պատճառներով չգնաց վրացիների (քուրջ) դեմ,
ինչպես, օրինակ, [վրացիների] շատութունը և իր վախը հլաթի ժողո-
վրդից, որոնց նա շատ կոտորել ու վնաս էր պատճառել: Նա վախենում
էր, որ եթե դուրս գա [քաղաքից], այլևս չի կարող վերադառնալ: Եվ քա-
նի որ դուրս չեկավ անհավատների դեմ կովի, սրանց ոչ ոք չխանգարեց
և ապահով վերադարձան իրենց երկիրը:

Այս բոլորը թեև շատ ծանր էր իսլամի ու նրա ժողովրդի համար,
այսուհանդերձ չնչին բան է համեմատելով այն պատահածի հետ, որ
հիշելու ենք վեց հարյուր տասնչորս (1217—1218) և տասնյոթ (1220—
1221) թվականների միջև³²⁶:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(10 ապրիլ 1217—29 մարտ 1218)

էջ 317

ՄԱՆՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՄԻԵԹԸ ՖՐԱՆԿՆԵՐԻ ՁԵՌՔԻՅ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ ֆրանկները տիրեցին Դամիեթին (Դիմիաթ) ու հաստատվեցին,
իրենց ձիավոր ջոկատները սփռեցին բոլոր շրջակա գավառները:

Ալ-Մալիք ալ-Քամիլը անընդհատ նամակներ էր ուղարկում իր եռկու
եղբայրներին՝ Դամասկոսի տեր Մուաղղամին և Ջաղիրայի ու Հայաստանի
տեր ալ-Մալիք ալ-Աշրաֆին և այլոց, խնդրելով օգնության հասնել ու հա-
մոզելով անձամբ ներկայանալ, իսկ եթե հնարավոր չէ, միայն ղորք ուղար-
կել:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(30 մարտ 1218—18 մարտ 1219)

էջ 324—325

ՀԱՔՔԱՐԻՅՅԱՅԻ ԵՎ ԱՆՁԵՎԱՅԻՔԻ ԲԵՐԴԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼԸ ԲԱԴՐ
ԱԼ-ԴԻՆԻՆ

Երբ Ջանգին³²⁷ տիրեց Հաքքարիյայի ու Անձեկացիքի (Ջավաղան) բեր-
դերին, նրա բնակիչներին չվերաբերվեց այնպես, ինչպես նրանք են-
թադրում էին, բարեգործություն և ողորմածություն չցուցաբերեց, այլ, ընդ-

հակառակը, նեղեց նրանց: Նրանք [բնակիչները] լսել էին Բաղր ալ-Դինի ու իր զորքի՝ հպատակների նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին՝ բարեգործությունը, գրամ շխնայելը, և ցանկանում էին վերադարձնել նրան [երկիրը], սակայն վախը խանգարում էր նրանց՝ նկատի ունենալով անցյալի դեպքերը: Սակայն այժմ զայրանալով նրա (Ջանգիի) գործերից, վեց հարյուր տասնյոթ թվին, Մուհառամ ամսին լուր ուղարկեցին Բաղր ալ-Դինին, առաջարկելով [բերդերը] հանձնել նրան: Նրանից խնդրեցին երդում ու ներում իրենց համար, հիշելով, որ որոշ տիրույթներ իրենցը պետք է լինեին: Նա ընդունեց և լուր ուղարկեց ալ-Մալիք ալ-Աշրաֆին, թույլտվություն խնդրելով, սակայն սա թույլ չտվեց:

Ջանգիի վերադարձավ Աշրաֆի մոտից, մեծ զորք հավաքեց, պաշարեց Իմադիյյա բերդը, սակայն արդյունքի չհասավ: Սրանք (բնակիչները) կրկին գրեցին Բաղր ալ-Դինին [բերդերը] հանձնելու մասին: Սա [նորից] գրեց ալ-Մալիք ալ-Աշրաֆին այդ մասին, նվիրեց ևս մի բերդ, Մծբինը (Նասիբին) և մի գավառ երկու գետերի միջև, որպեսզի թույլ տա, և նա թույլ տվեց: Նա ուղարկեց իր տեղակալներին, որոնք վերցրեցին բերդերը և լավ վերաբերվեցին ժողովրդին: Ջանգին հեռացավ, իսկ Բաղր ալ-Դինը իր խոստումը հարգեց:

Երբ մյուս բերդերի զինվորները այս բանը լսեցին, թե ինչ լավ վերաբերմունքի էին [այդ բերդերը] արժանացել, ցանկացան իրենք ևս հանձնվել: Եկան տեղակալները, և բնակիչները համաձայնվեցին հնազանդվել ու հպատակվել:

Ջարմանալին այն է, որ երբ զորքեր էին եկել Ասորիքից, Ջազիրայի Դիար Բաքրից, Խլաթից և այլ վայրերից բերդերը գրավելու համար, չըկարողացան այն վերցնել, իսկ երբ ցրվեցին, իրենք բնակիչները եկան ու խնդրեցին, որ վերցվեն [բերդերը]: Այսպիսով, ամեն ինչ վերջացավ հաշտությամբ, առանց բռնության:

էջ 326—327

ԱԼ-ՄԱԼԻԳ ԱԼ-ԱԴԻԼԻ ՄԱՀՎԱՆ ԵՎ ՈՐԴԵՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նրա տարիքը յոթանասունհինգ էր ու մի քանի ամիս, քանզի ծնվել էր հինգ հարյուր քառասուն թվականի Մուհառամ ամսին:

Նա Դամասկոսին (Դիմաշկ) տիրացավ հինգ հարյուր իննսուներկու թվականի Շաաբան ամսին՝ [վերցնելով] իր եղբորորդի Աֆգալի ձեռքից, իսկ Եգիպտոսին (Միսր) տիրացավ հինգ հարյուր իննսունվեց թվականի Ռաբի Բ ամսին՝ դարձյալ նրա ձեռքից:

Աղիլն իր կենդանության օրոք երկիրը բաժանել էր զավակների միջև, ընդ որում Եգիպտոսը տվել էր ալ-Մալիք ալ-Քամիլ Մուհամմադին, Դամասկոսը (Դիմաշկ), Սուրբ քաղաքը (ալ-Կուդս, Երուսաղեմ), Թաբարիան Հորդանանը (ալ-Ուրդուն), ալ-Քարաքը և այլ հարևան բերդեր՝ իր որդուն՝ Մուազզամ Իսային, Ջազիրայի մի մասը, Նփրկերտը և Խլաթը իր զավառներով՝ իր որդուն՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆ Մուսային, Եգեսիան՝ իր որդուն՝ Շիհաբ ալ-Դին Ղազիին, իսկ Ջաբար բերդը՝ իր որդուն՝ ալ-Հաֆիդ Արսլան Շահին:

Երբ մեռավ, ամեն մեկը իր հոր տված թագավորության մեջ հաստատվեց և շատ համերաշխ էին: Նրանց միջև վեճ չկար, ինչպես լինում է թագավորների որդիների միջև՝ իրենց հայրերից հետո, այլ մեկ մարդունման էին, մեկը մյուսին վստահում էր, այնպես որ մենակ, առանց զորքի մեկը մյուսի մոտ էր գնում անվախորեն, և, բնականաբար, հզորացավ նրանց թագավորությունը, և նրանց գործերը ավելի լավ ընթացան, քան իրենց հոր [ժամանակ]:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(19 մարտ 1219—7 մարտ 1220)

էջ 327—328

ՔԱՅ ՔԱՌԻՍԻ ՄԱՀՎԱՆ ԵՎ ԵՂԲՈՐ՝ ՔԱՅ ԿՈՒԲԱԴԻ, ԹԱԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում մեռավ Իկոնիայի, Ակսարայի, Մալաթիայի և նրանց միջև ընկած Ռումի երկրների տեր ալ-Մալիք ալ-Ղալիք (նվաճող թագավոր) Իղդ ալ-Դին Քայ Քաուս իբն Քայ Խուսրաու իբն Կիլիշ Արսլանը:

Նա իր զորքերը հավաքել էր ու գնացել Մալաթիա՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆի երկիրը, արշավելու նպատակով, ըստ այն պայմանավորվածության, որ կար նրա և Ամիդի տեր Նասիր ալ-Դինի ու Արբելայի (Իրբիլ) տեր Մուզաֆֆար ալ-Դինի միջև: Վերջիններս իրենց երկրում նրան էին խութբա տվել և նրա անունը դրոշմել դրամի վրա: Նրանք որոշել էին հարձակվել ալ-Մալիք ալ-Աշրաֆի և Մոսուլի [տեր] Բադր ալ-Դինի վրա:

Քայ Քաուսը շարժվեց դեպի Մալաթիա, որ խանգարի ալ-Մալիք ալ-Աշրաֆին գնալ Մոսուլ, նրա տիրոջը՝ Բադր ալ-Դինին, օգնելու, այն հույսով, որ գուցե Մուզաֆֆար ալ-Դինը Մոսուլում հաջողության հասնի: Սակայն նա թոքախտ ունեւր և երբ հիվանդությունը սաստկացավ, վերադարձավ ու մեռավ:

Նրանից հետո թագավորեց Եղբայրը՝ Քայ Կուբադը, որին բանտարկել

էր Քայ Քառուր, երր երկրի տերն էր դարձել: Որոշ մերձավորներ հանձնարարել էին սպանել նրան, սակայն նա այդ բանը չարեց: Երբ նա մեռավ, որդիները, մանկահասակ լինելու պատճառով, հարմար չէին թագավորության և ահա զինվորները [բանտից] դուրս բերեցին Քայ Կուրագին ու թագավորեցրին:

Ասվում է նաև, որ երբ հիվանդությունը սաստկացավ, Քայ Քառուր բանտից բերել տվեց նրան [եղբորը] և թագավորությունը նրան կտակեց ու մարդկանց ստիպեց [հավատարմության] երդում տալ:

Երբ սա թագավորեց, նրա դեմ դուրս եկավ հորեղբայրը՝ Կարնո քաղաքի (Արզան ալ-Ռում) տերը: Բացի դրանից, [Քայ Կուրագր] վախենալով նաև իրեն հարևան հռոմեաներից, լուր ուղարկեց ալ-Մալիք ալ-Աշրաֆին, հաշտություն կնքեց և նրանք բարեկամության, իրար օգնելու պայման դրեցին և խնամիացան: Այսպիսով, Աշրաֆը ազատվեց այդ կողմից եկող շարիքից և զբաղվեց իր ձեռքում եղած [երկրները] բարեկարգելով:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՄՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(8 մարտ 1220—24 փետրվար 1221)

էջ 329—330

ԹԱԹԱՐՆԵՐԻ՝³²⁹ ԻՍԼԱՄԻ ԵՐԿԻՐԸ ՄՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երկար տարիներ չէի կամենում հիշել այս դեպքերը, սարսափ ու զրգվանք զգալով: Երկար տատանվում էի, և ո՞ւմ համար հեշտ է գրել իսլամի ու մահմեդականների ողբը և ո՞վ կարող է հանգիստ գրել այդ մասին: Ո՛հ, երանի թե մայրս ինձ չծներ և մեռած լինեի նախքան այս (դեպքերը) ու մնայի բոլորից մոռացված:

Սակայն որոշ ընկերներ ինձ համոզեցին գրել այդ մասին, իսկ ես տատանվում էի, սակայն տեսա, որ այդ գործից հրաժարվելն անօգուտ է:

Բանն այն է, որ խոսքը մեծ դեպքի և ահռելի դժբախտության մասին է, որի նմանը օրերն ու գիշերները չեն ծնել: Դա հասավ բոլոր մարդկանց և մասնավորապես մահմեդականներին: Եթե որևէ մեկը ասեր, թե այն օրվանից, որ ալլահը ստեղծել է Ադամին, մինչև օրս աշխարհը նման դժբախտության չի հանդիպել, ճշմարիտ կլիներ, քանզի տարեգրությունները չունեն ոչ մի նման կամ մոտավոր բան:

[Պատմական] զրույցների մեջ որպես մեծ իրադարձություն հիշատակվում է, թե ինչ էր արել Նաբուգոդոնոսորը (Բուխտունուսուր) Իսրայելի որդիներին: Նա կոտորել էր և ավերել Սուրբ քաղաքը (ալ-Բայտ ալ-Մուկադդաս, Երուսաղեմ): Սակայն ինչ էր Սուրբ քաղաքը, համեմա-

տելով այն բանի հետ, որ այդ անիծյալները երկրներ քանդեցին, որոնց ամեն մի քաղաքը Սուրբ քաղաքից մի քանի անգամ մեծ է, իսկ ինչ են Իսրայիլի որդիք այն սպանվածների համեմատությամբ, քանզի մի քաղաքում սպանվածների թիվը ավելի շատ էր, քան Իսրայիլի որդիք: Գուցե մարդկությունը մինչև դարի վախճանը և աշխարհի վերջը այլևս չի տեսնի նման իրադարձություն, բայց եթե միայն Գոգի (Յաջուջ) ու Մագոգի (Մաջուջ) ժամանակ: Նույնիսկ Դաջջալը (Նեո, հակաքրիստոս) խնայում է իր հետևորդներին և ոչնչացնում միայն իրեն չլսողներին: Իսկ սրանք (թաթարները) ոչ ոքի չէին խնայում, կոտորում էին կանանց, տղամարդկանց ու երեխաներին, հղի կանանց որովայնը ճեղքում ու սպանում սաղմը: Ճշմարիտ է, որ մենք ալլահին ենք պատկանում և նրան ենք վերադառնալու:

Այս ի՞նչ աղետ էր, որի կայծերը թռան ու տարածվեց շարիքն ամենուրեք և քամուց քշված ամպի նման լցրեց երկիրը: Չինաստանի (ալ-Սին) կողմից դուրս եկած մարդիկ հասնում են մինչև Թուրքիստան, ինչպես Քաշղար և Բալասաղուն, ապա այնտեղից դեպի Մավարաաննահ, ինչպես Սամարկանդ, Բուխարա և այլ վայրեր, տիրում են և նրա ժողովրդին անում այն, ինչ որ հիշելու ենք: Ապա նրանց մի մասը անցնում է Խորասան, լրիվ նվաճում, կործանում, կոտորում ու կողոպտում: Անցնում են Ռեյ, Համադան և ալ-Ջաբալ և այնտեղ եղած երկրները մինչև Իրաքի սահմանը, ապա դիմում են Ատրպատական ու Աղվանք (Առանիյ-յա), ավերում ու մեկ տարուց պակաս շրջանում ժողովրդի մեծ մասին կոտորում են, այնպես որ հազվադեպ փրկվում է միայն փախստականը: Սա չլսված բան է:

Ապա, երբ վերջացրին գործը Ատրպատականում և Աղվանքում, գրնացին Դարբանդ-Շիրուան, տիրեցին նրա քաղաքներին, բացի այն բերդից, ուր նրանց թագավորն էր: Այնտեղից գնացին Ալանաց (ալ-Լան) երկիրը և ալ-Լաբդ և այնտեղ եղած տարբեր ցեղերին լրիվ կոտորեցին, կողոպտեցին ու ավերեցին [երկիրը], ապա ուղղվեցին դեպի Ղազաղների (Կիֆչակ) երկիրը, որոնք թուրքերի մեջ ամենաբազմամարդն են, և ում որ հանդիպեցին, կոտորեցին: Մնացածները փախան անտառներն ու լեռների գագաթները, թողնելով իրենց երկիրը, իսկ թաթարները նվաճեցին: Նրանք այս բանն արեցին ամենակարճ ժամանակում, պարզապես արշավի ժամանակ:

Մի ուրիշ խումբ գնաց Ղազնա և նրա շրջաններն ու դրացի երկրները՝ Հնդկաստան (ալ-Հինդ), Սիջիստան, Քիրման և այնտեղ արեցին նույնը և դեռ ավելի վատ:

Սա նմանը չլսված բան է: Ալեքսանդրը (Իսքանդար), որի համար

պատմիչները ասում են, որ տիրեց ամբողջ աշխարհին, նման արագությամբ չի տիրացել, այլ մոտավորապես տասը տարվա ընթացքում: Նա ոչ ոքի չի սպանել, այլ մարդկանցից պահանջում էր միայն հպատակություն: Սրանք (թաթարները) մոտավորապես մեկ տարում տիրեցին աշխարհի մեծագույն մասին, ամենալավ, ամենաքաղաքակիրթ, ամենախիտ բնակեցված և ամենակիրթ ժողովուրդ ունեցող երկրներին: Իսկ այն երկրներում, որ նրանք չէին նվաճել, ամեն մարդ վախով էր քնում, սպասում ու հետևում, թե երբ կգան:

Նրանք (թաթարները) կարիք չունեն պարենի և օգնության, քանզի նրանց հետ են իրենց հոտերը, կովերը, ձիերը և այլ կենդանիներ: Միայն նրանց միսն են ուտում, իսկ իրենց հեծած անասունները սմբակներով գետինն են փորում և ուտում բույսերի արմատները ու չգիտեն գարին: Այս պատճառով, երբ նրանք որս է տեղ իջնում են, դրսից որևէ բանի կարիք չեն ունենում:

Ինչ վերաբերում է նրանց կրոնին, ապա նրանք պաշտում են արեգակը իր ծագած ժամանակ: Նրանք ոչ մի բան արգելված չեն համարում և ուտում են բոլոր կենդանիներին, նույնիսկ շներ, խոզեր և այլն: Չգիտեն ամուսնությունը, այլ մեկից ավելի տղամարդիկ կարող են մոտենալ մի կնոջ և, երբ երեխան ծնվում է, չգիտի իր հորը:

Այս ամբողջ ընթացքում իսլամը և մահմեդականները այնպիսի պատուհասների հանդիպեցին, որոնց նմանը ոչ ոքի չի պատահել: Այս թաթարները, ալլահը նրանց այլանդակի, եկան արևելքից ու գործեցին այն, ինչից լսողը սարսափում է և կկարդաս [ով ընթերցող] մանրամասն բացատրված, եթե ալլահը կամենա:

Նման (աղետ) էր, օրինակ, ֆրանկների, ալլահի անեծքը նրանց վրա, դուրս գալը արևմուտքից դեպի Ասորիք (Շամ) և ապա Եգիպտոս (Միսր), Դամիեթի (Դիմիաթ) ամրությունները գրավելը: Նրանք կամենում էին [ամբողջովին] գրավել Եգիպտոսն ու Ասորիքը, եթե չլինեք ալլահի ողորմածությունը և նրա օժանդակությունը նրանց դեմ: Այս բոլորը մենք հիշել ենք վեց հարյուր տասնչորս թվականի տակ:

Մի [աղետ] էլ այն էր, որ ովքեր այս երկու խմբերից (թաթարներից ու ֆրանկներից) ազատ են, նրանք էլ իրար դեմ սուր են բարձրացնում և խռովությունը միշտ առկա է: Այս էլ ենք նշել:

Հայցում ենք ալլահից, որ իսլամին ու մահմեդականներին հաղթանակ շնորհի, քանզի այլևս չկա իսլամի պաշտպան, զորավիգ ու պահապան:

Բանն այն է, որ թաթարները կարողացան այս բոլորն անել, քանզի չկար արգելող և դրա չլինելու պատճառն այն էր, որ Մուհամմադ խորեզմ

Շահը տիրել էր ամբողջ երկրին, սպանելով մյուս թագավորներին և ինքը մենակ մնացել էր երկրի սուլթան (տիրակալ)։ Երբ նրանցից (թաթարներից) պարտվեց, ոչ ոք չմնաց երկրում, որ կանգնեցնի նրանց ու պաշտպանի երկիրը։

էջ 335—336

ԹԱԹԱՐՆԵՐԻ՝ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ ձմեռը վրա հասավ, թաթարները Համագանում ու Ջաբալ նահանգում խիստ ցրտի հանդիպեցին և շատ ձյուն տեսան, ուստի գնացին Ատրպատական։ Ծանապարհին գյուղերում ու փոքր քաղաքներում կոտորեցին ու կողոպտեցին, ինչպես նախապես արել էին [այլ վայրերում] և ավերելով ու վառելով հասան Դավրեժ, ուր կար (իշխում էր) Ատրպատականի տեր Ուզբեք իբն ալ-Բահլավանը։ Սա դուրս չեկավ նրանց դեմ, ոչ էլ մտածեց նրանց հետ կովելու մասին, քանզի, ինչպես միշտ, ղեպաված էր անվերջ հարբեցողությամբ, գիշեր ու ցերեկ, առանց սթափվելու։ Սակայն նա մարդ ուղարկեց ու հաշտություն կնքեց՝ դրամ, զգեստներ ու կենդանիներ (գրաստ) խոստանալով և այս բոլորը ուղարկեց։ Նրանք հեռացան այնտեղից դեպի ծովի ափերը, քանի որ այնտեղ ցուրտը պակաս էր և ուզում էին ձմեռել, մանավանդ որ այնտեղ արոտավայրեր շատ կային իրենց կենդանիների համար։

Նրանք հասան Մուղան, ապա շեղվեցին դեպի վրաց (քուրջ) երկիրը։ Նրանց դեմ ելավ վրացիների (քուրջ) մեծ զորք՝ մոտավորապես տասը հազար ռազմիկ։ Կռիվը տեղի ունեցավ և վրացիք փախուստի մատնվեցին, մեծ մասը կոտորվեց։ Վրացիք Ատրպատականի տեր Ուզբեքին լուր ուղարկեցին՝ առաջարկելով նրան միասին դիմադրել թաթարներին։ Նրանք համաձայնեցին հավաքվել ձմեռն անցնելուց հետո։ Լուր ուղարկեցին նաև Խլաթի ու Ջաղիրայի տեր ալ-Մալիք ալ-Աշրաֆ իբն ալ-Մալիք ալ-Ադիլին, խնդրելով նրանից համաձայնել իրենց հետ։ Նրանք բոլորը կարծում էին, որ թաթարները ձմեռը կհամբերեն մինչև գարուն։ Սակայն այդպես չեղավ, այլ [թաթարները] շարժվեցին ու գնացին դեպի վրաց երկիրը։ Նրանց միացավ Ուզբեքի մամլուքներից մի թուրք մամլուք, որի անունն էր Ակուշ։ Սա հավաքեց այդ երկրի լեռների ու դաշտերի (անապատների) բնակիչներից թուրքմենների ու քրդերի և այլոց։ Այսպիսով մեծ բազմություն հավաքվեց։ Նա թաթարների հետ թղթակցեց՝ նրանց միանալու նպատակով։ Նրանք ընդառաջեցին այդ բանին ու համակրեցին նրան իրենց ցեղային հարազատության պատճառով։

Նրանք հավաքվեցին ու գնացին վրաց (քուրջ) երկիրը թաթարների Վորքի առջից: Գրավեցին նրանց բերդերից մեկը, ապա քանդեցին երկիրը, կողոպտեցին ժողովրդին, ունեցվածքը կողոպտեցին, մինչև որ հասան Տփղիսի մոտ: Վրացիք հավաքվեցին ու դուրս եկան լրիվ սպառազինությամբ: Սկզբում Ակուշը ընդհարվեց նրանց հետ այն մարդկանցով, որոնց հավաքել էր իր շուրջը: Սաստիկ կռիվ եղավ, որի ընթացքում երկու կողմերն էլ դիմացան և Ակուշի մարդկանցից շատերը սպանվեցին: Վրա հասան թաթարները, երբ վրացիք արդեն հոգնել էին կռվից: Նրանցից շատերը կոտորվեցին ու չդիմացան թաթարների առջև՝ խայտառակ պարտություն կրելով և ամեն կողմից սրի մատնվելով: Նրանք անթիվ անհամար կոտորվեցին: Ճակատամարտը տեղի ունեցավ այդ տարվա Զուլ-լ-Կադա ամսին (28 դեկտեմբեր—26 հունվար): Ապա նրանք կողոպտեցին երկրի այն մասերը, որոնք նախապես չէին կողոպտվել:

Այս թաթարների հետ կատարվեց այնպիսի բան, որի նմանը չի եղել ո՛չ հին և ո՛չ էլ նոր ժամանակներում: Մի խումբ մարդիկ դուրս եկան Զինաստանի սահմաններից և մի տարի շանցած նրանց մի մասը հասավ Հայաստան աշխարհը այս կողմից, իսկ Համադանի կողմից հարևան դարձան Իրաքին: Ալլահը վկա, որ մեզանից հետո եկողները շատ ժամանակ անց, երբ կարդան այս դեպքերի մասին գրված տողերը, չեն հավատա, կկասկածեն և իրավունք ունեն [կասկածելու]: Ով կկասկածի, թող կարդա այն, ինչ գրել ենք մենք և բոլոր նրանք, ովքեր հավաքել են պատմական դեպքերը մեր օրերում, մի ժամանակ, երբ բոլորը՝ գիտուն, թե անգետ, լավ գիտեն այս դեպքերը, քանզի դրանք հանրահայտ են:

Թող ալլահը մահմեդականներին և իսլամին պարգևի այնպիսի մարդիկ, ովքեր կկարողանան պահպանել ու պաշտպանել նրանց: Նրանք (մահմեդականները) նման հզոր թշնամու հետ գործ ունեցան այնպիսի ժամանակ, երբ ունեին մահմեդական թագավորներ, որոնց հետաքրքրությունը իրենց որովայնից ու հաճույքներից այն կողմ չէր անցնում: Մարգարեի երևան եկած օրից ի վեր, մինչև այսօր մահմեդականները չեն տեսել այսպիսի ցավ ու նեղություն, ինչպիսին նրանց պատճառեցին այս անհավատ, թշնամի թաթարները: Նրանք ոտք գերցին Մավարաանահը երկիրը, գրավեցին, ավերեցին, իսկ սա մի ընդարձակ երկիր է: Նրանց մի մասն անցավ գետը (Ամու Դարիա), մտավ խորասան, գրավեց և այնտեղ արեց նույնը, ապա գրավեց Ռեյր, ալ-Ջաբալ երկիրը, Ատրպատականը: Վերջապես նրանք հասան վրաց (քուրջ) երկիրը և նվաճեցին այն:

Մյուս թշնամին ֆրանկներն են, որոնք իրենց երկրից գալով հայտնվեցին Ռումի երկրի ծայրում՝ հյուսիս արևմտյան կողմում: Նրանք

հասան Եգիպտոս, գրավեցին Դամիթը (Դամիաթ), ուր և մնացին: Իսկ մահմեդականները չկարողացան նրանց հեռացնել այնտեղից և դուրս մղել: Եգիպտոսի մնացած մասերը նույնպես վտանգի տակ են:

Մահմեդականների համար ամենասարսափելին այն է, որ նրանց սուլթան Խորեզմ (Խուրիզմ) Շահ Մուհամմադը անհայտացել էր և ոչ ոք չգիտեր, թե իրոք ինչ էր պատահել նրան: Մերթ ասվում է, որ մեռել է Համադանում և թաքուն են պահում նրա մահը, մերթ ասվում է, թե Պարսից (Ֆարս) երկիրն է մտել, այնտեղ մահացել և այդ բանը ծածկել են, որպեսզի թաթարները չհետապնդեն: Մերթ էլ ասվում է, թե գնացել է Թաբարիստան, նավ է նստել և ապա մահացել այնտեղի կղզիներից մեկում: Մի խոսքով նա մահացել է: Վերջապես ճշտվեց նրա՝ Թաբարիստանի ծովում մեռած լինելու լուրը: Սա սարսափելի է այն պատճառով, որ Խորասանը, Իրաքը, Պարսկաստանը (Աջամ) մնացին լքված, անպաշտպան, առանց որևէ տիրակալի, որը պահպաներ նրանց: Իսկ թշնամին շրջում էր երկրում, խլելով իր ուզածը և չուզածը թողնելով: Նրանք քաղաք չթողեցին որ չկործանեն, ինչի կողքով անցնում էին, հրկիզում ու կողոպտում էին, իսկ ինչ որ իրենց պետք չէր, վառում էին: Նրանք կույտերով հավաքում էին մետաքսը, նույնպես և այլ ապրանքներ ու կրակ էին տալիս:

էջ 339

ԹԱԹԱՐՆԵՐԻ՝ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ԳԱԼՈՒ, ԱՐԴԱԲԻԼԻՆ ՏԻՐԵԼՈՒ ԵՎ ԱՅԼ
ԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ թաթարները Համագանի [գրավումը] վերջացրին, գնացին Ատրպատական, հասան Արդաբիլ, տիրեցին, շատ կոտորեցին, մեծ մասը ավերեցին և այնտեղից գնացին Դավրեթ (Տաբրիզ), որը կառավարում էր Շամս ալ-Դին ալ-Թուղրաին: Նա բնակիչներին համախմբեց, մինչդեռ նրա տեր Ուզբեք իբն Բահլավանը հեռացել էր: Սա մի անփույթ ամիր էր, որը շարունակում էր գիշեր-ցերեկ գինարբուքով զբաղվել: Նա մեկերկու ամիս չէր երևում մարդկանց և երբ որևէ ահազանգ էր լսում, սարսափահար էր լինում: Նրան էր պատկանում ամբողջ Ատրպատականն ու Առանը, սակայն նա ալլահի ամենաթույլ արարածն էր, որն ի վիճակի չէր երկիրը պաշտպանելու հարձակվող թշնամուց:

Երբ նա լսեց թաթարների գալուստը Համադանից, թողեց Դավրեթը (Տաբրիզ) ու գնաց Նախճավան (Նախջուան), իսկ իր ընտանիքն ու կանանց ուղարկեց Խոյ (Խուայ), որպեսզի իրենից հեռու լինեն:

Հիշյալ ալ-Թուղրաին իր ձեռքը վերցրեց քաղաքի կառավարումը, միավորեց բնակիչներին և քաջալերեց, որ չհանձնվեն՝ զգուշացնելով ըն-

կրճվելու ու անփութութեան հետեւանքներէց: Նա իր ջանասիրութեամբ ու կարողութեամբ ամրացրեց քաղաքը: Երբ թաթարները մոտեցան ու լսեցին, թե ինչպէս քաղաքի ժողովուրդը միահամուռ կերպով պատրաստ է կռւիւնքի և որ ամրացրել են քաղաքը, նորոգել պարիսպներն ու խրամատները, լուր ուղարկեցին, պահանջելով [միայն] դրամ և ղզեստներ: Նրանք իրար միջև համաձայնեցին, թե ինչ քանակութեամբ պետք է տային թե՛ մեկից, թե՛ մյուսից, [բնակիչները] ուղարկեցին և սրանք վերցնելով գնացին Սարաու քաղաքը, կողոպտեցին, բռնորին կոտորեցին և ապա գնացին Բայլական, որն Առանում է: Իրենց անցած բոլոր քաղաքներն ու գյուղերը կողոպտեցին, ավերեցին, և բնակիչներից ում որ բռնեցին, սպանեցին:

Երբ Բայլական էին հասել ու պաշարել, բնակիչները խնդրեցին, որ իրենց մոտ մի դեսպան ուղարկվի, որպեսզի նրա հետ խաղաղութեան պայմանները որոշեն: Սրանք (թաթարները) իրենց մեծամեծներից ու առաջնորդներից մեկին դեսպան ուղարկեցին, սակայն բնակիչները սպանեցին նրան: Թաթարները հարձակվեցին, կռուեցին, ապա սրի ուժով գրավեցին քաղաքը [վեց հարյուր] տասնութ թվականի Ռամադան ամսին (30 հոկտ.—28 նոյ.) ու սրի քաշեցին, կենդանի չթողնելով ո՛չ փոքրին, ո՛չ մեծին, ո՛չ էլ կանանց, այն աստիճանի, որ հղի կանանց որովայններն էին պատռում և սպանում սաղմերը: Նախ բռնաբարում էին կանանց, ապա սպանում:

Պատահում էր, որ նրանցից որեւէ մեկը ճանապարհին գնալիս հանդիպում էր մի խումբ մարդկանց, բռնորին մեկ-մեկ սպանում էր, սակայն ոչ ոք նրա վրա ձեռք չէր բարձրացնում:

Նրա [Բայլականի] և շրջակայքի կողոպուտն ու ավերումը վերջացնելուց հետո, նրանք գնացին Գանձակ (Քանջա) քաղաքը, որը Առան երկրի մայր [քաղաքն] է, սակայն իմանալով նրա բնակիչների բազմամարդոթեան և վրացիների (քուրջ) դեմ հաճախակի կռիւների ընթացքում ձեռք բերած քաջութեան ու քաղաքի անառիկութեան մասին, չհարձակվեցին, այլ լուր ուղարկեցին բնակիչներին՝ պահանջելով դրամ ու ղզեստներ: Սրանք ուղարկեցին ինչ որ պահանջվում էր, և նրանք (թաթարները) հեռացան:

էջ 339

ԹԱԹԱՐՆԵՐԻ՝ ՎՐԱՅ ԵՐԿԻՐԸ ՀԱՍՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ թաթարները իրենց գործը վերջացրին մահմեդական երկրներում՝ Ատրպատականում և Առանում, մի մասը [սրով] նվաճելով, իսկ մի մասը հաշտութեամբ [գրավելով], շարժվեցին դեպի վրաց (քուրջ) երկիրը³²⁹, որը նույնպէս այդ երկրամասում է:

Վրացիք (քուրջ) նրանց դեմ պատրաստվել էին և մեծ զորք էին հավաքել իրենց երկրի սահմանային կողմերում, որպեսզի թաթարներին արգելեն ներս մտնել: Եկան թաթարները և ընդհարվեցին նրանց հետ, սակայն վրացիք չկարողացան դիմանալ, փախուստի դիմեցին, սրի քաշվեցին և միայն փախստականը հարողացավ փրկվել: Ինձ տեղեկացրել են, որ [թաթարները] նրանցից մոտավորապես երեսուն հազար հոգու կոտորել են, կողոպտել նրանց երկիրը և ավերել՝ ըստ իրենց սովորության:

Երբ փախստականները Տփղիս (Տաֆլիս) հասան, ուր նրանց թագավորն էր, այլ զորախմբեր ևս հավաքվեցին և ուղարկվեցին թաթարների դեմ, որպեսզի արգելեն իրենց երկրի միջին մասերը մտնել: Սակայն տեսան, որ թաթարները մտել են երկիրը և այլևս ոչ մի լեռ, կիրճ կամ այլ բան չի խանգարում նրանց: Երբ տեսան նրանց արածը, վերադարձան Տփղիս (Տաֆլիս) և երկիրը դատարկեցին, իսկ թաթարները իրենց ուզածը արեցին երկրում՝ կողոպտեցին, կոտորեցին, ավերեցին, սակայն տեսնելով, որ երկիրը շատ կիրճեր ու լեռնանցքներ ունի, չհամարձակվեցին խորքը ներթափանցել ու ետ դարձան:

Վրացիների սիրտը մեծ վախ ընկավ: Հսկել եմ վրաց մեծամեծներից մեկից, որը դեսպան էր եկել և ասում էր՝ եթե որևէ մեկը ձեզ ասի, թե թաթարները պարտվել կամ գերի են ընկել, չհավատաք, իսկ եթե ասեն, թե սպանվել են, հավատացեք, քանզի այդ մարդիկ երբեք չեն փախչում: Նրանցից մեկին գերի էինք բռնել, բայց սա իրեն ձիուց ցած գցեց, գլուխը այնքան խփեց քարին, մինչև որ մեռավ ու այդպիսով գերի չընկավ:

էջ 339—340

ՆՐԱՆՑ՝ ԴԱՐԲԱՆԳ-ՇԻՐՈՒԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ թաթարները վրաց (քուրջեր) երկրից վերադարձան, դիմեցին Դարբանդ-Շիրուան, պաշարեցին Շամախի քաղաքը, կռվի բռնվեցին բնակիչների հետ, որոնք համառ կերպով դիմացան պաշարմանը: Սակայն թաթարները աստիճաններով բարձրացան պարիսպը: Ասվում է նաև, որ նրանք հավաքեցին ուղտերի, կովերի, ոչխարների և մեռածների դիակներ թե՛ իրենցից, թե՛ ուրիշներից և այս բոլորը իրար վրա գցելով ստեղծվեց մի բլուր, որի վրա բարձրանալով քաղաքի վրա տիրապետող դիրք ունեցան: Կռվեցին բնակիչների հետ, սակայն սրանք դիմացան, և երբ օր սաստիկ կռիվ եղավ: Երբ արդեն քիչ էր մնացել, որ [թաթարները] գրավեին, նրանք իրար ասացին՝ սրից աղատում չկա, ուստի ավելի լավ է համբերել ու պատվով մեռնել: Այդ գիշեր նրանք դիմացան:

Գիշերը դիակները նեխեցին ու [կույտը] նստեց և թաթարները այլևս պարիսպի դիմաց բարձր դիրք չունեին և ոչ էլ գերակշռություն կույի մեջ։ Սակայն նրանք կրկին գրոհեցին և սկսեցին կովել։ Բնակիչները հոգնած, ուժասպառ ու թուլացած էին, ուստի ընկճվեցին, իսկ թաթարները գրավեցին քաղաքը, շատերին կոտորեցին, ունեցվածքը կողոպտեցին և այլանդակություններ գործեցին։ Այնտեղ իրենց դործը վերջացնելով՝ նրանք կամեցան անցնել Դարբանդը, սակայն չկարողացան ու լուր ուղարկեցին Դարբանդ-Շիրուանի թագավոր Շիրուան Շահին, որ իրենց դեսպան ուղարկի հաշտության [պայմանագիր] կնքելու համար։ Սա տասը մարդ ուղարկեց իր մերձավոր մեծամեծներից։ Սրանք մեկին սպանեցին, իսկ մնացածներին ասացին՝ եթե մեզ ցույց տաք անցնելու ճանապարհը, ձեզ երաշխավորագիր կտանք, ապա թե ոչ, սրա նման կսպանենք։ Ասացին՝ Դարբանդը ոչ մի ճանապարհ չունի, այլ կա մի տեղ, որ համարվում է եղած ճանապարհների ամենահեշտ (անցանելին)։ Նրանք միասին գնացին այդ ճանապարհով, անցան [Դարբանդը], այն իրենց ետևը թողնելով։

էջ 340

ԹԵ ԻՆՉ ԱՐԵՑԻՆ ՆՐԱՆՔ ԱԼԱՆԱՑ ՈՒ ՂՓՁԱՂՆԵՐԻ ՀԵՏ

Երբ թաթարները անցան Դարբանդ-Շիրուանը, մտան այն գավառները, որտեղ ապրում էին շատ ազգեր (ցեղեր), որոնցից են ալանները (ալ-լան), լաքերը (ալ-լաք) և թուրքերի ցեղեր։ Նրանք շատ կողոպտեցին, կոտորեցին լաքերին, որոնք թե՛ մահմեդական են, թե՛ անհավատ, և այդ երկրում իրենց թշնամի բնակչությանը սրի քաշեցին։ Նրանք հասան ալաններին, որոնք բազմաթիվ ազգերից (ցեղերից) են բաղկացած։ Սրանք լսել էին նրանց (թաթարների) մասին և ջանասիրությամբ հավաքել բազմաթիվ զփշաղների (կիֆջակ)։ Նրանք ընդհարվեցին, սակայն ոչ մի կողմը մյուսին չհաղթեց։

Թաթարները լուր ուղարկեցին զփշաղներին, ասելով՝ մենք և դուք մի ցեղից ենք, այդ ալանները ձեզանից չեն, իսկ դուք օգնում եք, ոչ էլ ձեր կրոնը նրանց կրոնին նման է։ Մենք ձեզ պայման ենք դնում, որ ձեզ ձեռք չենք տա և կտանք այնքան դրամ ու զգեստ, ինչքան կամենաք, միայն թե մի մտեք մեր և նրանց միջև։ Նրանք պայմանավորվեցին տալ դրամ, ըզդեստներ և այլ բաներ և իրոք նրանք (թաթարները) այս բոլորը տարան նրանց մոտ՝ ըստ պայմանավորվածության, իսկ զփշաղները հեռացան։

Թաթարները հարձակվեցին ալանների վրա, սաստիկ կոտորեցին, կողոպտեցին, գերեվարեցին [ժողովրդին]: Ապա նրանք գնացին Ղփչաղ-
ների մոտ, որոնք իրենց ապահով զգալով, ցրված էին, քանի որ պայ-
մանագիր ունեին: Սրանք շաթափվեցին, մինչև որ [թաթարները] հար-
ձակման անցան, մտան նրանց երկիրը և հերթով ջարդեցին և խլեցին
նրանցից իրենց տվածի երկու անգամից ավելի: Հեռու ապրող Ղփչաղները,
երբ լսեցին այս մասին, առանց կովի փախան ու հեռացան, ոմանք ա-
պաստան գտան անտառներում, ոմանք լեռներում, իսկ մի մասն էլ փա-
խավ ոռոսաց երկիրը:

էջ 344—345

ԱՇՐԱՖԻ ԽԼԱԹԸ ԻՐ ԵՂԲՈՐԸ՝ ՇԻՀԱԲ ԱԼ-ԴԻՆ ՂԱԶԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարվա վերջերին ալ-Մալիք ալ-Աշրաֆ Մուսա իբն ալ-Ադիլը
Խլաթ քաղաքը Հայաստանի բոլոր գավառներով և նփրկերտ քաղաքը
Դիար Բաքրից, ինչպես նաև Հանի քաղաքը, որպես տիրույթ, պարգևեց իր
եղբորը՝ Շիհաբ ալ-Դին 'Հազի իբն ալ-Ադիլին, նրանից վերցնելով Եղե-
սիա (Ռուհա) և Սարուջ քաղաքները՝ Զազիրա երկրում: Նա նրան տարավ
Խլաթ, վեց հարյուր տասնութ թվականի սկզբին:

Բանն այն է, որ թաթարների՝ վրաց (քուրջ) երկիրը հարձակվելուց,
հաղթելուց, կողոպտելուց ու ժողովրդին խիստ կոտորելուց հետո, վրա-
ցիք [ղեկավար] ուղարկեցին Ատրպատականի ու Առանի տեր Ուզբեքին,
առաջարկելով նրան դաշինք ու պայմանագիր կնքել թաթարներին ետ
մղելու համար: Նրանք այդ նպատակով [նամակ] ուղարկեցին ալ-Մալիք
ալ-Աշրաֆին, ասելով բոլորին՝ եթե չհամաձայնեք մեզ հետ այդ մարդ-
կանց դեմ կռվել և ետ մղել մեր երկրից, անձամբ ու զորքով մասնակ-
ցելով այս կարևոր գործին, ապա մենք նրանց հետ կմիանանք ձեր դեմ:

Դեսպանները հասան Աշրաֆի մոտ այն ժամանակ, երբ նա պատ-
րաստվում էր գնալ Եգիպտոս ֆրանկների դեմ կռվելու: Սա նրա համար
ավելի կարևոր էր շատ պատճառներով: Առաջին՝ ֆրանկները գրավել էին
Դամիեթը (Դիմիաթ), ու Եգիպտոսը նվաճման սպառնալիքի առջև էր և
եթև նրանք գրավեին, ապա ո՛չ Ասորիքում, ո՛չ էլ այլուր այլևս [Այյուբ-
յանների] ոչ մի տիրույթ չէր մնա: Երկրորդ՝ ֆրանկները ավելի ուժեղ էին
և տիրելու ավելի ձգտում ունեին, [քան թաթարները]: Եթե մի գյուղ գրա-
վեին, չէին թողնի, մինչև որ համոզվեին, որ այլևս մեկ օր էլ պաշտպան-
վելու հնարավորություն չունի: Երրորդ՝ ֆրանկները աչք ունեին Ադիլյան

(Այլուբյան) տան իշխանական [գլխավոր] աթոռին, որը Եգիպտոսն էր, իսկ թաթարները այնտեղ չէին հասել, սրանց (Այլուբյանների) հողերը չէին անցել և իշխանությանը աչք չունեին, այլ նրանց նպատակն էր պարզապես կողոպտել, կոտորել, երկիրը ավերել և այսպես գնալ երկրից երկիր:

Ուստի, երբ նրա մոտ հասան վրաց դեսպանները, պատասխան տվեց, պատճառաբանելով, որ ստիպված էր գնալ Եգիպտոս՝ ետ մղելու ֆրանկներին: Նա ասաց նրանց՝ իլաթ նահանգը ես որպես տիրույթ պարզեցի եմ եղբորս ու նրան այնտեղ հաստատել, որպեսզի ձեզ մոտ լինի: Ես նրա մոտ զորք եմ թողել և, երբ որ օգնության կարիք ունենաք, նա կգա թաթարներին ետ մղելու:

Իսկ ինքը, ինչպես ասացինք, գնաց Եգիպտոս:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(25 փետրվար 1221—14 փետրվար 1222)

Էջ 346—347

ՏԱՐԲԵՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում մահմեդականները ֆրանկների ձեռքից վերագրավեցին Դամիեթը (Դիմիաթ) Եգիպտոսում, ինչպես նախապես մանրամասն նրկարագրել ենք:

Այդ տարում՝ Սաֆար ամսին (7 ապրիլ—6 մայիս), թաթարները գրավեցին Մարաղան, կործանեցին, հրկիզեցին, բնակիչների մեծ մասին կոտորեցին, ունեցվածքը կողոպտեցին, կանանց գերեվարեցին: Դրանից հետո թաթարները գնացին Համադան, պաշարեցին, բնակիչները կռվի ելան, սակայն թաթարները հաղթեցին, անթիվ անհամար կոտորեցին, կողոպտեցին երկիրը: Ապա շարժվեցին դեպի Ատրպատական և նորից կողոպտեցին ու ինչ որ նախորդ հարձակման ժամանակ չէին հափշտակել, այս անգամ տարան:

Նրանք հասան Առան երկրի Բայլական քաղաքը, որը պաշարեցին ու գրավեցին, բնակիչներին կոտորեցին այնքան, որ գրեթե բնաջինջ արեցին: Երկրի մեծ մասի բնակիչներին կոտորեցին, կողոպտեցին ունեցվածքը: Նրանք գնացին Դարբանդ-Շիրուան, պաշարեցին Շամախի քաղաքը, գրավեցին ու բնակիչներից շատերին կոտորեցին, ապա շարժվեցին դեպի ալանաց (ալ-լան) և լաբդերի (ալ-լաբդ) ու հարևան ցեղերի (երկրները) ու կոտորեցին նրանց:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ

(15 փետրվար 1222—3 փետրվար 1223)

էջ 348—349

ՂԺՋԱՂՆԵՐԻ ՄԻ ԽՄԲԻ՝ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿԵԼՈՒ, ՎՐԱՑԻՆԵՐԻ
ՀԵՏ ՆՐԱՆՑ ԱՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՊԱՏԱՀԱԾԻ ՄԱՍԻՆ

Երբ թաթարները գրավեցին Ղփչաղների (կիֆչակ) հողը, սրանք ցրվեցին: Մի խումբ դիմեց Ռուսաց երկիրը, մի այլ խումբ ցրվեց լեռներում: Իսկ մի մեծ խումբ հավաքվեց ու գնաց Դարբանդ-Շիրուան:

Սրանք (ղփչաղները) մարդ ուղարկեցին նրա տիրոջը, որի անունն էր Ռաշիդ և ասացին՝ թաթարները տիրել են մեր երկրին, հափշտակել մեր ունեցվածքը, ահա եկել ենք քեզ մոտ, որպեսզի քո երկրում ապրենք, կլինենք քո մամուլները (ստրուկները), քեզ համար երկրներ կնվաճենք, իսկ դու մեր սուլթանը (տիրակալը) կլինես: Սակայն նա չընդունեց այդ բանը, զգուշանալով նրանցից: Նրանք կրկին նամակ ուղարկեցին, ասելով՝ մեր զավակներին ու կանանց պատանդ կթողնենք քեզ մոտ, պարտավորեցնելով հնազանդ լինել, ծառայել քեզ, հպատակվելով քո իշխանությանը: Նա չպատասխանեց նրանց պահանջին: Այս անգամ խնդրեցին, որ հնարավորություն տա իր քաղաքում պարենավորվելու, ընդ որում, տասը-տասը [հոգի] պետք է մտնեն և անհրաժեշտը գնելուց հետո, հեռանալին նրա քաղաքից: Նա համաձայնեց և նրանք սկսեցին խմբերով մտնել ուղածը գնել ու դուրս գալ:

Սակայն նրանց (ղփչաղների) մեծամեծներից ու երեւելիներից մեկը եկավ Ռաշիդի մոտ ու ասաց՝ ես եղել եմ սուլթան Խորեզմ Շահի ծառայության մեջ, ես մահմեդական եմ, իսկ կրոնը ինձ դրդում է քեզ խորհուրդ տալ: Գիտցիր, Ղփչաղները քո թշնամիներն են, ուղում են քեզ նենգել, թույլ մի տուր, որ նրանք մնան քո երկրում: Ինձ զորք տուր, որ կովեմ նւրանց հետ ու դուրս բերեմ երկրից:

Այդպես էլ արեց [Ռաշիդը] ու հանձնեց նրան մի զորամաս, տալով պետք եղած զենքը և այլ բաներ: Նա գնաց ու հարձակվեց Ղփչաղների մի խմբի վրա, մի մասին կոտորեց, մյուս մասին կողոպտեց: Սակայն Ղփչաղները տեղից չշարժվեցին կովի համար, այլ ասացին՝ մենք ալ-Մալիք (թագավոր) Շիրուան Շահ Ռաշիդի մամուլներն (ստրուկներն) ենք, ուստի չենք կովի նրա զորքի դեմ:

Երբ այս Ղփչաղ առաջնորդը վերադարձավ, իր հետ ունենալով Ռաշիդի տված զորքը՝ անվնաս վիճակում, [Ռաշիդը] ուրախացավ: Ապա Ղփչաղները թողեցին իրենց եղած տեղը ու երեք օր գնացին: Այս Ղփչաղը

ասաց Ռաշիդին՝ զորք եմ ուղում, որպեսզի հետապնդեմ նրանց: Նա հրամայեց զորք տալ ինչքան որ կամենա: Սա հետապնդեց ղփչաղներին, ջարդեց նրանց վերջապահ [դունդը] ու կողոպտեց: Նրա մոտ եկավ ղրփչաղների մի մեծ բազմություն՝ տղամարդիկ ու կանայք, իրենց մազերը կտրած, արտասովորով և իրենց հետ ունեին մի դագաղ, որը շրջապատել ու արտասովոր էին: Ասացին՝ քո բարեկամ այսինչը մահացել է, նա կտակել էր, որ իրեն բերենք քեզ մոտ, որ դու թաղես ուր որ կամենաս, իսկ մենք կլինենք քեզ հետ:

Սա վերցրեց այն, ինչպես նաև նրան ողբացողներին ու վերադարձավ Շիրուան Շահ Ռաշիդի մոտ, տեղեկացնելով, որ հանգուցյալը նրա բարեկամն էր, ուստի բերել է իր հետ, իսկ նրա հարազատները խնդրեցին, որ լինեն իր հետ ու ծառայեն իրեն: Սա (Ռաշիդը) թույլ տվեց, որ քաղաք մտնեն և այնտեղ իջևանեն: Այս մարդիկ եկան այդ առաջնորդի հետ, հեծնում էին նրա հեծնելու հետ միասին և նրա հետ բարձրանում էին միջնաբերդ, ուր Ռաշիդն էր, նստում նրա մոտ և միասին էին խմում թե՛ նրանք, թե՛ նրանց կանայք:

Եվ ահա Ռաշիդը սիրեց այն մարդու կնոջը, որի համար ասում էին, թե մահացել է: Սակայն նա չէր մահացել, այլ այս բանն արել էին, որպես ծուղակ, որպեսզի մտնեին քաղաք, իսկ նա, որին մեռած էին հայտարարում, իրենց հետ էր նստած և Ռաշիդը չէր ճանաչում նրան: Նա ղփչաղների ամենամեծ երեւելիներից էր: Այսպես մնացին մի քանի օր և ամեն օր տարբեր խմբերով ղփչաղներ էին գալիս: Նրանք հավաքվեցին միջնաբերդում և կամենում էին բռնել Ռաշիդին ու երկիրը գրավել: Սա կռահեց, դուրս եկավ միջնաբերդի գաղտնի գոնից ու փախավ Շիրուան:

Ղփչաղները տիրեցին միջնաբերդին ու ասացին քաղաքի ժողովրդին. մենք ձեզ համար Ռաշիդից լավ ենք: Նրանք իրենց մնացած մարդկանց իրենց մոտ բերեցին և քաղաքում եղած ամբողջ զենքը գրավելով տիրացան Ռաշիդի միջնաբերդում եղած ունեցվածքին:

Ապա դուրս գալով միջնաբերդից դիմեցին Կապաղակ (Կաբալա), որը վրացիներին էր պատկանում, իջան այնտեղ ու պաշարեցին: Երբ Ռաշիդը լսեց նրանց միջնաբերդից դուրս գալը, եկավ ու գրավեց, կոտորելով այնտեղ եղած բոլոր ղփչաղներին: Կապաղակում եղած ղփչաղները այս բանը չկռահեցին և մի զորամաս ուղարկեցին միջնաբերդ, իսկ Ռաշիդը նրանց ևս կոտորեց: Լուրը հասավ ղփչաղներին ու նրանք վերադարձան Դաբրանդ՝ այլևս հույս չունենալով գրավել միջնաբերդը:

Երբ նրանք պաշարում էին Կապաղակը, նրա տերը լուր էր ուղարկել, ասելով՝ ես [մարդ] կուղարկեմ վրաց թագավորին, որպեսզի ձեզ ուղարկի պատմուճաններ ու զգեստներ և մենք միանալով ձեզ հետ, կտիրենք

երկրին: Սրանք մի քանի օր շկողոպտեցին այդ նահանգը, սակայն շուտով իրենց ձեռքերը երկարեցին, [կրկին] կողոպտեցին ու ապականեցին: Նրանք կողոպտեցին ամբողջ Կապադակի երկիրը և հասան Գանձակ (Գանջա, Քանջա), որը Առան երկրում էր ու պատկանում էր մահմեդականներին: Նրանք կանգ առան այստեղ: Գանձակի ամիրը, որը Ատրպատականի տեր Ուզբեքի մամլուքն էր Քուշխարա անունով, զորք ուղարկեց, որը թույլ չտվեց, որ նրանք մտնեն այդ երկիրը: Նա դեսպան ուղարկեց, ասելով՝ նենգություն մեծ վարվեցիք Շիրուանի տիրոջ հետ ու գրավեցիք նրա միջնաբերդը, նենգություն մեծ վերաբերվեցիք Կապադակի տիրոջ հետ և նրա երկիրը կողոպտեցիք, էլ ո՞վ կվստահի ձեզ: Նրանք պատասխանեցին՝ մենք եկել էինք միայն ծառայելու ձեր սուլթանին, սակայն Շիրուան Շահը արգելեց մեզ ձեր մոտ գալու, ուստի գնացինք նրա երկիրը ու գրավեցինք նրա միջնաբերդը, ապա այն լքեցինք, սակայն ոչ վախից: Ինչ վերաբերում է Կապադակի տիրոջը, ապա նա ձեր թշնամին է և. եթե ցանկանայինք գնալ վրացիների մոտ, չէինք անցնի Դարբանդ-Շիրուանի ճանապարհով, քանզի դա ամենադժվար, հոգնեցուցիչ ու հեռավոր ճանապարհն է, այլ կմտնեինք նրանց երկիրը սովորական ձևով: Մենք ձեզ ուղարկում ենք պատանդներ:

Երբ [ամիրը] այս բանը լսեց, գնաց նրանց կողմը: Ղփչաղներն իմացան այդ բանը և ահա երկու ձիավոր ամիրներ, որոնք նրանց առաջնորդներից էին, փոքրաթիվ մարդկանցով եկան նրա մոտ, հանդիպեցին ու խոնարհաբար ողջունելով, ասացին՝ մենք եկել ենք ձեզ մոտ փոքր թվով, որպեսդի իմանաք, թե մեր նպատակն է միայն հավատարմություն ու ծառայություն առաջարկել ձեր սուլթանին: Քուշխարան թույլ տվեց նրանց գնալ ու տեղավորվել Գանձակի մոտ: Նա ամուսնացավ նրանցից մեկի դստեր հետ և լուր ուղարկեց իր տիրոջը՝ Ուզբեքին բացատրելով վիճակը: Սա հրամայեց նրանց [նվիրել] պատմուճաններ (խիլա) և տեղավորեց Վիլքուն³⁰ լեռան մոտ և այդպիսով: Էլ չարեցին:

Սակայն վրացիք վախեցան այդ բանից ու զորք հավաքեցին, որպեսդի հանկարծակի հարձակվեն նրանց վրա: Լուրը հասավ Գանձակի ամիր Քուշխարային, որը տեղեկացրեց Ղփչաղներին, հրամայելով վերադառնալ և տեղավորվել Գանձակի մոտ: Նրանք եկան և այնտեղ տեղավորվեցին:

Իսկ Ղփչաղ ամիրներից մեկը մի խմբի հետ դնաց վրացիների (քուրջ) դեմ, հանկարծակի բերեց նրանց, շատերին սպանեց ու փախուստի մատնեց, ավարի տվեց նրանց ունեցվածքը, կոտորեց, գերեվարեց և բոլորին փախուստի մատնեց: Ղփչաղները վերադարձան Վիլքուն լեռը և նախկինի նման այնտեղ կանգ առան: Նրանց տեղավորելուց հետո, Ղփչաղ ամիրներ-

րից մի ուրիշը ուզեց վրացիների հետ անել այն, ինչ իր ընկերն էր արել: Երբ Քուշխարան լսեց, լուր ուղարկեց զգուշացնելով շարժվել, մինչև որ պարզի վրացիների (քուրջ) գրությունը: Սակայն սա առանց տեղեկանալու շարժվեց դեպի նրանց երկիրը իր զորքի հետ միասին: Նա կողոպտեց, ավերեց և ավար վերցրեց:

Իսկ վրացիք (քուրջ) եկան մի ճանապարհով, որ միայն իրենք գիտեին ու կանխեցին նրան և երբ սա հասավ, կռվի ելան նրա դեմ, նրան ու ընկերակիցներին հանկարծակիի բերելով, սրի քաշեցին և շատերին կոտորեցին, նրանցից ետ խլելով ավարը: Նա և իր զորքը ամենախայտառակ վիճակում վերադարձան ու դիմեցին Պարտավ:

Լուր ուղարկեցին Քուշխարային, խնդրելով, որ ինքը զորքի հետ գա, որպեսզի հարձակում գործեն վրացիների (քուրջ) դեմ ու վրեժ լուծեն: Սակայն նա այդպես չարեց և զգուշացրեց նրանց, ասելով՝ դուք ինձ չհնազանդվեցիք և ձեր կարծիքով շարժվեցիք, ես ձեզ նույնիսկ մի ձիավոր չեմ տա: Նրանք լուր ուղարկեցին, խնդրելով ետ տալ պատանդներին, որոնք նրա մոտ էին, սակայն նա չտվեց: Այդ ժամանակ նրանք հավաքվեցին և բազմաթիվ մահմեդականների գերեցին պատանդների փոխարեն: Սակայն երկրի մահմեդականները ապստամբեցին նրանց դեմ, կռվի ելան ու շատերին կոտորեցին:

Նրանք (ղփաղները) վախեցան ու դնացին Շիրուան, ապա անցան ալ-Լաբղ երկիրը: Մահմեդականները, վրացիք, լաբղերը և ուրիշներ համարձակություն ստանալով հարձակվեցին, ոչնչացրին նրանց կոտորելով, կողոպտելով, գերելով ու գերեվարելով, այնպես որ նրանց մի մամլուբը Դարբանդ-Շիրուանում վաճառվում էր շնչին գնով:

էջ 349

ՎՐԱՑԻՆԵՐԻ՝ ԲԱՅԼԱԿԱՆՐ ԱՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Ռամադան ամսին (9 հոկտեմբեր—8 նոյեմբեր), վրացիք (քուրջ) իրենց երկրից գնացին Առան երկիրը ու դիմեցին Բայլական քաղաքը, որ թաթարները ավերել էին ու կողոպտել ինչպես արդեն հիշեցինք:

Երբ թաթարները գնացին ղփաղների երկիրը, ողջ մնացածները վերադարձել էին քաղաք ու ինչքան հնարավոր էր, վերականգնել էին պարիսպները: Մինչ այս վիճակում էին, եկան վրացիք, մտան երկիրը, գրավեցին: Մահմեդականները արդեն սովորել էին, որ երբ վրացիք գրավում էին մի քաղաք, նրանց (բնակիչների) հետ լեզու էին գտնում որոշ գումարի դի-

մաց և վերադառնում էին: Այնպես որ, վրացիք լավագույն թշնամիներն էին:

Այս անգամ էլ մահմեդականները կարծեցին, որ նույն բանը կարող են անել և պետք եղած դիմադրությունը չցուցաբերեցին և ոչ էլ փախան նրանց ձեռքից: Երբ վրացիք գրավեցին քաղաքը, սրի քաշեցին ժողովրդին, կոտորեցին ու կողոպտեցին թաթարների նման: Այս բոլորը կատարվում էր, իսկ Ատրպատականի տեր Ուզբեք իբն ալ-Բահլավանը, որը Դավրեժ (Տաբրիզ) քաղաքում էր, ո՛չ տեղից էր շարժվում, ո՛չ ազնվության, ո՛չ էլ բարի գործի [ընդունակ էր], այլ տարված էր ուտելով, անվերջ հարբեցողությամբ ու անառակությամբ: Թող ավազը խայտառակի նրան և մահմեդականներին այնպիսի մարդիկ տա, որոնք կպաշտպանեն նրան ու կըպահպանեն երկիրը:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆ

(4 փետրվար 1223—23 հունվար 1224)

էջ 350—351

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԿՌՎԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Շուաբան ամսին (30 օգոստոս—28 սեպտեմբեր), Սուրմարի ամրոցի տերը, որը Հայաստանի գավառներից է, գնաց Խլաթ, քանզի հպատակ էր Խլաթի տիրոջ, որն այդ ժամանակ Շիհաբ ալ-Դին Ղազի իբն ալ-Ադիլ Աբու Բաքր իբն Այյուբն էր:

Նա եկավ, իր փոխարեն տեղում թողնելով իր ամիրներից մեկին: Սա զորք հավաքեց ու հարձակվեց վրաց (քուրջ) երկրի (Հյուսիսային Հայաստանի) վրա, կողոպտեց բազմաթիվ գյուղեր ու վերադարձավ: Վրացիք (քուրջ) լսեցին այս բանը և Դուխնի տերը, որի անունն էր Շալուա և վրաց (քուրջ) մեծամեծ իշխաններից էր, զորք հավաքեց, շարժվեց դեպի Սուրմարի, այն օրերով պաշարեց, կողոպտեց քաղաքը, նրա շրջակայքը ու վերադարձավ:

Սուրմարիի տերը տեղեկանալով այդ մասին, վերադարձավ Սուրմարի և հասավ այն օրը, երբ վրացիք (քուրջ) հեռացել էին: Նա վերցրեց զորքը ու հետապնդեց նրանց և հարձակվելով վերջապահ [գնդի] վրա, կոտորեց, ավար վերցրեց և փրկեց իր երկրից վերցրած նրանց ավարը:

Ապա Դուխնի տերը զորք հավաքեց և շարժվեց դեպի Սուրմարի, որպեսզի պաշարի այն: Լուրը հասավ նրա տիրոջը, որը ամրացրեց [Սուրմարին], պաշար և այլ անհրաժեշտ բաներ կուտակեց: Նրան (Սուրմարի տիրոջը) տեղեկացրին, թե վրացիք (քուրջ) Դուխնի և Սուրմարիի միջև մի

կիրճում են կանգ առել, որը նեղ էր և ահա նա իր ամբողջ զորքով արագ-
րնթաց շարժվեց, որպեսզի հանկարծակիի բերի վրացիներին (քուրջ)։ Նա
հասավ նրանց գտնված կիրճը առավոտյան արշալույսին, իր զորքը երկու
մասի բաժանեց, ընդ որում մի մասը պետք է կիրճի վերևից [հարձակ-
վեր], իսկ մյուս մասը՝ ներքևից։ Հարձակվեցին վրացիների (քուրջ) վրա,
որոնք անտեղյակ էին, սրի քաշեցին. կոտորեցին ու գերեվարեցին։ Գերի
ընկածների մեջ էր նաև Դուինի իշխան (ամիր) Շալուան՝ մեծամեծների
մի խմբով։ Վրացիներից (քուրջ) ով որ ազատվեց, ամենավատ վիճակում
վերադարձավ քաղաք։

Ապա վրաց (քուրջ) թագավորը լուր ուղարկեց Զազիրայի տիրոջը՝
ալ-Մալիք ալ-Աշրաֆ Մուսա իբն ալ-Ազիլին, որը հլաթը և գավառները
տվել էր ամիր Շիհաբ ալ-Դինին, ասելով՝ կարծում էինք, թե մենք ձեզ հետ
խաղաղության մեջ ենք, իսկ Սուրմարիի տերը ահա այսպիսի արարքներ
է գործել։ Եթե հաշտության մեջ ենք, ցանկանում ենք, որ գերությունից
արձակեք մեր մարդկանց։ Իսկ եթե խաղաղությունը մեր միջև արդեն
խախտված է, ապա հայտնեցեք մեզ, որպեսզի մենք միջոցներ ձեռք առ-
նենք։ Աշրաֆը լուր ուղարկեց Սուրմարիի տիրոջը, հրամայելով արձա-
կել գերյալներին և վրացիներին (քուրջ) հետ հաշտությունը վերանորոգել։
Այսպես էլ արեց, խաղաղությունը վերահաստատվեց և գերիները ազատ
արձակվեցին։

էջ 351—352

ՄԻ ՏԱՐՈՐԻՆԱԿԻ ԴԵՊՔ, ՈՐԻ ՆՄԱՆԸ ԶԻ ԵՂԵԼ

Վրաց (քուրջ) թագավորական ընտանիքից մնացել էր միայն մի
կին, որին և փոխանցվել էր թագավորությունը։ Սա ստանձնեց այն, տնո-
րինեց գործերը և կառավարեց։ Նրանք փնտրեցին նրա համար մի տը-
ղամարդ թագավորական ընտանիքից, որն ամուսնանար նրա հետ ու
որպես տեղակալ տնօրիներ թագավորության գործերը նրա փոխարեն,
սակայն նրանց մեջ չկար մի հարմար անձնավորություն։

Այդ ժամանակ Կարնո քաղաքի (Արղան ալ-Ռումի) տերն էր Մուղիս
ալ-Դին Թուղրիլ Շահ իբն Կիլիշ Արսլան իբն Մանսուր Կիլիշ Արսլանը,
որի տոհմը նշանավոր էր որպես իսլամի մեծագույն թագավորների
[ընտանիք], քանզի նրանք սելջուկյան թագավորներից էին սերում։ Սա
մի մեծ որդի ուներ և վրացիներին լուր ուղարկեց խնդրելով թագուհուն
իր որդու հետ ամուսնացնել։ Նրանք հրաժարվեցին նրան բավարարել,
ասելով՝ չենք կարող այդ անել, քանզի մահմեդականը չի կարող մեր վրա
իշխել։ Նա ասաց՝ իմ որդին քրիստոնյա կդառնա ու կամուսնանա նրա

հետ: Այն ժամանակ համաձայնեցին: Սա հրամայեց իր որդուն և նա քրիստոնեությունն ընդունեց ու ամուսնացավ թագուհու հետ:

Նա տեղափոխվեց նրա (թագուհու) մոտ և դարձավ վրաց (քուրջ) երկրի տիրակալը ու մնաց քրիստոնյա:

Այս թագուհին սիրում էր իր ստրուկներից (մամլուք) մեկին, իսկ ամուսինը նրա մասին վատ բաներ էր լսում, սակայն իր թուլության պատճառով չէր կարողանում խոսել: Մի օր նա մտավ ու տեսավ նրան ստրուկի հետ անկողնում պառկած: Նա վրդովվեց և արգելեց նրան այդ բանը, սակայն նա (թագուհին) ասաց նրան՝ եթե համաձայն չես այս բանին, դու գիտես [անեկիքդ]: Ասաց՝ ես համաձայն չեմ այդ բանին: Սա (թագուհին) նրան տեղափոխել տվեց այլ քաղաք և հանձնարարեց. որ թույլ չտան ազատ շարժվել և արգելափակեց նրան:

Նա (թագուհին) մարդ ուղարկեց ալանաց (ալ-լան) երկիրը, երկու գեղեցկադեմ տղամարդկանց բերել տվեց և մեկի հետ ամուսնացավ, ապա որոշ ժամանակ նրա հետ մնալուց հետո բաժանվեց և մեկ ուրիշին բերել տվեց Գանձակից (Քանչա), որը մահմեդական էր: Նրանից պահանջեց քրիստոնեությունն ընդունել, որպեսզի ամուսնանա նրա հետ, սակայն սա չհամաձայնեց: Ուզեց ամուսնանալ նրա հետ, թեկուզ մնար մահմեդական, սակայն իշխանների բազմությունը և նրանց հետ Իվանեն (Իուանի), որը վրաց (քուրջ) զորքի հրամանատարն էր, ընդդիմացան նրան և ասացին՝ քո արարքներով մեզ խայտառակեցիր թագավորների մեջ, այժմ էլ ուզում ես մահմեդականի հետ ամուսնանալ, այս բանը մենք երբեք թույլ չենք տա:

Այս գործը դեռ անորոշ է մնում նրանց մեջ, իսկ Գանձակից եկած մարդը դեռ նրանց մոտ է, չի ընդունում քրիստոնեությունը, սակայն նա (թագուհին) սիրում է նրան³³¹:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ

(23 հունվար 1224—12 հունվար 1225)

Ք 353—354

ՇԻՀԱԲ ԱԼ-ԴԻՆ ՂԱԶԻԻ՝ ԻՐ ԵՂԲՈՐ ԱԼ-ՄԱԼԻԲ ԱԼ-ԱՇՐԱՖԻ ԴԵՄ
ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԼԱԹԸ ՆՐԱՆԻՑ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔԼ-Մալիք ալ-Աշրաֆ Մուսա իբն ալ-Ադիլ Աբու Բաքր իբն Այյուբը իր եղբորը՝ Շիհաբ ալ-Դին Ղազիին, որպես տիրույթ պարգևել էր Խլաթը և Հայաստանի բոլոր նահանգները, ավելացնելով նաև Նփրկերտը (Մայ-յաֆարիկին), Հանին և Ճապաղջուրը (Ջաբալ ջուր): Սրանով էլ չբավարարվեց [Աշրաֆը] և նրան դարձրեց իր ձեռքի տակ եղած բոլոր երկրների

գահաժառանգ և բոլոր տեղակալներին (նախքան) ու զորականներին երգվել տվեց նրան [հնադանդ լինել]։

Երբ [Ղազին] ստացավ Հայաստանը, եկավ, ինչպես հիշեցինք, և մնաց մինչև վեց հարյուր քսան թվականի վերջը։ Ապա սկսեց ըմբոստանալ իր եղբոր՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆի դեմ, չէր հնազանդվում և հրաժարվում էր ենթարկվելուց։ Աշրաֆը գրեց նրան, համոզելով և մեղադրելով արածների համար։ Սակայն սա չհրաժարվեց իր արարքներից, այլ նույն բանը շարունակեց։ Նա համաձայնեց իր մյուս եղբոր՝ Դամասկոսի տեր ալ-Մուադդամ Իսայի և Արբելայի (Իրբիլ) տիրոջ՝ Մուլաֆֆար ալ-Դինի բնի Զայն ալ-Դինի հետ, ապստամբելու ու միասին կռվելու Աշրաֆի դեմ։ Նրանք բացահայտորեն ցուցաբերեցին այս [վերաբերմունքը], և Աշրաֆը լիմանալով՝ լուր ուղարկեց իր Եգիպտոսի եղբորը՝ ալ-Քամիլին, տեղեկացնելով այդ մասին, քանզի նրանց միջև համաձայնություն կար։ Նա օգնություն խնդրեց նրանից և զորքեր պատրաստելով լուր ուղարկեց իր եղբորը՝ Դամասկոսի (Դիմաշկ) տիրոջը, ասելով՝ եթե քաղաքից շարժվես, կհարձակվեմ ու կգրավեմ այն։ Իսկ սա գնացել էր Ջալիլիա, ըստ իր և նրա (Արբելայի) տիրոջ միջև եղած պայմանավորվածության, սակայն, երբ հասավ եղբոր նամակը և իմացավ զորքերի պատրաստման մասին, վերադարձավ Դամասկոս։ Արբելայի տերը հավաքեց զորքերը, գնաց դեպի Մոսուլ և նրա հետ պատահեց այն, ինչի մասին կհիշենք, եթե ալ-Լահր կամենա։

Իսկ Աշրաֆը, երբ եղբոր ըմբոստությունը տեղի ունեցավ, զորքեր հավաքեց Ասորիքից (Շամ), Ջազիրայից ու Մոսուլից, գնաց դեպի հլաթ։ Երբ մոտեցավ եղբայրը, Ղազին վախեցավ և ուժ չունենալով կռվի մեջ նրան դիմադրելու, զորքը ցրեց երկրով մեկ, որպեսզի ամրացնի այն և սպասեց, որ Արբելայի տերը շարժվի դեպի Մոսուլ ու Սինջար, եղբայրը՝ Դամասկոսի տերը՝ դեպի Աշրաֆի երկիրը՝ Եփրատի մոտ, այսինքն, Ռակկա, Խառան և այլ վայրեր, իսկ Աշրաֆը այդ ժամանակ ստիպված կլիներ ետ դառնալ հլաթից։ Սակայն Աշրաֆը շարժվեց նրա կողմը դեպի հլաթ, որի բնակիչները ուզում էին նրան և նրա իշխանությունն էին նախընտրում՝ նրա ունեցած լավ վերաբերմունքի և Ղազինի վատ վերաբերմունքի պատճառով։ Երբ նա պաշարեց [հլաթը], բնակիչներն այն հանձնեցին նրան Ջումադա Բ ամսի տասներկուսին (31 հունիս), երկուշաբթի օրը։

Ղազին մնաց [քաղաքի] միջնաբերդում ամրացած, սակայն երբ գիշերը վրա հասավ, իջավ իր եղբոր մոտ ներողություն խնդրելու։ Աշրաֆը այսպանեց նրան, սակայն թողեց, չպատժեց նրա արարքը, միայն երկիրը վերցրեց նրա ձեռքից, թողնելով սոսկ նփրկերտը (Մայյաֆարիկին)։

Արդեն հիշատակել ենք Արբելայի (Իրբիլ) տիրոջ՝ Մուղաֆֆար ալ-Դին Քաուքարի իբն Ջայն ալ-Դին Ալիի, հլաթի տիրոջ՝ Շիհաբ ալ-Դին Ղազիի և Դամասկոսի (Դիմաշկ) տիրոջ՝ ալ-Մուադզամ Իսայի, համաձայնությունը ալ-Մալիք ալ-Աշրաֆի երկիրը արշավելու մասին:

Ինչ վերաբերում է Դամասկոսի տիրոջը, ապա նա [քաղաքից] հազիվ մի քանի օրվա ճանապարհ (մարահիլ) էր գնացել, երբ վերադարձավ, որովհետև նրա եղբայրը՝ Եգիպտոսի տերը, [լուր] ուղարկեց նրան, սպառնալով, որ եթե Դամասկոսից հեռանա, ապա ինքը կհարձակվի ու կաշարի այն: Իսկ Ղազին մնաց հլաթում պաշարված և, ինչպես հիշել ենք, այն վերցվեց նրանից: Սակայն Արբելայի տերը հավաքեց իր զորքը, գնաց Մոսուլ քաղաքը պաշարեց և այնտեղ կանգ առավ Ջումադա Բամսի տասներեքին, երեքշաբթի օրը, հույս ունենալով, որ ալ-Մալիք ալ-Աշրաֆը հենց որ լսի, թե ինքն այստեղ է, կթողնի հլաթը, իսկ Ղազին նրան կհետևի և դրությունը կխառնվի ու Դամասկոսի տերը համարձակություն կունենա իր մոտ գալու:

Նա տեղավորվել էր Մոսուլի դիմաց, իսկ նրա տեր Բադր ալ-Դին Նուլուն ամրացրել էր այն, պարիսպների վրա զինվորներ նշանակելով, պաշարման գործիքներ բերելով և պաշար հավաքելով: Այսուհանդերձ, Արբելայի տերը ցանկացավ պաշարել Մոսուլը, որովհետև այստեղի զորքի մեծ մասը գնացել էր հլաթ ալ-Մալիք ալ-Աշրաֆի հետ և տեղում զորքը քիչ էր: Ամբողջ երկրում թանկություն էր տարածվել, իսկ գները Մոսուլում այնպիսին էին դարձել, որ երեք ձուն մեկ դինար արժեր: Ահա այս պատճառով էր, որ նա որոշեց պաշարել: Գալուց հետո, նա երեք օր մնաց, ապա հեռացավ Ջումադա Բամսի վերջից յոթ օր մնացած (10 հունիս 1227), ուրբաթ օրը: Նրա հեռանալու պատճառն այն էր, որ տեսավ, թե ինչպես քաղաքը ամրացված էր և պաշարը այնքան առատ էր, որ երկար ժամանակ կարող էր բավարարել: Նա լսել էր նաև, որ ալ-Մալիք ալ-Աշրաֆը տիրել էր հլաթին: Նա այլևս հույս չունեի նրա տիրոջից, ինչպես նաև Դամասկոսի տիրոջից և մնաց մեն-մենակ:

Այս լուրերն ստանալուց հետո նա հուսահատվեց, հասկացավ, որ սխալվել է ու վերադարձավ իր քաղաքը, նա կանգ առավ Ջաբի վրա և երկարացրեց իր մնալը Մոսուլի մոտ: Նա չէր կովում, այլ պարպապես երբեմն նրա թուրք [ռազմիկներից] ոմանք հարձակվում էին քաղաքի վրա և այնտեղից մի քանի ձիավորներ ու հետիոտն էին դուրս գալիս ու սկսում էր կարճատև կռիվը, ապա ցրվում էին և ամեն մի խումբ վերադառնում էր իր տիրոջ մոտ:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ

(13 հունվար 1225—1 հունվար 1226)

էջ 355

ՎՐԱՑԻՆԵՐԻ՝ ԳԱՆՁԱԿ ՔԱՂԱՔԸ ՊԱՇԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում վրացիք (քուրջ) զորքի մեծ բազմությամբ գնացին Գանձակ (Քանչա) քաղաքը՝ Առան երկրում, նպատակ ունենալով պաշարել այն: Նրանք իրենց ամբողջ ուժը գործադրեցին, որովհետև Գանձակի ժողովուրդը բազմամարդ էր, շատ ուժեղ և վրացիների հետ հաճախակի ընդհարումների հետևանքով մեծ քաջություն էր ձեռք բերել: Երբ վրացիք հասան նրանց մոտ, մերձեցան ու մի քանի օր կռվեցին բնակիչների հետ, որոնք պարիսպների ետևում էին և նրանցից ոչ ոք չէր երևում: Սակայն մի օր Գանձակի մարդիկ քաղաքից դուրս եկան իրենց զորքերի հետ միասին և վրացիների հետ սաստիկ ու համառ կռիվ տեղի ունեցավ քաղաքից դուրս:

Երբ վրացիք այս բանը տեսան, համոզվեցին, որ իրենք ի վիճակի չեն քաղաքը գրավել և հեռացան այն բանից հետո, երբ Գանձակի բնակիչները նրանց պարտության էին մատնել:

էջ 356—357

ԱԼ-ՄԱԼԻԲ ԱԼ-ԱՖԴԱԼԻ ԵՎ ԱՅԼ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում մեռավ Կարնո քաղաքի (Արդան ալ-Ռում) տեր Մուզիա ալ-Դին Թուղրիլ իբն Կիլիշ Արսլանը: Սա իր որդուն ուղարկել էր վրացիների (քուրջ) մոտ, որը քրիստոնեացել ու ամուսնացել էր վրաց թագուհու հետ: Երբ մեռավ, նրանից հետո որդին թագավորեց:

Այդ տարում մեռավ Երզնկայի (Արզխնքան) տերը: Նույն տարում մեռավ նաև Խարբերտի տեր Իզզ ալ-Դին ալ-Խադար իբն Իբրահիմ իբն Աբու Բաքր իբն Կարա Արսլան իբն Դաուդ իբն Սուլեյմանը: Նրանից հետո իշխեց որդին՝ Նուր ալ-Դին Ուրտուկ Շահը, որի օրոք, ինչպես և նրա հոր ժամանակ, պետական գործերի կառավարիչն էր Մուին ալ-Դին Աբդ ալ-Ռահմանը:

ՇԻՐՈՒԱՆ ՇԱՀԻ ՊԱՇՏՈՆԱՆԿ ԱՐՎԵԼՈՒ ԵՎ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ՝
ՎՐԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՂԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Շիրուան Շահի դեմ ապստամբեց որդին, հանեց նրան իշխանությունից, երկրից հեռացրեց ու նրա փոխարեն թագավորեց:

Բանն այն է, որ Շիրուան Շահը վատ վարքի տեր էր, ապականիչ, անարդար և հպատակների դրամն ու կալվածներն էր խլում: Ասվում է նաև, որ կանանց ու տղաներին էր ձեռք գցում: Նրա բռնությունները մարդկանց համար անտանելի դարձան և որոշ զորականներ, նրա ուղղու հետ համաձայնելով, նրան քշեցին երկրից:

Որդին իշխեց և լավ վերաբերմունք ցուցաբերեց ու նրան սիրեցին զորքն ու հպատակները: Որդին իր հորը [լուր] ուղարկեց, ասելով՝ եթե կամենում ես որոշ ամրոցներ քեզ կթողնեմ, շատ ռոճիկ կտամ քեզ և ում որ կամենաս: Այս քայլին ես դիմեցի քո վատ վարմունքի, երկրի ժողովրդի նկատմամբ անիրավության և ժողովրդի՝ քեզ ու քո տերությունը ատելու պատճառով:

Երբ հայրը լսեց այս բանը, գնաց վրացիների (քուրջ) մոտ, օգնություն խնդրեց, և վրացիք որոշեցին նրան զորք տալ, որի միջոցով կվերականգնե իր իշխանությունը, իսկ նա խոստացավ նրանց տալ իր երկրի կեսը: Նրան մեծ զորք տվեցին և նա եկավ ու մոտեցավ Շիրուան քաղաքին: Որդին զորք հավաքեց ու բացատրեց դրությունը: Ասաց՝ երբ վրացիք պաշարեն մեզ, գուցե հաղթեն և այն ժամանակ հայրս մեզանից ոչ ոքի չի խնայի, վրացիք կվերցնեն երկրի կեսը, գուցե և ամբողջը. իսկ զա սարսափելի է: Կարևոր է, որ մենք մեկ թափով հարձակվենք ու բախվենք նրանց հետ: Եթե հաղթենք, փառք ալլահին, իսկ եթե նրանք մեզ հաղթեն, ապա պաշարման մեջ կընկնենք:

Նրանք համաձայնեցին նրա հետ և նա իր փոքրաթիվ զորքով՝ հազար ձիավոր, դուրս եկավ ու հանդիպեց վրացիներին, որոնք երեք հազար էին: Հնդհարկեցին ու կռվեցին, Շիրուանի ժողովուրդը դիմացավ, իսկ վրացիք պարտվեցին, շատերը կոտորվեցին կամ գերի ընկան: Ով փրկվեց, վերադարձավ ամենավատ վիճակում և նրանց հետ էր նաև գահընկեց եղած Շիրուան շահը: Վրաց առաջնորդները ասացին նրան՝ քեզանից ոչ մի լավ բան չտեսանք, մենք քեզ չենք մեղադրում, բայց և այնպես մի մնա մեր երկրում: Նա բաժանվեց նրանցից ու մնաց անորոշ վիճակում, չիմանալով ում մոտ ապաստանել:

Իսկ որդին հաստատվեց թագավորության մեջ, զորքին ու հպատակ-

ներին լավ վերաբերվեց, վերադարձրեց մարդկանց կալվածներն ու բռնազրաված ինչքը, և նրանք ուրախացան նրա իշխանությամբ:

էջ 357—358

ԴԱՐՁՅԱԼ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻՎ՝ ՎՐԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՂԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում վրացիների (քուրջ) մի զորամաս Տփղիսից դուրս եկավ դեպի Ատրպատական և Ուզբեքի ձեռքում եղած երկրները: Նրանք կանգ առան լեռներում մի կիրճից այն կողմ, որի միջով կարող էր անցնել միայն մեկ ձիավոր իր ձիու հետ: Նրանք տեղավորվեցին, կարծելով, որ ապահով են մահմեդականների [հարձակումից], որոնց նրանք թույլ էին համարում և իրենց ուժեղ էին զգում, ամուր դիրքով, որն անմերձենալի էր:

Սակայն մահմեդականների մի զորամաս ձիեր հեծնելով դիմեց վրաց երկիրը և [այն կողմից] հասավ այդ կիրճը: Նրանք անցան իրենց վրտանգի ենթարկելով, իսկ վրացիք սթափվեցին միայն այն ժամանակ, երբ արդեն մահմեդականները հարձակվել էին նրանց վրա և սրով կոտորում էին: Սրանք կոտորեցին ինչպես ուզում էին, իսկ մնացյալը փախուստի դիմեց, ո՛չ հայրն էր որդուն ուշադրություն դարձնում, ո՛չ եղբայրը՝ եղբորը: Նրանցից մի մեծ խումբ գերի ընկավ:

Այս բանը շատ վիրավորական էր վրացիների համար, որոնք որոշեցին իրենց վրեժը լուծել և պատրաստվեցին Ատրպատական արշավելու ու մահմեդականներին կոտորելու: Նրանք սկսեցին պատրաստվել ըստ իրենց որոշման:

Այն ընթացքում, երբ նրանք զբաղված էին, լուր հասավ Ջալալ ալ-Դին իբն խորեզմ (խուրիզմ) Շահի՝ Մարաղա գալու մասին, ինչպես կհիշենք, եթե ալլահը կամենա: Վրացիք հրաժարվեցին իրենց նպատակից և լուր ուղարկեցին Ատրպատականի տեր Ուզբեքին, հրավիրելով նրան համաձայնել [միասին] ետ մղելու Ջալալ ալ-Դինին: Նրան վախեցրին վրացիք, ասելով՝ եթե մեղ հետ չհամաձայնեք, ապա նախ քո երկիրը կգրավի, հետո մերը:

Սակայն Ջալալ ալ-Դինը նրանց կանխեց նախքան համաձայնության գալն ու հավաքվելը և կատարվեց այն, ինչ որ հիշելու ենք, եթե ալլահը կամենա:

Նախորդ տարիների տակ հիշել ենք, թե ինչ էին անում վրացիք (քուրջ) իսլամի երկրում՝ հլաթում ու նրա գավառներում, Ատրպատականում, Առանում, Կաբինում (Արզան ալ-Ռում), Դարբանդ-Շիրուանում։ Սրանք նահանգներ էին, որ նրանց երկրին դրացի էին, և նրանք մահմեդականների արյունն էին թափում այդ երկրներում, հափշտակում ունեցվածքը, գրավում երկիրը, իսկ մահմեդականները գտնվում էին նրկաստացման ու ճնշման տակ։ Ամեն օր հարձակվում էին, կոտորում նրանց և ցանկացած գումարները վերցնում նրանցից։ Ամեն անգամ, որ մենք և [բուլոբ] մահմեդականները նման բաներ էինք լսում, խնդրում էինք քարձրյալն ալլահից, որ իսլամին և մահմեդականներին տա այնպիսի մարդիկ, որոնք կպաշտպանեն նրանց և նրանց վրեժը կլուծեն։

Իսկ Ատրպատականի տեր Ուզբեքը զբաղված էր իր որովայնի և տոփանքի գոհացումով։ Հարբած վիճակից չէր սթափվում և եթե նույնիսկ սթափվում էր, զբաղվում էր ձվի բախտախաղով (ղումար)։ Դեռ չի լսվել, որ որևէ թագավոր զբաղված լիներ նման բանով։ Նա ոչ մի օգտակար բանով չէր զբաղվում և ոչ էլ ինքնասիրություն ուներ։ Այսպիսով, երկիրը անպաշտպան էր, զորքերը կամայականությամբ էին զբաղված, իսկ ժողովուրդը ճնշված էր։ Ով կամենար կարող էր մի զորախումբ հավաքելով երկրի որևէ մասը գրավել, ինչպես հիշեցինք Բուղդիի, Այբաք ալ-Շամիի և Իդան Թայիսիի մասին։

Բայց քարձրյալն ալլահը այս երկրի ժողովրդին նայեց ողորմած հայացքով և գթաց, ուղարկելով այս Զալալ ալ-Դինին³³², որը շուտով կըտեսներ, թե ինչպես հաղթեց վրացիներին և իսլամի ու մահմեդականների վրեժը լուծեց։

Զալալ ալ-Դինի և վրացիների (քուրջերի) ընդհարումը տեղի ունեցավ այս տարվա Շաաբան ամսին (8 օգոստոս—5 սեպտեմբեր)։ Բանն այն է, որ առաջին օրվանից, երբ Զալալ ալ-Դինն այս երկրներում երևաց, ասում էր՝ ես ուզում եմ հարձակվել վրաց (քուրջ) երկրի վրա, պատերազմել նրանց հետ ու գրավել նրանց երկիրը։ Հենց որ տիրեց Ատրպատականին, լուր ուղարկեց վրացիներին, հայտնելով [գալիք] պատերազմի մասին, որին նրանք պատասխանեցին՝ մեզ վրա հարձակվեցին թաթարները, որոնք [գիտես] թե ինչ արեցին քո հորը, որը թագավորությամբ ավելի հզոր էր քեզանից, ավելի շատ զորքով և ինչպես գիտես ավելի ուժեղ սրտով։ Նրանք գրավեցին ձեր երկիրը, սակայն մենք նրանց վրա ուշադրություն չդարձրինք և ի վերջո նրանք նախընտրեցին մեզ հետ խաղաղության մեջ լինել։

Սրանք (վրացիք) սկսեցին զորք հավաքել և կուտակեցին ավելի քան յոթանասուն հազար ռազմիկ: Նա շարժվեց նրանց դեմ ու գրավեց Դուին քաղաքը, որը վրացիներին (քուրջ) էր և վերցրել էին մահամեղականներից, ինչպես հիշել ենք: Այստեղից նա գնաց նրանց դեմ: Նրանք ընդհարվեցին նրա հետ և սաստիկ ու ահավոր կռիվ տեղի ունեցավ, ընդ որում ամեն մի կողմը դիմադրեց հակառակորդին, սակայն վրացիք պարտվեցին: Նա (Ջալալ ալ-Դինը) հրամայեց անխնա կոտորել և ոչ ոքի կենդանի չթողնել: Ըստ մեր ստուգումների նրանցից քսան հազար կոտորվեց, ասվում է նաև, թե ավելին [կոտորվեց]: Ասվում է նույնպես, որ բոլորը կոտորվեցին ու ցրվեցին, իսկ մեծամեծներից շատերը գերի ընկան, որոնց մեջ էր Շալուան³³³, Այսպիսով, պարտությունը վերջնական էր:

Փախուստի դիմեց նաև Իվանեն (Իուանի)³³⁴, որը բոլոր վրացիների (քուրջ) առաջնորդն էր, նրանց գլխավորը և զորավիգը: Նրանք թագավոր շունեին, քանզի նրանց վրա կին էր թագավորում: Իրավացի է ալլահի առաքյալը, երբ ասում է. «Հաջողություն չեն ունենա մարդիկ, որոնք կնոջ ձեռքով են ղեկավարվում»: Երբ Իվանեն (Իուանի) փախուստի դիմեց, նրան հետապնդեցին, իսկ նա բարձրացավ իրենց ամրոցներից մեկը՝ այդ ճանապարհի վրա, և այնտեղ պատսպարվեց: Ջալալ ալ-Դինը [զորք] թողեց, որ պաշարի և արգելի նրան իջնելուց, իսկ իր զորքերը ցրեց վրաց երկրում, որպեսզի կողոպտեն, կոտորեն, գերեվարեն ու քանդեն և եթե չլինեին Դավրեթից (Տաբրիզ) եկած լուրերը, որ նրան ստիպեցին վերադառնալ, ապա առանց դժվարության և արգելքի կգրավեր երկիրը, քանզի ժողովուրդը հյուժված էր, մի մասը սպանված, մյուս մասը գերի, իսկ մնացածը՝ փախստական:

էջ 359—360

ՋԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆԻ՝ ԴԱՎՐԵԺ ՎԵՐԱԴԱՐՁԻ, ԳԱՆՁԱԿ ՔԱՂԱՔԸ ԳՐԱՎԵԼՈՒ ԵՎ ՈՒՋՐԵՔԻ ԿՆՈՋ ՀԵՏ ԱՄՈՒՍՆԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ Ջալալ ալ-Դինը վրացիներին փախուստի մատնեց ու մտավ երկիրը, այնտեղ տարածեց իր զորքերը: Նա նրանց [զորքերին] հրամայեց այնտեղ մնալ իր եղբոր՝ Ղիաս ալ-Դինի հետ, իսկ ինքը վերադարձավ Դավրեթ (Տաբրիզ):

Նրա վերադարձի պատճառը հետևյալն էր: Իր վեզիր Շարաֆ ալ-Մուլքին նա թողել էր Դավրեթում, որպեսզի քաղաքը պահպանի և հպատակների գործերը վարի: Սակայն նրան տեղեկություն հասավ, որ Դավրեթի ռաիսը³³⁵ (պետը) և Շամս ալ-Դին ալ-Թուղրաին, որն առաջին դեմ-

քըն էր քաղաքում և այլ երեւելիներ հավաքվել էին ու համաձայնել՝ շենթարկվել Ջալալ ալ-Դինին և քաղաքը վերստին հանձնել Ուզբեքին։ Ասում էին՝ Ջալալ ալ-Դինը գնացել է վրաց երկիրը, սակայն ուժը չի պատի նրանց։ Եթե Ուզբեքն ու վրացիք միաբանեն ու հարձակվեն նրա վրա, նրա գործերը կփշանան ու կպարտվի։ Նրանք այնպես էին հաշվել, որ Ջալալ ալ-Դինը դանդաղ կընթանա դեպի վրաց երկիրը, զգուշության համար հաճախ կանգ առնելով։

Երբ այս բանը որոշել էին, լուրը հասավ վեզիրին, որը Ջալալ ալ-Դինին տեղեկացրեց վիճակի մասին։ Նրան (Ջալալ ալ-Դինին) լուրը հասավ այն ժամանակ, երբ արդեն մոտեցել էր վրաց երկրին, սակայն նա ոչինչ ցույց չտվեց, շուտափույթ շարժվեց վրացիների դեմ, ընդհարվեց ու պարտության մատնեց նրանց։ Երբ վերջացրեց, ասաց իր զորքի ամիրներին՝ տեղեկացել եմ այսպես և այսպես։ Դուք մնացեք ու շարունակեցեք անել այն, ինչ անում էիք, կոտորեցեք, ում որ բռնեք և ավերեցեք նրանց երկիրը, ինչքան կարող եք։ Ես զգուշացա այն հայտնել ձեզ, նախքան վրացիների պարտությունը, որպեսզի ձեզ չպատի թուլությունն ու վախը։

Նրանք մնացին նույն վիճակում, իսկ ինքը վերադարձավ Դավրեժ, ձերբակալեց ռաիսին, ալ-Թուղրաիին և այլոց։ Հրամայեց ռաիսին մանածել քաղաքում և ով նրանից անիրավություն էր տեսել, թույլատրեց որ սիրտը հովացնի, իսկ վերջինս իրոք անիրավ էր եղել։ Մարդիկ խիստ ուրախացան այս բանի համար և ապա նա սպանեց նրան։ Մնացածներին բանտարկեց և երբ այս գործն ավարտել էր ու քաղաքում կարգ ու կանոն հաստատել, ամուսնացավ սուլթան Թուղրուլի դստեր՝ Ուզբեքի կնոջ հետ։ Այս ամուսնությունը (նիքահ) օրինավոր էր, քանի որ հաստատված էր, թե Ուզբեքը երդվել էր նրան ապահարզան (թալակ)³³⁶ տալ, եթե ինքն սպաներ իր մամուլին, որի անունն էր ... որին, սակայն, հետո սպանեց։

Երբ ապահարզանը այս երդումի շնորհիվ իրականացավ, Ջալալ ալ-Դինը ամուսնացավ և որոշ ժամանակ Դավրեժում մնալուց հետո, զորքը տարավ դեպի Գանձակ (Քանչա) քաղաքը, գրավեց, իսկ Ուզբեքը հեռացավ, մտավ Գանձակի բերդը և ամրացավ։ Լսել եմ, որ Ջալալ ալ-Դինի զորքը կողոպտել էր այս բերդի շրջակայքը ու խլել [մարդկանց] ունեցվածքը։ Ուզբեքը լուր ուղարկեց Ջալալ ալ-Դինին, բողոքելով և ասաց՝ այս բանը թույլ չէի տա նույնիսկ իմ բարեկամներին, ես խնդրում եմ ետ քաշել այս շրջանի վրա երկարող ձեռքերը։ Ջալալ ալ-Դինը զորք ուղարկեց, որպեսզի [բերդը] պահպանեն թե՛ իր մարդկանցից, թե՛ ուրիշների ոտնձգությունից։

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ

(2 հունվար 1226—21 դեկտեմբեր 1226)

էջ 366—367

ՋԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆԻ՝ ՏՓՂԻՍԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Ռաբի Ա ամսին (2 մարտ—31 մարտ), Ջալալ ալ-Դին իրն խորեզմ (խուարիզմ) Շահը վրացիներից (քուրջ) գրավեց Տփղիս քաղաքը:

Սա տեղի ունեցավ հետևյալ ձևով: Մենք արդեն հիշատակել ենք վեց հարյուր քսաներկու թվականի պատերազմը նրա ու նրանց (վրաց) միջև և նրանց (վրաց) պարտությունն ու նրա վերադարձը Դավրեժ (Տաբրիզ) այնտեղ պատահած խոռվության պատճառով: Երբ Ատրպատականում կարգ հաստատեց, վերադարձավ վրաց երկիրը այդ տարվա Զուլ-Հիջջա ամսին (4 դեկտեմբեր 1225—1 հունվար 1226), և այդ տարին լրացավ ու հասավ վեց հարյուր քսաներեք թվականը. նա հարձակվեց նրանց երկրի վրա: Սրանք կրկին զորք էին հավաքել և կուտակել էին իրենց դրացի աղգերի՝ ալանների, լաբզերի, ղփչաղների և այլոց [զորքերը]: Նրանք հավաքվեցին անհամար բազմությամբ, և սա համարձակություն տվեց նրանց ու սուտ երազներով իրենք իրենց խաբեցին: Սատանան նրանց հաղթանակ խոստացավ, իսկ «սատանան (շեյթանը) կտա միայն սուտ խոստումներ» (Ղուրան, Դ, 119): Նա (Ջալալ ալ-Դինը) տարբեր տեղերում նրանց համար դարան սարքեց: Նրանք հանդիպեցին, ընդհարվեցին և վրացիք փախուստի դիմեցին, ընդ որում եղբայրը մոռացել էր եղբորը և հայրը որդուն, ամեն մեկին իր անձն էր հետաքրքրում: Մահմեդականների սուրը ամեն կողմից ջարդեց նրանց և շատ քչերը միայն աղատվեցին:

Ջալալ ալ-Դինը հրամայեց ոչ ոքի չխնայել և բոլորին կոտորել ու հետապնդել փախստականներին: Նրա մերձավորները խորհուրդ տվեցին հարձակվել նրանց թագավորի նստավայր Տփղիսի վրա, սակայն նա ասաց՝ (առայժմ) կարիք չկա, որ մեր զինվորներին պարիսպների տակ կոտորենք, իսկ երբ ոչնչացնեմ վրացիներին, այն ժամանակ երկիրը կգրավեմ առանց դժվարության: Զորքերը հետապնդեցին նրանց և հալածեցին, մինչև որ գրեթե ոչնչացրին: Այդ ժամանակ նա գնաց Տփղիս և քանակ դրեց նրա մոտ:

Մի օր նա իր զորքի մի մասի հետ մոտ գնաց [քաղաքին], դիտելու և որոշելու հարձակման ու կռվի կետերը: Երբ մոտեցավ, իր հետ եղած

զորքի մեծ մասը տարբեր վայրերում դարանակալ պահեց, իսկ ինքը մոտավորապես երեք հազար ձիավորով առաջ շարժվեց: Երբ այնտեղ [քաղաքում] գտնվող վրացիք նրան տեսան, համարձակություն ստացան, կարծելով, որ նրա հետ քիչ զորք կա: Զգիտենալով մյուսների (դարանակալ եղածների) մասին, նրանք դուրս եկան ու կովի բռնվեցին, իսկ նա (Ջալալ ալ-Դինը) նահանջեց և նրանք ավելի համարձակ դարձան, կարծելով, որ նահանջում է, ու հետապնդեցին: Երբ [դարանակալ] զորքերի եղած վայրերի մեջտեղում էին, վերջիններս դուրս եկան և սրի քաշեցին նրանց, ընդ որում մեծ մասը կոտորվեց, իսկ մնացածները փախան ու մտան քաղաք: Մահմեդականները հետապնդեցին նրանց և երբ քաղաքին մոտեցան, [քաղաքի] մահմեդականները իսլամի նշանաբանը՝ գոռացին և Ջալալ ալ-Դինի անունը տվեցին: Վրացիք հուսալքվեցին և հանձնվեցին, քանզի նրանց զորքերը վերոհիշյալ ճակատամարտերում [մեծ մասամբ] կոտորվել էին, նրանց թիվը նվազել էր, իսկ նրանց սրտերը ահով ու վախով էին լցված:

Մահմեդականները քաղաքը սրով և ուժով նվաճեցին, առանց երաշխավորագիր (աման) տալու, կոտորեցին այնտեղ եղած բոլոր վրացիներին՝ լծողնելով ոչ մեծի, ոչ փոքրի, բացի նրանցից, որոնք ընդունեցին մահմեդականությունը և վկայության (շիհադա)^{33a} երկու խոսքն արտասանեցին: Այսպիսիներին [Ջալալ ալ-Դինը] հրամայեց թլփատել և նրանց ձեռք շտվեցին: Մահմեդականները կողոպտեցին [վրացիների] ունեցվածքը, գերեվարեցին կանանց, ստրկացրին երեխաներին: Մի քիչ վնաս կրեցին նաև տեղի մահմեդականները, ոմանք կոտորվեցին, ուրիշներ կողոպտվեցին և այլն:

Տփղիս [քաղաքը] երկրի ամենալավ պաշտպանված ու անառիկ քաղաքներից է, գտնվում է Կուր գետի երկու կողմերին, որը մեծ գետ է: Այս նվաճումը մեծ ու կարևոր նշանակություն ունեւր իսլամի երկրներում ու բոլոր մահմեդականների համար, քանզի մինչ այդ վրացիք (քուրջ) նեղն էին գցել [մահմեդականներին] և իրենց ուզածն անում էին: Նրանք ասպատակում էին Ատրպատականի իրենց ցանկացած մասը և ոչ ոք չէր դիմադրում կամ ետ մղում նրանց: Նույնը անում էին նաև Կարնու (Արզան ալ-Ռումի) երկրում, այն աստիճանի, որ նրա տերը հազավ վրաց թագավորի պարգևած պատմունճանը (խիլա), իր գլխի վրա բարձրացրեց մի դրոշ, որի վերջին մասում խաչ կար, իսկ որդին քրիստոնեություն ընդունեց, որպեսզի ամուսնանա վրաց թագուհու հետ, ինչպես պատմել ենք, վախենալով նրանցից ու կամենալով կանխել նրանց շարագործությունները: Նույն բանը կատարվեց նաև Դարբանդ-Շիրուանում: Նրանց ուժը այնքան մեծացավ, որ Իկոնիայի, Ակսարայի, Մալաթիայի ու Ռումի

երկրում մահմեդականներին ենթակա բոլոր երկրների տեր Ռուքն ալ-Դին իրն Կիլիշ Արսլանը հավաքեց իր զորքը և բերեց նաև մեծ թվով այլ զորքեր ու գնաց Կարնո (Արվան ալ-Ռում) կողմը, որը նրա եղբորը՝ Թուղրիլ Շահ իբն Կիլիշ Արսլանին էր պատկանում, սակայն եկան վրացիք, փախուստի մատնեցին նրան և դաժան վերաբերվեցին թե՛ նրան, թե՛ նրա զորքերին։ Նույն թշվառության և նեղության մեջ էին նաև, ինչպես ասվեց, Դարբանդ-Շիրուանի բնակիչները։ Իսկ Հայաստանում վրացիք (քուրջ) մտան Արճեշ (Արշիշ) քաղաքը, գրավեցին Կարսը և այլ վայրեր, պաշարեցին հլաթը և եթե շնորհիվ ալլահի ողորմածության վրաց բանակի հրամանատար Իվանեն (Իուանի) գերի չընկներ, ապա կգրավեին [հլաթը]։ Բնակիչները ստիպված եղան ամրոցում եկեղեցի կառուցել, ուր զանգ էին հնչեցնում, որից հետո նրանք (վրացիք) հեռացան այնտեղից։ Այս բոլորը նախապես մանրամասն պատմել ենք։ Այս ամրացված երկիրը (Սաղը) դեռ նախքան իսլամը հարևան պարսիկների համար, իսկ հետո իսլամի երևան գալու սկզբից մինչև օրս նաև հարևան մահմեդականների համար ամենավտանգավոր երկրներից է և ոչ ոք չէր համարձակվում նրանց դեմ դուրս գալ այս ձևով (Ջալալ ալ-Դինի նման) և ոչ էլ արել էր այն, ինչ որ նա (Ջալալ ալ-Դինը) արեց։

Վրացիք գրավել էին Տփղիսը (Տաֆլիս) հինգ հարյուր տասնհինգ թվականին (1121—1123), երբ սուլթանն էր Մահմուդ իբն Մուհամմադ իբն Մալիք Շահ ալ-Սալջուկին, որն ամենամեծ դիրքի տեր սուլթաններից էր, ամենաընդարձակ թագավորությամբ և ամենաշատ զորքերով։ Այսուհանդերձ նա չկարողացավ ետ մղել նրանց՝ հակառակ իր երկրի ընդարձակության։ [Լայնատարած էր], քանզի նրան էին պատկանում Ռեյը իր գավառներով, Ջաբալը, Ֆարսը, Խուզիստանը, Իրաքը, Ատրպատականը, Առանը, Հայաստանը, Դիար Բաքըրը, Ջաղիրան, Մոսուլը, Ասորիքը (Շամ) և այլ երկրներ, իսկ նրա հորեղբայր սուլթան Սինջարը ուներ Խորասանն ու Մավարաաննահրը։ Այսպիսով, իսլամի երկրների մեծամասնությունը նրանց ձեռքում էր, այսուհանդերձ նրանց՝ [Տփղիսը] գրավելուց հետո, երբ նա հինգ հարյուր տասնինը թվին զորք հավաքեց ու շարժվեց նրանց դեմ, չկարողացավ հաղթել։ Նրանից հետո իշխեց նրա եղբայր սուլթան Մասուդը, որը նույնպես [անկարող գտնվեց]։ Ապա Իլդիզուղը իշխեց Ջաբալ, Ռեյ, Ատրպատական և Առան [երկրներում], նրան ենթարկվեցին հլաթի, Ֆարսի և Խուզիստանի տերերը։ Նա զորք հավաքեց, սպառազինեց, սակայն [կոպում] հաղիվ ազատվեց նրանցից (վրացիներից)։ Ապա նույնը կատարվեց նրա որդու՝ ալ-Բահլավանի օրոք։ Նրանց ժամանակ երկիրը ուներ հարստություն և շատ զորք, սակայն նրանք չէին անհան-

գըստանում նրանց (վրացիներին) հաղթելու հարցով: Վերջապես եկավ այս սուլթանը (Ջալալ ալ-Դինը), իսկ երկիրը ավերակ էր, քանզի այն թուլացրել էին նախ վրացիք, ապա այն ավերել էին, ինչպես հիշել ենք, թաթարները, ալլահի անեծքը նրանց վրա, իսկ սա (Ջալալ ալ-Դինը) կատարեց այս գործերը:

էջ 367—368

ՔԻՐՄԱՆԻ՝ ՋԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆԻ ԴԵՄ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՈՒ ՆՐԱ ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Ջումադա Բ ամսին (30 մայիս—27 հունիս), լուր հասավ Ջալալ ալ-Դինին, որ իր նաիրը (տեղակալը) Քիրմանում, որը Բալակ Հաջիբ կոչված մի մեծ ամիր էր, ապստամբել է նրա դեմ, ցանկացել է երկիրը գրավել ու բռնանալ, քանզի, ինչպես հիշեցինք, Ջալալ ալ-Դինը հեռվում էր, զբաղված էր վրացիներով և ուրիշներով: Սա (նաիրը) լուր ուղարկեց թաթարներին տեղեկացնելով Ջալալ ալ-Դինի ուժի և նրա՝ շատ երկրներ գրավելու մասին և [զգուշացնելով], որ եթե մնացած երկրներն էլ գրավի, նրա թագավորությունը կմեծանա, զորքը կբազմապատկվի, ձեզ վրա կհարձակվի ու կգրավի ձեր ունեցած երկրները:

Ջալալ ալ-Դինը այս բանը լսեց այն ժամանակ, երբ արդեն ճանապարհ էր ընկել Խլաթ գնալու համար, սակայն թողեց այն և քայլեց դեպի Քիրման, իր հետ տանելով պատմունճաններ (խիլա), որպեսզի [Քիրմանի նաիրը] չզգուշանա և ոչ մի բանից չկասկածելով իր մոտ զա:

Երբ նրա դեսպանը հասավ, նա (նաիրը) հասկացավ, որ ծուղակ է պատրաստված, քանզի դիտեր [Ջալալ ալ-Դինի] սովորությունը: Նա վերցրեց ինչ արժեքավոր բան որ ուներ և բարձրացավ մի անառիկ բերդ ու ամրացավ, իսկ մյուս բերդերում թողեց վստահելի մարդկանց: Նա լուր ուղարկեց Ջալալ ալ-Դինին, ասելով՝ ես քո ստրուկն եմ ու մամլուքը և երբ լսեցի քո գալստյան մասին, երկիրը թողեցի, քանի որ քոնն է և եթե իմանամ, որ ինձ կթողնես իմ [պաշտոնին], կգամ քո դուռը, սակայն վախենում եմ: Այս ընթացքում դեսպանը երդվում էր նրան, թե Ջալալ ալ-Դինը Տփղիսում է, իսկ սա ուշադրություն չէր դարձնում:

Դեսպանը վերադարձավ, և Ջալալ ալ-Դինը հասկացավ, որ ինքը չի կարող նրա (նաիրի) ձեռքում եղած բերդերը վերցնել, քանզի ստիպված պիտի լիներ երկար ժամանակ պաշարել: Նա կանգ առավ Սպահանի մոտ և նրան պատմունճաններ ուղարկելով՝ հաստատեց կառավարիչի (պաշտոնում):

Մինչ դեսպանները գնում գալիս էին (Ջալլալ ալ-Դինի ու նախրի միջև), Տփղիսից հասավ Ջալալ ալ-Դինի սուրհանդակը, որը տեղեկացնում էր, թե ալ-Մալիք ալ-Աշրաֆի՝ իսլաթում եղած զորքը նրա զորքի մի մասին պարտության է մատնել ու ջարդել։ Նա համոզում էր նրան (Ջալալ ալ-Դինին) վերադառնալ Տփղիս և սա շուտափույթ վերադարձավ։

էջ 368

ԱՇՐԱՖԻ ԶՈՐՔԻ ՈՒ ԶԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆԻ ԶՈՐՔԻ ՄԻՋԵՎ ԿՌՎԻ ՄԱՍԻՆ

Երբ Ջալալ ալ-Դինը գնացել էր Քիրման, Տփղիս քաղաքում զորք էր թողել իր վեզիր Շարաֆ ալ-Մուլքի հետ։ Սրանց պարենը պակասել էր և ահա [որոշել էին] արշավել Կարնո (Արդան ալ-Ռում) գավառները, հասել ու կողոպտել էին, գերեվարել կանանց, մեծ և անշափ ավար վերցրել ու վերադարձել։ Նրանց ճանապարհը անցնում էր իսլաթ նահանգի վրայով և ահա Աշրաֆի նաիրը (տեղակալը) իսլաթում՝ հաջիբ (սենեկապետ) Հուսամ ալ-Դին Ալի ալ-Մաուսիլին լսելով զորք էր հավաքել, շարժվել նրանց կողմը, հաղթել էր նրանց, վերցրել նրանց ձեռքում եղած ավարը և իր զորքի հետ անվնաս վերադարձել։

Երբ այս բանը պատահեց, Ջալալ ալ-Դինի վեզիրը վախեցավ ու լուր ուղարկեց Քիրման՝ իր տիրոջը տեղեկացնելով վիճակի մասին և համոզելով այստեղ գալ, վախեցնելով, որ ուշացման դեպքում դրուծյունը վտանգավոր կլինի։ Սա վերադարձավ և տեղի ունեցավ այն, ինչի մասին խոսելու ենք։

էջ 369

ՔԱՅ ԿՈՒԲԱԳԻ ԵՎ ԱՄԻԳԻ ՏԻՐՈՋ ՄԻՋԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Շարան ամսին (28 հուլիս—25 օգոստոս 1226), Ռումի թագավոր Ալա ալ-Դին Քայ Կուբադ իբն Քայ խուսրաու իբն Կիլիջ Արսլանը շարժվեց դեպի Ամիգի տեր Մալիք Մասուդի երկիրը և տիրեց նրա բազում բերդերին։

Բանն այն է, որ, ինչպես նշել ենք, Ամիգի տերը համաձայնել էր Ջալալ ալ-Դին խորեզմ (խուրիզմ) Շահի, Դամասկոսի տեր ալ-Մալիք ալ-Մուադդամի և այլոց հետ Աշրաֆի դեմ դուրս գալու համար։ Երբ Աշրաֆն այս բանը տեսավ, լուր ուղարկեց Ռումի թագավոր Քայ Կուբա-

դին, որը նրա դաշնակիցն էր, նրանից խնդրելով հարձակվել Ամիդի տիրոջ երկրի վրա և պատերազմել նրա դեմ: Աշրաֆն այդ ժամանակ Մարդինի մոտ էր:

Ռումի թաղավորը շարժվեց դեպի Մալաթիա, որը նրան էր պատկանում և այնտեղ կանգ առավ: Նա զորքեր ուղարկեց Ամիդի տիրոջ գավառները և նրանք դրավեցին Հիսն (բերդ) Մանսուրը և Չմշկաժադի (Շիմիշ-քազադ, Շիմքազադ)³³⁹ բերդը և այլ վայրեր: Երբ Ամիդի տերը այս բանն իմացավ, գրեց Աշրաֆին և կրկին հաշտվեց նրա հետ: Աշրաֆը լուր ուղարկեց Քայ Կուրադին, տեղեկացնելով կատարվածի մասին և ասաց, որ Ամիդի տիրոջը վերադարձնի ինչ որ վերցրել էր նրանից: Սակայն նա այդ բանը չարեց, ասելով՝ ես Աշրաֆի տեղակալը (նախ) չեմ, որ ինձ հրամայի կամ արգելի:

էջ 369—371

ՋԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆԻ ԿԱՐՍ ԵՎ ԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՊԱՇԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում (1226), Ռամադան ամսին (26 օգոստոս—24 սեպտեմբեր), Ջալալ ալ-Դինը, ինչպես հիշեցինք, վերադարձավ Քիրմանից Տըփղիս (Տաֆլիս) և այնտեղից գնաց Անի քաղաքը, որը վրացիներին (քուրջ) էր [պատկանում]: Այնտեղ էր վրաց (քուրջ) բանակի հրամանատար Իվանեն (Իուանի) իր հետ մնացած մյուս մեծամեծների հետ: Նա (Ջալալ ալ-Դինը) պաշարեց և ղորքի մի մասը ուղարկեց Կարս քաղաքը, որը նույնպես վրացիներին (քուրջ) էր: Դրանք երկուսն էլ այդ երկրի ամենամուր և անառիկ բերդերից են: Նա եկավ, պաշարեց, կռիվ մղեց այնտեղ եղած [ղորքերի] հետ: Նա քարանետ մեքենաներ դրեց և համառ պայքար սկսեց երկուսի համար էլ:

Վրացիք (քուրջ) լավ պաշտպանեցին այն և մեծ ջանքեր թափեցին պահպանելու համար, վախենալով, որ իրենց հետ կանեն այն, ինչ որ նախապես արել էին իրենց հավատակիցների հետ Տփղիսում: Նա (Ջալալ ալ-Դինը) մնաց այնտեղ մինչև որ Շավվալ ամսի (25 սեպտեմբեր—24 հոկտեմբեր) մի մասն անցավ. ապա ղորքի մի մասը թողեց երկուսն էլ պաշարելու համար, ինքը վերադարձավ Տփղիս, իսկ Տփղիսից շուտափույթ գնաց Աբխազաց երկրի և վրաց մնացորդների դեմ, հարձակվեց նրանց ղորքերի վրա, կոտորեց, կողոպտեց, գերեվարեց ու ավերեց երկիրը, հրկիդեց և ամեն ինչ ավարի տալով, նրա ղորքը վերադարձավ Տփղիս:

Արդեն հիշատակեցինք, որ Ջալալ ալ-Դինը Անի քաղաքից վերադարձավ Տփղիս, մտավ Աբխազաց երկիրը։ Նրա գալը ռազմական խորամանկութուն էր, քանզի նրան տեղեկացրել էին, որ ալ-Մալիք ալ-Աշ-րաֆի նախքո (փոխանորդը)՝ հաջիւր Հուսամ ալ-Դին Ալին Խլաթում պատրաստվել էր, միջոցներ ձեռք առել ու ամրացրել էր քաղաքը նրա (Ջալալ ալ-Դինի) մոտիկ լինելու պատճառով։ Նա վերադարձավ Տփղիս, որպեսզի Խլաթի բնակիչները ապահով զգան, թողնելով զգուշութունն ու աշխրջութունը և այն ժամանակ ինքը կհարձակվեր հանկարծակի կերպով։ Աբխազաց երկրում նրա մնալը տասը օր տևեց։ Նա վերադարձավ, ըստ իր սովորության արագ ընթանալով և՛ եթե նրա մոտ չլինեին այնպիսի մարդիկ, որ տեղեկացրին Աշրաֆի նախնեներին, ապա ինքը [իրոք] անակնկալի կբերեր նրանց։ Սակայն նրա մոտ կային [Աշ-րաֆին] վստահութունը վայելող մարդիկ, որոնք տեղեկացրին ու գրեցին, զգուշացնելով նրան։ Լուրը հասավ Ջալալ ալ-Դինի հասնելուց երկու օր շուտ։ Նա Մանազկերտ (Մալազքիրդ) քաղաքի մոտ իջավ շաբաթ օրը՝ Զուլ-Կադա ամսի տասներեքին (6 նոյեմբեր), ապա գնաց ու կանգ առավ Խլաթ քաղաքի մոտ երկուշաբթի օրը, նույն ամսի տասնհինգին (8 նոյեմբեր)։ Ապա անմիջապես հարձակվեց և սաստիկ կռիվ տեղի ունեցավ նրա ու քաղաքի բնակիչների միջև։ Նրա զորքը հասավ քաղաքի պարսպին, սակայն շատերը սպանվեցին, ապա երկրորդ անգամ հարձակվեց և խիստ ընդհարվեց քաղաքի բնակիչների հետ։ Զորքը մեծ վնաս պատճառեց Խլաթի բնակիչներին, հասավ քաղաքի պարսպին, մտավ նրա արվարձանը և սկսեց կողոպտել, հափշտակելով կանանց, ծրբ Խլաթի ժողովուրդը այս բանը տեսավ, վրդովվեց և մարդիկ սկսեցին իրար ոգևորել, վերադարձան [հարձակվող] զորքի կողմը, կռվեցին ու նրանց դուրս բռնեցին քաղաքից։ Շատերն սպանվեցին և խորեզմցիների զորքը գերի վերցրեց Խլաթի ամիրների մի խումբ, որոնցից շատերին սպանեց։ Սակայն Հաջիբ Ալին իջավ ձիուց, կանգնեց թշնամու դեմ-դիմաց և մեծ ջարդ տվեց։

Ապա Ջալալ ալ-Դինը, մի քանի օր հանդստանալուց հետո, կրկնեց հարձակումը նախկին օրվա նման։ Սակայն (Խլաթեցիք) կռվեցին ու զորքը հեռացրին քաղաքից։ Խլաթի բնակիչները համառ կերպով, քաջաբար կռվում էին, պաշտպանելով իրենց անձը, քանի որ տեսան խորեզմցիներին վատ վերաբերմունքը, քաղաքի կողոպուտը և նրանց անբարոյական վարմունքը։ Նրանք կռվում էին հանուն իրենց անձի, հանանց և ունեցվածքի։

Նա մնաց այնտեղ, մինչև որ ցուրտը ուժեղացավ ու մի քիչ ձյուն եկավ և ապա հեռացավ նույն տարվա Զուլ-Հիջլա ամսի վերջից յոթ օր մնաց (14 դեկտեմբեր), երեքշաբթի օրը։ Նրա հեռանալու պատճառը բացի ձյունից վախենալուց նաև այն էր, որ լուրեր էին հասել, թե իվաի թուրքմենները ապականություն էին սփռել իր երկրում։

էջ 370—371

ՋԱԼԱԼ ԱԼ-ԻԻՆԻ՝ ԻՎԱԻ ԹՈՒՐԳՄԵՆՆԵՐԻՆ, ՀԱՂԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իվաի (Իուախյա) թուրքմենները Ատրպատականում գրավել էին Աշտար և Ուրմիա քաղաքները ու հարկ (խարաջ) էին վերցրել հոյի (հուայյ) բնակիչներից, որպեսզի նրանց հանգիստ թողնեն։ Նրանք օգտվեցին այն առիթից, որ Ջալալ ալ-Դինը զբաղված էր վրացիներով, իսկ հետո նաև հլաթով, և այսպիսով ուժեղացավ նրանց ագահությունը, տարածվեցին Ատրպատականում, կողոպտելով ու ճանապարհները կտրելով։ Լուրերը հասնում էին Ջալալ ալ-Դինին, սակայն նա կարևորություն չէր տալիս, քանի որ իր կարծիքով ավելի կարևոր գործով էր զբաղված։

Նրանց ագահությունը այնտեղ հասավ, որ նրանք ճանապարհ կտրեցին հենց Դավրեթի (Տաբրիզ) մոտ և նրա վաճառականներից շատ բան խլեցին։ Սրանք (վաճառականները) Կաբինում (Արզան ալ-Ռում) ոչխար էին գնել ու տանում էին Դավրեթ և ահա իվաիները, նախքան Դավրեթ հասնելը հանդիպելով նրանց, խլեցին այն ամենը, ինչ ունեին և, ի միջի այլոց, քսան հազար զուլիս ոչխար։ Երբ այս բանը մարդկանց համար անտանելի դարձավ և շարիքը մեծացավ, Ջալալ ալ-Դինի կինը՝ սուլթան Թուղրիլի դուստրը ու երկրում նրա տեղակալները (նախք) լուր ուղարկեցին նրան, օգնության կանչելով և տեղեկացնելով, որ իվաիները երկիրը ավերել են և եթե [նա] չհասնի, ապա լրիվ կկործանվի։

Եվ քանի որ սրան զուգահեռաց [Ջալալ ալ-Դինի] վախը ձյունից, նա հեռացավ հլաթից ու գնաց իվաիների դեմ, իսկ վերջիններս իրենց վստահ և ապահով էին զգում, քանի որ գիտեին, թե հորեզմ Շահը հլաթով է զբաղված և կարծում էին, թե նա այնտեղից չի կարող հեռանալ։ Եթե այդ ինքնավստահությունը չլիներ, նրանք կարող էին ապաստանել իրենց անառիկ, բարձրաբերձ լեռները, ուր բարձրանալը խիստ դժվար էր։ Պատահել էր, որ որևէ բանից վախենալիս նրանք բարձրացել էին և պատսպարվել։

Սակայն [այս անգամ] նրանք չսթափվեցին, մինչև որ Ջալալ ալ-

Դիւնի զորքերը շրջապատեցին նրանց, ամեն կողմից սրի քաշեցին, խիստ կոտորեցին, կողոպտեցին, գերեվարեցին, կանանց ու երեխաներին ստորըկացրին: Նրանք այնտեղից տարան անհաշիվ բարիքներ, որոնց մեջ էին նաև շատ ապրանքներ, որ նրանք (թուրքմենները) վաճառականներից էին խլել, գեռ հակերի (կապոցների) մեջ, շքացված վիճակում: Երբ այս գործը վերջացրեց, [Ջալալ ալ-Դինը] վերադարձավ Դավրեժ:

էջ 371
ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒԱԶՋԱՄԻ ՈՒ ԱՇՐԱՖԻ ՄԻՋԵՎ

Կսկսենք պատմելով նրանց տարակարծությունների պատճառի մասին: Երբ մեռավ ալ-Մալիք ալ-Ադիլ Աբու Բաքր իբն Այյուբը, նրա որդիները իրար հետ համերաշխ էին, այսինքն Եգիպտոսի տեր ալ-Մալիք ալ-Քամիլ Մուհամմադը, Դամասկոսի, Երուսաղեմի և հարակից նահանգների տեր ալ-Մալիք ալ-Մուազզամ Իսան և Ջազիրայի ու հլաթի տեր ալ-Մալիք ալ-Աշրաֆ Մուսան, և նրանք համաձայնել էին դուրս քշելու ֆըրանկներին Եգիպտոսից: Մուազզամը երկու անգամ գնաց իր եղբոր Աշրաֆի մոտ Ջազիրա, օգնություն խնդրելու ֆրանկների դեմ և համոզելու, որ օգնության հասնի իր եղբորը՝ Քամիլին: Նա մնաց, մինչև որ համոզեց և նրանք միասին գնացին Եգիպտոս և ետ մղեցին ֆրանկներին:

Աշրաֆը նեղ վիճակում էր այն բանի պատճառով, որ Ջալալ ալ-Դինը հարևան էր հլաթի նահանգին, իսկ Մուազզամը Դամասկոսում խանգարում էր Եգիպտոսի, Հալեբի և Ասորիքի այլ վայրերի զորքերի նրան օգնության գալուն: Աշրաֆը գնաց իր եղբոր՝ Մուազզամի մոտ Դամասկոս Շավվալ ամսին (25 սեպտեմբեր—23 հոկտեմբեր), սիրաշահեց նրան և հաշտվեց նրա հետ: Երբ Քամիլը լսեց, վիրավորվեց, կարծելով, թե նրանց համաձայնությունն իր դեմ է, սակայն նրանք երկուսով գրեցին ու տեղեկացրին, թե Ջալալ ալ-Դինը հարձակվել է հլաթի վրա և դրության լրջությունը բացատրեցին ու նշեցին, որ Ադիլյան տան հզորության համար անհրաժեշտ է համերաշխ լինել:

էջ 371—372
ՖՐԱՆԿՆԵՐԻ ՈՒ ՀԱՅԵՐԻ ՄԻՋԵՎ ԽՌՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այդ տարում Անտիոքի տեր ֆրանկ Բրինսը³⁶⁰ (իշխան) հավաքեց մեծ զորք և շարժվեց հայերի դեմ, որոնք իբն լայունի (Լևոնի որդու) երկրի կիրճերում էին [ամրացած] և նրանց միջև սաստիկ պատերազմ տեղի ունեցավ:

Բանն այն է, որ կիրճերի տեր հայազգի ևևնի որդին (իբն Լայուն ալ-Արմանի) դրանից առաջ մահացել էր առանց արու զավակ թողնելու, այլ ուներ մի դուստր և հայերը նրան թագուհի դարձրին³¹։ Ապա համոզվելով, որ թագավորությունը չի կարող կնոջ ձեռքով կառավարվել, նրան ամուսնացրին [Անտիոքի] բրինսի որդու հետ։ Սա ամուսնացավ, տեղափոխվեց նրանց երկիրը ու մի տարի մնաց թագավորության մեջ։ Ապա նրանք (հայերը) զղջացին այդ բանի համար, վախենալով, որ ֆրանկները կարող են իրենց երկիրը գրավել։ Նրանք ապստամբեցին բրինսի որդու դեմ, ձերբակալեցին նրան ու բանտարկեցին։ Հայրը լուր ուղարկեց, պահանջելով, որ նա ազատ արձակվի ու հաստատվի թագավորության մեջ, սակայն նրանք (հայերը) այդ [պահանջը] չկատարեցին։

Նա լուր ուղարկեց մեծ Հռոմում (Ռոմիա) ֆրանկների թագավոր պապին (Բաբա), թույլտվություն խնդրելով հարձակվել նրանց երկրի վրա, իսկ այս Հռոմի թագավորի հրամանը ֆրանկների մոտ երբեք չի մերժվի։ Սակայն սա արգելեց նրան հարձակվել, ասելով՝ նրանք մեր համայնքին (միլլատ) պատկանող ժողովուրդ են և չի կարելի նրանց երկրի վրա հարձակվել։ Սա (բրինսը) շուգեց հնազանդվել ու լուր ուղարկեց Իկոնիայի (Կոնիա), Մալաթիայի ու դրանց միջև գտնվող երկրների թագավոր Ալա ալ-Դին Քալ Կուբադին, հաշտություն առաջարկեց և նրան համոզեց հարձակվել ևևնի որդու երկրի վրա և այդ բանի համար նրա համաձայնությունը վերցրեց։ Նրանք պայմանավորվեցին այդ նպատակի համար և բրինսը զորք հավաքեց, որպեսզի հարձակվի Հայոց երկրի (Բիլադ ալ-Արման) վրա, սակայն ալ-Դաուիյա³² և ալ-Ասբիտար (Հյուրընկալ) ասպետները, որոնք ֆրանկների եռանդուն ռազմիկներն են, ասացին, որ Հռոմի թագավորը մեզ այդ բանն արգելեց։ Սակայն եղան ուրիշներ, որոնք հնազանդվեցին նրան (բրինսին) և մտան Հայոց երկրի սահմանները։ Այնտեղ քարքարոտ կիրճեր ու լեռներ էին և նա չկարողացավ իր ուզածն անել։

Իսկ Քալ Կուբադը Հայոց երկիրը մտավ իր կողմից, քանզի այստեղից մտնելն ավելի հեշտ էր, քան Ասորիքի կողմից։ Նա մտավ վեց հարյուր քսաներկու թվականին (13 հունվար 1225—1 հունվար 1226), կողոպտեց, վառեց, բազմաթիվ բերդեր պաշարեց, որոնցից չորսը գրավեց, սակայն ձմեռը վրա հասավ ու նա այնտեղից վերադարձավ։

Երբ Հռոմում (Ռոմիա) ֆրանկների թագավորը (պապը) լսեց, լուր ուղարկեց Անտիոքի ֆրանկներին, հայտնելով, թե ինքը բրինսին բանադրել էր [այդ բանի համար]։ Ալ-Դաուիյա (տաճարական) և ալ-Ասբիտարիյա (Հյուրընկալ) և շատ ուրիշ ասպետներ նրա մոտ չէին ներկայանում ու նրա խոսքը չէին լսում, իսկ երբ իրեն հպատակ Անտիոքի ու Տրիպոլսի

(Թարաբուրուս) ժողովուրդը որևէ տոն էր տոնում, նա (բրինսը) դուրս էր դալիս քաղաքից և միայն տոնակատարությունը վերջանալուց հետո նորից մտնում էր քաղաք։

Ապա նա լուր ուղարկեց Հռոմի թագավորին (պապին), բողոքելով հայերի դեմ, թե նրանք չեն արձակել նրա որդուն։ Սա հրաման ուղարկեց հայերին, որ աղատ արձակեն նրա որդուն և կրկին դարձնեն թագավոր։ Եթե այս հրամանը կատարեն՝ լավ, ապա թե ոչ թույլ էր տալիս հարձակվելու նրանց երկրի վրա։ Երբ [պապի] նամակը նրանց հասավ, ազատ շարձակեցին նրա որդուն, իսկ բրինսը ղորք հավաքեց ու հարձակվեց Հայոց երկրի վրա։ Հայերը լուր ուղարկեցին Հալերի ավաբեկ Շիհաբ ալ-Դինին օգնության կանչելով և զգուշացնելով, որ վատ կլինի, եթե բրինսը գրավի իրենց երկիրը, քանի որ Հալերի գավառներին դրացի է։ Սա նրանց ղորք և զենք ուղարկեց և երբ բրինսը այս բանը լսեց, որոշեց անպայման հարձակվել նրանց երկրի վրա։ Նա առաջ խաղաց, պատե-բազմեց նրանց հետ, սակայն արդյունքի չհասնելով վերադարձավ։

Այս բոլորը ինձ պատմել է բրիստոնյաների խելոք մարդկանցից մեկը, որը եղել է նրանց երկրում և իմացել է նրա վիճակը։ Այլ բաներ էլ եմ հարցրել, որոնց մի մասը իմացավ, իսկ մյուս մասը՝ ժխտեց։

ՎԵՑ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՉՈՐՄ ԹՎԱԿԱՆ

(22 դեկտեմբեր 1226—11 դեկտեմբեր 1227)

էջ 373

ՎՐԱՑԻՆԵՐԻ՝ ՏՓՂԻՍ ՔԱՂԱՔԸ ՄՏԵՆԼՈՒ ԵՎ ՀՐԿԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Ռաբի Ա ամսին (19 փետրվար—21 մարտ), վրացիք հասան Տփղիս քաղաքը, ուր չկար մահմեդական զորք, որ պաշտպաներ քաղաքը։

Բանն այն է, որ Զալալ ալ-Դինը, երբ խլաթից վերադարձավ ու ջարդեց իվախներին (թուրքմեններին), ինչպես նախապես հիշատակեցինք, իր զորքերը ցրեց տաք և առատ արոտավայրեր ունեցող տեղերում, որպեսզի այնտեղ ձմեռեն։ Նրա՝ [տեղում մնացած] զորքերը վատ էին վերաբերվել ու նեղել էին Տփղիսի ժողովրդին, որը մահմեդական էր և ահա սրանք գրեցին վրացիներին, հրավիրելով իրենց մոտ, խոստանալով հանձնել քաղաքը։ Վրացիք օգտագործեցին այս առիթը, այսինքն՝ քաղաքի ժողովրդի համակրանքը, ինչպես նաև այն [հանգամանքը], որ քաղաքում զորքեր չկային։ Հավաքելով Անիում, Կարսում և այլ բերդե-

րում եղած իրենց զորքերը, նրանք շարժվեցին դեպի Տփղիս, որն, ինչպես նշեցինք, դատարկ էր [զորքերից], իսկ Ջալալ ալ-Դինը արհամարհում էր վրաց (քուրջ) ուժը, քանի որ շատ էին սպանվել և հույս չունեի, որ կկարողանան [ներից] շարժվել։

Սակայն նրանք գրավեցին քաղաքը, սրի քաշեցին քաղաքի բնակիչ-ների մնացորդներին և գիտենալով, որ չեն կարող քաղաքը պաշտպանել Ջալալ ալ-Դինից, ամբողջովին հրկիզեցին։ Երբ Ջալալ ալ-Դինը լսեց այս լուրը, իր ունեցած զորքերով եկավ, որպեսզի հասնի նրանց օտևից, սակայն ոչ ոքի չգտավ, քանի որ Տփղիսը վառելուց հետո հեռացել էին։

էջ 374

ԱՇՐԱՖԻ ԶՈՐՔԵՐԻ՝ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ՄՏՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՈՐՈՇ ՄԱՍԵՐԸ
ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Շաբան ամսին (17 հուլիս—15 օգոստոս), հաջիբ Ալի Հուսամ ալ-Դինը, որը ալ-Մալիք ալ-Աշրաֆի նախնի (տեղակալ) էր հլաթում ու նրա զորքերի հրամանատարը, իր մոտ եղած զորքերով շարժվեց դեպի Ատրպատական։

Քանն այն է, որ Ջալալ ալ-Դինի վերաբերմունքը վատ էր ժողովրդի նկատմամբ, և զորքն էլ կողոպտում էր։ Նրա կիներ սելջուկյան Թուղրիլ բեկի զուստրն էր և Ատրպատականի տիրոջ՝ Ուլբեք իբն ալ-Բահլավանի նախկին կինը, և, ինչպես նշեցինք, Ջալալ ալ-Դինը ամուսնացել էր նրա հետ։ Երբ նա Ուլբեքի կինն էր, ամբողջ երկիրը կառավարում էր և ոչ ոք նրա վրա իշխանություն չունեի։ Սակայն Ջալալ ալ-Դինը, ամուսնանալուց հետո, արհամարհում էր նրան, ուշադրություն չէր դարձնում և սա սկսեց վախենալ նրանից, դեռ չենք ասում այն մասին, որ նա զրկվեց իշխելու ու հրամայելու իրավունքից։

Ուստի նա և հույի (հուայյ) ժողովուրդը լուր ուղարկեցին Հաջիբ Հուսամ ալ-Դինին, հրավիրելով նրան, որպեսզի երկիրը հանձնեն։ Սա եկավ մտավ երկիրը՝ Ատրպատական, ու զրավեց հույ քաղաքն ու շրջակա բերդերը, որոնք Ջալալ ալ-Դինի կնոջ ձեռքում էին, ինչպես նաև Մարանդը՝ նրան զրեցին նաև Նախճավան (Նակչուան) քաղաքի բնակիչները, և երբ եկավ, [քաղաքը] նրան հանձնեցին։ Նրանց (հլաթի զորքերի) ուժերը ավելացավ այդ երկրում և եթե մնային, ամբողջ երկիրը կգրավեին, սակայն վերադարձան հլաթ, իրենց հետ տանելով Ջալալ ալ-Դինի կնոջը՝ սուլթան Թուղրիլի դստերը։ Նրա մասին եղած տեղեկությունների մնացած մասը կպատմենք [վեց հարյուր] քսանհինգ թվականի տակ։

Այդ տարում թանկություն եղավ Զաղիրա երկրում և զները թիչ բարձրանում էին ու թիչ իջնում, անձրևը դադարեց ամբողջ Շուրաթ (փետրուվար) ամիսը և Ազար (մարտ) ամսի առաջին տասն օրերը...

Մոսուլում ոչխարի վաճառքին հսկողն ինձ պատմել է, որ այնտեղ [օրակա՞ն] միայն մեկ ոչխար է վաճառվում, հինգ վեց գլուխ, պակաս կամ ավելի։ Սա լսված բան չէ և մեր ամբողջ կյանքում նմանը չէինք տեսել, ոչ էլ պատմել էին, քանզի գարունը մսի էժանության ժամանակն է։ Բանն այն է, որ թուրքմենները, բրդերը և քիլաքան (զիլաքնե՞ր, զիլանցինե՞ր) իրենց ձմեռանոցներից փոխադրվում են Անձևացիք (Զավազան) և ոչխարն էժան վաճառում են։ Ամեն տարի մսի գինը այս եղանակին լինում էր վեց կամ յոթ ռաթլը (լիար) մի կիրաթ, իսկ այս տարի մեկ ռաթլը երկու հաբբա արժի։

ՎԵՑ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ

(12 դեկտեմբեր 1227—29 նոյեմբեր 1228)

Այդ տարում Իկոնիայի (Կունիա), Ակսարայի, Մալաթիայի և Ռումիայի կողմերի տեր Ալա ալ-Դին Քայ Կուբադ իբն Քայ խուսրաու իբն Կիլիշ Արսլանը գրավեց Երզնկան (Արզինքան)³⁴³։

Գրավելու պատճառն այն էր, որ նրա (Երզնկայի) տեր Բահրամ Շահը, որի իշխանությունը երկարել էր, իսկ ինքը անցել էր վաթսուն տարեկանը մեռավ։ Նա գտնվում էր Կիլիշ Արսլանի ու նրանից հետո՝ որդիների իշխանության տակ և, երբ մեռավ, իրենից հետո իշխեց որդին՝ Ալա ալ-Դին Դաուդ Շահը։ Քայ Կուբադը լուր ուղարկեց նրան, զորք պահանջելով, որպեսզի միասին գնան Կարինի (Արզան ալ-Ռում) դեմ այն պաշարելու համար, և նա պետք էր զորքի հետ միասին ներկա լիներ։ Այդպես էլ արեց ու իր զորքով գնաց։ Սակայն, երբ հասավ, [Ալա ալ-Դինը] ձերբակալեց նրան ու գրավեց Երզնկա (Արզինքան) քաղաքը։ Սա ունի մի բերդ, որն ամենաանառիկ բերդերից է և կռվում է Կամախ (Քամախ), ուր Դաուդ Շահի թաքստոցն էր։

Ռումի թագավորը [զորք] ուղարկեց այն պաշարելու, սակայն զոր-

քը չկարողացավ մերձենալ սրա բարձրություն և անառիկ լինելու պատճառով։ Այդ ժամանակ նա սպառնաց Դաուդ Շահին [նեղել], եթե չհանձնի Կամախը։ Սա իր տեղակալին (նախք) լուր ուղարկեց, որ հանձնի, և նա հանձնեց բերդը Քայ Կուրադին։

Քայ Կուրադը ուզեց գնալ Կարին (Արդան ալ-Ռում), որպեսզի դրավի այն, իսկ այնտեղ կար (իշխում էր) իր հորեղբորորդի Թուղրիլ Շահ իբն Կիլիշ Արսլանը։ Երբ սա լսեց այդ մասին, լուր ուղարկեց հլաթում Աշրաֆի նախք Հուսամ ալ-Դին Ալիին, օգնության կանչելով և հպատակություն հայտնելով Աշրաֆին։ Հուսամ ալ-Դինը իր մոտ եղած զորքով, որը նա հավաքել էր Ասորիքից ու Ջազիրայից, եկավ։ Նա վախենում էր, որ եթե Ռումի (Իկոնիայի) թագավորը ախրի Կաբինին (Արզան ալ-Ռում), առաջ կգան ու կհարձակվի հլաթի վրա։

Հուսամ ալ-Դին հաջիբը եկավ Կարին (Արզան ալ-Ռում) ու պատրաստվեց պաշտպանել այն։ Երբ Քայ Կուրադը լսեց զորքերի գալուստը, այլևս առաջ չգնաց, այլ Երզնկայից վերադարձավ իր երկիրը։ Նրան լուր էր եկել, թե իր երկրի հարևան անհավատ հոռոմները գրավել են մի բերդ, որի անունն էր Սինոպ (Սինուբ)։ Սա ամենաանառիկ ամրոցներից էր և նայում էր հաղարաց ծովին։ Երբ իր երկիրը հասավ, այնտեղ գործ ուղարկեց, պաշարեց ցամաքից ու ծովից և վերագրավեց հոռոմների ձեռքից։ Ապա գնաց Անթաթա (Անթաթա)⁴⁴ իր սովորության համաձայն ձմեռելու։

էջ 378

ՋԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՈՂՈՊՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում Ջալալ ալ-Դին խորեզմ Շահը հասավ հլաթի (հլաթ) երկիրը, անցավ հլաթը, դեպի Մուշի դաշտը՝ ճապաղջուր (Ջաբալ Ջուր)³⁴⁵ և բուրդին կողոպտեց, կանանց գերեվարեց, երեսաներին ստրկացրեց, մարդկանց կոտորեց, գյուղերն ավերեց ու վերադարձավ իր երկիրը։ Երբ լուրը հասավ Ջազիրա երկիրը, հառան, Սարուշ և այլ վայրեր, այն մասին թե նա անցել է հլաթը դեպի ճապաղջուր (Ջուր) և մոտեցել է իրենց, այդ երկրի ժողովուրդը վախեցավ, որ իր դեմ էլ կգա, քանզի ժամանակը ձմեռ էր և կարծում էին, որ նա Ջազիրա կգա ձմեռելու, որովհետև այնտեղ ցուրտը խիստ շէր, նրանք որոշեցին իրենց քաղաքներից տեղափոխվել Ասորիք։ Սարուշի ժողովրդի մի մասը հասավ Մանբիշ, որն Ասորիքում է։ Սակայն լուր ստացան, որ նա երկիրը (Հայաստանը) կողապտելուց հետո, վերադարձել էր և իրենք ևս վերադարձան։

Նրա վերադարձի պատճառն այն էր, որ հլաթի երկրում ձյունը սո-
վորականից շատ էր տեղացել և նա շտապել էր վերադառնալ:

ՎԵՅ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՎԵՅ ԹՎԱԿԱՆ

(30 նոյեմբեր 1228—19 նոյեմբեր 1229)

էջ 379—380

ՀԱՋԻԲ ԱԼԻԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՍՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում ալ-Մալիք ալ-Աշրաֆի իր մամուլք Իզզ ալ-Դին Այբա-
քին, որը նրա պետության մեջ մեծ ամիր էր, ուղարկեց հլաթ, հրամայե-
լով ձերբակալել հաջիբ Հուսամ ալ-Դին Ալի իբն Համադին, որը հլաթի
երկրի վերակացուն (մուտավալլի) էր և նրա կառավարիչը (հաքիմ) Աշ-
րաֆի փոխարեն:

Ոչինչ հայտնի չէ նրա ձերբակալությունը արդարացնող, քանզի նա
սրտացավ էր նրան (Աշրաֆին), խորհրդատու էր, նրա երկրի պահապանն
էր և ժողովրդի հետ լավ էր վերաբերվում: Այս երկար շրջանում նա դի-
մադրեց խորեզմ Շահ Ջալալ ալ-Դինին և հլաթը լավ պահպանեց, մի
բան, որ ուրիշը չէր կարող անել: Նա հոգատար էր երկրի պահպանության
հարցում և պաշտպանում էր այն: Մենք արդեն նշեցինք, թե ինչպես նա
հարձակվեց Ջալալ ալ-Դինի երկրի վրա ու գրավեց նրա մի մասը. մի
բան, որը վկայում է նրա մեծ ընդունակության ու կատարյալ քաջության
մասին: Նա մեծ հեղինակություն ստեղծեց իր տիրոջ համար և մարդիկ
ասում էին՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆի ծառաները դիմադրում են խորեզմ
Շահին: Նա, ալլահը ողորմի նրան, բարեգործ էր, ոչ ոքի չարիք չէր գոր-
ծում և շատ բարի գործեր կատարեց, օրինակ, կառուցեց իջևանատներ
ճանապարհների վրա, մզկիթներ երկրի տարբեր մասերում, իսկ հլաթում
կառուցեց հիվանդանոց ու մայր մզկիթ: Շատ ճանապարհների կառուցեց,
ինչպես նաև վերանորոգեց քայքայված [ճանապարհները]:

Երբ Այբաքը հասավ հլաթ, ձերբակալեց նրան և անմիջապես սպա-
նեց, քանզի նրա թշնամին էր: Բայց հենց որ սպանվեց, երևաց նրա կա-
րողության արժեքը, որովհետև Ջալալ ալ-Դինը նրա ձերբակալումից
հետո հլաթը պաշարեց ու գրավեց, ինչպես հիշատակելու ենք, եթե ալ-
լահը կամենա: Ալլահը շխնայեց Այբաքին, այլ շուտով վրեժ լուծեց նրա-
նից: հլաթին տիրելուց հետո, Ջալալ ալ-Դինը ձերբակալեց Այբաքին այլ
ամիրների հետ: Երբ Աշրաֆը հաշտություն կնքեց Ջալալ ալ-Դինի հետ,
վերջինս արձակեց բոլորին, սակայն Այբաքը սպանված էր: Նրա սպանու-

թյան պատճառն այն էր, որ հաջիբ Ալիի մամլուքներից մեկը փախել էր Ջալալ ալ-Դինի մոտ և երբ Այբաքը դերի ընկավ, այս մամլուքը Ջալալ ալ-Դինից խնդրեց, որպեսզի թույլ տա իրեն սպանել նրան իր տիրոջ՝ հաջիբ Ալիի փոխարեն։ Սա հանձնեց նրան և նա սպանեց։

Ինձ պատմել են, որ ալ-Մալիք ալ-Աշրաֆը երազում տեսել էր, որ հաջիբ Ալին մտել էր մի հավաքույթ, ուր կար Այբաքը։ Նա մի թաշկինակով կապել էր Այբաքի վիզը, քաշել ու դուրս տարել։ Ալ-Մալիք ալ-Աշրաֆը զարթնել ու ասել էր, թե մեռավ Այբաքը, քանզի ես այսպես և այսպես տեսա երազում։

էջ 380—381

ՋԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆԻ՝ ԽԼԱԹԸ ՊԱՇԱՐԵԼՈՒ ԵՎ ՏԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ տարում՝ Շավալ ամսի (23 օգոստոս—21 սեպտեմբեր) սկզբնե-րին, Ջալալ ալ-Դին Խորեզմ Շահը պաշարեց Խլաթը, որը ալ-Մալիք ալ-Աշրաֆին էր պատկանում։ Նրա զորքը դիմադրեց և նրան օգնեց քաղաքի բնակչությունը, վախենալով Ջալալ ալ-Դինի վատ վերաբերմունքից։ Նրանք (խլաթեցիք) շափազանց նախատեսին ու հայհոյեցին նրան, իսկ նա կատաղությամբ համառեց և ամբողջ ձմեռը պաշարված վիճակում պահեց նրանց։ Սաստիկ ցրտի և առատ ձյան պատճառով նա իր զորքից շատերին ցրեց մերձակա գյուղերն ու քաղաքները, քանզի Խլաթը ամենա-ցուրտ և ամենաշատ ձյուն ունեցող քաղաքներից է։

Ջալալ ալ-Դինը բացառիկ հաստատակամություն և անհավատալի համբերություն ցուցաբերեց։ Նա քաղաքի դեմ բերեց մի քանի քա-րանետ մեքենաներ և այնքան քարեր նետեց, մինչև որ պարսպի մի մա-սը քանդեց։ Սակայն քաղաքի բնակիչները նորից կառուցեցին այն։ Նա համբերատար և համառ կերպով շարունակեց նեղել նրանց մինչև [վեց հարյուր] քսանյոթ թվականի Ջումադա Ա ամսի (18 մարտ—17 ապրիլ) վերջերը։ Նա իրար հաջորդող դրոհներով, բռնի ուժով գրավեց այն Ջու-մադա Ա ամսի քսանութին (15 ապրիլ), կիրակի օրը։

Այն, դավաճանությամբ, հանձնեցին որոշ ամիրներ (զորավարներ)։ Երբ նա տիրեց քաղաքին, ներսում եղած ամիրները բարձրացան միջ-նաբերդն ու պաշտպանվեցին։ Նա կռվեց նրանց դեմ ու միաժամանակ սրի քաշեց քաղաքի ժողովրդին և ում որ գտավ, սպանեց։ Նրանք քիչ էին մնացել, մի մասը վախից փախել էր, ուրիշները սաստիկ սովից հեռացել էին, իսկ մի մասը մահացել էր սննդի սակավությունից կամ բացա-կայությունից։ Մարդիկ Խլաթում կերան ոչխարներին, ապա կռվերին,

գումեշներին, ապա ձիերին, էշերին, չորիներին և, վերջապես, շներին ու կատուններին։ Լսել ենք, որ նրանք մկներ էին որսում և ուտում։ Նրանք այնպիսի համբերություն էին ցուցաբերել, որի նմանը ոչ ոքի չի հաջողվել։

Նա (Ջալալ ալ-Դինը) հլաթի երկրից այլ մասեր չգրավեց։ Նրանք (զորքերը) հլաթը կործանեցին, անխնա կոտորեցին, իսկ ով փախավ, ազատվեց, կանանց հափշտակեցեին, տղաներին ստրկացրին ու բոլորին վաճառեցին և այսպիսով [բնակիչները] բզիկ-բզիկ եղան։ Նրանք (զորքերը) երկրում տարածվեցին, կողոպտեցին մարդկանց ունեցվածքը և չլսված չարագործություններ արեցին բնակիչներին։ Սակայն բարձր-յայն ալլահը շուշացրեց հատուցումը՝ նա (Ջալալ ալ-Դինը) պարտության մատնվեց թե՛ մահմեդականներից, թե՛ թաթարներից, ինչպես հիշատակելու ենք, եթե ալլահը կամենա։

ՎԵՏ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ

(20 նոյեմբեր 1229—8 նոյեմբեր 1230)

էջ 381

ՋԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅ ԿՈՒԲԱԴԻՑ ԵՎ ԱՇՐԱՖԻՑ

Այդ տարում՝ Ռամադան ամսի քսանութին (13 օգոստոս), շաբաթ օրը Ջալալ ալ-Դին հորեզմ Շահը պարտվեց³⁴, Ռումի երկրի, Իկոնիայի (Կոնիա), Ակսարայի, Սերաստիայի (Սիվաս), Մալաթիայի և այլ [քաղաքների] տեր Ալա ալ-Դին Քայ Կուբադ իրեն Քայ հուսրաու իրեն Կիլիջ Արսլանից և Դամասկոսի, Ջազիրայի ու հլաթի տեր ալ-Մալիք ալ-Աշրաֆից։

Բանն այն է, որ Ջալալ ալ-Դինին հնազանդություն էր հայտնել Կարենո (Արզան ալ-Ռում) տերը. որը Ռումի թագավոր Ալա ալ-Դինի հորեզ-բորորդին էր, սակայն նրա և Ալա ալ-Դինի միջև ուժեղ թշնամություն կար։ Կարենո (Արզան ալ-Ռում) տերը եկավ Ջալալ ալ-Դինի մոտ՝ օգնելու հլաթի պաշարմանը։

Ալա ալ-Դինը վախեցավ այս երկուսից և լուր ուղարկեց ալ-Մալիք ալ-Քամիլին, որն այն ժամանակ հառանում էր, խնդրելով նրանից, որ իր եղբորը՝ Աշրաֆին, բերի Դամասկոսից (Դիմաշկ), քանզի վերջինս այնտեղ էր մնում տեր դառնալուց հետո։ Ալա ալ-Դինը իրար հետևից դեսպաններ ուղարկեց այս հարցով, քանզի վախենում էր Ջալալ ալ-Դինից, Ալ-Մալիք ալ-Քամիլը Դամասկոսից բերեց իր եղբորը՝ Աշրա-

ֆին, որն իրոք եկավ։ Այլա ալ-Դինը նրանց երկուսին անընդհատ նամակ-ներ էր ուղարկում, համոզելով Աշրաֆին իր մոտ դալ ու խորհրդակցել։ Ասվում է, որ մեկ օրվա ընթացքում Քամիլին ու Աշրաֆին հինգ դեսպան եկավ Այլա ալ-Դինից, խնդրելով Աշրաֆի գալուստը՝ թեկուզ մենակ։

Սա հավաքեց Զազիրայի ու Ասորիքի զորքերը և եկավ Այլա ալ-Դինի մոտ։ Նրանք հավաքվեցին Սեբաստիայում (Սիվաս) ու շարժվեցին դեպի հլաթ։ Զալալ ալ-Դինը լսելով այդ մասին, շուտափույթ եկավ նրանց դեմ և հասավ նրանց մի վայրում, որը կոչվում էր Բասի Հիմար (Հիմաք), որը Երզնկայի (Արզիւնջան) գավառներից էր։ Այնտեղ նրանք ընդհարվեցին։ Այլա ալ-Դինը շատ զորք ուներ, ասվում է քսան հազար ձիավոր, իսկ Աշ-րաֆի հետ կար մոտավորապես հինգ հազար, սակայն ընտիր, քաջ ու պատերազմներում կոփված զորքեր էին, լավ զինված ու արաբական կրակոտ նժույգներով։ Նրանց հրամանատարն էր Հալեբի զորքերի ամիր-ներից մեկը, որը կոչվում էր Իզզ ալ-Դին Օմար իբն Ալի, որը Հաքքարի քրդերից էր և վերին աստիճանի քաջարի, ընտիր հատկություններով ու ազնիվ բարքի տեր։

Երբ իրար հանդիպեցին, Զալալ ալ-Դինը ապշեց, տեսնելով զորքի բազմությունը, մանավանդ, երբ տեսավ Ասորիքի զորքը։ Ականատես եղավ նրանց գեղեցկությանը, սպառաղինությանը, ձիերին և այս բո-լորը վախով լցրեց նրա սիրտը։ Ճակատամարտն սկսեց Իզզ ալ-Դին Օմար իբն Ալին՝ Հալեբի զորքի գլուխն անցած։ Զալալ ալ-Դինը չկարողացաւ գիմադրել կամ դիմանալ, այլ փախուստի դիմեցին ինքը և իր զորքը։ Եղբայրը եղբոր վրա ուշադրություն չէր դարձնում, ցրվեցին նրա մերձա-վորները և բզիկ-բզիկ եղան։ Նա վերադարձավ հլաթ և այնտեղ գտնվող յուրայիններին էլ նրան միանալով վերադարձան Ատրպատական ու կանդ առան հոյ քաղաքի մոտ։ Մինչ այդ նրանք (Զալալ ալ-Դինի զորքը) հլաթի նահանգից միայն հլաթ լքաղաքն] էին գրավել։

Ալ-Մալիք ալ-Աշրաֆը եկավ հլաթ և այն գտավ «հիմնահատակ կործանված» (Ղուրան, Բ, 261), դատարկ և՛ բնակչությունից, և՛ ժողո-վըրդից, քանզի նրանց հետ կատարվել էր այն, ինչի մասին արդեն պատմեցինք։

էջ 381—382

ԱԼԱ ԱԼ-ԴԻՆԻ ԿԱՐԻՆԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արդեն հիշեցի՞նք, որ Կարնո (Արզան ալ-Ռում) տերը հլաթի պաշար-ման ժամանակ միացել էր Զալալ ալ-Դինին և նրա հետ էլ մնաց ու մաս-նակից եղավ վերոհիշյալ ճակատամարտին։

Սակայն, երբ Զալալ ալ-Դինը պարտվեց, Կարնո տերը գերի ընկավ իր հորեղբորորդու՝ Ալի ալ-Դին Բայ Կուրագի ձեռքը։ Սա վերցրեց նրան ու գնաց Կարին, որի տերը իր ձեռքով հանձնեց նրան [քաղաքը], իր բոլոր ենթակա բերդերով, գանձերով և այլ բաներով։ Ինչպես ասվում է՝ ջալլամը գնաց երկու կոտոշ գտնելու, բայց վերադարձավ առանց ականջների։ Այդպես էլ այս թշվառականը, եկավ Զալալ ալ-Դինի մոտ նոր բան ձեռք բերելու և ինչպես [Զալալ ալ-Դինն] էր խոստացել Ալա ալ-Դինի երկրի մի մասը վերցնելու [հույսով], սակայն վերջինս վերցրեց նրա ունեցվածքը և ձեռքում եղած երկիրը, իսկ ինքը մնաց գերի վիճակում։

էջ 382

ԱՇԻՐԱՏԻ ՈՒ ԱԼԱ ԱԼ-ԴԻՆԻ ԵՎ ԶԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ Աշրաֆը հլաթ վերադարձավ, իսկ Զալալ ալ-Դինը փախավ Խոյ (Խուայ), նրանց միջև դեպքաններ փոխանակվեցին և ամեն մեկը համա-ձայնեց իր ձեռքում եղածը պահել և այսպիսով, հաշտություն գոյացավ ու երգվեցին իրար։ Երբ հաշտությունը կայացավ և երդում տվեցին, Աշրաֆը վերադարձավ Սինջար և այնտեղից գնաց Դամասկոս։ Զալալ ալ-Դինը մնաց Ատրպատականի իր նահանգներում, մինչև որ նրա վրա հարձակ-վեցին թաթարները, ինչպես կհիշատակենք, եթե բարձրյալն ալլահը կա-մենա։

էջ 382

ՇԻՀԱԲ ԱԼ-ԴԻՆ ՂԱԶԻԻ՝ ԱՐՁԵ ՔԱՂԱՔԸ ԿՎԱՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիար Բաքրի սահմաններում գտնվող Արզն (Արզան) քաղաքի տեր Հուսամ ալ-Դինը միշտ եղել էր ալ-Մալիք ալ-Աշրաֆի ընկերակիցը, խրատողը, ականատես էր եղել նրա բոլոր պատերազմներին ու իրադար-ձություններին, իր ունեցվածքը նրան էր տրամադրել և ինքն էլ զորքի հետ օգնել էր նրան, պայքարելով նրա թշնամիների դեմ ու պաշտպա-նելով նրա բարեկամներին։ Այնպես էր պատահել, որ նա հլաթում էր, երբ Զալալ ալ-Դինը պաշարել էր այն և նրա [Աշրաֆի] հետ նա դիմա-ցել էր բոլոր դժվարություններին ու սարսափներին, համբերել, մինչև որ Զալալ ալ-Դինը գրավել էր [հլաթը]։

Զալալ ալ-Դինը նրան գերել էր և ուզում էր նրանից խլել քաղաքը։ Նրան պատմել էին, որ նա իշխանական հին, ազնվական ընտանիքից է,

ժառանգել է Արզն [քաղաքը] իր նախնիներից և որ նրանք այլ քաղաք-
ներ ևս ունեցել են, սակայն բոլորը նրանց ձեռքից գնացել է։ Նա խղճաց
նրան ու մեղքացավ և քաղաքը թողեց նրան, խոստումնագիր ու պայմա-
նագիր առնելով այն մասին, թե իր (Ջալալ ալ-Դինի) դեմ չի կռվելու, և
սա վերադարձավ իր քաղաքը ու մնաց այնտեղ։

Ծրբ ալ-Մալիք ալ-Աշրաֆը և Ալա ալ-Դինը եկան Ջալալ ալ-Դինի
դեմ կռվելու, Աշրաֆի եղբայր Շիհաբ ալ-Դին Ղադի իբն ալ-Մալիք ալ-
Ադիլը, որը տիրում էր նփրկերտին ու Հանի քաղաքներին, եկավ ու պա-
շարեց նրան (Հուսամ ալ-Դինին) Արզնում, ապա գրավեց հաշտության
պայմաններով և այն փոխանակեց Հանի քաղաքի հետ, որը Դիար Բաք-
րում էր։

Այս Հուսամ ալ-Դինը առաքինի մարդ էր, լավ վարքի տեր, առա-
տաձեռն, նրա դուռը միշտ բաց է եղել դիմողների հանդեպ, որոնց նա
ընդառաջել է։ Նա լավ էր վերաբերվում իր նահանգին և ժողովրդին։ Հին
տեղից էր սերում, որը կոչվում էր Թուղան Արսլանի տուն, որին բացի Ար-
զընից պատկանում էին նաև Բաղեշը (Բադլիսը), Ոստանը (Վասթան) և
այլ վայրեր։ Կոչվում էր նաև ալ-Ահգաբի տուն և այս քաղաքները Մա-
լիք Շահ իբն Ալբ Արսլան Սալջուկիի օրերից նրան էին պատկանում։ Խլա-
թի տեր Բաքտամուրը նրանցից վերցրել էր Բաղեշը, Հուսամ ալ-Դինի
հորեղբոր ձեռքից, քանզի վերջինս համակիր էր Սալահ ալ-Դին իբն Այ-
յուբին և այդ պատճառով Բաքտամուրը հարձակվել էր նրա վրա։ Իսկ
Արզնը նրա (Հուսամ ալ-Դինի) ձեռքում էր մնացել մինչև օրս և ահա
սա ևս վերցվեց նրանից։

Ամենայն ինչ ունի սկիզբ ու վախճան։ Փառավորյալ լինի նա, որը
չունի ո՛չ սկիզբ և ո՛չ էլ գոյություն վախճան։

ՎԵՑ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ

(9 նոյեմբեր 1230—28 հոկտեմբեր 1231)

էջ 383

ԹԱԹԱՐՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԱՐՔՆԵՐԸ

Ջալալ ալ-Դինը հոռի բարքի տեր էր և իր թագավորությունը վատ
էր կառավարում։ Չկար մի հարևան տիրակալ, որի հետ թշնամական հա-
րաբերության մեջ չլիներ, չհարձակվեր նրա տիրույթների վրա և վատ
դրացի չլիներ նրա հետ։ Հենց որ Սպահանում հանդես եկավ ու զորք
հավաքեց, հարձակվեց հուզիստանի վրա, պաշարեց Շուստեր (Տուստեր)

քաղաքը, որը խալիֆայինն էր, գնաց Դակուկա, որը նույնպես խալիֆայինն էր ու կողոպտեց, ջատերին կոտորեց, ապա տիրացավ Ատրպատականին, որն Ուզրեկին էր պատկանում, հարձակվեց վրացիների (քուրջ) վրա և փախուստի մատնեց ու թշնամական հարաբերությունների մեջ էր նրանց հետ, ապա թշնամացրեց հլաթի տիրոջը ալ-Մալիք ալ-Աշրաֆին, հետո, թշնամացավ Ռումի (Իկոնիայի) տեր Ալա ալ-Դինի հետ։

էջ 384

ՋԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆԻ՝ ԱՄԻԴ ՀԱՍՆԵԼՈՒ, ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ
ՊԱՏԱՀԱՄԵՆՐԻ ՄԱՍԻՆ

Երբ Ջալալ ալ-Դինը տեսավ, թե ինչ էին անում թաթարները Ատրպատականում՝ կոտորում, կողոպտում, շեներն ավերում, հարկեր հավաքում, և [հասկացավ], որ նրանք որոշել էին հարձակվել իր վրա ու զգալով իր թույլ, անուժ լինելը, թողեց Ատրպատականն ու գնաց հլաթ։ Նա լուր ուղարկեց ալ-Մալիք ալ-Աշրաֆի նախրին (փոխանորդին), ասելով՝ չենք եկել պատերազմի կամ վնաս տալու, այլ պարզապես այս թշնամու վախը մեղ ստիպել է ձեր երկիրը զալ։ Նա որոշել էր գնալ Դիար Բաքր ու Ջազիրա, ապա խալիֆայի գուռը՝ թաթարների գեմ օգնություն խնդրելու նրանցից և բոլոր թագավորներից օժանդակություն հայցելու հանուն դիմադրության։ Նա [միաժամանակ] զգուշացնում էր, որ անհոգությունը վատ վախճան կունենա։

Երբ հասավ հլաթ, տեղեկացավ, որ թաթարները հետապնդում են իրեն և արագընթաց զալիս իր հետևից։ Նա գնաց Ամիդ, ու ճանապարհին մի քանի տեղ յազաք (պահակներ) դրեց, վախենալով, որ նրանք զիշերը կհարձակվեն։ Եվ ահա եկավ թաթարների մի խումբ, որը հետապնդում էր նրան, և հասնելով ոչ այն ճանապարհով, ուր պահակներ կային, ներանք զիշերով հարձակվեցին, երբ նա Ամիդ քաղաքից այն կողմ էլ գտնվում։ Նա փախուստի դիմեց, իսկ զորքը ցրվեց ամեն կողմ։ Զորքի մի մասը գնաց հառան, սակայն ալ-Մալիք ալ-Քամիլի զորահրամանատարը՝ ամիր Սավաբը, հառանում իր զորքով հարձակվեց ու խլեց նրա (զորքի) մոտ եղած ունեցվածքը, զենքերն ու հեծնելու անասունները։ Մի ուրիշ խումբ դիմեց Մծբին, Մոսուլ, Սինջար, Արբելա (Իրբիլ) և երկրի այլ վայրեր։ Թագավորներն (տիրակալներն) ու ժողովուրդը հարձակվում էին նրանց վրա և նրանց կողոպտում էր ամեն մեկը, նույնիսկ գլուղացին,

քուրդը կամ [անապատի] բեղւին և ուրիշներ: Նրանք ուզում էին վրեժ լուծել նրանցից և պատժել իւրաթում ու ալլուր ցուցաբերած վատ վարմունքի, ալլանդակ գործերի ու երկրում ապականություն տարածելու համար, «քանզի ալլահը չի սիրում ապականիչներին»:

Զաւալ ալ-Դինը գնալով ավելի ու ավելի թուլացավ ու խեղճացավ, քանզի նրա զորքը ցրվել էր և խիստ տուժել: Թաթարները, նրան փախուստի մատնելուց հետո, նորից եկան ետեից, հետապնդելով մտան Դիար Բաքր, քանզի չգիտեին, թե ուր գնաց և կամ որ ճամփով: Փառք նրան, որը նրանց (խորեզմցիների) ապահովությունը վախի վերածեց, փառքը՝ նվաստացման, բազմությունը՝ սակավության: Օրհնյալ լինի տիեզերքի տերը, որն անում է ինչ որ կամենում է:

էջ 384—385

ԹԱԹԱՐՆԵՐԻ՝ ԴԻԱՐ ԲԱՔՐ ՈՒ ԶԱՋԻՐԱ ՄՈՒՏՔԻ ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՆՐԱՆՅ ՍՓՈԱՆ ԱՊԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ Զաւալ ալ-Դինը թաթարներից պարտվեց Ամիդի մոտ, թաթարները կողոպտեցին Ամիդի, Արզնի ու Նփրկերտի (Մայլաֆարիկին) շըրջակայքը, ապա դիմեցին Աղերդ (Սիիրդ) քաղաքը, որի ժողովուրդը կռվով դիմադրեց: Թաթարները նրանց երաշխավորագիր (աման) առաջարկեցին: Նրանք վստահելով հանձնվեցին, սակայն երբ թաթարները ներս խուժեցին, սրի քաշեցին և այնքան կոտորեցին, որ գրեթե բնաջնջեցին: Ազատվեցին միայն նրանք, որ թաքնվել էին, իսկ այսպիսիները շատ փոքրաթիվ էին:

Ինձ պատմել է մի վաճառական, որն [այդ ժամանակ] հասել է Ամիդ, թե սպանվածների թիվը մոտավորապես տասնհինգ հազարից ավելի էր: Այս վաճառականի հետ կար Սղերդից (Սիիրդ) մի հարճ (ջարիյա), որը պատմել է, թե իր տերը դուրս էր եկել կռվի, սակայն նրա մայրը արգելել էր նրան, քանզի ուրիշ տղա չուներ: Նա չէր լսել նրա խոսքը և նա (մայրը) միասին էր գնացել ու նրանք երկուսով սպանվել էին: Նրան (հարճին) ժառանգել էր մոր եղբորորդին, որը նրան վաճառել էր այս վաճառականին: Նա պատմել է նաև, որ սպանվածների թիվը խիստ մեծ էր և պաշարումը տևել էր հինգ օր:

Ասյա այստեղից [թաթարները] դնացին Թանզա քաղաքը և այնտեղ ևս նույն գործը կատարեցին: Թանզայից գնացին նրա մոտ գտնվող մի կիրճ, որը կռվում էր Կուրայշիների կիրճ, ուր ապրում էր Կուրայշիյա (Կուրայշիներ) կռված քրդական մի ցեղ: Այնտեղ կային վապուղ

ջրեր ու շատ պարտեզներ, սակայն գնալու ճանապարհը նեղ էր: Կուրայ-շինները կռվի ելան ու դիմադրեցին նրանց և ետ մղեցին: Նրանցից (թաթարներից) շատ սպանվածներ կային և թաթարները վերադարձան առանց իրենց նպատակին հասնելու: Նրանք շարունակեցին իրենց ընթացքը այդ երկրում, սակայն ոչ ոք չէր դիմադրում և ոչ էլ արգելք էր լինում: Հասան՝ Մարդին և քաղաքում ինչ որ գտան, կողոպտեցին: Իսկ Մարդինի տերը՝ Ռունայսարի բնակիչների հետ մնացին Մարդինի ամրոցում, ուր պատսպարվեցին նաև ամրոցի շրջակայքից այլ մարդիկ:

Ապա նրանք հասան Ջաղիրայի Մծբին [քաղաքը], որը պաշարեցին մեկ օրից ավելի, կողոպտեցին շրջակա գյուղերը և ում բռնեցին, սպանեցին: Սակայն քաղաքի դռները փակվեցին և նրանք հեռացան Սինջար քաղաքը ու հասան Սինջարի գավառում գտնվող լեռները: Նրանք կողոպտեցին այդ կողմերը, ապա մտան Խաբուր, հասան Արաբան, կողոպտեցին, կոտորեցին ու վերադարձան: Նրանց մի մասը գնաց Մոսուլի ճանապարհով ու հասավ մի գյուղ, որը կոչվում էր ալ-Մունիսա և մեկ օրվա ճանապարհ (մարհալա) հեռավորության վրա էր Մծբինից՝ սրա և Մոսուլի մեջտեղում: Նրանք կողոպտեցին, իսկ բնակիչները պատսպարվեցին մի խանի [կարավանատան] մեջ, սակայն բոլորն էլ կոտորվեցին:

Ինչ պատմել են մի մարդու մասին, որն ասել է, թե՝ նրանցից թաքնըվեցի մի տան մեջ, ուր ծղոտ կար և ինձ շգտան, իսկ ես տեսնում էի նրանց տան պատուհանից: Երբ նրանք ուզում էին մեկին սպանել, սա ասում էր՝ լա բիլլահ (ո՛չ, ի սերն աստծու), բայց նրանք սպանում էին: Երբ նրանք գյուղի գործը վերջացրին, կողոպտելով ինչ որ կար ու հափշտակելով կանանց, տեսա, որ սկսեցին ձիերին հեծած զվարճանալ խնդալով ու երգում էին իրենց լեզվով. կրկնելով՝ լա բիլլահ:

Նրանցից մի խումբ հարձակվեց Ռումի Մծբինի վրա, որը Եփրատի վրա էր և Ամիդի սահմաններում: Նրանք կողոպտեցին այն, կոտորելով բնակիչներին, ապա վերադարձան Ամիդ, հետո գնացին Բաղեշ (Բաղիս), որի ժողովուրդը պատսպարվեց ամրոցում ու լեռներում: Այստեղ մի մասին կոտորեցին, իսկ քաղաքը հրկիզեցին: Բնակիչներից մեկը պատմել է՝ եթե ունենայինք թեկուզ հինգ հարյուր ձիավոր, թաթարներից ոչ մեկը չէր աղատվի, քանզի ճանապարհը լեռների մեջ նեղ էր և փոքրաթիվ մարդիկ կարող էին մեծ թվով մարդկանց ճանապարհը փակել:

Ապա Բաղեշից գնացին Խլաթ ու պաշարեցին Խլաթի գավառներում գտնվող մի քաղաք, որը կոչվում է Բերկրի (Բաբրի, Բարբարի) և երկրի ամենաանառիկ վայրերից է: Նրանք ուժով զրավեցին այն, բոլոր բնակիչներին կոտորեցին, ապա գնացին Արճեշ քաղաքը, որը Խլաթի սահմաններում էր, մեծ ու հզոր քաղաք էր և նույն գործը այստեղ էլ կատա-

րեցին: Այս բոլորը կատարվեց Զուլ-Հիջջա ամսին (30 սեպտեմբեր— 28 հոկտեմբեր):

Նրանց մասին ինձ պատմել են շատ բաներ, որ լսողը չի հավատա, և այս բոլորը այն վախի հետևանքով, որ բարձրյալն ալլահը գցել էր մարդկանց սրտերը: Ասվում է, որ նրանցից որևէ մեկը՝ ինչ-որ ձիավոր, մտնելով որևէ գյուղ կամ ճանապարհի վրա հանդիպելով շատ մարդկանց, մեկը մյուսի ետևից կոտորում էր և ոչ ոք չէր համարձակվում ձիավորի վրա ձեռք բարձրացնել: Լսել եմ, որ մի թաթար, բռնել էր մեկին ու մոտը ոչ մի բան չէր եղել նրան սպանելու: Նա ասել էր՝ գլուխդ գետին դիր և չհեռանաս: Սա գլուխը գետին էր դրել, իսկ թաթարը գնացել էր սուր բերել ու սպանել նրան: Մի մարդ ինձ պատմել է՝ ես տասնյոթ մարդկանց հետ ճանապարհի վրա էի, եկավ մի թաթար ձիավոր և հրամայեց մեզ, որ ամեն մեկս մյուսին կապենք: Ընկերներս սկսեցին անել այն, ինչ որ հրամայված էր: Ասացի նրանց՝ սա մեկ մարդ է և ինչու մենք չսպա- նենք նրան ու չփախչենք: Ասացին՝ վախենում ենք: Ասացի՝ չէ որ սա ուղում է հենց հիմա մեզ սպանել, եկեք մենք սպանենք նրան և ալլահը կփրկի մեզ: Ալլահը վկա, ոչ ոք չհամարձակվեց այդ բանն անել: Վերցրե- ցի մի դանակ, սպանեցի նրան և փախանք ու աղատվեցինք: Այսպիսի օրինակներ շատ կան:

Քշ 386

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ՝ ԹԱԹԱՐՆԵՐԻՆ ԶՊԱՏԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նրանց հպատակվելու պատճառն այն է, որ երբ Զալալ ալ-Դինը Ամիդում պարտվել էր թաթարներից և նրա զորքը ցրվել ու տարբեր մա- սերի էր բաժանվել, տարբեր մարդկանց ձեռքն ընկնելով, իսկ թաթար- ները Դիար Բաքրում, Զազիրայում, Արբելայում և հլաթում արել էին ինչ որ կամեցել էին, չկար նրանց կանգնեցնող կամ դիմադրող ուժ, քանզի մահ- մեղական տիրակալները վախից դողում էին: Բացի այդ, Զալալ ալ-Դինից ոչ մի տեղեկություն չկար և ոչ ոք չգիտեր, թե նրան ինչ էր պատահել, ուստի [Ատրպատականի բնակիչները] հուսալքվեցին ու հպատակվեցին թաթարներին, տալով նրանց ինչ որ կամենում էին՝ դրամ և զգեստներ: